ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մ. Ե. ԱՍԱՏՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՑՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Գ

(Բայ-եղանակային ձևեր, մակբայ, շաղկապ, եղանակավորող բառեր, ձայնարկություն)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1977

Ա. 70103-35
704(02)—77 14—77

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1977

АСАТРЯН
МАНВЕЛ ЕГОРОВИЧ

ВОПРОСЫ МОРФОЛОГИИ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

III

(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1977

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր»-ի սույն գ գիրքն ընդգրկում է արևելահայերենի բայի դիմավոր ձևերի, մակբայի, շաղկապի, եղանակավորող բառերի և ձայնարկության ճննությունը*: Հետազոտությունը հիմնականում կատարված է համաժամանակյա (սինխրոնիկ) հայեցակետով՝ հատկապես հայ դասական և խորհրդային շրջանի գեղարվեստական գրականության լեզվական տվյալների հիման վրա: Սակայն անհրաժեշտության դեպքում, այս կամ այն ճերականական կարգի մասին ավելի համակողմանի ու ամբողջական գաղափար տալու, ինչպես և նրա առաջացումն ու ծագումը և հետագա դրսևորումները ներկայացնելու համար, օգտագործվում են նաև գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի և բարբառների փաստերը:

Այնուհետև, այս կամ այն ճերականական կարգի ըմբրռնման ու մեկնաբանման հետ կապված՝ աշխատության մեջ առանձին տեղ է գրավում ժամանակակից հայերենի ճերականական կառուցվածքի ուսումնասիրության մեկդարյա պատմության հարցերի ճննությունը՝ սկսած Ս. Պալասանյանից մինչև ժամանակակից հայ ճերականները: Այսպիսով, աշխատության առանձին հատվածներ նվիրված են արդի հայերենի ճերականությունների ճննական տեսությանը:

Պետք է նշել նաև, որ շարադրանքի ամբողջականությունը պահպանելու նպատակով մենք անդրադառնում ենք նյութի հետ կապված նամարյա բոլոր հարցերին՝ անկախ այն բանից, թե դրանք մեր ճերականագիտության մեջ ի՛նչ ծավալով ու խորությամբ են ննված ու մեկնաբանված: Անա այդ իսկ պատճառով էլ ինքնուրույն ննություններից, վերլուծու-

* *Կապերի վերլուծությունը տե՛ս այս աշխատության Ա գրքում:*

թյուններից ու մեկնաբանություններից բացի, ընթերցողը գրքի առանձին հատվածներում կգտնի նաև ժամանակակից հայերենի բերականությունների այս կամ այն հարցի վերաբերյալ ընդունված կամ առաջայված տեսակետների ու դրույթների շարադրանքը: Հարցերի այս խումբը ներկայացնելիս մենք հատկապես հենվում ենք Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն», Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» և Ս. Աբրահամյանի «Զբեֆվող խոսքի մասերը և նրանց բառական ու բերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում» աշխատությունների վրա:

Անհրաժեշտ ենք համարում հատուկ շեշտել նաև հետևյալը: Խնդրին մոտենալով նեղ ըմբռնմամբ՝ սույն գրքում ներկայացված խոսքի մասերից բուն ձևաբանության ենթության առարկա կարող են համարվել միայն դիմավոր բայերը: Բայց լայն ըմբռնմամբ՝ ձևաբանության ենթության նյութ են հանդիսանում խոսքի մասերն ընդհանրապես: Ահա հենց այսպիսի մոտեցմամբ էլ բացատրվում է «ոչ ձևաբանական» խոսքի մասերի ենթությունը ինչպես այս, այնպես էլ սույն աշխատության նախորդ գրքերում:

Անդրադառնալով «Ձևաբանության հարցերի» երեք գրքերին ամբողջությամբ՝ պետք է նշենք, որ դրանցում ի նոր շարադրված է ժամանակակից հայերենի ամբողջ ձևաբանությունը և նոր մեկնակետերից են ենթված ու լուսաբանված բերականական մի շարք հարցեր: Եվ եթե դրանց գոնե մի մասը հանձնում ու ընդունելություն գտնի և նպաստի մեր լեզվի բերականական կառուցվածքի որոշ երևույթների ավելի խոր ընկալմանն ու մեկնաբանությանը, ապա մենք լիովին հասած կլինենք մեր նպատակին:

ՀԵՂԻՆԱԿ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ԲԱՅ

Բ. ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Բայի եղանակային կամ դիմավոր ձևերը, ինչպես և բայն ընդհանրապես, խմաստաբանորեն բնորոշվում է գործողության, ընթացքի գաղափարի արտահայտմամբ։ Բայի եղանակային կամ դիմավոր ձևերը այլ կերպ կարելի է կոչել նաև ստորոգելիական ձևեր, որովհետև նախադասության մեջ նրանք, որպես կանոն, հանդես են գալիս ստորոգյալի պաշտոնով, այսպիսով արտահայտելով ստորոգելիության շարահյուսական կարգը, որը նախադասության ամենաէական հատկանիշն է։ Բայի ստորոգելիական ձևերը ունեն իրենց ներհատուկ առանձնահատկություններն ու քերականական կարգերը, որոնցով առանձնանում են մյուս խոսքի մասերից ընդհանրապես և բայի անդեմ, դերբայական ձևերից մասնավորապես։ Բայի եղանակային ձևերին ժամանակակից հայերենում հատուկ են եղանակի, ժամանակի, գործողության կերպի, դեմքի ու թվի քերականական կարգերը։

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

2. ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ.—Բայի եղանակի քերականական կարգի տրամաբանական հիմքըն այն է, որ նույն և միևնույն գործողությունը կարող է ներկայացվել որպես իրական, ցանկալի, ենթադրական, կարելիական, պայմանական, անհրաժեշտական և այլն, ըստ որում այս դեպքում ևս, ինչպես շատ ուրիշ դեպքերում, նույն գործողության տարբեր երանգավորումները գնահատվում են խոսողի տեսակետից։ Բայի եղանակի կարգը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ:

Սակայն պետք է տարբերել բայի եղանակի կարգը եղանակավորության լեզվական կարգից ընդհանրապես, որն ավելի լայն է և, բացի ձևաբանական միջոցներից, դրսևորվում է նաև բառային, շարահյուսական, հնչերանգային միջոցներով։ Հայտնի է, որ լեզվում կան բառերի հատուկ խմբեր, այսպես կոչված եղանակավորող բառերը, որոնք արտահայտում են խոսողի վերաբերմունքը և մեծ մասամբ վերաբերում են նախադասության բայ-ստորոգյալին, օրինակ՝ «Նա երևի կգա», «Գուցե կգա», «Մի՞թե կգա», «Կարծես կգա» և նման բառերով արտահայտվում է խոսողի թեական, երկբայական վերաբերմունքը գործողության նկատմամբ, իսկ «Նա իրոք կգա», «Անպատճառ կգա», «Անպայման կգա», «Անշուշտ կգա» և նման բառերով արտահայտվում է խոսողի հաստատողական վերաբերմունքը գործողության բովանդակության նկատմամբ։ Այս ձևով ամենատարբեր եղանակավորող բառերի միջոցով գործողությանը կարելի է հաղորդել ամենատարբեր երանգներ և, այսպիսով, ստանալ բայի զանազան «եղանակներ»։ Սակայն քանի որ տվյալ դեպքում քննության նյութ է հանդիսանում բայի եղանակի կարգի ձևաբանական արտահայտությունը, ուստի և, մյուս ձևաբանական կարգերին զուգահեռ, բայական եղանակի տակ պետք է հասկանալ խոսողի վերաբերմունքի այնպիսի արտահայտություն, որը դրսևորվում է հենց բայաձևի մեջ՝ բայի ձևաբանական փոփոխության միջոցով։ Ուրեմն՝ երևի կգա, գուցե կգա, անշուշտ կգա և նման տիպի կապակցությունները, լինելով բայի ազատ շարահյուսական կապակցություններ և ոչ թե բայի խոնարհման ձևեր, չեն կարող դիտվել բայի եղանակի կարգի, որպես ձևաբանական կարգի, արտահայտիչներ։

Մի կողմ թողնելով եղանակավորող բառերն ու լեզվական զանազան միջոցները, որոնք բայական ձևերին հաղորդում են եղանակային այս կամ այն երանգները, և հաշվի առնելով միայն բայի խոնարհման ձևերը, նկատում ենք, որ հենց խոնարհման ձևերի մեջ գործողությունը անխուսափելիորեն ներկայացվում է իր եղանակային այս կամ այն երանգով, օրինակ՝ գնացի (իրական գործողություն), գնամ (ցանկալի գործողություն) և այլն։

Ծննելով գրաբարի քերականության ավանդույթներից՝ Սկրոդերից սկսած մինչև Մ. Աբեղյանի քերականությունները, հաշվի չառած այսպես կոչված անորոշ եղանակը, աշխարհաբարի համար սովորաբար ընդունվում էր երեք եղանակ՝ սահմանական, ստորադասական և հրամայական (որոշ քերականներ ընդունում էին նաև պայմանական եղանակ)։

Բայի եղանակների հարցին Մ. Աբեղյանը հատուկ անդրադառնում է իր «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» հոդվածում («Արարատ», 1912, № 2—3)։

Քննելով աշխարհաբարի գնամ, գնայի ձևերը, որոնք նախորդ քերականները կոչում էին ստորադասական եղանակի բայաձևեր, Մ. Աբեղյանը գրում է. «Պալասանյանը մեր գնամ, գնայի ձևերը դնում է իբրև ստորադասական եղանակ։ Այսպես կոչվում է, որովհետև ստորադասականով բայը միշտ ենթարկվում է, ստորադասվում է մի ուրիշ բայի,—լինի վերջինս խոսքի մեջ արտահայտված, թե զորությամբ հասկացված,—որ հարկավոր է մի տրամաբանական միտք արտահայտելու համար։ Ուրիշ խոսքով՝ ստորադասական եղանակը կազմում է ոչ թե գլխավոր կամ անկախ խոսք, այլ երկրորդական խոսք։ Ֆրանսերենում, օրինակ, subjonctif ստորադասական եղանակը անկախ կամ գլխավոր խոսք չի կազմում, բացի մի երկու բայից կամ մի երկու կիրառություններից, այն էլ երբեմն դարձյալ que «որ» շաղկապով սկսված, այնպես որ այս դեպքում էլ ֆրանսերենի ստորադասականն ըմբռնվում է դարձյալ իբրև խնդիր մի զեղչված բայի։ Այս պատճառով էլ ֆրանսերենի քերականությունների մեջ այս եղանակի սկզբում դրվում է que nr, թե շաղկապը։ Նման ձևվով և Պալասանյանը մեր ստորադասականի առաջ դնում է nr շաղկապը, կարծես թե այս շաղկապն անհրաժեշտ լինի մեր այս եղանակն ըմբռնելու համար։ Սակայն այդ ճիշտ չէ. հայերենի գնամ, գնայի ձևերը թե անկախ ու գլխավոր խոսքեր են կազմում և թե երկրորդական. գնամ, տեսնեմ նրան. Ասված հոգին լուսավոռե. գնացի, որ տեսնեմ նրան»[1]։

Բազմաթիվ փաստերով ցույց տալով, որ աշխարհաբարի

[1] Մ. Աբեղյան, Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում, «Արարատ», 1912, № 2, էջ 176—177։

գնամ, գնայի բայաձևերը ազատ կիրառվում են նաև գլխավոր նախադասություններուի մեջ, և այդ բայաձևերի հետ ներկայացվող nr, թե, եթե շաղկապները խոնարհման անհրաժեշտ տարրեր չեն կազմում, Մ. Աբեղյանն իրավացիորեն գտնում է, որ վերոհիշյալ ձևերը հարացույցի մեջ պետք է դնել գնամ, գնայի ձևով (և ոչ թե nr գնամ, nr գնայի ձևով)։

Մյուս կողմից՝ հաշվի առնելով այն, որ աշխարհաբարի գնամ, գնայի բայաձևերով արտահայտվում է խոսողի իղձը, ցանկությունը գործողության կատարման վերաբերյալ, Մ. Աբեղյանն այդ բայաձևերն անվանում է ըղձական եղանակի բայաձևեր։

Այնուհետև Մ. Աբեղյանն անդրադառնում է կը մասնիկով կազմված բայաձևերի՝ կգնամ, կգնայի՝ եղանակի հարցին։ Ստ. Պալասանյանի քերականության մեջ դրանցից առաջինը՝ կգնամ ձևը դրված է իբրև սահմանական, իսկ երկրորդը՝ կգնայի ձևը դրված է իբրև պայմանական։ Մ. Աբեղյանը քննադատում է Ստ. Պալասանյանի այսպիսի մոտեցումը՝ գրելով. «Եթե կը կարդայի ձևն իբրև պայմանական եղանակ է դրվում նրա համար, որ գործ է ածվում պայմանավորված նշանակությամբ, ինչո՞ւ կը կարդամ ձևը նույնպես չպիտի դրվի իբրև պայմանական, քանի որ դա ևս նույնչափ իբրև պայմանավորված խոսք է գործածվում, որչափ և կը կարդայի ձևը. ես գիրք կը կարդայի, եթե ժամանակ ունենայի. ես գիրք կը կարդամ, եթե ժամանակ ունենամ։ Բացի այդ՝ կը կարդայի ձևն անպատճառ միշտ պայմանավորված խոսք չի կազմում, որ դրվի իբրև պայմանական եղանակ. այլ դա ևս մենակ, առանց որևէ պայմանի, գործ է ածվում, ինչպես և կը կարդամ ձևը»[2]։

Հետագա վերլուծության ընթացքում Մ. Աբեղյանը ելնում է այն ճիշտ դրույթից, որ կգնամ, կգնայի բայաձևերի տարբերությունը ոչ թե եղանակային, այլ ժամանակային տարբերություն է, ինչպես որ նույն կազմությունն ունեցող մյուս ձևերի՝ գնամ–գնայի, գնում եմ–գնում էի, գնացել եմ–գնացել էի՝ տարբերությունն է[3]։

---

[2] Անդ, էջ 176։

[3] Տե՛ս անդ։

Այսպես ուրեմն, կը-ով կազմութիւնների եղանակային բովանդակութիւնը նոյնն է, բայց դրանք, ըստ Մ. Աբեղեանի, ո՛չ սահմանական, ո՛չ էլ պայմանական եղանակ են արտահայտում։ Նա այն դրույթն է զարգացնում, որ ըղձական եղանակից կը-ով կազմված բայաձևերը արտահայտում են կարելիական կամ ենթադրական եղանակի իմաստ։ Մ. Աբեղյանն այսպես է սահմանում այս եղանակի քերականական բովանդակութիւնը. «Կարելիական եղանակով եղելութիւնը պատկերացվում է ոչ իբրև իրական, այլ իբրև մտածված, կարծված, հնարավոր, այսինքն այնպիսի, որ կարող է լինել, գուցե, կարելի է լինի։ Ուստի այս եղանակով խոսողը ոչ թե հավաստի հաստատութիւն է անում, այլ անստույգ, մեղմ հաստատութեամբ, քաղաքավարութեամբ, ենթադրելով իր կարծիքն է հայտնում»[4]։

Այնուհետև, Մ. Աբեղյանն առանձին եղանակ է համարում ըղձականից պիտի մասնիկով կազմված ձևերը՝ պիտի գնամ, պիտի գնայի։ Նա պիտի-ով կազմված բայաձևերը անվանում է անհրաժեշտական եղանակ։

Այսպիսով, բայի եղանակներն ըստ Մ. Աբեղյանի աշխարհաբարում հինգն են՝ իրականութեան կամ սահմանական եղանակ, ըղձական եղանակ, կարելիութեան (հնարավորութեան) կամ ենթադրական եղանակ, անհրաժեշտական կամ հարկադրական եղանակ և հրամայական եղանակ։

Մ. Աբեղյանի՝ արևելահայերենի համար սահմանած հինգ եղանակների դրույթը արմատավորվեց հետագա շրջանի քերականութիւններում։ Սակայն պետք է հաշվի առնել, որ առանձին քերականներ տարբեր մեկնաբանութիւններ են տվել կը մասնիկով կազմվող բայաձևերի եղանակային բովանդակութեանը, ինչպես և վիճարկել կամ չեն ընդունել պիտի-ով կազմվող եղանակային ձևերի գոյութիւնը[5]։

---

[4] Մ. Աբեղյան, *Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում*, «Արարատ», 1912, № 3, էջ 261։

[5] *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը*, ԳԱՏ, 1953, № 9. Ստ. Լիսիցյան, *Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը*, ՆՊՀԳԱ, հ. 19, 1941. Պ. Պողոսյան, *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառութիւնները արդի հայերենում*, Երևան, 1959.

Առայժմ տարածված է և գերիշխում է այն կարծիքը, որ արևելահայերենում բայն ունի հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական կամ ենթադրական, հարկադրական կամ անհրաժեշտական և հրամայական։

Սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ կերպով կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն, մի գործողություն, որ խոսողի հայեցակետով, նրա ունեցած հիմունքով կամ ներկայացմամբ համապատասխանում է իրականությանը, օրինակ՝ գնում եմ–գնում էի, գնացել եմ–գնացել էի, գնացի, գնալու եմ–գնալու էի:

Ըղձական եղանակի բայաձևերը ցույց են տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, փափագ, տենչանք, օրինակ՝ գնամ–գնայի, տեսնեմ–տեսնեի:

Ըստ արդի քերականություններում ընդունված տեսակետի, պայմանական կամ ենթադրական եղանակի բայաձևերը ցույց են տալիս պայմանական կամ ենթադրական գործողություն, օրինակ՝ կգնամ–կգնայի, կտեսնեմ–կտեսնեի: *Սակայն ինչպես հետո կտեսնենք, կը եղանակիչով կազմված բայաձևերը ավելի հաստատողական, քան թե պայմանական կամ ենթադրական գործողություն են ցույց տալիս, ուստի և դրանք ավելի ճիշտ կլիներ կոչել հաստատողական եղանակի բայաձևեր։*

Հարկադրական կամ անհրաժեշտական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հարկադրական կամ անհրաժեշտական գործողություն, օրինակ՝ պիտի գնամ–պիտի գնայի, պիտի տեսնեմ–պիտի տեսնեի:

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս խոսակցին ուղղված հրաման, կարգադրություն, հորդոր, խրճդրանք, օրինակ՝ գնա՛, տե՛ս:

Հայերենի բայի արտահայտած եղանակային իմաստները

է. Աղայան, Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, ՊՔՀ, 1963, № 3. է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967. Իվ. Ի. Շիլոհանէե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, ԼՈՀ, II, Երևան, 1964. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։

ավելի մանրամասնորեն կքննարկվեն հետո, առանձին եղանակներին նվիրված հատվածներում։

ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

3. ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.—Արդի հայերենի բայի եղանակների ու ժամանակների և կերպերի գիտական համակարգումն ու դասակարգումը կատարել է Մ. Աբեղյանը։ Նրա՝ ժամանակների ու կերպերի տեսությունը ըստ երևույթին այնքան խորությամբ էր արտացոլում արդի հայերենի բայական այս կարգերի էությունը, այնքան համապատասխանում էր արևելյան աշխարհաբարի ոգուն ու էությանը, որ կես դարից ավելի մի ժամանակաշրջանում իշխել է հայ քերականական մտքի վրա և գոնե իր հիմնական սկզբունքներով ու էական կողմերով ընդունվում է նորագույն կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչների աշխատություններում, չնայած որ միաժամանակ փորձեր են կատարվում նոր մեկնակետերից ու դիրքերից լուսաբանելու հայերենի բայական ժամանակների ու կերպերի համակարգը։

Հակառակ հոլովների տեսության, որ բուռն վիճաբանությունների ու տարակարծությունների առիթ է տվել, էլ չենք խոսում այն մասին, որ 30—50-ական թվականներին համարյա «գիտականորեն մերժվել էր» և այժմ միայն իր առաջին քայլերն է անում արմատավորվելու դպրոցական և գիտական քերականություններում,—Մ. Աբեղյանի՝ ժամանակակից հայերենի բայի եղանակային ձևերի համակարգի տեսությունը այդ բախտին չի արժանացել։ Մ. Աբեղյանի որդեգրած ու դավանած ձևաբանական դպրոցի անմիջական հակադրությունը կազմող այսպես կոչված իմացաբանական դպրոցի ներկայացուցիչներն անգամ ընդունում են, որ հայերենի քերականության այս մարզում նրա դրույթներն ու եզրահանգումները էլակետային են, հենց այս մարզում է, որ դրսևորվում են Աբեղյան քերականագետի ուժեղ կողմերը, և, հետևաբար, ամեն մի էական շեղում Աբեղյանի մշակած համակարգից այս կամ այն չափով շեղում է մեր լեզվի կառուցվածքի իրական պատկերի արտացոլումից։ Ահա այս է պատճառը, որ

Մ. Աբեղյանի քերականություններին անմիջաբար հաջորդած Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի քերականություններում բայի խոնարհման համակարգը, առանձին փոփոխություններով հանդերձ, ներկայացվում է Աբեղյանի մշակած սկզբունքներով։

Սա ցույց է տալիս, որ Մ. Աբեղյանի մշակած համակարգը ընդգրկում ու արտացոլում էր ժամանակակից հայերենի բայի խոնարհման գոնե ամենաէական կողմերը։ Խոսքը մասնավորելով բայի ժամանակների ու կերպերի շուրջը՝ պետք է նշել, որ այդ հարցերի մասին Աբեղյանի ունեցած ըմբռնումներն ու պատկերացումները ևս ելակետ են հանդիսացել հետագա շրջանի քերականների համար, ուստի և գոնե ամենաընդհանուր գծերով պետք է ծանոթանալ Մ. Աբեղյանի դրույթներին ու եզրահանգումներին։

Հենվելով հայ, ինչպես նաև օտար լեզուների քերականական ավանդույթներին և լռելյայն ելնելով տրամաբանական ու քերականական ժամանակների համապատասխանության կամ հավասարության դրույթից, Մ. Աբեղյանը գտնում է, որ ընդհանրապես բայն ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ և ապառնի։ Նա գրում է. «Բայի ժամանակ ասելով հասկանում ենք, թե երբ է տեղի ունենում եղելությունը՝ խոսելու վայրկյանին (ներկա ժամանակ), խոսելու վայրկյանից առաջ ընկնող ժամանակամիջոցում (անցյալ), թե խոսելու վայրկյանից հետո ընկնող ժամանակամիջոցում (ապառնի)»[6]։ Կամ ավելի որոշակի ձևով. «Բայի ժամանակները, որոնք ցույց են տալիս, թե երբ է կատարվում եղելությունը, երեքն են՝ ներկա, անցյալ և ապառնի։ Ներկան այն վայրկյանն է, որի մեջ գտնվում է խոսողը. անցյալը խոսելու վայրկյանից առաջ ընկնող ժամանակամիջոցն է, իսկ ապառնին՝ խոսելու վայրկյանից հետո ընկնող ժամանակամիջոցը»[7]։

Սակայն հայերենի բայի այս երեք ժամանակների դրույթը շատ քիչ բան է ասում բայական քերականական ժամանակների բուն էության մասին թեկուզ և այն պատճառով, որ հավասարապես կարող է վերաբերել համարյա բոլոր լեզու-

---

[6] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965, էջ 299։

[7] Անդ, էջ 557։

ներին, քանի որ բոլոր լեզուներում էլ վերջիվերջո տրամաբանական ներկա, անցյալ և ապառնի ժամանակները այս կամ այն ձևով արտահայտվում են։ Այս դեպքում ժամանակի արտահայտման տեսակետից լեզուներն արդյոք յուրահատկություններ հանդես չե՞ն բերում, թե՞ բոլոր լեզուներին է բնե հատուկ են ճակատագրական երեք ժամանակները։ Հաստատ կարող ենք ասել, որ Մ. Աբեղյանը տեսնում էր, որ ժամանակակից հայերենի բայաձևերը դժվար թե հնարավոր լինի տեղաբաշխել ավանդական և իր իսկ կողմից ընդունված երեք ժամանակների համակարգում. Համենայն դեպս նա բայաձևերի այդպիսի խմբավորման փորձ չի կատարել։ Ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ եռաժամանակյա համակարգը ճշտորեն չի արտացոլում ժամանակակից հայերենի բայական ժամանակների իրական պատկերը, դա տրամաբանական երեք ժամանակների փոխադրումն է լեզվի քերականության ոլորտը և խիստ աղքատացնում է լեզվում իրոք գոյություն ունեցող քերականական ժամանակների ամբողջ հարստությունը։

Սակայն պետք է նշել, որ ժամանակի քերականական կարգի ըմբռնման հարցում Մ. Աբեղյանը ոչ միայն չի մնում իր նախորդների մակարդակին, այլև հանդես է գալիս որպես նորարար։ Հայ լեզվաբանության մեջ առաջին անգամ, ժամանակի կարգի հետ կապված, նա մտցնում է նաև բայի կերպ հասկացությունը՝ այսպիսով ավելի լայնացնելով ու խորացնելով ժամանակի քերականական կարգի ըմբռնման սահմանները։ Թուցիկ կերպով դրելով, որ բայն ունի երեք ժամանակ՝ ներկա, անցյալ և ապառնի, բայց բայաձևերը չխմբավորելով այդ երեք ժամանակների տակ, Մ. Աբեղյանը գրում է. «Բայի ժամանակներից անբաժան են և բայի կերպերը, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը մի որոշ ժամանակակետի՝ ներկայի, անցյալի և ապագայի նկատմամբ»[8]։ Նա ժամանակակից հայերենում ընդունում է բայի չորս կերպ՝ կատարվող կերպ, որ ցույց է տալիս մի որոշ ժամանակակետի նկատմամբ շարու-

[8] Անդ։

նակվող, այսինքն՝ սկսված ու չվերջացած, հարաճիպ գործողություն, օրինակ՝ գնում է, գնում էր, գնալիս կլինի, *կատարված կերպ, որ ցույց է տալիս մի որոշ ժամանակակետի նկատմամբ արդեն կատարված վերջացած գործողություն, օրինակ՝* գնացել է, գնացել էր, գնացած կլինի, *կատարելի կերպ, որ ցույց է տալիս մի որոշ ժամանակակետի նկատմամբ դեռ նոր կատարելի, ապագա գործողություն, օրինակ՝* գնալու է, գնալու էր, գնալու կլինի և *պարզ կերպ, որ ցույց է տալիս սոսկ գործողություն մի որոշ ժամանակակետում, առանց ուշադրություն դարձնելու նախորդ երեք կերպերին— գործողության տևական, վերջացած կամ կատարելի լինելուն, օրինակ՝* գնացի, կգնամ[9]:

Այնուհետև Մ. Աբեղյանն իր մտքերը շարունակում է հետևյալ ձևով. «Բայի չորս կերպերից յուրաքանչյուրը կարող է երեք ժամանակի՝ ներկայի, անցյալի և ապառնու նկատմամբ ևս առնվել, այսինքն ամեն մի գործողություն կարող է առնվել իբրև սոսկ գործողություն ներկայի, անցյալի ու ապառնու նկատմամբ (կգնամ, կգնայի, գնացի) կամ կարող է կատարվող, կատարված և կատարելի լինել և՛ ներկայի նկատմամբ (գնում է, գնացել է, գնալու է), և՛ անցյալի նկատմամբ (գնում էր, գնացել էր, գնալու էր), և՛ ապառնու նկատմամբ (գնալիս կլինի, գնացած կլինի, գնալու կլինի)»[10]:

Այս իսկ մեջբերումից արդեն պարզ է դառնում, որ բայի պարզ ձևերը ըստ Մ. Աբեղյանի ցույց են տալիս սոսկ գործողություն և բայի պարզ կերպեր են (գնամ, գնայի, կգնամ, կգնայի), իսկ բաղադրյալ ժամանակները կազմում են մյուս կերպերը: Միևնույն ժամանակ Մ. Աբեղյանն այն միտքն է զարգացնում, որ բաղադրյալ ձևերի մեջ ժամանակներն ու կերպերն արտահայտվում են առանձին միավորների միջոցով. «ժամանակը, որի նկատմամբ առնվում է գործողությունը, արտահայտվում է օժանդակ բայով, իսկ կերպը, որով առնվում է գործողությունը, արտահայտվում է դերբայներով»[11]: *Ըստ որում, անկատար դերբայներով արտահայտվում*

[9] *Տե՛ս անդ, էջ 557—558:*

[10] *Անդ, էջ 558:*

[11] *Անդ:*

է կատարվող կերպը (գնում է, գնալիս կլինի), անցյալ դերբայներով՝ կատարված կերպը (գնացել է, գնացած կլինի), իսկ ապառնի դերբայով՝ կատարելի կերպը (գնալու է, գնալու կլինի)։

Ելնելով ժամանակների ու կերպերի այս տեսությունից՝ Մ. Աբեղյանը հետևյալ ձևով է ներկայացնում սահմանական եղանակի խոնարհման ինը ձևերի ժամանակների ու կերպերի փոխհարաբերությունը[12]։

	ժամանակակետը, որի նկատմամբ առնվում է գործողությունը		
կերպերը	I Ներկա	II Անցյալ	III Ապառնի
I կատարվող	1. Ներկա գնում եմ	2. Անկատար անցյալ գնում էի	
II կատարելի	3. Ապառնի գնալու եմ	4. Ապառնի անցյալ գնալու էի	
III կատարված	5. Վաղակատար գնացել եմ	6. Վաղակ. անցյալ գնացել էի	
	7. Հարակատար գնացած եմ	8. Հարակատ. անց. գնացած էի	
IV Պարզ		9. Անցյալ կատար. գնացի	

Սրանք սահմանական եղանակի գլխավոր կամ բացարձակ ժամանակներն են, որոնք, բացի հարակատարից, ունեն իրենց երկրորդական բաղադրյալ ժամանակները՝ արտահայտված անկատար, հարակատար ու ապառնի դերբայներով և լինել օժանդակ բայի խոնարհման ձևերով, որոնք կրկին կատարվող, կատարված և կատարելի կերպերի հակադրություն են կազմում, ինչպես՝ գրում եմ||գրելիս եմ լինում—գրած եմ լինում—գրելու եմ լինում, գրել եմ||գրելիս եմ եղել—գրած եմ եղել—գրելու եմ եղել և այլն[13]։

Համակարգն այնքան տրամաբանական է ու կուռ, հա-

[12] Տե՛ս անդ, էջ 559։

[13] Տե՛ս անդ, էջ 570—574։

կադրուքյուններն այնքան ակնառու են ու ցայտուն, որ բացատրուքյուններն ուղղակի ավելորդ են, ուստի և մի կողմ թողնելով երկրորդական բաղադրյալ ժամանակները, կրկին անդրադառնանք սահմանական եղանակի գլխավոր կամ բացարձակ ժամանակներին։

Քանի որ Մ. Աբեղյանն այն կարծիքին էր, որ բաղադրյալ ժամանակների մեջ օժանդակ բայն արտահայտում է ժամանակի, իսկ դերբայը կերպի գաղափար, ուստի և սրանից բխում է, որ եմ ձևով կազմված բոլոր բաղադրյալ ժամանակները ներկայի հատկանիշ ունեն կամ ուղղակի ներկա են, իսկ էի ձևով կազմված բոլոր բաղադրյալ ժամանակներն անցյալի հատկանիշ ունեն կամ ուղղակի անցյալ են։ Այսպես, նա ապառնի և ապառնի անցյալ ձևերի մասին գրում է. «Ապառնին և ապառնի անցյալն իրենց բնավորուքյամբ ցույց են տալիս հարաձիգ, տևական վիճակ կամ մտադրուքյուն մի բան անելու. միայն ապառնի ժամանակի ենթական խոսողի ներկայում է հարակայում մի այսպիսի վիճակի կամ մտադրուքյան մեջ, իսկ ապառնի անցյալինը մի անցյալ ժամանակում. ուստի առաջինը իսկապես մի ներկա ժամանակ է, կամ ապառնի ներկա, իսկ երկրորդը մի անցյալ ժամանակ»[14]*։ Նույն բանն է ասվում նաև վաղակատարի մասին. «Վաղակատարը ցույց է տալիս մի անցյալ գործողուքյուն, որի անցած վերջացած լինելը առնվում է ներկայի նկատմամբ. գործողուքյունը մտածվում է իբրև խոսելու վայրկյանից առաջ անցած, բայց նրա ազդեցուքյունը կամ հետևանքը հարատևում է մինչև խոսողի ներկան, որը միշտ նկատի ունի խոսողը։ Այս պատճառով այս ժամանակն իր բնավորուքյամբ իսկապես մի ներկա ժամանակ է կամ վաղակատար ներկա»*[15]*։*

Եթե հարցին մոտենում ենք այս տեսակետից, ապա ըստ Մ. Աբեղյանի սահմանական եղանակը փաստորեն ունի ներկա և անցյալ ժամանակներ, որոնք արտահայտվում են խոնարհման ինը ձևերի միջոցով՝ կատարվող, կատարված, կա-

---

[14] *Անդ, էջ 560։*

[15] *Անդ։*

տարելի և պարզ կերպերի հակադրությամբ։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ Մ. Աբեղյանը այս սկզբունքը հետևողականորեն չի կիրառում, որովհետև շարադրանքը տարվում է այն ձևով, որ սահմանական եղանակի խոնարհման ինը ձևերը փաստորեն առանձին ու անկախ ժամանակներ են։ Դրանում համոզվելու համար բավական է նշել թեկուզ միայն այն, որ հենց ինքը՝ Մ. Աբեղյանը գործածում է անկատար անցյալ ժամանակ *(էջ 571)*, վաղակատար ժամանակներ *(էջ 560)*, հարակատար և հարակատար անցյալ ժամանակներ *(էջ 560)* և այլն։

Սակայն սահմանական եղանակի խոնարհման ինը ձևերը առանձին, անկախ ու ինքնուրույն ժամանակնե՞ր պետք է համարել, թե՞ տեղաբաշխել ներկա, անցյալ և ապառնի ժամանակների մեջ և այսպիսով սահմանականի համար ևս ընդունել միայն երեք ժամանակ,—ահա մի հարց, որ վիճաբանություններ է առիթ է տվել։ Այս հարցին հետո առիթ ենք ունենալու կրկին անդրադառնալու, ուստի և այստեղ չենք ծավալվում։

Ինչևիցե. Մ. Աբեղյանը վերևում շարադրված սկզբունքներով է ներկայացնում նաև մյուս եղանակների ժամանակների ու կերպերի փոխհարաբերությունը։

Ըստ Մ. Աբեղյանի «ենթադրական եղանակն ունի ներկա և անցյալ ժամանակակետերի նկատմամբ չորս կերպերի համար ևս առանձին խոնարհման ձևեր, որոնք իրենց նշանակությամբ համապատասխանում են սահմանական եղանակի ժամանակներին, միայն կարելիական իմաստով»[16]։ Ըստ այդմ, ենթադրական եղանակի համար ընդունվում են խոնարհման ութ ձևեր, որոնք ներկա և անցյալ ժամանակների և կատարվող, կատարված, կատարելի ու պարզ կերպերի հակադրություն են կազմում հետևյալ ձևով։

Ենթադրական եղանակ

Ներկա	*Անցյալ*
գնալիս կլինեմ	գնալիս կլինեի

[16] *Անդ, էջ 575։*

գնացած կլինեմ	*գնացած կլինեի*
գնալու կլինեմ	*գնալու կլինեի*
կգնամ	*կգնայի*

Հարկադրական եղանակի կերպերի ու ժամանակների համակարգը նույնանում է ենթադրականի հետ, միայն ենթադրականի կը եղանակիչի փոխարեն դրվում է հարկադրականի պիտի կամ պետք է եղանակիչը (գնալիս պիտի լինեմ, գնալիս պիտի լինեի, պիտի գնամ, պիտի գնայի և այլն)։ Կերպերի ու ժամանակների փոխհարաբերությունը նույնն է նաև ըղձականի դեպքում, որովհետև ենթադրականի ու հարկադրականի ձևերը կազմվում են ըղձականից (գնալիս լինեմ, գնալիս լինեի, գնամ, գնայի և այլն)։

Հրամայական եղանակը ևս ունի պարզ (գնա) և կատարվող (գնալիս եղիր), կատարված (գնացած եղիր) և կատարելի (գնալու եղիր) կերպի ձևեր, բայց բաղադրյալ հրամայականը քիչ գործածական է[17]։

Ժամանակակից հայերենի բայի խոնարհման վերևում նկարագրված համակարգն առանձին վերախմբավորումներով ու փոփոխություններով որդեգրվում է Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի կողմից։ Այս փոփոխություններից հատկապես նշելի են հետևյալները։

1. Չնայած որ Մ. Աբեղյանի կերպերի տեսությունն ընդհանրապես ընդունվում է, բայց դա կարծես թե երկրորդական գծի վրա է մղվում՝ իր տեղը զիջելով արդի հայերենի բայի ժամանակների ձևաշարին։

2. Սրա հետ կապված՝ բայի տարբեր կերպերի յուրաքանչյուր խոնարհման ձև (օրինակ՝ գնում եմ—միակատար կերպ, գնալիս եմ լինում—բազմակատար կերպ) ընդունվում է որպես առանձին բայական ժամանակ, և դա հասցնում է այն ծայրահեղությանը, որ Գ. Սևակը գրում է. «Չհաշվելով երկրորդական բաղադրյալ ժամանակները, որ հատուկ են բոլոր եղանակներին և կազմվում են մի նոր լրացուցիչ օժանդակ բայով (գրած լինելու եմ եղել, գրելիս պիտի եղած լինեի, գրելիս եղած կլինեի և այլն), տեսնում ենք, որ միայն

[17] *Տե՛ս անդ, էջ 589։*

հատատակական խոնարհման մեջ բայն ունի 58 ժամանակ, որը ցույց է տալիս մեր ժամանակակից լեզվի բացառիկ ճկունությունն ու հարստությունը բայաժամանակների կողմից»[18]։

3. Ինել բայի պարզ ժամանակներով և դերբայներով բաղադրված ձևերը (գրելիս լինեմ, գրած լինեմ, գրելու լինեմ, գրելիս կլինեմ և այլն) խոնարհման գլխավոր հարացույցից հանվոած են և գետեղվում երկրորդական շաղադրյալ ժամանակների մեջ։

4. Գնամ, գնայի, կգնամ, կգնայի տիպի բայաձևերը, որոնք Մ. Աբեղյանի կողմից դիտարկվում էին որպես ներկայի և անցյալի բայաձևեր, նկատի ունենալով նրանց իմաստային գլխավոր հատկանիշը, անվանվում են ապառնիի բայաձևեր (ապառնի և անցյալի ապառնի)։

5. Կատարվում են նաև բայական ժամանակային ձևերի անվանման այլ կարգի փոփոխություններ։

Ա. Ղարիբյանի հայացքները ժամանակակից հայերենի բայի կերպերի և ժամանակների մասին ընդարձակ ու ամբողջական ձևով շարադրված են նրա «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» (Երևան, 1954 թ.) աշխատության մեջ։ Այստեղ ևս, ինչպես և հեղինակի այլ աշխատություններում, հիմնական սկզբունքները գալիս են Մ. Աբեղյանից։ Ա. Ղարիբյանն ընդունում կամ փոխ է առնում Մ. Աբեղյանի դրույթն այն մասին, որ բաղադրյալ ժամանակային ձևերում օժանդակ բայը ցույց է տալիս կամ խոսողի ներկան, կամ խոսողի ենթադրած մի անցյալ ժամանակը, որի համեմատությամբ կատարվել, կատարվում և կատարվելու է գործողությունը[19]։ *Բաղադրյալ ձևերի մեջ դերբայների խաղացած դերի ըմբռնումը ևս գալիս է Մ. Աբեղյանից, միայն այն տարբերությամբ, որ Ա. Ղարիբյանը դերբայների մեջ տեսնում է ժամանակի ընդհանուր գաղափարի արտահայտություն։ Նա գրում է. «Դերբայները ցույց են տալիս գործողության ընդհանուր գաղափարը և գործողության կատարման կերպը կամ*

---

[18] Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, Երևան, 1955, էջ 317։

[19] *Տե՛ս* Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Երևան, 1954, էջ 303։

«ժամանակի ընդհանուր ըմբռնումը (ներկա, անցյալ և ապառնի կամ՝ կատարվող, կատարված և կատարելի կերպը)»[20]։

Վերլուծելով դերբայների և եմ-էի օժանդակ բայի զուգորդումները (գրում եմ-էի, գրել եմ-էի և այլն)՝ լեզվաբանը գալիս է հետևյալ եզրակացությանը. «Հայերենի բայական կառուցվածքի մեջ կա ժամանակի և գործողության կատարման երկակի ըմբռնում. մեկ՝ կատարելիք, կատարվող կամ կատարված գործողությունը ներկայի համեմատությամբ և մեկ էլ նույնը մի անցյալ ժամանակակետի նկատմամբ, որ նկատի է առնում խոսողը»[21]։

Ելնելով այս ըմբռնումներից՝ Ա. Ղարիբյանը գտնում է, որ ժամանակների անվանումը պետք է համապատասխան դարձնել այն իմաստներին, որ արտահայտում են բայական ձևերը։ Եթե Մ. Աբեղյանը գործածում էր անկատար ներկա (կամ ներկա), անկատար անցյալ, ապառնի ներկա (կամ ապառնի), ապառնի անցյալ և այլ անվանումները, ապա Ա. Ղարիբյանը ժամանակներն անվանում է հետևյալ կերպ.

Ներկայի անկատար կամ ներկա (գնում է)—անցյալի անկատար (գնում էր).

Ներկայի ապառնի (գնալու է)—անցյալի ապառնի (գնալու էր).

Ներկայի վաղակատար (գնացել է)—անցյալի վաղակատար (գնացել էր).

Ներկայի հարակատար (գնացած է)—անցյալի հարակատար (գնացած էր)։

«Բայց որովհետև անցյալ, ապառնի, վաղակատար և այլ գաղափարներն առաջին հերթին նշանակում են ներկայի համեմատությամբ ապառնի կամ վաղակատար, ուստի և «ներկա» բառն առաջին կապակցության միջից դուրս ենք գցում»[22] և ստանում ենք ներկա—անցյալի անկատար, ապառնի—անցյալի ապառնի, վաղակատար—անցյալի վաղակատար, հարակատար—անցյալի հարակատար անվանումները։

Փաստորեն վերացնելով կամ չընդունելով Մ. Աբեղյանի

---

[20] Անդ։

[21] Անդ, էջ 304։

[22] Անդ, էջ 307։

պարզ կերպի ըմբռնումը՝ Ա. Ղարիբյանն այն կարծիքն է հայտնում, որ ժամանակի և գործողության կերպի պատկերը նույնն է նաև պարզ կառուցվածքի ձևերի մեջ։ Նա գրում է. «Գնամ ձևը, որ ըղձական ապառնի ժամանակն է, ցույց է տալիս ենթակայի կատարելիք գործողության իղձը, ցանկությունը կամ առնչանքը, որ առնվում է խոսողի հասկացած ներկայի համեմատությամբ, ուստի դա ներկայի ապառնի է, իսկ գնայի ձևը ցույց է տալիս կատարելիք գործողության իղձ կամ ցանկություն խոսողի ենթադրած մի անցյալ ժամանակի համեմատությամբ»[23]։ Այս ըմբռնմամբ ստացվում են ըղձական ապառնի (գնամ)—ըղձական անցյալի ապառնի (գնայի), պայմանական ապառնի (կգնամ)—պայմանական անցյալի ապառնի (կգնայի), հարկադրական ապառնի (պիտի գնամ)—հարկադրական անցյալի ապառնի (պիտի գնայի) անվանումները։

Այնուհետև բերելով հանդիպակադրվող ձևերի ամբողջ համակարգը (գրում եմ—գրում էի, գրել եմ—գրել էի, գրեմ—գրեի, կգրեմ—կգրեի և այլն)՝ Ա. Ղարիբյանը որպես ընդհանուր եզրակացություն գրում է. «Այս կառուցվածքից շատ պարզ երևում է բայերի ժամանակի երկակիությունը, ըստ որում մի ձևն արտահայտում է կամ կատարվող, կամ կատարված, կամ կատարվելիք գործողությունը ներկայի համեմատությամբ, իսկ երկրորդ ձևը՝ նույնը անցյալ մի ժամանակակետի համեմատությամբ։ Այդ երկակիությունը արտահայտվում է կամ օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով և կամ բայական վերջավորություններով»[24]։

Ա. Ղարիբյանի՝ արդի հայերենի բայի ժամանակների մասին արտահայտած դրույթների մեջ ամենաարժեքավորը գուցե հայերենի բայաձևերի երկանդամ հակադրությունների դրույթն է, որը նա, Մ. Աբեղյանի հետևողությամբ, առաջին քայլը վրա է դնում ու պաշտպանում իր աշխատությունների մեջ[25]։ Պետք է նշել, որ, իրոք, երկանդամ հակադրություն-

---

[23] Անդ, էջ 304—305։

[24] Անդ, էջ 306—307։

[25] Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969, էջ 224։

ների առկայությունը արդի հայերենի բայական կառուցվածքի ամենաէական կողմերից մեկն է։

Մ. Աբեղյանի տահմանած ժամանակների ու կերպերի համակարգն իր ընդհանուր գծերով ավելի հետևողականորեն է ընդունվում Գ. Սևակի աշխատություններում։ Գտնելով, որ բայի ժամանակները հիմնականում երեքն են՝ ներկա, անցյալ և ապառնի, Գ. Սևակը գրում է. «Այս երեք հիմնական ժամանակներն էլ իրենց հերթին ունեն ստորաբաժանումներ՝ ըստ գործողության ընթացքի կամ վիճակի և ըստ ժամանակների բայաձևերի կազմության, որով և արտահայտում են բայի երեք հիմնական ժամանակների մի շարք ավելի մանրամասնած ժամանակներ։ Վերջիններս կազմվում են որևէ դերբայով ու օժանդակ բայով և կոչվում են բաղադրյալ ժամանակներ, ի տարբերություն պարզ ժամանակի, որը կազմվում է առանց դերբայի և օժանդակ բայի»[26]։ Գ. Սևակը սահմանական եղանակի մեջ ընդունում է ինն ժամանակներ՝ հետևյալ անվանումներով. ներկա անկատար (գնում եմ), անցյալ անկատար (գնում էի), վաղակատար ներկա (գնացել եմ), վաղակատար անցյալ (գնացել էի), հարակատար ներկա (գնացած եմ), հարակատար անցյալ (գնացած էի), ապառնի ներկա (գնալու եմ), ապառնի անցյալ (գնալու էի), անցյալ կատարյալ (գնացի)։

Ինչպես անմիջաբար նկատվում է, Գ. Սևակը ժամանակներն անվանում է Մ. Աբեղյանի սկզբունքով, միայն անկատար դերբայով կազմված ժամանակների անվանումը հակասում է մյուսներին և հետևելով դրանց՝ պետք է ունենայինք անկատար ներկա, անկատար անցյալ անվանումները (ինչպես վաղակատար ներկա, վաղակատար անցյալ և այլ անվանումները)։

Ղրձական, պայմանական և հարկադրական եղանակների ժամանակներն անվանվում են ապառնի ներկա (գնամ—կգնամ—պիտի գնամ) և ապառնի անցյալ (գնայի—կգնայի—պիտի գնայի), այսինքն՝ այստեղ ևս անվանման սկզբունքը դալիս է Մ. Աբեղյանից։

[26] Գ. Սևակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 304—305։

Արդի հայերենի բայի ժամանակների մասին իր դրույթները Գ. Սևակը պաշտպանում է «Մեր բայի խոնարհման համակարգի շուրջը» հոդվածում («Սովետական դպրոց», 1968, նոյեմբերի 27)։

Անցնելով կերպերի հարցին՝ պետք է նշել, որ Գ. Սևակն ընդունում է Մ. Աբեղյանի կերպերի տեսությունն ամբողջությամբ։ Նա ընդունում է բայի գործողության երեք կերպ՝ կատարվող, որն արտահայտվում է անկատար դերբայներով (գնում, գնալիս), կատարված, որն արտահայտվում է վաղակատար և հարակատար դերբայներով (գնացել, գնացած) և կատարելի, որն արտահայտվում է ապառնի դերբայով (գնալու)։ «Բայի մյուս բոլոր ժամանակները, որոնք այս կերպերից որևէ մեկը չունեն, անկերպ են, երբեմն կոչվում են բայի պարզ կերպ»[27]։

Մի քանի խոսքով անդրադառնանք երկրորդական կամ երկրորդային բաղադրյալ ժամանակների անվանման հարցին։ Իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատության մեջ Գ. Սևակը բերում է երկրորդային բաղադրյալ բայաձևերի ամբողջական հարացույցը։ Դրանք կազմվում են անկատար երկրորդ (գրելիս), հարակատար (գրած) ու ապառնի (գրելու) դերբայներով և լինել օժանդակ բայի խոնարհման ձևերով՝ գրելիս եմ լինում, գրելիս էի լինում, գրած եմ լինում, գրած էի լինում, գրելու եմ լինում, գրելու էի լինում և այլն, և այլն։

Անկատար դերբայով կազմված բոլոր ժամանակները կոչվում են տևական ժամանակներ, որոնք անվանվում են լինել բայի խոնարհման ձևերը հաշվի առնելով, իսկ ապառնի և հարակատար դերբայներով կազմված բայաձևերն անվանելիս նախ տրվում է դերբայի, ապա լինել խոնարհված բայաձևի անվանումը, ինչպես, օրինակ՝ տևական անկատար ներկա—գրելիս եմ լինում, տևական անկատար անցյալ—գրելիս էի լինում, տևական վաղակատար ներկա—գրելիս եմ եղել և այլն։

Այս սկզբունքով են անվանվում նաև ըղձական, պայմա-

---

[27] Անդ, էջ 306։

նական ու հարկադրական եղանակների երկրորդական բաղադրյալ ժամանակները (ըղձականի ներկա—գրելիս լինեմ, ներկա—գրելիս լինեի, ապառնու ապառնի—գրելու լինեմ, հարակատարի ապառնի—գրած լինեմ և այլն)։ Ըստ որում, ինչպես նշված է արդեն, խոնարհման ամեն մի ձև համարվում է առանձին ժամանակ, և, այսպիսով, հայերենի բայի ժամանակների քանակը հասցվում է առնվազն 58-ի։

Ժամանակակից հայերենի խոնարհումը քննության նյութ է դարձրել նաև Ստ. Լիսիցյանը իր «Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը» ընդարձակ հոդվածում։ Ներկայացնելով ժամանակակից հայերենի բայի խոնարհման համակարգի նկարագրման համառոտ պատմությունը՝ Ստ. Լիսիցյանը գրում է. «Մեր գրական լեզվի ռեալ երևույթները համադրելիս՝ կարծում եմ կարելի է կառուցել խոնարհման ավելի հիմնավորված, ավելի հետևողական ու ավելի պարզ աղյուսակ, քան այն, որ ընդունված է մեր դպրոցներում պրոֆ. Մ. Աբեղյանի մշակած սխեմի հետևողությամբ»[28]։

Ստ. Լիսիցյանի առաջարկած սխեմայի էական տարբերությունները Մ. Աբեղյանի մշակած համակարգից հետևյալներն են։

1. Գնամ, գնայի տիպի ձևերը, ինչպես որ Մ. Աբեղյանին նախորդող քերականությունների մեջ էր, անվանվում են ստորադասական եղանակի ձևեր։

2. Կր–ով կազմված բայաձևերը՝ կգնամ, կգնայի, անվանվում են ըղձական եղանակի բայաձևեր։

3. Պիտի–ով կազմված ձևերը՝ պիտի գնամ, պիտի գնայի, հանվում են բայի խոնարհման հարացույցից, այսինքն՝ առանձին հարկադրական եղանակ չի ընդունվում։

4. Ներկա ապառնի և անցյալ ապառնի անվանումները, ներկա վաղակատար և անցյալ վաղակատար անվանումներին համահնչյուն, փոխարինվում են ներկա ուշակատար և անցյալ ուշակատար անվանումներով։

---

[28] Ստ. Լիսիցյան, *Ժամանակակից հայերեն լեզվի խոնարհումը*, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 19, 1941, էջ 478։

5. Առանձին հարակատար ժամանակներ չեն ընդունվում. եկած եմ, եկած էի և նման ձևերը «պետք է ճանաչվեն երկրորդ ձև ներկա վաղակատարի և անցյալ վաղակատարի»[29];

6. Սահմանական, ստորադասական և ըղձական եղանակներում ընդունվում են երկու հիմնական ժամանակներ՝ ներկա և անցյալ[30];

7. Սահմանական եղանակի անցյալում ընդունվում է երկու կերպ՝ կատարյալ (aorist) *և անկատար* (imperfectum)[31];

Հայերենի բայի խոնարհման համակարգում մտցված էին նաև այլ կարգի փոփոխություններ, բայց և բերվածներն էլ բավական են համոզվելու, որ Ստ. Լիսիցյանի սխեման և անվանումները, որոնք այնքան տարբեր էին Մ. Աբեղյանի մշակած սխեմայից և անվանումներից, համարյա ոչ մի հետք չթողեցին հայ քերականական մտքի հետագա ընթացքի վրա և սոսկ կարող են արժեք ներկայացնել քերականության պատմության տեսակետից։

Հայերենի բայի խոնարհումը ընդարձակ, մանրամասն ու հանգամանալից քննության է ենթարկված Հ. Աճառյանի «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության IV հատորի Ա և Բ մասերում։ Ինչպես այլ դեպքերում, այս դեպքում ևս հեղինակը հարցին մոտենալով ընդհանուր լեզվաբանական, պատմա-համեմատական և պատմական տեսանկյուններից՝ ներկայացնում է հայերենի խոնարհման ծագումը և նրա դրսևորումները գրաբարում, միջին հայերենում, բարբառներում և արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներում։ Չնայած որ այս աշխատությունն անմիջաբար արևելահայերենին չի վերաբերում, բայց, համենայն դեպս, կարծում ենք, որ Հ. Աճառյանի որոշ դրույթներին ծանոթանալն անպայմանորեն անհրաժեշտ է։

Ամենից առաջ կերպերի հարցը, որը հայերենի քերականության ամենամութ ու վիճելի կետերից մեկն է։ Հ. Աճառյանը կերպի կարգը քննում է «Բայական երևույթները» վերնագրի տակ։ Նա գրում է. «Երևույթ ասելով հասկացվում է

[29] *Տե՛ս անդ, էջ 479։*

[30] *Անդ, էջ 483։*

[31] *Անդ։*

գործողության տևողությունը կամ կատարման կերպը. հայերենի կամ ֆրանսերենի մեջ ժամանակ ասելով հասկանում ենք գործողության րոպեն (ե՞րբ է գործողությունը). բայց այդ ժամանակները չեն ցույց տալիս բնավ, թե այդ գործողությունը ինչքա՞ն տևողություն ունի և ի՞նչ կերպով է եղել։ Հնդեվրոպական նախալեզուն ավելի կարևոր էր համարում զանազանել այս կետերը, քան թե ժամանակը։ Հընդեվրոպականի բայը ցույց էր տալիս, թե գործողությունը տեվակա՞ն էր, թե որոշ վայրկյանի համար, գործողությունը սկսվո՞ւմ էր, թե վերջանում, մե՞կ անգամ էր տեղի ունենում, թե կրկնվում էր քանիցս անգամ, վերջացած ու իր արդյունքին հասա՞ծ էր»[32]։ Նշելով, որ հնդեվրոպական հիմնալեզվի համար վերականգնում են վայրկենական (momentane), կատարելական (perfectiv), տևական (durativ), կրկնական (iterativ), վերջավորական (terminativ), անկատարական (imperfectiv), սկսնական (inchoativ) երևույթներ, Հ. Աճառյանը գրում է. «Երևույթները կազմում են հնդեվրոպական նախալեզվի ամենադժվար և բարդ կողմը։ Այդ երևույթները ժառանգաբար անցել են սանսկրիտին, հին հունարենին և այսօր էլ կենդանի են դեռ սլավոնական լեզուների մեջ»[33]։

Քննելով կերպերի (երևույթների) դրսևորումները վերոհիշյալ լեզուներում՝ Հ. Աճառյանը գրաբարի մասին գրում է. «Հայերենում ներկայի և անկատարի մեջ չկա գործողության վերջացման գաղափարը և պատկերացվում է նա իր ամբողջ ընթացքի մեջ. aoriste-ը որոշ և վերջավորված մի գործողություն է ցույց տալիս. օրինակ՝ «Չոգաւ, լուացաւ, եկն և տեսանէր». առաջին երեքը վերջացած գործողություններ են, ուստի և դրված են aoriste, իսկ վերջինը, որ տևական է, դրված է անկատար։ Պատմողական լեզուն հայերենում լինում է անկատար կամ aoriste։ Ստորադասականի մեջ էլ կա վերջացած և չվերջացող գործողություն, օրինակ՝ «Յորժամ քաղաքք և գեղք աւերեսցին (aor.) և անդ դիք բնակիցեն» (ներկ.)։ Ավերումը միայն մի անգամ եղավ վերջացավ, իսկ

[32] Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա, Երևան, 1959, էջ 54։

[33] Անդ, էջ 55։

գևերի բնակումը անորոշ ժամանակով է։ Բայց աշխարհաբար կատարյալն էլ կարող է չվերջացած համարել, օրինակ՝ «Ես այդ տղային հավանեցի, սիրեցի» (չի ասում, թե էլ չի սիրում)»[34]։

Անդրադառնալով աշխարհաբարին՝ Հ. Աճառյանը առանձին բայաձևերի մեջ տեսնում է վայրկենական և տևական երևույթներ։ «Արդի հայերենում երևույթի երկու տեսակները ցույց են տալիս ունեմ և ունենում եմ, կարող եմ և կարողանում եմ, եմ և լինում եմ. առաջինները միայն ներկա րոպեի համար, երկրորդները մշտապես... Վերևի ձևերից վերջինը՝ եմ և լինում եմ, ինչպես և սրանց աննկատարը՝ էի և լինում էի, իբրև օժանդակ կարող են գործածվել ամեն տեսակ ածականի հետ և կազմել վայրկենական կամ տևական երևույթներ, օրինակ՝ Հիվանդ եմ (միայն այժմ). Ամեն օր հիվանդ եմ լինում կամ հիվանդանում եմ (մշտապես)։

Արևելյան գրական լեզուն զանազանում է նաև բայերի մեջ –ում եմ և –ելիս եմ, –ում էի և –ելիս էի, որոնցից առաջինը վայրկենական է, իսկ երկրորդը շարունակական։ Օրինակ՝ ուտում եմ—ուտելիս եմ, խոսում եմ—խոսելիս եմ, ուտում էի—ուտելիս էի, խոսում էի—խոսելիս էի։

Շարունակական երևույթի բազմաթիվ ձևեր հնարված են Փոքր Ասիայի հայերեն բարբառներում, որոնց գլխավոր տիպն է պոլսահայ բարբառով՝ **կուտեմ և կուտեմ կոր, կուտեի և կուտեի կոր»**[35]։

Ահա այն հիմնականը, ինչ ասում է Հ. Աճառյանը հայերենի բայի կերպի մասին։ Ինչպես տեսնում ենք, լեզվաբանը բոլորովին չի անդրադառնում ժամանակակից հայերենի բայի այսպես կոչված կատարվող, կատարված, կատարելի ու պարզ կերպերի հարցին, որն առաջ էր քաշել Մ. Աբեղյանը և ընդունվել էր Ա. Ղարիբյանի, Գ. Սևակի և ուրիշների ղողմից։ Ինչպես երևում է, ժամանակակից հայերենի բայի կերպերի աբեղյանական ըմբռնումը չափազանց յուրահատուկ էր ու յուրօրինակ և չէր խարսխվում բայի կերպերի՝ լեզվաբա-

---

[34] *Անդ, էջ 60—61։*

[35] *Անդ, էջ 62—63։*

նության մեջ ընդունելության ու ճանաչում գտած ըմբռնման վրա։

Անցնելով ժամանակի քերականական կարգի բնութագրմանը՝ Հ. Աճառյանը գրում է. «Ժամանակը ցույց է տալիս, թե գործողությունը երբ է կատարվում։ Հասարակ դատողությամբ ժամանակը երեք է՝ այժմ, առաջ և հետո, որոնք քերականական լեզվով կոչվում են ներկա, անցյալ և ապառնի։ Բայց ժամանակը կարող է ունենալ բազմաթիվ բաժանմունքներ. միևնույն անցյալը կարող է լինել մի ժամ առաջ կամ երեկ, կամ խոր հնության մեջ։ Նույնպես ապագան կարող է լինել քիչ հետո կամ վաղը, կամ հազարավոր տարիներ հետո։ Ընդհանրապես բոլորի մեկնակետը խոսելու րոպեն է։ Ներկան ցույց է տալիս, որ գործողությունը տեղի է ունենում խոսված միջոցին և դեռ լրացած չէ, անցյալը նրանից առաջ, իսկ ապառնին դեռ կատարված չէ։

Բայց որևէ գործողություն կարող է կապակցվել ոչ միայն խոսված րոպեի հետ, այլև մի ուրիշ գործողության կատարված կամ կատարվելիք ժամանակի հետ։ Օրինակ՝ «Երբ նա եկա, նա արդեն մեկնել էր»։ Այս խոսքի մեջ եկա կապված է խոսողի ժամանակի հետ, իսկ մեկնել էր կապված է եկա բայի ժամանակի հետ։ Այսպիսի ժամանակներն էլ բնականաբար լինում են գլխավորապես վեց, երեքը անցյալի վերաբերմամբ ներկա, անցյալ և ապառնի և երեքը ապառնիի վերաբերմամբ։ Առաջին երեք ժամանակները, որոնք կապված են խոսողի րոպեի հետ, կոչվում են գլխավոր ժամանակներ, իսկ վերջին վեցը, որ կապված են մի ուրիշ գործողության ժամանակի հետ, կոչվում են երկրորդական ժամանակներ»[36]։

Այնուհետև նա իր մտքերը շարունակում է հետևյալ ձևով. «Երկրորդական ժամանակներն էլ կարող են ունենալ իրենց երկրորդական ներկա, անցյալ և ապառնի ժամանակները, որոնք պիտի կոչվեն երրորդական ժամանակներ։ Այսպիսով կազմվում է մի ավելի մեծ խառնուրդ նորանոր և զանազան ժամանակների»[37]։ Եվ ապա բերելով մի նախա-

[36] Անդ, էջ 33։

[37] Անդ, էջ 35։

դասութ յուն, որտեղ արտահայտվում են անցյալի զանազան երբեր անգներ՝ Հ. Աճառյանը շարունակում է. «Ժամանակների երկրորդական և երրորդական դրությունը հասնում է այնպիսի բարդության, որ այլևս մարդկային միտքը դադար է տալիս, թեև տեսականորեն միշտ կարելի է ավելին ըմբռնել»[38]։

Ինչպես ուրիշ քերականական կարգերի, այնպես էլ ժամանակի կարգի դրսևորման մեջ տարբեր լեզուներ տարբեր առանձնահատկություններ են երևան հանում։ «Կան լեզուներ, որ բավականանում են ժամանակ արտահայտող բայական սակավաթիվ ձևերով. օրինակ՝ եբրայեցերենում ժամանակի մեծ խտրություն չկա, բայը ցույց է տալիս միայն այն, թե գործողությունը վերջացա՞ծ է (անցյալ կատարյալ), թե չի վերջացել (անկատար կամ ապառնի)։ Ասորերենում mutatif է կոչվում այն ժամանակը, որ գործածվում է թե ներկայի և թե ապառնիի համար։ Կամիսերենում բայի ժամանակը երկու է. ներկա (որ նաև ապառնի է) և անցյալ»[39]։ Կամ «Եթովպացերենը մյուս սեմական լեզուների նման գիտի միայն երկու բայաձև. այն է՝ լրացած, հետևաբար իրական գործողություն և դեռ չլրացած գործողություն։ Առաջինը կոչվում է կատարյալ, երկրորդը անկատար։ ...Ըստ այսմ եթովպացերենը աղքատ է բայի կողմից և իր երկու կամ երեք ձևերով լրացնում է հնդեվրոպական ճոխ խոնարհումը»[40]։

Երբ հարցին մոտենում ենք այս տեսանկյունից, ապա պարզ է դառնում, որ ժամանակակից հայերենը, ֆրանսերենի նման, այն լեզուներից մեկն է, որ չափազանց հարուստ է ժամանակային ձևերով, և Հ. Աճառյանը իր «Լիակատար քերականության» մեջ շեշտը հատկապես դնում է այդ ձևերի պատմական տեսության վրա՝ քննելով հայերենի ժամանակային ձևերի դրսևորումները գրաբարում, միջին հայերենում, բարբառներում և արևելահայ ու արևմտահայ գրական լեզուներում[41]։

---

38 *Անդ։*

39 *Անդ։*

40 *Անդ, էջ 43։*

41 *Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա, 1959, հ. IV, Բ, 1961։*

Արդի հայերենի բայի ժամանակի և կերպի կարգերը հանդամանորեն քննված ու վերլուծված են Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության մեջ։ Հեղինակը նախ փորձում է բացատրել բայի ժամանակի կարգի էությունը։ Նա գալիս է այն եզրակացության, որ «բայի ժամանակ ասելով պետք է հասկանալ գործողության հարաբերումը խոսքի մոմենտին կամ սրա նկատմամբ վերցված որևէ անցյալ կամ ապառնի ժամանակակետին»[42]։ Ելնելով նաև այն դրույթից, որ «խոսքի մոմենտը միշտ գիտակցվում է որպես ներկա, հետևաբար նրան նախորդող գործողությունը, անկախ իր կատարման վիճակից, կունենա կատարման անցյալ ժամանակ, իսկ հաջորդողը՝ ապառնի»[43], Հ. Բարսեղյանն ընդունում է բայական երեք ժամանակներ՝ ներկա, անցյալ ու ապառնի և հայերենի բայի ժամանակային բոլոր ձևերը տեղաբաշխում այդ երեք ժամանակների մեջ։ Սրա արդյունքն այն է լինում, որ սահմանական եղանակի ժամանակային ինն ձևերից մեկը՝ գնում եմ, համարվում է ներկա, մեկը՝ գնալու եմ, ապառնի, իսկ յոթը՝ գնացել եմ, գնացած եմ, գնում էի, գնացել էի, գնացած էի, գնալու էի, գնացի, անցյալ։

Մեզ համար այսպիսի տեղաբաշխումը ընդունելի չէ թեկուզ միայն այն պատճառով, որ նույն անցյալ ժամանակի մեջ զետեղվում են այնպիսի լեզվական միավորներ, որոնք իրարից լիովին տարբեր են և՛ իմաստով, և՛ ձևով։ Այսպես օրինակ՝ և՛ իմաստային, և՛ ձևային տեսակետից ոչ մի շփման եզր չկա գնալու էի և գնացի ձևերի միջև՝ մի կողմից և գնալու էի և գնացել եմ ձևերի միջև՝ մյուս կողմից։ Իսկ այս էլ, մեր կարծիքով, իր հերթին նշանակում է, որ դրանք չեն կարող դիտվել որպես նույն ենթակարգի՝ անցյալ ժամանակի ենթակարգի տարբեր դրսևորումներ։ Մեր ըմբռնմամբ քերականական նույն ենթակարգի տարբեր դրսևորումներ կամ ձևեր կարող են համարվել միայն այն ձևերը, որոնք իրարից իմաստով չեն տարբերվում։ Այսպես են, օրինակ, բացառա-

---

[42] Հ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953, էջ 139։

[43] Անդ։

կանի ից և ուց, գործիականի ով և ը, սեռական-տրականի ի, ու, աև, ա և այլ ձևերը, որոնք համապատասխանաբար հանդես են գալիս որպես նույն և միևնույն անփոփոխակի փոփոխակները։ Հարցին մոտենալով այս տեսակետից՝ հնարավոր չէ ասել, թե ճստել եմ, ճստել էի, ճստած եմ, ճստած էի, ճստելու էի, ճստում էի, ճստեցի միավորները միևնույն անցյալ ժամանակ անփոփոխակի փոփոխակներն են, տարբեր ձևերը կամ դրսևորումները։

Ինչևիցե, հեղինակը քերականական ժամանակի իր ըմբռնումներից ելնելով՝ քննում է, թե ինչ մասնակցություն ունեն դերբայները և օժանդակ բայը ժամանակի կարգի արտահայտման մեջ բաղադրյալ ձևերում։ Հետազոտողը գալիս է այն եզրակացության, որ «ոչ դերբայները, ոչ էլ օժանդակ բայը, առանձին վերցրած, գործողության կատարման ժամանակ չեն արտահայտում»[44], որովհետև հակառակ դեպքում, ասենք, ներկա ժամանակակետի նկատմամբ վերցված բոլոր գործողությունները կունենային ներկա ժամանակ, կամ անկատար դերբայով միշտ ներկա ժամանակ կարտահայտվեր։ Հեղինակը միաժամանակ գտնում է, որ «դերբայները արտահայտելով գործողության ընդհանուր գաղափարը իր տարբեր վիճակներում, դրանով իսկ ակնարկում են այդ վիճակի հետ կապված ժամանակի գաղափարը»[45]։ Քննելով բաղադրյալ ձևերում ժամանակի կարգի դրսևորման մասին արտահայտված տարբեր տեսակետները՝ Հ. Բարսեղյանն ընդունում է այն դրույթը, որ բաղադրյալ ձևերում օժանդակ բայն արտահայտում է ժամանակակետի գաղափար, իսկ դերբայը՝ գործողության վիճակի գաղափար, և այդ երկուսի հարաբերությամբ դրսևորվում է ժամանակի կարգը։

Անցնելով բայական պարզ ձևերի վերլուծությանը՝ հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ «պարզ կազմություն ունեցող եղանակային ձևերում ժամանակի արտահայտումը էապես նույնն է, ինչ բաղադրյալ ձևերում։ Այդ ձևերում բայի վերջավորությունը արտահայտում է ժամանակակետը, իսկ

---

[44] *Անդ, էջ 146։*

[45] *Անդ։*

բայարմատը գործողության գաղափարը, միայն պարզ կազմություն ունեցող եղանակային ձևերը գործողությունը վերցնում են որևէ ժամանակակետի մեջ և ոչ թե նրա հարաբերությամբ»[46]։

Հայերենի բայի կերպերի հարցում Հ. Բարսեղյանը ևս ելնում է Մ. Աբեղյանի դրույթներից՝ ընդունելով բայի կատարվող, կատարված, կատարելի և պարզ կերպերը։ Վերլուծելով կերպերի և ժամանակների փոխհարաբերությունները՝ նա այն կարծիքն է հայտնում, որ «անցյալ ժամանակակետի նկատմամբ վերցված բոլոր գործողությունները անցյալ ժամանակ են ունենում, իսկ ապառնի ժամանակակետի նկատմամբ վերցվածները՝ ապառնի»[47]։ *Թեև այդ դրույթն իրոք ճիշտ է, սրանից տրամաբանորեն բխում է, որ ներկա ժամանակակետի նկատմամբ վերցված գործողություններն էլ պետք է ունենան ներկա ժամանակ։ Այնինչ հեղինակը այդ կարծիքին չէ, որովհետև գտնում է, որ գրել եմ շարքի բայաձևերն անցյալ, իսկ գրելու եմ շարքի բայաձևերն ապառնի ժամանակ են արտահայտում։ Մյուս կողմից, եթե անցյալ և ապառնի ժամանակակետերի նկատմամբ վերցված բոլոր գործողությունները համապատասխանաբար անցյալ և ապառնի ժամանակներ են արտահայտում, ուրեմն դերբայները ժամանակի արտահայտման մեջ անցյալ և ապառնի ժամանակակետերի հարաբերությամբ դեր չունեն. նրանք դեր ունեն միայն ներկա ժամանակակետի հարաբերությամբ։ Այսպիսի հարցադրումը մեր կարծիքով վիճելի է։*

Անցնելով ժամանակային ձևերի անվանմանը՝ պետք է նշել, որ այս աշխատության մեջ հիմնականում պահպանվում է ժամանակային ձևերի անվանման այն սկզբունքը, ինչ տեսանք Ա. Ղարիբյանի աշխատություններում՝ ներկա, անցյալ անկատար, վաղակատար, անցյալ վաղակատար և այլն։ Միայն գտնելով, որ գրելու եմ, գրելու էի ձևերի մեջ գործողությունը կատարելի է առաջինում ներկայի, իսկ երկրորդում անցյալի համեմատությամբ, հեղինակը գրում է, որ

---

[46] *Անդ, էջ 147։*

[47] *Անդ, էջ 149։*

Այսօր բայաձևերի անվանմանը համապատասխան պիտի ունենայինք կատարելի և անցյալի կատարելի անվանումները[48]։ *Այդ փոփոխությունն արդեն կատարվում է դպրոցական քերականության դասագրքում*[49]։

Մի կարևոր փոփոխություն էլ կատարվում է պարզ ժամանակների անվանման մեջ։ Հայտնի է, որ գրեմ—գրեի *(և համապատասխանաբար՝* կգրեմ—կգրեի, պիտի գրեմ—պիտի գրեի*) ձևերն անվանվում էին բաղադրյալ ձևերի նման՝ ապառնի—անցյալի ապառնի տերմինավորմամբ։ Հ. Բարսեղյանը գտնում է, քանի որ այդ բայաձևերով գործողության կերպ չի արտահայտվում, ուստի և դրանք պետք է կոչել ոչ թե ժամանակակետի և նրան հաջորդող մի ապառնի ժամանակի անվամբ, այլ գործողության կատարման ընդհանուր ժամանակի անվամբ։ Ըստ այդմ,* գրեմ, կգրեմ, պիտի գրեմ *բայաձևերը համարվում են ապառնի, իսկ* գրեի, կգրեի, պիտի գրեի *բայաձևերը՝ անցյալ*[50]։ *Կարծում ենք, որ եթե* գրեի, կգրեի, պիտի գրեի *ձևերը անվերապահորեն անցյալ են համարվում, ապա* գրեմ, կգրեմ, պիտի գրեմ *ձևերն էլ դրանց համապատասխան պետք է համարվեն ներկա, իսկ եթե* գրեմ, կգրեմ, պիտի գրեմ *ձևերը ապառնի են համարվում, ապա դրանց համապատասխան* գրեի, կգրեի, պիտի գրեի *պետք է համարվեն անցյալի ապառնի։ Ուրեմն, ինչպես էլ որ մոտենանք այս ժամանակաձևերի անվանմանը, կարծում ենք՝ ապառնի—անցյալ զուգադրությունն իրեն չի արդարացնում։*

Մի քանի խոսք երկրորդական բաղադրյալ ժամանակների անվանման մասին։ Շոշափելով այդ հարցը՝ Հ. Բարսեղյանը գրում է. «Սկսած պրոֆ. Աբեղյանից, երկրորդական բոլոր ժամանակներում ստորոգելիական բոլոր կատեգորիաները, բացի կերպից, որոնել են «լինել» բայի խոնարհման ձևերի մեջ և ըստ այդմ էլ բնորոշել են այդ ձևերը։ Մինչև այսօր էլ

---

[48] *Անդ, էջ 157։*

[49] *Տե՛ս* Է. Աղայան, Հ. Բարսեղյան, *Հայոց լեզու, Երևան, 1971, էջ 157։ Այս դասագրքում բայաձևերն անվանվում են Աբեղյանի սկզբունքով՝* անկատար ներկա—անկատար անցյալ, վաղակատար ներկա—վաղակատար անցյալ *և այլն։*

[50] *Տե՛ս անդ, էջ 173—183։*

«Մութն է եղել», «Մթնելիս է եղել», «Մթնած է եղել» նախադասությունների ստորոգյալները հավասարապես համարվում են վաղակատար ժամանակի բայաձևեր»[51]*։ Լեզվաբանը գրտնում է, որ «երկրորդական բաղադրյալ ժամանակներում գործողությունն իր տարբեր վիճակներով արտահայտվում է փոփոխվող դերբայով, իսկ ժամանակակետի և զանազան եղանակային երանգները՝ լինել բայի խոնարհման ձևերով։ Ուստի այդ եղանակային ձևերի ժամանակները որոշելու և ըստ այդմ էլ դրանք տերմինավորելու համար պիտի հաշվի առնել տվյալ դերբայով արտահայտված գործողության վիճակը և լինել բայի խոնարհված ձևով արտահայտված ժամանակակետը»*[52]*։*

Ըստ այդմ ստանում ենք.
գրելիս եմ լինում — ներկա (անկատար).
գրած եմ լինում — հարակատար կամ վաղակատար.
գրելու եմ լինում — ապառնի։

Լինել *բայի անցյալ ժամանակակետ արտահայտող ձևերով, որոնք են՝* լինում էի, լինելու էի, եղել եմ, եղել էի, լինեի, կլինեի, պիտի լինեի *և դերբայներով կազմվող բոլոր բայաձևերը կունենան անցյալ ժամանակ, որոնք անվանվում են ըստ դերբայների.*

անցյալի անկատար — գրելիս եմ եղել—էի լինում—էի լինելու—էի եղել—եղա—լինեի—կլինեի—պիտի լինեի.

անցյալի հարակատար *կամ* վաղակատար — գրած եմ եղել—էի լինում—էի լինելու *և այլն.*

անցյալի ապառնի — գրելու եմ եղել—էի լինում—էի լինելու *և այլն։*

Լինել *բայի ապառնի ժամանակակետ արտահայտող ձևերով, որոնք են՝* լինելու եմ, լինեմ, կլինեմ, պիտի լինեմ, եղիր *և դերբայներով կազմվող բոլոր բայաձևերը դրսևորում են գործողության կատարման ապառնի ժամանակ՝ կատարվող, կատարված և կատարելի կերպերով, որոնք կրկին անվանվում են ըստ դերբայների.*

---

[51] *Անդ, էջ 167։*

[52] *Անդ, էջ 168։*

ապառնիի անկատար — գրելիս եմ լինելու—լինեմ—կլինեմ—պիտի լինեմ—եղիր.

ապառնիի հարակատար *կամ* վաղակատար — գրած եմ լինելու—լինեմ *և այլն.*

ապառնիի կատարելի *(ապառնի)* — գրելու եմ լինելու—լինեմ *և այլն*[53]:

Այս թոռուցիկ վերլուծություններից կարելի է գալ այն եզրակացության, որ Հ. Բարսեղյանի արդի հայերենի բայի ժամանակի կարգի մասին ունեցած ըմբռնումներն ու դրույթները զգալի չափով տարբերվում են այն ժամանակ գործող դպրոցական քերականության և միաժամանակ Մ. Աբեղյանի դրույթներից ու ըմբռնումներից: Պետք է նշել նաև, որ դպրոցական քերականության ներկայումս գործող դասագրքում բայի ժամանակների դասակարգման հարցը խարխլված է հենց վերոբերյալ ըմբռնումների վրա: Դեռ ավելին. եթե քննության նյութ դարձած հետազոտության մեջ այնուամենայնիվ այս կամ այն առիթով խոսվում է սահմանական եղանակի ինը ժամանակների մասին (տե՛ս, օրինակ, էջ 180), ապա դպրոցական քերականության գործող դասագրքում սահմանական եղանակի ինը ժամանակներ հասկացությունը փոխարինվում է սահմանական եղանակի ինը բայաձևեր անվանմամբ: Այս բայաձևերը անվերապահորեն տեղաբաշխվում են ներկա, անցյալ և ապառնի ժամանակների մեջ[54]: *Հեղինակի այսպիսի մոտեցումը, ինչպես և բայական ժամանակների ըմբռնման և ներկայացման հարցը բանավեճի նյութ է դարձել մի քանի քննադատական հոդվածներում*[55]: *Դրանց ի պատասխան՝ իրենց տեսակետների ու դրույթների պաշտ-*

---

53 *Տե՛ս անդ, էջ 169—171:*

54 *Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, Դասագիրք միջն. դպրոցի V—VII դաս. համար, Երևան, 1971, էջ 153 և հաջորդները:*

55 *Տե՛ս Ալ. Մարգարյան, Ինչպե՞ս է ներկայացված բայը նոր դասագրքում, «Սովետական դպրոց», 1968, օգոստոսի 28. Գ. Սևակ, Մեր բայի խոնարհման համակարգի հարցի շուրջը, «Սովետական դպրոց», 1968, նոյեմբերի 27:*

պանութ յամբ հանդես են եկել դպրոցական քերականութ յան դասագրքի հեղինակները՝ է. Աղայանը և Հ. Բարսեղյանը[56]։

Ժամանակակից հայերենի բայի եղանակների և ժամանակների հարցերը շոշափված են նաև Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսութ յուն» աշխատութ յան մեջ՝ ստորոգյալի դրսևորման քննութ յան կապակցութ յամբ։ Նա սահմանական եղանակի համար ընդունում է ներկա, ապառնի, անցյալի ապառնի, անցյալի անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար ժամանակներ[57], ըստ որում վերջին վեցը դնում է «ստորոգյալ սահմանական եղանակի անցյալ ժամանակներով» ենթավերնագրի տակ, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների համար՝ ապառնի և անցյալի ապառնի ժամանակներ[58]։

Միաժամանակ հեղինակը քննում է նաև այսպես կոչված երկրորդական բաղադրյալ ժամանակներով դրսևորված ստորոգյալները, ըստ որում անկատար դերբայով կազմված ժամանակները անվանվում են միայն ըստ լինել բայի խոնարհված ձևերի (գնալիս եմ լինում—ներկա, գնալիս եմ եղել—վաղակատար, գնալիս եղա—անցյալ կատարյալ և այլն), իսկ հարակատար և ապառնի դերբայներով կազմված ժամանակները՝ և՛ ըստ դերբայի, և՛ ըստ լինել բայի խոնարհման ձևերի (գնացած եմ լինում—հարակատարի ներկա, գնացած եմ եղել — հարակատարի վաղակատար, գնացած եղա — հարակատարի անցյալ կատարյալ, գնալու եմ լինում — ապառնի ներկա, գնալու էի լինում—ապառնի անցյալի անկատար և այլն)[59]։

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ Վ. Առաքելյանը

---

[56] Տե՛ս Հ. Բարսեղյան, Պատասխան մի քամածին քննադատութ յան, «Սովետական դպրոց», 1968, հոկտեմբերի 9. է. Աղայան, Հին շփոթի բացվիղներում, «Գրական թերթ», 1969, հունվարի 10։

[57] Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսութ յուն, Ա, Երևան, 1958, էջ 62—90։

[58] Անդ, էջ 91—103։

[59] Տե՛ս անդ, էջ 116—133։

արդի հայերենի բայի ժամանակների հարցը ընդհանուր գծերով ներկայացնում է Մ. Աբեղյանի նման։

Արդի հայերենի ժամանակային ձևերի կիրառություններին է նվիրված Պ. Պողոսյանի «Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններն արդի հայերենում» (Երևան, 1959 թ.) աշխատությունը։

Ժամանակակից հայերենի բայի խոնարհման կարգերին բավականին հանգամանորեն, բայց յուրօրինակ դիրքերից ելնելով անդրադարձել է վրացի հայագետ Իվ. Ի. Շիլակաձեն իր «Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները» աշխատության մեջ։

Վրացի լեզվաբանը խիստ քննադատում է ժամանակակից հայերենի քերականությունների մեջ տարածում գտած այն դրույթը, որ սահմանական եղանակը ունի ինն ժամանակ։ Նա անվերապահորեն ելնում է այն ըմբռնումից, որ բայը կարող է ունենալ երեք ժամանակ և միայն ու միայն երեք ժամանակ։ Շիլակաձեն իր եզրակացությունները հիմնավորելու համար վկայակոչում է վրացի լեզվաբան Շանիձեի դրույթները, որը քննադատել է հայտնի լեզվաբաններ Վանդրիեսին և Եսպերսենին, որոնց կարծիքով ֆրանսերեն լեզվի մեջ գոյություն ունի ժամանակների զամմա։ Ա. Շանիձեն ժամանակների զամմա չի ընդունում ոչ միայն ֆրանսերենում, այլև մյուս լեզուներում։ Նա գրում է. «Մի՞թե կարելի է խոսել անցյալ ժամանակի մեջ պարունակվող ապառնի ժամանակի մասին, կամ ընդհակառակը՝ ապառնի ժամանակի մեջ պարունակվող անցյալ ժամանակի մասին։ Եթե այդ այդպես է, այն ժամանակ ի՞նչ է ապառնի ժամանակը և ի՞նչ է անցյալ ժամանակը... Երբեք չի եղել և չի կարող լինել, որ անցյալ ժամանակում արտահայտվեր ապառնի և ապառնիում՝ անցյալ ժամանակ...

Բայց եթե այս այսպես է, այն ժամանակ ինչո՞վ է բացատրվում ժամանակների ամբողջական զամման ֆրանսերենի մեջ։ Սա բացատրվում է նրանով, որ հեղինակը ժամանակի և հաջորդականության կարգերը շփոթում է միմյանց հետ։ Եթե այս երկու կատեգորիաները իրարից անջատենք, կտեսնենք, որ «ապառնին անցյալ ժամանակում» նույն անց-

յալ ժամանակը կլիներ (և ոչ ապառնի) և «անցյալ ժամանակը ապառնիում» նույն ապառնին կլիներ (և ոչ անցյալ ժամանակ)։

Այսպիսով, եթե հաջորդականության կատեգորիան բաժանենք ժամանակի կատեգորիայից, կտեսնենք, որ ժամանակների գոյման կանհետանա ոչ միայն ֆրանսերենում, այլև մյուս լեզուներում։ Դրանից հետո հարկ չի լինի խոսել գլխավոր և երկրորդական ժամանակների մասին, ինչպես այդ արվում է դասական լեզվաբանի աշխատության մեջ»[60]։

Արձանագրելով այն փաստը, որ հայոց լեզվի քերականությունների մեջ բայաձևերի յուրաքանչյուր խումբ հիշատակվում է որպես առանձին ժամանակի ձև, ինչպես՝ ընթանում էր — անցյալ անկատար ժամանակ, ընթացք — անցյալ կատարյալ ժամանակ, ընթացել է — վաղակատար ժամանակ, ընթացել էր — անցյալ վաղակատար ժամանակ, ընթացած է — հարակատար ժամանակ, ընթացած էր — անցյալ հարակատար ժամանակ, ընթանալու էր — անցյալի ապառնի ժամանակ, Շիլակաճեն գտնում է, որ այսպիսի հարցադրմամբ այն տպավորությունն է ստեղծվում, թե բայաձևերի վերոբերյալ շարքերը միմյանցից տարբերվում են միայն ժամանակով, մինչդեռ «բերված բոլոր օրինակները, բացի հարակատարից, արտահայտում են միայն անցյալ ժամանակ, խոսքի մոմենտից առաջ կատարված գործողություն, այսինքն ըստ ժամանակի նրանք չեն տարբերվում միմյանցից»[61]։ *Բերված բայաձևերի մեջ չգտնելով ժամանակային տարբերություն՝ լեզվաբանը գտնում է, որ վերոբերյալ անցյալի ձևերը իրարից տարբերվում են զանազան քերականական կարգերով։ Այսպես, «գրում էր և գրեց միմյանցից տարբերվում են միայն կերպի կատեգորիայով, առաջինը անկատար կերպ է արտահայտում, երկրորդը՝ կատարյալ կերպ։ Մյուս կատեգորիաներով նրանք համընկնում են. երկու ձևերն էլ ցույց են տալիս երրորդ*

---

[60] Ա. Շանիձե, *Վրացերենի քերականության հիմունքները, Թբիլիսի, 1953, էջ 218—219 (վրացերեն)։ Մեջ է բերվում ըստ Իվ. Ի. Շիլակաճեի աշխատության։*

[61] Իվ. Ի. Շիլակաճե, *Արդի հայերենի բայի խոնարհման կատեգորիաները, «Լեզվի և ոճի հարցեր», II, Երևան, 1964, էջ 175։*

դեմք, եզակի թիվ, սահմանական եղանակ, տեսած ակտ, անցյալ ժամանակ, ներգործական սեռ։

Այնուհետև, գրել է խմբի ձևերը բոլոր մյուս ձևերից (բացի գրել էր խմբի ձևերից) տարբերվում է միայն ակտի կատեգորիայով. գրել է արտահայտում է չտեսած գործողություն, իսկ մյուսները (բացի գրել էր խմբի ձևերից) ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որոնց ականատես է եղել ինքը, խոսողը... Գրել էր խմբի բայաձևերը տարբերվում են մյուսներից նրանով, որ այս ձևերով հայոց լեզվի մեջ արտահայտվում է հաջորդականության կատեգորիան։ Ավելի ճիշտ՝ այս ձևը ցույց է տալիս նախընթաց (նախորդ) գործողությունը, այսինքն այն գործողությունը, որ ուրիշ գործողությունից առաջ է կատարվել, օրինակ՝ «Գրեցի այնպես, ինչպես ուսուցիչը պատվիրել էր»։ Այնուհետև, ևստած էր խմբի բայաձևերը բոլոր ուրիշ խմբերից (բացի ևստած է խմբի ձևերից) տարբերվում են նրանով, որ նրանք արտահայտում են այնպիսի գործողություն (եղելություն), որը գոնվում է անշարժ, ստատիկ վիճակում։ Ըստ ժամպնակի ևստած է ներկա է, ևստած էր՝ անցյալ։ Այսինքն, ևստած է և ևստած էր խմբի ձևերը արտահայտում են ստատուսի կատեգորիան և միայն սրանով են տարբերվում մյուս բոլոր ձևերից»[62]։

Այս ձևով քանդելով արդի հայերենի «ժամանակների գամման»՝ հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ «հայոց լեզուն հարուստ է ոչ թե ժամանակներով, ինչպես պնդում են հայոց լեզվի ուսումնասիրողները, այլ քերականական շարքերով[63]*, որոնք արտահայտում են առանձին-առանձին քերականական կատեգորիաներ»*[64]։

Այսպես լուծելով բայի ժամանակների հարցը և հայերենի բայաձևերի մեջ խստորեն տեսնելով միայն ու միայն երեք

---

[62] *Անդ, էջ 177։*

[63] *Ըստ Ա. Շանիձեի տեսության շարք են կոչվում բայաձևերի այն խմբերը, որոնց մեջ արտահայտված են մի շարք քերականական-կարգեր և այլ խմբերից տարբերվում են մի հիմնական քերականական կարգով։ Այսպես՝ գրեցի, գրեցիր, գրեց... ձևերը մի շարք են կազմում, գրում էի, գրում էիր, գրում էր... ձևերը՝ մի այլ շարք և այլն։*

[64] *Անդ, էջ 195։*

ժամանակ՝ Շիլակաձեն անցնում է կերպերի վերլուծությանը։

Որոշակի հակասություններ, ցույց տալով կերպի ըմբռնման հարցերում՝ հեղինակը գրում է, որ հայոց լեզվի քերականություններում՝ Մ. Աբեղյանի և նրա հաջորդների աշխատություններում «ժամանակի և կերպի կատեգորիաները խառնվում են իրար հետ»[65]։ «Կերպերին տրվող կատարվող, կատարված և կատարելի անունները փաստորեն նույն քերականական ժամանակների երկրորդ անուններն են»[66]։ Մյուս կողմից՝ «կատարվող և կատարված տերմինների մեջ նկատի է առնված՝ գործողությունը անկատար է, թե կատարյալ, իսկ կատարելի տերմինը ցույց է տալիս, որ գործողության կատարումը կսկսվի խոսքի մոմենտից հետո և անտեսում է այն հանգամանքը, թե այդ գործողության կատարումը կկատարվի՞, կվերջացվի՞, կավարտվի՞, թե ոչ։ Այսինքն կատարվող և կատարված տերմինները ցույց են տալիս գործողության կատարման ավարտվածություն (կատարվածություն), իսկ կատարելի տերմինը՝ գործողության ժամանակ, այսինքն կերպի սահմանման սկզբունքն արդեն փոխվում է, և սրանից է, որ կերպի և ժամանակի կատեգորիաները ոչ ոքի չի հաջողվել իրարից անջատել։ Կերպի և ժամանակի կատեգորիաները շփոթվում են իրար հետ»[67]։

Այնուհետև, ըստ Շիլակաձեի արդի հայերենի բայի կերպի սահմանման մյուս թերությունն այն է, որ կատարվող, կատարված, կատարելի կերպերը որոշելիս այսպես թե այնպես կանխատեսվում է բայաձևերի քերականական բովանդակությունը և հենվելով դրանց վրա՝ որոշվում կատարման մե՞ջ է գտնվում գործողությունը, արդեն կատարվե՞լ է, թե՞ հետո պիտի սկսվի նրա կատարումը։ Իսկ պարզ կերպը որոշելիս բայաձևերի բովանդակությունը չի կանխատեսվում, թեպետ սա էլ է ցույց տալիս՝ արդեն կատարվե՞լ է գործողությունը, թե՞ հետո պիտի կատարվի։ Այս պատճառով է, որ ստացվում է այնպիսի անտրամաբանություն, որ «անցյալ կատարյալ» շարքի ձևերը մնում են կատարված կերպի ձևե-

65 Անդ, էջ 214։

66 Անդ, էջ 215։

67 Անդ, էջ 219։

բից դուրս և դասվում «պարզ կերպի» ձևերի մեջ։ Ճիշտ չէ, երբ ձևն անվանվում է անցյալ կատարյալ և իսկապես ցույց է տալիս կատարյալ (կատարված) գործողություն և կատարված կերպի մեջ չի դասվում»[68]։

Վրացի հայագետի պատկերացմամբ ժամանակակից հայերենի բայաձևերը ըստ կերպի դասավորվում են հետևյալ ձևով[69]։

Անկատար կերպի բայաշարքեր

ներկա (նստում եմ)
անցյալ անկատար (նստում էի)
ապառնի անկատար (նստելու եմ)
հետևանքային անկ. (նստելու էի)

Կատարյալ կերպի բայաշարքեր

սոսափիկ ներկա (նստած եմ)
անցյալ կատարյալ (նստեցի)
սոսափիկ՝ անցյալ (նստած էի)
չտեսած (նստել եմ)
նախորդ (նստել էի)
ապառնի կատարյալ (կնստեմ)
հետևան. կատ. (կնստեի)

Անկերպ բայաշարքեր

հրամայական (նստիր, նստեցեք)
ըղձական (նստեմ)
պայմանական (նստեի)
հարկադրական ապառնի (պիտի նստեմ)
հարկադրական անցյալ (պիտի նստեի)

Ընդհանուր գծերով այսպես են ներկայանում Շիլակաձևի՝ արդի հայերենի բայի ժամանակների և կերպերի մասին ունեցած ըմբռնումներն ու դրույթները։ Անժխտելի է այն փաստը, որ այս քերականական կարգերի ըմբռնման հարցում հայ քերականագիտության մեջ դեռևս չի մշակված մի միասնա-

---

[68] *Անդ, էջ 219—220։*

[69] *Տե՛ս անդ, էջ 245։*

կան և բոլորի կողմից ընդունված տեսակետ. բայի ժամանակների ու կերպերի ուսմունքում կան ինչ-ինչ անպարզություններ, վիճելի կետեր կամ ուղղակի հակասություններ, որոնք իրավացիորեն բացահայտվել են ուսումնասիրողի կողմից։

Բայց դրա հետ միաժամանակ չի կարելի չնշել նաև այն, որ հայերենի բայի խոնարհման՝ վրացի հայագետի ներկայացրած պատկերը իր եզանակներով, քերականական յուրահատուկ նոր կարգերով (տեսածի, չտեսածի, ստատուսի, նախորդի կարգեր և այլն) ոչ միայն հեռու է հայ քերականության դարավոր ավանդույթներից, այլև չի արտացոլում ժամանակակից հայերենի բայի խոնարհման իրական պատկերի գոնե ամենաէական կողմերը (նշենք թեկուզ միայն այն, որ նրա մեջ չեն արտացոլված հայերենի բայական կառուցվածքի հիմքը կազմող երկանդամ և եռանդամ հակադրությունները)։ Գուցե հենց այդ պատճառով էլ Շիլակաձեի աշխատությունը առայժմ ոչ մի արձագանք չի գտել հայ լեզվաբանության մեջ։

Արդի հայերենի բայի ժամանակների և կերպերի հարցը քննության նյութ է դարձվել նաև է. Աղայանի կողմից՝ նրա «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» (Երևան, 1967) աշխատության մեջ և ապա «Հին շփոթի բավիղներում» հոդվածում («Գրական թերթ», 10 հունվարի 1969 թ.)։

Գտնելով, որ ժամանակակից հայերենի քերականության մեջ ընդունված սահմանական եղանակի ինը ժամանակներից երկուսը (հարակատար ներկա և անցյալ) եղանակային ձևեր չեն, ուստի և մնում է յոթը, նա գրում է. «Այդ ձևերից վեցը երեք կերպերի (իր տերմինով՝ շարունակական, կատարելի, կատարյալ—Մ. Ա.) հակադրություն են ներկայացնում ներկա և անցյալ ժամանակների հարաբերությամբ... Հակադրությունների այդ համակարգից դուրս է մնում անցյալ կատարյալը, որը ցույց է տալիս կատարյալ (ավարտված) գործողություն անցյալ ժամանակում... Բաղադրյալ ձևերը արտահայտում են տևականություն կամ շարունակականություն, իսկ անցյալ կատարյալը՝ պարզապես կատարված գոր-

ծողություն, և դրան համապատասխան էլ կկոչենք պարզ կերպ, ընդունելով Մ. Աբեղյանի անվանումը»[70]։

Այս մեջբերումից և հետագա շարադրանքից պարզ երևում է, որ է. Աղայանը, մի կողմ թողած հարակատարի հարցը, արդի հայերենի ժամանակների ու կերպերի համակարգը ներկայացնում է Մ. Աբեղյանի նման։

Քննարկվող հարցին հեղինակն ավելի հանգամանորեն է անդրադառնում իր «Հին շփոթի բավիղներում» հոդվածում։ Բանավիճելով Գ. Սևակի հետ և պաշտպանելով արդի հայերենի բայի ժամանակների դպրոցական քերականության դասագրքում տեղ գտած ըմբռնումը, է. Աղայանը գրում է. «Քերականական ժամանակը գործողության հարաբերությունն է ժամանակի հետ՝ խոսելու պահի կամ իբրև ժամանակային հարաբերության հիմք ընդունված այլ ժամանակակետի հետ։ Առաջնորդվելով այս սահմանումով, մենք ընդունում ենք, որ բայն ունի երեք ժամանակ։ Այդ երեք ժամանակներում բայի արտահայտած գործողությունը կարող է լինել տարբեր վիճակներում, մի գործողություն նախորդել մյուսին և այլն, բայց դրանք ոչ թե փոխում են բայական ժամանակի ըմբռնումը, այլ միայն ցույց են տալիս գործողությունների հարաբերությունը այդ երեք ժամանակների և միմյանց հետ... Ինչպիսի հաջորդականություն և զուգահեռություն և ինչպիսի կերպային տարբերություններ էլ արտահայտեն բայական ձևերը, սրանք պետք է դիտվեն կամ որպես անցյալ ժամանակի գործողություն, կամ ներկայի գործողություն, կամ էլ ապառնի ժամանակի գործողություն»[71]։

Այս սկզբունքից ելնելով էլ դպրոցական քերականության մեջ հայերենի բայաձևերը խմբավորվել են ներկա, անցյալ և ապառնի ժամանակների տակ, և դրա արդյունքն այն է եղել, որ բոլորովին տարբեր ձև ունեցող և տարբեր իմաստ արտահայտող բայաձևերը, օրինակ, գնացել եմ և գնալու էի,

---

[70] է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 369—370։*

[71] է. Աղայան, *Հին շփոթի բավիղներում, «Գրական թերթ», 10 հունվարի 1969 թ.։*

դիտվել են որպես նույն ենթակարգի՝ անցյալի ենթակարգի արտահայտություններ։

Ինչևիցե, եթե լեզվի գիտության նպատակը լեզվի կառուցվածքի ուսումնասիրությունն է, ապա մեր կարծիքով, արդի հայերենի բայական ձևերի խմբավորումը ներկա, անցյալ և ապառնի ժամանակների տակ ոչ միայն չի բացահայտում այդ կառուցվածքի իրական պատկերը, այլև որոշ իմաստով «բռնանում է» լեզվի իրական պատկերի վրա՝ լեզվական բազմազան ձևերը բաշխելով նախօրոք և ի բնե ընդունված տրամաբանական երեք ժամանակների վրա։

Արդի հայերենի բայի ժամանակի կարգի քննության հարցերը հատուկ տեղ են գրավում Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի քերականություն» (Երևան, 1969 թ.) աշխատության մեջ։ Հետևելով է. Աղայանին՝ հեղինակը հարակատար ձևերը հանում է բայի խոնարհման հարացույցից և սահմանական եղանակում ընդունում ժամանակային յոթ ձևեր, որոնից վեցը վերլուծական, իսկ մեկը պարզ կազմություն ունի։ Արձանագրելով այն փաստը, որ վերլուծական ձևերը երկու եռանդամ հակադրությունների շարք են կազմում՝ գնում եմ—գնալու եմ—գնացել եմ‖գնում էի—գնալու էի—գնացել էի, Ս. Աբրահամյանը գրում է. «Բերված ձևերի ձևային հակադրությունները ակնհայտ են և բացատրության կարիք չեն զգում։ Իմաստային հակադրություն պետք է որոնել ամեն մի եռանդամ համակարգի անդամների միջև։ Իսկ դրանց միջև իմաստային տարբերությունները որոշակի են. անշուշտ իմաստով տարբեր են մի կողմից՝ գնում եմ, գնալու եմ, գնացել եմ ձևերն իրարից, մյուս կողմից՝ գնում էի, գնալու էի, գնացել էի ձևերն իրարից։ Հարց է՝ այդ ձևերի իմաստային տարբերությունը ժամանակայի՞ն է, թե՞ կերպային։ Ժամանակային հակադրություն ասելով պետք է հասկանալ ժամանակային հաջորդականություն իրար հակադրված ժամանակային ձևերի մեջ։ Իսկ կերպային հակադրությունը չի ենթադրում ժամանակային հաջորդականություն, ընդհակա-

ական, այն որոշվում է միևնույն ժամանակահատվածում գոր-ծողության տարբեր բնույթով»[72]:

Այնուհետև, Ս. Աբրահամյանը գտնում է, որ տարբեր բնույթի ընդհանուր ժամանակային վիճակ արտահայտող դերբայները, զուգորդվելով խոսելու պահը նշող եմ օժանդակ բայի հետ, արտահայտում են ժամանակային տարբեր իմաստներ՝ ներկա ժամանակակետի համեմատությամբ, իսկ զուգորդվելով էի օժանդակ բայի հետ՝ կրկին արտահայտում են ժամանակային տարբեր իմաստներ մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ: Հեղինակն իր մտքերն ամփոփում է հետևյալ ձևով. «Առաջնորդվելով ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված մոտեցումով, եմ շարքի ժամանակները կարելի է համարել բացարձակ ժամանակներ, իսկ էի շարքի ժամանակները՝ հարաբերական ժամանակներ: Սակայն բացարձակ և հարաբերական անվանումներից չպետք է ենթադրել, թե դրանցից մեկը էական է, մյուսը ոչ-էական, երկրորդական: Դրանք բոլորն էլ լիարժեք քերականական ժամանակներ են»[73]:

Այդ ժամանակներն անվանվում են Ա. Դարիբյանի առաջարկած սկզբունքով՝ ներկա—անցյալի անկատար, վաղակատար—անցյալի վաղակատար, ապառնի—անցյալի ապառնի[74]: *Ինչպես սպասելի էր, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների մեջ ընդունվում են երկուական ժամանակներ՝ ապառնի և անցյալի ապառնի:*

Քննարկվող հարցին անդրադարձել է նաև Ռ. Իշխանյանը: Նա խիստ քննադատում է հայերենի որոշ քերականություններում տեղ գտած՝ բայաշարքերի խմբավորումը ներկա, անցյալ և ապառնի ժամանակների մեջ: Լեզվաբանը գրում է. «Հայերենում դիմավոր բայերը բաժանել երեք խմբի ըստ 3 պայմանական ժամանակների պատկերացման և ըստ այդմ կազմել նրանց հարացույցը, նշանակում է նկարագրել այն,

---

[72] *Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 171—172:*

[73] *Անդ, էջ 173:*

[74] *Անդ, էջ 175:*

ինչ իրականում չկա»[75]։ Ռ. Իշխանյանը գտնում է, որ հայերենի բայաձևերը համեմատելով երեք ժամանակների մեջ՝ մենք ոչ միայն չենք ստանում ձևաբանորեն հակադիր և հավասարարժեք միավորներ, այլև այդ համեմատումը իրենով ներկայացնում է լեզվի համակարգի իրոք հակադիր և հավասարարժեք շարքերը կամ շարային զույգերը (գրում եմ—գրում էի, գրել եմ—գրել էի, գրելու եմ—գրելու էի)։ Նա գալիս է այն եզրակացության, որ բայաձևերի այդպիսի յուրաքանչյուր շարք կարող է դիտվել որպես քերականական ժամանակ։ Ըստ այդմ նա սահմանական եղանակի մեջ ընդունում է յոթ (հարակատարը և անցյալի հարակատարը հարացույցից հանված են), իսկ ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների մեջ՝ երկուական ժամանակներ։ Հեղինակը նաև կարծիք է հայտնում, թե «Ընդհանրապես, հայերեն դիմավոր բայերի բովանդակությունը բացահայտելիս, կարելի է օգտվել «երեք ժամանակների» պատկերացումից կամ սովորույթից... Սակայն այդ պետք է անել դիմավոր բայերի իրական պատկերը ճիշտ արտահայտող բնական հարացույցը անխախտ թողնելու միակ պայմանով»[76]։

Բայի կերպի աբեղյանական կարգը Ռ. Իշխանյանը չի ընդունում. նա սահմանական եղանակի բաղադրյալ կամ վերլուծական ժամանակները (ըստ նրա՝ վեց) համարում է պարզ, քանի որ այդ ժամանակների բայաձևերից յուրաքանչյուրը, նրա կարծիքով, «բառային անխախտ ամբողջություն է»՝ մեկ միասնական բովանդակությամբ։ Այդ ժամանակների կազմում եղած դերբայները հեղինակը համարում է զուրկ բառային ինքնուրույն արժեքից (անվանում է դիմավոր բայերի անջատ հիմքեր)։ Հեղինակը նաև գրական արևելահայերենի բայի խոնարհման հարացույցում չի ընդունում երկրորդական բաղադրյալ ժամանակներ։

Ժամանակակից հայերենի բայի կերպերի հարցին նորագույն կառուցվածքային լեզվաբանության դիրքերից է մոտենում Գ. Ջահուկյանն իր «Հայոց լեզվի զարգացումը և կա-

---

[75] Ռ. Իշխանյան, *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1971, էջ 119։

[76] *Անդ*, էջ 123։

տուցվածքը» աշխատության մեջ։ Սահմանազատելով հա-մադրական և վերլուծական խոնարհման ձևերը՝ նա հա-մադրական բայաձևերի մեջ տարբերում է երկու կերպ՝ ան-կատար և կատարյալ, որոնք կարող են բնորոշվել ոչ եզրայ-նության և եզրայնության իմաստային հակադրության արտա-հայտությամբ։ Անկատար և կատարյալ կերպերի հակադրու-թյունը դրսևորվում է հատուկ մասնիկներով և զրո ձևով, քան որում, զրոն հանդես է գալիս մերթ որպես մեկ, մերթ որպես մյուս եզրի արտահայտիչ, այսինքն՝ մենք գործ ունենք եր-կու տարբեր հակադիր իմաստներ արտահայտող զրո մաս-նիկների հետ։ Այսպիսով, անկատար կերպն արտահայտվում է զրո (գրեմ, գնամ), ն (տեսնեմ), չ (փախչեմ), են (մոտե-նամ), ան (իմանամ) ձևերով, իսկ կատարյալ կերպը համա-պատասխանաբար՝ եց-ացՙ (գրեց—կարդաց), զրո (տեսավ—փախավ) և եց-ացՙ ձևերով (մոտեցավ—իմացավ)։ Կան նաև անկատար և կատարյալ կերպերի արտահայտության այլ ձև-վեր՝ բարձրացնեմ—բարձրացրի (ն-ր), դառնամ—դարձա (ն—ձ)[77]։

Գ. Ջահուկյանն իր մտքերը ամփոփում է հետևյալ ձևով. «Բայական «մաքուր» հիմքերին ինքնին հատուկ է կերպա-յին արժեք, և բայերի երեք խմբերը դրսևորում են կերպա-իմաստային տարբերություններ. 1) I խմբի բայերի մաքուր հիմքերը (գր-, գն-) ինքնին անկատարի արժեք ունեն և դր-րանք կատարյալ դարձնելու համար հարկավոր է կցել կա-տարյալություն արտահայտող հատուկ վերջնամասնիկներ (եց, ացՙ). 2) II խմբի բայերի մաքուր հիմքերը (տես-, փախ-) ինքնին կատարյալ են և դրանք անկատար դարձնելու համար հարկավոր է կցել անկատարություն արտահայտող հատուկ վերջնամասնիկներ (ն, չ). 3) III խմբի բայերի մաքուր հիմ-քերը (մոտ-, իմ-, տա-, դ(ր)-, դառ/ր-, վերց-) կերպային չեզոքություն ունեն և անկատար կամ կատարյալ արժեք ստանալու համար պետք է օժտվեն մի դեպքում՝ են, ան, ն, մյուս դեպքում՝ եց/ացՙ ց, ձ, ր մասնիկներով»[78]։

---

[77] *Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 220—221։*

[78] *Անդ, էջ 233։*

Հետազոտողը միաժամանակ այն կարծիքն է հայտնում, որ «կ(ը) նախամասնիկը, որ հիմնականում եղանակային արժեք ունի, ձեռք է բերում կերպային արժեք (կատարյալ ապառնի) և իբրև այդպիսին հակադրվում է անկատար ապառնիի ձևերին (այդ թվում լու-ով կազմվող բաղադրյալ ձևերին. հմմտ. կգնամ և գնալու եմ, որոնց փոխհարաբերությունը նույնն է, ինչ գնացի և գնացել եմ ձևերինը»[79]:

Այնուհետև, Գ. Ջահուկյանը մի քանի բայերի մեջ, ինչպես՝ լողամ—լողանամ, ցոլամ—ցոլանամ, արժեմ—արժենամ, գիտեմ—գիտենամ, ունեմ—ունենամ, *տեսնում է միակատարություն-բազմակատարություն կերպային հակադրություն: Թվարկելով այս հակադրվող ձևերը՝ Գ. Ջահուկյանը գրում է. «Այսպիսով, անկատար-կատարյալ կերպային հակադրությունը միանում է մասնակի դրսևորում ունեցող (սահմանափակ բայեր ընդգրկող) միակատար-բազմակատար (և սրա հետ կապված, ոչ-երկարատև-երկարատև) հակադրությունը, որը, ինչպես ցույց է տալիս անվանումը, եղելության քանակական (երկարատևության դեպքում՝ չափական) արտահայտությունն է՝ եղելության մեկ թե մեկից ավելի անգամ կատարվելու ձևաբանական արտահայտությունը: Հետևողականության դեպքում մենք պետք է այստեղ միացնենք նաև այսպես կոչված բազմապատկական կերպի իմաստ արտահայտող այնպիսի միջոցներ, ինչպիսիք են արմատի կրկնությունը (վազվզեմ, գոռգոռամ և այլն) և հատուկ ածանցների առկայությունը (կտրատեմ, խոցոտեմ և այլն): Սրանք առանձնացվում են միայն այն պատճառով, որ այդ միջոցները անմիջապես չեն կապված խոնարհման հարացույցի տարբերությունների հետ, այլ ավելի շուտ բառակազմական արժեք ունեն: Այսպես է վիճակը նաև մի անգամ, մի քանի անգամ, շատ անգամ բառերի գործածության դեպքում, որ առաջացնում է կերպային տարբերություն, բայց դուրս է գալիս խոնարհման հարացույցից»*[80]:

Սակայն վերևում բերված արժեմ—արժենամ, գիտեմ—գի-

---

[79] *Անդ, էջ 232:*

[80] *Անդ, էջ 234—235:*

տեսակ զույգերի միջև կան ոչ միայն կերպային, այլև եղանակային ու ժամանակային տարբերություններ։ Հաշվի առնելով նաև բաղադրյալ ձևերը՝ պարզվում է, որ արժեմ—արժենում եմ, գիտեմ—գիտենում եմ, ունեմ—ունենում եմ և եմ—լինում եմ տարահիմք ձևերը տարբերվում են սուկ կերպային արժեքով, այն է՝ զույգերից առաջիններն ըստահայտում են միակատար, իսկ երկրորդները՝ բազմակատար կերպի իմաստ։ Նշելով, որ ներկայի համադրական և վերլուծական զուգահեռ ձևեր ունեցող բայերի թիվը սահմանափակ է, Գ. Ջահուկյանը գրում է. «Սակայն այն հանգամանքը, որ սրանց շարքում գտնվում են եմ օժանդակ բայը և համապատասխան լինում եմ բայաձևը, հնարավորություն է տալիս միակատար-բազմակատար և սրա հետ կապված՝ ոչ երկարատև-երկարատև հակադրությունը տարածելու այլ բայերի վրա. եմ-ը զուգորդվում է ում-ով, ել-ով, ի/ա-ով, լինում եմ-ը՝ ելիս/ալիս-ով (հայտնի է նույնպես անկատար դերբայ անվամբ), ած-ով (հարակատար կոչված) և ելու/ալու (ապառնի կոչված) դերբայների հետ։ Վերջիններս, ի տարբերություն նախորդների, ունեն մակբայական ու ածականական գործածություն (գնալիս տեսա, գնացած տեղը, գնալու օրը) և, հետևաբար, ժամանակային ձևերի կազմությանը մասնակցում են միայն երկրորդաբար, բայց, նախորդների նման, տարբերակված են ըստ հաջորդականության»[81] (համընկնում, նախորդում, հաջորդում—Մ. Ա.)։

Այսպիսով, եմ և լինում եմ բայերի և համապատասխան դերբայների հակադրություններով ստեղծվում է միակատար (ոչ երկարատև) և բազմակատար (երկարատև) կերպերի հակադրություն, ինչպես՝ գնում եմ—գնալիս եմ լինում, գնում էի—գնալիս էի լինում և այլն։

Իհարկե, նախորդ ուսումնասիրողները ուշադրություն են դարձրել այն հանգամանքի վրա, որ այսպես կոչված երկրորդական բաղադրյալ ժամանակները ցույց են տալիս որպես կարգ, կանոն, սովորություն կրկնվող գործողություններ, բայց գլխավոր բաղադրյալ և երկրորդական բաղադրյալ ձևե-

[81] Անդ, էջ 271—272։

րի միջև կերպային հստակ տարբերությունների դրույթը պատկանում է Գ. Ջահուկյանին։

Սակայն այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Գ. Ջահուկյանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքի վրա, որ «միակատար» կերպի յուրաքանչյուր ձևի համապատասխանում է «բազմակատար» կերպի համընկնում, նախորդում և հաջորդում, այսինքն՝ հաջորդականություն արտահայտող երեք ձև, ինչպես.

Միակատար	Բազմակատար	
գնում եմ	գնալիս գնացած գնալու	եմ լինում
գնում էի	գնալիս գնացած գնալու	էի լինում
գնացել եմ	գնալիս գնացած գնալու	եմ եղել
գնացել էի	գնալիս գնացած գնալու	էի եղել

Ինչևիցե. վերոհիշյալ ձևով ներկայացնելով հայերենի բայաձևերի կերպի հարցը, Գ. Ջահուկյանը գտնում է, որ Մ. Աբեղյանի սահմանած կատարվող, կատարված և կատարելի կերպերը, որոնք դրսևորվում են դերբայների միջոցով, իսկական կերպային իմաստներ չեն։ Նա գրում է. «Այս դեպքում մենք գործ չունենք իսկական կերպային իմաստների, այլ ժամանակի ոչ-իրադրական (անորոշ) արտահայտության հետ. իրադրական ժամանակի դեպքում նշվում է հաղորդողի ընտրած համեմատության եղրը՝ խոսելու պահը կամ անցյալում ու ապառնիում ընտրված որևէ պահ. այլ կերպ ասած՝ իրադրական ժամանակի եղրերը տարբերվում են այնպես, որ ներկան ցույց է տալիս հաղորդվող եղելության համընկնումը

խոսելու պահի, անցյալը՝ անցյալի որևէ պահի, ապառնին՝ ապառնի որևէ պահի հետ։ Ոչ-իրադրական ժամանակը ցույց է տալիս պարզապես ժամանակային հաջորդականություն՝ անկախ հաղորդողից. ոչ իրադրական ժամանակը կարելի է կոչել հաջորդականություն։ Այսպիսով, ժամանակի կարգն ունի երկու ենթակարգ՝ իրադրական ժամանակ և հաջորդականություն... Հաջորդականությունը պատկանում է առարկայական-իմացական, իրադրական ժամանակը հաղորդային պլանին»[82]։

Այսպիսով, մենք անցնում ենք այն հարցի քննությանը, թե Գ. Ջահուկյանն ինչպես է ներկայացնում արդի հայերենի բայի ժամանակի քերականական կարգը։

Քննելով համադրական ձևերը և նշելով, որ ժամանակային տարբերությունները առաջին հերթին արտահայտվում են դիմային վերջավորությունների միջոցով, Գ. Ջահուկյանը գտնում է, որ դրանք «արտահայտում են բովանդակության պլանի ոչ-անցյալ—անցյալ հակադրությունը։ Տարբերակելով վերջավորությունների երկու խումբ՝ նա գրում է, որ **ի, իր, ո, իմ, իմ, իմ** *և* **ա, ար, ավ, ամ, աք, ամ, ան** *վերջավորությունները արտահայտում են մի եղելություն, որ հաղորդողն առնում է անցյալի մի ժամանակակետի համեմատությամբ որպես կատարյալ (արժեցա, գիտեցա, ունեցա, եղա, կացա) կամ անկատար (արժեի, գիտեի, ունեի, էի, կայի).* **եմ, ես, ի, ենք, եք, են** *և* **ամ, աս, ա, անք, ամ, ան** *վերջավորությունները արտահայտում են մի եղելություն, որ հաղորդողն առնում է հաղորդման պահի համեմատությամբ՝ որպես այդ պահին ընթացքի մեջ գտնվող (արժեմ, գիտեմ, եմ, կամ, ունեմ)։ Համադրական ձևերի մեջ ոչ-անցյալ—անցյալ հակադրություն արտահայտող* **եմ**-*էի բայի ձևերը զուգակցվելով հաջորդականության կարգի տարբեր եզրեր արտահայտող (նախորդում, հաջորդում, համաժամանակություն) դերբայական ձևերի հետ՝ արտահայտում են բազմազան ժամանակա-հաջորդային հարաբերություններ... Ղձական եղանակի դեպքում գնամ և գնայի ձևերն արտահայտում են հաղորդ-*

---

[82] *Անդ, էջ 269։*

ման պահին կամ անցյալի որևէ ժամանակակետի համար հաղորդողի կողմից ցանկալի համարվող եղելություններ։ Ենթադրական եղանակի դեպքում կգնամ, կգնայի ձևերն արտահայտում են հաղորդման պահին կամ անցյալի որևէ ժամանակակետի համար ենթադրվող, այլև որոշ պայմանով առնչվող եղելություններ, ըստ որում, պայմանականությունն ավելի ուժեղ է անցյալի դեպքում»[83]։

Ահա այն հիմնականը, ինչ Գ. Ջահուկյանն ասում է համադրական ձևերի ժամանակի կարգի մասին։

Անցնելով վերլուծական ձևերի քննությանը և դերբայների մեջ տեսնելով հաջորդականության կարգի արտահայտություն (համընկնում, նախորդում, հաջորդում)՝ նա իրադրական ներկա և անցյալ ժամանակների համեմատությամբ գծում է սահմանական եղանակի բայաձևերի հետևյալ պատկերը. ա) ներկայի համեմատությամբ՝ համընկնում—ներկա (խոսում եմ), նախորդում—նախաներկա (խոսել եմ), հաջորդում—ժխտական ապաներկա (չեմ խոսի). անցյալի համեմատությամբ՝ համընկնում—անցյալ (խոսում էի), նախորդում—նախանցյալ (խոսել էի), հաջորդում—ժխտական ապանցյալ (չէի խոսի)[84]։

Այստեղից պարզ կերպով երևում է, որ ըստ Գ. Ջահուկյանի եմ օժանդակ բայի և դերբայների կապակցություններն արտահայտում են իրադրական ներկա ժամանակը հաջորդականության երեք եզրերով, իսկ էի օժանդակ բայի և դերբայների կապակցությունները՝ իրադրական անցյալ ժամանակը՝ կրկին հաջորդականության երեք եզրերով։ Եթե վերևում բերված ձևերի մեջ ժխտման դերբայը փոխարինենք ապառնի դերբայով (խոսելու եմ—խոսելու էի)[85], *ապա իրադրական ժամանակի երկանդամ (ներկա, անցյալ) և հաջորդականության կարգի եռանդամ (համընկնում, նախորդում, հաջորդում) հակադրությունները ամբողջական գաղափար են տալիս արդի հայերենի բայի սահմանական եղանակի վերլուծական*

---

[83] *Անդ, էջ 258—259։*

[84] *Տե՛ս անդ, էջ 270։*

[85] *Գ. Ջահուկյանը խոսելու եմ—խոսելու էի տիպի ձևերը ազյուսակի մեջ չի զետեղել, որովհետև այն կարծիքին է, թե դրանք հավասարազոր չեն խոսում եմ—խոսում էի, խոսել եմ—խոսել էի տիպի ձևերին (տե՛ս էջ 273)։*

բայաձևերի արտահայտած ժամանակա-հաջորդային հարաբերությունների մասին։

Ընդհանուր գծերով այսպես են ներկայանում հայ քերականների՝ արդի հայերենի բայի ժամանակների ու կերպերի մասին ունեցած ըմբռնումներն ու դրույթները։ Միևնույն ժամանակ այդ ըմբռնումների ու դրույթների որոշ քննադատական շարադրանքով ուրվագծվեցին շրջանակներն այն հարցերի, որոնք վիճելի են ու տարակարծությունների առիթ են տալիս կամ բավարար չափով չեն լուսաբանված ու պարզաբանված։ Մտորև աշխատելու ենք շեշտը դնել հենց այդպիսի հարցերի վրա։

4. ԵՐԿԱՆԴԱՄ ՈՒ ԵՌԱՆԴԱՄ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ԿԵՐՊԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ.— Եթե մի կողմ թողնենք հարակատար ձևերը (ստուգված է—ստուգված էր), որոնց մասին արդեն խոսվել է սույն աշխատության Բ մասում, և անցյալ կատարյալը, որի մասին խոսք կլինի հետո, ապա սահմանական եղանակի մնացած ձևերը ներկայացնում են հետևյալ պատկերը։

Ա	Բ
գնում եմ	գնում էի
գնացել եմ	գնացել էի
գնալու եմ	գնալու էի

Այս ձևերից հորիզոնական գծի վրա դասավորվածները՝ **գնում եմ‖գնում էի, գնացել եմ‖գնացել էի, գնալու եմ‖գնալու էի,** անմիջական երկանդամ հակադրություններ են կազմում և նույնը լինելով դերբայներով, իրարից տարբերվում են միայն օժանդակ բայի ձևերով (եմ‖էի), իսկ ուղղահայաց գծի վրա դասավորված Ա և Բ շարքերը՝ **գնում եմ‖գնացել եմ‖գնալու եմ** և **գնում էի‖գնացել էի‖գնալու էի,** անմիջական եռանդամ հակադրություններ են կազմում և նույնը լինելով օժանդակ բայերով՝ տարբերվում են միայն դերբայներով (գնում‖գնացել‖գնալու)։ Հայ քերականների մեծագույն մասը համերաշխ է այն բանում, որ բերված վերլուծական ձևերի մեջ օժանդակ բայն արտահայտում է պահը, որի նկատմամբ առնվում է դերբայներով արտահայտված գործողությունը,

ըստ որում եմ-ը ցույց է տալիս խոսելու պահը, այսինքն՝ ներկա ժամանակ, իսկ էի-ն՝ խոսելուց առաջ ընկած մի որևէ պահ, այսինքն՝ անցյալ ժամանակ (ըստ որում, այդ անցյալ պահը կարող է լինել խոսելուց մի վայրկյան առաջ, մի օր առաջ, մի տարի առաջ կամ հազարավոր տարիներ առաջ. բայական ձևն անտարբեր է ժամանակի այսպիսի ֆիզիկական ըմբռնման նկատմամբ)։ Կարծես թե վիճելի չէ նաև դերբայների արտահայտած իմաստների հարցը։ Եթե համադրենք իրարից քիչ տարբերություն ունեցող բնորոշումները, ապա կարող ենք ասել, որ անկատար դերբայը ցույց է տալիս ընթացքի մեջ գտնվող կամ զուգորդող, վաղակատար դերբայը՝ ընթացքից դուրս եկած կամ նախորդող, իսկ ապառնի դերբայը՝ կատարելի կամ հաջորդող գործողության, այսինքն՝ այդ դերբայները գործողությունների հաջորդություն են ցույց տալիս։

Եթե քերականական ժամանակ ասելով հասկանանք, թե ինչ ժամանակակետում է վերցվում գործողությունը, ապա սահմանական եղանակի վերոբերյալ 6 բայաձևերը կդասավորվեն երկու ժամանակի՝ ներկա և անցյալ ժամանակների մեջ։ Հարցը մոտավորապես այս ձևով են լուծում Մ. Աբեղյանն ու Գ. Ջահուկյանը։ Առաջինը եմ բայով ու դերբայներով կազմված բայաձևերը փաստորեն համարում է ներկա ժամանակի բայաձևեր, իսկ էի բայով և դերբայներով կազմված բայաձևերը՝ անցյալ ժամանակի բայաձևեր։ Համապատասխան կապակցությունները, նույնը լինելով ժամանակով, իրարից սոսկ տարբերվում են կերպով (կատարվող, կատարված և կատարելի կերպեր)։ Երկրորդը բացահայտորեն գրում է, որ եմ օժանդակ բայի և դերբայների կապակցություններն արտահայտում են իրադրական ներկա ժամանակը, իսկ էի օժանդակ բայի և դերբայների կապակցությունները՝ իրադրական անցյալ ժամանակը։ Համապատասխան կապակցությունները, նույնը լինելով ժամանակով, տարբերվում են միայն հաջորդականության կարգով (համընկնում, նախորդում, հաջորդում)։

Եթե առայժմ մի կողմ թողնենք դերբայների և օժանդակ բայի կապակցությունները և վերցնենք, ասենք, գոյականնե-

րի ու ածականների և եմ-էի բայերի կապակցությունները՝ դրանք պայմանականորեն դիտելով որպես յուրահատուկ միասնական ձևեր (ինչպես դիտում ենք դերբայների և օժանդակ բայի կապակցությունները), ապա գոյական կամ ածական+եմ կապակցությունները միշտ կարտահայտեն ներկա ժամանակի իմաստ, ինչպես՝ **Նա ուսուցիչ է, ուսանող է, զինվոր է, մեծ է, գեղեցիկ է, բարի է,** *իսկ գոյական կամ ածական+էի կապակցությունները՝ անցյալ ժամանակի իմաստ, ինչպես՝* **Նա ուսուցիչ էր, ուսանող էր, զինվոր էր, մեծ էր, գեղեցիկ էր, բարի էր:**

Այս օրինակները բերեցինք ցույց տալու համար, որ բայական ժամանակի վերոբերյալ ըմբռնումը ունի իր առարկայական կռվաններն ու նախադրյալները:

Եթե քերականական ժամանակ ասելով սոսկ հասկանանք գործողությունների հաջորդությունը մի որևէ ժամանակակետի նկատմամբ, անկախ այն բանից, այդ ժամանակակետը ներկան է, թե անցյալը, ապա սահմանական եղանակի վերոբերյալ 6 բայաձևերը կդասավորվեն երեք ժամանակի տակ, որոնցից անկատար դերբայով կազմվածները (գնում եմ—գնում էի) պայմանականորեն կարելի է կոչել համընկնող, վաղակատարով կազմվածները (գնացել եմ—գնացել էի)՝ նախորդող, իսկ ապառնիով կազմվածները (գնալու եմ—գնալու էի)՝ հաջորդող ժամանակներ: Ասենք, որ բայական ժամանակների այսպիսի մեկնաբանությունը ևս հիմքից զուրկ և անիմաստ համարվել չի կարող, որովհետև վերջիվերջո առանց գործողությունների հաջորդության ըմբռնման ժամանակի կարգն ընդհանրապես անըմբռնելի է և անիմաստ:

Սակայն բայական ժամանակի այդ երկու ըմբռնումներից առաջինի թերությունն այն է, որ սոսկ հաշվի է առնում, թե որ ժամանակակետի հարաբերությամբ է վերցվում գործողությունը՝ անտես առնելով գործողությունների հաջորդությունը, իսկ երկրորդի թերությունն այն է, որ սոսկ հաշվի է առնում գործողությունների հաջորդությունը՝ անտես առնելով ժամանակակետը, որի նկատմամբ վերցվում են գործողությունները: Համենայն դեպս, հայերենի սահմանական եղանակի բաղադրյալ ձևերի ժամանակների որոշման առաջին

տեսակետը կարող էր ընդունելի համարվել, եթե հայերենի անկատար, վաղակատար և ապառնի դերբայները՝ գնում, գնացել, գնալու, արտահայտեին բուն իսկ կերպային իմաստներ և ոչ թե գործողությունների հաջորդություն, ինչպես որ իրոք է։ Սրանից ինքնին բխում է, որ Մ. Աբեղյանի կատարվող, կատարված և կատարելի կերպերի տեսությունը, որը խարխլված է այն դրույթի վրա, թե, իբր, հայերենի անկատար, վաղակատար և ապառնի դերբայների տարբերությունը սոսկ կերպային տարբերություն է, ընդունելի համարվել չի կարող։ Արտահայտելով գործողությունների հաջորդություն՝ դերբայները, իրենց այդ բնույթին համապատասխան, մասնակցում են բայի ժամանակի քերականական կարգի դրսևորմանը։

Այսպես ուրեմն՝ մենք ևս շատ ուրիշ քերականների նման պաշտպանում ենք այն դրույթը, որ սահմանական եղանակի բաղադրյալ ձևերի ժամանակի կարգի արտահայտման մեջ դեր ունեն և՛ դերբայները, և՛ օժանդակ բայը, ըստ որում, օժանդակ բայը ցույց է տալիս ներկա և անցյալ ժամանակակետեր, իսկ դերբայները ցույց են տալիս գործողությունների հաջորդականություն՝ այդ ժամանակակետերի հարաբերությամբ։

Հարցին մոտենալով այս տեսակետից, տեսնում ենք, որ գնում եմ—գնացել եմ—գնալու եմ ձևերից առաջինը ցույց է տալիս մի գործողություն, որ համընկնում է խոսելու պահի հետ, երկրորդը՝ մի գործողություն, որ նախորդել է խոսելու պահին, իսկ երրորդը՝ մի գործողություն, որ հաջորդելու է խոսելու պահին։

Գնում եմ բայաձևերի շարքը հայտնի է ներկա, գնացել եմ շարքը՝ վաղակատար, իսկ գնալու եմ շարքը՝ ապառնի ժամանակ անվանումով։

Իսկ ի՞նչ են ցույց տալիս գնում էի—գնացել էի—գնալու էի բայաձևերը։ Այդ բայաձևերը կազմող դերբայների էությանը համապատասխան՝ դրանք ևս ցույց են տալիս համընկնող, նախորդող և հաջորդող գործողություններ, միայն ոչ թե խոսելու պահի, այլ մի անցյալ ժամանակակետի հարաբերությամբ։ Այս և նախորդ բայաձևերի տարբերությունը մի-

այն այն է, որ գնում եմ և այլ տիպի դեպքում ելակետը, բաժանման և հարաբերության սահմանը խոսելու պահն է, իսկ գնում էի և այլ տիպի դեպքում ելակետը, բաժանման և հարաբերության սահմանը խոսողի ընտրած մի անցյալ ժամանակակետն է։ Ըստ այդմ, գնում էի ձևը ցույց է տալիս, որ գործողությունը համընկնում է խոսողի ընտրած անցյալ ժամանակակետի հետ, գնացել էի ձևը ցույց է տալիս, որ գործողությունը նախորդել է այդ ժամանակակետին, իսկ գնալու էի ձևն էլ ցույց է տալիս, որ գործողությունը հաջորդելու է այդ ժամանակակետին։

Գնում էի բայաձևերի շարքը հայտնի է անցյալի անկատար, գնացել էի շարքը՝ անցյալի վաղակատար, իսկ գնալու էի շարքը՝ անցյալի ապառնի ժամանակ անվանումով։

Այսպիսով պարզ է դառնում, որ սահմանական եղանակի վերոբերյալ 6 բայաձևերից 3-ի մեջ հաջորդական գործողությունները վերցվում են ներկայի, իսկ 3-ի մեջ՝ անցյալի հարաբերությամբ, հենց այսքանով էլ մենք գործ ունենք քերականական 6 ինքնուրույն ու անկախ ժամանակների հետ։

Այստեղից ինքնին հասկանալի է, որ մենք չենք կարող ընդունել հայ քերականությունների մեջ տարածվող այն դրույթը, թե գնում էի, գնացել էի, գնալու էի բայաձևերն արտահայտում են մի միասնական ժամանակ՝ անցյալ ժամանակ։ Չէ՞ որ այս բայաձևերը, ինչպես նշված է արդեն, գործողությունների տարբեր հաջորդականություն են ցույց տալիս, ուրեմն և տարբեր են քերականական իմաստով, հետևաբար և նույն քերականական կարգի ենթակարգը համարվել չեն կարող։

Մյուս կողմից՝ ըստ երևույթին գնում էի—գնացել էի—գընալու էի ձևերի մի միասնական անցյալ ժամանակ համարելու միակ հիմքն այն է, որ բոլոր դեպքերում գործողությունները վերցված են անցյալ ժամանակակետի համեմատությամբ և հարաբերությամբ։ Բայց չէ՞ որ գնում եմ—գնացել եմ—գնալու եմ հակադրության դեպքում գործողությունները վերցված են ներկա ժամանակակետի հարաբերությամբ։ Նույն զուգահեռությամբ սրանք էլ կարելի էր համարել մի միասնական ներկա ժամանակի բայաձևեր։ Բայց քանի որ գնում

եմ—գնացել եմ—գնալու եմ շարքերը տարբեր քերականական ժամանակներ են համարվում, սրանից տրամաբանորեն ինքնին բխում է, որ տարբեր քերականական ժամանակներ են նաև գնում էի—գնացել էի—գնալու էի շարքերը, որովհետև այդ երկու շարքերը տարբերվում են սոսկ նրանով՝ ներկա՞ն, թե՞ անցյալն է ընդունված որպես գործողությունների հաջորդության սահման:

Այսպես ուրեմն՝ սահմանական եղանակի 6 բաղադրյալ ձևերը կազմում են 6 առանձին, անկախ ու ինքնուրույն քերականական ժամանակներ, որոնցից 3-ը՝ եմ ձևով բաղադրվածները, ցույց են տալիս գործողությունների հաջորդություն ներկայի հարաբերությամբ, իսկ 3-ը՝ էի ձևով բաղադրվածները, ցույց են տալիս գործողությունների հաջորդություն անցյալի հարաբերությամբ՝ այսպիսով կազմելով երկանդամ հակադրություններ՝ գնում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի: Առանձին է մնում անցյալ կատարյալ ժամանակը, որը այս բոլորից տարբերվում է և՛ կազմության ձևով, և՛ իմաստով. դրա վերլուծությանը անդրադառնալու ենք հետո:

Այս երկանդամ հակադրությունները դրսևորվում են ոչ միայն սահմանական եղանակի վերլուծական ձևերում, այլև հայերենի բայական ձևերի դրսևորման ամբողջ հիմքն են կազմում և, հաշվի չառած սահմանական եղանակի անցյալ կատարյալն ու հրամայականը, տարածվում են ժամանակակից հայերենի բոլոր եղանակային ձևերի վրա, ինչպես՝ ըղձական եղանակ—գնամ (ներկա-ապառնի), գնայի (անցյալ-ապառնի), պայմանական եղանակ—կգնամ (ներկա-ապառնի), կգնայի (անցյալ-ապառնի), հարկադրական եղանակ—պիտի գնամ (ներկա-ապառնի) — պիտի գնայի (անցյալ-ապառնի): Այդ երկանդամ հակադրությունները հայերենի խոնարհման համակարգի բուն իսկ էությունը կազմող, նրա կառուցվածքի էությունը որոշող ամենաբնորոշ առանձնահատկությունն են կազմում: Դրա համար գուցե բավական է հիշատակել միայն այն, որ քերականական ձևերը բայական հարացույցից կարելի է դուրս բերել կամ հարացույցի մեջ զետեղել միայն զույգերով: Այսպես օրինակ՝ վերջերս տարա-

*ծում է գտնում այն դրույթը, որ հարակատար դերբայը կազմում է բաղադրյալ ստորոգյալ և բայական խոնարհման ձևերի կազմությանը չի մասնակցում, և, ըստ այդմ, խոնարհման հարացույցը պակասում է զույգ՝ հարակատար և անցյալի հարակատար ժամանակներով՝ նստած եմ—նստած էի: Որոշ քերականներ պիտի-ով կազմված կապակցությունները խոնարհման ձևեր չեն համարում և հարացույցից կրկին դուրս են հանում զույգ ձևեր՝ պիտի գրեմ—պիտի գրեի: Առանձին քերականներ խոնարհման ձևեր են ընդունում ենթակայական դերբայով և այդ դեպքում էլ հարացույցի մեջ ավելացնում են ձևային զույգեր՝ սովորող եմ—սովորող էի: Եթե փորձենք պայմանականորեն հարացույցի մեջ զետեղել գոյական կամ ածական+օժանդակ բայ կապակցությունները, ապա այդ դեպքում ևս մեր խոնարհման հարացույցը կհարստանա ձևային զույգերով՝ բանվոր է—բանվոր էր, մեծ է—մեծ էր[86]: Այս բոլորը ցույց են տալիս, որ, ինչպես նշեցինք, մի կողմ թողած անցյալ կատարյալն ու հրամայականը, արդի հայերենի բայական ժամանակների ամբողջ համակարգը հիմնված է երկանդամ հակադրությունների վրա: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ առանձին քերականներ, բացարձակացնելով լեզուներում հաճախակի հանդիպող այսպիսի երկանդամ հակադրությունները (*бинарная оппозиция*), գտնում են, որ «Քերականական կարգը նշանակությամբ իրար բացառող երկու (և ոչ ավելի) ձևերի շարքերի (կամ խմբերի) միասնություն է»[87]: Քերականական կարգերի այսպիսի նեղացված ըմբռնումը և երկանդամ հակադրությունների այսպիսի բացարձակացումը լեզվաբանական գրականության մեջ իրավացիորեն քննադատության է ենթարկվել[88], որովհետև լեզվի քերականական կառուցվածքում իրա՛ն կերպով գո-*

---

[86] *Համմտ.* Ռ. Իշխանյան, *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, էջ 102—104:*

[87] **А. В Исаченко,** О грамматическом значении, ВЯ, 1961, № 1, *էջ 31:*

[88] *Տե՛ս* **Б. Н. Головин,** Заметки о грамматическом значении, ВЯ, 1962, № 2 **А. В. Бондаренко,** Система грамматических времен в современном русском языке, ВЯ, 1962, № 3 **Е. И. Шендельс,** О грамматическом полисемии, ВЯ, 1962, № 3:

յություն ունեցող բոլոր հակադրությունները արհեստականորեն չի կարելի հանգեցնել երկանդամ հակադրությունների (օրինակ՝ արդի հայերենի հոլովները, բայի եղանակները, դեմքերը և այլն). բայց մի բան պարզ է ու անժխտելի, որ լեզուների քերականական կառուցվածքում երկանդամ հակադրությունները (եզակի թիվ—հոգնակի թիվ, որոշյալ առում—անորոշ առում, կատարյալ կերպ—անկատար կերպ) մեծ դեր ու կշիռ ունեն, հետևաբար դրանց իրական հաշվառումը օգնում է ավելի խոր կերպով բացահայտելու լեզուների կառուցվածքային առանձնահատկությունները։

Նորից անդրադառնալով գնում եմ—գնում էի, գնացել եմ—գնացել էի, գնալու եմ—գնալու էի ձևերին՝ նշենք, որ եթե դրանք երկանդամ հակադրություններ են կազմում ըստ օժանդակ բայերի, ապա եռանդամ հակադրություններ են կազմում ըստ դերբայների՝ գնում եմ—գնացել եմ—գնալու եմ՝ *մի կողմից և գնում էի—գնացել էի—գնալու էի՝ մյուս կողմից։ Այս եռանդամ հակադրություններով, ինչպես պարզել ենք արդեն, արտահայտվում է գործողությունների հաջորդականությունը։ Այս եռանդամ հակադրությունները առկա են նաև այսպես կոչված երկրորդական բաղադրյալ ձևերում, որոնց վերլուծությանն էլ անցնում ենք այժմ։

Երկրորդական բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար երկրորդ (գնալիս), հարակատար (գնացած) ու ապառնի (գնալու) դերբայներով և լինել բայի խոնարհման ձևերով։

Եթե գլխավոր բաղադրյալ ժամանակների դեպքում բաժանման ելակետը ներկան է (եմ) կամ անցյալը (էի), որոնց կարող է համընկնել, նախորդել կամ հաջորդել գործողությունը, ապա երկրորդական բաղադրյալ ձևերի դեպքում բաժանման ելակետը որևէ գլխավոր ժամանակն է, որին գործողությունը կարող է համընկնել, նախորդել կամ հաջորդել։ Ըստ այդմ, ամեն մի գլխավոր ժամանակի համապատասխանում են երկրորդական կամ հարաբերական ժամանակների երեք ձևեր, որոնք ըստ դերբայների արտահայտում են գործողության միաժամանակություն կամ համընկնում, նախորդում և հաջորդում հետևյալ ձևով։

Սահմանական		Ըղձական	
գնում եմ	գնալիս եմ լինում գնացած եմ լինում գնալու եմ լինում	գնամ	գնալիս լինեմ գնացած լինեմ գնալու լինեմ
գնում էի	գնալիս էի լինում գնացած էի լինում գնալու էի լինում	գնայի	գնալիս լինեի գնացած լինեի գնալու լինեի
		Պայմանական	
գնալու եմ	գնալիս եմ լինելու գնացած եմ լինելու գնալու եմ լինելու	կգնամ	գնալիս կլինեմ գնացած կլինեմ գնալու կլինեմ
գնալու էի	գնալիս էի լինելու գնացած էի լինելու գնալու էի լինելու	կգնայի	գնալիս կլինեի գնացած կլինեի գնալու կլինեի
գնացել եմ	գնալիս եմ եղել գնացած եմ եղել գնալու եմ եղել		
		Հարկադրական	
գնացել էի	գնալիս էի եղել գնացած էի եղել գնալու էի եղել	պիտի գնամ	գնալիս պիտի լինեմ գնացած պիտի լինեմ գնալու պիտի լինեմ
գնացի	գնալիս եղա գնացած եղա գնալու եղա	պիտի գնայի	գնալիս պիտի լինեի գնացած պիտի լինեի գնալու պիտի լինեի

Հրամայական

գնա՛	գնալիս եղի՛ր գնացած եղի՛ր գնալու եղի՛ր

Այսպիսով, գլխավոր (պարզ և բաղադրյալ) ձևերի 14 շարքերին համապատասխան՝ ունենում ենք երկրորդական բաղադրյալ ժամանակների ձևերի 42 շարք (14×3=42). Մի կողմ թողնելով այն հարցը, որ այս ձևերի մի մասը քիչ գործածական է, նշենք, որ երկրորդական բաղադրյալ ժամանակ-

ևերը գլխավոր ժամանակների հետ հարաբերական գործածություն ունեն, ըստ որում այդ հարաբերակցությունը դրսևորվում է գլխավոր ժամանակի և երկրորդական բաղադրյալ ժամանակներում հանդես եկող լինել բայի խոնարհված ձևերի ժամանակային համապատասխանությամբ. այսինքն՝ գնում եմ ձևին համապատասխան կարող են գործածվել գնալիս եմ լինում—գնացած եմ լինում—գնալու եմ լինում շարքի ձևերը միայն, օրինակ՝ Ամեն անգամ, երբ ես նրանց տուն եմ գնում, նա պարապելիս է լինում, պարապած է լինում, պարապելու է լինում. գնացել եմ ձևին համապատասխան՝ գնալիս եմ եղել, գնացած եմ եղել, գնալու եմ եղել ձևերը միայն, օրինակ՝ Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնացել, նա պարապելիս է եղել, պարապած է եղել, պարապելու է եղել: Այսպես նաև մյուսները։

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ յուրաքանչյուր գլխավոր բաղադրյալ ժամանակային ձև ունի իրեն համապատասխան երկրորդական բաղադրյալ ժամանակային երեք ձևվեր, որոնցից անկատար դերբայով կազմված շարքը ցույց է տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը համընկնում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը (Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնում, նա պարապելիս է լինում). հարակատար դերբայով կազմված շարքը ցույց է տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը նախորդում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը (Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնում, նա պարապած է լինում). ապառնի դերբայով կազմված շարքը ցույց է տալիս, որ երկրորդական ժամանակով արտահայտված գործողությունը հաջորդում է գլխավոր ժամանակով արտահայտված գործողությանը (Ամեն անգամ, երբ նրանց տուն եմ գնում, նա պարապելու է լինում)։

Այս դեպքում էլ, ինչպես պարզորոշ կերպով տեսնում ենք, գործ ունենք գլխավոր բաղադրյալ ձևերում դրսևորվող գործողությունների հաջորդականության կարգի հետ, միայն այն տարբերությամբ, որ երկրորդական բաղադրյալ ձևերում գործողությունների հաջորդությունը վերցվում է լինել բայի ժա-

մանակային ձևերի հարաբերությամբ, իսկ վերջիններս էլ, ինչպես նշված է արդեն, պայմանավորված են գլխավոր բաղադրյալ ժամանակներով (այնքանով, որքանով որ, ասենք, գնում եմ ձևին համապատասխանում է լինում եմ ձևը, գնացել եմ ձևին՝ եղել եմ ձևը, գնացի ձևին՝ եղա ձևը և այլն)։

Այս վերլուծություններից հետո հեշտանում է բաղադրյալ ժամանակների անվանումը։

Քանի որ ժամանակը կամ ժամանակակետը (մեզ թվում է, որ տվյալ գործածությամբ այս բառերի միջև տարբերություն չկա) արտահայտվում է լինել բայի խոնարհման ձևերով, իսկ դերբայները ցույց են տալիս գործողությունների հաջորդականություն, ուրեմն և դրանից տրամաբանորեն բխում է, որ երկրորդական բաղադրյալ ժամանակները կարելի է անվանել հետևյալ ձևով.

Գնալիս եմ լինում — համընկնող ներկա.
Գնացած եմ լինում — նախորդող ներկա.
Գնալու եմ լինում — հաջորդող ներկա.
Գնալիս էի լինում — համընկնող անցյալի անկատար.
Գնացած էի լինում — նախորդող անցյալի անկատար.
Գնալու էի լինում — հաջորդող անցյալի անկատար.
Գնալիս եմ եղել — համընկնող վաղակատար.
Գնացած եմ եղել — նախորդող վաղակատար.
Գնալու եմ եղել — հաջորդող վաղակատար։

Այս թվարկմամբ արդեն պարզ է դառնում երկրորդական բաղադրյալ ժամանակների անվանման սկզբունքը։ Լինել բայով անվանվում է ժամանակը կամ ժամանակակետը, իսկ դերբայներով՝ գործողությունների հաջորդականությունը։

Մի կողմ թողած այլ հարցերը՝ նշենք, որ այս սկզբունքով կարող ենք անգամ որոշել մեր բայի տարբեր եղանակային ձևերի ժամանակային պատկանելությունը։ Այսպես, ըղձականի ապառնիի և անցյալի ապառնիի ձևերին համապատասխան կարող են գործածվել ըղձականի, ենթադրականի և հարկադրականի ապառնի և անցյալի ապառնի ձևերը, օրինակ՝ Ամեն անգամ, երբ ձեր տուն գամ, դու պարապելիս լինես‖պարապելիս կլինես‖պարապելիս պիտի լինես. Ամեն անգամ, երբ ձեր տուն գայի, դու պարապելիս լինեիր‖պարապելիս կլի-

ներիր||պարապելիս պիտի լինեիր: *Սա միայն ու միայն նշանակում է մի բան, այն է՝* գամ–կգամ–պիտի գամ *ձևերը՝ մի կողմից և* գայի–կգայի–պիտի գայի *ձևերը՝ մյուս կողմից ժամանակային տարբերություն չունեն:*

Նշելի է նաև այն, որ գլխավոր բաղադրյալ ժամանակների ներկայի և ապառնիի ձևերին համապատասխան կարող են գործածվել երկրորդական բաղադրյալ հրամայականի ձևեր, օրինակ՝ Ամեն անգամ, երբ ես ձեր տուն եմ գալիս, դու պարապելիս եղիր. Ամեն անգամ, երբ ես ձեր տուն եմ գալու *(կամ* գամ||կգամ||պիտի գամ*),* դու պարապելիս եղիր: *Սա էլ նշանակում է, որ հրամայականը ունի ներկայի և ապառնիի հատկանիշ միաժամանակ, որը և նրան հնարավորություն է տալիս գործածվելու ներկայի և ապառնիի ձևերի հետ:*

Երկրորդական բաղադրյալ ձևերի ընդհանուր վերլուծությունը տալուց հետո արդեն կարելի է խոսել արդի հայերենի բայի կերպի քերականական կարգի մասին:

Գ. Ջահուկյանի դրույթները քննելիս մենք տեսանք, որ արդի հայերենի բայի համադրական ձևերում նկատվում է կատարյալ և անկատար կերպերի հակադրություն՝ գնացի–գնամ||գնայի, գրեցի—գրեմ||գրեի, փախա—փախչեմ||փախչեի, գտա—գտնեմ||գտնեի, մոտեցա—մոտենամ||մոտենայի, բարձրացրի—բարձրացնեմ||բարձրացնեի. *այս հակադրությունն, ինչպես պարզորոշ կերպով նկատվում է, արտահայտվում է հիմքերի հակադրությամբ: Բայց բոլոր բայաձևերում անխտիր դրսևորվող այս հակադրությունը մաքուր կերպային տարբերություն չէ, այլ միաժամանակ նաև եղանակային ու ժամանակային տարբերություն:*

Առանց եղանակային տարբերությունների մաքուր կերպային տարբերություններ երևան են գալիս միայն սակավաթիվ բայերի դեպքում, այն էլ ներկա և անցյալ անկատար ժամանակներում, ինչպես՝ գիտեմ—գիտեի||գիտենում եմ—գիտենում էի, ունեմ—ունեի||ունենում եմ—ունենում էի, արժեմ—արժեի||արժենում եմ—արժենում էի: *Օգտվելով Կ. Ջահուկյանի անվանումներից, կարելի է ասել, որ առաջիններն արտահայտում են միակատար (ոչ տևական), իսկ երկրորդները՝ բազմակատար (տևական) կերպ:*

Բայց միակատար-բազմակատար (ոչ տևական-տևական) կերպերի այս հակադրությունն օրինաչափ կերպով հանդես է գալիս հայերենի բոլոր բայաձևերում՝ գլխավոր և երկրորդական բաղադրյալ ժամանակների հակադրությամբ, ըստ որում գլխավոր բաղադրյալ ձևերի միակատար կերպի յուրաքանչյուր շարքի համապատասխանում է երկրորդական բաղադրյալ ձևերի բազմակատար կերպի երեք շարք՝ գործողությունների հաջորդություն ցույց տվող համընկնում, նախորդում և հետնորդում եղերով, ինչպես՝ միակատար՝ գնում եմ, բազմակատար՝ գնալիս—գնացած—գնալու եմ լինում. նույն ձևով նաև՝ գնացել եմ—գնալիս—գնացած—գնալու եմ եղել, գնացի—գնալիս—գնացած—գնալու եղա և այլն։

Ինչպես արդեն նշված է, այս համապատասխանություններն ու հակադրությունները մի ամբողջ համակարգ են կազմում։

Եթե մի կողմ թողնենք գնացի||գնամ—գնայի տիպի տարբերությունները, որոնք ոչ միայն կերպային, այլև եղանակային ու ժամանակային տարբերություններ են, և գիտեմ||գիտենում եմ տիպի տարբերությունները, որոնք մաքուր կերպային են, բայց տարածվում են միայն մի քանի բայերի վրա, ապա ժամանակակից հայերենի բայի կերպի կարգը պետք է կապել խոնարհման գլխավոր ու երկրորդական ձևերի հարաբերակցությամբ որպես մի ամբողջ համակարգ դրսևորվող գործողության միակատարություն-բազմակատարություն (ոչ տևականություն-տևականություն) հակադրության հետ։

Ինչպես անմիջաբար կարելի է նկատել, մենք ժամանակակից հայերենի բայի կերպի հարցը լուծում ենք հետևելով Գ. Ջահուկյանին, միայն այն տարբերությամբ, որ նա յուրաքանչյուր միակատար ձևի դիմաց դնում է բազմակատար մի ձև, ինչպես՝ գնում եմ||գնալիս եմ լինում, գնում էի||գնալիս էի լինում, գնացել եմ||գնացած եմ լինում, գնացել էի||գնացած էի լինում[89]*, իսկ մենք դնում ենք երեք ձև՝ գործողությունների հաջորդություն ցույց տվող համընկնում, նա-*

[89] *Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 272-ի աղյուսակը։*

խորդում և հաջորդում եզրերով, ինչպես՝ գնում եմ||գնալիս եմ լինում—գնացած եմ լինում—գնալու եմ լինում, գնացել եմ||գնալիս եմ եղել—գնացած եմ եղել—գնալու եմ եղել *և այլն։*

ԲԱՅԻ ԴԵՄՔԻ ՈՒ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

5. ԲԱՅԻ ԴԵՄՔՆ ՈՒ ԹԻՎԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ.— Բայի եղանակային ձևերից անբաժան են դեմքի ու թվի քերականական կարգերը։ Այս կարգերի էությունն արտահայտվում է նրանում, որ եղանակային ձևերի մեջ դրսևորվում է նաև գործողություն կատարողի դեմքը և թիվը։ Հայերենի բայն ունի երեք դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ և երկու թիվ՝ եզակի և հոգնակի։

Եզակի թվի առաջին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը, օրինակ՝ գնացի, տեսա. գնամ, տեսնեմ: *Եզակի թվի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսակիցը, օրինակ՝* գնացիր, տեսար. գնաս, տեսնես: *Եզակի թվի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է մի երրորդ անձ կամ իր, օրինակ՝* գնաց, տեսավ. գնա, տեսնի:

Հոգնակի թվի առաջին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսողը և այն խումբը, որի անունից հանդես է գալիս խոսողը, օրինակ՝ գնացինք, տեսանք. գնանք, տեսնենք: *Հոգնակի թվի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում է խոսակիցը և այն խումբը, որի մեջ ըստ խոսողի մտնում է խոսակիցը, օրինակ՝* գնացիք, տեսաք. գնաք, տեսնեք: *Հոգնակի թվի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարում են խոսողությանը չմասնակցող անձեր կամ իրեր, օրինակ՝* գնացին, տեսան, գնան, տեսնեն:

Ի տարբերություն մի շարք լեզուների, որոնց մեջ բայի դեմքերը սովորաբար կամ առանձին դեպքերում որոշվում են միայն դերանունների միջոցով, հայերենում բայերի դեմքերը և թվերը միշտ որոշ են և ձևաբանորեն տարբերակված, ինչ-

պես՝ գնացի, գնացիր, գնաց, գնացինք, գնացիք, գնացին. գրեմ, գնաս, գնա, գնանք, գնաք, գնան և այլն։ Ժամանակակից հայերենի բայական ձևերի մեջ միայն ա խոնարհման պարզ բայերի ըղձական եղանակի ապառնիի եզակի երրորդ դեմքը և եզակի հրամայականը ձևով համընկնում են, ինչպես՝ նա գնա, կարդա, հավատա, դու գնա, կարդա, հավատա[90], բայց դրանք իրարից տարբերվելով դեմքով, մյուս կողմից էլ հրամայականի ձևերը շեշտ կրելով՝ փաստորեն իրար հետ չփոթվել չեն կարող։

Եվ որովհետև հայերենի դեմքերն ու թվերը միշտ որոշակի են և տարբերակված՝ այդ պատճառով էլ դիմավոր ձևերի հետ դերանուն ենթակաների գործածությունը մի տեսակ ավելորդություն է դառնում, եթե դա չի պատճառաբանվում տրամաբանական շեշտով, դեմքերի հատուկ հակադրությամբ և այլն։

Մ. Աբեղյանն անդրադառնալով այս հարցին և նշելով, որ հնդեվրոպական մի շարք լեզուներում, օրինակ՝ գերմաներենում, ֆրանսերենում, սկզբնապես տարբեր բայական ձևերը հնչյունափոխության պատճառով հաճախ նույն ձևին են վերածվել, ուստի և դերանուն ենթականերն անհրաժեշտ են բայի դեմքերը որոշելու համար, մեր լեզվի մասին գրում է. «Հայերենում էլ հարկավ բայից առաջ կամ հետո դնում ենք հաճախ դեմքի համապատասխան մի անձնական դերանուն, բայց այդ լինում է ոչ թե բայի դեմքը որոշելու համար, այլ առավորաբար իբրև ավելադրություն, կամ երբ դեմքը զորեղ շեշտվում է, ինչպես՝ Ե՛ս եմ գնում։ Միշտ պետք է նկատի ունենալ, որ մեր լեզվի մեջ դերանվան իբրև ենթակա կիրառությունն առանց որևէ դիտավորության՝ ընդհանրապես ավելորդ ծանրաբեռնություն է, որ առաջ է գալիս շատ անգամ օտար լեզուների ազդեցությունից»[91]։

Հայերենի բայի դեմքերն ու թվերը արտահայտվում են հատուկ վերջավորությունների միջոցով, որոնք կցվում են բայահիմքերին վերջից՝ հաճախ լծորդ ձայնավորների հետ

---

[90] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 298, Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 267։

[91] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 299։

միասին, երբեմն էլ առանց դրանց, ըստ որում միևնույն վերջավորությունն արտահայտում է և՛ դեմքի, և՛ թվի գաղափար, օրինակ՝ գնացի ձևի մեջ ի վերջավորությունն արտահայտում է եզակի թվի առաջին դեմքի իմաստ, գնացիք ձևի մեջ իք վերջավորությունը՝ հոգնակի թվի երկրորդ դեմքի իմաստ և այլն։

Ժամանակակից հայերենում բայի դեմքերն ու թվերը արտահայտվում են վերջավորությունների հետևյալ համբերի միջոցով։

ա) Եզակի	Հոգնակի
1. մ	նք
2. ս	ք
3. 0	ն

Այս վերջավորություններն են ստանում ըղձական եղանակի ապառնին և հավելավոր բայերի ներկան, միայն ըղձականի դեպքում ե խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքում լծորդի ե ձայնավորը փոխվում է ի-ի։ Օրինակներ.

Եզակի

1. գրե-մ	կարդա-մ	ե-մ	կա-մ
2. գրե-ս	կարդա-ս	ե-ս	կա-ս
3. գրի-0	կարդա-0	է-0	կա-0

Հոգնակի

1. գրե-նք	կարդա-նք	ե-նք	կա-նք
2. գրե-ք	կարդա-ք	ե-ք	կա-ք
3. գրե-ն	կարդա-ն	ե-ն	կա-ն

բ) Եզակի	Հոգնակի
1. ի	ինք
2. իր	իք
3. ր, ց	ին

Այս վերջավորություններն են ստանում բոլոր բայերի ըղձական անցյալի ապառնին՝ եզակի երրորդ դեմքում ունենալով ր վերջավորություն, ե և ա խոնարհման պարզ բայերի

անցյալ կատարյալը՝ եզակի երրորդ դեմքում ունենալով 0 վերջավորություն և պատճառական բայերը՝ եզակի երրորդ դեմքում ունենալով եց վերջավորություն։ Օրինակներ։

Եզակի

1. գրե-ի	*կարդայ-ի*	*գրեց-ի*	*կարդաց-ի*	*բարձրացր-ի*
2. գրե-իր	*կարդայ-իր*	*գրեց-իր*	*կարդաց-իր*	*բարձրացր-իր*
3. գրե-ր	*կարդա-ր*	*գրեց-0*	*կարդաց-0*	*բարձրացր-եց*

Հոգնակի

1. գրե-ինք	*կարդայ-ինք*	*գրեց-ինք*	*կարդաց-ինք*	*բարձրացր-ինք*
2. գրե-իք	*կարդայ-իք*	*գրեց-իք*	*կարդաց-իք*	*բարձրացր-իք*
3. գրե-ին	*կարդայ-ին*	*գրեց-ին*	*կարդաց-ին*	*բարձրացր-ին*

գ) Եզակի	Հոգնակի
1. ա	*անք*
2. ար	*աք*
3. ավ	*ան*

Անցյալ կատարյալում այս վերջավորություններն են ստանում սոսկածանցավոր բայերը։ Օրինակներ.

Եզակի

1. գտ-ա	*փախ-ա*	*բարձրաց-ա*	*մոտեց-ա*
2. գտ-ար	*փախ-ար*	*բարձրաց-ար*	*մոտեց-ար*
3. գտ-ավ	*փախ-ավ*	*բարձրաց-ավ*	*մոտեց-ավ*

Հոգնակի

1. գտ-անք	*փախ-անք*	*բարձրաց-անք*	*մոտեց-անք*
2. գտ-աք	*փախ-աք*	*բարձրաց-աք*	*մոտեց-աք*
3. գտ-ան	*փախ-ան*	*բարձրաց-ան*	*մոտեց-ան*

դ) Եզակի	Հոգնակի
2. իր, ա, ու	*եք*

Այս վերջավորություններն են ստանում հրամայական եղանակի բայաձևերը, ըստ որում եզակի թվում իր վերջավորություն են ստանում ե խոնարհման պարզ ու սոսկածանցավոր և ա խոնարհման սոսկածանցավոր բայերը, ա են

ստանում ա խոնարհման պարզ բայերը, իսկ ու են ստանում պատճառական բայերը. Հոգնակի թվում եք վերջավորությունն են ստանում բոլոր բայերը։ Օրինակներ.

Եզակի

գր-իր գտ-իր փախ-իր բարձրաց-իր մոտեց-իր կարդ-ա բարձրացր-ու

Հոգնակի

գրեց-եք գտ-եք փախ-եք բարձրաց-եք մոտեց-եք կարդաց-եք բարձրացր-եք

Ամփոփելով այս բոլորը՝ կունենանք հայերենի բայի դիմային վերջավորությունների հետևյալ պատկերը։

Եզակի

1-ին դեմք — մ, ի, ա (գրե-մ, գրեց-ի, փախ-ա).
2-րդ դեմք — ս, իր, ար, ա, ու (գրե-ս, գրեց-իր, փախ-ար, կարդ-ա, բարձրացր-ու).
3-րդ դեմք — 0, ավ, եց, ր (գրեց-0, փախ-ավ, բարձրացր-եց, գրե-ր).

Հոգնակի

1-ին դեմք — նք, ինք, անք (գրե-նք, գրեց-ինք, փախ-անք).
2-րդ դեմք — ք, իք, աք, եք (գրե-ք, գրեց-իք, փախ-աք, գրեց-եք).
3-րդ դեմք — ն, ին, ան (գրե-ն, գրեց-ին, փախ-ան)։

Կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները վերջավորությունները բաժանում են երկու խմբի՝ պարզ և բաղադրյալ. «Պարզ են այն վերջավորությունները, որոնք ցույց են տալիս դեմքի և թվի քերականական կարգերը, ինչպես, օրինակ, մ, ս, նք, բաղադրյալ են այն վերջավորությունները, որոնք միաժամանակ ունեն նաև ժամանակային ցուցիչ, ինչպես օրինակ՝ իմ, իր և այլն»[92]։ Է. Աղայանը ժամանակային այսպիսի ցուցիչներ է համարում անցյալ ժամա-

[92] *Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 362։*

նակաձևերում հանդես եկող ա-ն և ի-ն։ Ա ցուցիչն են ստանում ե և ա խոնարհման սոսկածանցավոր բայերը, օրինակ՝ գտ-ա, գտ-ար, գտ-ավ. բարձրաց-ա, բարձրաց-ար, բարձրաց-ավ, իսկ ի ցուցիչն են ստանում մյուս բայերը սահմանական անցյալ կատարյալում և բոլոր բայերը ըղձականի անցյալում, օրինակ՝ գրեց-ի, գրեց-ի-ր, գրե-ի, գրե-ի-ր, գրե-ի-նք, գրե-ի-ք և այլն։

Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս կատարելու ձևույթների նույնացում և տարբեր ձևերի մեջ գտնելու միևնույն վերջավորությունները։ Այսպես, ըստ է. Աղայանի, ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում ունենք հետևյալ վերջավորությունները. եզակի՝ 1-ին դեմք — մ կամ 0, 2-րդ դեմք — ս, ր, ա, 3-րդ դեմք — ր, վ կամ 0. հոգնակի՝ 1-ին դեմք — նք, 2-րդ դեմք — ք, 3-րդ դեմք — ն[93]։

Եթե վերջավորությունների անդամահատմամբ և նույնացմամբ իրոք հոգնակի թվի վերջավորությունները կարելի է հանգեցնել առաջին դեմքի նք, երկրորդ դեմքի ք և երրորդ դեմքի ն ձևերին, ապա եզակի թվի վերջավորությունները է. Աղայանի նշածներին հանգեցվել չեն կարող։ Այսպես օրինակ՝ եզակի թվի համար չեն արտացոլված պատճառական բայերի հրամայականի ու (բարձրացր-ու, մեծացր-ու, հագցր-ու), անցյալ կատարյալի եց (բարձրացր-ի, բարձրացր-իր, բարձրացր-եց) վերջավորությունները։ Մյուս կողմից, եթե լեզվական ձևերի և ընդհանրապես լեզվի կառուցվածքի նկարագրությունն ունի նաև գործնական նպատակներ՝ կոչված լինելով ավելի պարզ ու մատչելի ներկայացնելու լեզվի հորինվածքությունը, ապա այդօրինակ տարրալուծումները շատ դեպքերում վերածվում են իրենց հակադրությանը՝ ոչ միայն չնպաստելով, այլև հաճախ խանգարիչ հանդիսանալով լեզվի կառուցվածքի իրական տարրերի՝ իմաստակիր միավորների բացահայտմանը։

---

[93] Անդ, էջ 363։

ԽՈՆԱՐՀՈՒՄ

I. ԱՌԱՋԻՆ ՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՅԱՀԻՄՔԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

6. ԱՌԱՋԻՆ ՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՆՐԱԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ.— Հայկական ձևերի կազմությունն ա-սելով հասկանում ենք դերբայների և դիմավոր ձևերի կազ-մությունը։ Արդի հայերենի բայաձևերի ելակետ է ընդունված անորոշ դերբայը, որը ժամանակակից հայերենում վերջա-վորվում է պարզ ել (գրել), ալ (կարդալ), սոսկածանցավոր ճել (գտնել), չել (փախչել), ձալ (մեծանալ), եցնալ (մոտե-նալ), պատճառական եցնել (վազեցնել), ացնել (մեծացնել), ցնել (փախցնել), կրավորական վել (գրվել, կարդացվել), բազմապատկական ատել, ոտել, կոտել, տել (կտրատել, ջար-դոտել, թուլկոտել, բեկտել) և այլ ձևերով[94]։ Ինչպես տեսնում ենք, բոլոր դեպքերում անորոշ դերբայն ունենում է ել կամ ալ ածանցները, ըստ որում, անորոշ դերբայի բուն ածանցն է լ-ն, իսկ ե և ա հնչյունները լծորդ ձայնավորներ են կամ «խո-նարհիչներ»։ Այս տեսակետից աշխարհաբարում պարզվել է գրաբարյան խոնարհման պատկերը։ Գրաբարում հանդես էին գալիս ե (գրեմ), ի (գրիմ), ա (աղամ), ու (զգենում) և ո (մի-այն մի բայի մեջ՝ գոմ) խոնարհիչները։

Ըստ անորոշ դերբայի կազմության ժամանակակից հայե-րենում տարբերվում է երկու խոնարհում՝ ե կամ առաջին խո-նարհում և ա կամ երկրորդ խոնարհում։ Ե կամ առաջին խո-նարհման են պատկանում անորոշում ել վերջավորվող բա-յերը։ Ա կամ երկրորդ խոնարհման են պատկանում անորո-շում ալ վերջավորվող բայերը։ Սակայն և ել, և ալ վերջա-վորվող բայերի մեջ, ընդհանրություններով հանդերձ, նկատ-վում են ձևերի կազմության զգալի տարբերություններ, որոնք և թույլ են տալիս առաջին խոնարհման մեջ ընդունելու երեք մանրակաղապարներ՝ ե խոնարհման պարզ բայեր (գրել), ե

---

94 *Անորոշ դերբայը որոշ դեպքերում վերջավորվում է նաև նալ (դառ-նալ, բառնալ) ձևով։ Այսպիսի բայերի մասին խոսվում է առանձին, անկա-նոն բայերի քննության կապակցությամբ։*

խոնարհման սոսկածանցավոր բայեր (գտնել, փախչել) և պատճառական բայեր (վազեցնել, բարձրացնել, փախցնել), *իսկ երկրորդ խոնարհման մեջ երկու մանրակաղապարներ՝* Ա խոնարհման պարզ բայեր (կարդալ) և Ա խոնարհման սոսկածանցավոր բայեր (մեծանալ, մոռենալ)[95]*։ Իսկ ինչ վերաբերում է կրավորական ու բազմապատկական բայերին, օրինակ՝* գրվել, կարդացվել, ջարդոտել, կտրատել *և այլն, ապա դրանք խոնարհման առանձին մանրակաղապարներ չեն կազմում, իրենց ձևերը կանոնավոր կերպով կազմում են ե խոնարհման պարզ բայերի նման, ուստի և դրանց վրա առանձին կանգ առնելու հարկ չկա, և ե խոնարհման պարզ բայերի մասին ասվածները հավասարապես կվերաբերեն նաև դրանց։*

7. ԲԱՅԱՀԻՄՔԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Իրար հետ համեմատելով գր–ել, գր–ում, գր–ած, գր–եմ *և այլ ձևերը, նկատում ենք, որ դրանց մեջ կա մի ընդհանուր մաս, որ անփոփոխ ձևով հանդես է գալիս բոլոր ձևերի մեջ. դա է* գր *մասը։* Գրեց–ի, գրեց–իր, գրեց–եք *և այլ ձևերի մեջ որպես ընդհանուր անփոփոխ մաս հանդես է գալիս* գրեց, *իսկ* գրել–0, գրել–իս, գրել–ու, գրել–իք *ձևերի մեջ՝* գրել *մասը։ Ահա, բայական հիմքերի անջատման համար ելակետ է հանդիսանում հենց այս՝ որոշ բայաձևերի մեջ անփոփոխ կերպով հանդես եկող բայական բաղադրիչների անջատումը։*

Ինչպես տեսանք, գրել *բայի համար անջատվեցին երեք ընդհանուր մասեր կամ բայահիմքեր, որոնց վրա վերջավորությունների ավելացմամբ կազմվում են բայական ձևերը. դրանք են՝* գր–, գրեց– *և* գրել–։ *Համեմատությունը պարզում է, որ այսպիսի երեք հիմքեր են անջատվում, ասենք, նաև* կարդալ *բայի համար, ինչպես՝ ա)* կարդ–ալ, կարդ–ում, կարդ–ամ, կարդ–ա, *բ)* կարդաց–ած, կարդաց–ող, կարդաց–ի, կարդաց–եք, *գ)* կարդալ–0, կարդալ–իս, կարդալ–ու *և այլն, այսինքն՝* կարդալ *բայի համար անջատվում են* կարդ–, կարդաց– *և* կարդալ– *հիմքերը։ Երեք հիմք է անջատվում, ասենք,*

---

[95] *Այստեղ քննվում են միայն կանոնավոր խոնարհումները։ Կան նաև շեղվող կամ «անկանոն» ձևեր, որոնք վերլուծվում են առանձին։*

նաև բարձրացնել *բայի համար՝ ա)* բարձրաց-ել, բարձրացն-ում, բարձրացն-եմ, *բ)* բարձրացր-ի, բարձրացր-եք, բարձրացր-ած, *գ)* բարձրացնել-Ø, բարձրացնել-իս, բարձրացնել-ու, *այսինքն՝* բարձրացնել *բայի համար անջատվում են* բարձրացն-, բարձրացր- և բարձրացնել- *հիմքերը։*

Այսպես շարունակելով կարող ենք համոզվել, որ ժամանակակից հայերենի յուրաքանչյուր բայի բայական բոլոր ձևերը կազմվում են երեք հիմքերից։ Առաջին հիմքը կոչվում է անկատարի կամ անորոշի (բերված օրինակներում գր-, կարդ-, բարձրացն-*), երկրորդ հիմքը՝ կատարյալի (*գրեց-, կարդաց-, բարձրացր-*), իսկ երրորդ հիմքը (*գրել-, կարդալ-, բարձրացնել-*)՝ դերբայական կամ բացարձակ հիմք։*

Մինչև վերջերս հայերենի քերականություններում բայաձևերի համար ընդունվում էր երկու հիմք՝ անկատարի (անորոշի) և կատարյալի։ Այս դրույթը գալիս է դեռևս Մ. Աբեղյանից, որը, ինչպես հայտնի է, բայ էր համարում միայն դիմավոր, եղանակային ձևերը, իսկ եղանակային ձևերում, իրոք, կարելի է անջատել միայն երկու հիմք՝ անկատարի և կատարյալի հիմքեր։ Բայց քանի որ Մ. Աբեղյանին հաջորդած քերականություններում բայական համակարգի մեջ զետեղվեցին նաև դերբայները, դրանից ինքնին բխում է մի երրորդ հիմքի առանձնացումը, որը և կատարում է է. Աղայանը, այն կոչելով դերբայական կամ բացարձակ հիմք[96]*։*

Այժմ բայական հիմքերի կազմության մասին։

Բոլոր բայերի դերբայական կամ բացարձակ հիմքը այդ բայերի անորոշ դերբայն է և ունենալով ել կամ ալ մասնիկները՝ միշտ հանդես է գալիս որպես նշույթավոր հիմք, օրինակ՝ գրել, կարդալ, գտնել, փախչել, բարձրանալ, մոտենալ, սեանալ *և այլն։ Դերբայական կամ բացարձակ հիմքից կազմվում են անկատար երկրորդը և ապառնի դերբայները։ Անկատար դերբայն ունենում է իս, իսկ ապառնի դերբայները՝* ու *և* իք *մասնիկները, օրինակ՝* գրել—գրելիս—գրելու—գրելիք, կարդալ—կարդալիս—կարդալու—կարդալիք, գտնել—գտնե-

---

[96] *Տե՛ս է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 327—330։*

լիս—գոնելու—գոնելիք և այլն։ Այս կանոնը համապարփակ է, ոչ մի բացառություն չի ճանաչում երկու խոնարհումների և նրանց մեջ մտնող մանրակազապարների համար, ուստի և դերբայական բայահիմքից բայական ձևերի կազմությանը այլևս չենք անդրադառնալու։

Բոլոր բայերի անկատարի բայահիմքն ստանում ենք անորոշ դերբայից ել և ալ մասնիկները հանելու միջոցով, ինչպես՝ գրել—գր-, կարդալ—կարդ-, գտնել—գտն-, փախչել—փախչ-, բարձրանալ—բարձրան-, մոտենալ—մոտեն-, բարձրացնել—բարձրացն-, մոտեցնել—մոտեցն-, փախցնել—փախցն- և այլն։ Բացառություն չկա։

Ներքին կազմության տեսակետից անկատարի բայահիմքերը բաժանվում են երկու խմբի՝ ա) աննշույթ բայահիմքեր, որոնք իրենց կազմում չունեն սոսկածանցներ կամ պատճառական ածանցներ, օրինակ՝ կարդալ—կարդ-, գրել—գր-, հավատալ—հավատ-, վազել—վազ- և բ) նշույթավոր բայահիմքեր, որոնք իրենց կազմում ունեն սոսկածանցներ կամ պատճառական ածանցներ, օրինակ՝ գտնել—գտն-, փախչել—փախչ-, մեծանալ—մեծան-, մոտենալ—մոտեն-, վազեցնել—վազեցն-, մեծացնել—մեծացն-, փախցնել—փախցն-[97]։

Կատարյալի հիմքը կազմությամբ բազմաձև է և տարբեր տիպեր է ունենում։

ա) ե և ա խոնարհման պարզ բայերի կատարյալի հիմքը համապատասխանաբար ունենում է եց և ացբաղադրիչները, որոնք ավելանում են անկատարի հիմքի վրա, օրինակ՝ գրել—գր-գրեց-, կարդալ—կարդ-կարդաց-, սիրել—սիր-սիրեց-, հավատալ—հավատ-հավատաց- և այլն։

բ) ե խոնարհման ե և չ ածանց ունեցող բայերի կատարյալի հիմքում անկատարի հիմքի ե և չ ածանցներն ընկնում են, և այսպիսով ստացվում են պարզ կամ արմատական հիմքեր, օրինակ՝ գտնել—գտն-գտ-, մտնել—մտն-մտ-, փախչել—փախչ-փախ-, թռչել—թռչ-թռ- և այլն։

գ) Ա. խոնարհման սոսկածանցավոր բայերի կատարյալի

---

[97] Անկատարի հիմքերի համար գործածում են նաև վերջավոր ու աճ-վերջավոր (է. Աղայան) և ձևավոր ու անձևավոր (Գ. Ջահուկյան) անվանումները։

հիմքում անկատարի հիմքի ան և են ածանցները համապատասխանաբար փոխվում են աց և եց ածանցներով, օրինակ՝ բարձրանալ—բարձրան-բարձրաց-, հեռանալ—հեռան-հեռաց-, մոտենալ—մոտեն-մոտեց-, մերձենալ—մերձեն-մերձեց- և այլն։ Այսպիսով, ե և ա խոնարհման պարզ բայերը և այս բայերը անցյալ կատարյալի հիմքով նույնանում են, օրինակ՝ գրել—գրեց‖մոտենալ—մոտեց, վազել—վազեց‖մերձենալ—մերձեց, կարդալ—կարդաց‖բարձրանալ—բարձրաց, հավատալ—հավատաց‖հեռանալ—հեռաց և այլն։

դ) Պատճառական բայերի կատարյալի հիմքում անկատարի հիմքի ն հնչյունը փոխվում է r-ի, օրինակ՝ բարձրացնել—բարձրացն-բարձրացr, մոտեցնել—մոտեցն-մոտեցr, հագցնել—հագցն-հագցr և այլն։

Այսպիսով, ներքին կազմության տեսակետից կատարյալի հիմքերը ևս լինում են նշույթավոր, որոնք բաժանվում են երկու խմբի՝ ցոյական (գրեց, կարդաց, սիրեց, հավատաց) ու rեական *(բարձրացր, մոտեցր, հագցր) և անշույթ (գտ, մտ, փախ, թռ)։*

Համեմատելով անկատարի և կատարյալի հիմքերը՝ հեշտ է նկատել, որ խոնարհման ոչ մի մանրակազապարում դրանք չեն նույնանում և այս կամ այն ձևով հակադրվում են իրար։

Անկատարի և կատարյալի հիմքերը իրար են հակադրվում երեք ձևով[98]*։*

ա) Անշույթ անկատար նշույթավոր կատարյալ

գրել	*գր-*	*գրեց-*
կարդալ	*կարդ-*	*կարդաց-*

բ) Նշույթավոր անկատար Անշույթ կատարյալ

գտնել	*գտն-*	*գտ-*
փախչել	*փախչ-*	*փախ-*

գ) Նշույթավոր անկատար Նշույթավոր կատարյալ

բարձրանալ	*բարձրան-*	*բարձրաց-*
մոտենալ	*մոտեն-*	*մոտեց-*

[98] *Համմ.* Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 233։*

բարձրացնել	*բարձրացն-*	*բարձրացր-*
մեծացնել	*մեծացն-*	*մեծացր-*
հագցնել	*հագցն-*	*հագցր-*

Մի քանի բայեր կատարյալի զուգաձև հիմքեր ունեն, ինչպես՝ բեր||բերեց, դր||դրեց, ար||արեց և այլն, սակայն դրանք ժամանակակից հայերենի խոնարհման ընդհանուր ձևերից շեղվող այսպես կոչված «անկանոն» բայեր են, որոնց մասին կխոսվի առանձին։

Անկատարի ու կատարյալի հիմքերից կազմվող ձևերին անդրադառնալու ենք ստորև, առանձին խոնարհումներին և նրանց մանրակազապարներին նվիրված հատվածներում։

II. ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա) ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՁԵՎԵՐ

8. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Ինչպես արդեն առիթ ենք ունեցել նշելու, բայի եղանակային ձևերը կազմության տեսակետից բաժանվում են երկու խմբի՝ վերլուծական ձևեր, որոնք կազմվում են դերբայներով և օժանդակ բայով, օրինակ՝ գնում եմ, գնում էի, գնացել եմ, գնացել էի և այլն, և համադրական ձևեր, որոնք կազմվում են բայահիմքերով և վերջավորություններով, օրինակ՝ գնացի, գնացիր, գնաց. գնամ, գնաս, գնա և այլն։ Եթե հաշվի չառնենք հրկրորդական բաղադրյալ ժամանակները, որոնք կազմվում են անկատար 2-րդ, հարակատար ու ապառնի դերբայներով և լինել բայի խոնարհման ձևերով, ինչպես՝ գնալիս||գնացած|| գնալու եմ լինում, գնալիս||գնացած||գնալու եմ եղել և այլն, ինչպես և հարակատար դերբայով ու եմ—էի բայով կազմված ձևերը (հուզված է—հուզված էր), ապա ժամանակակից հայերենի վերլուծական ձևերը սահմանական եղանակի ներկա, անցյալի անկատար, վաղակատար, անցյալի վաղակատար, ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերն են[99]*։ Դրանք*

[99] Վերլուծական ձևով է կազմվում նաև ենթադրականի (հաստատողա-

Համապատասխանաբար կազմվում են անկատար, վաղակատար ու ապառնի դերբայներով և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով։ Ըստ այդմ, սահմանական եղանակի վերլուծական ձևերի համար ունենում ենք հետևյալ ընդհանուր հարացույցային ձևերը։ Առաջին խոնարհման համար բերվում են գրել, իսկ երկրորդ խոնարհման համար՝ կարդալ բայի ձևերը։

Ներկա

1. գրում եմ	*գրում ենք*	*կարդում եմ*	*կարդում ենք*
2. գրում ես	*գրում եք*	*կարդում ես*	*կարդում եք*
3. գրում է	*գրում են*	*կարդում է*	*կարդում են*

Անցյալի անկատար

1. գրում էի	*գրում էինք*	*կարդում էի*	*կարդում էինք*
2. գրում էիր	*գրում էիք*	*կարդում էիր*	*կարդում էիք*
3. գրում էր	*գրում էին*	*կարդում էր*	*կարդում էին*

Վաղակատար

1. գրել եմ	*գրել ենք*	*կարդացել եմ*	*կարդացել ենք*
2. գրել ես	*գրել եք*	*կարդացել ես*	*կարդացել եք*
3. գրել է	*գրել են*	*կարդացել է*	*կարդացել են*

Անցյալի վաղակատար

1. գրել էի	*գրել էինք*	*կարդացել էի*	*կարդացել էինք*
2. գրել էիր	*գրել էիք*	*կարդացել էիր*	*կարդացել էիք*
3. գրել էր	*գրել էին*	*կարդացել էր*	*կարդացել էին*

Ապառնի

1. գրելու եմ	*գրելու ենք*	*կարդալու եմ*	*կարդալու ենք*
2. գրելու ես	*գրելու եք*	*կարդալու ես*	*կարդալու եք*
3. գրելու է	*գրելու են*	*կարդալու է*	*կարդալու են*

Անցյալի ապառնի

1. գրելու էի	*գրելու էինք*	*կարդալու էի*	*կարդալու էինք*

կանի) ժխտականը՝ չեմ գրի—չէի գրի։ Դրան անդրադառնում ենք ժխտական խոնարհումը վերլուծելիս։

2. գրելու էիր	գրելու էիք	կարդալու էիր	կարդալու էիք
3. գրելու էր	գրելու էին	կարդալու էր	կարդալու էին

Սահմանական եղանակի բայաձևերը իրենց երկանդամ (ըստ օժանդակ բայերի) և եռանդամ (ըստ դերբայների) հակադրություններով կազմում են մի հետևողական ու կատարյալ համակարգ։

Բ) ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՁԵՎԵՐ

9. ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ.— ժամանակակից հայերենի համադրական ձևերն են սահմանականի անցյալ կատարյալը, ըղձական եղանակը, դրանից կ(ը) և պի- տի մասնիկներով կազմվող հաստատողական (ենթադրական) ու հարկադրական եղանակները և հրամայականը։ Ստորև խոսվում է այս ձևերի կազմության մասին։

10. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱԶՄԻՒԹՅՈՒՆԸ.— Անցյալ կատարյալի հիմքերի նըկարագրությունն արդեն տրված է (տե՛ս § 6) և նշված, որ դրանք լինում են երեք տեսակ՝ ցոյական (գրեց-, մոտեց-, կարդաց-, բարձրաց-), րեական (վազեցր-, բարձրացր-, հագցըր-) և պարզ կամ արմատական (գտ-, փախ-)։

Անցյալ կատարյալը կազմվում է կատարյալի հիմքից՝ երկու տիպի վերջավորություններով՝ ի ձայնավոր ունեցող վերջավորություններով, որոնք գրաբարյան այսպես կոչված «ներգործաձև» խոնարհման շարունակությունն են, և ա ձայնավոր ունեցող վերջավորություններով, որոնք գրաբարյան «կրավորաձև» խոնարհման շարունակությունն են։ Միայն պետք է նկատի ունենալ, որ ժամանակակից հայերենում, ինչպես և աշխարհաբարում ընդհանրապես, վերջավորությունների այս տարբեր տիպերը բայի սեռային դրսևորումների հետ ոչ մի առնչություն չունեն, իսկ գրաբարում, ճիշտ է, ոչ հետևողականորեն, բայց համեմատաբար տարբերակում էին ներգործական և կրավորական սեռերը, օրինակ՝ գրեցի—գրեցեր—գրեց (գրեցի—գրեցիր—գրեց)—ներգործական սեռ, գրեցայ—գրեցար—գրեցաւ (գրվեցի—գրվեցիր—գրվեց)—կրավորական սեռ։

Անցյալ կատարյալի առաջին տիպի (ի ձայնավորով) վերջավորություններն ունեն հետևյալ պատկերը.

Եզակի	Հոգնակի
1. ի	*ինք*
2. իր	*իք*
3. Ø կամ եց	*ին*

Անցյալ կատարյալում այս վերջավորություններն են ստանում ե և ա խոնարհման պարզ բայերը և պատճառական բայերը, ըստ որում վերջիններս եզակի երրորդ դեմքում ունենում են ոչ թե Ø, այլ եց։ Օրինակներ.

Եզակի

1. գրեցի	*կարդացի*	*բարձրացրի*
2. գրեցիր	*կարդացիր*	*բարձրացրիր*
3. գրեց	*կարդաց*	***բարձրացրեց***

Հոգնակի

1. գրեցինք	*կարդացինք*	*բարձրացրինք*
2. գրեցիք	*կարդացիք*	*բարձրացրիք*
3. գրեցին	*կարդացին*	*բարձրացրին*

Անցյալ կատարյալի երկրորդ տիպի (ա ձայնավորով) վերջավորություններն ունեն հետևյալ պատկերը.

Եզակի	Հոգնակի
1. ա	*անք*
2. ար	*աք*
3. ավ	*ան*

Անցյալ կատարյալում այս վերջավորություններն են ստանում առաջին և երկրորդ խոնարհման սոսկածանցավոր բայերը։ Օրինակներ.

Եզակի

1. գտա	*փախա*	*բարձրացա*	*մոտեցա*
2. գտար	*փախար*	*բարձրացար*	*մոտեցար*
3. գտավ	*փախավ*	*բարձրացավ*	*մոտեցավ*

	Հոգնակի	
1. գտանք	բարձրացանք	մոտեցանք
2. գտաք	բարձրացաք	մոտեցաք
3. գտան	բարձրացան	մոտեցան

Չնայած այն բանին, որ անցյալ կատարյալի վերջավորությունների այդ երկու տիպերը լրիվ համարժեք են ու հավասարազոր և գոնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ, բայց ըստ այս կամ այն կազմության հիմքերի վրա դրվելու առանձնահատկության չափազանց մեծ կայունություն են հանդես բերում և, որպես կանոն, իրարով փոխարինվել չեն կարող, ինչպես այդ նկատվում է հոլովական համակարգում (համմտ. օրինակ՝ ծագումի||ծագման, կատարումի||կատարման, գիշերվա||գիշերի, ընկերոջ||ընկերի և այլն, բայց միայն՝ **գրեցի** *և ոչ երբեք՝* **գրեցա**, **կարդացի**, **գնացի**, **փախա**, **գտա**, **բարձրացա** *և այլն)։*

11. ՂՂԱՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Ղղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի։

Ղղձական ապառնիի վերջավորություններն են.

Եզակի	Հոգնակի
1. մ	նք
2. ս	ք
3. 0	ն

Այս վերջավորությունները ըստ առաջին և երկրորդ խոնարհումների ե և ա լծորդ ձայնավորների հետ միասին համապատասխանաբար դրվում են անկատարի հիմքի վրա, միայն առաջին խոնարհման դեպքում եզակի երրորդ դեմքի լծորդի ե ձայնավորը փոխվում է ի-ի։ Այսպիսով, առաջին և երկրորդ խոնարհումների համար ստացվում են ղղձականի ապառնիի հարացույցային հետևյալ ձևերը։

Եզակի	Հոգնակի
1. գրեմ կարդամ	գրենք կարդանք
2. գրես կարդաս	գրեք կարդաք
3. գրի կարդա	գրեն կարդան

Այս ձևերում չափազանց հետաքրքրական է առաջին խոնարհման բայերի ըղձական ապառնիի վերջավորությունների համապատասխանությունը օժանդակ բայի ձևերի հետ՝ եմ, ես, ի (<է), ենք, եք, են: Իսկ եթե նկատի ունենանք, որ մինչև 19-րդ դարի վերջերը և 20-րդ դարի սկզբները առաջին խոնարհման բայերի եզակի երրորդ դեմքի համար ավելի օրինաչափական էին ե-ով ձևերը (գրե, կատարե), ապա այդ համապատասխանությունը փաստորեն դառնում է կատարյալ:

Ըղձական անցյալի ապառնիի վերջավորություններն են.

Եզակի	Հոգնակի
1. ի	*ինք*
2. իր	*իք*
3. ր	*ին*

Այս վերջավորությունները, ըստ առաջին և երկրորդ խոնարհումների, ե և ա լծորդ ձայնավորների հետ միասին համապատասխանաբար դրվում են անկատարի հիմքի վրա: Ե և ա լծորդ ձայնավորների և ի ձայնավորով սկսվող վերջավորությունների միջև ըստ հայերենի արտասանական օրենքների մտնում է յ ձայնակապը, որը մեր ուղղագրության կանոններով ե-ից հետո չի գրվում, իսկ ա-ից հետո գրվում է[100]*: Այսպիսով, առաջին և երկրորդ խոնարհումների համար ստացվում են ըղձականի անցյալի ապառնիի հետևյալ հարացույցային ձևերը:*

Եզակի	Հոգնակի
1. գրեի կարդայի	*գրեինք կարդայինք*
2. գրեիր կարդայիր	*գրեիք կարդայիք*
3. գրեր կարդար	*գրեին կարդային*

Այս ձևերում առաջին խոնարհման բայերի վերջավորությունները, եթե հաշվի չառնենք ուղղագրական տարբերությունները, փաստորեն կատարելապես համապատասխանում են օժանդակ բայի անցյալի ձևերին:

---

[100] *Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 217:*

Նշենք, որ կարող է լինել նաև մի այլ մոտեցում. ըղձականի և՛ ապառնիի, և՛ անցյալի ապառնիի վերջավորությունների կազմում զետեղել նաև լծորդ ձայնավորները։ Այդ դեպքում առաջին խոնարհման ապառնիի համար կանջատվեն **եմ, ես, ի, ենք, եք, են,** *իսկ անցյալի ապառնիի համար՝* **էի, էիր, եր, էինք, էիք, էին** *վերջավորությունները, որոնք, ինչպես նշեցինք, փաստորեն նույնանում են օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի հետ և՛ հնչյունական կերպարանքով, և՛ իմաստով։*

12. ՀԱՍՏԱՏՈՂԱԿԱՆ (ՆԹԱԴՐԱԿԱՆ) ԵՂԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—Հաստատողական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի։ Դրանք համապատասխանաբար կազմվում են ըղձական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ձևերից՝ կ(ը) մասնիկով, ըստ որում բաղաձայնով սկսվող բայերից առաջ այս մասնիկն արտասանվում է կը, իսկ ձայնավորով սկսվող բայերից առաջ՝ կ։

Հաստատողական եղանակի ձևերն ունեն հետևյալ պատկերը։

ԱՊԱՌՆԻ

Եզակի		Հոգնակի	
1. կգրեմ	*կկարդամ*	*կգրենք*	*կկարդանք*
2. կգրես	*կկարդաս*	*կգրեք*	*կկարդաք*
3. կգրի	*կկարդա*	*կգրեն*	*կկարդան*

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

1. կգրեի	*կկարդայի*	*կգրեինք*	*կկարդայինք*
2. կգրեիր	*կկարդայիր*	*կգրեիք*	*կկարդայիք*
3. կգրեր	*կկարդար*	*կգրեին*	*կկարդային*

13. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՆՀՐԱԺԵՇՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.— Հարկադրական կամ անհրաժեշտական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալի ապառնի։ Դրանք համապատասխանաբար կազմվում են ըղձական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ձևերից պիտի կամ պետք է եղանակիչ բառերի կցումով, որոնք բայաձևերի վրա են դրվում սկզբից։

Հարկադրական կամ անհրաժեշտական եղանակի ձևերն ունեն հետևյալ պատկերը։

ԱՊԱՌՆԻ

Եզակի

1. պիտի գրեմ	*պիտի կարդամ*
2. պիտի գրես	*պիտի կարդաս*
3. պիտի գրի	*պիտի կարդա*

Հոգնակի

1. պիտի գրենք	*պիտի կարդանք*
2. պիտի գրեք	*պիտի կարդաք*
3. պիտի գրեն	*պիտի կարդան*

ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ

Եզակի

1. պիտի գրեի	*պիտի կարդայի*
2. պիտի գրեիր	*պիտի կարդայիր*
3. պիտի գրեր	*պիտի կարդար*

Հոգնակի

1. պիտի գրեինք	*պիտի կարդայինք*
2. պիտի գրեիք	*պիտի կարդայիք*
3. պիտի գրեին	*պիտի կարդային*

Նույն իմաստն են արտահայտում նաև **պետք է գրեմ, պետք է կարդամ, պետք է գրեի, պետք է կարդայի** *ձևերը։*

14. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԱԶՄԻԹՅՈՒՆԸ.—Հրամայական եղանակն ունի միայն եզակի և հոգնակի թվերի երկրորդ դեմք։

Հրամայական եղանակի եզակիի ձևերը կազմվում են **իր, ա** *և* **ու** *վերջավորութիւններով։*

Իր *վերջավորութիւնն են ստանում ե խոնարհման պարզ ու ոսկածանցավոր և* **ա** *խոնարհման ոսկածանցավոր բայերը, ըստ որում ե խոնարհման պարզ բայերն այդ վերջավորութիւնն ստանում են անկատարի, իսկ մյուս բոլոր բայերը՝ կատարյալի հիմքի վրա։*

Հրամայական եղակիի կազմություն իր վերջավորությամբ.

գրել—գր—գրիր
գտնել—գտ—գտիր
փախչել—փախ—փախիր
բարձրանալ—բարձրաց—բարձրացիր
մոտենալ—մոտեց—մոտեցիր

Ժողովրդական լեզվում հրամայականի այս ձևերի r հնչյունն ընկնում է, և ստացվում են գրի, գտի, փախի և այլ ձևերը:

Ա վերջավորությունն են ստանում ա խոնարհման պարզ բայերը, ըստ որում վերջավորությունը դրվում է անկատարի հիմքի վրա:

Հրամայական եղակիի կազմություն ա վերջավորությամբ.

կարդալ—կարդ—կարդա
մնալ—մն—մնա
զգալ—զգ—զգա

Ու վերջավորությունն են ստանում պատճառական բայերը. դա դրվում է կատարյալի հիմքի վրա:

Հրամայական եղակիի կազմություն ու վերջավորությամբ.

բարձրացնել—բարձրացր—բարձրացրու
մոտեցնել—մոտեցր—մոտեցրու
փախցնել—փախցր—փախցրու

Բոլոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է եք վերջավորությամբ, որ բոլոր տիպերի դեպքում դրվում է կատարյալի հիմքի վրա:

Հրամայական հոգնակիի կազմությունը

գրել	— գրեց	— գրեցեք
սիրել	— սիրեց	— սիրեցեք
գտնել	— գտ	— գտեք
փախչել	— փախ	— փախեք
կարդալ	— կարդաց	— կարդացեք

բարձրանալ — բարձրաց — բարձրացեք
բարձրացնել — բարձրացր — բարձրացրեք
մոտեցնել — մոտեցր — մոտեցրեք
փախցնել — փախցր — փախցրեք

Ե խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը ժողովրդա-խոսակցական լեզվում կազմվում է նաև անկատարի հիմքից, և, այսպիսով, ստացվում են գրեֆ, սիրեֆ, կատարեֆ, խոսեֆ *և այլ ձևերը, որոնք խոսակցական լեզվի ազդեցությամբ ավելի ու ավելի են տարածվում։*

III. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՆՐԱԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ԶԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա) Ե ԿԱՄ ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

15. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ե կամ առաջին խոնարհումն ընդգրկում է արդի հայերենի բայերի բացարձակ մեծամասնությունը։ Ըստ Հ. Բարսեղյանի կազմած բայացանկի տվյալների՝ առաջին խոնարհման են պատկանում ժամանակակից հայերենի բայերի մոտ երկու երրորդ մասը[101]։ Եթե նկատի ունենանք նաև այն, որ առաջին խոնարհման են պատկանում բոլոր կրավորական ու պատճառական բայերը, ապա առաջին ու երկրորդ խոնարհումների փոխհարաբերությունն ավելի ևս կփոխվի հօգուտ Ե խոնարհման։

Ինչպես նշված է արդեն, Ե խոնարհման բայերը, ըստ ձևակազմական որոշակի առանձնահատկությունների, ստորաբաժանվում են երեք մանրակազապարների՝ պարզ բայեր, որոնց հետ իրենց ձևերի կազմությամբ միավորվում են նաև կրավորական ու բազմապատկական բայերը, սոսկածանցավոր բայեր և պատճառական բայեր[102]։

---

[101] *Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 280։*

[102] *Այս և հետագա շարադրանքը համմտ. Հ. Բարսեղյանի աշխատության հետ, էջ 280—300։*

Ստորև բնութագրվում են այս երեք խմբերի ձևակազմական առանձնահատկությունները։

16. Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐ.—Ե խոնարհման պարզ (նաև կրավորական ու բազմապատկական) բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են։

ա) Անցյալ կատարյալը ցոյական է՝ եց բաղադրիչով և ունենում է ի, իր, 0, իմ, իմ, իճ վերջավորությունները։

բ) Բայական բոլոր ձևերը, բացի անցյալ կատարյալից և հրամայականի հոգնակիից, կազմվում են անկատարի հիմքից, որի պատճառով էլ այս բայերը երբեմն կոչվում են միաբուն բայեր[103]*։*

գ) Հրամայական եղանակի եզակին կազմվում է անկատարի հիմքից իր վերջավորությամբ։

Այսպիսով, այս մանրակազապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը։ Որպես օրինակ բերվում են գրել բայի ձևերը։

Դերբայներ

Անորոշ	—	*գրել*
Անկատար I	—	*գրում*
Անկատար II	—	*գրելիս*
Ապառնի I	—	*գրելու*
Վաղակատար	—	*գրել*
Հարակատար	—	*գրած*
Ենթակայական	—	*գրող*
Ժխտման	—	*գրի*
Ապառնի II	—	*գրելիք*

Եղանակային ճամադրական ձևեր

Անցյալ կատարյալ		*Հրամայական*	
1. գրեցի	*գրեցինք*		
2. գրեցիր	*գրեցիք*	*գրիր*	*գրեցեք*
3. գրեց	*գրեցին*		

[103] *Տե՛ս անդ, էջ 280։*

Ըղձական եղանակ

	Ապառնի		Անցյալի ապառնի
1.	*գրեմ*	*գրենք*	*գրեի*	*գրեինք*
2.	*գրես*	*գրեք*	*գրեիր*	*գրեիք*
3.	*գրի*	*գրեն*	*գրեր*	*գրեին*

Ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի ձևերից՝ կ(ը) և պիտի մասնիկներով կազմվում են հաստատողական և հարկադրական եղանակի ձևերը, ինչպես՝ կգրեմ—կգրեի, պիտի գրեմ—պիտի գրեի:

Վերլուծական ձևերն, ինչպես գիտենք, կազմվում են անկատար, ապառնի ու վաղակատար դերբայների և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերի միջոցով, ինչպես՝ գրում եմ—գրում էի, գրելու եմ—գրելու էի, գրել եմ—գրել էի: *Ուստի և ավելորդ կրկնությունից խուսափելու նպատակով մյուս մանրակաղապարների վերլուծության ժամանակ ինչպես համադրական կազմություն ունեցող հաստատողական ձևերի, այնպես էլ վերլուծական կազմություն ունեցող սահմանական ձևերի մասին այլևս խոսք չի լինելու:*

17. Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ (Ն, Ջ ԱԾԱՆՑ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ).—*Ե խոնարհման սոսկածանցավոր բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են:*

ա) Կատարյալի հիմքը աննշույթ, պարզ արմատական է: Անցյալ կատարյալը ունենում է ա, ար, ավ, աճ, աք, աճ *վերջավորություններ:*

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ենթակայական ու ժխտական դերբայները և ըղձական (հասկանալի է, նաև հաստատողական ու հարկադրական) եղանակի ձևերը:

Կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, հրամայականը և վաղակատար ու հարակատար դերբայները:

գ) Հրամայականի եզակին կազմվում է իր *վերջավորությամբ, որ դրվում է կատարյալի հիմքի վրա:*

Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը: Որպես օրինակ բերվում են գանել *և* փախչել *բայերի ձևերը:*

Դերբայներ

Անորոշ	— *գտնել*	*փախչել*
Անկատար I	— *գտնում*	*փախչում*
Անկատար II	— *գտնելիս*	*փախչելիս*
Ապառնի I	— *գտնելու*	*փախչելու*
Վաղակատար	— *գտել*	*փախել*
Հարակատար	— *գտած*	*փախած*
Ենթակայական	— *գտնող*	*փախչող*
Ժխտման	— *գտնի*	*փախչի*
(Ապառնի II	— *գտնելիք*	—*)*

Եղանակային ձևամադրական ձևեր

	Անցյալ կատարյալ		Հրամայական			
1.	*գտա*	*գտանք*	*փախա*	*փախանք*	*գտիր*	*գտեք*
2.	*գտար*	*գտաք*	*փախար*	*փախաք*	*փախիր*	*փախեք*
3.	*գտավ*	*գտան*	*փախավ*	*փախան*		

Ըղձական ապառնի

1.	*գտնեմ*	*գտնենք*	*փախչեմ*	*փախչենք*
2.	*գտնես*	*գտնեք*	*փախչես*	*փախչեք*
3.	*գտնի*	*գտնեն*	*փախչի*	*փախչեն*

Ըղձական անցյալի ապառնի

1.	*գտնեի*	*գտնեինք*	*փախչեի*	*փախչեինք*
2.	*գտնեիր*	*գտնեիք*	*փախչեիր*	*փախչեիք*
3.	*գտներ*	*գտնեին*	*փախչեր*	*փախչեին*

18. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ (ԵՅՆ, ԱՅՆ, ՅՆ ԱԾԱՆՑ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ).— Պատճառական բայերի ձևակազմական առանձնահատկություններն են.

ա) Կատարյալի հիմքը բնական է և կազմվում է և/ր հերթագայությամբ, օրինակ՝ բարձրացնել—բարձրացն—բարձրացր, *մոտեցնել—մոտեցն—*մոտեցր, *հագցնել—հագցն—*հագցր *և այլն։ Անցյալ կատարյալն ունենում է* ի, իր, եց, իճ, իֆ, իճ *վերջավորությունները։*

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ենթակայական ու ժխտման դերբայները և ըղձական (նաև

հաստատողական ու հարկադրական) եղանակի ձևերը։

Կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, հրամայական եղանակը և վաղակատար ու հարակատար դերբայները։

գ) Հրամայականի եզակին կազմվում է ու վերջավորությամբ։

Այսպիսով, այս մանրակազապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը։ Որպես օրինակ են բերվում հագցնել բայի ձևերը։

Դերբայներ

Անորոշ	—	*հագցնել*
Անկատար I	—	*հագցնում*
Անկատար II	—	*հագցնելիս*
Ապառնի I	—	*հագցնելու*
Վաղակատար	—	*հագցրել*
Հարակատար	—	*հագցրած*
Ենթակայական	—	*հագցնող*
Ժխտման	—	*հագցնի*
(Ապառնի II	—	*հագցնելիք)*

Եղանակային համադրական ձևեր

	Անցյալ կատարյալ		Հրամայական	
1.	*հագցրի*	*հագցրինք*		
2.	*հագցրիր*	*հագցրիք*	*հագցրու*	*հագցրեք*
3.	*հագցրեց*	*հագցրին*		

Ըղձական եղանակ

	Ապառնի		Անցյալի ապառնի	
1.	*հագցնեմ*	*հագցնենք*	*հագցնեի*	*հագցնեինք*
2.	*հագցնես*	*հագցնեք*	*հագցնեիր*	*հագցնեիք*
3.	*հագցնի*	*հագցնեն*	*հագցներ*	*հագցնեին*

Բ) Ա. ԿԱՄ ԲՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

19. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Ա խոնարհման բայերը, ե խոնարհման բայերի համեմատությամբ, փոքր թիվ են

կազմում։ Դրանք ըստ ձևակազմական առանձնահատկությունների բաժանվում են երկու խմբի՝ պարզ բայեր և սոսկածանցավոր բայեր։ Ստորև տրվում է այս մանրակազապարների ձևակազմական հատկանիշների բնութագիրը։

20. Ա. ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐ.— Ա. խոնարհման պարզ բայերը ունեն ձևակազմական հետևյալ առանձնահատկությունները։

ա) Կատարյալի հիմքը ցոյական է՝ ացյ բաղադրիչով։ Անցյալ կատարյալը կազմվում է ի, իր, Ø, իճf, իf, իճ վերջավորություններով։

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար, ժխտման դերբայները, ըղձական (նաև հաստատողական ու հարկադրական) եղանակը և հրամայականի եզակին։ Կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, հրամայականի հոգնակին և վաղակատար, հարակատար ու ենթակայական դերբայները։

գ) Հրամայականի եզակին կազմվում է իր վերջավորությամբ։

Այսպիսով, այս մանրակազապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը։ Որպես օրինակ բերվում են ճավատալ բայի ձևերը։

Դերբայներ

Անորոշ	—	*հավատալ*
Անկատար I	—	*հավատում*
Անկատար II	—	*հավատալիս*
Ապառնի I	—	*հավատալու*
Վաղակատար	—	*հավատացել*
Հարակատար	—	*հավատացած*
Ենթակայական	—	*հավատացող*
Ժխտման	—	*հավատա*
(Ապառնի II	—	*հավատալիք)*

Եղանակային ճամադրական ձևեր

	Անցյալ կատարյալ	Հրամայական
1. հավատացի	*հավատացինք*	

2. հավատացիր հավատացիք հավատա հավատացեք
3. հավատաց հավատացին

Ըղձական եղանակ

Ապառնի		Անցյալի ապառնի	
1. հավատամ	հավատանք	հավատայի	հավատայինք
2. հավատաս	հավատաք	հավատայիր	հավատայիք
3. հավատա	հավատան	հավատար	հավատային

21. Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ (ԱՆ ԵՎ ԵՆ ԱԾԱՆՑ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ).—Ա խոնարհման ան և են սոսկածանց ունեցող բայերի ձևակազմական առանձնահատկությունները հետևյալներն են։

ա) Կատարյալի հիմքը ցոյական է, ըստ որում անկատարի հիմքի ան և են սոսկածանցները կատարյալի հիմքում համապատասխանաբար փոխարինվում են աց և եց բաղադրիչներով, օրինակ՝ բարձրանալ—բարձրան—բարձրաց, մոտենալ—մոտեն—մոտեց և այլն։ Անցյալ կատարյալը կազմվում է ա, ար, ավ, աւիճ, աւ, ան վերջավորություններով։

բ) Անկատարի հիմքից կազմվում են անորոշ, անկատար ու ժխտման դերբայները և ըղձական (նաև պայմանական ու հարկադրական) եղանակի ձևերը։ Կատարյալի հիմքից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները, անցյալ կատարյալ ժամանակը և հրամայական եղանակի ձևերը։

գ) Հրամայականի եզակին կազմվում է իր վերջավորությամբ, որը դրվում է կատարյալի հիմքի վրա։

Այսպիսով, այս մանրակաղապարում ստացվում են բայական հետևյալ ձևերը։

Դերբայներ

Անորոշ	— բարձրանալ	մոտենալ
Անկատար I	— բարձրանում	մոտենում
Անկատար II	— բարձրանալիս	մոտենալիս
Ապառնի I	— բարձրանալու	մոտենալու
Վաղակատար	— բարձրացել	մոտեցել
Հարակատար	— բարձրացած	մոտեցած

ենթակայական	*— բարձրացող*	*մոտեցող*
ժխտման	*— բարձրանա*	*մոտենա*
(Ապառնի II	*— բարձրանալիք*	*մոտենալիք)*

Եղանակային ևամադրական ձևեր

Անցյալ կատարյալ

1.	*բարձրացա*	*բարձրացանք*	*մոտեցա*	*մոտեցանք*
2.	*բարձրացար*	*բարձրացաք*	*մոտեցար*	*մոտեցաք*
3.	*բարձրացավ*	*բարձրացան*	*մոտեցավ*	*մոտեցան*

Հրամայական

բարձրացիր	*մոտեցիր*	*բարձրացեք*	*մոտեցեք*

Ըղձական եղանակ

Ապառնի

1.	*բարձրանամ*	*բարձրանանք*	*մոտենամ*	*մոտենանք*
2.	*բարձրանաս*	*բարձրանաք*	*մոտենաս*	*մոտենաք*
3.	*բարձրանա*	*բարձրանան*	*մոտենա*	*մոտենան*

Անցյալի ապառնի

1.	*բարձրանայի*	*բարձրանայինք*	*մոտենայի*	*մոտենայինք*
2.	*բարձրանայիր*	*բարձրանայիք*	*մոտենայիր*	*մոտենայիք*
3.	*բարձրանար*	*բարձրանային*	*մոտենար*	*մոտենային*

Խոնարհման այս ընդհանրական ձևերից բացի, ժամանակակից հայերենում կան խոնարհման ավելի մասնակի մանրակազապարներ, որոնք հատուկ են սակավաթիվ բայերի։ Դրանք արդի հայերենի այսպես կոչված անկանոն բայերն են, որոնց խոնարհման նկարագրությանն էլ անցնում ենք այժմ։

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ[104]

22. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Քերականական ձևերը, որպես կանոն, որոշակի օրինաչափություններով կազ-

[104] *Այս հատվածի շարադրանքը հմմտ. Հ Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքի «Անկանոն բայերի խոնարհումը» բաժնի հետ (էջ 300—309)։*

մըվող և որոշակի շարքերի մեջ մտնող ձևեր են, որոնք խոսողն ազատ կազմում է կամ կարող է կազմել առանց նախօրոք ուրիշներից լսած լինելու։ Այսպես, ենթադրենք մեկն առաջին անգամ է լսում արշավել և սուրալ բայերը։ Դրանք լսելուց հետո նա ազատ կարող է կազմել արշավեցի, արշավեցիր, արշավեց, արշավիր, արշավեցեք. սուրացի, սուրացիր, սուրաց, սուրա, սուրացեք *և այլ ձևերը։ Սա հնարավոր է դառնում այն պատճառով, որ* արշավել *և* սուրալ *բայերը ձևերի կազմության իրենց տիպով ու օրինաչափությամբ մրտնում են* գրել՝ գրեցի—գրեցիր—գրեց—գրիր—գրեցեք, զգալ՝ զգացի—զգացիր—զգաց—զգա—զգացեք *և այլն մեծ խմբերի մեջ։*

Քերականական այնպիսի ձևերը, որոնք կազմվում են որոշակի օրինաչափություններով, մտնում են որոշակի շարքերի մեջ, այսինքն՝ կազմվում են այլ ձևերի համաբանությամբ, կոչվում են կանոնավոր ձևեր։

Սակայն կան առանձին քերականական ձևեր, որոնք որոշակի շարքերի մեջ չեն մտնում, այլ ձևերի համաբանությամբ չեն կազմվում, և, հետևաբար, խոսողը դրանք կարող է կազմել միայն ուրիշներից լսելով և սովորելով։ Այսպես օրինակ՝ ուտել *և լինել բայերի անցյալ կատարյալի և հրամայականի* կեր*ա, կե*ր*ար, կե*ր*ավ, կե*ր, կե*ր*եք.* եղ*ա, եղ*ար, եղ*ավ, եղ*իր, եղ*եք *ձևերը խոսողը կազմում է ուրիշներից լսելով ու սովորելով միայն։*

Քերականական այնպիսի ձևերը, որոնք միայնակ կամ առանձին են մնում, մեծ խմբերի մեջ չեն մտնում, այլ ձևերի համաբանությամբ չեն կազմվում, և խոսողը դրանք կարող է կազմել միայն ուրիշներից սովորելով, կոչվում են անկանոն ձևեր։

Որքան էլ որ առաջին հայացքից տարօրինակ լինի, պետք է նշել, որ սովորաբար քերականական ձևերի անկանոն կազմություններ են հանդես բերում լեզվի բառապաշարի ամենասովորական, ամենատարածված բառերը, որոնք ունեն գործածականության մեծ հաճախականություն։ Այսպես են, օրինակ, հայր, մայր, եղբայր *գոյականները, որոնց սեռականտրականը կազմվում է յուրահատուկ ձևով՝* այ/ո *հերթագա-*

յությամբ, վերևում բերված ուսել և լինել բայերը, որոնց կատարյալի հիմքը այլ արմատից է և այլն։ Սակայն եթե նրկատի ունենանք, որ լեզվի զարգացման հիմնական միտումներից մեկը քերականական ձևերի միասնականացման, անկանոն ձևերի վերացման միտումն է, ապա պարզ կդառնա, որ միայն մեծ հաճախականություն ու գործածություն ունեցող ձևերը կարող են կայունություն հանդես բերել՝ այսպիսով կազմելով միայնակ, առանձին, ներփակ խմբեր կամ այլ, գուցե և անհաջող անվանմամբ՝ «անկանոն ձևեր»։

Քերականական անկանոն ձևերի մասին այս փոքրիկ բացատրությունը տալուց հետո անցնենք ժամանակակից հայերենի անկանոն բայերի քննությագրմանը։

Անկանոն են համարվում այն բոլոր բայերը, որոնք իրենց ձևակազմական առանձնահատկություններով շեղվում են խոնարհման վերևում նկարագրված հինգ ընդհանրական տիպերից։ Անկանոն բայերը սովորաբար գալիս են լեզվի պատմության հին շրջաններից՝ արտացոլելով նրա ամենահին ու կանոնավոր օրինաչափությունները։ Անկանոնությունները սովորաբար հանդես են գալիս անցյալ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում։

Ստորև անկանոն բայերի քննությագիրը տրվում է ըստ վերևում նկարագրված մանրակազապարների։

23. Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐ.— Ե խոնարհման պարզ բայերից խոնարհման ընդհանուր համակարգից շեղումներ են հանդես բերում ասել, բերել, զարկել և ուսել բայերը։

ա) Ասել.—*Այս բայի անկանոնությունն արտահայտվում է նրանում, որ անցյալ կատարյալի հիմքը կազմվում է աց բաղադրիչով՝* ասաց։ *Ըստ այդմ, անցյալ կատարյալի համար ունենում ենք* ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին։ *Բայց խոսակցական, հաճախ նաև գրավոր լեզվում կան նաև* ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին *ձևերը, որոնք դեռևս գրականի աստիճանի չեն բարձրացել։ Հրամայական եղանակի ձևերը ևս կազմվում են ա խոնարհման պարզ բայերի նման՝* ասա, ասացեք։ *Մյուս բոլոր ձևերը կանոնավոր են և չեն շեղվում ե խոնարհման պարզ բայերի ձևակազմական կաղապարներից։*

բ) Բերել.— *Կատարյալի հիմքը պարզ արմատական է՝* բեր, *որից կազմվում են անցյալ կատարյալի* բերի, բերիր, բերեց, բերինք, բերիք, բերին *«կանոնից շեղվող» ձևերը։ Սակայն ե խոնարհման կանոնավոր բայերի համաբանությամբ այժմ տարածվում է նաև այս բայի «կանոնավոր» կատարյալը՝* բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին: *Հրամայականի ձևերն են՝* բեր, բերեք:

գ) Ջարկել.— *Կատարյալի հիմքը պարզ արմատական է՝* զարկ, *որից ստացվում են անցյալ կատարյալի* զարկի, զարկիր, զարկեց, զարկինք, զարկիք, զարկին *ձևերը։ Հրամայականի՝* զարկ, զարկեք: *Այս անկանոն ձևերը ե խոնարհման պարզ բայերի համաբանությամբ փոխարինվում են* զարկեցի, զարկեցիր, զարկեց, զարկեցինք, զարկեցիք, զարկեցին *և* զարկիր, զարկեցեք *ձևերով։*

դ) Ուտել.— *Անկանոնությունն արտահայտվում է նրանում, որ անցյալ կատարյալում և նրա հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս կեր արմատը։ Դրանից կազմվող ձևերն ունեն հետևյալ պատկերը.*

Անց. կատ. կերա, կերար, կերավ, կերանք, կերաք, կերան, *հրամ.* կեր, կերեք, *վաղակ. դերբ.* կերել, *հարակ.* կերած:

24. Ե *ԽՈՆԱՐՀՄԱՆ* Ն *ԱԾԱՆՑ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ.*—Ե *խոնարհման և ածանց ունեցող բայերից անկանոն են* առնել, դրնել, տանել *և* ելնել, առնել, տեսնել, թողնել *բայերը։ Ըստ կատարյալի հիմքի կազմության դրանք ստորաբաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբի մեջ են մտնում* առնել, դնել, տանել *բայերը, որոնց կատարյալի հիմքը բեական է և կազմըվում է* ն/r *հերթագայությամբ՝* առնել—ար, դնել—դր, տանել—տար, *իսկ երկրորդ խմբի մեջ են մտնում մնացած բայերը. դրանց հիմքը պարզ արմատական է՝* ելնել—ել, առնել—առ, տեսնել—տես, թողնել—թող:

Նել *վերջավորվող բայերից անկանոն է նաև* լինել *բայը, որի կատարյալի հիմքը այլ արմատից է՝* եղ: *Ստորև խոսվում է այս բայերի մասին առանձին-առանձին։*

ա) Առնել.—*Անցյալ կատարյալի* ար, արիր, արեց (արավ), արինք, արիք, արին *ձևերին զուգահեռ գործածական են նաև*

անցյալ կատարյալի ցոյական ձևերը՝ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին: *Հրամ.* արա, արեք: *Վաղակ. դերբ.* արել, *հարակ.* արած, *ենթ.* արող||ածող:

բ) Դնել.—*Անցյալ կատարյալի դրի, դրիր, դրեց (դրավ),* դրինք, դրիք, դրին *ձևերին զուգահեռ ունի նաև ցոյական* դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին *ձևերը: Հրամայական՝* դիր, դրեք *(դրեցեք): Վաղակ. դերբ.* դրել, *հարակ.* դրած, *ենթ.* դրող||դնող:

գ) Տանել.—*Անցյալ կատարյալ՝* տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան: *Հրամ.* տար, տարեք: *Վաղակ. դերբ.* տարել, *հարակ.* տարած, *ենթ.* տարող||տանող:

դ) Թողնել.—*Անցյալ կատարյալի* թողի, թողիր, թողեց, թողինք, թողիք, թողին *ձևերին զուգահեռ կան նաև* թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցիք, թողեցին *ձևերը: Հրամ.* թող, թողեք: *Վաղակ. դերբ.* թողել, *հարակ.* թողած, *ենթ.* թողնող:

ե) Ելնել.—*Անկանոն է միայն այս բայի* ել *հրամայականը: Գործածական է նաև հրամայականի* ելիր *«կանոնավոր» ձևը:*

զ) Առնել.—*Անկանոն է միայն այս բայի* առ *եզակի հրամայականը:*

է) Տեսնել.—*Անկանոն է միայն այս բայի* տես *եզակի հրամայականը:*

ը) Լինել.—*Կատարյալի հիմքում հանդես է գալիս եղ արմատը: Անցյալ կատարյալ՝* եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղան: *Հրամ.* եղիր, եղեք: *Վաղակ. դերբ.* եղել, *հարակ.* եղած, *ենթ.* լինող||եղող:

25. Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐ.—Ա խոնարհման պարզ բայերից անկանոն են գալ, լալ և տալ բայերը, որոնք բոլորն էլ միահնչյուն արմատներ ունեն, և դրանց անկանոնությունը գուցե բացատրվում է հենց դրանով: Այս բայերը առանձնանում են մյուս բոլոր բայերից նրանով, որ անկատար I(ում) վերջավորվող դերբայը չունեն: Սրանք ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են անկատար II-ի (իս վերջավորվող դերբայի) և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով՝ գալիս եմ—գալիս էի, տալիս եմ—տալիս էի, լալիս

եմ—լալիս էի: *Անկատարի հիմքից կազմվող մյուս ձևերը կանոնավոր են: Կատարյալի հիմքից կազմվող ձևերի մասին խոսվում է ստորև:*

ա) Գալ.—*Կատարյալի հիմքը այլ արմատից է՝* եկ: *Անցյալ կատարյալ՝* եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան: *Հրամ.* եկ, եկեք: *Վաղակ. դերբ.* եկել, *հարակ.* եկած, *ենթ.* եկող:

բ) Տալ.—*Անցյալ կատարյալի հիմքը զուգաձև է՝* տավ *(<տու)* և տվեց: *Ըստ այդմ անցյալ կատարյալի համար կան զույգ ձևեր՝* տվի, տվիր, տվեց, տվինք, տվիք, տվին‖տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցին: *Հրամ.* տուր, տվեք: *Վաղակ. դերբ.* տվել, *հարակ.* տված, *ենթ.* տվող:

գ) Լալ.— *Անցյալ կատարյալ՝* լացի, լացիր, լացեց, լացինք, լացիք, լացին‖լացեցի, լացեցիր, լացեց, լացեցինք, լացեցիք, լացեցին: *Անցյալ կատարյալի այս ձևերը համարյա անգործածական են և փոխարինվում են* լաց լինել *հարադիր բայի ձևերով՝* լաց եղա, լաց եղար, լաց եղավ *և այլն: Հրամ.* լաց, լացեք: *Վաղակ. դերբ.* լացել, *հարակ.* լացած, *ենթ.* լացող:

26. Ա ԽՈՆԱՐՀՄԱՆ ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ.— Ա խոնարհման սոսկածանցավոր բայերից ձևերի կազմության անկանոնություններ են հանդես բերում դառնալ, լվանալ, կենալ *բայերը: Որոշ քերականներ դրանց մեջ են դետեղում նաև* բանալ *և* բառնալ *բայերը, բայց դրանք ժամանակակից լեզվում փոխարինվելով* բացել *և* բարձել *ձևերով՝ վերածվել են կանոնավոր բայերի:*

ա) Դառնալ.—*Կատարյալի հիմքն է* դարձ, *այսինքն՝ կազմվում է* ռն/րձ *հերթագայությամբ: Անցյալ կատարյալ՝* դարձա, դարձար, դարձավ, դարձանք, դարձաք, դարձան: *Հրամայական՝* դարձիր, դարձեք: *Վաղակ. դերբ.* դարձել, *հարակ.* դարձած, *ենթ.* դարձող:

Անցյալ կատարյալի և հրամայականի դառա, դառար, դառավ, դառանք, դառաք, դառան, դառիր, դառեք *ձևերը բարբառային են:*

բ) Լվանալ.—*Այս բայի անկանոնությունն արտահայտվում է նրանով, որ անցյալ կատարյալը կազմվում է ի ձայնավոր-*

ունեցող վերջավորություններով՝ լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին, *որոնք փաստորեն* լվալ *բարբառային բայի ձևերն են։ Հրամայական՝* լվա, լվացեք։ *Վաղակ. դերբ.* լվացել, *հարակ.* լվացած, *ենթ.* լվացող։

գ) Կենալ.—*Կատարյալի հիմքն է* կաց։ *Անցյալ կատարյալ՝ (վեր)* կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան։ *Հրամայական՝ (վեր)* կաց, կացեք։ *Վաղակ. դերբ. (վեր)* կացել, *հարակ.* կացած, *ենթ.* կեցող||կացող։ *Այս բայի կանոնավոր հիմքն է* կեց, *որից կազմված* կեցա, կեցար, կեցավ, կեցինք, կեցիր, կեցեք *և այլ ձևերը բարբառային են և գրական լեզվում գործածական չեն*[105]։

ՀԱՎԵԼԱՎՈՐ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ[106]

27. ԳՐԱԲԱՐՅԱՆ ՆԵՐԿԱ ՈՒ ԱՆՑՅԱԼԻ ԱՆԿԱՏԱՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՈՐ ԲԱՅԵՐ.—Արդի հայերենում կան մի քանի բայեր, որոնց ներկա ու անցյալի անկատար ժամանակները գրաբարածև են, կազմվում են ոչ թե դերբայով ու օժանդակ բայով, այլ բայահիմքով ու վերջավորություններով։ Այս բայերը հետևյալներն են։

Եմ.— Ներկա՝ եմ, ես, է, ենք, եք, են.
Անցյալ՝ էի, էիր, էր, էինք, էիք, էին.

Կամ.— Ներկա՝ կամ, կաս, կա, կանք, կաք, կան.
Անցյալ՝ կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային.

Գիտեմ.— Ներկա՝ գիտեմ, գիտես, գիտի, գիտենք, գիտեք, գիտեն.
Անցյալ՝ գիտեի, գիտեիր, գիտեր, գիտեինք, գիտեիք, գիտեին.

Ունեմ.— Ներկա՝ ունեմ, ունես, ունի, ունենք, ունեք, ունեն.
Անցյալ՝ ունեի, ունեիր, ուներ, ունեինք, ունեիք, ունեին.

---

105 *Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 307։*

106 *Այս հատվածի շարադրանքը հմմտ. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 317—318. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 309—313։*

Արժեմ.—Ներկա՝ արժեմ, արժես, արժի, արժենք, արժեք, արժեն.

Անցյալ՝ արժեի, արժեիր, արժեր, արժեինք, արժեիք, արժեին։

Այս բայերը կոչվում են հավելավոր բայեր։

Վերջին երեք բայերի համար կան ժամանակակից լեզվի տեսակետից կանոնավոր կազմություն ունեցող գիտեճում եմ—գիտեճում էի, ունեճում եմ—ունեճում էի, արժեճում եմ—արժեճում էի *ձևերը, որոնք համապատասխանաբար* գիտեճալ, ունեճալ, արժեճալ *բայերի ձևերն են։ Բայց այդ զույգերը տարբերվում են ոչ միայն ձևով, այլև իմաստով։ Ինչպես նըշված է արդեն, պարզ ձևերը ոչ տևական կերպ ունեն և նշանակում են կոնկրետ ներկա ու անցյալի անկատար (օրինակ՝* գիտի, ուճի, արժի՝ *հիմա, այժմ.* գիտեր, արժեր, ուճեր՝ *առաջ), իսկ բաղադրյալ ձևերը տևական կերպ ունեն և նշանակում են ընդհանուր ներկա ու անցյալի անկատար (օրինակ՝* գիտեճում է, ունեճում է, արժեճում է՝ *միշտ, ընդհանրապես.* գիտեճում էր, ունեճում էր, արժեճում էր՝ *միշտ, ընդհանրապես)։*

Որոշ քերականներ այսպիսի կերպային տարբերություններ են տեսնում նաև եմ—էի (կամ—կայի) և լինում եմ—լինում էի ձևերի միջև որպես տարարմատ ձևեր։

Հավելավոր կարելի է համարել նաև կարող եմ—կարող էի *և* կարողանում եմ—կարողանում էի, ուզում եմ—ուզում էի *և* ուզեճում եմ—ուզեճում էի *ձևերը։*

28. ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ.—Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնք հարացույցային լրիվ ձևեր չունեն։ Պակասավոր ձևերը, որպես կանոն, լրացվում են նույնիմաստ կամ համանիշ ձևերով։

Պակասավոր են, օրինակ, վերևում բերված եմ *և* կամ *բայերը, որոնք ունեն ներկա և անցյալ անկատար ժամանակի ձևեր։ Այսպես և՝* ցանկալ *բայը ունի միայն ըղձական (և սրանից կազմվող հաստատողական ու պայմանական) եղանակի ձևեր՝* ցանկամ—ցանկայի, ճուսալ *բայը ունի միայն ըղձական (համապատասխանաբար՝ հաստատողական ու հարկադրա-*

կան) և հրամայական եղանակի ձևեր՝ ճուսամ—ճուսայի, ճուսա, ճուսացեք:

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

29. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Ժխտական խոնարհման ձևերը, ի հակադրություն դրականների, ցույց են տալիս, որ գործողությունը բացասվում, ժխտվում է, օրինակ՝ դրական—գրում եմ, գրեցի, գրեմ, ժխտական—չեմ գրում, չգրեցի, չգրեմ:

Ժամանակակից հայերենում ժխտական խոնարհման ձևերը, որպես կանոն, կազմվում են դրական խոնարհման ձևերից չ և մի մասնիկներով, չնայած որ ժխտական խոնարհման առանձին ձևեր (հաստատողական եղանակի ձևերը) հատուկ կազմություն ունեն:

30. ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ԵՎ ԸՂՁԱԿԱՆԻ ԺԽՏԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—Պարզ կազմություն ունեցող անցյալ կատարյալի և ըղձականի դեպքում չ մասնիկը դրվում է դրական բայաձևերի վրա սկզբից, ինչպես.

Անցյալ կատարյալ

Դրական		Ժխտական	
գրեցի	*գրեցինք*	*չգրեցի*	*չգրեցինք*
գրեցիր	*գրեցիք*	*չգրեցիր*	*չգրեցիք*
գրեց	*գրեցին*	*չգրեց*	*չգրեցին*

Ըղձական
Ապառնի

Դրական		Ժխտական	
գրեմ	*գրենք*	*չգրեմ*	*չգրենք*
գրես	*գրեք*	*չգրես*	*չգրեք*
գրի	*գրեն*	*չգրի*	*չգրեն*

Անցյալի ապառնի

Դրական		Ժխտական	
գրեի	*գրեինք*	*չգրեի*	*չգրեինք*
գրեիր	*գրեիք*	*չգրեիր*	*չգրեիք*
գրեր	*գրեին*	*չգրեր*	*չգրեին*

31. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ (ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ) ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԺԽՏԱԿԱՆԻ ԿԱԶՄԻՒԹՅՈՒՆԸ.—Սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակների ժխտականը կազմվում է ժխտական օժանդակ բայի և համապատասխան դերբայների միջոցով: Օժանդակ բայի ժխտական ձևերն են. ներկա—չեմ, չես, չի, չենք, չեք, չեն. անցյալ—չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին: Ինչպես տեսնում ենք, ներկայի եզակի երրորդ դեմքի է ձևը ժխտականի դեպքում դառնում է ոչ թե չէ, այլ չի: Ճիշտ է, ժխտականի համար կա նաև չէ ձևը, բայց դա կիրառվում է բաղադրյալ ստորոգյալների կազմում, օրինակ՝ մարդ չէ, սև չէ, մեծ չէ և այլն:

Ժխտական օժանդակ բայը դրվում է նախադաս, դերբայներից առաջ, և այսպիսով ստացվում են բաղադրյալ ժամանակների հետևյալ ձևերը:

Ներկա

Դրական		Ժխտական	
գրում եմ	գրում ենք	չեմ գրում	չենք գրում
գրում ես	գրում եք	չես գրում	չեք գրում
գրում է	գրում են	չի գրում	չեն գրում

Անցյալի անկատար

գրում էի	գրում էինք	չէի գրում	չէինք գրում
գրում էիր	գրում էիք	չէիր գրում	չէիք գրում
գրում էր	գրում էին	չէր գրում	չէին գրում

Ապառնի

գրելու եմ	գրելու ենք	չեմ գրելու	չենք գրելու
գրելու ես	գրելու եք	չես գրելու	չեք գրելու
գրելու է	գրելու են	չի գրելու	չեն գրելու

Անցյալի ապառնի

գրելու էի	գրելու էինք	չէի գրելու	չէինք գրելու
գրելու էիր	գրելու էիք	չէիր գրելու	չէիք գրելու
գրելու էր	գրելու էին	չէր գրելու	չէին գրելու

Վաղակատար

գրել եմ	գրել ենք	չեմ գրել	չենք գրել
գրել ես	գրել եք	չես գրել	չեք գրել
գրել է	գրել են	չի գրել	չեն գրել

Անցյալի վաղակատար

գրել էի	գրել էինք	չէի գրել	չէինք գրել
գրել էիր	գրել էիք	չէիր գրել	չէիք գրել
գրել էր	գրել էին	չէր գրել	չէին գրել

32. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆԻ ԿԱԶՄԻՒԹՅՈՒՆԸ.—*Հարկադրականի ժխտական ձևերը ևս կազմվում են դրական ձևերից չ մասնիկով, որը դրվում է կամ բուն բայաձևի վրա սկզբից, կամ պիտի եղանակիչի վրա սկզբից, ըստ որում ավելի գործածական են ու տարածված երկրորդ ձևերը։*

Հարկադրական եղանակ

Ապառնի

Դրական		Ժխտական	
պիտի գրեմ	պիտի գրենք	չպիտի գրեմ	չպիտի գրենք
պիտի գրես	պիտի գրեք	չպիտի գրես	չպիտի գրեք
պիտի գրի	պիտի գրեն	չպիտի գրի	չպիտի գրեն

Անցյալի ապառնի

պիտի գրեի	պիտի գրեինք	չպիտի գրեի	չպիտի գրեինք
պիտի գրեիր	պիտի գրեիք	չպիտի գրեիր	չպիտի գրեիք
պիտի գրեր	պիտի գրեին	չպիտի գրեր	չպիտի գրեին

Ինչպես նշեցինք, գործածական են նաև պիտի չգրեմ, պիտի չգրեի *և այլ ձևերը։*

33. ՀԱՍՏԱՏՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԽՏԱԿԱՆԻ ԿԱԶՄԻՒԹՅՈՒՆԸ.— *Հաստատողական (ենթադրական) եղանակի ժխտականը ոչ թե կազմվում է դրականից, այլ յուրահատուկ, դրականից տարբեր կազմութիւն ունի։ Հաստատողականի ժխտականը կազմվում է ժխտման դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով, որոնք դրվում են դերբայից առաջ։*

Հաստատողական եղանակ

Ապառնի

Դրական		Ժխտական	
կգրեմ	*կգրենք*	*չեմ գրի*	*չենք գրի*
կգրես	*կգրեք*	*չես գրի*	*չեք գրի*
կգրի	*կգրեն*	*չի գրի*	*չեն գրի*

Անցյալի ապառնի

կգրեի	*կգրեինք*	*չէի գրի*	*չէինք գրի*
կգրեիր	*կգրեիք*	*չէիր գրի*	*չէիք գրի*
կգրեր	*կգրեին*	*չէր գրի*	*չէին գրի*

34. ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ.—Հրամայականի ժխտականը կոչվում է արգելական և կազմվում է մի մասնիկի միջոցով։

Հ. Բարսեղյանը արգելական հրամայականի կազմության մասին գրում է. «Բոլոր տիպի բայերի արգելական հրամայականը ծագումով կազմված է «մի» արգելականից և անորոշ դերբայի այլևայլ ձևափոխություններից։ Արգելական հրամայականի եզակի թվում և խոնարհման բայերի «լ» վերջավորությունը փոխարինվում է «ր» վերջավորությամբ, իսկ և խոնարհիչը դառնում է ի։ Օրինակ՝ մի գրիր, մի սիրիր, մի փախչիր, մի մտնիր, մի խաղացնիր, մի վախեցնիր և այլն։ Ա խոնարհման բայերի մեջ «մի» արգելականն ավելանում է անորոշ դերբայի վրա, որի «լ» վերջավորությունն ընկնում է։ Օրինակ՝ մի կարդա, մի խաղա, մի մոտենա, մի բարձրանա և այլն։ ...Ժխտական հրամայականի հոգնակին կազմվում է դարձյալ անորոշ դերբայով և «մի» արգելականով։ Այս դեպքում անորոշ դերբայի «լ»-ն բոլոր տիպերի բայերում փոխարինվում է «ք»-ով։ Օրինակ՝ մի գրեք, մի մտնեք, մի փախչեք, մի փախցնեք, մի կարդաք, մի մոտենաք, մի բարձրանաք և այլն»[107]։

Սակայն արգելականի կազմության այս օրինաչափությու-

---

[107] Հ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 318։*

նը այժմ փոխվում է։ Քանի որ պարզ բայերի դեպքում հրամայականի դրական և արգելական ձևերը նույնանում են, ինչպես՝ գրիր—*մի* գրիր, սիրիր—*մի* սիրիր, կարդա—*մի* կարդա, հավատա—*մի* հավատա *և այլն, ուստի և դրանց նմանակությամբ մյուս բայերի արգելական ձևերը ևս կազմվում են դրական ձևերից, որոնք ավելի ու ավելի են տարածվում և գերիշխող դառնում։ Սխալված չենք լինի, եթե ասենք, որ արդի հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից։ Այսպես, եթե հաշվի չառնենք ժամանակակից լեզվում արդեն հնաբանությունների վերածվող կազմությունները, արգելական հրամայականի ձևերը կունենան հետևյալ պատկերը։*

Դրական	Արգելական
Եզակի	
գրիր	*մի գրիր*
(գրի)	*(մի գրի)*
գտիր	*մի գտիր*
փախիր	*մի փախիր*
բարձրացրու	*մի բարձրացրու*
կարդա	*մի կարդա*
բարձրացիր	*մի բարձրացիր*
Հոգնակի	
գրեցեք	*մի գրեցեք*
(գրեք)	*(մի գրեք)*
փախեք	*մի փախեք*
գտեք	*մի գտեք*
բարձրացրեք	*մի բարձրացրեք*
կարդացեք	*մի կարդացեք*
բարձրացեք	*մի բարձրացեք*

Արգելական հրամայականի մի փախչիր, մի գտնիր, մի խաղացնիր, մի մտնեմ, մի փախչեմ, մի փախցնեմ, մի կարդամ, մի մոտենամ, մի բարձրանամ *կաղապարային ձևերը*

վերածվում են հնաբանութիւնների կամ գոնվում են հնաբանութիւններ դառնալու ճանապարհին։

35. ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԺԽՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ.— Ց մասնիկով կազմվող ժխտական ձևեր են ունենում նաև դերբայները, բայց միայն անկախ, բառային ինքնուրույն գործածութիւն ունեցողները, այսինքն՝ անորոշ, անկատար II, հարակատար, ենթակայական և ապառնի դերբայները, օրինակ՝ գրել—չգրել, գրելիս—չգրելիս, գրած—չգրած, գրող—չգրող, գրելիք—չգրելիք. կարդալ—չկարդալ, կարդալիս—չկարդալիս, կարդացած—չկարդացած, կարդացող—չկարդացող, կարդալիք—չկարդալիք:

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

36. ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— Ժամանակակից հայերենի բայական համակարգում չափազանց մեծ դեր ու կշիռ ունեն այսպես կոչված հարադրական բայերը՝ դուրս գալ, ներս գալ, խաղ անել, լաց լինել, գրել տալ, զարդարել տալ, մեռնել պրծնել. գալ անցնել, բողնել գնալ, պոկվել ընկնել *և այլն։ Ինչպես օրինակներն են ցույց տալիս, դրանցից մի մասի մեջ հանդիս է գալիս որևէ խոսքի մաս (մակբայ, գոյական և այլն) և բայ (օրինակ՝ ներս գալ), մի մասի մեջ անորոշ դերբայը և տալ բայը, որոնց միասնութեամբ պատճառական իմաստ է արտահայտվում (գրել տալ, զարդարել տալ), իսկ մյուս մասը իրենից ներկայացնում է իմաստային այս կամ այն աղերսակցութիւնն ունեցող երկու բայերի միութիւն (թռչել գնալ, պոկվել ընկնել)։*

Առաջին և երկրորդ խմբերի հարադրական բայերի խոնարհման առանձնահատկութիւնն այն է, որ բաղադրյալ ձևերի և՛ դրականում, և՛ ժխտականում օժանդակ բայն ընկնում է հարադրի և բայական մասի միջև, օրինակ՝ դուրս է գալիս—դուրս չի գալիս, դուրս է եկել—դուրս չի եկել, գրել է տալիս—գրել չի տալիս, գրել է ավել—գրել չի ավել *և այլն։ Պարզ ժամանակներում դրանց խոնարհումը չի տարբերվում*

սովորական բայերի խոնարհումից, օրինակ՝ դուրս եկա, դուրս եկար, դուրս եկավ. գրել տվի, գրել տվիր, գրել տվեց. դուրս գամ, դուրս գաս, դուրս գա. գրել տամ, գրել տաս, գրել տա *և այլն։ Հաստատողական եղանակում* կ(ը) *մասնիկը դրվում է խոնարհվող բայաձևի վրա, օրինակ՝* դուրս կգամ—դուրս կգայի, գրել կտամ—գրել կտայի: *Սակայն հարկադրականի դեպքում պիտի եղանակիչը կարող է դրվել և անմիջաբար խոնարհվող բայի, և հարադրի վրա, օրինակ՝* դուրս պիտի գամ||պիտի դուրս գամ, գրել պիտի տամ||պիտի գրել տամ *և այլն։ Պարզ ձևերի ժխտականի դեպքում չ մասնիկն անմիջաբար դրվում է բայական մասի վրա, օրինակ՝* դուրս գնաց—դուրս չգնաց, գրել տվեց—գրել չտվեց, գրել տամ—գրել չտամ *և այլն։ Նույն կերպ անմիջաբար խոնարհվող բայաձևի վրա է դրվում նաև արգելական հրամայականի մի մասնիկը, օրինակ՝* դուրս գնա—դուրս մի գնա, դուրս գնացեք—դուրս մի գնացեք, գրել տվեք—գրել մի տվեք: *Սակայն առանձին դեպքերում մի ձևը կարող է դրվել նաև հարադրական բայի վրա, որպես մի ամբողջության վրա սկզբից, օրինակ՝* մի դուրս գնա, մի դուրս գնացեք, մի գրել տվեք *և այլն։ Այս ձևերը կանոնի աստիճանի չեն բարձրացել և հանձնարարելի չեն։*

Թոչել գնալ *տիպի հարադրական բայերի խոնարհումը առանձնապես չի տարբերվում սովորական բայերի խոնարհումից, միայն բաղադրյալ ժամանակներում օժանդակ բայը կարող է դրվել և՛ առաջին, և՛ երկրորդ բաղադրիչներից հետո ըստ այն բանի, թե որ բաղադրիչի վրա է ընկնում տրամաբանական շեշտը, օրինակ՝* թոչում է գնում||թոչում գնում է, թռել է գնացել||թռել գնացել է:

Ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայն ընկնում է նախադաս՝ դրվելով առաջին բաղադրիչից առաջ, օրինակ՝ չի մեռնում պրծնում, չի թռել գնացել *և այլն։*

Պարզ ժամանակների խոնարհումը սովորական խոնարհումից ոչնչով չի տարբերվում, միայն ժխտականի դեպքում չ մասնիկը դրվում է առաջին բայի վրա, օրինակ՝ չմեռավ պրծավ, չթոչեմ գնամ *և այլն։*

ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԶԵՎԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

*37. ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ.— Հասկանալի է. որ իրական աշխարհի գործողությունները կատարվում են որոշ հաջորդականությամբ՝ մի գործողություն նախորդում, համընկնում կամ հաջորդում է մյուսին, իսկ այդ գործողությունն էլ կարող է համընկնել, նախորդել կամ հաջորդել մի ուրիշ գործողության և այդպես շարունակ։ Լեզուն իր էությանը և կոչմանը համապատասխան պետք է արտացոլի իրական աշխարհում տեղի ունեցող գործողություններն այնպես, ինչպես որ նրանք կատարվում են։ Վերցնենք «Քառս» վեպի առաջին նախադասությունները. «Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր։ Յոթ օր առաջ նա իր նոր կառուցվող տասնմեկերորդ տան վրա արհեստավորներին պատվերներ տալիս մարմնի մեջ զգաց անսովոր ցուրտ, եկավ տուն, պառկեց անկողին ու այլևս չկարողացավ վեր կենալ։ Բժիշկները մարդուն ուշադիր ննջեցին ու միաձայն հաստատեցին թոքերի բորբոքում։ Լուրը նույն ժամին տարածվեց ամբող քաղաքում»։ Պարզ է, որ այստեղ անցյալ կատարյալով արտահայտված գործողությունները ներկայացված են այն հաջորդականությամբ, ինչպես որ նրանք տեղի են ունեցել, այսինքն՝ Մարկոս Ալիմյանը ցուրտ է զգացել, հետո եկել է տուն, հետո պառկել անկողին և այլն։ Սա էլ իր հերթին նշանակում է, որ անցյալ կատարյալով տվյալ դեպքում գործողությունների տարբեր հաջորդականություն է արտահայտված։ Հասկանալի է, որ այդ հաջորդականության մասին մենք գաղափար ենք կազմում խոսքի բովանդակությունից։ Նույնն է նաև հետևյալ հատվածի մեջ. «Դիլան դային վեր կացավ, ետ fաշեց հնձանի դուռը, երկաթի փակն ամրացրեց, մինչև մյուս գարուն։ Ապա կռացավ, դժվարությամբ չալակեց չորացած ոստերի ու ցողունների կապը և հոգնած ոտքերը ծերունու հուշիկ քայլերով փոխեց դեպի այգու դուռը» (ԱԲ, 236)։ Այս ձևով գործողությունների հաջորդություն կարող է արտահայտ-

վել ամեն մի ժամանակով, ինչպես՝ «Գնում է ուրիշի ապրանքը տանում, Թաքուն ճավաճում իր հանդն է անում, Աղմուկով ֆշում իր հանդի միջից, Շտրափ է առնում անմեղ տիրոջից» (ՀՔ, 39). «Մնացական Հաբեթյանի դուստրը սիրահարվել էր իր հոր գործակատարի վրա։ Մնողները, հարկավ, ընդդիմացել էին անհավասար ամուսնությանը, բայց մի օր Անուշը չոճել էր մոր առջև և արտասուքն աչքերին մի շատ խորհրդավոր խոստովանանք արել։ Մայրը դատեր անզգուշությունն անհրաժեշտ էր ճամարել հաղորդել մարդուն։ Գոռոզ կալվածատերը սարսափել էր, նախկին գյուղացու կատաղությամբ բորբոքվել։ Նա կանչել էր Անուշին իր սենյակը, ենախատել, անվանել էր «անառակ», մինչև անգամ ծեծել» (ՇՔ, 59)։ Անժխտելի է, որ բերված տարբեր հատվածներում նույն ժամանակային ձևերով գործողությունների հաջորդականություն է արտահայտվում, բայց նույն ժամանակային ձևերով արտահայտված գործողությունների այդ հաջորդությունները քերականության ուսումնասիրության նյութ չեն կարող հանդիսանալ, որովհետև այդ հաջորդությունները պայմանավորված են ոչ թե բուն իսկ ժամանակային ձևերով, այլ բխում են խոսքի բովանդակությունից։ Վերևում բերված առաջին երկու հատվածների մեջ գործ ունենք միևնույն անցյալ կատարյալ ժամանակի հետ, և, ասենք, վեր կացավ, ետ դարձավ, ամրացրեց և այլ բայաձևերը արտահայտում են նույն և միևնույն անցյալ կատարյալ ժամանակը, գնում է, տանում է, ճավաճում է բայաձևերն էլ արտահայտում են նույն և միևնույն ներկա ժամանակը, իսկ սիրահարվել էր, ընդդիմացել էին, չոճել էր և այլ բայաձևերն էլ արտահայտում են նույն և միևնույն անցյալի վաղակատար ժամանակը։ Քերականական վերլուծությունը համապատասխան ձևերի միջև ժամանակային հաջորդություն ցույց տալ չի կարող, և դա որոշվում է միայն խոսքի բովանդակությամբ։

Այս վերլուծությունից պարզ է դառնում, որ քերականության մեջ ժամանակների հաջորդություն ասելով բոլորովին այս երևույթը նկատի չունենք։

Արդի հայերենի բայի կերպի և ժամանակի կարգերը քննելիս խոսվել է այն մասին, որ սահմանական եղանակի բա-

ղադրյալ ժամանակներով արտահայտվում է գործողությունների հաջորդականություն ներկա և անցյալ ժամանակակետերի նկատմամբ, ինչպես՝ գնում է—գնում էր—միաժամանակություն կամ համընկնում, գնացել է—գնացել էր—նախաժամանակություն կամ նախորդում, գնալու է—գնալու էր—հետամանակություն կամ հաջորդում։ Միաժամանակ նշվել է նաև այն, որ յուրաքանչյուր գլխավոր ժամանակ ունի համապատասխան երկրորդական բաղադրյալ երեք ձևեր՝ միաժամանակություն, նախաժամանակություն և հետամանակություն եղրերով (գնում եմ||գնալիս եմ լինում—գնացած եմ լինում—գնալու եմ լինում, գնացել եմ||գնալիս եմ եղել—գնացած եմ եղել—գնալու եմ եղել և այլն)։

Բայց հենց գլխավոր ժամանակները ևս իրար նկատմամբ հարաբերական գործածություններ ունեն։ Այսպես, օրինակ, ներկա, վաղակատար և ապառնի ժամանակները մի կողմից և անցյալի անկատար, անցյալի վաղակատար և անցյալի ապառնի ժամանակները մյուս կողմից անցյալ կատարյալի նկատմամբ ցույց են տալիս միաժամանակություն, նախաժամանակություն և հետամանակություն, ինչպես.

Ա.	Բ
1. Գացի, որ հոգնում է։	*Գացի, որ հոգնում էր։*
Հասկացա, որ տանջվում է։	*Հասկացա, որ տանջվում էր։*
2. Գացի, որ հոգնել է։	*Գացի, որ հոգնել էր։*
Հասկացա, որ տանջվել է։	*Հասկացա, որ տանջվել էր։*
3. Գացի, որ հոգնելու է։	*Գացի, որ հոգնելու էր։*
Հասկացա, որ տանջվելու է։	*Հասկացա, որ տանջվելու էր։*

Ա և Բ շարքերի առաջին օրինակները անցյալ կատարյալի նկատմամբ ցույց են տալիս միաժամանակություն, երկրորդ օրինակները՝ նախաժամանակություն, իսկ երրորդ օրինակները՝ հետամանակություն։

Այս ձևով, հատկապես ընդարձակ շարակարգում (կոնտեքստում), մանավանդ երբ կան երկրորդական նախադասություններ, ուրիշի ուղղակի կամ անուղղակի խոսք և այլն, կարող են արտահայտվել գործողությունների ժամանակահաջորդային զանազան ու ամենատարբեր հարաբերություն-

ներ, ինչպես. «Մարզպետունին սկսեց հեռվից։ Մի ժամանակ հայերը կարծում էին, թե ազգը պահպանվում է կրոնով» (ՇՔ, 105). «Գալիս է,—գոչեց մեկը, որ ամենից թեթևաշարժը լինելով, ամենից արագ էր մոտեցել լուսամուտին» (ՇՔ, 12). «Ասում են, ես անձրևի տակ եմ ծնվել և երբ աշխարհ եկա՝ առաջին ձայնը, որ լսեցի՝ ամպի գոռոցն էր և անձրևի շրթընդալի թմբկահարությունը» (ՎԱ, 4). «Աշնան մի օր պապս, որ առավոտ կանուխ ձի էր նստել ու գնացել հարևան գյուղը, ուրախ-ուրախ ձիուց իջավ, սանձը հանեց ձիու գլխից ու մինչև ձին ճերս կմտներ գոմի դռնից, շտապեց մեզ հայտնելու, որ տանուտերից տեղեկացել է, թե քեհին ողջ է և գտնվում է այսինչ քաղաքում» (ԱԲ, 135). «Անցնելով «ադվակատ» Մուխանի մոտով, նկատեց, որ արբշիռը գինին թափել է սպիտակ սփռոցի վրա և աղամանն է փնտռում՝ կրամիր լճակը աղով ծածկելու համար» (ՇՔ, 27)։

Երբ խոսում ենք ժամանակային ձևերի իմաստների և կիրառությունների մասին, ապա որպես կանոն նկատի ենք ունենում ժամանակային ձևերի ոչ թե հարաբերական, այլ բացարձակ կիրառությունները, այսինքն այնպիսիք, որոնք կախված չեն այլ ժամանակային ձևերից։ Այսպես, «Տեսա, որ գրում է» նախադասության մեջ ներկա ժամանակի բայաձևն արտահայտում է մի անցյալ գործողության զուգորդող գործողություն, իսկ «Տեսա, որ գրել է» նախադասության մեջ վաղակատար ժամանակի բայաձևն արտահայտում է մի անցյալ գործողությանը նախորդող գործողություն։ Հասկանալի է, որ վերոհիշյալ նախադասությունների մեջ ներկայի և վաղակատարի ձևերն ունեն հարաբերական գործածություն։ Այսպիսի գործածությունների դեպքում հաճախ ներկա և անցյալ ժամանակակետերի տարբերությունները վերանում են, և ներկա ու անցյալի անկատար, վաղակատար ու անցյալի վաղակատար և ապառնի ու անցյալի ապառնի զույգ ժամանակները փաստորեն նույն իմաստն են արտահայտում և կարող են իրար փոխարինել, ինչպես.

Տեսա, որ գրում է||գրում էր.
Տեսա, որ գրել է||գրել էր.
Տեսա, որ գրելու է||գրելու էր։

Այսպիսի կիրառությամբ անցյալ կատարյալը մի տեսակ ժամանակակետի դեր է կատարում, որի նկատմամբ ներկան և անցյալի անկատարը ցույց են տալիս զուգորդող գործողություն, վաղակատարը և անցյալի վաղակատարը՝ նախորդող գործողություն, իսկ ապառնին և անցյալի ապառնին՝ հաջորդող գործողություն։

Ինչևիցե. ստորև ժամանակային ձևերի կիրառությունները քննելիս այսպիսի հարաբերական կիրառությունները նկատի չեն առնվում, այլ նկատի են առնվում բացարձակ կիրառությունները, ինչպես՝ Նա գրում է, գրում էր, գրել է, գրել էր, գրելու է, գրելու էր, գրեց *և այլն, չնայած որ հարաբերական կիրառությամբ ևս ժամանակային ձևերը դրսևորում են իրենց էության գոնե ամենահատկանշական կողմերը։*

38. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ.— Հայերենում, ինչպես և մեզ ծանոթ այլ լեզուներում, ժամանակային ձևերը, որպես կանոն, բազմիմաստ են։ Այսպես, միևնույն գնում է շարքի ձևերը արտահայտում են խոսքի պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, օրինակ՝ «Սուրենը հիմա գնում է տուն», խոսքի պահից առաջ կատարված, այսինքն՝ անցյալ գործողություն, օրինակ՝ «Սուրենը երեկ գնում է ընկերոջ տուն, բայց նրան տանը չի գտնում» և խոսքի պահից հետո կատարելի, այսինքն՝ ապառնի գործողություն, օրինակ՝ «Սուրենը վաղը գնում է տուն»։ Նշենք, որ այս երևույթը սոսկ հայերենի հատկությունը չէ, և ներկա ժամանակի ձևերը բազմիմաստ են նաև մեզ ծանոթ մյուս լեզուներում (օրինակ՝ գերմաներենում, ռուսերենում)։ Ժամանակային ձևերի այսպիսի բազմիմաստությունը առիթ է տվել որոշ լեզվաբանների խիստ քննադատորեն մոտենալու բայաձևերին տրվող ավանդական անվանումներին կամ ուղղակի չընդունելու դրանք, որովհետև ավանդական անվանումները, ըստ նրանց, նախօրոք այս կամ այն ուղղությամբ կանխորոշում են բայաձևերի ժամանակային բովանդակությունը և խանգարում բայաշարքերի՝ կենդանի լեզվում ունեցած բազմապիսի և բազմաթիվ կիրառությունների իրական պատկերի ըմբռնմանն ու լուսաբանմանը։

Այսպես, գերմանացի լեզվաբան Լ. Վեյսբերգերն առա-

չարկում է գերմաներենի բայաշարքերը կոչել չեզոք անուններով՝ die erste Stammform *«առաջին հիմնաձև»*—Präsens *«ներկա»*, die zweite Stammform *«երկրորդ հիմնաձև»*—Präteritt *«անցյալ»* և *այլն*[108]*։ Կամ վրացի լեզվաբան Ա. Շանիձեն գտնում է, որ ավելի լավ կլիներ բայական շարքերն անվանել չեզոք, թեկուզ արհեստական անվանումներով, ասենք, ծառանումներով՝ կեչու շարք, սոճու շարք, կաղնու շարք, շագանակենու շարք, հաճարենու շարք և այլն։ Լեզվաբանը սա համարում է ռեֆորմ, բայց այնպիսի ռեֆորմ, որ այժմ անհրնար է կիրառել*[109]*։*

Իհարկե, ժամանակային ձևերի բազմիմաստությունն անժխտելի է, բայց դրա հետ անժխտելի է նաև այն, որ յուրաքանչյուր ժամանակային ձև, ինչքան էլ այն բազմիմաստ լինի, ունի մի գլխավոր, հիմնական նշանակություն, որ դրսևորվում է տվյալ շարքի բոլոր բայաձևերի, որպես ձևաբանական միավորների մեջ՝ անկախ այլ բառերի հետ ունեցած հարաբերության, անկախ լեզվական կամ ոչ լեզվական այս կամ այն հանգամանքի կամ դրության։

Այսպես, եթե վերևում բերված բայաձևը վերցնենք լրիվ անկախ դիրքում, շարահյուսական կապակցությունից դուրս որպես ձևաբանական միավոր—*գնում է*—*ապա նա ցույց է տալիս խոսքի պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, և նրա մեջ անցյալ կամ ապառնի ժամանակների նշույլներ իսկ չեն դրսևորվում։ Բերված նախադասությունների մեջ գնում է բայաձևին անցյալի կամ ապառնիի իմաստ է տրվում անցյալ և ապառնի նշանակող հատուկ բառային միջոցներով՝ երեկ, վաղը։ Բայց այդ դեպքում էլ ավելի ճիշտ կլիներ ասել, թե անցյալ և ապառնի գործողությունները դիտվում են իբրև ներկա, որոնք կարծես թե տեղի են ունենում խոսելու պահին։ Սա էլ իր հերթին նշանակում է, որ գնում է շարքի (ինչպես և բոլոր շարքերի) բայաձևերի մեջ կա մի հաստատուն իմաստ, որ չի մարում նրա բոլոր կիրառությունների դեպքում և այս կամ այն ձևով դրսևորվում է։*

---

[108] *Տե՛ս* **Е. И. Шендельс**, О грамматической полисемии, ВЯ, 1962, *№ 3, էջ 48։*

[109] *Տե՛ս* **Իվ. Ի. Շիլակաձե**, *Արդի հայերենի բայի խոնարհման կատեգորիաները, ԼՈՀ, II, Երևան, 1964, էջ 180։*

Կարծում ենք, որ սխալված չենք լինի, եթե նմանակություն անցկացնենք հոլովական և ժամանակային ձևերի միջև։ Ինչպես որ, ասենք, ից (բացառական), ով (գործիական), ում (ներգոյական) ձևերը ինչպիսի շարահյուսական կիրառություններ էլ որ ունենան, համեմատական դեպս, նրանց մեջ դրսևորվում է մի ընդհանուր, միասնական իմաստ, որը բխում է և պայմանավորված է ից, ով, ում ձևույթների իմաստով, այնպես էլ, ըստ երևույթին, **գնում է, գնում էր, գնացել է, գնացել էր, գնալու է, գնալու էր, գնաց** *և այլ ձևերը, ինչպիսի կիրառություններ էլ որ ունենան, համեմատական դեպս, նրանց մեջ կա մի միացնող ընդհանուր իմաստ, որը բխում է և պայմանավորված է այդ շարքերը կազմող ձևերի իմաստով, այն է՝ (գն)ում է, (գն)ում էր, (գնաց)ել է, (գնաց)ել էր և այլն։ Հենց դա էլ, ըստ երևույթին, բայական շարքերի ձևաբանական իմաստն է, որը հանդես գալով որպես անփոփոխակ (инвариант), տարբեր շարակարգերում (կոնտեքստերում) տարբեր թանձրացական դրսևորումներ է ունենում։*

Բ. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[119]

I. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

39. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Մի կողմ թողած հարակատարն ու անցյալի հարակատարը, որոնց հարցը վիճելի է, սահմանական եղանակն ունի 7 գլխավոր կամ բացարձակ և 21 (7×3) երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր, որոնք ներկայացնում են հետևյալ ընդհանուր պատկերը.

Գլխավոր կամ բացարձակ ժամանակաձևեր	Երկրորդական կամ հարաբերական ժամանակաձևեր
	ա) գնալիս է լինում
1. գնում է	*բ) գնացած է լինում*
	գ) գնալու է լինում

[110] *Այս հատվածի շարադրանքը հմմտ.* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տե-*

2. գնում էր	ա) գնալիս էր լինում բ) գնացած էր լինում գ) գնալու էր լինում
3. գնալու է	ա) գնալիս է լինելու բ) գնացած է լինելու գ) գնալու է լինելու
4. գնալու էր	ա) գնալիս էր լինելու բ) գնացած էր լինելու գ) գնալու էր լինելու
5. գնացել է	ա) գնալիս է եղել բ) գնացած է եղել գ) գնալու է եղել
6. գնացել էր	ա) գնալիս էր եղել բ) գնացած էր եղել գ) գնալու էր եղել
7. գնաց	ա) գնալիս եղավ բ) գնացած եղավ գ) գնալու եղավ

Ինչպես նշված է արդեն, սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ կերպով կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն։ Սահմանականը այսպես կոչված առարկայական եղանակ է, ի տարբերություն մյուս եղանակների, որոնք այսպես կոչված անձնական եղանակներ են։ Սահմանականը լեզվաբանական գրականության մեջ բնորոշվում է նաև որպես իրականության եղանակ, որովհետև սահմանական եղանակի բայաձևերով առարկայական աշխարհի եղելությունները ներկայացվում են իրենց բնական դրության մեջ՝ առանց անձնական այս կամ այն վերաբերմունքի։ Սակայն այստեղ մի էական վերապահում պետք է անել. սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս

սություն, էջ 558—600. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 179—265. Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա, էջ 74—107, 116—133. Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում։

ստույգ կերպով կատարվող, կատարված կամ կատարելի գործողություն ոչ թե բացարձակ կերպով, այլ խոսողի ներկայացմամբ. այս դեպքում ևս, ինչպես և խոսողության ընթացքում, ընդհանրապես, տերն ու տնօրենը խոսողն է։ Դրանից ինքնին բխում է, որ սահմանական եղանակով կարող են արտահայտվել այնպիսի գործողություններ, որոնք ըստ էության չեն համապատասխանում իրականությանը, բայց դա քերականական տեսակետից նշանակություն չունի։ «Սուրեն Ավագյանը սովորում է բանասիրական ֆակուլտետի երրորդ կուրսում» նախադասության «սովորում է» ստորոգյալը, որքան էլ չհամապատասխանի իրականությանը, մնում է որպես սահմանական, որովհետև բայաձևը ոչ միայն ոչինչ չի ասում այդ անհամապատասխանության մասին, այլև, ընդհակառակը, արձանագրում է այդ համապատասխանության փաստը. հասկանալի է՝ խոսողի ներկայացմամբ։

Քանի որ քերականությունն ուսումնասիրում է լեզվական ձևերը և նրանց արտահայտած իմաստները և ոչ թե այդ իմաստների և իրականության փոխհարաբերությունները, դրանից ինքնին բխում է, որ սահմանական եղանակի բայաձևերով միշտ արտահայտվում են քերականական տեսակետից ստույգ կերպով կատարվող, կատարված կամ կատարելի եղելություններ։ Ուրեմն վերևի՝ «սահմանական եղանակը իրականության եղանակն է» բնորոշումը պետք է հասկանալ այդ իմաստով։

Ելնելով սահմանականի այս բնույթից՝ որոշ քերականներ սահմանականը եղանակ չեն համարում կամ համարում են երևակայական, կարծեցյալ, զրո եղանակ, որովհետև մյուս եղանակները չափվում են ըստ դրա, մյուս եղանակների մեջ դրսևորվում է խոսողի զգացական կամ կամային վերաբերմունքը, իսկ սահմանականի մեջ առարկայական վերաբերմունքը։ Այսպես, Ա. Պեշկովսկին գտնում է, թե «Սահմանականը ըստ էության զրո եղանակ է», իսկ Օվսյանիկո-Կուլիկովսկին իր շարահյուսության մեջ գրել է. «Այսպես կոչված «սահմանականը» եղանակ չէ, որովհետև չի արտահայտում

չինչ, ինչ պիտի արտահայտեն եղանակները։ Այն կարելի է համարել կեղծ եղանակ»[111]։

Հասկանալի է, որ սահմանականի եղանակ լինելը ժխտել այն հիմունքով, որ նա ըրո եղանակ է, զգացական կամ կամային ոչ մի վերաբերմունք չի արտահայտում և ընկած է մյուս եղանակների տարբերակման հիմքում,—ճիշտ համարվել չի կարող։

Սահմանական եղանակի բայաձևերի այս ընդհանուր բնութագրումից հետո կարելի է անցնել նրանց կիրառությունների քննությանը։ Նշենք, որ ստորև քննվելու են միայն գլխավոր ժամանակները։ Իսկ ինչ վերաբերում է երկրորդական բաղադրյալ ժամանակներին, ապա դրանք մենք հատուկ քննության նյութ չենք դարձնի, որովհետև երկրորդական բաղադրյալ ժամանակները գլխավոր ժամանակներից տարբերվում են սոսկ կերպով։

40. ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ (ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ + ԵՄ՝ ԳՆՈՒՄ ԵՄ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ գնում եմ, գնում ես, գնում է, գնում ենք, գնում եք, գնում են։ Գալ, լալ, տալ բայերի ներկան կազմվում է անկատար երկրորդով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ։

Սահմանափակ բայեր ունեն պարզ կազմության գրաբարաձև ներկա. դրանք են՝ եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ։

Ա) Սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը ցույց են տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, մի գործողություն, որի սկիզբն անշուշտ տրամաբանորեն ընկնում է խոսելու պահից առաջ, բայց և խոսելու պահին ընթացքի մեջ է, շարունակվում է հարաձիգ, օրինակ՝ նա հիմա գնում է, գրում է, կարդում է, պարապում է, նկարում է, աշխատում է և այլն։

Իր այս բնույթով հայերենի ներկա ժամանակն իրոք անկատար ներկա է և, եթե կարելի է այսպես արտահայտվել,

---

[111] *Տե՛ս* **В. В. Виноградов**, Русский язык, М.—Л., 1947, *էջ* 584: *Մեջ է բերվում ըստ Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսության» գրքի, էջ 180—181։*

անսահմանափակ ժամանակ է, որովհետև չի սահմանափակված ոչ սկզբով, ոչ էլ վերջով՝ ի տարբերություն մյուս ժամանակների, որոնք, որպես կանոն, այս կամ այն սահմանափակվածությունն ունեն. օրինակ՝ գնացել է ձևի մեջ գործողությունը սահմանափակված է ըստ ավարտվածության (գործողությունը կատարվել, վերջացել է), իսկ գնալու է ձևի մեջ՝ ըստ սկզբնավորության (գործողությունը դեռ նոր պետք է սկսվի)։

Այսպես ուրեմն՝ ներկա ժամանակի հիմնական, գլխավոր իմաստն ու կիրառությունն այն է, որ ցույց է տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող, շարունակվող, հարաձիգ գործողություն։ Դա ներկայի հիմնական իմաստը պետք է համարել ոչ միայն այն հիմունքով, որ ի հայտ է գալիս դեպքերի մեծամասնության մեջ և դրսևորվում է ամենափոքր շարակարգում կամ հենց սոսկ բայածևի մեջ (գնում է), այլև այն հիմունքով, որ ներկայի մյուս բոլոր կիրառությունները բխում և պայմանավորված են հենց այդ իմաստով, որը բայածևի բոլոր կիրառությունների դեպքում իրեն զգացնել է տալիս և դրսևորվում է այս կամ այն երանգով։ Օրինակներ.

«Բարակ ամպերը մաղում են ոսկի, Ջրերը անուշ հեքիաթ են ասում. Կարոտ է սիրտս մտերիմ խոսքի, Հոգնատանջ հոգիս բախտ է երազում» (ՎՏ, 115). «Ճմռան գիշերն է մեղմորեն ընկնում Եվ մեծ քաղաքի դեմքը մշուշում. Ես դուրս եմ գնում, փողոց եմ գնում Եվ երկար, երկար մայթերն եմ մաշում» (ՎՏ, 51). «Լռություն կա Կաքավաբերդի ավերակներում։ Միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը, fեռում է ափերը և ճղկում հունի կապույտ որձաքարը։ Իր նեղ հունի մեջ գալարվում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ և կրծում քարե շղթաները» (ԱԲ, 189)։

Կան լեզուներ, որոնք այս շարունակական ներկայի համար հատուկ բայածևեր ունեն. այսպես են, օրինակ, անգլերենը և թուրքերենը։ Վերջինիս օրինակով արևմտյան որոշ բարբառներում ստեղծվել են շարունակական ներկայի և անկատարի հատուկ ձևեր։ Խոսելով այս քերականական երևույթի մասին՝ Հ. Աճառյանը գրում է. «Տաճկերենի ազդեցու-

թյամբ (բայց ոչ փոխառութ֊յամբ) հայերենի մեջ էլ կազմվել է շարունակական ներկայի (ինչպես նաև անկատարի) այս ձևը... Ասացի ազդեցութ֊յամբ և ոչ փոխառութ֊յամբ, որովհետև տաճկերենի yor *մասնիկը ոչ մի տեղ փոխ չէ առնված, և ամեն մի բարբառում մի առանձին մասնիկ է հնարված, որով կազմվում է այդ շարունակական ձևը (ներկա և անկատար)»*[112]:

Այս շարունակական ձևերի գլխավոր ներկայացուցիչը Պոլսի բարբառի կոր *մասնիկն է: Այսպիսով ներկա ժամանակի համար ստացվում է երկու ձև՝ ընդհանուր (Հ. Աճառյանի անվանումով՝ պարզ) ներկա՝* կուտե *և շարունակական ներկա՝* կուտե կոր: *Այս ձևերի իմաստային տարբերութ֊յունը Հ. Աճառյանը բացատրում է հետևյալ կերպ. «Պարզ ներկան ցույց է տալիս միշտ կամ ընդհանրապես եղած մի գործողութ֊յուն, շարունակականը մի գործողութ֊յուն, որ խոսված րոպեին է կատարվում: Օրինակ՝ հարց է տրվում. Շունը ի՞նչ կուտե (այսինքն թե շուն կոչված կենդանին առհասարակ իր կյանքում ինչո՞վ կապրի): Պատասխանն է՝ «Շունը հաց* կուտե, *միս* կուտե, *ոսկոր* կուտե, *ամեն բան* կուտե, *մինակ խոտ չուտեր»: Այսպիսի ներկան կոչվում է բուն կամ պարզ ներկա: Բայց երբ խոսքը վերաբերում է մասնավոր մի շան այժմ ուտելուն, ստացվում է անմիջական կամ շարունակական ներկա: Այսպես՝ «Սա դիմացին պատին տակ սև շուն մը նստեր է, բան մը* կուտե կոր. *ի՞նչ* կուտե կոր»: *Պատասխան՝ «ձոսկի պոչ մը* կուտե կոր».—*շարունակական ներկա է»*[113]:

Սակայն Պոլսի բարբառում այնքան տարածված շարունակական ներկայի այս ձևը արևմտյան գրական լեզվում գոյութ֊յուն չունի և ներկայի միակ ձևը, արևելյան գրականի նման, արտահայտում է և՛ շարունակական ներկայի, և ընդհանուր ներկայի իմաստ: Վերջինիս մասին խոսվում է ստորև:

Բ) Սահմանական եղանակի ներկայի բայաձևերով են արտահայտվում բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտութ֊յունները, իրերի մշտական հատկանիշների վե-

---

112 *Հ. Աճառյան, Հիմնական քերականութ֊յուն հայոց լեզվի, հ. IV, Բ, Երևան, 1961, էջ 31:*

113 *Անդ, էջ 105:*

բագրումը, բնորոշումները, սահմանումները, բնութագրումները, աքսիոմաները և այլն։ Դա այսպես կոչված ընդհանուր կամ մշտական ներկան է, որով արտահայտված եղելությունները այդպես են ըստ բնության կամ այդպես են ընկալվում, «ամեն ժամանակի համար ընդունելի են և ոչ թե մի անգամ խոսողի ներկայում կատարվում են հարաձիգ, ինչպես որ է կատարվող կերպի ներկայի իսկական բնավորությունը»[114]։

Ընդհանուր կամ մշտական ներկան շատ լայն կիրառություն ունի, դրա հետ միասին շատ լայն իմաստ է և ընդգրկում է բոլորի համար ընդունելի ճշմարտություններից, գիտական բնորոշումներից ու սահմանումներից սկսած մինչև առօրյա սովորական երևույթների սոսկական արձանագրումը, ինչպես՝ «Ջուրը հեղուկ է», «Մարդը մահկանացու է», «Երկիրն իր լույսն ստանում է արեգակից», «Հասարակությունը զարգանում է վերընթաց գծով», «Ջուգահեռ գծերն անսահմանության մեջ հատվում են», «Լեռնցիները երկարակյաց են լինում», «Ձկները ջրում են ապրում», «Խաղողն աշնանն է հասնում», «Վարդը բացվում է մայիսին», «Ալյուրից հաց են թխում», «Կովը բառաչում է», «Առյուծը մռնչում է», «Գայլը ոռնում է», «Սոխակը երգում է», «Կարիճը խայթում է» և այլն։

Այս սահմանումներն ու բնութագրումները կամ առարկաներին իրենց բնորոշ հատկանիշների վերագրումները կատարվում են հատկապես ներկայի բայաձևերով այն պատճառով, որ այդ ձևերը, ինչպես նշված է արդեն, չունեն սահմանափակվածություն ո՛չ ըստ ավարտվածության, ո՛չ էլ ըստ սկզբնավորության։ Եվ եթե դրանք արտահայտվեին որևէ անցյալ ժամանակով, ապա կսահմանափակվեին ըստ ավարտվածության, իսկ եթե արտահայտվեին որևէ ապառնի ժամանակով, ապա կսահմանափակվեին ըստ սկզբնավորության։ Բայց վերևում բերված եղելությունների բնույթն այնպիսին է, որ չեն ընդունում որևէ սահմանափակություն, հետևաբար և ներկայի ձևերը դառնում են դրանց արտահայտման միակ միջոցը։

---

[114] *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 565։*

Վերևում կատարված իմաստային վերլուծությունների կարելի է եզրակացնել, որ ընդհանուր կամ մշտական ներկան չայն առումով սահմանումի կամ բնութագրման ներկա է։

Գ) Սահմանումի կամ բնութագրման ներկայի հետ շփման եզրեր ունի կամ դրան է մոտենում այսպես կոչված «առածական ներկան». դրանով արտահայտվում են ընդհանուր կարծիքներ, առածներ, իմաստալից խոսքեր, «որոնց ճշմարտությունն ընդհանուր ընդունված է և որոնց բովանդակությունն արժեք ունի ամեն ժամանակի համար»[115], ինչպես՝ «Չարիքը՝ չարիք, իսկ բարիքը բարիք է ծնում», «Լավությունը չի կորչում», «Համբերությունը կյանք է», «Ճտերն աշնանն են համարում», «Խորամանկ աղվեսը երկու ոտով է թակարդն ընկնում», «Ճրագն իր տակ լույս չի տալիս», «Եզան տակ հորթ են փնտրում», «Արյունը արյունով չեն լվանում, ջրով են լվանում», «Ծառը պտղից է ճանաչվում», «Կուժը ջրի ճամփին է կոտրվում» և այլն։

Խոսելով «առածական ներկայի» մասին՝ Մ. Աբեղյանը գրում է նաև հետևյալը. «Այս նշանակությամբ երբեմն գործ են ածվում վաղակատարը և անցյալ կատարյալը։ Այս դեպքում անցյալով արտահայտվում է մի որոշ դեպք, որը մի անգամ անցյալում կատարվել է և ապա լսողին է թողնվում դրանից մի ընդհանուր ճշմարտություն հանել, թե ինչ որ մի անգամ անցյալում կատարվել է, նման պարագաների մեջ կարող է ամեն ժամանակ կատարվել»[116]։ Այսպիսի օրինակներ են հետևյալները. «Մարոն սիրեց (սիրել է) Կարոյին, Կարոն չսիրեց (չի սիրել) Մարոյին». «Գելի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ շո՛ւտ արեք, ոչխարը սարն անց կացավ». «Սուտ ասողի տունը կրակ ընկավ, չհավատացին». «Գիժը գնաց հարսանքատուն, ասաց՝ սա լավ է, քանց մեր տուն»։

Դ) Ներկայի բայաձևերով արտահայտվում են իբրև կարգ, կանոն, սովորույթ կրկնվող գործողությունները, որոնք ընդգրկում են մի որոշակի ժամանակաշրջան, որոնց մեջ և խոսողի ներկան, օրինակ՝ «Ամեն գիշեր մոայլ ծերունին մեն-

---

[115] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 566։

[116] *Անդ*, էջ 566։

մենակ իջնում է վար, բաց է անում երկաթե դռները ժանգոտ բանալիով, ճամրում է տոպրակները և ավելացնում նոր ոսկիներ» (ՇՔ, 8). «Ջատիկ ու ջրօրհնեք տոների նախընթաց գիշերը, մի զույգ մոմ վառելով, աղոթում է պահարանի վրա չոքած և օրհնում է նվիրական տրեխները» (ՇՔ, 8). «Գիշեր է դառնում, և գիշերվա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները։ Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, թավալգոր են լինում չոր տերևների վրա, դարան մտնում, հենց որ զգում են վայրի խոզերի մոտենալը» (ԱԲ, 4)։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, ներկայի այս նշանակությունը սովորաբար դրսևորվում է ընդարձակ շարակարգում. նախադասության մեջ, որպես կանոն, առկա են լինում այնպիսի բառեր կամ կապակցություններ, որոնք մատնանշում կամ ակնարկում են, որ ներկա ժամանակաձևերով արտահայտված գործողությունները ոչ թե սոսկ վերաբերում են խոսելու պահին, այլ այդ խոսելու պահը ևս ընդգրկող մի ամբողջ ժամանակաշրջանի։ Վերևի օրինակների հետ համեմատել նաև հետևյալները. «Ամեն օր վեր է կենում առավոտյան ժամի յոթին, արագ հագնվում է, լվացվում, մի կտոր հաց ուտում և շտապում աշխատանքի։ Տուն է վերադառնում ժամի հինգին։ Հապշտապ ճաշում է, մի կես ժամ հանգստանում, կարդում է օրվա թերթերը և նորից սկսում իր քրտնաջան աշխատանքը». «Ամառները սովորաբար անցկացնում եմ գյուղում։ Այնտեղ ես նոր ավյունով ու աշխույժով եմ լցվում։ Հավաքվում են իմ բարեկամներն ու ընկերները, զրույց ենք անում անցած-գնացած օրերի մասին։ Այդ զրույցների մեջ իմ մանկության օրերի բույրերն եմ զգում, սարերում անցկացրած իմ անհոգ օրերն եմ հիշում, գյուղացի պատանիների հնչուն ծիծաղն եմ լսում»։

Այսպիսի ներկան ընդհանուր ձևով կոչվում է սովորույթի կամ կրկնության ներկա։

բ) Ներկայի բայաձևերով կարող են արտահայտվել նաև անցյալում կատարված-վերջացած գործողությունները։ Այսպիսի ներկան կոչվում է պատմական ներկա։ Ներկայի այսպիսի կիրառությունը ավելի շուտ ոճական մի յուրահատուկ հնարանք է և ունի հատուկ նպատակադրում՝ անցյալի գործո-

գործությունները մտովի տեղափոխել ներկա ժամանակակետը և դրանք ներկայացնել որպես խոսելու պահին հարաձիգ կատարվող, այսպիսով կենդանություն ու հավաստիություն հաղորդելով խոսքին, ինչպես՝ «Վարդան Մամիկոնյանը իր կարիճներով սրընթաց անցնում է գետը, մխրճվում է թշնամու հոծ խմբի մեջ, իր հաղթ բազկով հարվածում է աջ ու ձախ, գետին է տապալում բազում թշնամիների, բայց ինքն էլ այդ մարտում ընկնում է քաջաբար». «Խորենացին Աղվանից քարոզությունը դնում է վրաց լուսավորությունից անմիջապես հետո. Մեսրոպը իջնում է Աղվանք, Արսվաղենի և Երեմիայի մոտ, որոնք աշակերտներ են հավաքում և նրան հանձնում: Հետո Մեսրոպը արքունիքից կանչում է Բենիամին թարգմանին, նրանց օգնությամբ հնարում է գրերը և Հովնաթանին վերակացու թողնելով՝ Հայաստան է դառնում» (ՀԱՀԳ, 222):

Զ) Ներկայի բայձևերով են արտահայտվում ապագա այնպիսի գործողություններ, որոնց կատարումը խոսողը ներկայացնում է որպես ստույգ, առարկություն չվերցնող, հավաստի՝ կարծես թե նրանք խոսքի պահին արդեն կատարվելիս լինեն, օրինակ՝ «Հունիսին ավարտում եմ համալսարանը, նշանակում եմ ստանում և ամբողջ ընտանիքով տեղափոխվում եմ գյուղ». «Հենց վաղը տոմս եմ վերցնում, թողնում եմ ամեն ինչ և թռչում եմ Մոսկվա». «Դու գնա, ես հիմա տեսնում եմ Արամին, նրան վերցնում եմ ինձ հետ և գալիս եմ քո եռակից». «Այսօր իրիկնապահին հավաքում եմ բոլոր տղաներին, պայմանավորվում եմք ամեն ինչ մասին, լուծում եմք բոլոր հարցերը և գալիս եմք ձեր տուն: Այնտեղ մի լավ խեֆ եմք անում, ուտում, խմում, ուրախանում եմք, գնում քո ապագա աներոջ տուն և ուզում եմք նրա աղջիկը»:

Այսպիսի կիրառությունները, ինչպես ճիշտ կերպով նշված է հայ քերականական գրականության մեջ, հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին և գրականում տարածված չեն ու քիչ են հանդիպում:

41. Անցյալի անկատար ժամանակ (անկատար դերբայ + էի՝ գնում էի շարքի ձևերը).—Անցյալի անկատար ժամանակը կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ գնում էի—գնում էիր—գնում էր—գնում

էինք—գնում էի—գնում էին: Գալ, լալ, տալ *բայերի անկատարը կազմվում է անկատար երկրորդով՝* գալիս էի, լալիս էի, տալիս էի:

Ա) Անցյալի անկատար ժամանակի հիմնական, գլխավոր իմաստն այն է, որ ցույց է տալիս մի անցյալ ժամանակում ընթացքի մեջ գտնվող, շարունակվող, հարաձիգ գործողություն, օրինակ՝ «Պատանիներն արմունկների հարվածով միմյանց քիթ ու ծնոտներն էին ջարդում: Կանայք ճչալով ու հայհոյելով, իրարու մազերն էին խլկոտում: Պարսիկներն օրհնում էին հանգուցյալի հիշատակը և աղերսում նրա համար երկնային դրախտ: Քրիստոնյաներն աճգռտալ հայհոյում էին անհավատներին» (ՇՔ, 31). «Արջը թաթովն էր տալիս, աշխատում գետնով տալ մարդուն: Ավին մի ձեռքով պաշտպանվում էր նրա հարվածներից, մյուսով փորձում բերդանի փողը արջի երախի մեջ կոխել: Ծառս էր լինում արջը հետևի ոտների վրա, ձյուն շաղ տալիս, ընկնում, բարձրանում» (ԱՔ, 6). «Հրապուրված ձագը վիզը երկարում էր, ձգվում, թույլ ու նորաբույս թևերը շարժում, բայց սիրտ չէր անում թռչելու: Հայր արագիլը իջնում էր բնի վրա, իր թռչնային լեզվով խաչալերում էր զավակին և թռչում էր բնից ուղղահայաց, ոչ շատ բարձր» (ՎԱ, 71):

*Բ) Անցյալի անկատար ժամանակով արտահայտվում են անցյալում որպես կարգ, կանոն, սովորություն կատարվող գործողությունները կամ էլ կրկնվող գործողությունները: Դա այսպես կոչված ընդհանուր կամ սովորույթի ու կրկնության անկատարն է, օրինակ՝ «Հին հույները ծղրիդներին բռնոտում, ածում էին փոքրիկ վանդակներն ու կախում իրենց լուսամուտների շրջանակներին, որ երգեն» (ՀԲ, 1, 380). «Եգիպտացիք իրենց թագավորների համար բուրգեր էին կառուցում, մեռած թագավորների մումիաներն էին պատրաստում». «Ամեն տարի հունիսին մենք մեր անասունների հետ բարձրանում էինք խալ-խալվի բարձունքները, քամիներից պաշտպանված մի տափարակում խփում մեր վրանները և ապրում մինչև ամռան վերջը, մինչև այն օրերը, երբ լուսադեմին լեռնային կանաչը ծածկվում էր ճերմակ եղյամով» (ՎԱ, 18). «Տան ապրուստի մի մասը Մթնաձորի խորքերից էր ճոգում:**

Բացուտներում միրհավ էր որսում, արտերի մոտ կաքավ ու լոր, թակարդ էր լարում աղվեսի համար, երբեմն էլ Մթնաձորի խորքերն էր գնում, ժամերով նստում քարի քամակին, մինչև վարազները ջրի գային» (ԱՔ, 5). «Առավոտից մինչև երկու-երեք ժամը Մուխանը հաշտարար դատարանի առջև սրա ու նրա համար հատը տասը կոպեկով խնդրագրեր էր ճորիճում կամ օրենքներ բացատրում, իսկ այնուհետև օրվա վաստակածը ճանճնում էր օղետներին ամենայն բարեխղճությամբ» (ՇՔ, 26)։

42. ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ (ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ + ԵՄ՝ ԳՆԱԼՈՒ ԵՄ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ գնալու եմ—գնալու ես—գնալու է—գնալու ենք—գնալու եք—գնալու են։

Խոսելով ապառնի ժամանակի մասին՝ նախ պետք է ասել, որ բոլոր լեզուները չեն, որ ապառնիի ժամանակային ձևեր ունեն։ Հ. Աճառյանը այս երևույթի մասին գրում է. «Ներկան և անցյալը իբրև իրողություն որոշ օբյեկտիվ դաղափարներ են. բայց ապառնին, իբրև չեղած, գուցե և չլինելիք մի բան, միշտ ենթակա է որոշ վերապահության։ Համմտ. օրինակ՝ վաղը նա նրան պիտի տեսնի, կտեսնի, տեսած կլինի և այլն, որոնք զանազան ձևի ապառնիներ են։ Այս պատճառով ահա թեև ամեն լեզվի մեջ էլ կա ներկա և անցյալ ձև, բայց նույնիսկ հարուստ խոնարհմունք ունեցող լեզուների մեջ պատահում է, որ ապառնին հատուկ ձև չունենա։ Այդպես է, օրինակ, սեմական լեզուներում և հին հնդեվրոպական լեզուներից շատերում։ Գոթերենում և հին գերմաներենում ապառնի չըկար։ Ֆիններենում ապառնի չկա և նրա տեղ գործ է ածվում ներկան։ Այսպես նաև հունգարերենում, ուր ապառնիի գործածությունը մտավ ԺԶ դարում։ Կելտական վեշ լեզվում ապառնի չկա և ներկան նաև ապառնի է»[117]։

Ժամանակակից հայոց լեզվում ապառնիի սահմանափակությունն արտահայտվում է նրանով, որ ապառնի ժամանա-

---

[117] *Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Բ, Երևան, 1961, էջ 119։*

կակետի համար չկա կատարվող, կատարված կամ կատարելի կերպի և ոչ մի գլխավոր բաղադրյալ ձև, մինչդեռ ներկա և անցյալ ժամանակակետերի համար դրանք կան և ներկայանում են համակարգային ձևով։ Մ. Աբեղյանը, խոսելով ապառնի ժամանակների մասին, գրում է. «Ապառնին և ապառնի անցյալն իրենց բնավորությամբ ցույց են տալիս հարաբերակցություն մի բան անելու. միայն ապառնի ժամանակի ենթական խոսողի ներկայում է հարաբերակցում մի այդպիսի վիճակի կամ մտադրության մեջ, իսկ ապառնի անցյալինը՝ մի անցյալ ժամանակում. ուստի առաջինն իսկապես մի ներկա ժամանակ է կամ ապառնի ներկա, իսկ երկրորդը՝ մի անցյալ ժամանակ»[118]։ Արդեն նըշված է, որ Մ. Աբեղյանը գտնում էր, թե բաղադրյալ ձևերի մեջ ժամանակն արտահայտվում է օժանդակ բայով, իսկ կերպը՝ դերբայով։ Ելնելով այս դրույթից էլ՝ ապառնի ձևերի ժամանակային բովանդակություն տրվում է վերոբերյալ բացատրությունը։

Ընդհանուր ձևով սահմանելով՝ ապառնի ժամանակը ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը կատարվելու է խոսելու պահից հետո. դա կարող է լինել խոսելու պահից անմիջապես հետո կամ շատ երկար ժամանակ հետո. քերականական ժամանակն անտարբեր է ժամանակի այսպիսի ըմբռնման նկատմամբ և, ինչպես նկատել ենք, ֆիզիկապես չի չափվում։

Ստորև գեղարվեստական գրականությունից բերվում են ապառնի ժամանակի կիրառության համապատասխան օրինակներ. «Դե իմ անունով երդվի՛ր, անզգամ, որ էլ Սարոյին դու չես սիրելու, թե չէ՝ տեսնում ես խանչալը հանած՝ Մինչև դատաստակը սիրտդ եմ խրելու» (ՀԹ, 2, 58) «Բիձա՛, էդ էրեխին ծառա՞ ես տալու» (ՀԹ, 1, 313). «Ես իսկույն գնալու եմ հանքերը, կհրամայեմ, որ սենյակները մաքրեն պատրաստեն» (ՇՔ, 108). «Արդյոք հիշո՞ւմ ես. գիշերն էր գալու» (ՎՏ, 25). «Մինչև վերջին րոպեն միամիտ ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է» (ԱՔ, 140). «Կռիվը շատ

---

[118] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 560։

տերությունների մեջ է, աշխարհը խառնվելու է իրար» (ԱԲ, 12). «Շուտով գերմանի թագավորը հաղթվելու է» (ԱԲ, 12). «Էգուց-մյուս օրը որ ձյունը շեմքին չոքեց, հաց ես ուզելու, չէ՞: Էդ շան մազը քեզ համար հաց է դառնալու» (ՎԱ, 46):

Հայ քերականները սովորաբար նշում են, որ սահմանականի ապառնի ժամանակը ամենաքիչ գործածական ժամանակներից մեկն է: Դա, իհարկե, ճիշտ է և բացատրվում է նրանով, որ ապառնիի իմաստ է արտահայտվում նաև ենթադրական և հարկադրական եղանակների ձևերով: Հ. Բարսեղյանն այս հարցի մասին գրում է. «Ապառնիի ձևերը սահմանական եղանակի ամենաասակավ գործածական ձևերից են: Քանի որ ապագայում ընկնող յուրաքանչյուր գործողություն ինքնին անստույգ է և այդպիսին ավելի շուտ ենթադրվում, հնարավոր, ցանկալի կամ անհրաժեշտ է համարվում, քան ստույգ, ուստի խոսքի մոմենտից հետո ընկնող կամ ապառնի ժամանակակետի նկատմամբ առնվող գործողությունները սովորաբար արտահայտվում են ըղձական, հարկադրական և ենթադրական եղանակներով: Այնուամենայնիվ սահմանականի ապառնին իր եղանակային առանձնահատկությամբ տարբերվում է մյուս եղանակների ապառնիի ձևերից, որի շնորհիվ էլ նա պահպանում է իր անկախ գոյությունը»[119]:

Այս հարցի մասին մոտավորապես նույն կարծիքն են հայտնել նաև Վ. Առաքելյանը[120] և Պ. Պողոսյանը[121]: Եվ իրոք. գնալու է, կգնա, պիտի գնա ձևերը իմաստաբանորեն շատ մոտ են և շատ դեպքերում ըստ կիրառության գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Ահա այդ պատճառով էլ սահմանականի ապառնիի բայաձևերը տարածման լայն ոլորտներ չունեն:

43. Անցյալի ապառնի ժամանակ (ապառնի դերբայ + էի՝ գնալու էի շարքի ձևեր).—Սահմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայով

---

119 *Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 196:*

120 *Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա, էջ 89:*

121 *Տե՛ս Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, էջ 73:*

և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ գնալու էի—գնալու էիր—գնալու էր—գնալու էինք—գնալու էիք—գնալու էին:

Անցյալի ապառնին իր կազմությանը համապատասխան՝ ցույց է տալիս մի գործողություն, որը մի անցյալ ժամանակակետում կատարելի էր, ինչպես՝ «Երեկ գնալու էր համալսարան, ճանդիպելու էր ընկերոջը և պայմանավորվելու էր այդ գործի կատարման ժամկետի մասին» «Երկու-երեք շաբաթ անտառում էին գիշերելու» (ՎԱ, 43). «Իհարկե, ինքն իր կալանավոր լինելու մասին ասելու էր» (ՍԽՔ, 62):

Անցյալի ապառնի ժամանակը ապառնիից էլ քիչ գործածական է. սա սահմանական եղանակի ամենաստակավ գործածական ժամանակն է:

44. ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ+ԵՄ՝ ԳՆԱՅԵԼ ԵՄ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).— Վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով՝ գնացել եմ—գնացել ես—գնացել է—գնացել ենք—գնացել եք—գնացել են:

Վաղակատար ժամանակի բայաձևերի հիմնական կիրառությունն այն է, որ նրանք ցույց են տալիս խոսելու պահից առաջ կատարված, ավարտված գործողություն, օրինակ՝ «Գնալով Ռուսիա՝ նա այնտեղից բերել է կեղծ դրամներ և տգետների վրա սաղացրել: Նա խաբել է, գողացել է, գոփել ու կողոպտել է խեղճերին, նա նույնիսկ թուճավորել է իր մի ընկերոջը» (ՇՔ, 8). «Դուցե այդպես է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկա շերտերն են գոյացել և շերտերի վրա պաճել վաղուց անհետացած բույսերի ու սողունների հետքեր» (ԱՔ, 3). «Պախրայի նախիրը եկել է, ջուր խմել ու աճցկացել» (ՎԱ, 39). «Ով գիտե ի՛նչ է ասել, չի ճասկացել էս հիմարը» (ՀՔ, 1, 320). «Գիշերն է փռել իր թևերը մութ, Գիշերն է գերել իմ սիրտը ցաված» (ՎՏ, 114):

Վաղակատար բայաձևերի իմաստային գլխավոր առանձնահատկությունն այն է, որ նրանք, որպես կանոն, ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որոնց խոսողն ինքն ականատես չի եղել, այլ պատմում է կամ ուրիշներից լսելով, կամ էլ հետևանքից դատելով: Վաղակատարի իմաստային այս կողմի վրա ուշադրություն է դարձրել դեռևս Ս.

Պալասանյանը, որ գրում է. «Ել անցյալ դերբայով կազմված վաղակատարը գործ է ածվում, երբ անցած բանի վրա օտարի վկայությամբ է խոսվում կամ թե անցյալ գործողության հետևանքը ներկայումս երևում է. այսպես. լսեցի, թե հայրդ եկել է. Դասերդ պատրաստել ես. Ասում են, թե իշխանը ճիվանդացել է. Այս երեխան վատ բաներ է սովորել»[122]: Վաղակատարի իմաստային այս կողմը հատուկ շեշտում են նաև Մ. Աբեղյանը (տե՛ս «Հայոց լեզվի տեսություն», էջ 563—564), Հ. Բարսեղյանը (տե՛ս «Արդի հայերենի քայի և խոնարհման տեսություն», էջ 186—187), Վ. Առաքելյանը («Հայերենի շարահյուսություն», Ա, էջ 81): Վաղակատարի իմաստային այս կողմն այնքան ցայտուն է դրսևորված, որ Ի. Շիլակաձեն վաղակատարը համարում է չտեսածի ժամանակ[123], ի տարբերություն անցյալ կատարյալի, որ տեսածի ժամանակ է:

Ել իրոք, անցյալ կատարյալի և վաղակատարի համեմատությունը ցույց է տալիս, որ առաջինն արտահայտում է այնպիսի գործողություն, որին խոսողն ականատես է եղել կամ իրեն դնում է գործողության կատարման վայրկյանի մեջ, իսկ վաղակատարն արտահայտում է այնպիսի գործողություն, որին խոսողն ականատես չի եղել, այլ պատմում է ուրիշներից լսելով կամ էլ գործողության հետևանքից դատելով, օրինակ՝ «Ձյուն եկավ»||«Ձյուն է եկել», «Ոչխարը մորթեցին»||«Ոչխարը մորթել են», «Նա կտրվեց»||«Նա կտրվել է», «Փողոցները մաքրեցին»||«Փողոցները մաքրել են», «Նա շատ խմեց»||«Նա շատ է խմել» և այլն:

Իմաստային այս կողմն արտահայտվում է վաղակատար բոլոր ձևերի մեջ: Այսպես, վերևում Շիրվանզադեից բերված «Նա խաբել է, գողացել է, գռփել ու կողոպտել է խեղճերին, նա նույնիսկ թունավորել է իր մի ընկերոջը» նախադասության մեջ վաղակատար բայաձևերը անմիջաբար հուշում են, որ գրողը վերարտադրում է ուրիշների պատմածները Մար-

---

[122] Ստ. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, էջ 197:

[123] Տե՛ս Իվ. Ի. Շիլակաձե, Արդի հայերենի խոնարհման կատեգորիաները, ԼՈՀ, II, էջ 190:

կոս աղա Ալիմյանի մասին։ Դա ավելի բացահայտվում է խոսքի հետագա ընթացքում։

Հայ առանձին քերականներ այն միտքն են արտահայտել, որ վաղակատարը ավելի վաղ անցյալ է, քան անցյալ կատարյալը։ Վ. Առաքելյանն այս հարցի մասին գրում է. «Վաղակատարն այնպիսի անցյալ է, որ ավելի վաղ է կատարվել, քան անցյալ կատարյալը։ Համեմատի՛ր. եկել եմ—եկա, գնացել եմ—գնացի, խոսել եմ—խոսեցի և այլն, որտեղ զուգադրված մասերի համեմատությունը ցույց է տալիս, թե առաջինը ավելի վաղ կատարված գործողություն է արտահայտում, քան երկրորդը։ Այդ զուգադրությունների մեջ կարծեք երկրորդ եզրը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ խոսելու վայրկյանից անմիջապես առաջ է կատարվում»[124]։ Այս նույն միտքն է արտահայտում նաև Ս. Աբրահամյանը[125]։

Սակայն կարծում ենք, որ անցյալ կատարյալի և վաղակատարի միջև ժամանակային այսպիսի տարբերություն չի կարելի տեսնել, թեկուզ և այնքանով, որ քերականական ժամանակը ֆիզիկական չափում չունի։ Հավասարապես կարելի է ասել՝ «Հենց նոր գնաց», «Մի րոպե առաջ գնաց», «Մի ամիս առաջ գնաց», «Մի տարի առաջ գնաց» և «Հենց նոր է գնացել», «Մի րոպե առաջ է գնացել», «Մի ամիս առաջ է գնացել», «Մի տարի առաջ է գնացել» և այլն։ Բոլոր դեպքերում համապատասխան կապակցությունների տարբերությունը միայն այն է, որ անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետում կատարված գործողություն, որին խոսողն ականատես է եղել, իսկ վաղակատարը ցույց է տալիս ներկա ժամանակակետից առաջ կատարված-ավարտված գործողություն, որին խոսողն ականատես չի եղել։

Վաղակատարի իմաստային կողմի մասին խոսելիս միշտ պետք է նկատի ունենալ նաև այն, որ վաղակատարը այս կամ այն չափով ներկայի հատկանիշ ևս ունի, քանի որ խոսողը միշտ ներկան նկատի ունի, որից առաջ գործողությու-

---

[124] Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն*, Ա, էջ 80։

[125] *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն*, *էջ 174—175*։

նը, ճիշտ է, կատարվել-վերջացել է, բայց և գործողության հետևանքը կարող է հարատևել նաև մինչև ներկա ժամանակակետը։ Խոսելով այդ մասին, Մ. Աբեղյանը գրում է. «Վաղակատարը ցույց է տալիս մի անցյալ գործողություն, որի անցած վերջացած լինելն առնվում է ներկայի նկատմամբ. գործողությունը մտածվում է իբրև խոսելու վայրկյանից առաջ անցած, բայց նրա ազդեցությունը կամ հետևանքը հարատևում է մինչև խոսողի ներկան, որը միշտ նկատի ունի խոսողը։ Այս պատճառով այս ժամանակն իր բնավորությամբ մի ներկա ժամանակ է կամ վաղակատար ներկա»[126]։

Մի կողմ թողած այն, որ Մ. Աբեղյանը բաղադրյալ բայաձևերի ժամանակային իմաստը որոշում էր ըստ օժանդակ բայի ժամանակների, համենայն դեպս չի կարելի չնշել, որ վաղակատար ձևերը, երբ նրանց մեջ ցայտուն է դրսևորվում գործողության հետևանքային կողմը, մոտենում են հարակատարի ձևերին և, այսպիսով, ներկայի բնավորություն են ստանում։ Սա միաժամանակ նշանակում է նաև այն, որ օժանդակ բայը, որով բաղադրվում է վաղակատար ժամանակը, վճռական ազդեցություն է ունենում ամբողջ բայաձևի ժամանակային ընկալման վրա։ Այսպիսի օրինակներ են հետևյալները. «Ամպերն եկել են սարերը պատել, Ձորերը լցվել, իրար փաթաթվել» (ՀԹ, 2, 48). «Բարձրագահ Աբուլն ու Մթին սարեր Մեջք-մեջքի տված կանգնել վեհափառ» (ՀԹ, 1, 224). «Մսրա թագավոր եկել է, եկել, եկել մեր դաշտին բանակ է զարկել» (ՀԹ, 2, 114). «Տխուր երեկոն զարկել է վրան» (ՎՏ, 56). «Գիշերն է փռել իր թևերը մութ» (ՎՏ, 114). «Գիշերն է գերել իմ սիրտը ցաված» (ՎՏ, 114). «Արևն արդեն պռունկը դրել է մեր Պնդուկ կոչված սարի ուսին» (ՎԱ, 45)։ Այսպես և՝ «նա պառկել է, ճել է, ճոգնել է, ճստել է» և այլն։

Որանից տարբեր է, երբ վաղակատարն առանձին դեպքերում գործածվում է ներկա ժամանակի իմաստով[127] և հենց

---

126 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 560։

127 Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա, էջ 81. Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, էջ 85։

ներկայի ձևերով կարող է փոխարինվել, օրինակ՝ «Ո՛վ Մարութա Աստվածածին, խաչ պատրաստի իմ աջ բազկին, Ձեզ եմ կանչել էս նեղ ժամին» (ՀԹ, 2, 125). «Ո՛վ բարեգութ, քեզ եմ խնդրել—ինչպես որդիս իր մոր գրկին գնաց՝ կարոտ աչքն աշխարհքին, Նրանք էլ թող իրենց կյանքից կարոտ գնան լիք աշխարհքից» (ՀԹ, 2, 147):

Պայմանական երկրորդական նախադասություններում վաղակատարով կարող են արտահայտվել նաև ապագայում կատարելիք գործողություններ[128], օրինակ՝ «Եթե տեսել եմ՝ կասեմ», «Որ ճանդիպել եմ՝ ձեռիցս չի պրծնի», «Եթե «գերազանց» է ստացել՝ նվեր եմ առնելու», «Որ օրը որ քեզ ժառանգ է տվել, էն օրը կմեռնեք՝ քու կինն էլ, դու էլ» (ՀԹ, 2, 98): Իմաստային-այս երանգը ավելի հաճախ արտահայտվում է անցյալ կատարյալով՝ «Եթե տեսա՝ կասեմ», «Որ հանդիպեցի՝ ձեռիցս չի պրծնի», «Բայց որ գնաց, այլևս փրկություն չկա» (ՎԱ, 10), «Գուցե ճամփի մեջտեղը մի կխտար պատահեց, չսպանե՞մ մերոնց խորոված հասցնեմ» (ՎԱ, 47) և այլն:

Վաղակատարի և անցյալ կատարյալի այս կիրառությունը գրավոր-գրական լեզվում տարածված չէ և հատուկ է ժողովրդական-խոսակցական ոճին:

45. ԱՆՑՅԱԼԻ ՎԱՂԱԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿ (ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ + ԷԻ՝ ԳՆԱՑԵԼ ԷԻ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Անցյալի վաղակատարը կազմվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ գնացել էի—գնացել էիր—գնացել էր—գնացել էինք—գնացել էիք—գնացել էին:

Իր կազմության այս բնույթին համապատասխան՝ անցյալ վաղակատարը ցույց է տալիս մի գործողություն, որը մի անցյալ ժամանակակետից առաջ կատարվել, վերջացել է, ըստ որում, գործողության արդյունքը կամ հետևանքը կարող է հարատևել մինչև տվյալ անցյալ ժամանակակետը, օրինակ՝ «Հեզ ու արծաթափայլ Արածանին գարնանային հեղեղներից կատաղել էր և պղտոր հորձանքներով ծածկել էր յուր ափերը» (ՐՍ, 16). «Դեռ նոր էր դուրս եկել յուր քնարանից և դուրս էր

[128] Տե՛ս Վ. Առաքելյան, էջ 381. Պ. Պողոսյան, էջ 87—88:

եկել յուր զարթնելու ժամից շատ վաղ։ Ո՛չ հագնվել էր, ո՛չ լվացվել էր, ո՛չ սանդրվել էր» (ՐՍ, 23). «Իր հայրական հին տունը խանգարվել էր, կտուրը խոնարհվել, գերանները օջախի ծխից սևացել կախվել էին, կտուրի հողն ու քարը թափվել ներսում» (ԱԲ, 29). «Այս բոլորը այդ ձմռանը չէացել էին։ Ողբայրասպան պատերազմները դեռ չէին վերջացել։ Մեկի որդին էր սպանվել, մյուսի եղբայրն էր հաշմանդամ դարձել։ Ջրկվել էինք հողից է՛լ, ցանքից է՛լ» (ՎԱ, 31). «Ճշմարիտ որ, Գիքորը շատ էր փոխվել, շատ էր մաշվել։ Ինքն էլ էր փոխվել, շորերն էլ» (ՀՔ, 1, 325)։

Վաղակատար բայաձևերի ընդհանուր բնույթին համապատասխան՝ անցյալի վաղակատարը ևս, որպես կանոն, արտահայտում է այնպիսի գործողություն, որին խոսողն ինքն ականատես չի եղել, այլ պատմում է ուրիշներից լսելով կամ էլ գործողության հետևանքից դատելով։ Վերևում բերված օրինակների հետ համեմատել նաև հետևյալները. «Հյուսիսի անտառներից մեկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, ավելի ճիշտ՝ շներին ճրամայել էր գզգզել կնոջը» (ԱԲ, 4). «Ասում էին, որ նախկին սպա է, մարդ էր սպանել, ճստել էր բանտում, հետո անտառ գնացել» (ԱԲ, 4). «Հաբուդից նամակ էր գալիս։ Նրան ճակատ էին ուղարկել, մի անգամ վիրավորվել էր ոտքից, պառկել էր լազարեթում, լավացել ու նորից դիրքերն էին ճամփել» (ԱԲ, 16). «Արջերը տեղ-տեղ կանգ էին առել, ձյան տակից կաղին, հաճար, թափված-փտած տանձ ու խնձոր էին ճարել ու կերել, մի քանի տեղ էլ ծալել-ջարդել էին զկեռի թփերը ու նորից պտուղները խժռել» (ՎԱ, 51)։

Դ. 46. ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ (ԳՆԱՑԻ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).— Անցյալ կատարյալ ժամանակը սահմանական եղանակի միակ պարզ ժամանակն է և կազմվում է բայահիմքով և համապատասխան դիմային վերջավորություններով, ինչպես՝ գնացի—գնացիր—գնաց—գնացինք—գնացիք—գնացին, տեսա—տեսար—տեսավ—տեսանք—տեսաք—տեսան[129]։

Անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս մի անցյալ

---

[129] Անցյալ կատարյալի կազմության մանրամասն նկարագրությունը տե՛ս § 10։

ժամանակակետում առանց որևէ տևականության կատարված, ավարտված-վերջացած գործողություն, ինչպես՝ «Սրաֆիոն Գասպարիչը թաշկինակը շարժեց, դրամները ճնշեցին: Արծաթի ախորժալուր ձայնն էլեկտրական տոկի պես անցավ խուժանի մարմնով, ցնցեց նրան: Քանի մի վայրկյան նա անշարժ էր և անշարժ նայում էր վաղեմի աստիճանավորի դյութական թաշկինակին: Բայց ահա նա շարժվեց, դղրդաց և դիմեց դեպի թաշկինակը» (ՇՔ, 31). «Դու անհոգ նայեցիր իմ վրա Ու անցար քո խաղով կանացի. Ես քեզնից դառնացած հեռացա, Ես քեզնից հեռացա ու լացի» (ՎՏ, 20). «Ես վազեցի ձորը, մտա գետակն ու սկսեցի շոշափել քարերը: Ես այդպիսի քարեր գտա, դասեցի դույլի մեջ, ջուր լցրի վրան ու ծանր բեռիս տակ տնքալով՝ բայլեցի գետակն ի վեր: Անտառը վերջացավ, գետակի գույնն ավելի պայծառացավ» (ՎԱ, 20):

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, անցյալ կատարյալ ժամանակը միշտ շեշտը դնում է գործողության ավարտվածության վրա: Իր այդ իմաստով ու պաշտոնով աշխարհաբարի անցյալ կատարյալը ամբողջությամբ համընկնում է գրաբարի անցյալ կատարյալին և նրա անմիջական շարունակությունն է: Գրաբարում ևս անցյալ կատարյալը ցույց էր տալիս վայրկենական գործողություն, մի անցյալ ժամանակակետում առանց որևէ տևականության ավարտված-վերջացած գործողություն, ինչպես՝ «Խաղաց գնաց միանգամայն ի վերայ տէրութեանն Հոնաց աշխարհին, զորս Քուշանս անուանեն. և զերկեամ մի կռուեալ՝ ոչ կարաց ազդել նոցա: Ապա արձակեաց զմարզիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլս փոխանակ նոցա առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ: Եվ այսպէս ամ յամէ սովորութիւն կարգեաց, և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց»[130]. «Իսկ իբրև ննջեցավ դի նորա, ճրամայեաց ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել»[131]. «Նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ»[132]. «...եկեալ միաբանեաց զզօրս Պարսից, որք լինն, խոռեցին, մեռժեցին,

---

[130] *Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 11—12:*

[131] *Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 54:*

[132] *Անդ, էջ 86:*

անարգելին զտէրութիւնն Պարթևաց, և հաճեցան հաւանութեամբ քնտրել զտէրութիւնն Արտաշրի որդւոյ Սասանայ»[133]. «Իսկ իբրև զայն ամենայն չարիս ետես թագաւորն Պարսից, որ եկին հասին ի վերայ նորա, նեղեցաւ, տագնապեցաւ, տարակուսեցաւ»[134]։

Հ. Աճառյանը աշխարհաբարի անցյալ կատարյալ ժամանակի մասին գրել է. «Կատարյալը ամենից լավ պահպանված ձևն է բարբառներում։ Մինչդեռ գրաբարի ապառնին և ստորադասականը բոլորովին ջնջված, սահմանականի ներկան և անկատարը ստորադասականի տեղն անցած և նրանց փոխարեն նորանոր ձևեր են հնարված, կատարյալը իր պաշտոնով և գործածությամբ անփոփոխ, ձևով էլ շատ քիչ փոփոխված՝ շարունակում է իր գոյությունը թե՛ բարբառների և թե՛ մանավանդ երկու գրական լեզուների մեջ։ Այս կողմից իր մրցակիցն է միայն հրամայականը»[135]։

Անցյալ կատարյալի բնույթն ու էությունը ճիշտ ըմբռնելու համար միշտ պետք է նկատի ունենալ, որ նա տարբերվում է անցյալ ժամանակահատված արտահայտող մյուս բոլոր ժամանակներից։

1. Անցյալ կատարյալը նախ և առաջ տարբերվում է վաղակատարից և անցյալի վաղակատարից։ Եթե վաղակատարը ցույց է տալիս ներկա ժամանակակետից առաջ կատարված-ավարտված գործողություն, ուրեմն և խոսողը միշտ նկատի ունի ներկա ժամանակակետը, որի նկատմամբ և գործողությունը ներկայացվում է որպես ավարտված, օրինակ՝ Հիմա, երբ մենք խոսում ենք, նա գնացել է, իսկ անցյալի վաղակատարը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետից առաջ կատարված-ավարտված գործողություն, ուրեմն և խոսողը միշտ նկատի ունի մի անցյալ ժամանակակետ, որի նկատմամբ և գործողությունը ներկայացվում է որպես կատարված, օրինակ՝ Երեկ, երբ մենք խոսում էինք, նա գնացել էր,—ապա անցյալ կատարյալը ցույց է տալիս անցյալ ժամանակակե-

---

133 Ագաթանգեղայ Պատմութիւն, Թիֆլիս, 1882, էջ 23։

134 Անդ, էջ 28։

135 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա, էջ 570—571։

տում առանց որևէ տևականության կատարված-ավարտված գործողություն, օրինակ՝ Երեկ նա գնաց[136]։

Մյուս կողմից՝ անցյալ կատարյալը, ինչպես նշված է արդեն, տարբերվում է վաղակատարից և անցյալի վաղակատարից նրանով, որ անցյալ կատարյալը ականատեսի ժամանակ է։

2. Իր իմաստով անցյալ կատարյալը տարբերվում է նաև անցյալ անկատարից։ Թեև անցյալ անկատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակիցում տևական, հարաճիկ, ընթացքի մեջ գտնվող գործողություն, ապա անցյալ կատարյալը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակիցում կատարված-ավարտված գործողություն առանց որևէ տևականության, օրինակ՝ Երեկ ժամի 8-ին նա գրում էր||գրեց, կարդում էր||կարդաց, զեկուցում էր||զեկուցեց, ճաշում էր||ճաշեց, նկարում էր||նկարեց, խոսում էր||խոսեց և այլն։

Թեև իմաստային մյուս տարբերությունները հաշվի չառնենք, կարող ենք ասել, որ անցյալ կատարյալն ու անցյալ անկատարը, ինչպես դրանց անվանումներն են արդեն նախանշում, կերպային հակադրություն են կազմում. առաջինը կատարյալ կերպ ունի, այսինքն՝ շեշտում է գործողության վերջը, ավարտվածությունը, իսկ երկրորդը անկատար կերպ ունի, այսինքն՝ արտահայտում է գործողությունն իր ընթացքի, տևականության մեջ, և գործողության վերջը չի երևում։

Համախ միևնույն կամ իրար հաջորդող նախադասություններում հաջորդաբար գործածվում են անցյալ կատարյալն ու անցյալ անկատարը, որոնցից առաջինը ցույց է տալիս գործողության ավարտվածությունը, իսկ երկրորդը՝ ընթացայնությունը, այսպիսով ավելի ցայտուն կերպով դրսևորելով կատարյալ և անկատար կերպերի իմաստային հակադրությունը։ Այսպիսի օրինակներ են հետևյալները. «Իրիկնապահին, երբ անց էին կենում սարերը, մի անգամ էլ երևաց գյուղը հեռու մշուշում» (ՀԹ, 1, 312). «Նամակը կարդաց ու տեղը կանգնած միտք էր անում Գիքորը, դարդ էր անում իրենց տան համար։ Սիրտն էրում էին նամակի տողերը» (ՀԹ, 1,

---

[136] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 562—563։

327). «Նա կատաղեց մարդկային կեղծիքի դեմ ու ասում էր բարձրաձայն» (ՇՔ, 22). «Միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է» (ԱՔ, 192). «Սոնան երկար չդիմադրեց, նա զգվանքով կուլ տվեց իմ բերած կարմրախայտը ու սարսափից ճչաց. ձուկը խլրտում էր նրա ստամոքսում» (ՎԱ, 25). «Մի անգամ էլ թափահարում էի ծառի ճյուղերը, հանկարծ թփից մի անասուն դուրս եկավ ու սկսեց թափվող տանձերը հավաքել» (ՎԱ, 26). «Մարգագետնից բահով կտրած-գուղձերով պատ բաշեցինք գետակի առաջ և նրա հունը փոխեցինք: Ջուրը քարերի ու կանաչի միջով նոր ճանապարհ էր բացում իր համար: Խլրտոցն ընկավ հին հունի մեջ, ձկները խուճապահար դես ու դեն էին ընկնում ու ելք փնտրում մահից փրկվելու» (ՎԱ, 29):

Ինչպես նշված է արդեն, պայմանական երկրորդական նախադասություններում անցյալ կատարյալը կարող է արտահայտել ապագայում կատարելի գործողություններ, օրինակ՝ «Եթե նրան տեսար, այդ մասին անպայման կասես». «Որ իմացավ, նրա ձեռքից չենք պրծնի». «Եթե հանդիպեցի, կասեմ ամեն ինչ» և այլն:

Այսպիսի կիրառություններն ավելի հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին:

II. ԸՂՋԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

47. ԸՂՋԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Ղձական Եղանակն ունի երկու գլխավոր կամ բացարձակ և վեց (2×3) երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր, որոնք ներկայացնում են հետևյալ ընդհանուր պատկերը:

Գլխավոր կամ բացարձակ ժամանակաձևեր	Երկրորդական կամ հարաբերական ժամանակաձևեր
1. գնամ	*ա) գնալիս լինեմ* *բ) գնացած լինեմ* *գ) գնալու լինեմ*

	ա) գնալիս լինեի
2. գնայի	*բ) գնացած լինեի*
	գ) գնալու լինեի

Ղձականը սուբյեկտիվ եղանակներից մեկն է և, ինչպես նշված է, ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, տենչանք, փափագ, ըստ որում, գնամ—գնաս—գնա—գնանք—գնաք—գնան շարքի բայաձևերը իղձ, ցանկություն են ցույց տալիս խոսողի ներկայում, ուստի և դրանք իրենց բնավորությամբ ներկայի հատկանիշ ունեն, իսկ գնայի—գնայիր—գնար—գնայինք—գնայիք—գնային շարքի բայաձևերը իղձ, ցանկություն են ցույց տալիս մի անցյալ ժամանակում, ուստի և դրանք իրենց բնավորությամբ անցյալի հատկանիշ ունեն: Սակայն քանի որ ցանկալի գործողությունը ըստ բովանդակության, կատարման տեսակետից միշտ ապառնի է, ուստի և գնամ շարքի բայաձևերին տրվում է (ներկայի) ապառնի, իսկ գնայի շարքի բայաձևերին՝ անցյալի ապառնի անվանումը:

48. ՂՂՉԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ (ԳՆԱՄ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Ղղձական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է բայահիմքով և համապատասխան վերջավորություններով, ինչպես՝ գնամ—գնաս—գնա—գնանք—գնաք—գնան[137]:

Ա) Ղղձական ապառնիի հիմնական իմաստն այն է, որ ցույց է տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, փափագ ներկայում, օրինակ՝ «Գնամ, սար գնամ, գլուխըս դնեմ գոգին, մորս կարոտն առնեմ՝ այս աշխարհից վաղուց հեռացած մորս կարոտը» (ՎԱ, 7). «Թաղվես մեջն ու կորչես, հա ծող քեզ փնտրեն» (ՎԱ, 11). «Մարդոց ժխորը թողնեմ հեռանամ, Լիք-լցված սրտով նստեմ միայնակ, Գրկեմ վարդերս գլուխ, դժնդակ,—Մեռնող վարդերս փայփայեմ ու լամ» (ՎՏ, 121). «Գնամ կրակածս տեղը նայեմ, ետ գամ» (ՎԱ, 46). «Այսօր գթանք իրարու,—խեղճ լինենք ու չամաչենք, Բախտ չտենչանք ու հեռու տարինները չհիշենք: Լռենք միայն մի մեղմող լռությունով ու հանգչենք,—Թանանք սըրտներս մեռնող,— Որբ լինենք ու չամաչենք: Սիրենք իրար ու

[137] *Ղղձական բայաձևերի կազմության մասին մանրամասն տե՛ս § 11:*

ներեմ,—Զնախատեմ մեկմեկու, էլ չար սիրով չսիրեմ, Անչար լինեմ ես ու դու» (ՎՏ, 129)։

Բ) Իրենց արտահայտած իմաստին համապատասխան՝ ըղձականի ձևերը լայնորեն կիրառվում են նպատակի երկրորդական նախադասություններում, ինչպես՝ «Գնաց, որ տեսնի նրան». «Արեց ամեն ինչ, որ օգնի ընկերոջը»։ Ըղձական բայաձևերի այս կիրառությունն այնքան է տարածված և միևնույն ժամանակ այնքան է արտացոլում այս շարքի ձևերի իմաստն ու կիրառությունը, որ մեր հին քերականները, նկատի ունենալով միայն այսպիսի գործածությունները, այս եղանակը կոչում էին ստորադասական։ Մ. Աբեղյանն իրավացիորեն ցույց տվեց, որ գնամ—գնայի շարքերի ձևերը կիրառվում են ոչ միայն երկրորդական, այլև գլխավոր նախադասություններում, և ելնելով դրանց ձևաբանական իմաստից՝ քննարկվող ձևերն անվանեց ըղձական եղանակի բայաձևեր։ Այդ անվանումն, իհարկե, ճիշտ էր և ամուր կերպով մտավ հայերենի քերականությունների մեջ։ Բայց, այնուամենայնիվ, ըղձական բայաձևերի ամենահիմնական կիրառություններից մեկը նրանց՝ ստորադասական նախադասություններում ունեցած կիրառությունն է։ Ստորև բերվում են այսպիսի օրինակներ։

«Նա ձիու սանձը հանեց բերանից, որ լողալու միջոցին ազատ շունչ առնե» (ՐՍ, 16). «Մոտենում էին աղայի դիակին, որ տեսնեն նվիրական ոտնամանները» (ՇՔ, 22). «Իմաստուն խոսքեր սովորեցի ես, Որ ետապուրեմ զորությամբ մթին, Հոգիդ կախարդեմ ու ճմայեմ քեզ, Ինձ այրող հուրը նետեմ քո սրտին» (ՎՏ, 77). «Դիշատիչները դուրս են գալիս իրենց քներից, որ օգտվեն այդ խառը դրությունից և որս ճանկեն» (ՎԱ, 49). «Շտապում են կշտանալ, որ լուսադեմին գնան անտառի թավուտներում թաքնվեն» (ՎԱ, 49). «Անտառապահները առաջներս կտրեցին, որ պախարներս խլեն» (ՎԱ, 42). «Քահանայի բակում թղթեր էի հավաքում գաղտագողի, որ տանեմ կարդամ» (ՎԱ, 49). «Ձեռքս վեր էի մեկնում, որ բրոնեմ ամպի ճերմակ քուլաները» (ՎԱ, 11)։

Գ) Ըղձականի բայաձևերը հաճախ են կիրառվում նաև պայմանի երկրորդական նախադասություններում. դա ևս

քննարկվող բայաձևերի ամենահատկանշական կիրառություններից մեկն է, ինչպես՝ «Եթե հիվանդը կենդանի ձուկ կուլ տա, կկտրի դանակի պես, կամ՝ դես, կամ՝ դեն» (ՎԱ, 24). «Աչքովդ էլ տեսնես, չհավատաս» (ՎԱ, 13). «Որ բամփեն գլխին, տափին կփակչի» (ԱԲ, 120). «Իրեն որ տեսնես, կզարմանաս» (ԱԲ, 120). «Թե սաղ մնամ, եկող աշունք հարսանիք եմ անելու» (ԱԲ, 10). «Տղե՛րք, սա որ frտնի ոչ, բան չի դառնալ» (ՀԹ, 1, 136)։

Դ) Ըղձական եղանակի բայաձևերը լայնորեն կիրառվում են ուզել, ցանկանալ, խնդրել, պահանջել, ապսպրել, պատվիրել, պատվեր տալ և իմաստային նույն խմբի մեջ մտնող այլ բայերի պահանջով դրված խնդիր երկրորդական նախադասություններում, ինչպես՝ «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք» (ՀԹ, 1, 312). «Ուզեցի թողնեմ ձեռանամ՝ հպարտ է ու չար է,—ասին» (ԵՂ, 42). «Նա ուզում էր, որ իր որդին էլ այդ ճամփով գնա, հյուրասեր լինի» (ԱԲ, 9). «Ուզում է, որ առաջ ես խոսեմ, ուտելիք խրնդրեմ» (ՎԱ, 46). «Ցանկացավ, որ ամեն ինչ մնա առաջվա պես». «Խնդրեց, որ հյուրասենյակում սպասեմ իրեն». «Պահանջում եմ, որ հարցը արդարացի լուծվի». «Պատվիրեց, որ թողնի ամեն ինչ և վերադառնա». «Հայրդ փափագում էր, որ միայն անունդ խլես նրանցից և այդ օտարազգի կնոջից» (ՇՔ, 36). «Նրանից պահանջում էին, որ իր ուխտը դրժե, թողնե կնոջը, ձգե զավակներին» (ՇՔ, 40). «Ապսպրեց, որ Համբոն գա» (ՀԹ, 1, 328). «Սկսեցին համոզել հիվանդին, որ կենդանի ձուկը կուլ տա» (ՎԱ, 25)։

Արդեն մի առիթով նշված է, որ ուզում եմ գնալ, ցանկանում եմ ասել և նման տիպի կապակցությունները ժողովրդական լեզվում արտահայտվում են ըղձականի ձևերով՝ ուզում եմ գնամ, ուզում ես գնաս, ուզում է գնա և այլն։

բ) Ըղձական եղանակի բայաձևերը հաճախ արտահայտում են պատվեր, հորդոր, երբեմն և հրաման, ըստ որում այս իմաստը սովորաբար արտահայտվում է եզակի երկրորդ և հոգնակի առաջին դեմքի ձևերով, ինչպես՝ «Բողա՛ր, հեռո՛ւ, չհարամե՛ս,—գոչեցի ես» (ՎԱ, 22). «Չլինեմ-չիմանամ թողնես մարդ մոտենա էս ձկներին» (ՎԱ, 28). «Ինձ մոտենան

չանես, հա... պատվիրեց լացակումած» (ՍԽՔ, 6). «Ե՛տ չնայես դեպի մեզ, Ո՛տ չդնես էլ տունս» (ՀՔ, 2, 10). «Վախտ ու անվախտ դես ու դեն չընկնես, ձեռդ ընկած փողը fոո ու փուչ չանես» (ՀՔ, 1, 115). «Ա՛յ տղա, չլնեմ-չիմանամ որսի գնաս» (ՎԱ, 43). «Ա՛յ տղա, ճամփին մլուլ չանես, հորդ հաց հասցըրու» (ՎԱ, 44). «Դե՛, ուսիցս իչիր, գնանք կամրախայտ բոնենք, փորը քեզ, միսն ինձ» (ՎԱ, 21). «Մինչև կրակն իջնելը եկ մի քանի հատ էլ բոնենք, խորովենք ուտենք ու գնանք հորթերի մոտ» (ՎԱ, 24). «Եկ դատաստան անենք, պրծնենք» (ՎԱ, 48)։

Զ) Ըղձականի պատվերի, հորդորի իմաստը դրսևորվում է նաև երրորդ դեմքի ձևերում, միայն այդ դեպքում դրանց վրա սովորաբար դրվում է թող եղանակավորող բառը։ Օրինակներ. «Թող օրհնվի հանգուցյալի անբասիր հիշատակը, թող աստված բյուր ի բյուրուց վարձատրե նրա ազնվազարմ ժառանգներին, թող հանգուցյալի այս լուսապայծառ և երկնաճաճանչ գործը ծառայե օրինակ բոլոր ազգայնոց համար» (ՇՔ, 24). «Թող հաստատ լինի մեր թագավորը» (ՀՔ, 2, 35). «Թող շուրջս փովի անանց լուսթյուն, Թող ինձ չնիչեն, թող ինձ մոռանան» (ՎՏ, 10). «Թող թափվի բոլոր կյանքերին կյանք տվող երկնային հեղուկը» (ՎԱ, 4)։

Է) Ըղձականի ձևերով են արտահայտվում ցնծքներն ու օրհնանքները և նմանները, օրինակ՝ «Ի՛, ի, պակսես դու, էլի աչքդ էն սատանի հաջաթի վրա՞ է» (ՎԱ, 44). «—Ջհանդամի սև հատակը տանես,—անիծեց նա ու շուռ եկավ, գոմը մտավ» (ՎԱ, 44). «—Տո՛, բեմուրազ, տո բոյդ տափը դնեմ» (ՎԱ, 46). «Քrfվե՛ս դու, գնա՛ դուռը բաց արա շուտ» (ՀՔ, 319). «Ը՛հ, ճողեմ ձեր գլուխը» (ՀՔ, 1, 317). «Տաշտներդ լի հաց լինի, Դուռներդ միշտ բաց լինի» (ՀՔ, 2, 9). «Ջաղացիդ միշտ հերթ լինի, Մեչքդ ամուր բերդ լինի» (ՀՔ, 2, 10). «Աստված լինի քո օգնականը, բալա՛ ջան,—խոսում էր պապս։—Ջոր քարին գնալիս՝ չոր քարն էլ կանաչի քեզ համար։ Պակաս օրդ խնդությունով անց կենա... աստված բարի ճամփա տա, ոտդ ոչ դիպչի քարի» (ՀՔ, 1, 348). «Անիծվի՛ այն օրը, երբ նա Ցուլլ տվեց իր Սմբատին գնալ օտար երկիր՝ ուսումը շարու-

նակելու, աճիծվի՛ նա, որ կորզեց իրենից իր որդուն» (ՇՔ, 13)։

49. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ (ԳՆԱՅԻ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Ըղձական եղանակի անցյալի ապառնին կազմվում է անկատարի հիմքով և համապատասխան դիմային վերջավորություններով, ինչպես՝ գնայի, գնայիր, գնար, գնայինք, գնայիք, գնային։

Այս բայաձևերն իրենց բնույթին համապատասխան՝ ցույց են տալիս չիրականացած գործողության իղձ, ցանկություն, տենչանք, փափագ մի անցյալ ժամանակում, օրինակ՝ «Բայց ինչո՞ւ գնաց Հայոց թագուհին։ Մնար ու ծիծ տար իր Սողոմոնին—մեր Կոմիտասին։ Մնար ու նրան մայրություն աներ։ Հուսահատության, տրտմության պահին նրա ճակատի ամպերը վաներ, Նախ նրա ոտի, Ու հետո սրտի փշերը հաներ։ Մրնար, Որ նրան մի ողջ ժողովուրդ «Մեծ մայր» անվաներ, «Վեհամայր» կոչեր, Մի ողջ ժողովուրդ սուրբ ձեռքը նրա իր բերնին տաներ, Փեշերը պաչեր» (ՊՍ, 12—13). «Ջուր դառնայիր մորդ փորում, Հասո՛։ Երանի չմտնեիր այս աշխարհը, որ լի է աղաներով։ Երանի չտեսնեիր արևի փայլը» (ՎՓՐԵ, 225). «Գոնե հրացանը հետը լիներ, գոնե յափնջին վերցներ, գոնե մի կտոր հաց ուտեր, լեզուս պապանձվեր, ասա ինչո՞ւ ես անիծում էն աստծու գառ երեխին» (ՎԱ, 48). «Թող լինեի մի կեղեքող, Հավաքեի միշտ փող ու փող։ Կամ թե տերտեր լինեի թող, Խալը վզիս մեռել թաղող, Սուփրի վերև միշտ նստեի, Իմ ապրուստը դրստեի, Ազգն էլ աչքը տնկեր վրաս. Իմ փրկողը դու ես, որ կաս» (ՀԹ, 2, 86)։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, ըղձական անցյալի ապառնին իր եղանակային բովանդակությամբ ամենևին չի տարբերվում ըղձական ապառնիից, միայն անցյալի ապառնին ցույց է տալիս «մի անիրական ցանկություն անցյալում մի բան կատարած լինելու, որ չի կատարվել»[138]։

Սակայն ըղձական անցյալի ձևերը ունեն այն առանձնահատկությունը, որ կարող են վերաբերել ոչ միայն անցյալին, այլև ապառնիին, այսինքն՝ իրենց արտահայտած իմաստով

---

[138] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 590։

մոտավորապես հավասարվում են ըղձականի ապառնիի ձևերին, օրինակ՝ գնամ տեսնեմ նրան‖գնայի տեսնեի նրան, գնաս տեսնես նրան‖գնայիր տեսնեիր նրան, գնա տեսնի նրան‖գնար տեսներ նրան *և այլն։ Սակայն այս զուգահեռ ձևերի միջև, համենայն դեպս, կա իմաստային տարբերություն։ Հ. Բարսեղյանը* գնայի, գնայիր, գնար... *շարքի բայաձևերի իմաստները վերլուծելիս գրում է, որ նրանցով «խոսողը շատ հաճախ արտահայտում է ոչ միայն անցած, չիրականացած ցանկություն, այլև ներկա, իրագործվելիք ցանկություն, իղձ, որի իրականացումը, սակայն, նա գտնում է քիչ հավանական կամ էլ անհնար»*[139]*։ Քննարկվող բայաձևերի այս կիրառությանը նույն բացատրությունն է տալիս նաև Պ. Պողոսյանը՝ գրելով. «Ըղձական ապառնիի իմաստով գործածված ըղձական անցյալը արտահայտում է մի գործողություն, որի կատարման, իրականացման նկատմամբ խոսողը ավելի քիչ հավանականություն, վստահություն ունի, կամ ամենևին հույս չունի, թե կկատարվի»*[140]*։ Արձանագրելով այն փաստը, որ ըղձականի անցյալի ձևերը զանգվածաբար կիրառվում են ապագայի նկատմամբ, այսինքն՝ ցույց են տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն խոսելուց հետո ընկնող մի ապառնի ժամանակում, նշենք, որ, իրոք, ըղձականի ապառնիի ձևերը այդ դեպքում արտահայտում են այնպիսի իղձ, ցանկություն, փափագ, որի իրականացումը խոսողը ներկայացնում է խիստ ցանկալի, բայց անհնար, անիրականանալի կամ համարյա անհնար, անիրականանալի։ Այսպիսի օրինակներ են հետևյալները.*

«Լինեի *չոբան սարերում հեռու,* Գայիր անցնեիր *վրանիս մոտով,* Իրար նայեինք *անուշ կարոտով,* Քնքուշ *ժպտայինք* Հանկարծ *իրարու։* Գնայիր *աղբյուրն ու ետ դառնայիր,* Թեթև *որպես վիթ ելնեիր ձորից,* Մի *ջուր տայիր ինձ քո լի սափորից* Ու *վրանիս մոտ հանգստանայիր»* (*ՎՏ, 281*). «Լիներ, *այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը ննձեր,*

---

[139] *Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 223։*

[140] *Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, էջ 173։*

Սոնան հաց բերեր իրեն, շապիկը fրտեներ ու քրտնած նստեր կողքին» (ԱՒ, 232). «Ոսկե ավազ լինեի, Ջուրդ գար, ինձ տաներ, Արծաթ ամպիկ լինեի, Հովդ գար գուրգուրեր» (ՎՏ, 338)։

III. ՀԱՍՏԱՏՈՂԱԿԱՆ («ԵՆԹԱԴՐԱԿԱՆ») ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

50. ԿԸ-ՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ.— Արևելահայ գրական լեզվի կը-ով կազմված բայաձևերի եղանակային բովանդակության հարցը հայ քերականության պատմության մեջ տարակարծությունների ու վեճերի առիթ է տվել և է՛։

Ստ. Պալասանյանն իր «Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց» աշխատության մեջ կը-ով կազմված բայաձևերը դետեղում է սահմանական եղանակի մեջ՝ կգնամ շարքը համարելով ապառնի, իսկ կգնայի շարքը՝ պայմանական ապառնի[141]։ Հասկանալի է, որ հարցի այսպիսի լուծումն ակնհայտորեն հակասական է։ Եթե կգնայի շարքը իրոք պայմանական գործողություն է արտահայտում, դրանից բխում է, որ սահմանական եղանակի մեջ դետեղվել չի կարող։ Ամենայն հավանականությամբ զգալով այս հակասությունը՝ Ստ. Պալասանյանն իր «Քերականութիւն մայրենի լեզուի» աշխատության մեջ կը-ով կազմված ապառնիի ձևերը թողնում է սահմանականի մեջ, իսկ անցյալի ապառնիի ձևերը համարում է առանձին եղանակ՝ պայմանական եղանակ[142]։

Ինչպես իր տեղում նշված է, արևելահայ գրական հայերենի բայի եղանակների՝ ժամանակակից քերականությունների մեջ ընդունված համակարգը մշակված է Մ. Աբեղյանի կողմից։ Ելնելով այն դրույթից, որ կգնամ շարքի ձևերը հիմնականում արտահայտում են ներկա, իսկ կգնայի շարքի ձևե-

---

[141] *Տե՛ս* Ստ. Պալասանեան, *Ընդհանուր տեսութիւն արևելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870։*

[142] *Տե՛ս* Ստ. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906։*

րը՝ անցյալ ժամանակ՝ Մ. Աբեղյանն այն տեսակետն է պաշտպանում, որ կը-ով կազմված բայաձևերը ենթադրական գործողություն են արտահայտում. այստեղից էլ այս բայաձևերի ենթադրական եղանակ հորջորջումը։ Մ. Աբեղյանը գրում է. «Խոսողն ենթադրական եղանակով ոչ թե ստույգ, հավաստի հաստատություն է անում, այլ անստույգ, մեղմ հաստատություն, կամ թե նա համեստությամբ, քաղաքավարությամբ իր կարծիքն է հայտնում։ Օրինակ՝ սահմ. Նա այժմ տանն է (ստույգ, իրոք է). ենթադր. Նա այժմ տանը կլինի (մենք այդպես կարծում ենք, ենթադրում ենք, կարող է տանը լինել)»[143]։

Հիմք ընդունելով այն, որ կգնամ շարքի ձևերը հիմնականում արտահայտում են ապառնի, իսկ կգնայի շարքի ձևերը՝ անցյալի ապառնի ժամանակ, այլև նկատի ունենալով, որ հատուկ կառուցվածքի նախադասություններում դրանք արտահայտում են որևէ պայմանից կախված գործողություն, Ա. Ղարիբյանի և Գ. Սևակի քերականություններում, բացի ենթադրական գործողության արտահայտումից, կը-ով կազմված *բայաձևերի հիմնական եղանակային բովանդակությունն է համարվում նաև պայմանական գործողության արտահայտումը և, այսպիսով, այս բայաձևերն անվանվում են* պայմանական կամ ենթադրական եղանակի ձևեր[144]։

Քննարկվող հարցին հատուկ անդրադարձել է Մ. Աբրահամյանն իր «Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը» հոդվածում[145]։ *Նա գալիս է այն եզրակացությանը, որ կը-ով բայաձևերը ըստ եղանակային բովանդակության սահմանական ձևեր են։*

Այս հարցը հանգամանորեն քննված է Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության մեջ։ Հեղինակի եզրակացությունը հետևյալն է. «Պայմանական կամ ենթադրական եղանակը ցույց է տալիս

---

[143] *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 574։*

[144] *Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։*

[145] *Տե՛ս ԳՍՏ, 1953, № 9։*

խոսքի մոմենտից հետո կամ մի անցյալ ժամանակակետում կատարվելիք գործողություն, որի կատարման իսկությունը խոսողը հավաստում է հաստատ համոզմունքով, հաճախ էլ պայմանով կամ ենթադրաբար»[146]*։ Հ. Բարսեղյանը միաժամանակ այն միտքն է հայտնում, որ կը-ով կազմված բայաձևերը չի կարելի դետեղել սահմանական եղանակի մեջ։ «Պայմանական եղանակի ոչ միայն անցյալի, այլև ապառնիի ձևերը սահմանական եղանակի բայաձևերի շարքում դասել չի կարելի ոչ միայն նրա համար, որ բացի ստույգ կատարելի գործողություն արտահայտելուց, այդ ձևերով արտահայտվում են նաև պայմանական, ցանկալի, հնարավոր, ենթադրական գործողություններ, այլև նրա համար, որ պայմանական եղանակի ապառնիի ձևերը, երբեմն գործածությամբ նույնանալով սահմանական ապառնիին, այսուամենայնիվ հիմնականում պահպանում են իրենց եղանակային առանձնահատկությունը»*[147]*։*

Իսկ ո՞րն է եղանակային այդ առանձնահատկությունը։ Ուսումնասիրողը դրան տալիս է հետևյալ պատասխանը. «Պայմանական ապառնիի ձևերով արտահայտվում է ոչ թե ստույգ կատարելի գործողություն, այլ կատարելի գործողության ստուգության վերաբերյալ խոսողի հաստատ համոզմունքը, միաժամանակ այդ բանում նրա ցանկությունն ու կամքը, որով խոսողը կարծեք թե ավելի է շեշտում տվյալ գործողության կատարման հնարավորությունը, անհրաժեշտությունը կամ անխուսափելիությունը»[148]*։*

Ուրեմն՝ կը-ով կազմված բայաձևերը սահմանական չի կարելի համարել, որովհետև դրանց մեջ դրսևորվում է խոսողի անձնական վերաբերմունքը։ Հարցը դնելով այսպես՝ Հ. Բարսեղյանը միաժամանակ գտնում է, որ այս բայաձևերի համար «պայմանական կամ ենթադրական անվանումը, որ լրիվ կերպով չի համապատասխանում նրա տակ դրվող բա-

---

[146] *Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953, էջ 251։*

[147] *Անդ, էջ 249—250։*

[148] *Անդ, էջ 250։*

յաձևերի հիմնական եղանակային քերականական իմաստին, առայժմ. պետք է ընդունել պայմանականություն»[149]։

Պ. Պողոսյանը, քննելով կը-ով կազմված բայաձևերը, այն-միտքն է հայտնում, որ դրանք ոչ ենթադրություն են ցույց տալիս, ոչ էլ պայման։ Նա դրանց տալիս է կատեգորիկական եղանակ հորջորջումը։ Կատեգորիկական եղանակի բայաձևերն արտահայտում են «գործողության նկատմամբ խոսողի կատեգորիկ հաստատական կամ ժխտական վերաբերմունքը»[150]։

Վրացի հայագետ Շիլակաձեն քննարկվող հարցը լուծում է Ստ. Պալասանյանի նման՝ կգնամ շարքի ձևերը համարելով սահմանական, իսկ կգնայի շարքի ձևերը՝ պայմանական եղանակի ձևեր[151]։

Քննարկվող հարցի մասին իր կարծիքն է հայտնել նաև Է. Աղայանը։ Իր «Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում» հոդվածում նա գտնում է, որ կը-ով կազմված բայաձևերը մտնում են սահմանական եղանակի մեջ[152]։ Հետագայում լույս տեսած «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ վերանայելով իր տեսակետը՝ նա մեզ հետաքրքրող հարցի մասին գրում է. «Ենթադրական եղանակը գործողությունը ներկայացնում է որպես կանխատեսում, նախազուշակում, կանխադրում։ ...Սրանից ելնելով, մենք գտնում ենք, որ ա) ենթադրական եղանակին պայմանական եղանակային իմաստ վերագրելը ճիշտ չէ. պայմանականությունը այդ եղանակի շարահյուսական մասնավոր իմաստն է, որը կապված է շարահյուսական որոշակի կառուցվածքի հետ. բ) ենթադրական եղանակը պետք է բնութագրել գործողության կանխադրման կամ նախատեսման վերաբերական իմաստով։ Այս տեսակետից, գիտականորեն ավելի ճիշտ կլիներ ենթադրականի փոխարեն գործածել կանխադրական (պոստուլատիվ) անվանումը, բայց մենք չենք ուզում փոխել արդեն երկարամյա գործածություն

---

149 Անդ, էջ 251։

150 Պ. Պողոսյան, Բայի եղանակային ձևերի ոճական կիրառություններն արդի հայերենում, 1959, էջ 32։

151 Տե՛ս «Լեզվի և ոճի հարցեր», II, Երևան, 1964, էջեր 205, 209։

152 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3։

ունեցող տերմինը և միայն դրա սահմանումն ենք համապատասխանեցնում մեր բնութագրությանը»[153]։

Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ քննելով ժամանակակից հայերենի բայի եղանակի քերականական կարգը՝ գտնում է, որ «Ծղանականիշ բուն մասնիկները չ(ը) և կ(ը) նախամասնիկներն են. երկրորդաբար եղանականիշ արժեք են ձեռք բերում վերջավորությունները՝ հիմքային որոշ տարբերությունների հետ միասին»[154]։ Արձանագրելով այն փաստը, որ կ(ը) նախամասնիկը կարող է դրվել միայն ըղձական բայաձևերի վրա՝ ուսումնասիրողը գրում է. «Այն (կ(ը) մասնիկը—Մ. Ա.) ցույց է տալիս հաղորդողի կողմից հաստատաբար, որոշակիորեն ենթադրվող եղելություն։ Օգտագործելով ավանդական անվանումը՝ կ(ը)-ով օժտված բայաձևերը կարելի է կոչել ենթադրական։ Քանի որ կ(ը)-ն հաստատ, որոշակի ենթադրություն արտահայտող մասնիկի արժեք ունի, ուստի կ(ը)-ով օժտված կգնամ, կգրեմ տիպի բայաձևերը սահմանական եղանակի արժեք են ստանում, մանավանդ որ որպես հավաստի արձանագրվող յուրաքանչյուր ապագա (ապառնի) եղելություն ենթադրական է։ Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ենթադրություն հիմնվում է որոշ պայմանի վրա, ուստի և առանց կ(ը)-ի (ըղձական) ձևերի հետ զուգորդվելու դեպքում՝ վերջիններս արտահայտում են պայման, կ(ը)-ով (ենթադրական) ձևերը որոշ պայմանով կատարելի եղելություն (հմմտ. «եթե գա, կգնամ» կամ «եթե գար, կգնայի»). այստեղից էլ կ(ը)-ով ձևերի պայմանական անվանումը»[155]։

Ահա այն հիմնականն ու գլխավորը, ինչ ասել են հայ քերականները կը-ով կազմված ձևերի եղանակային բովանդակության մասին։

Հարց է առաջանում. ինչպե՞ս կողմնորոշվել այս տարբեր ու հակասական տեսակետների ու կարծիքների մեջ. վերջի-

---

[153] Է. Աղայան, *ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, *1967*, էջ *373*։

[154] Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Երևան, *1969*, էջ *224*։

[155] *Անդ*, էջ *226*։

վերջո ո՞րն է կը-ով կազմված ձևերի եղանակային բովանդակությունը։ Առաջին հայացքից կարծեք թե այս հարցադրումն իսկ տարօրինակ է թվում. չէ՞ որ ժամանակակից հայերենի միակ եղանականիշ մասնիկը (եթե պիտի-ն հաշվի չառնենք) կ(ը)-ն է, ուրեմն և դրանով կազմված բայաձևերը պետք է որ իրենց եղանակային բովանդակությամբ հստակորեն հակադրվեն հայերենի մյուս բայական ձևերին և դրսևորեն եղանակային հաստատուն իմաստ։ Հայ քերականների՝ կը-ով կազմված բայաձևերի մասին արտահայտված կարծիքների վերլուծությունից համենայն դեպս կարելի է եզրակացնել, որ կգնամ, կգնայի շարքերի ձևերը եղանակային տեսակետից բազմիմաստ ձևեր են։ Եթե մի կողմ թողնենք պայմանական եղանակային իմաստը, որը ոչ թե բխում է կը-ով կազմված բուն բայական ձևերից, այլ պայմանավորված է շարահյուսական հատուկ կառուցվածքներով, օրինակ՝ «եթե գաս, կանեմ». «եթե գայիր, կանեի» (այսպիսի «պայմանականություն» կարող է արտահայտվել նաև սահմանականի ձևերով, ինչպես՝ **եթե գաս, աճելու եմ. եթե գայիր, աճելու էի**), ուրեմն և եղանակի ձևաբանական արտահայտություն համարվել չեն կարող, ապա կը-ով կազմված բայաձևերը առնվազն արտահայտում են եղանակային հետևյալ իմաստները։

Ա) Հաստատողական եղանակի իմաստ, երբ կ(ը)-ով կազմված ձևերը արտահայտում են ապառնիի գաղափար։ Այդ դեպքում նրանք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ խոսողի կարծիքով, նրա ունեցած հիմունքով հաստատ, անվերապահորեն կատարվելու է մի որևէ ժամանակակետից հետո։ Իրենց արտահայտած իմաստով կ(ը)-ով կազմված բայաձևերը հավասարվում են սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի ձևերին՝ միայն այն տարբերությամբ, որ սահմանական ձևերի մեջ խոսողի անձնական վերաբերմունքը չի դրսևորվում, իսկ կ(ը)-ով կազմված ձևերի մեջ դրսևորվում է, և եղելությունները ներկայացվում են որպես անվերապահորեն, անպայմանորեն կատարելի, ինչպես՝ **Նա գնալու է||Նա կգնա. Վաղը նա զեկուցում է կարդալու||Վաղը նա զեկուցում կկարդա** և այլն։ Նշենք նաև այն, որ սահմանական և հաս-

տատողական իմաստները իրար շատ մոտ իմաստներ են, և այդ իսկ պատճառով էլ կ(ը)-ով ձևերը այդ իմաստով գործածվելիս ազատ կարող են փոխարինվել սահմանական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ձևերով։

Բ) ենթադրական եղանակի իմաստ, *երբ կ(ը)-ով կազմըված բայաձևերը, առանց ապառնիության գաղափարի, արտահայտում են ներկայի (և անցյալի) իմաստ, օրինակ՝ Նա այդ մասին կիմանա (այժմ). Նա հիմա տանը կլինի. Այս ապրանքը հինգ ռուբլով կվաճառվի. Նա ծեր մարդ է, շատ բան կգիտենա. Նա տնտեսող է եղել, փող կուներ և այլն։*

Գ) Սահմանական եղանակի իմաստ, *երբ կ(ը)-ով կազմըված բայաձևերը կիրառվում են ներկա և անցյալ անկատար ժամանակների իմաստով որպես սովորության, կրկնության, սահմանումի ներկա և անցյալ անկատար, ինչպես՝ Նա քուն ու դադար չունի։ Առավոտյան ժամի վեցին վեր կկենա, շտապ մի կտոր հաց կուտի ու կշտապի դաշտ։ Այնտեղ կաշխատի մինչև երեկո։ Տուն գալուց հետո էլ պարապ չի նստի. անպայման մի գործ կանի, մի աշխատանք կկատարի։ Հասկանալի է, որ այդ նույն իմաստը կարող է արտահայտվել նաև անցյալի ապառնիով, ինչպես՝ Նա քուն ու դադար չուներ։ Առավոտյան ժամի վեցին վեր կկենար, շտապ մի կտոր հաց կուտեր ու կշտապեր դաշտ և այլն։*

Հարց է առաջանում՝ այս երեք եղանակային առումներից ո՞րն է գլխավորն ու հիմնականը։ Կարծում ենք, որ հարցը երկընտրանք չի կարող առաջացնել։ Եթե նկատի ունենանք, որ կը-ով կազմված բայաձևերը ենթադրական եղանակի իմաստ են արտահայտում, երբ նրանց մեջ մարում է ապառնիության գաղափարը, իսկ սահմանական եղանակի իմաստ են արտահայտում, երբ երկրորդաբար կիրառվում են որպես կրկնության, սովորության, սահմանումի ներկա և անցյալ անկատար (ի միջի այլոց, արևելահայ գրական լեզվի համար կը-ով կազմված բայաձևերի այս կիրառությունը գուցե կարելի է բացատրել արևմտահայերենի ազդեցությամբ), ապա պարզ կդառնա, որ կը-ով կազմված բայաձևերի եղանակային հիմնական իմաստը հաստատողական իմաստն է, ուրեմն

և դրանք կարելի է կոչել հաստատողական եղանակի բայաձևեր:

Հաստատողական եղանակի բայաձևերն, ինչպես մի քանի անգամ առիթ ենք ունեցել նշելու, կազմվում են ըղձական եղանակի ձևերից, որոնց վրա ավելանում է կ (ձայնավորով սկսվող բայերի դեպքում) կամ կը (բաղաձայնով սկսվող բայերի դեպքում) մասնիկը: Այսպիսով, հաստատողական եղանակը, ըղձականի նման, ունի երկու գլխավոր կամ բացարձակ և վեց երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր, որոնք ներկայացնում են հետևյալ ընդհանուր պատկերը:

Գլխավոր կամ բացարձակ ժամանակաձևեր	Երկրորդական կամ հարաբերական ժամանակաձևեր
1. Կգնամ	ա) գնալիս կլինեմ բ) գնացած կլինեմ գ) գնալու կլինեմ
2. Կգնայի	ա) գնալիս կլինեի բ) գնացած կլինեի գ) գնալու կլինեի

Այժմ անցնենք հաստատողական եղանակի գլխավոր ժամանակաձևերի արտահայտած իմաստների ավելի մանրամասն քննությանը:

51. ՀԱՍՏԱՏՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ (ԿԳՆԱՄ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).— Ա) Հաստատողական եղանակի ապառնի ժամանակի հիմնական իմաստն այն է, որ ցույց է տալիս մի գործողություն, որ խոսողի ունեցած հիմունքով հաստատ, անվերապահորեն կատարվելու է խոսքի պահից հետո ընկնող մի ժամանակահատվածում, ինչպես. «Դու չես հավատում, Սամվե՛լ, բայց շուտով կտեսնես, որ այդ բոլորը կկատարվի» (ՐՍ, 46). «Հացի կտորտանքն ու քարթուն կտան, կերակուրի թերմացքը կտան, շատ անգամ էլ իրենք կուտեն՝ քեզ տալ չեն, բան չկա, ծառայի կարգն էդ ա... Օրեր են, կմթնեն, աճց կկենան» (ՀԹ, 1, 315). «Շուտով կլոե աղմուկը դաժան, Ու սիրտս կզգա քայլերդ փափուկ, Դու նորից կիջնես, նո՛ւրբ իրիկնաժամ» (ՎՏ, 44). «Կշարժեմ նորից քայ-

լերս տարտամ, Լապտերների հեզ լույսը կգրկեմ, Զվարթ անցորդին ուրախ կժպտամ, Ինքս ինձ կերգեմ» (ՎՏ, 147). «Էլի գարուն կգա, կբացվի վարդը, Սիրեկանը էլի յարին կմնա, Կփոխվին տարիքը, կփոխվի մարդը, Բլբուլի երգն էլի սարին կմնա» (ԵՉ, 47). «Վաղը նա կակնարկի, թե ցանկանում է կնոջն ու երեխաներին բերել Մոսկվայից։ Այրին, իհարկե, կզայրանա, կաղերսե, լաց կլինի, բայց փո՛ւլթ չէ, հետո կամ-ակամա կընտելանա իր հարսին ընդունելու մտքի հետ» (ՇՔ, 42)։

Բ) Հաստատողական եղանակի ապառնիի ձևերը առանձին դեպքերում կիրառվում են ենթադրական, հավանական, կարելիական եղելություններ արտահայտելու համար, օրինակ՝ «Աշխարհ է, էդպես էլ կպատահի» (ՎԱ, 37). «Այժմ նա տանը կլինի». «Որ տասը բարեկամ ունենանք, մի քսան էլ թշնամի կունենանք». «—Ձմեռը սարի ջրերում ձկները կապրե՞ն: —Խոր գյոլերում կապրեն» (ՎԱ, 26). «Այս դահլիճում 1000 հոգի կտեղավորվի». «Նա ամեն բանի մասին տեղեկություն ունի. այդ բանն էլ կգիտենա». «Վերջերս չի աշխատում, փողի կարիք կունենա». «Նա հիմա տանը կրակը կթեժացնի, մեզ կսպասի» և այլն։

Ինչպես նշված է արդեն, հաստատողական եղանակի բայաձևերով արտահայտված ենթադրական եղելությունները վերաբերում են ոչ թե ապառնիին, այլ ներկային։

Գ) Հաստատողական եղանակի ապառնիի ձևերը հաճախ արտահայտում են այնպիսի եղելություններ, որոնց կատարումը կախված է այս կամ այն պայմանից. եթե պայմանն իրականանա, ապա գործողությունն անվերապահորեն կկատարվի։ Այսպիսի դեպքերում հաստատողական եղանակի բայաձևերը սովորաբար ուղեկցվում են եթե, թե, որ և այլ շաղկապներ ունեցող երկրորդական նախադասություններով, որոնք իրենց կազմում որպես ստորոգյալ սովորաբար ունենում են ըղձական եղանակի բայաձևեր, ինչպես՝ «Որ էդպես բան անի, կգամ, կռնիցը կբռնեմ, էն քուռը կգցեմ» (ՀԹ, 1, 314). «Եթե բաժանվի այժմյան կնոջից, իրավունք ձեռք բերի ամուսնանալ մի հայ աղջկա հետ, այն ժամանակ նոր կնոջից եղած զավակները կհամարվեն նրա օրինական ժառանգները»

(ՇՔ, 31). «Էն տեսակ կին, ես իմ հոգին, Թե աշուղն էլ ունենար, Առանց զենքի, Առանց զորքի Շահերի դեմ կգնար: Սիրո հնոց, կրակ ու բոց—էնպես աչքեր Թե ժպտան, Մարդու համար Օրվա պես վառ Դիշերները լույս կը տան: Վարդի թերթեր—էնպես շուրթեր Թե հաղթություն քեզ մաղթեն, էլ քեզ ո՛չ շահ, Ո՛չ ահ ու մահ, Ո՛չ զենք ու զորք կը ճաղթեն» (ՀՔ, 2, 136):

Դ) Հաստատողական եղանակի ապառնիի ձևերը հաճախ կիրառվում են սահմանական եղանակի ներկայի բայաձևերի փոխարեն հատկապես որպես սովորության, կրկնության, սահմանամի ներկա, ինչպես՝ «Ջուկը պոչից չեն բռնի, գլխից կբռնեն» (ՎԱ, 23). «Լավ որսկանը ման չի գալ. նա որսը կպահի,—պատմում էր որսկանը» (ՀՔ, 1, 358). «Նա արդեն իր համար գործ է գտել: Ամեն օր աշխատանքից հետո կուտի, կխմի, փքված ու կարմրած տուն կգա, ինձ կամ երեխաների հետ կռիվ կսարքի, կվիճի, կգոռգոռա, շատ դեպքերում էլ տան եղած-չեղածը կտա, կջարդի»:

Ե) Հաստատողականի երկրորդ դեմքի ձևերը արտահայտում են խոսակցին ուղղված պատվեր, հորդոր, հրաման, ինչպես՝ «Էգուց տավարը Սիմոնին պահ կտաս, կգաս բակատեղ, համ հետդ հաց կբերես, համ մեզ կօգնես» (ՎԱ, 43). «Բայց այսօր, չէ՞, այսօր կվճռես անելիքդ» (ՇՔ, 37). «Վաղն առանց այլևայլի կվճարես ոստա Բարսեղին իմ պարտքը, մուրհակը հետ կվերցնես, ինձ համար կպատրաստես հինգ հազար ռուբլի: Ես ունիմ ուրիշ պարտքեր էլ, բոլորը կվճարես ու կգրես իմ հաշվին» (ՇՔ, 49). «Դավի՛թ ջան, ասավ, չեմ թողնի էսպես. Բոզալուկ ուզեր չարչարում են քեզ. էգուց նախիրը կտանես արոտ» (ՀՔ, 2, 102):

52. ՀԱՍՏԱՏՈՂԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ (ԿԳՆԱՅԻ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Այս շարքի բայաձևերն ունեն հաստատողականի ապառնիի եղանակա-ժամանակային առումները՝ միայն անցյալի նշանակությամբ, ուստի և այս ձևերի վրա առանձին կանգ առնելու անհրաժեշտություն չկա: Միայն պետք է նկատի ունենալ, որ անցյալի ապառնիի ձևերը կարող են գործածվել ապառնիի իմաստով, երբ եղելությունների կատարումը պետք է ներկայացնել որպես քիչ հավա-

նական կամ ուղղակի անհավանական (հիշենք ըղձականի անցյալի ապառնիի գործածությունը աւգառնիի փոխարեն), օրինակ՝ «Մի ձուկ լիներ, ի՞նչ կուտեի». «Ա՜խ, մի նրան տեսնեի, ամեն ինչ կասեի, կխայտառակեի»:

Հատկապես տարածված է հաստատողական եղանակի անցյալի ապառնիի ձևերի գործածությունը որպես սովորության կամ կրկնության անցյալ անկատար, ինչպես՝ «Անտառում հանկարծ կերևար, փայտահատի կողքին կկանգներ, կնայեր, թե ինչպես նա արագ կացնահար է անում ծառը։ Մեկ էլ թաքստոցից դուրս կգար, կմոնչար այնպես, որ արջերն էլ էին քնից զարթնում ու որջերում մռռում» (ԱԲ, 4). «Քուրսու մոտ կնստեր, բրդե շալը ուսին կգցեր ու կմտմտար, երբեմն ինքն իրեն կժպտար բարի ու անչար մարդու ժպիտով» (ԱԲ, 132). «Մութն ընկնելուց ժամի զանգերը ծլնգում էին։ Առաջին ծլնգոցին պապս փափախը կնստեր, կխաչակնքեր» (ԱԲ, 130). «Կնստեր իր տեղը, կկոթներ հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրա կթեքեր և թթե զրուցընկեր չունենար, ինքն իրեն կխոսեր և քթի տակ կժպտար» (ԱԲ, 130)։

IV. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

§ 53. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հարկադրականի ձևերը կազմվում են ըղձականից, որոնց վրա սկզբից ավելանում է պիտի կամ պետք է եղանակիչը։ Այսպիսով, հարկադրական եղանակը ևս ունենում է երկու գլխավոր կամ բացարձակ և վեց երկրորդական կամ հարաբերական ժամանակաձև։

Գլխավոր կամ բացարձակ ժամանակներ	Երկրորդական կամ հարաբերական ժամանակներ
1. պիտի գնամ	ա) գնալիս պիտի լինեմ բ) գնացած պիտի լինեմ գ) գնալու պիտի լինեմ
2. պիտի գնայի	ա) գնալիս պիտի լինեի բ) գնացած պիտի լինեի գ) գնալու պիտի լինեի

54. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆԻ ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ (ՊԻՏԻ ԳՆԱՄ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).—Հարկադրականի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի գործողություն, որ խոսողի ներկայացմամբ անհրաժեշտաբար, հարկադրաբար պետք է կատարվի խոսելու պահից հետո, ինչպես՝ «Աշուղ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ, երգեմ պիտի գիշեր-ցերեկ—ես սրտի խաղ պիտի ասեմ» (ՆՁ, 46). «Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն» (ՆՁ, 222). «Ինչո՞վ պետք է խավեմ այդ նախատինքը» (ՐՍ, 26). «Դեդին սովորեցնում էր Գիքորին, թե ի՛նչ պետք է անի, ինչպե՛ս սամովարը գցի, ոտնամանները սրբի» (ՀՔ, 1, 317). «Պետք է կորցնեմ քեզ էնքան հետու, Որ էլ չտեսնես արևը Լոռու» (ՀՔ, 2, 40). «Ե՛ս և միայն ե՛ս պիտի կրեմ նրա պատիժը» (ՇՔ, 41). «Ժառանգության մի մասը պիտի ստանա իր կինը» (ՇՔ, 21). «Պիտի գա, րոպե առ րոպե սպասում ենք» (ՇՔ, 12). «Յոթ տերություն իրար պիտի խառնվեն, հացը պիտի թանկանա, թագավորի խարջը շատանա» (ԱՔ, 12):

55. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆԻ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆԻ (ՊԻՏԻ ԳՐՆԱՅԻ ՇԱՐՔԻ ՁԵՎԵՐ).— Հարկադրականի անցյալի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի գործողություն, որ անհրաժեշտաբար, հարկադրաբար կատարելի էր մի անցյալ ժամանակակետում, օրինակ՝ «Ես նրան պիտի ուղեկցեի և այնտեղ նրա ձին պիտի պահեի, մինչև պապս ներկայանար պրիստավին» (ԱՔ, 138). «Նա պետք է շատ տեղեր գնար, շատ երկրներից՝ անցներ, շատ մարդկանց հետ տեսնվեր և այն նամակները պետք է հասցներ նրանց» (ՐՍ, 60). «Էնտեղ ապրանք պետք է տային մուշտարիների հետ տանելու, չիթ պետք է ծալեր, խանութը սրբեր, իսկ պարապ ժամանակը մուշտարի կանչեր» (ՀՔ, 1, 321). «Հակառակ դեպքում ցմահ պիտի բավականանար իր համեստ ամսականով» (ՇՔ, 20—21). «Մրցքում որոճում էր այն ընթացքը, որ պիտի բռներ իր համար միանգամայն նոր առևտրական աշխարհում» (ՇՔ, 33). «Նրան պիտի հանձներ իր բոլոր գործերը» (ՇՔ, 13):

V. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

56. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.— Հրամայական եղանակն ունի մեկ գլ-

խավոր կամ բացարձակ և երեք երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր՝ հետևյալ կարգով։

Գլխավոր կամ բացարձակ ժամանակ	Երկրորդական կամ հարաբերական ժամանակներ
1. գնա	*ա) գնալիս եղիր* *բ) գնացած եղիր* *գ) գնալու եղիր*

Հրամայական եղանակն ունի միայն երկրորդ դեմքի (եզակի և հոգնակի) բայաձևեր։

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս խոսակցին ուղղված հրաման, կարգադրություն, պատվեր, հորդոր, խնդրանք և արտասանվում են հատուկ հնչերանգով, որը գրավոր լեզվում սովորաբար նշվում է շեշտով։ Թե հրամայականի ձևերը նշված իմաստներից որն են արտահայտում, որոշվում է շարահյուսական կապակցությունից։ Օրինակներ.

«Կատարի՛ր նախ և առաջ հորդ կտակի գլխավոր կետը. բաժանվի՛ր կնոջիցդ ու երեխաներիցդ» (ՇՔ, 48). «Ազատվի՛ր հորդ անեծքից, որդի, ազատվի՛ր և մեզ էլ ազատի՛ր,—կրկնեց նա հարյուր անգամ կրկնածը» (ՇՔ, 41). «Անցածը վերադարձնել չի կարելի, հայր, որևի՛ր,— արտասանեց որդին մի տեսակ խուլ ձայնով» (ՇՔ, 14). «Քնքուշ խոսքերով թախծագրի՛ր, Անխոս ամոթի՛ր ցաված իմ հոգին» (ՎՏ, 27). «Ինձ փաթաթի՛ր որպես ամպ՝ Մութ աչքերդ մեղմ փակի՛ր, ժպտա՛ կրքոտ բերկրությամբ, Անցավ կյանքս խորտակի՛ր» (ՎՏ, 38). «Քո պայծառ գահից մեղմորեն իջի՛ր, Մազերդ փռի՛ր հոգնատանջ կրծքիս, Անուշ երգերով սիրտս պաճուճի՛ր, Ցնորք հուշերով ամոթի՛ր հոգիս» (ՎՏ, 49). «Կրծքիս դի՛ր դեմքը քո տխրադալուկ, Մոռացի՛ր կյանքի տառապանքը մութ, Սուտ կյանքին խառնի՛ր երազանքը սուտ, Իմ սիրո՛ւն մանուկ, իմ քնքո՛ւշ մանուկ» (ՎՏ, 61)։

ԲԱՅԻ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

57. ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.— Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստ» աշխատության մեջ սեռը

դիտված է որպես բայական կարգերից մեկը։ Հայերեն թարգմանության մեջ կարդում ենք. «Բայ է բառ անհոլով, ընդունական ամանակաց, դիմաց և թուոց, որ ներգործութիւն և կիր յարկացոցէ։ Եւ յարևանայ բային ութ. խոնարհմունք, տրամադրութիւնք, տեսակք, ձևք, թիւք, դէմք, ամանակք, լծորդք»[156] (ընդգծումն իմն է—Մ. Ա.)։

Հայ թարգմանչաց տրամադրության բառով է թարգմանել հունարեն diathesis բառը, որ նշանակում է «տրամադրություն», «դրություն»։ Այս անվանումը երկար ժամանակ մնում է գործածության մեջ։ Հետագայում, երբ լատիներենի քերականությունների օրինակով մեզ մոտ հանդես են գալիս գրաբարի քերականության գրքեր, դա փոխարինվում է «սեռ» անվանումով, որ լատիներեն genus բառի թարգմանությունն է։ Լատիներենի քերականությունների մեջ գործածվել է նաև significatio անվանումը. սա ևս մեր քերականները թարգմանել են սեռ բառով։

Ի՞նչ է հասկանում Թրակացին «տրամադրություն» քերականական անվանման տակ։ «Տրամադրութիւնք են երեք,—ասված է Թրակացու աշխատության հայերեն թարգմանության մեջ,—ներգործութիւն, կիր, միջին։ Եւ ներգործութիւն է, որգոն՝ գանեմ և կիր՝ որգոն՝ գանիմ. իսկ միջին է, որ երբեմն ներգործութիւն և երբեմն կիր յարկացոցէ, որգոն՝ մեռանիմ, տանիմ, խորհիմ, սփածայ, մոռացայ»[157]։

«Քերականական արվեստ» գրքի շուրջը գրած մեկնություններում հայ քերականները մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ հիմնականում կրկնում են Թրակացուն։

Դիոնիսիոս Թրակացու աշխատությունը հնում թարգմանվել է նաև լատիներեն։ Հռոմեական քերականները, ելնելով լատիներենի առանձնահատկություններից, որոշ փոփոխություններ են մտցնում Թրակացու քերականական համակարգում։ Նրանք որոշ նորություններ են մտցնում նաև բայի սեռերի ըմբռնման հարցում։ Այսպես, Դիոմեդը լատիներենում

---

[156] **Н. Адонц**, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 22։

[157] *Անդ, էջ 22—23։*

ընդունում է բայի հինգ սեռ՝ ներգործական, կրավորական, միջին, ընդհանուր, բացառական[158]։ Ըստ այս քերականի միջին սեռի են այն բայերը, որոնք ունեն ներգործականի ձև, բայց այդ սեռի իմաստը չեն արտահայտում և չեն կարող փոխարկվել կրավորականի։ Ընդհանուր սեռի են այն բայերը, որոնք միևնույն ձևով կարող են արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռերի իմաստը։ Բացառական սեռի են նրանք, որոնք ունեն կրավորական սեռի ձև, բայց չեն արտահայտում կրավորական սեռի իմաստ։ Մենք այս բնորոշումները բերեցինք, որովհետև 17-րդ դարից սկսվում է հայ քերականության լատինաբան շրջանը, և հայերենի քերականությունները կազմվում են լատիներենի կաղապարներով կամ օրինակով։

Այսպես, 17-րդ դարի հայ քերական Կղեմես Գալանոսը գրաբարում ընդունում է բայի վեց սեռ՝ ներգործական, կրավորական, չեզոքական, հասարակական, ձայնակրական (դրանք այն բայերն են, որոնք ունեն կրավորականի ձև, բայց կրավորական սեռի իմաստ չեն արտահայտում) և անցողական (դրանք ուցան մասնիկով կազմված պատճառական բայերն են)։

Նշենք, որ Կղեմես Գալանոսը, ինչպես և լատինաբան մյուս քերականները, ելնելով լատիներենի բայի խոնարհման առանձնահատկություններից, հաշվի չնստելով գրաբարի փաստերի հետ, արհեստականորեն ստեղծում են ներգործական և կրավորական սեռերի ձևային տարբերակման լրիվ համակարգ՝ այն ժամանակների ու առանձին դեմքերի համար, որոնք գրաբարում ներգործականի և կրավորականի իմաստներն արտահայտում էին նույն բայական ձևով։

Գրաբարի բայի սեռերի հարցը ընդհանուր գծերով Կղեմես Գալանոսի նման է ներկայացվում Հովհաննես Կոստանդ-

---

[158] Տե՛ս «Античные теории языка и стиля», М.—Л, 1936, էջ 127:

նուպոլսեցու[159], Խաչատուր Արզրումեցու[160] և Մխիթար Սեբաստացու[161] քերականություններում։

Գրաբարի բայի սեռերի ըմբռնման հարցում առաջընթաց քայլ է կատարում Բաղդասար Դպիրը։ Նա գրաբարում ընդունում է չորս սեռ՝ ներգործական, կրավորական, ընդմիջական (=չեզոք—Մ. Ա.) և հասարակ, որոնց տալիս է հետևյալ բնորոշումները. «Ներգործական կոչի այն, որ ինքն այլում իրակէ, որպէս այս՝ հովն շարժէ զծովն։ Կրավորական կոչի այն, որ ինքն յայլմէ իրակի, որպէս այս՝ ծովն շարժի ի հովէն։ Ընդմիջական կոչի այն, որ ոչ այլում իրակէ և ոչ յայլմէ իրակի, այլ իւր իրակութիւնն առ ինքն մնայ, այսինքն՝ ինքն իրակէ և ինքն կրէ, որպէս այս՝ ես ննջեցի և ի քուն եղէ։ Եւ հասարակ կոչի այն, որոյ ձայնն մի է և իմացումն երկու. այսինքն՝ միավերջ ձայնիւն է ուրէք ներգործական և ուրէք կրավորական»[162]։

Ինչպես երևում է, հարցի այսպիսի լուծումը ճիշտ էր արտացոլում գրաբարի իրական փաստերը։ Գրաբարի բայի չորս սեռերի դրույթը ընդունվում է հայ քերականների մի զգալի մասի կողմից։ Այսպես, գրաբարի բայի սեռերի հարցը վերոհիշյալ ձևով է ներկայացվում Մ. Չամչյանի[163], Ս. Պալասանյանի[164], Վ. Զալըխյանի[165], Ա. Աբրահամյանի[166] քերականություններում։

---

159 *Տե՛ս* Յովհաննէս Կոստանդնուպոլսեցի, *Ջտութիւն հայկաբանութեան, կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674։*

160 *Տե՛ս* Խաչատուր Արզրումեցի, *Դիրք քերականութեան, Յաւիկօռնայ, 1696։*

161 *Տե՛ս* Մխիթար Սեբաստացի, *Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730։*

162 Բաղդասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան, Կ. Պոլիս, 1736, էջ 48։*

163 *Տե՛ս* Մ. Չամչեան, *Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1859։*

164 *Տե՛ս* Ստ. Պալասանեան, *Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հ. 1, Թիֆլիս, 1874։*

165 *Տե՛ս* Վ. Զալըխեան, *Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1883։*

166 *Տե՛ս* Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952։*

Իհարկե, չի կարելի ասել, թե Բաղդասար Դպիրից հետո հայ բոլոր քերականները գրաբարի համար ընդունել են նույն ներգործական, կրավորական, ընդմիջական և հասարակ սեռերը։ Այսպես օրինակ՝ Գ. Ավետիքյանը և Ա. Բագրատունին գրաբարում ընդունում են էական, ներգործական, կրավորական և չեզոք սեռեր[167]։ Հարցը նաև նույն ձևով է ներկայացնում Ա. Գարագաշյանը[168] և մեր օրերում Հ. Աճառյանը[169]։ Կամ Ստ. Մալխասյանցը ընդունում է միայն ներգործական, կրավորական և չեզոք սեռեր՝ հասարակ սեռ անվանումը փոխարինելով հասարակ բայ անվանմամբ[170]։ Մեր օրերում հարցը նույն ձևով է լուծում Ս. Ղազարյանը[171]։

Սակայն գրաբարի համար ներգործական, կրավորական, չեզոք և հասարակ սեռերի անջատումն ըստ երևույթին ավելի ճիշտ է արտացոլում մեր հին լեզվի քերականական կառուցվածքի իրական պատկերը։

Ինչևիցե, այժմ տեսնենք, թե ինչպես է ներկայացվել աշխարհաբարի, մասնավորապես արևելահայ գրական լեզվի բայի սեռերի հարցը մեր քերականություններում։

Աշխարհաբարի իսկական գիտական ուսումնասիրությունն սկսվում է Ա. Այտընյանից։ Վերջինս իր «Քննական քերականության» մեջ տարբերակում է երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք։ Ա. Այտընյանը սեռ ասելով հասկանում է բայերի տարբեր տեսակներ։ Նա հենց այդպես էլ գրում է. «Բայն երեք տեսակ է՝ 1. ներգործական, 2. կրավորական և 3. չեզոք, որ քերականօրէն բայերուն սեռը կը կոչուի»[172]։

---

167 Տե՛ս Գ. Ալեպիեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815. Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852։

168 Տե՛ս Ա. Գարագաշեան, Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն, Պօլիս, 1881։

169 Տե՛ս Հ. Աճառյան, Գրաբարի ուսուցիչ, Երևան, 1954։

170 Տե՛ս Ստ. Մալխասեանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891։

171 Տե՛ս Ս. Ղազարյան, Գրաբարի դասագիրք, Երևան, 1951։

172 Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, II, էջ 52։

«Սիրել», «սիրուիլ» և «վազել» արտահայտում են բայերի այդ տարբեր տեսակները՝ սեռերը։

Բացի ներգործական, կրավորական և չեզոք բայերից, Այտընյանը տարբերակում է նաև անցողական բայեր, սահմանափակելով այդ անվանման ծավալը։ Եթե գրաբարի նախորդ քերականները անցողական ասելով հասկանում էին ուղան մասնիկով կազմված բոլոր բայերը, անկախ այն բանից, թե դրանք որ սեռի բայերից են կազմված, ապա Ա. Այտընյանը չեզոքներից կազմված պատճառականները համարում է սոսկ ներգործական, իսկ ներգործականներից կազմված պատճառականները՝ անցողական։

Արևելահայ գրական լեզվի առաջին քերական Ստ. Պալասանյանը բայի սեռերի հարցում որդեգրում է Այտընյանի բոլոր դրույթները։ Պալասանյանի համար էլ «բայերը զանազան տեսակ գործողություն են ցույց տալիս, և այդ գործողության զանազանությունը քերականության մեջ կոչվում է սեռ»[173]։ Պալասանյանը արդի հայերենում ընդունում է երեք սեռ՝ ներգործական, կրավորական ու չեզոք, և դրանց տալիս է հետևյալ բնորոշումները. «Ներգործական բայը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ անցնում է ուրիշ առարկայի վրա»։ «Կրավորական բայը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որ մի առարկա կրում է մի ուրիշ առարկայից»։ «Չեզոք բայը ցույց է տալիս առարկայի դրությունը կամ այնպիսի գործողություն, որ չի անցնում ուրիշ առարկայի վրա, այլ գործողի մեջ է մնում»[174]։

Պատճառական բայերի մասին Պալասանյանը նույնությամբ կրկնում է Այտընյանի տեսակետը։ Նորը միայն այն է, որ նա անցողական բայերը կոչում է նաև կրկին ներգործական։

Բայի սեռերի հարցի վերաբերյալ նոր մոտեցումով է հանդես գալիս Մ. Աբեղյանը։ Նրա տեսակետները այս կարգի մասին ամբողջական ձևով շարադրված են «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ։ Իր աշխատության գլուխներից մեկը

---

[173] Ստ. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Թիֆլիս, 1906, էջ 57։

[174] *Անդ*, էջ 55։

Մ. Աբեղյանը վերնագրել է «Խնդիր (բայերի սեռը)»[175]։ Սա նշանակում է, որ լեզվաբանը սեռի կարգը համարում է շարահյուսական կարգ, որ ցույց է տալիս գործողության հարաբերությունը առարկաներին։

Մ. Աբեղյանը արդի հայերենի բայի սեռերի համակարգը ներկայացնում է հետևյալ ձևով։ Ըստ կրող խնդրի նա բայերը բաժանում է երկու խմբի՝ անցողական, որոնք կարող են ուղիղ խնդիր ընդունել, և անանցողական, որոնք չեն կարող ուղիղ խնդիր ունենալ։ Այնուհետև ըստ ենթակայի և բայիմաստի հարաբերության անցողական բայերը բաժանվում են երկու խմբի՝ ա) ներգործական, որոնց ենթական ինքն է կատարում գործողությունը («գրել» և մյուս պարզ ներգործականները), բ) պատճառական, որոնց ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ պատճառ է դառնում մի ուրիշին գործողություն կատարելու (ցն ածանցով կազմված բայերը)։ Նույն հիմունքով անանցողական բայերը ևս բաժանվում են երկու խմբի՝ ա) կրավորական բայեր, որոնք ունեն կամ կարող են ունենալ ներգործող խնդիր (անցողականներից վ ածանցով կազմված բայերը), բ) չեզոք բայեր, որոնք չեն կարող ունենալ ներգործող խնդիր (հեռանալ և մյուս չեզոքները)[176]։

Ջնայած առանձին վիճելի կետերին, Մ. Աբեղյանը բայի սեռերի ուսումնասիրության հարցում մեր քերականագիտության մեջ զգալի ներդրում ունի։ Հայ քերականության պատմության մեջ առաջին անգամ նա փորձում է բայասեռին մոտենալ մյուս քերականական կարգերի զուգահեռությամբ՝ իրար հակադրելով նույն բառի քերականական տարբեր ձևերը, ասենք, գրել—գրվել, հարգել—հարգվել, բարձրանալ—բարձրացնել, մոտենալ—մոտեցնել և այլն,—մի դրույթ, որ համարյա հաշվի չի առնվում և չի խորացվում հետագա շրջանի քերականական աշխատություններում։ Այնուհետև, Մ. Աբեղյանը բավականին մանրամասնորեն քննում է կրավո-

---

[175] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 373։

[176] Անդ, էջ 375—376։

թական բայերի գործածությունները և ճիշտ կերպով նկատում, որ դրանք գործածվում են՝

ա) Բուն կրավորական իմաստով (Արյունն արյունով չի լվացվի).

բ) Անդրադարձ իմաստով (Նրանք լվացվեցին, սանրվեցին).

գ) Փոխադարձ իմաստով (Նրանք համբուրվեցին).

դ) Չեզոք իմաստով (Լույսը բացվեց, աստղերը գունաթափվում են, քամին շարժվում է մեղմիկ)[177]*։*

Հ. Դաղբաշյանը կրավորական բայերի այս առանձին գործածությունները դիտում է որպես սեռային դրսևորումներ և հայերենի բայերը բաժանում հինգ սեռի՝ ներգործական, անդրադարձ, կրավորական, փոխադարձ և չեզոք[178]*։ Հայերենի բայի սեռերի այսպիսի բաժանումը Դաղբաշյանը կատարել է ռուսերենի քերականությունների ազդեցությամբ։*

Այժմ տեսնենք, թե հարցն ինչպես է դրվել վերջին շրջանի քերականական աշխատություններում։

Գ. Սևակը սեռի կարգը դիտում է որպես բայական հիմնական կարգ։ Բայը իբրև խոսքի մաս ունի հետևյալ հիմնական հատկանիշները՝ ա) բայիմաստ, բ) սեռ և գ) խնդրառություն։ Ինչպես գիտենք, Մ. Աբեղյանը բայի խոսքիմաստային հիմնական հատկանիշները համարելով բայիմաստը, դեմքը և դեմքի թիվը՝ դերբայները դուրս էր հանել բայերի շարքից և տեղաբաշխել մյուս խոսքի մասերի մեջ։ Գ. Սևակը քննադատում է Մ. Աբեղյանի տեսակետն այդ հարցում և գտնում, որ դերբայները ևս բայեր են, քանի որ ունեն բայի խոսքիմասային հիմնական հատկանիշները՝ բայիմաստ, սեռ և խնդրառություն[179]*։*

Գ. Սևակը արդի հայերենի բայի մեջ ընդունում է երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք։ Հետագայում իր «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց» աշխատության

---

[177] *Տե՛ս անդ, էջ 378—379։*

[178] *Տե՛ս Յ. Դաղբաշեան, Արեւելահայ աշխարհաբարի քերականութիւնը, Թիֆլիս, 1913, էջ 75։*

[179] *Տե՛ս Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939, էջ 176—179։*

մեջ նա հատուկ ուշադրություն է դարձնում սեռի կարգի արտահայտման միջոցների վրա։ Բայասեռը կարող է արտահայտվել երեք տարբեր միջոցներով՝ բառային միջոցով (օրինակ՝ գրել—ներգործական սեռ, գրվել—կրավորական սեռ), բ) խոնարհման (ձևաբանական) միջոցով (օրինակ՝ գրաբարում՝ գրեմ—գրես—գրէ՝ ներգործական սեռ, գրիմ—գրիս—գրի՝ կրավորական սեռ) և գ) շարահյուսական միջոցով, երբ սեռը հստակ դրսևորվում է միայն շարահյուսական բառակապակցության մեջ (օրինակ՝ գրաբարում՝ ծնանիլ զոք—ներգործական սեռ, ծնանիլ յումեքէ—կրավորական սեռ. Արամ ծնաւ զՏիգրան, Տիգրան ծնաւ յԱրամայ)[180]։

Ա. Ղարիբյանը իր դպրոցական քերականության տարբեր հրատարակություններում մեջ տարբեր բացատրություններ է տվել սեռի կարգին և կատարել է տեսային տարբեր բաժանումներ։ Դպրոցական քերականության դասագրքի 1935 թ. հրատարակության մեջ բայերը բաժանվում են երկու սեռի՝ ներգործական և չեզոք (գրել, նստել). վ և ցն ածանցներով կազմված բայերը սեռերի համակարգի մեջ չեն մտնում, այլ մտնում են կրավորական կամ պատճառական կերպերի մեջ։ Նույն քերականության 1938 թ. հրատարակության մեջ ընդունվում է բայի երեք սեռ՝ ներգործական, չեզոք և կրավորական։ Վ ածանց ունեցող այն բայերը, որոնք ուղղակի ցույց չեն տալիս, թե ենթական իր վրա մի ուրիշից է կրում գործողությունը, կոչվում են կրավորական կերպի (էջ 102)։ Այս դասագրքի 1951 թ. հրատարակության մեջ բոլոր բայերն ըստ ուղիղ խնդրի բաժանվում են երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական (էջ 295)։ Նույն տեղում հեղինակը ծանոթության կարգով խոսում է նաև կրավորական բայերի մասին։ 1953 թ. հրատարակության մեջ Ա. Ղարիբյանը բայի սեռ ասելով հասկանում է «բայի խնդրառական բնույթ» և հայերենի բայերը բաժանում ներգործական, կրավորական, չեզոք և անդրադարձ սեռերի (էջ 331—335)։ Հարցը այս ձևով

[180] *Տե՛ս* Գ. Սևակ, *ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 290։*

է ներկայացված նաև «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա»[181] աշխատության մեջ։

Հայերենի բայասեռի կարգը բավականին հանգամանորեն վերլուծված է Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» աշխատության մեջ։ Հեղինակը փորձում է լուսաբանել սեռի կարգի տրամաբանական-իմացաբանական բովանդակությունը. «Առարկայի ամեն մի գործողություն, շարժում տեղի է ունենում այլ առարկաների հետ նրա ունեցած փոխադարձ կապի ու ներգործության պայմաններում և արտացոլվում է մարդկանց լեզվամտածողության մեջ համապատասխան լեզվական ձևերով»[182]։

«Այն դեպքում, երբ մեր լեզվամտածողության մեջ գործող սուբյեկտը վերցվում է իր ակտիվ դերով և խոսքի մեջ հանդես է գալիս որպես քերականական ենթակա, նրա գործողությունը արտահայտվում է բայերի մի տեսակով։ Երբ տրամաբանական օբյեկտն է վերցվում որպես ենթակա, իսկ սուբյեկտը հանդես է գալիս խնդրի քերականական հասկացությամբ, այս դեպքում ենթակայից տրամաբանական սուբյեկտին ուղղված գործողությունը արտահայտվում է բայերի մի տեսակով։ Եվ վերջապես, այն դեպքում, երբ առարկայի գործողությունը արտահայտվում է ինքնին իր նկատմամբ և այլ առարկաներին միայն առնչակցվող գործողություն, ուր տրամաբանական սուբյեկտը, լինելով քերականական ենթակա, չունի և չի պահանջում գործողության օբյեկտ, նրա գործողությունը արտահայտվում է բայերի մի երրորդ տեսակով»[183]։ Առաջին խմբի բայերը կոչվում են ներգործական սեռի, երկրորդ խմբինը՝ կրավորական, իսկ երրորդ խմբինը՝ չեզոք սեռի բայեր։

Հ. Բարսեղյանը ներգործական բայերի տարատեսակն է համարում պատճառական բայերը, իսկ չեզոք սեռի բայերի տարատեսակն է համարում փոխադարձ ու անդրադարձ (համբուրվել, լվացվել), ինչպես և վ ածանց ունեցող այն բայերը,

---

181 *Տե՛ս* Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, 1954։*

182 Հ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 119։*

183 *Անդ, էջ 120։*

որոնք ցույց չեն տալիս գործողության անցում խնդրից ենթակային (Բուքն ավարտվեց)։

Գ. Սևակից հետո Հ. Բարսեղյանը ևս նկատում է, որ սեռը և կերպը, ի տարբերություն բայական մյուս կարգերի, բայական խոսքիմասային քերականական կարգեր են[184]։

Անդրադառնալով սեռի ձևաբանական արտահայտմանը՝ Հ. Բարսեղյանը գրում է։ «Սեռը որպես քերականական կատեգորիա ունի իր ձևաբանական արտահայտությունը։ Հայերենում ձևաբանական տարբեր արտահայտումներ են ստանում ներգործական և կրավորական սեռերը»[185]։ «Չեզոք սեռը առանձին ձևական արտահայտություն չունի։ Այդ սեռի բայերը ձևով նման են ներգործական սեռի բայերին (ի բաց առյալ պատճառական ձևերը), իսկ երբեմն էլ՝ կրավորականներին (վազել, նստել, մտնել, մոտենալ, հեռանալ, հարձակվել, հուզվել, սանրվել և այլն)»[186]։

Հայերենի բայսեռի կարգը շատ ընդարձակ քննության է ենթարկված Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ։ Բավականին մանրամասնորեն շարադրելով բայսեռի կարգի ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ և ներկայացնելով ռուս և օտարազգի քերականների կարծիքները այդ հարցի վերաբերյալ՝ հեղինակը համադրում է լեզվաբանական տարբեր դպրոցների դրույթներն ու եզրահանգումները՝ ժամանակակից հայերենում ընդունելով անցողական և անանցողական սեռադասեր, ներգործական, կրավորական ու չեզոք սեռեր և պատճառական ու միջին անդրադարձ սեռային առումներ։ Ըստ այդմ, անցողական սեռադասի մեջ մտնում են ներգործական սեռը և պատճառական սեռային առումը, անանցողական սեռադասի մեջ՝ կրավորական ու չեզոք սեռերը և միջին անդրադարձ սեռային առումը[187]։ Նպատակահարմար և ճի՞շտ է արդյոք արդի հայերենի բայսեռի կարգի այսպիսի լուծումը։ Վճռական խոսք չենք ուզում ասել։ Միայն չենք կարող չնշել, որ բայի

184 Անդ, էջ 118։

185 Անդ, էջ 124։

186 Անդ, էջ 130։

187 Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ա, Երևան, 1962, էջ 517։

սեռերի այսպիսի ըմբռնումն ու մեկնաբանությունը առայժմ հայ քերականությունների մեջ ոչ մի արձագանք չի գտել։

Հայերենի բայասեռի կարգին անդրադարձել է նաև Ռ. Իշխանյանը։ Նա այն տեսակետն է զարգացնում, որ բայասեռը արդի հայերենում համընդհանուր բայական կարգ չէ և ընդգրկում է միայն անցողական բայերը, որոնք, ստանալով վ մասնիկը, վերածվում են կրավորական սեռի։ Ժամանակակից հայերենում բայասեռի հակադրություն է միայն՝ «Աշխենը մոռացավ Գևորգին» և «Գևորգը մոռացվեց Աշխենից» տիպի հակադրությունը։ Առաջին դեպքում բայը ներգործական սեռի է և ունի գործող ենթակա, իսկ երկրորդ դեպքում կրավորական սեռի է և ունի չգործող ենթակա[188]*։ Դիտենք, որ դեպքերի մեծամասնության մեջ (ըստ Ռ. Իշխանյանի՝ 80 տոկոսի մեջ) ներգործականներից վ ածանցով կազմված բայերը կրավորական սեռի իմաստ չեն արտահայտում, օրինակ՝ «Դետեր թափվում են ծովերը», «Ձյունը հալվեց, լցվեց առուն» և այլն։ Լեզվաբանը գտնում է, որ այսպիսի դեպքերը բայասեռի արտահայտություններ չեն. այս և նման բայերը առանձին բառային միավորներ են։ Ըստ Ռ. Իշխանյանի՝ սեռերի հետ կապ չունի նաև բարձրանալ—բարձրացնել, մեծանալ—մեծացնել տիպի փոփոխությունը. այստեղ ևս գործ ունենք բառային տարբեր միավորների հետ։*

Ճիշտ է, ներգործական և կրավորական սեռերի հակադրությունը սեռերի ուսմունքի հիմնական կորիզն է կազմում, բայց ժամանակակից հայերենի համար սեռերի այդքան նեղ ըմբռնումը դժվար թե ընդունելի համարվի։

Ընդհանուր գծերով այսպես են ներկայանում հայ լեզվաբանների՝ բայասեռի մասին արտահայտած տեսակետներն ու դրույթները։ Միաժամանակ այդ տեսակետների ու դրույթների շարադրանքով ուրվագծվեցին շրջանակներն այն հարցերի, որոնք վիճելի են կամ տարակարծությունների առիթ են տալիս։ Ստորև կաշխատենք շեշտը դնել հենց այդպիսի հարցերի վրա։

---

[188] *Տե՛ս* Ռ. Իշխանյան, *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, էջ 152—153։*

58. ՍԵՌԸ ՈՐՊԵՍ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳ.— Ձեռնարկելով հայերենի բայասեռի ուսումնասիրությանը՝ ամենից առաջ պետք է պարզենք, թե ինչ քերականական իմաստ է արտահայտում այդ կարգը: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ քերականական ոչ մի կարգ գուցե այնքան տարակարծությունների և տարըմբռնումների առիթ չի տվել, ինչ բայասեռի կարգը: Տարբեր լեզվաբաններ տարբեր ձևով են հասկացել ու բացատրել սեռի արտահայտած քերականական իմաստը և, դրանից ելնելով, տարբեր բնորոշումներ են տվել այդ կարգին:

Մ. Աբեղյանը բայասեռի կարգը սահմանում է որպես օբյեկտի՝ խնդրի կարգ, որը ցույց է տալիս գործողության հարաբերությունը առարկաներին: Ելնելով այսպիսի ըմբռնումից՝ նա սեռերի համակարգի առաջին «տարբերակը» կառուցում է՝ հաշվի առնելով ենթակայի և ուղիղ խնդրի փոխհարաբերությունը (եթե բայը ուղիղ խնդիր է պահանջում, պատկանում է անցողական սեռին, եթե ուղիղ խնդիր չի պահանջում, պատկանում է անանցողական սեռին):

Բայասեռի կարգը նույն կերպ է բնորոշում նաև ռուս լեզվաբան Ա. Ա. Շախմատովը: Նա գրում է. «Մենք տեսանք, որ սուբյեկտի կատեգորիան իր արտահայտությունն է գտել բայի դիմային վերջավորությունների մեջ: Օբյեկտի կատեգորիան, այսինքն՝ հատկանիշի հարաբերությունը օբյեկտին, ձևաբանորեն արտահայտվում է սեռի մեջ»[189]:

Մի քանի լեզվաբաններ պաշտպանում են հակադիր տեսակետը՝ գտնելով, որ սեռի կարգը արտահայտում է բայիմաստով դրսևորվող գործողության և ենթակայի հարաբերությունը:

Ժ. Վանդրիեսը գրում է. «Սեռի տակ հասկանում են բայական գործողության՝ ենթակայի հետ ունեցած հատուկ երանգը»[190]: Նույնն են ասում նաև Ռ. Օ. Շորը և Ն. Ս. Չեմոդանովը: Նրանք գրում են. «Սեռի քերականական կարգը արտահայտում է բայով դրսևորված գործողության հարաբե-

---

[189] **А. А. Шахматов,** Синтаксис русского языка, Л., 1941, *էջ 476:*

[190] **Ж. Вандриес,** Язык, М., 1937, *էջ* 102:

րությունը գործողության սուբյեկտին»[191]*։ Այս լեզվաբաններն ընդունում են երեք սեռ՝ ներգործական, կրավորական և անդրադարձ։ Լ. Անդրեյչինը, ավելի զարգացնելով այս տեսակետը, գտնում է, որ ենթակայի և ստորոգյալի կապը քերականական տեսակետից կարող է լինել կամ ակտիվ, կամ պասիվ։ Ըստ այդմ, նա ընդունում է միայն երկու սեռ՝ ներգործական (սիրել) և կրավորական (սիրվել)*[192]*։ Ինչպես տեսանք, Ռ. Իշխանյանը ևս սեռի ըմբռնումը բացառապես կապում է գործող և ոչ գործող ենթակա հասկացությունների հետ*[193]*։*

Կարծում ենք սեռի կարգի լրիվ բնութագրումը կլինի այդ երկու բնորոշումների համադրումը. բայասեռի կարգը արտահայտում է գործողության, սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունը, խնդրի և ենթակայի փոխհարաբերությունը, գործողության ելակետի և վախճանակետի փոխհարաբերությունը:

Սակայն տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են հասկանում այս բնորոշումը։ Այսպես, ռուս քերականական գրականության մեջ ավելի ու ավելի է տարածում գտնում այն դրույթը, որ սուբյեկտի և օբյեկտի միայն այն հարաբերությունները են սեռային դրսևորումներ, որոնք իրենց ձևաբանական արտահայտությունն են գտնում բայի մեջ։ Օրինակ՝ пугаться *բայը մտնում է ռուսերենի բայի սեռերի համակարգի մեջ, որովհետև ունի իր համապատասխան ոչ-անդրադարձ* пугать *ձևը, իսկ* боиться *բայը չի մտնում սեռերի համակարգի մեջ, սեռ չունի, որովհետև չունի իր համապատասխան ոչ-անդրադարձ ձևը։ Եվ որովհետև ռուսերենում անանցողական բայերը չեն կարող փոփոխվել ըստ սեռերի, ռուս շատ լեզվաբաններ այն կարծիքն են հայտնում, որ ռուսերենում սեռի կարգը համընդհանուր բայական կարգ չէ, այլ մի-*

---

[191] **Р. О. Шор** и **Н. С. Чемоданов**, Введение в языковедение, М., 1945, *էջ* 124:

[192] **Л. Андрейчин**, Грамматика болгарского языка, М., 1949, *էջ 181։*

[193] *Տե՛ս Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոդվումը և խոնարհումը, էջ 152։*

այն անցողական բայի կարգ է։ Անանցողական բայերը դուրս են սեռերի համակարգից, զուրկ են սեռի կարգից։ «Անանցողական բայերը սեռեր չեն կազմում և ընդհանրապես չունեն սեռի կարգ»[194]։

Սեռի այսպիսի ըմբռնումը ռուս քերականագիտության մեջ առաջին անգամ տվել է Ֆ. Ֆ. Ֆորտունատովը։ Վերջինս գրում է, որ ռուսաց լեզվում սեռն արտահայտվում է միայն այն բայերի մեջ, որոնք ունեն СЯ*-ով և առանց* СЯ*-ի հարաբերակից ձևեր*[195]։

Ի՞նչ են տալիս մեզ այդ ուղղությամբ հայոց լեզվի փաստերը. մենք կարո՞ղ ենք ռուս լեզվաբանների նման դնել հարցը և անանցողական բայերը դուրս թողնել սեռերի համակարգից։ Հայոց լեզվի բայերի սեռերի հարցը մենք ռուս լեզվաբանների նման չենք կարող լուծել և ահա թե ինչու։ Հայերենում սեռային փոփոխություն կարող են կրել ոչ միայն անցողական բայերը, օրինակ՝ պիրել—սիրվել, *ճարգել—ճարգվել, առնամարճել—առնամարճվել և այլն, այլև անանցողական բայերը, օրինակ՝* բարձրաճալ—բարձրացնել, *մեծաճալ—մեծացնել, հաճգչել—հաճգցնել և այլն։*

Հայերենում սեռի կարգը օբյեկտ-սուբյեկտային հարաբերություն ցույց տվող համընդհանուր բայական կարգ է և վերաբերում է ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայերին։

59. Բայի սեռերի համակարգը արդի հայերենում.— *Հայոց լեզվի բայը ներկայացնում է բազմաթիվ ձևերի բարդ համակարգ։ Նա ունի դերբայների համակարգ, խոնարհվելով կազմում է եղանակների, ժամանակների, գործողության կերպերի, դեմքերի ու թվերի համակարգ։ Այս բոլորին պետք է ավելացնել, որ հայերենի բայը կազմում է նաև սեռերի համակարգ։*

Հարցին մոտենանք մաքուր ձևաբանական սկզբունքով և տեսնենք, թե սեռերի ի՞նչ համակարգ է կազմում արդի հայերենի բայը։

---

[194] «Современный русский язык», М., 1952, էջ 338։

[195] *Տե՛ս* **Ф. Ф. Фортунатов,** О залогах русского глагола, 1899. **В. В. Виноградов,** Русский язык, М.—Л., 1947, էջ 614։

Հետևյալ երկու խմբի բայերի կազմած սեռային շարքերը պատկերացում կարող են տալ արդի հայերենի սեռերի համակարգի մասին ընդհանրապես։

Առաջին խումբ

Ա շարք	Բ շարք	Գ շարք
բարձրանալ	*բարձրացնել*	*բարձրացվել*
հեռանալ	*հեռացնել*	*հեռացվել*
մեծանալ	*մեծացնել*	*մեծացվել*
ավելանալ	*ավելացնել*	*ավելացվել*
մոտենալ	*մոտեցնել*	*մոտեցվել*

Երկրորդ խումբ

Ա շարք	Բ շարք
գրել	*գրվել*
սիրել	*սիրվել*
հարգել	*հարգվել*
արհամարհել	*արհամարհվել*
սպասարկել	*սպասարկվել*

Բերված երկու խմբերի բայերի ձևաբանական փոփոխությունը հայոց լեզվի բային հատուկ ու տիպական սեռային փոփոխությունն է։

Առաջին խմբի *երեք շարքերը իրար են հակադրված և՛ ձևով, և՛ իմաստով։ Ա շարքի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ պարփակված է ենթակայի մեջ և որի համար ուղիղ խնդիր չի պահանջվում։ Բ շարքի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ դուրս է գալիս ենթակայի շրջանակներից և որի կատարման համար պահանջվում է ուղիղ խնդիր։ Գ շարքի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը խնդրից անցնում է ենթակային։*

Երկրորդ խմբի *ո՛չ Ա, ո՛չ Բ շարքերը սեռային նոր իմաստ չեն արտահայտում։ Նրանք միավորվում են առաջին խմբի Բ և Գ շարքերի հետ։ Այսպիսով, եթե յուրաքանչյուր խմբից վերցնենք մի բայ՝ իր սեռային զույգերով, բերված երկու*

խմբերի տարբեր շարքերը կմիավորվեն իրար հետ հետևյալ ձևով։

Ա. խումբ	Բ խումբ	Գ խումբ
բարձրանալ	*բարձրացնել*	*բարձրացվել*
—	*սիրել՝*	*սիրվել*

Առաջին խմբի բայերի արտահայտած քերականական իմաստը կոչվում է չեզոք սեռի իմաստ, երկրորդ խմբինը՝ ներգործական, իսկ երրորդ խմբինը՝ կրավորական սեռի իմաստ։

Այժմ անցնենք ներգործական, կրավորական և չեզոք սեռի բայերի իմաստների և կիրառությունների ավելի հանգամանալից քննության։

60. ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ.—

Ա) Ներգործական սեռի բայերի արտահայտած քնդհանուր իմաստները.—Ներգործական սեռի բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որի ժամանակ տրամաբանական սուբյեկտի, fեռականական ենթակայի կատարած գործողության համար պահանջվում է ուղղական կամ տրական հոլովով դրված ուղիղ խնդիր լրացում (տրամաբանական օբյեկտ)։

Ներգործական սեռի բայերը միշտ ընդունում են ում և ինչ հարցերը, որոնց պատասխանը լինում է տրական (անձի առում) և ուղղական (իրի առում) հոլովներով դրված ուղիղ խնդիր լրացումը։ Այսպես, էմման զվարճացրեց ո՞ւմ—իր հորը. Սուրենը սիրում է ո՞ւմ, ի՞նչ—հարազատներին, աշխատանքը. Աշոտը ճանաչեց ո՞ւմ, ի՞նչ—ընկերոջը, նկարը. Լեևան գրեց ի՞նչ—նամակ. Երեխան կոտրեց ի՞նչ—բաժակը և այլն։

Ուղիղ խնդրի և ներգործական բայի հարաբերությունները տրամաբանական տեսակետից բազմապիսի կարող են լինել։ Դրանցից նշենք մի քանի ավելի ընդհանուրները։

а) *Ուղիղ խնդիրը կարող է հանդիսանալ այն առարկան, որը ներգործվում, ազդվում, փոփոխվում, մի դրության մեջ է մտնում կամ մի դրությունից մի ուրիշ դրության է անցնում գործողության ազդեցության տակ, օրինակ՝* մորքել ոչխարը,

վերաձորոգել ու զարդարել պատերը, ջարդել ապակին, պըղտորել ջրերը, կոտրել մատիտը, ավերել գյուղը, ճեղքել պաշտպանությունը, պատռել գիրքը, զվարճացնել երեխային, գոլորշիացնել ջուրը և այլն։

б) Ուղիղ խնդիրը կարող է հանդիսանալ այն առարկան, որը որպես արդյունք առաջանում, ստեղծվում է գործողության հետևանքով, օրինակ՝ գիրք գրել, *երջանիկ* ճասարակարգ կառուցել, ստեղծել *հզոր* բանակ, շատրվան պատրաստել, գուլպա գործել, սեղան շինել *և այլն։*

в) Ուղիղ խնդիրը կարող է հանդիսանալ այն առարկան, որի վրա սոսկ ուղղված է գործողությունը իր ամբողջ ծավալով, առանց իրական փոփոխություններ մտցնելու նրա մեջ, ինչպես՝ դիտել երկինքը, նկատել կաճաճց, հարգել ուսուցչին, սիրել հայրենիքը, լսել ձայները, մոռանալ երեխային, զգալ գեղեցիկը *և այլն։ Ինչպես նկատում ենք, այսպիսի ուղիղ խնդիր են ունենում մարդու գիտակցական, իմացական, զգայական և ընդհանրապես մտավոր ու հոգեկան գործունեությունները արտահայտող ներգործական բայերը։*

Ելնելով բայի և ուղիղ խնդրի կոնկրետ բառային իմաստի հետ կապված առանձնահատկություններից՝ բերված բաժանումների ներսում բայի և ուղիղ խնդրի զանազան հարաբերությունները ցույց տվող ավելի ևս փոքր խմբեր կարելի էր առանձնացնել, ինչպես՝ դեպքեր, երբ ուղիղ խնդիրը փոփոխություն է կրում գործողությունից (ջարդել բաժակը), երբ մի դրության մեջ է մտնում գործողության հետևանքով (զվարճացնել երեխային), երբ մի դրությունից մի այլ դրության է անցնում (մեծացնել երեխային), երբ ստեղծվում է գործողությունից (տուն կառուցել), երբ ոչնչանում է գործողությունից (տուն քանդել) և այլն, և այլն։

Այսպիսի բազմաթիվ դեպքեր կարելի է նշել և գործողության ու խնդրի՝ տրամաբանական տեսակետից տարբեր հարաբերությունները ներկայացնել բազմաթիվ կետերի տակ։ Բայց այդ տարբեր հարաբերությունները ոչ թե քերականորեն են արտահայտվում, այլ պայմանավորված են բայի և ուղիղ խնդրի կոնկրետ բառային նշանակությամբ։ Հասկանալի է, որ «տուն կառուցել» և «տուն քանդել», «վախեցնել երեխային»

և «սիրել երեխային», «գիրք գրել» և «գիրք տալ», «երգ երգել» և «հեքիաթ պատմել», «պարտություն կրել» և «հաղթանակ տանել» բառակապակցությունների իմաստը, ելնելով ներգործական բայերի և ուղիղ խնդիրների տարբեր բառային իմաստներից, տարբեր է։ Այս բոլոր բառակապակցությունները, իրարից տարբերվելով հանդերձ բայի և խնդրի տարբեր բառիմաստից բխող առանձնահատկություններով, չեն տարբերվում, սակայն, քերականորեն։ Ներգործական սեռի կարգը, ինչպես և քերականական ամեն մի կարգ, հանդես է գալիս որպես ընդհանրացում. նա վերանում է մասնավորից ու թանձրացականից, տարբեր բայերի բառիմաստի հետ կապված առանձնահատկություններից և գործողության ու առարկայի վերևում բացատրված բոլոր հարաբերությունները արտահայտում է «ներգործական սեռի բայ + ուղղական կամ տրական հոլովով դրված ուղիղ խնդիր» կապակցության միջոցով։

Բ) Յն ածանցով կազմված ներգործական բայերը (ժամանակակից հայերենի պատճառական բայերը).—Հայերենի ներգործական բայերը ըստ իրենց կազմության բաժանվում են երկու խմբի՝ պարզ կազմության ներգործականներ (գրել, բարեկարգել, հաղթահարել, հասկանալ, թողնել և այլն) և բաղադրյալ կազմության ներգործականներ կամ պատճառական բայեր (մտցնել, բարձրացնել, թաքցնել, ավելացնել, հասկացնել և այլն)։ Վերջիններս կազմվում են յն ածանցով չեզոքներից կամ ներգործականներից։ Քննենք դրանք առանձին-առանձին։

a) Չեզոքներից յն ածանցով կազմված բայերը.—Ժամանակակից հայոց լեզվի չեզոք բայերի մի զգալի մասը, ստանալով յն ածանցը, դառնում է ներգործական սեռի, օրինակ՝ մեծանալ—մեծացնել, զարմանալ—զարմացնել, մոտենալ—մոտեցնել, ծիծաղել—ծիծաղեցնել և այլն։ Յն ածանցով կազմված ներգործականները իրենց համապատասխան չեզոքներից նրանով են տարբերվում, որ եթե չեզոք բայերը ցույց են տալիս միայն ենթակայի գործողությունը կամ դրությունը, ինչպես՝ Սուրենը զվարճանում է. Երեխան մեծանում է. Աշակերտը նստում է. Արևը բարձրանում է և այլն, ապա այդ

չեզոքներին համապատասխան ներգործականները, ցույց տալով հանդերձ ենթակայի գործողությունը, միաժամանակ արտահայտում են այն առարկայի պահանջը, որը մի որոշ դրության մեջ է մտնում այդ գործողության ազդեցությամբ, փոխվում, մի դրությունից մի ուրիշ դրության է անցնում, ինչպես՝ Հայրը զվարճացնում է երեխաներին. Մայրը մեծացնում է իր զավակներին. Ուսուցիչը աշակերտին նստեցրեց առաջին սեղանին. Բանվորները բարձրացրին աշխատանքի արտադրողականությունը և այլն։

Հայոց լեզվի քերականների մեծ մասը, ուսումնասիրելով ցն ածանցով կազմված բայերի իմաստները, գալիս է այն եզրակացության, որ այդ բայերը ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ ենթական ինքը չի կատարում, այլ միայն պատճառ է լինում ուրիշին՝ մի գործողություն կատարելու։ Այստեղից էլ ուցան, ցն ածանցով կազմված բայերի «բայք պատճառականք» և «պատճառական բայեր» անվանումը։

Մ. Աբեղյանը գրում է. «Անցողական բայերը նայելով ենթակայի հարաբերությանը բայիմաստի հետ՝ երկու տեսակ են.

1. Ներգործական բայեր, որոնց ենթական ինքը կատարում է գործողությունը, օրինակ՝ Տիգրանը նամակ գրեց.

2. Պատճառական բայեր, որոնց ենթական ինքը չի կատարում գործողությունը, այլ պատճառ է լինում ուրիշին մի բան կատարելու, օրինակ՝ Վարժապետն աշակերտին ուրիշ տեղ նստեցրեց (այսինքն՝ ոչ թե ինքը նստեց, այլ պատճառ դարձավ, արեց, որ աշակերտը նստի)»[196]։

Որքան էլ այդ տեսակետը տարածված լինի, մեր կարծիքով չի կարելի ընդունել։ Վերցնենք հետևյալ նախադասությունները. Ուսուցիչը կորցրեց իր աշակերտի գրքերը. Ուսուցիչը լավ է պատկերացնում իր աշակերտի դրությունը. Ուսուցիչը վերջացրեց աշխատանքը։ Անժխտելի է, որ հնարավոր չի ասել, թե կորցնել, պատկերացնել, վերջացնել բայերով արտահայտված գործողությունները կատարում է ոչ թե ուսուցիչ

---

[196] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 375–376։

ենթական, այլ նրա դրդմամբ կատարում են գրերը, դրությունը, աշխատանքը խնդիրները։

Այժմ վերցնենք հետևյալ նախադասությունները.

ա) Դիրեկտորը նրան ազատեց աշխատանքից։

բ) Դիրեկտորը նրան հեռացրեց աշխատանքից։

ա) Նրանք ավարտեցին աշխատանքը։

բ) Նրանք վերջացրին աշխատանքը։

ա) Նա ամրապնդեց իր դիրքերը։

բ) Նա ամրացրեց իր դիրքերը։

Եթե ընդունենք պատճառական բայերին տրված վերևի բացատրությունը, ապա պիտի ընդունենք նաև, որ բերված համապատասխան առաջին ու երկրորդ նախադասություններ միտքը բոլորովին տարբեր է, որովհետև առաջին օրինակների մեջ գործողությունը կատարում է ենթական (ներգործական սեռի բայեր), իսկ երկրորդ օրինակների մեջ գործողությունը ենթական չի կատարում, այլ նրա դրդմամբ, ստիպմամբ կատարում է մի ուրիշ առարկա (պատճառական սեռի բայեր)։ Բայց անժխտելի է, որ «Դիրեկտորը նրան ազատեց աշխատանքից» և «Դիրեկտորը նրան հեռացրեց աշխատանքից» նախադասությունները, ինչպես և մյուս համապատասխան նախադասությունները, նույն կամ համարյա նույն միտքն են արտահայտում։ Ազատել—հեռացնել, ավարտել—վերջացնել, ամրապնդել—ամրացնել բայերը իրարից տարբերվում են կոնկրետ բառային, բայց ոչ երբեք քերականական նշանակությամբ։ Այսպես և՝ գործողության, ենթակայի և ուղիղ խնդրի փոխհարաբերության տեսակետից հետևյալ համապատասխան նախադասությունների միջև տարբերություն չկա։

ա) Մենք հաջողությամբ ենք իրականացնում այդ որոշումը։

բ) Մենք հաջողությամբ ենք իրագործում այդ որոշումը։

ա) Նա ավելի լայնացրեց իր ուսումնասիրության սահմանները։

բ) Նա ավելի ընդլայնեց իր ուսումնասիրության սահմանները։

ա) Հազիվ կարողացա մեղմացնել նրա բարկությունը։

բ) Հազիվ կարողացա մեղմել նրա բարկությունը։
ա) Նա ուսերը մերկացրել էր։
բ) Նա ուսերը բաց էր արել։
ա) Մանկան թաթիկն զգույշ ետ տարավ բերանից։
բ) Մանկան թաթիկն զգույշ ետ տարավ բերանից։
ա) Բաժակները դիպցրին նրա բաժակին։
բ) Բաժակները խփեցին նրա բաժակին։
ա) Նա դրա վրա էր կենտրոնացրել իր միտքը։
բ) Նա դրա վրա էր բևեռել իր միտքը։
ա) Երեխան հանգցրեց լապտերի լույսը։
բ) Երեխան մարեց լապտերի լույսը։

Առաջին նախադասությունների բայերը, որոնք կազմված են ցն ածանցով, արտահայտում են խնդրի և ենթակայի նույն փոխհարաբերությունը, ինչ երկրորդ նախադասությունների բայերը, որոնք պարզ ներգործական են։ **Մարել և հանգցնել, ամրապնդել և ամրացնել, իրագործել և իրականացնել և այլ** *համապատասխան բայերի արտահայտած քերականական իմաստը նույնն է։ Դրանք բոլորն էլ արտահայտում են մի այնպիսի գործողություն, որ բխում է քերականական ենթակայից և ուղղված է ուղիղ խնդրի վրա։ Այդ երկու խմբերը իրարից տարբերվում են կազմությամբ. առաջինները պարզ, իսկ երկրորդները բաղադրյալ ներգործական բայեր են։*

Սակայն, այսուամենայնիվ, կարելի՞ է պնդել, թե այդ երկու խմբի բայերի միջև, բացի կազմության տարբերությունից, ուրիշ ոչ մի տարբերություն չկա։ Ո՛չ, չի կարելի պնդել։

Ցն ածանցով կազմված բայերը, սեռով, քերականական ընդհանուր իմաստով չտարբերվելով պարզ ներգործականներից, նրանցից տարբերվում են իրենց դրսևորած գործողության յուրահատուկ բնույթով։ Իսկ դա արտահայտվում է նրանում, որ բաղադրյալ ներգործական բայերով դրսևորված գործողությունների ուղիղ խնդիրը ոչ միայն ներգործության ենթարկվող, այլև մի դրության մյուսին անցնող, մի դրության մեջ մտնող, որոշ դեպքերում մի գործողություն կատարող առարկա է։ Ահա սա է բաղադրյալ ներգործականների արտահայտած գործողության յուրահատուկ բնույթը, դրանց «պատճառականությունը»։ Հասկանալի է, որ այդ բա-

յերի գործողության յուրահատուկ բնույթը ստեղծվում է այն պատճառով, որ դրանք ունեն իրենց համապատասխան չեզոքները։ Այսպես, քանի որ, ասենք, վազեցնել, մոտեցնել, ճասցնել, բարձրացնել և այլ բայերն ունեն իրենց համապատասխան չեզոքները, այդ պատճառով էլ դրանցով արտահայտված գործողությունների դեպքում առաջին պլանի վրա է մղվում այն հանգամանքը, որ ենթական ոչ թե ինքն է վազում, մոտենում, ճասնում, բարձրանում, այլ վազեցնում է, մոտեցնում է, ճասցնում է, բարձրացնում է մեկ ուրիշի, իսկ այդ մեկ ուրիշը ոչ միայն վազեցվում է, մոտեցվում է և այլն, այլև վազում է, մոտենում է և այլն[197]*։ Պատճառական բայերով դրսևորված գործողությունը կարծես թե հանդես է գալիս որպես երկփեղկված գործողություն (վազեցնել—վազել, մոտեցնել—մոտենալ)։*

Այստեղից դժվար չէ հետևցնել, որ երբ ցն ածանցով կազմված բայերը չունեն իրենց համապատասխան չեզոքները, չի կարող հանդես գալ նաև այդ բայերի արտահայտած գործողության յուրահատուկ բնույթը՝ «պատճառականությունը»։

Գրաբարից փոխառյալ մի քանի պատճառական բայեր, ինչպես՝ կառուցել, ճառուցել, մատուցել, ճարուցել և այլն, գործածվում են արդի հայերենում, բայց պատճառականություն չեն արտահայտում։ Ինչո՞ւ։ Որովհետև դրանք չունեն իրենց համապատասխան չեզոքները։

Ասում են, թե փակցնել, կասեցնել, յուրացնել, վերցնել բայերը, չնայած որ կազմված են ցն ածանցով, պատճառական չեն կամ կորցրել են պատճառական իմաստը։ Իսկ ինչո՞ւ։ Միայն և միայն այն պատճառով, որ դրանք չունեն իրենց համապատասխան չեզոքները։ Այդ բայերը ավելի քիչ «պատճառականություն» չեն արտահայտում, քան, ասենք, վազեցնել, ճատեցնել, զվարճացնել բայերը։

Ընդհանուր եզրակացությունը կլինի հետևյալը։

Պարզ ներգործական և ցն ածանցով կազմված ներգործական բայերի միջև գործողության, ենթակայի և ուղիղ խրնդրի փոխհարաբերության տեսակետից տարբերություն չկա։

---

197 *Համմ. Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 122։*

Այդ երկու խմբի բայերն էլ ցույց են տալիս մի այնպիսի գործողություն, որ բխում է ենթակայից և անցնում է ուղիղ խնդրի վրա: Պատճառական բայերը, ունենալով իրենց համապատասխան չեզոքները, ի հակադրություն դրանց, ավելի ցայտուն կերպով են դրսևորում ներգործական սեռի բեռականական էությունը՝ ցույց տալով մի այնպիսի գործողություն, որի ազդեցության տակ ուղիղ խնդիրը մի որևէ վիճակի, դրության մեջ է մտնում կամ մի դրությունից անցնում է մի ուրիշ դրության: Պատճառական բայերը իրենց արտահայտած այդ իմաստով ոչ թե հակադրվում են պարզ ներգործական բայերին, այլ նրանց հետ բեռականական մի միասնություն են կազմում՝ միավորվելով ներգործական սեռ բեռականական կարգի տակ:

Այստեղից էլ ելնելով՝ ցն ածանցի հիմնական ֆունկցիան ոչ թե այն է, որ միանալով չեզոք սեռի բայերին ցույց է տալիս մի այնպիսի գործողություն, որը ենթակայի ստիպմամբ, դրդմամբ կատարում է մի այլ առարկա, այլ այն, որ չեզոք սեռի բայերը, ստանալով այդ ածանցը, դառնում են ներգործական սեռի բայեր և ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որի կատարման համար անհրաժեշտ է ուղիղ խնդիր լրացում: Ցն ածանցը սեռային ածանց է:

6) Ներգործականներից ցն ածանցով կազմված բայերը.— *Բայի չեզոքներից, ցն ածանցը կարող են ստանալ նաև մի քանի ներգործական բայեր, ինչպես՝ հագնել—հագցնել, հասկանալ—հասկացնել, հիշել—հիշեցնել, զգալ—զգացնել, լսել—լսեցնել, խմել—խմեցնել, կարդալ—կարդացնել, ուտել—ուտեցնել կամ կերցնել, մոռանալ—մոռացնել և այլն: Այդ բայերի թիվը սահմանափակ է և չի անցնում մի քանի տասնյակից:*

Տեսնենք, թե ինչ տարբերություն կա պարզ ներգործական և համապատասխան պատճառական-ներգործական բայերի իմաստների միջև:

Եթե պարզ ներգործականներն արտահայտում են այնպիսի գործողություն, որի համար պահանջվում է ենթակայի գործողությունն իր վրա կրող առարկա, ինչպես՝ Աղջիկը ճաշ է ուտում. *երեխան կաթ է խմում, ապա ներգործականներից*

կազմված պատճառականները արտահայտում են այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մի առարկա՝ ենթակայի գործողության ազդեցության տակ մի ուրիշ առարկայի վրա ներգործելու համար, ինչպես՝ Մայրը աղջկան ճաշ է ուտեցնում, Հայրը երեխային կաթ է խմեցնում[198]։ Բերված նախադասությունների մեջ առկա է երեք առարկա՝ ա) ենթական՝ ուտեցնողը, խմեցնողը (մայրը, հայրը), բ) ենթակայի ազդեցության տակ բայիմաստով դրսևորված գործողություն կատարողը՝ (աղջիկը, երեխան) և գ) այդ գործողության անմիջական առարկան՝ ուտվողը, խմվողը (ճաշը, կաթը)։

Բերում ենք մի քանի օրինակներ գրականությունից. «Խաբում է, տանում գցում ծովի մեջ, Շորերը առնում, ետ բերում քաղաք, հագցնում իր սև, դարձվոր աղջկան» (Թում.). «Նստեցնում է քեզ մի երկու բաժակ Տաք ջուր խմեցնում կամ մի թաս օղի» (Թում.). «Մեխակ, բա՛ց արա աչքերդ, մի՛ թողնիր, որ եղբայրդ տանի հարստությունը ուտեցնի կնոջն ու զավակներին» (Շիրվ.). «Այդ բոլորը մեզ հասկացնելու համար իր բոլոր ջանքերը գործ է դրել հեղինակը» (Նալբ.). «Ա՜խ, Սեդա, գոնե մի կերպով հասկացնեիր ինձ այդ գաղտնիքը» (Մուր.). «Լևոնին այդ բոլորը ճիշեցնում էր իսկական ռազմաճակատ» (Զար.). «Սովորեցնում էին նրան կրոն, լեզուներ և դպրություն» (Րաֆֆի). «Մի՛ ճիշեցնեիր ինձ այդ անունը» (Րաֆֆի)։

Ներգործականներից ցն ածանցով կազմված բայերը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, թելադրում են երկու հարց՝ ում, ինչ, և պահանջում են այդ հարցերի պատասխանը որպես տրականով դրված անուղղակի խնդիր և ուղղականով դրված ուղիղ խնդիր, ինչպես՝ հագցնել ո՞ւմ, ի՞նչ—երեխային շորերը. խմեցնել ո՞ւմ, ի՞նչ—հիվանդին կաթը. հիշեցնել ո՞ւմ, ի՞նչ — ուսանողին իր պարտականությունը. հասկացնել ո՞ւմ, ի՞նչ — աշակերտին դասը. զգացնել ո՞ւմ, ի՞նչ — մեկին իր սխալը և այլն։

Հայերենի համար որպես ընդհանուր կանոն չի կարելի

---

198 *Տե՛ս անդ, էջ 123։*

սահմանել, թե ներգործական բայերը, ստանալով պատճառական ածանցներ, լրիվ փոխում են իրենց բառային ու քերականական նշանակությունը։ Այսպես, արդի հայերենում պտտել—պտտեցնել, մեղմել—մեղմացնել, կրճտել—կրճտացնել *համապատասխան զույգերը համանիշներ են և իրարից տարբերվում են սոսկ իմաստային երանգով։ Այսպիսի զուգահեռ ձևերը ավելի շատ էին գրաբարում, ինչպես՝* ազատեմ—ազատեցուցանեմ, փարատեմ—փարատեցուցանեմ, գայթագղեմ—գայթագղեցուցանեմ, հնազանդեմ—հնազանդեցուցանեմ, անջատեմ—անջատեցուցանեմ, բերկրեմ—բերկրեցուցանեմ, բորբոքեմ—բորբոքեցուցանեմ, գլորեմ—գլորեցուցանեմ, դանդաղեմ—դանդաղեցուցանեմ, դղրդեմ—դղրդեցուցանեմ, զատանեմ—զատուցանեմ, ընդարձակեմ—ընդարձակեցուցանեմ, ընկղմեմ—ընկղմեցուցանեմ, խափանեմ—խափանեցուցանեմ, խոտորեմ—խոտորեցուցանեմ, խռովեմ—խռովեցուցանեմ, ծաւալեմ—ծաւալեցուցանեմ, կազդուրեմ—կազդուրացուցանեմ, հաւասարեմ—հաւասարեցուցանեմ, շշտապեմ—շտապեցուցանեմ, սթափեմ—սթափեցուցանեմ և *այլն։* Ուցան *ածանցը այսպիսի դեպքերում ավելի է ուժեղացնում բայի ներգործական նշանակությունը և նրան տալիս է պատճառականության երանգ։*

Պատճառական բայեր են կազմվում նաև տալ *բայի հարադրությամբ։* Տալ *բայով պատճառականներ կարելի է կազմել համարյա բոլոր ներգործական բայերից, ինչպես՝* սիրել—սիրել տալ, *բերել*—բերել տալ, *զարդարել*—զարդարել տալ, *վերջացնել*—վերջացնել տալ, *հագցնել*—հագցնել տալ, *հեռացնել*—հեռացնել տալ, *ավելացնել*—ավելացնել տալ *և այլն։*

Տալ *բայի հարադրությամբ կազմված պատճառականները ցույց են տալիս մի գործողություն, որ ոչ թե ենթական ինքն է կատարում, այլ կատարել է տալիս մի ուրիշին։ Այսպես՝* գրեց *նշանակում է* ինքը գրեց, *իսկ* գրել տվեց—*պատճառ դարձավ, ստիպեց, որ* ուրիշը գրի. կառուցեց *նշանակում է* ինքը կառուցեց, *իսկ* կառուցել տվեց—*պատճառ դարձավ, ստիպեց, որ* ուրիշը կառուցի:

Բոլոր դեպքերում չէ, որ ներգործական բայերն անպայ-

մանորեն ուղիղ խնդիր են ունենում։ Երբեմն ներգործական սեռի բայերը գործածվում են առանց ուղիղ խնդրի։ Այսպիսի դեպքերում նրանք ցույց են տալիս շարունակական, կըրկնողական գործողություն՝ որպես ենթակայի մշտական, մնայուն, բնութագրող հատկանիշ, օրինակ՝ Նա լավ է կարդում. Միշտ գրում է. Քիչ է ուտում և այլն։ Այսպիսի կիրառությունը ռուս քերականները համարում են ներգործական բայերի բացարձակ գործածություն։

61. ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ.—

Ա) Ներգործական ու կրավորական սեռերը որպես ամիջական հակադրություններ և ներգործական ու կրավորական կառուցվածքի նախադասություններ.— Ժամանակակից հայոց լեզվում կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործական սեռի բայերից՝ վ ածանցով։ Սակավ բացառություններով, յուրաքանչյուր ներգործական բայ ունի իր համապատասխան վ ածանցով կրավորականը, ինչպես՝ պարգևատրել—պարգևատրվել, ուսումնասիրել—ուսումնասիրվել, ծաղրել—ծաղրվել, կալանավորել—կալանավորվել, ջարդել—ջարդվել, բերել—բերվել, հրավիրել—հրավիրվել, բարձրացնել—բարձրացվել և այլն։

Ներգործական սեռի բայերով կազմվում են ներգործական կառուցվածքի նախադասություններ, օրինակ՝ «Դիրեկտորը պարգևատրեց ուսանողին», իսկ կրավորական սեռի բայերով՝ կրավորական կառուցվածքի նախադասություններ, օրինակ՝ «Ուսանողը պարգևատրվեց դիրեկտորից»։

Ներգործական կառուցվածքի նախադասության մեջ քերականական սուբյեկտը և օբյեկտը համապատասխանում են տրամաբանական սուբյեկտին և օբյեկտին, այնինչ կրավորական կառուցվածքի մեջ տրամաբանական սուբյեկտը հանդես է գալիս անուղղակի խնդրի, իսկ տրամաբանական օբյեկտը՝ ենթակայի քերականական կարգով։

Սուբյեկտի և օբյեկտի հարաբերությունների այս տարբեր արտացոլումները հնուց անտի հատուկ են հայոց լեզվին։ Արդեն գրաբարում իրար են հակադրվում «Որդի սիրէ զհայր» և «Հայր սիրի յորդւոյ» նախադասությունները՝ որպես նույն

մտքի լեզվական տարբեր արտացոլումներ։ Դրանք իրենց ուժն ու կենսունակությունը պահպանել են նաև այսօր, և այժմ ևս հնարավորություն ունենք այդ նույն միտքն արտահայտելու երկու ձևով՝ «Որդին սիրում է հորը», «Հայրը սիրվում է որդուց»։

Երբ մենք ասում ենք, որ ներգործական և կրավորական կառուցվածքները նույն միտքն արտահայտում են լեզվական տարբեր միջոցներով, ապա որոշ անճշտություն ենք թույլ տալիս, որովհետև դրանք ոչ թե նույնանիշներ են, այլ շարահյուսական համանիշներ են։ Եվ ինչպես որ բառապաշարային համանիշները (վերջ—վախճան, գեղեցիկ—սիրուն) լրիվ նույնական չեն, այնպես էլ լրիվ նույնական չեն շարահյուսական համանիշները։

Վերևում բերված նախադասությունների բովանդակային տարբերությունը հանգում է հետևյալին։ Եթե ներգործական կառուցվածքի նախադասության մեջ առաջին գծի վրա է դրված սուբյեկտի՝ իր իսկ հատկանիշի ստեղծման փաստը, որի իրականացման համար օբյեկտ է պահանջվում, ապա կրավորական կառուցվածքի նախադասության մեջ առաջին գծի վրա է մղված օբյեկտի հետ կատարված գործողության փաստը, իսկ թե այդ գործողությունը ո՛վ է կատարել, մղված է երկրորդական գծի վրա։ Կարճ և պարզ ասած՝ եթե բերված ներգործական կառուցվածքի նախադասության խնդիրն է ցույց տալ, որ դիրեկտորը պարգևատրել է ուսանողին, ապա կրավորական նախադասության խնդիրն է ցույց տալ, որ ուսանողը պարգևատրվել է (դիրեկտորից)։ Այս տեսակետից, ահա, դրանք ոչ միայն շարահյուսորեն, այլև բովանդակությամբ և իրենց արտահայտած մտքի երանգներով նույն նախադասությունները չեն։

Ասվածներից կարելի է գալ հետևյալ եզրակացություններին.

ա) Կրավորական կառուցվածքի նախադասության տրամաբանական սուբյեկտը որպես գործողության, հատկանիշի ստեղծող այս կամ այն կերպ անտեսված է, նա չունի այն ուժն ու զորությունը, ինչ համապատասխան ներգործական նախադասության սուբյեկտը.

բ) Կրավորական կառուցվածքի նախադասության մեջ օբյեկտի դերն ավելի մեծ է, քան ներգործական կառուցվածքի նախադասության մեջ:

Կրավորական նախադասության տրամաբանական սուբյեկտը կամ քերականական ներգործող խնդիրը, որը կոչվում է նաև կրավորական սեռի խնդիր, արտահայտվում է կամ բացառական հոլովով, կամ սեռական-տրականի և կողմից կապի միջոցով, ինչպես՝ Հայրը սիրվում է որդուց||որդու կողմից. Նա արհամարհվում է ժողովրդից||ժողովրդի կողմից. Աբելը սպանվեց Կայենից||Կայենի կողմից և այլն: Վերջին ձևերն ավելի ու ավելի են տարածվում ու գերիշխող դառնում:

Կրավորական կառուցվածքի այն նախադասությունը, որի մեջ առկա է ներգործող խնդիրը (տրամաբանական սուբյեկտը), կոչվում է եռանդամ կրավորական, օրինակ՝ Այդ ճարցը ննևարկվում է կառավարության կողմից:

Լեզվաբանական գրականության մեջ նշվում է, որ եռանդամ կրավորականն ընդհանրապես քիչ գործածական է: Այսպես է, օրինակ, ռուսերենում և գերմաներենում: Եռանդամ կրավորականը քիչ գործածական է նաև հայերենում:

Եռանդամ կրավորական նախադասության տակավ գործածությունը լեզուներում բխում է կրավորական կառուցվածքի նախադասության բուն էությունից, այն է՝ իջեցնել գործողի, որպես ռեալ տրամաբանական սուբյեկտի դերը, ցույց տալ օբյեկտի հետ կատարված որոշ գործողության փաստ՝ մեծ մասամբ անկախ գործողից: Ահա այս է պատճառը, որ կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունների մեջ ներգործող խնդիրը, տրամաբանական սուբյեկտը մեծ մասամբ չի հիշատակվում, չի արտահայտվում, օրինակ՝ «Այդ հարցը ուսումնասիրվում է». «Առաջարկությունը մերժվեց». «Գրասենյակի առաջ կոլխոզի կունդակն է գցված» (ՆՉՀ, 18). «Վարդանն առաջ բաշվեց և նշանակվեց շրջանային սպառկոոպի նախագահ» (ՆՉՀ, 42). «Ընդարձակ պարսպապատ բակում կառուցված է նաև ախոռը, որտեղ հիմա տեղավորված էին կոլխոզի ձիերը» (ՆՉՀ, 15). «Մի լրագրում գովված էր Տեր-Աշոտը և խայտառակված Տեր-Սիմոնը, իբրև «խավարամիտ», մյուս լրագրում գովված էր Տեր-Սիմոնը և խայտա-

ռակված Տեր-Աշոտը, իբր «ծակ ազատամիտ» (ՇՔ, 27). «Չէ՞ որ նա միշտ ամսոռված էր ծնողների տնից, լխված ու բխված որպես գերգաստանի գերագույն արատ» (ՇՔ, 23):

Կրավորական կառուցվածքի այն նախադասությունը, որի մեջ չի նշվում ներգործող խնդիրը՝ տրամաբանական սուբյեկտը, կոչվում է երկանդամ կրավորական:

Երկանդամ կրավորականը, ինչպես օրինակներն են ցույց տալիս, արտահայտում է օբյեկտի (քերականական ենթակայի) հետ կապված մի որոշ գործողություն՝ առանց հիշատակելու գործողին:

Բ) **Կրավորական բայերի արտահայտած իմաստները.**— Ժամանակակից հայոց լեզվում ներգործականներին համապատասխան կրավորական բայերի մի մասը միայն կրավորական սեռի իմաստ է արտահայտում, իսկ մյուս մասը ըստ գործածության կարող է արտահայտել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի իմաստները: Այսպես, վերցնենք գնահատվել, ծաղրվել, կալանավորվել, ուղարկվել, ճռավիրվել բայերը: Դրանք ինչպիսի շարահյուսական կապակցություններում էլ որ գործածվեն, անպայմանորեն ըմբռնվում են որպես կրավորական սեռի, և նրանց ենթական միշտ ընկալվում է որպես տրամաբանական օբյեկտ, ինչպես՝ Նա գնահատվում է, ծաղրվում է, կալանավորվում է, ուղարկվում է, ճռավիրվում է: Բերված բայերի բնույթն ունեն նաև բազմաթիվ ուրիշ կրավորականներ, օրինակ՝ գովվել, խմվել, ուտվել, արտասվել, բերվել, կանչվել, առհամարհվել, բարձրացվել, ավելացվել, ոչնչացվել և այլն, և այլն:

Այժմ վերցնենք ճանճնվել, պատրաստվել, սկսվել բայերը: Դրանք մեկ կարող են գործածվել որպես կրավորական սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունն իր վրա է կրում ուրիշից, օրինակ՝ «Որոշումը հանձնվեց գործկոմի քննարկմանը». «Ուսանողների կողմից զեկուցում էր պատրաստվել». «Գարնանացանը գյուղացիների կողմից սկսվեց մարտի վերջերին», մեկ կարող են գործածվել որպես չեզոք սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունը ուրիշից չի կրում, այլ կատարում է ինքը, օրինակ՝ «Նա գերի հանձնվեց». «Պատրաստվում է դատարան դիմել». «Սառնամանիքներն սկսվե-

ցին դեկտեմբերի կեսերից»։ Բերված բայերի բնույթն ունեն նաև բազմաթիվ ուրիշ կրավորականներ, ինչպես՝ բաժանվել, շարժվել, փակվել, բացվել, տեղափոխվել, տանջվել, ճուզվել, ծալվել *և այլն։*

Հայոց լեզվի ուսումնասիրողները կրավորական բայերի վերոհիշյալ խմբավորման վրա ուշադրություն չեն դարձրել։ Այսպես, օրինակ, Հ. Բարսեղյանը գրում է, որ «կրավորական բայերը, *նույնիսկ ունենալով համապատասխան ներգործական ձևեր, մասսայաբար կարող են գործածվել իբրև չեզոք սեռի բայեր»*[199] *(ընդգծումն իմն է—Մ. Ա.), իսկ Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում ներգործականներից կազմված բոլոր կամ համարյա բոլոր կրավորական բայերի առաջ դրված է կրավորական-չեզոք բայ նիշը։*

Այս դրույթը չի համապատասխանում լեզվի իրական փաստերին, և մի շարք կրավորական բայեր, եթե կարելի է այսպես արտահայտվել, մենիմաստ են ու արտահայտում են միայն կրավորական սեռի իմաստ։ Մի կողմ թողած պարզ ներգործականներից կազմված կրավորականները՝ ասվածն առանձնապես վերաբերում է պատճառականներից կազմված բոլոր կրավորականներին, ինչպես՝ առանձնացվել, արագացվել, աղքատացվել, աստվածացվել, բազմացվել, գիրացվել, զարգացվել, զգուշացվել, թարմացվել, թեթևացվել, իրականացվել, լայնացվել, խտացվել, կենտրոնացվել, կղզիացվել, հարստացվել, մերկացվել, մեկուսացվել, նույնացվել, շիկացվել, ոչնչացվել, չորացվել, ռազմականացվել, վավերացվել, տաքացվել, ուժեղացվել *և այլն, և այլն։*

Ինչևիցե, փաստը մնում է փաստ, որ ներգործականներին համապատասխան մի շարք կրավորական բայերի բառային նշանակության մեջ դրսևորվում է և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի իմաստը։ Այսպես, կարելի է սկսվել, շարունակվել, պատրաստվել *մեկից, մեկի կողմից, կարելի է* սկսվել, շարունակվել, պատրաստվել իմ*ինչ՝ առանց որևէ առարկայից ներգործություն կրելու։*

---

[199] Հ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 130—131։*

Այժմ փորձենք բացատրել, թե ինչով է պայմանավորված կրավորական բայերի արտահայտած չեզոք իմաստը։

Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից հայոց լեզվում պարզ ներգործական բայերը չունեն առանձին չեզոք սեռի ձև՝ որպես ոչ կրավորական։ Բայց կենդանի լեզվական պրակտիկայի ընթացքում անհրաժեշտություն և կարիք է զգացվում, ասենք, շարժ(ել), ազատ(ել), թափ(ել), բաց(ել), պատրաստ(ել), տեղափոխ(ել) և այլ բայիմաստներով դրսևորվող գործողությունը ներկայացնել ոչ միայն որպես ներգործական ու կրավորական սեռի, այլև չեզոք սեռի գործողություն, ինչպես՝ «Քամին շարժվում է մեղմիկ». «Վարդը բացվում է մայիսին». «Նրա աչքերից արցունքներ էին թափվում» և այլն։ Ուրեմն անցողական բայերի չեզոք սեռը ժամանակակից հայերենում արտահայտվում է կրավորական ձևի միջոցով։ Այսպես է եղել նաև գրաբարում, որտեղ ներգործական բայերի կրավորաձև խոնարհմամբ արտահայտվում էր ոչ միայն կրավորական, այլև չեզոք սեռի իմաստ, ինչպես. «Եւ երբէք երբէք պատեռազմունք շարժին, ուր մեղաւոր և արդարք առ հասարակ կոտորին» (Եզ., I, Դ). «Յորդագոյնս տարածեցաւ աղանդ նոցա» (Ագ., 168, էջ 92—93). «Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին» (ՓԲ, IV, Բ). «Ջոգաւ թափեցաւ յերկիրն արուացաստանի դէմ յանդիման մրծբնացւոց քաղաքին» (ՓԲ, IV, Ի). «Ապա կազմեցան պատրաստեցան զօրքն երկրին Հայոց և Վասակ զօրաւար նոցա» (ՓԲ, IV, ԻԲ). «Ապա լցան, սփռեցան, ծաւալեցան ընդ ամենայն երկիրն Հայոց» (ՓԲ, IV, ԼԱ). «Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան» (ՓԲ, IV, ՄԴ). «Իսկ ի վաղիւն անդր ժողովեցան եկին ամենայն քաւդեայքն և աստեղագէտքն» (ՓԲ, IV, ՄԴ)։

Ելնելով դրանից՝ ֆրանսիացի հայտնի լեզվաբան Անտուան Մեյեն գրաբարի բայի մեջ ընդունում է ներգործական սեռ և կրավորակերպ խոնարհման միջոցով դրսևորվող չեզոք-կրավորական սեռ (medio-passiv)։ *Նա ներգործական*

բայերի կրավորակերպ խոնարհման ձևերն անվանում է չեզոք-կրավորական ձևեր[200]։

Միջին հայերենում վ (ւ, ու) ածանցի առաջացմամբ հնարավորություն է ստեղծվում անցողական բայերի մեջ տարբերակելու ներգործական, կրավորական և չեզոք սեռի ձևեր։

Ներգործական	Չեզոք	Կրավորական
եփեմ	*եփիմ*	*եփվիմ*
բաժնեմ	*բաժնիմ*	*բաժնվիմ*
այրեմ	*այրիմ*	*այրվիմ*
շարժեմ	*շարժիմ*	*շարժվիմ*
ծռեմ	*ծռիմ*	*ծռվիմ*
պատռեմ	*պատռիմ*	*պատռվիմ*
փոխեմ	*փոխիմ*	*փոխվիմ*
կոտրեմ	*կոտրիմ*	*կոտրվիմ*

Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս երևույթը միջին հայերենում չի ներկայանում որպես մի հետևողական համակարգ՝ նախ նրանով, որ սեռային երեք ձևեր են ունեցել միայն ե խոնարհման անցողական բայերի մի մասը, մյուս կողմից էլ՝ վ-ով ձևերը հաճախ չեզոք կամ անդրադարձ իմաստ են արտահայտել, ինչպես. «Հանապազ բերանն չորնայ, և ճակատն fաշվի, և բարկնայ» (ԱԱՕՒ, 147). «Կոպքն թուլանան, և ի վայր fաշվի» (ՄՀՋՄ, 39). «Աղի պալղամ ի յինքն է խառնվել» (ԱԱՕՒ, 107). «Եւ լցվել է և կապել ջղղեղն, և խառնվել է խամ պալղամ և բռնել է զամէննն» (ԱԱՕՒ, 168). «Ապա թէ անայր կին լինի բերել, և խոստացել լինայ, թէ պսակվեմ ընդ քեզ և այնով լինայ խաբել զկինն, նա ճարն է, որ պսակվի ու երբ պսակվի, նա տուժանք չպարտի» (ՍԳԴ, 52). «Ապա թէ ամառ լինի, հով ջրով լվացվի» (ՄՀՋՄ, 27). «Սահակն ասէ, թէ շփվիլն և աճովիլն ի բաղանիսն և կամ ի դուրսն, զանձն ուժովցնէ և պնտէ և զօրավոր առնէ։ Եւ աճրովիլն կակուղ կու պիտի և զօդվածքն բանայ. և թէ շատ աճրովին՝ զանձն վատուժցնէ» (ԱԱՕՒ, 59)։

---

[200] *Տե՛ս* A. Meillet, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1914։

Միջին հայերենի անցողական բայերի երեք սեռերը պահպանվել են Պոլսի բարբառում, որտեղ մի շարք ներգործական բայեր, կրավորական սեռի ձևից բացի, ունեն առանձին չեզոք սեռի ձև։ Այդ բայերից են՝ ազադէլ(ն.)/ազադիլ(չ.)/ազադվիլ(կ.), էրէլ/իլ/վիլ, գլորէլ/իլ/վիլ, էփէլ/իլ/վիլ, թափէլ/իլ/վիլ, խախտէլ/իլ/վիլ, խանձէլ/իլ/վիլ, խաշէլ/իլ/վիլ, ծագէլ/իլ/վիլ, ձռէլ/իլ/վիլ, գոդրէլ/իլ/վիլ, գդրէլ/իլ/վիլ, մաշէլ/իլ/վիլ, օլբրէլ/իլ/վիլ, չարչըրէլ/իլ/վիլ, բադռէլ/իլ/վիլ, ջարթէլ/իլ/վիլ, վառէլ/իլ/վիլ, քրքրէլ/իլ/վիլ և այլն։

Մի շարք ներգործական բայեր ունեն միայն կրավորական սեռի ձև։ Այդ բայերից են. բերէլ (ն)/բերվիլ (կ.), բռնէլ/վիլ, գօվէլ/վիլ, քրէլ/վիլ (գրել), դնել/դրվիլ, լսէլ/վիլ, խափէլ/վիլ, խմէլ/վիլ, ձէձէլ/վիլ, գանչէլ/վիլ, հրէլ/վիլ, ուզէլ/վիլ, ուդէլ/վիլ, պատճէլ/վիլ, սպաննէլ/վիլ, ցանէլ/վիլ և այլն[201]։

Պոլսահայ բարբառի հիմքի վրա բարձրացած արևմտահայ գրական լեզվում ևս մի քանի ներգործական բայեր, իրենց կրավորական սեռի ձևից բացի, ունեն առանձին չեզոք սեռի ձև, ինչպես՝ կոտրել/իլ/վիլ, ծռել/իլ/վիլ, թափել/իլ/վիլ, այրել/իլ/վիլ, մարել/իլ/վիլ և այլն[202]։

Բերված փաստերից կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը։

Վ ածանցը կրավորական սեռի արտահայտման քերականական միջոցն է։ Բայց նա ծագումնաբանորեն իսկ միայն այդ ֆունկցիան չի ունեցել, որովհետև հենց միջին հայերենում վ ածանցով կազմված մի շարք բայեր արտահայտել են անդրադարձ (լվացվիլ, աճռվիլ, շփվիլ), իսկ մի շարք բայեր էլ՝ նաև չեզոք սեռի իմաստ (բացվիլ, լցվիլ, պսակվիլ, փոխվիլ)։ Ուրեմն՝ վ ածանցը միայն «մաքուր» կրավորական սեռի արտահայտման ֆունկցիա չի ունեցել անգամ հայերենի այն հատվածներում, որոնք անցողական բայերի չեզոք սեռի համար առանձին ձև են ունեցել։ Իսկ ինչ վերաբերում է արդի հայերենին, ապա, ինչպես նշվել է արդեն, այստեղ ներ-

---

201 Օրինակները քաղել ենք Հ. Աճառյանի «Քննություն պոլսահայ բարբառի» աշխատության վերջում տրված բառացանկից։

202 Տե՛ս Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, էջ 89։

գործական սեռի բայերը չունեն առանձին չեզոք սեռի ձև՝ որպես ոչ կրավորական, և այդ է պատճառը, որ նրանց չեզոք սեռն արտահայտվում է կրավորական ձևի միջոցով։

Կրավորական բայերի արտահայտած չեզոք իմաստն ընդհանրապես բնորոշվում է նրանով, որ բայիմաստով դրսևորված գործողությունը կատարում է քերականական ենթական։ Բայց կրավորական բայերի կոնկրետ բառային նշանակությունից կախված՝ այդ ընդհանուր նշանակության մեջ, որպես նրա կոնկրետ դրսևորումներ, հանդես են գալիս իրարից տարբեր մի քանի իմաստներ, որոնք տարբեր ձևով են բնութագրում ենթակայի և գործողության հարաբերությունը։

Մի շարք կրավորական բայեր արտահայտում են այնպիսի գործողություն, որ կատարում է ենթական, բայց և միևնույն ժամանակ ուղղված է հենց իր՝ ենթակայի վրա։ Ենթական այդ բայերի դեպքում հանդես է գալիս իր կատարած գործողությունն իր վրա կրողի դերում։ Այդպիսի իմաստ արտահայտող բայերը մեր քերականագիտության մեջ կոչվում են անդրադարձ բայեր։ «Մայիսի 1-ին նա քնից զարթնեց թե չէ, վեր կացավ, լվացվեց, սանրվեց, զուգվեց, զարդարվեց և շտապեց փողոց» նախադասության մեջ ընդգծված բայերը անդրադարձ իմաստ են արտահայտում։ Այդպիսիք են նաև՝ հագնվել, հանվել, պատրաստվել, պաշտպանվել, fսվել, սափրվել, փաթաթվել, յուղվել, օծվել, շպարվել, մաfրվել, շփվել, տեղավորվել և մի քանի ուրիշները։

Անդրադարձ իմաստը կրավորական բայերի չեզոք իմաստի մասնակի դրսևորումներից մեկն է։ Կրավորաձև չեզոք բայը հակադրվում է իր համապատասխան ներգործական սեռի բային հետևյալ ձևով։ Եթե ներգործական բայը ցույց է տալիս ենթակայի կատարած և ուրիշ առարկայի վրա ուղղված գործողություն, ինչպես՝ «նա տանջում է ինձ», «նա հուզում է ինձ», ապա կրավորաձև չեզոք բայը ցույց է տալիս ենթակայի կատարած, բայց և միևնույն ժամանակ ենթակայի մեջ մնացած, ենթակայի մեջ պարփակված գործողություն, ինչպես՝ «նա տանջվում է», «նա հուզվում է»։ Եթե հարցին մոտենանք այս տեսանկյունից, ապա կարելի է ասել, որ կրավորաձև չեզոքների հսկայական մեծամասնությունը

այս կամ այն կերպ անդրադարձ իմաստ է արտահայտում։ Բայց կրավորական բայերի անդրադարձ իմաստի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, երբ ենթակայի գործողությունը ոչ թե ընդհանրապես պարփակված է ենթակայի մեջ, այլ ուղղված է հենց իր՝ ենթակայի վրա։ Եթե չկա գործողության անմիջական ուղղվածություն, ուրեմն և չկա անդրադարձ իմաստ։ Այսպես, եթե «Նա բռնեց քունքերն ու թաղվեց մտահոգության մեջ» նախադասության ընդգծված բայն այս կամ այն կերպ կարելի է համարել անդրադարձ իմաստ արտահայտող, ապա «լույսը բացվեց». «Նա ծնվել է քաղաքում». «Իմ հայրը գտնվում է Երևանում» նախադասությունների բայերը անդրադարձ գործողության նշույլ իսկ չեն արտահայտում։

Վ ածանցով կազմված մի քանի բայեր ցույց են տալիս երկու կամ մի քանի առարկաների այնպիսի գործողություն, որը կատարում է այդ առարկաներից յուրաքանչյուրը, բայց և միևնույն ժամանակ այդ առարկաներից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես մյուս առարկայի (կամ առարկաների) կատարած գործողության օբյեկտ։ Այսպիսի իմաստ արտահայտող բայերը կոչվում են փոխադարձ բայեր։ «Սուրենը և Աշոտը համբուրվեցին» նախադասության բայը փոխադարձ իմաստ է արտահայտում։ Ուրեմն՝ փոխադարձ բայերը ցույց են տալիս տարբեր ենթականերից իրար վրա անցնող գործողություն։ Հասկանալի է, որ բայի արտահայտած փոխադարձ իմաստը սովորաբար կարող է դրսևորվել հոգնակիի ձևերում։ Եզակի թվում փոխադարձ իմաստ կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ այդ բայերը կապակցվում են սեռական-տրական հոլովի և հետ կապի միջոցով դրսևորվող խնդրի հետ։ Այսպես, վերևի նախադասության միտքը կարելի է արտահայտել նաև «Սուրենը համբուրվեց Աշոտի հետ» նախադասությամբ։

Փոխադարձ իմաստ արտահայտող բայերի թիվը հայերենում սակավ է։ Դրանցից են՝ ճամբուրվել, պաշպշվել, ծեծկըվել, գրկախառնվել, գրկվել, տեսնվել, ողջագուրվել, բախվել, զարկվել (նա պետք է գնար թշնամու հետ զարկվելու) և մի քանի ուրիշները։

62. ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԸ.—

Ա) Չեզոք սեռի ընդհանուր բնութագրումը.— Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս ենթակայի՝ տրամաբանական սուբյեկտի մի այնպիսի գործողություն, որի կատարման համար չի պահանջվում մի անմիջական առարկա, իբրև կրող խնդիր: *Այսպիսիք են հետևյալ նախադասությունների ընդգծված բայերը. «Արևի շողը շեշտակի դիպավ Լևոնի աչքերին: Նա վեր ցատկեց, նստեց անկողնի մեջ ու դուրս նայեց լուսամուտից՝ զգալով անորոշ մի կսկիծ: Ձյունը նահանջում էր դեպի հեռավոր գագաթները: Դաշտերի համատարած սևության մեջ տեղ-տեղ միայն մնացել էին ձյունի կղզիներ» (ՆՉՀ, 7). «Ծվ ես արթնացա խնդության ցավից.— Դիշերվա հովն էր լալիս դաշտերում, Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ, Մենակությունն էր քարի պես լռում» (ՎՏ, 19):*

Ե՛վ ներգործական, և՛ չեզոք սեռի բայերը արտահայտում են այնպիսի գործողություն, որ կատարում է քերականական ենթական: Բայց ներգործական և չեզոք բայերը իրարից տարբերվում են իրենց շարահյուսական հատկությամբ. առաջիններն ուղիղ խնդիր են պահանջում, իսկ երկրորդները՝ ոչ: Բայերի ներգործական կամ չեզոք կարգերին պատկանելը միայն և միայն fեերակաճորեն է որոշվում: Եթե դրանց որոշման ժամանակ ելնենք տրամաբանական և ոչ թե քերականական տվյալներից, ապա ներգործական պետք է ճանաչենք նաև դավաճանել, տիրապետել, օգնել, տիրել, վճռասել, ծեծ տալ, սիրտ տալ և բազմաթիվ ուրիշ չեզոքներ, քանի որ, առնենք, «սիրել հայրենիքը» և «դավաճանել հայրենիքին», «գիտենալ լեզուն» և «տիրապետել լեզվին» կապակցությունների մեջ բայի և խնդրի տրամաբանական հարաբերությունը համարյա նույնն է: Ինչ հարաբերության մեջ որ գտնվում է «հայրենիքը» բառաձևը «սիրել» բայի հետ, նույն հարաբերության մեջ է գտնվում նաև «հայրենիքը» բառաձևը «դավաճանել» բայի հետ: Նույնը կարելի է ասել նաև «գիտենալ լեզուն» և «տիրապետել լեզվին» կապակցությունների մասին: Բայի և խնդրի տրամաբանական տեսակետից նույն հարա-

բերութիւնները առաջին օրինակներում արտահայտված են «բայ+ուղիղ խնդիր», իսկ երկրորդ օրինակներում՝ «բայ+անուղղակի խնդիր» կապակցութիւնների միջոցով։ Այսքանով էլ առաջին օրինակների բայերը ներգործական, իսկ երկրորդ օրինակների բայերը չեզոք սեռի են։ Այսպես և, չնայած որ ծեծել և ծեծ տալ, սրտապնդել և սիրտ տալ համապատասխան զույգերը նույն կամ համարյա նույն իմաստն են արտահայտում, բայց ծեծել և սրտապնդել բայերը ներգործական սեռի են, իսկ ծեծ տալ և սիրտ տալ բայերը չեզոք սեռի են, քանի որ ուղիղ խնդրի հետ կապակցվել չեն կարող (դրանք անուղղակի խնդիր են պահանջում)։

Ներգործական և կրավորական սեռի բայերը խնդրառական միասնութիւն ունեն, քանի որ առաջինները կապակցվում են ուղիղ խնդրի ուղղական-տրականի (այլ տերմինով՝ հայցականի), իսկ երկրորդները՝ ներգործող խնդրի բացառականի հետ։

Չեզոք սեռի բայերը խնդրառական միասնութիւն չունեն։ Նրանց մեծ մասը ցույց է տալիս այնպիսի գործողութիւն, որի կատարման համար ոչ մի կողմնակի առարկա, օբյեկտ չի պահանջվում, օրինակ՝ բայլել, վազել, բնել, մռսել, ծլել, աճել, թռչել, լռել, մեռնել, սևանալ, մեծանալ և այլն։ Այսպիսի բայերը նախադասութեան մեջ կարող են ունենալ պարագաներ (քայլել փողոցով, վազել ջրի, քնել թախտի վրա, ծլել դաշտում և այլն), բայց սովորաբար խնդիրներ ունենալ չեն կարող։

Չեզոք սեռի բայերի մի մասը պահանջում է սեռական-տրական հոլովով դրված անուղղակի խնդիր, օրինակ՝ տիրել, տիրապետել, վճասել, սպասել, դիպչել, կպչել, ճայել, իշխել, դիմադրել, դիմավորել, դիմել, օգնել, նպաստել, օժանդակել, դավաճանել, սիրտ տալ (*մի բանի, մեկին*)։ Չեզոքների մի այլ մասը ուժեղ խնդրառութեամբ կապակցվում է բացառական հոլովի հետ, օրինակ՝ ակնածել, օգտվել, ամաչել, զարշել, դժգոհել, զարհուրել, խորշել, խուսափել (*մի բանից, մեկից*)։ Մի քանի չեզոքներ ուժեղ խնդրառութեամբ կապակցվում են գործիական հոլովի հետ, օրինակ՝ նպարտանալ,

պարծենալ, ճիաճալ, լիաճալ, ուրախանալ, զմայլվել *(մի բանով, մեկով)*։

Չեզոք բայերի խնդրառության մանրամասն քննարկումը կապ չունի բայի սեռերի հարցի հետ։

Չեզոք սեռի բայերը միավորվում են մի կարգի տակ այն հիմունքով, որ չեն կարող ցույց տալ ոչ գործողության անցում ենթակայից ուղիղ խնդրին, ոչ ներգործող խնդրից ենթակային։

Բ) Կրավորական բայերի արտահայտած կրավորական և չեզոք սեռերի իմաստների տարբերակումը.— *Հայոց լեզվում բայի չեզոք սեռն արտահայտվում է ոչ միայն պարզ ու սոսկածանցավոր, այլև վ ածանց ունեցող բայերի մեջ։*

Կրավորական բայերի իմաստների վերլուծությանը նվիրված հատվածում տեսանք, որ մի շարք կրավորական բայեր արտահայտում են նաև չեզոք սեռի իմաստ։ Դրա տակ հասկանում ենք այն, որ կրավորական բայով արտահայտված գործողությունը, հատկանիշը բխում է քերականական ենթակայից և ոչ թե ներգործող խնդրից։

Հետևելով Մ. Աբեղյանի ոճին՝ կարելի է ասել, որ մի շարք կրավորական բայերի չեզոք գործածությունը հայերենում սովորական երևույթ է։ Չեզոք սեռի իմաստ են արտահայտում բազմաթիվ կրավորական բայեր, ինչպես.

փոխվել—«Նա ահագին բան սովորեց և փոխվեց բնավորությամբ».

բացվել—«Բացվեց Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտը».

թաղվել—«Նա թաղվեց ծանր մտքերի մեջ».

կուտակվել—«Երկնակամարում գորշ ամպեր են կուտակվել».

պոկվել—«Նրա աչքերից արտասուքի կաթիլներ պոկվեցին».

փակվել—«Նրա վերքն արդեն փակվել էր».

ավարտվել, սկսվել—«Աշունն ավարտվում է, սկսվում է արդեն ձմեռը».

թեքվել—«Արեգակը թեքվել էր դեպի մուտքը».

կապվել—«Կապվեցի նրա հետ և պատմեցի ամեն ինչ».

հալվել—«*Այդ սպանիչ մթնոլորտում* հալվում էր *նրա երիտասարդ կյանքը*».

խառնվել—«*Վիշտը նրա մեջ* խառնվել էր *ուրախության հետ*».

ոգևորվել—«*Նա նկատեց այդ փոփոխությունը և ավելի* ոգևորվեց».

ծնվել—«*Ամեն ինչ* ծնվում է *ու մեռնում*».

խրվել—«*Ձիու սմբակները հեշտությամբ* խրվում էին *ևահողի մեջ*».

համոզվել —«*Նա* համոզվեց, *որ իր վրա են ծիծաղում*».

անջատվել, կախվել—«*Մազերից մի բարակ փունջ* անջատվել *ու* կախվել էր *նրա խոշոր ականջին*».

սեղմվել — «*Հետաքրքրական հավաքույթների ժամանակ մինչև երեք հարյուր հոգի* սեղմվում էին *իրար*».

շրջվել — «*Նա* շրջվեց *իմ կողմը*».

ծծվել — «*Ջուրն անմիջապես* ծծվեց *հողի մեջ*».

բորբոքվել — «*Տաքարյուն երիտասարդը անմիջապես* բորբոքվեց».

տանջվել — «*Նա բարոյապես շատ էր* տանջվում».

փռվել — «*Իմ առաջ* փռվել էին *արտերը*».

բաժանվել — «*Նա պնդում էր, թե պետք է ամուսնուց* բաժանվի»։

Հասկանալի է, որ այս բայերը այլ կապակցություններում կարող են արտահայտել կրավորական սեռի իմաստ։ Հարց է առաջանում՝ գործնականորեն ինչպե՞ս տարբերել կրավորական բայերի արտահայտած կրավորական և չեզոք սեռերի իմաստները։ Դրա համար կարելի է առաջարկել հետևյալ միջոցները։

1. Կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունների միտքը հնարավոր է տալ համապատասխան ներգործական սեռի բայերով կազմված նախադասություններով։ Այսպես, «Ժողովում այդ առաջարկությունը մերժվեց», «Այդ աշխատանքը բարձր գնահատվեց» նախադասությունները ներգործականի են վերածվում «Ժողովում այդ առաջարկությունը մերժեցին». «Այդ աշխատանքը բարձր գնահատեցին» ձևով։ Սա նշանակում է, որ վերևի օրինակներում «մերժվել» և «գնահատվել» բայերը կրավորական սեռի իմաստ են ար-

տահայտում։ Չեզոք սեռի իմաստ արտահայտող կրավորական բայերով կազմված նախադասությունների միտքը հնարավոր չէ տալ համապատասխան ներգործական սեռի բայերով կազմված նախադասություններով։ Այսպես, «Բացվեց Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտը». «Նա թաղվեց ծաննըր մտքերի մեջ» նախադասությունների միտքը չի կարող տրվել համապատասխան ներգործական սեռի բայերով կազմված նախադասություններով, որովհետև բերված օրինակներում «բացվել» և «թաղվել» բայերը չեզոք սեռի իմաստ են արտահայտում։

2. Կրավորական սեռի բայերը թելադրում են ումի՞ց, ինչի՞ց կամ ո՞ւմ կողմից հարցերը, որոնց պատասխանը լինում է կրավորական սեռի բայի ներգործող խնդիրը։ Եթե ներգործող խնդիրը նախադասությունների մեջ չի հիշատակված, ապա այդ հարցերի միջոցով այն կարելի է ձևականորեն վերականգնել[203]։ Այսպես, «Ժողովում այդ առաջարկությունը մերժվեց». «Այդ աշխատանքը բարձր գնահատվեց» նախադասությունների կրավորական սեռի բայերը թելադրում են ումի՞ց, ո՞ւմ կողմից հարցերը, որոնց պատասխանը լինում է ներգործող խնդիրը (բանվորների կողմից, կառավարության կողմից)։

Չեզոք սեռի իմաստ արտահայտող կրավորական բայերը չեն թելադրում կրավորական սեռի բայերի համար տրվող հարցերը։ «Ձին սկսեց պտտվել ինքն իր շուրջը». «Արեգակը թեքվել էր դեպի մուտքը» նախադասությունների բայերի համար հնարավոր չէ տալ ումի՞ց, ո՞ւմ կողմից հարցերը, որովհետև այդ օրինակներում բայերը չեզոք սեռի իմաստ են արտահայտում։

3. Կրավորական սեռի բայերով արտահայտված ստորոգյալները պատասխանում են ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց, ի՞նչ է լինում, ի՞նչ եղավ, բայց ոչ երբեք ի՞նչ է անում, ի՞նչ արեց և նման հարցերին։ Այսպես, «Այդ առաջարկությունն ուսումնասիրվում է» նախադասության ստորոգյալը պատասխանում է ի՞նչ է արվում հարցին։ «Առաջավոր բան-

---

[203] Տե՛ս Հ. Բարսեղյան, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, էջ 126։

վորները պարգևատրվեցին» նախադասության ստորոգյալը պատասխանում է ի՞նչ արվեցին կամ ի՞նչ եղան հարցին։

Վ ածանց ունեցող չեզոք սեռի բայերով արտահայտված ստորոգյալները պատասխանում են ի՞նչ է աճում (ի՞նչ է լինում), ի՞նչ արեց (ի՞նչ եղավ) և այլ հարցերին, բայց ոչ երբեք՝ ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց և այլ հարցերին[204]*։ Այսպես, «Լուսինը երբեմն հայտնվում էր, երբեմն ծածկվում ամպերի տակ» նախադասության ստորոգյալները պատասխանում են ի՞նչ էր աճում (ի՞նչ էր լինում) հարցին։ «Նա ձգվեց հրամանատարի առաջ» նախադասության ստորոգյալը պատասխանում է ի՞նչ արեց հարցին։*

Եթե կրավորական բայով արտահայտված ստորոգյալը չի թելադրում կամ չի կարող թելադրել ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց և այլ հարցերը, ուրեմն նա չեզոք և ոչ թե կրավորական սեռի է։

Այս մի քանի միջոցներով չեզոք սեռի իմաստ արտահայտող կրավորական բայերը կարելի է տարբերել կրավորական սեռի բայերից։

Գ) «Կ ր ա վ ո ր ա կ ե ր պ» չ ե զ ո ք ս ե ռ.— *Ժամանակակից հայերենում կան վ ածանցով կազմված մի շարք չեզոք բայեր, որոնք չունեն իրենց համապատասխան պարզ ներգործական ձևերը։ Դրանք մոտավորապես հետևյալներն են. բնակվել, գանգատվել, գժվել, գունատվել, զբաղվել, զմայլվել, ընդհարվել, թաքնվել, խաղաղվել, խելագարվել, խղճահարվել, համարձակվել, հակվել, հաշտվել, հարձակվել, հիասթափվել, հնազանդվել, հուսահատվել, հպատակվել, հրաժարվել, ճարահատվել, մոլորվել, մոայլվել, չքվել, պապանձվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, վախճանվել, վհատվել, ցնորվել, ուշաթափվել, փլվել, փշաքաղվել, փքվել։*

Վ ածանցով կազմված, բայց ժամանակակից լեզվում իրենց համապատասխան պարզ ներգործական ձևերը չունեցող բայերը (դրանց ներգործական սեռն արտահայտվում է պատճառականի ձևով՝ բնակվել—բնակեցնել, թաքնվել—թաքցնել, մոլորվել—մոլորեցնել և այլն) մեր քերականագի-

---

204 *Տե՛ս անդ։*

տության մեջ անվանվում են «կրավորակերպ» չեզոքներ։

«Կրավորակերպ» չեզոքների մեծ մասը գրաբարում եղել են կրավորաձև խոնարհման չեզոքներ։ Դրանցից մի քանիսը ունեցել են իրենց համապատասխան ե լծորդով ներգործականը, ինչպես՝ խաղաղիմ/եմ, համարձակիմ/եմ, հաշտիմ/եմ, հնազանդիմ/եմ, պապանձիմ/եմ, սթափիմ/եմ, վախճանիմ/եմ, ցնորիմ/եմ, յօժարիմ/եմ, մի քանիսն էլ չեն ունեցել, ինչպես՝ գանգատիմ, զմայլիմ, բնակիմ, թաքչիմ, խելագարիմ, ուշաթափիմ, սխալիմ։ «Բնակիմ» և «սխալիմ» բայերը ունեցել են նաև ե լծորդով (չեզոք) ձևեր։

Մեր լեզվում «կրավորակերպ» չեզոքների գոյությունը բացատրվում է հետևյալ կերպ։ Երբ վ բայածանցի ստեղծումով ներգործական բայերի կրավորակերպ խոնարհման իլ ձևը փոխվեց վիլ ձևի, միաժամանակ կրավորակերպ խոնարհվող մի շարք չեզոք սեռի բայեր (գանգատիմ, բնակիմ, խելագարիմ, սխալիմ և այլն) նույնպես ստացան այդ ածանցը, իսկ հետո այդ բայերի նմանակությամբ կազմվեցին նաև այլ բայեր (գժվել, սիրահարվել, փշաքաղվել)։ Վ ածանցը «կրավորակերպ» չեզոքների մեջ սոսկ ձևական նշանակություն ունի, և երբ դրանցից ցն ածանցով ներգործական սեռի բայեր են կազմվում, այն դուրս է ընկնում, ինչպես՝ հաշտվել—հաշտեցնել, բնակվել—բնակեցնել, հնազանդվել—հնազանդեցնել, սիրահարվել—սիրահարեցնել և այլն։ Բայց՝ գժվել—գժվեցնել։

Մի քանի «կրավորակերպ» չեզոքներ ունեն առանց վ-ի (չեզոք) ձևեր, ինչպես՝ հակառակվել/ել, համաձայնվել/ել, մոլորվել/ել, մոայլվել/ել, հոժարվել/ել, նմանվել/ել, վերաբերվել/ել, տրաքվել/ել։ Գրական լեզուն երբեմն գերադասում է վ-ով, իսկ երբեմն առանց վ-ի ձևերը։ Առանձին դեպքերում դրանց միջև նկատվում են իմաստային տարբերություններ, օրինակ՝ վերաբերվել||վերաբերել («Նա ինձ վատ է վերաբերվում» և «Այդ բանն ինձ չի վերաբերում»)։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԱԿԲԱՅ

63. ՄԱԿԲԱՅԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ.—Մակբայը որպես խոսքի մաս իմաստային տեսակետից բնորոշվում է նրանով, որ ցույց է տալիս գործողության կամ դրության հատկանիշ կամ էլ հատկանիշի հատկանիշ։ Եթե գործողությունը, դրությունը, որակը, քանակը միավորենք առարկայի հատկանիշ ավելի լայն հասկացության տակ, ապա մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ։ Որպես հատկանիշ ցույց տվող բառերի կարգ մակբայը շփման կետեր ունի ածականի հետ, միայն այն տարբերությամբ, որ եթե ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ, ինչպես՝ գեղեցիկ գրիչ, լավ մարդ, ապա մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ՝ շափազանց գեղեցիկ գրիչ, շատ լավ մարդ և այլն։ Եթե այս վերջին կետը ուրիշ լեզուների համար նշանակություն ունի, ապա հայերենի համար այդ էլ էական ու վճռական նշանակություն չունի, որովհետև որակական ածականները ոչ միայն կարող են գործածվել գոյականների հետ՝ ցույց տալով հատկանիշ, այլև կարող են գործածվել բայերի հետ՝ ցույց տալով գործողության հատկանիշ։ Այդ հատկությունը մեր լեզուն ունեցել է դեռևս գրաբարյան շրջանում, որտեղ որակական ածականները կարող էին գործածվել բայերի հետ՝ կատարելով ձևի պարագայի շարահյուսական պաշտոն։ Ահա համապատասխան մի քանի օրինակներ գրաբարից։

Քաջ — «*Զայն դուք իսկ* fաջ գիտեf».

Պարզ — «Պarզ ասա *մեզ*». «*Խօսեցաւ* պarզ».

Ուղիղ — «*Եթե* ուղիղ մատուցանես *և* ուղիղ ոչ բաժանես, *մեղար*».

Շատ — «Շատ ընդդիմացաւ *Քրիստոսի Հրէայք*». «Շատ եմf տեսեալ *զնա ի պահս և յաղօթս*».

Մեղմ — «Մեղմ երթայր, *զի թոյլ տացէ մեռանել մանկանն*».
Մանր — «Աղայցես *ի նոցանէ մանր*». «Փշրեաց մանր».
Հաւաստի — «Հաւաստի մեկնել *կամ միտել, ուսանել*».
Հանդարտ — «Հանդարտ յառաջ *խաղացեալ*». «Հանդարտ *կացսել կամ հարցանել*».
Սանր — «Սանր լկելովն ճնշեալ *զմարմինն՝ չարչարէր*».
Թաքուն Սածուկ — «Թաքուն և ծածուկ *չանաք զնոյն գործել*».
Խրոխտ — «*Բնական է առիւծուն* խրոխտ յարձակել *ի վնաս մարդկան*».
Լաւ — «Լաւ վարկանել *կամ համարել*». «Լաւ հասկացայ».
Թիւր — «Թիւր վարի *ի նորա ուղիղ գործսն*».
Թեթև — «Թեթև կրիցեմ *զաշխատանսն*».
Բարձր — «*Ձարթուցեալ* ձայնէր բարձր».
Բարի — «Բարի եկիր, *ճանապարհորդ խաղաղութեան*».
Բազում — «*Ձկնի* բազում աղաչելոյ».
Արձակ — «Արձակ բանակիցեն».
Ահեղ — «Ահեղ գոչէ».
Ազնիւ — «Ազնիւ ասացէր».
Ազատ — «Ազատ *և անխափր* մեղանչեն». «Ազատ ասէ».
Խաղաղ — «*Ջուրն, որ* գնաց խաղաղ»[1]:

Սակայն, այնուամենայնիվ, գրաբարում ածականի և մակբայի մեջ կարող էր դիտարկվել ձևաբանական տարբերություն, քանի որ ածականը գոյականի հետ գործածվելիս որոշակի դեպքերում համաձայնում էր նրան թվով և հոլովով (մեծ տուն—մեծի տան—մեծք տունք—մեծաց տանց և այլն). Հայտնի է, որ մեր լեզվի հետագա պատմական զարգացման ընթացքում վերանում է ածականի և գոյականի համաձայնությունը, և այդ բանը իր հերթին ավելի է նպաստում որակական ածականների մակբայական կիրառությանը: Մեր լեզուն այժմ հասել է մի այնպիսի դրության, որ որակական ածականները զանգվածորեն գործածվում են բայերի հետ, այսինքն՝ կիրառվում են ինչպես մակբայ՝ հանդես գալով ձևի պա-

[1] *Բոլոր օրինակները տե՛ս «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1834—37:*

բագայի շարահյուսական պաշտոնով։ Ահա համապատասխան օրինակներ. «Բժիշկը կամացուկ հաղորդեց նրան որդու ժամանման լուրը» (ՇՔ, 13). «Սկսեց այրին՝ ծանր հառաչելով» (ՇՔ, 36). «Այրին հանդարտ նստեց որդու դեմուդեմ» (ՇՔ, 36). «Սմբատը խաղախավարի, բայց սառը սեղմեց մեկի ու մյուսի ձեռքը» (ՇՔ, 33). «Լսի՛ր, ապօրինի ես տիրացել մեր հոր ժառանգությանը» (ՇՔ, 68). «Դուշեց Սմբատը հանգիստ» (ՇՔ, 68). «Ես ուղղակի սարսափում եմ ինձ մոտ փող պահելուց» (ՇՔ, 68). «Անուշը Միքայելին ընդունեց մի տեսակ պաշտոնական սառնությամբ և տխուր» (ՇՔ, 64). «Ո՛չ, ո՛չ, նա չի կարող լուռ ու մունջ հպատակվել մեծ եղբոր կամքին» (ՇՔ, 51). «Սմբատը լուռ, անշարժ կանգնած էր միևնույն դիրքում» (ՇՔ, 19). «Համերգ է տալիս անփող ու ձրի» (ՊՍ, 158). «Պիտի այնտեղ ուրախ կոնծեն» (ՊՍ, 125). «Նա ինքնամոռաց գնում է առաջ» (ՊՍ, 33). «Որ աբեղային անուր խորովեն» (ՊՍ, 34). «Քաղաքը դեռ քնած էր լուռ, համր, ծանր» (ԵՉ, 127). «Ով, որ գալու եք զվարթ ու թեթևաթայլ» (ԵՉ, 264). «Ամեն ինչ այնպես ժպտում էր անհոգ» (ԵՉ, 5). «Քայլում էինք մենք կայտառ ու ջահել» (ԵՉ, 5). «Երբ նույնպես ուրախ, անհոգ, անվտանգ Բոլորից իսկույն մեր շուրջպարը հին» (ԵՉ, 5). «Մենք ճամփա ընկանք անխոնջ ու համառ» (ԵՉ, 6). «Ելել էր «ինզոր», «անհաղթ», Պարզել էր երեքգույն դրոշ, Հառնում էր—«անկաշկանդ», «ազատ» ու չկար նահիրի ուրիշ» (ԵՉ, 42). «Ես վերադարձա ինզոր ու հպարտ» (ՎՏ, 295). «Տխրադեմ ու մտախոհ գալիս եք դուք ամեն օր» (ՎՏ, 269). «Լուռ նստում էր պուրակում, Համր ու անխոս հեռանում» (ՎՏ, 269). «Հընչում է միշտ խոր ու պայծառ» (ՎՏ, 285). «Անաղմուկ, անուրտուն, անհնչյուն գալիս են ու նորից հեռանում» (ՎՏ, 175). «Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս, եվ արցունքներդ հանդարտ կծորեն» (ՎՏ, 64). «Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ, Ննջեցին անուշ երկինք ու երկիր. Աչքերդ փակիր, ինձ ինձուշ գրկիր, ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ» (ՎՏ, 61). «Դժկամ նայում են ժայռերը խոժոռ» (ՎՏ, 27)։

Հայտնի է, որ ածականների կրկնությամբ կազմվում են

սաստկական կամ բազմակիության նշանակություն ունեցող ածականներ, որոնք, որպես կանոն, պահանջում են հոգնակի որոշյալ, օրինակ՝ ծանր-ծանր խոսքեր, մեծ-մեծ մարդիկ, սուր-սուր փշեր, սև-սև վշտեր *և այլն։ Սրանք ևս ազատ կերպով գործածվում են բայերի հետ որպես ձևի պարագա, այսինքն՝ մակբայական նշանակությամբ։ Ահա համապատասխան օրինակներ։* «Ծանր-ծանր գլխով արեց Ադամյանը» *(Սև, 31).* «Հրացանը վերցրի ու ուրախ-ուրախ ճամփա ընկա դեպի Բակատեղ» *(ՎԱ, 44).* «Գնում եմ ձմեռանոցի միջով հպարտ-հպարտ» *(ՎԱ, 45).* «Աչքի տակով ծուռ-ծուռ իրարու նայելով» *(ՇՔ, 26).* «Մորթին ուսս գցեցի ու ուրախ-ուրախ մտա ձմեռանոց» *(ՎԱ, 48).* «Թաց-թաց մեկնվում էինք ափի մեծ սալին» *(ՎԱ, 19).* «Դուրսունն էլ է գալիս ծանր-ծանր հևալով» *(ՎԱ, 15).* «Իրոք, գոմեշը լանչից իջավ լեռան կանաչ գոգն ու ծանր-ծանր նստեց» *(ՎԱ, 15).* «Ընկերոջ ձեռքն առնելով ամուր-ամուր սեղմեց» *(ՄԱ, 192).* «Նկատեց նա, խեթ-խեթ նայելով կառապանին» *(ՄԱ, 214).* «Բարձր-բարձր խոսելով» *(ՀՔ, 1, 387).* «Ներքևից ագռաւ-ագռաւ ինձ են մտիկ անում» *(ՀՔ, 1, 392).* «Ու գոռում գիժ-գիժ» *(ՀՔ, 2, 13).* «Խեղճ-խեղճ նայեցի սնից կախած հրացանին» *(ՎԱ, 43).* «Ուրախ-ուրախ եկա քեզ մոտ» *(ՆԴ, 322).* «Նվ Մարությանն ամուր-ամուր սեղմեց Բազենյանի ձախ ձեռքը» *(ՆԴ, 381) և այլն։*

Մենք բերեցինք ածականների՝ մակբայական կիրառության, ճիշտ է, բազմաթիվ, բայց մեր ձեռքի տակ եղած օրինակների մի մասը միայն։ Բերված փաստերը ակնհայտորեն ու անվերապահորեն բերում են այն եզրակացության, որ որակական ածականները իրենց բառիմաստի մեջ համատեղում են ոչ միայն առարկայի հատկանիշի իմաստ, ինչպես՝ տխուր մարդ, ճմռուշ ծաղիկ, *այլև գործողության հատկանիշի իմաստ, ինչպես՝* տխուր խայլում էր, ճմռուշ ժպտաց։

Ուրեմն՝ տխուր, ճմռուշ *և նման բառերը կամ որակական ածականների գոնե ճնշող մեծամասնությունը միաժամանակ ունեն մակբայական իմաստ և նշանակում են նաև* տխրորեն||տխրաբար, ճմռշորեն||ճմռշաբար *կամ վերլուծական ձևով՝* տխուր կերպով||ձևով||եղանակով, ճմռուշ կերպով||ձևով||եղա-

ձակով: Ով բայերի հետ որակական ածականները շատ դեպքերում գործածված ենք տեսնում՝ ա) ածանցավոր ձևով որպես մաքուր մակբայներ, բ) կերպով, ձևով, եղանակով բառերի հետ որպես վերլուծական մակբայներ: Ահա համապատասխան օրինակներ:

ա) «Խստորեն հարցրեց իր դստերը» (ԴԴ, 13). «Անսպասելիորեն ընդհատեց իր հարցուփորձը» (ԴԴ, 13). «Վարդանը փութկոտ բռնեց նրա դողդոջուն ձեռքը և ջերմորեն համբուրեց» (ԴԴ, 19). «Հեզորեն կշտամբեց իրեն Վասակը,—ասա՛, իրավունք ունես» (ԴԴ, 45). «Գնացե՛ք, Գնացե՛ք,—հրամայեց Վասակը դաժանորեն» (ԴԴ, 48). «Նրա նժույգը աշխուժորեն ոստոստում էր» (ԴԴ, 10). «Մտերմաբար բռնեց նժույգի սանձից» (ՐՍ, 67). «Դուռը բացվեց զգուշորեն» (ՆԴ, 515). «Վերջինս հանկարծ զսպեց իրեն և այնուհետև սկսեց խոսել զգուշորեն» (ՆԴ, 393). «Ովան ֆնիշորեն գրկեց նրա նիհար իրանը» (ՆԴ, 348). «Մարությանը դարձյալ լռում էր ճամեստորեն» (ՆԴ, 512). «Ովան ագահորեն սկսեց կարդալ նրա նամակը» (ՆԴ, 513). «Նրա հայացքը քարացավ Բազենյանի տխրորեն ժպտացող աչքերի մեջ» (ՆԴ, 482). «Յրտահա՛ր, հողմավա՛ր. Դողացին մեղմաբար, Տերևները դեղին Պատեցին իմ ուղին» (ՎՏ, 34). «Քո պայծառ գահից մեղմորեն իջիր» (ՎՏ, 49). «Ուզում եմ մեկին ֆնիշորեն սիրել» (ՎՏ, 66). «Մոր պես ֆնիշաբար մոտեցիր դեմքիս» (ՎՏ, 84). «Դու դաժանորեն նայում ես հեռուն» (ՎՏ, 97). «Ու քայլում է աղջիկն այնպես զգուշորեն» (ՊՍ, 134). «Հառաչեց Սրաֆիոն Գասպարիչը, գլուխը տխրորեն շարժելով» (ՇՔ, 12). «Գլուխը դանդաղորեն բարձրացրեց» (ՇՔ, 13) և այլն:

Այս ձևով լեզվում առաջանում են զուգահեռ ձևեր, երբ բայի հետ բառը կարող է գործածվել ուղիղ ձևով կամ ստանալով որեն կամ բար ածանցները, ինչպես՝ ջերմ համբուրել||ջերմորեն համբուրել, զգույշ բաց անել||զգուշորեն բաց անել, անկեղծ խոսել||անկեղծորեն խոսել, մեղմ օրորել||մեղմորեն օրորել, ֆնիշ գրկել||ֆնիշորեն գրկել, ագահ ուտել||ագահորեն ուտել, տխուր ժպտալ||տխրորեն, տխրաբար ժպտալ, խիստ պատժել||խստաբար պատժել||խստորեն պատժել, դանդաղ բարձրանալ||դանդաղորեն||դանդաղաբար բարձրանալ և այլն:

բ) Իմաստով դրանց զուգահեռ են ածականի և կերպով, եղանակով կամ ձևով բառերի միջոցով կազմված կապակցությունները, որոնք, դրվելով բայի վրա, ցույց են տալիս գործողության կատարման ձևը, կերպը, եղանակը։ Այսպիսի օրինակներ են. «Կողմնակի կերպով նա շատ խորհրդավոր բաներ էր լսել Բազենյանի մասին» *(ՆԴ, 393).* «Պատասխանեց Եվան բոլորովին ճանգիստ կերպով» *(ՆԴ, 489).* «Կամաց արտասանեց Եվան և թույլ կերպով ժպտաց» *(ՆԴ, 479).* «Նրա ձայնը խիստ խորհրդավոր կերպով հնչեց Եվայի ականջին» *(ՆԴ, 435).* «Հավատացնում եմ, Լևո՛ն, ես շատ լուրջ կերպով եմ խոսում» *(ՆԴ, 425).* «Լուռ, դողդոջուն կերպով *ծիծաղեց» (ՆԴ, 254).* «Ժամանակը թռչում էր աննկատելի կերպով» *(ՆԴ, 230).* «Խոսում էր կենդանի ու ազդու կերպով» *(ՆԴ, 366).* «Անդառնալի կերպով *կորցրեց մի թանկագին բան» (ՆԴ, 343).* «Հարևանցի կերպով հիշեցնել գիտեր յուր տոհմային ազնվականությունը» *(ՐՍ, 56).* «Եվ այժմ ավելի պինդ կերպով *սկսեց շփել յուր ճակատը» (ՐՍ, 58).* «Ժիր կերպով *պըտրտվում էր կրակի շուրջը» (ՐՍ, 65).* «Անվրդով կերպով *ասաց» (ՐՍ, 77).* «Պատասխանեց Սամվելը անվրդով կերպով» *(ՐՍ, 43).* «Բայց պատերազմեց ազնիվ կերպով» *(ՐՍ, 50).* «Հարցրեց Իշխանը ավելի լուրջ կերպով» *(ՐՍ, 32).* «Ասաց նա ճանգիստ եղանակով» *(ՆԴ, 425).* «Խորհրդավոր եղանակով *սկսեց պատմել» (ՆԴ, 365).* «Մայրը կիսախրատական և կիսաեղգնական եղանակով *նկատեց նրան» (ՐՍ, 44).* «Մեղմ եղանակով *ասաց» (ԴԴվ, 40).* «Սթափ եղանակով *ասաց» (ԴԴվ, 46).* «Առաքելը ճանգիստ ու հասարակ եղանակով *դարձավ երիտասարդներին» (ԴԴվ, 72)։*

Հասկանալի է, որ նույն իմաստը կարող է արտահայտվել նաև ձևով բառով, ինչպես՝ «Մայրը կիսաեղգնական, կիսախրատական ձևով *ասաց»,* «Մեղմ ձևով *ակնարկեց»,* «Հանգիստ ու հասարակ ձևով *վճռեց այդ հարցը»* և *այլն։*

Պետք է նկատել, որ բերված օրինակների բացարձակ մեծամասնության մեջ մակբայական իմաստը կարող է արտահայտվել նաև առանց կերպով, եղանակով, ձևով *բառերի. ինչպես՝* պատասխանեց ճանգիստ կերպով||պատասխանեց

հանգիստ, լուրջ կերպով էր խոսում||լուրջ էր խոսում, ասաց հանդարտ եղանակով||ասաց հանդարտ, մեղմ ձևով ակնարկեց||մեղմ ակնարկեց և այլն, միայն կարելի է ասել, որ կերպով, եղանակով, ձևով բառերի գործածությունը ավելի է շեշտում ձևի նշանակությունը։ Այն էլ պետք է նշել, որ այս կապակցությունների մեջ կերպով, եղանակով, ձևով բառերը զրկված են նյութական նշանակությունից և ձևական բառերի դեր են կատարում։

Այսպիսով, մակբայական իմաստով լեզվում ունենում ենք զուգահեռ ձևեր, ինչպես՝ ֆնֆուշ||ֆնֆշորեն||ֆնֆուշ կերպով (եղանակով, ձևով), զգույշ||զգուշորեն||զգույշ կերպով, անկեղծ||անկեղծորեն||անկեղծ կերպով, խոսուր||խոսրաբար||խոսուր կերպով, մեղմ||մեղմորեն||մեղմ կերպով, խիստ||խստաբար||խիստ կերպով, դաժան||դաժանաբար||դաժան կերպով, անդառնալի||անդառնալիորեն||անդառնալի կերպով և այլն։

Այսպես ուրեմն՝ հայերենում որակական ածականները կիրառվում են նաև մակբայաբար՝ դրվելով բայերի վրա և ցույց տալով գործողության կատարման ձևը։ Մեր լեզվի հենց այդ դրությունը նկատի ուներ Մ. Աբեղյանը, երբ գրում էր. «Ածականն ու մակբայը իրենց նշանակությամբ կազմում են մի ընդհանուր տեսակ իբրև մակադրական (վերադրական) բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշ. միայն ածականն առարկայի հատկանիշ է նշանակում, իսկ մակբայը՝ հատկանիշի հատկանիշ։ Հայերենում բուն մակբայները սակավաթիվ են, այսինքն՝ քիչ բառեր կան, որոնք միայն իբրև մակբայ գործածվեն։ Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են. երբ ածականների ցույց տրված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այն ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ, կամ թե երբ ածականը խոսքի մեջ դրվում է ոչ թե մի գոյական անվան վրա, այլ մի ածականի ու բայի վրա, այն ժամանակ ածականը կիրառվում է իբրև մակբայ. օրինակ՝ «սաստիկ քամի», «սաստիկ կարմրություն» կապակցությունների մեջ սաստիկ բառն ածական է, իսկ «սաստիկ կարմիր», «սաստիկ կարմրեց» կապակցու-

թյունների մեջ նույն բառն առնվում է իբրև մակբայ։ Հայերենում մակբայն, ուրեմն, ածականի առանձին կիրառություն է շարահյուսական կապակցության մեջ»[2]։ Մ. Աբեղյանը նույն բանն է ասում նաև «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ[3]։

Ինչպես տարբեր առիթներով նշված է, երեսնական թվականներին ժխտվում է խոսքի մասերի որոշման իմաստային-շարահյուսական հիմունքը և առաջ է քաշվում դրանց տարբերակման իմաստաբանական հիմունքը, ըստ որի խոսքի մասերի դասակարգման ժամանակ պետք է անտեսվեն բառերի ձևաբանական, շարահյուսական-կիրառական և այլ հատկանիշները։ Գ. Սևակը ընդհանրապես քննադատելով Մ. Աբեղյանի խոսքի մասերի դասակարգման սկզբունքը՝ մասնավորապես մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ այն վճռական կարծիքն է հայտնում, որ գործածվելով բայերի հետ՝ որակական ածականները չեն դադարում ածականներ լինելուց, այլ նրանք հանդես են գալիս որպես ձևի պարագա, որը ածականների շարահյուսական ֆունկցիաներից մեկն է։ Գ. Սևակը գրում է. «Մակբայ կոչվում են այն բոլոր բառերը, որոնք ցույց են տալիս գործողության տարբերակված հատկանիշներ կամ առարկայի հատկանիշի հատկանիշներ, օրինակ՝ հազիվ (վազեց, կվազի), մեծապես (շնորհակալ, գոհ), արիաբար (կռվել, կռվեց, կռվող և այլն)»[4]։ Օրինակներից պարզ է դառնում, որ մակբայների մեջ կարող են մտնել միայն այն բառերը, որոնք միշտ կամ համարյա միշտ հատկանիշի հատկանիշ են ցույց տալիս, իսկ որակական ածականների պարագայական կիրառությունը հաշվի չի առնվում։

Այս հարցին ավելի մանրամասնորեն անդրադառնում է Ս. Աբրահամյանը։ Նա գտնում է, որ պարագայական ֆունկցիան ածականի համար կիրառական հատկանիշ է, շարահյուսական դեր է և ոչ թե խոսքի մասային առանձնահատկություն։ Ս. Աբրահամյանը գրում է. «Մակբայներին հարաբերակից են

---

[2] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 129—130։

[3] *Անդ*, էջ 364։

[4] Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց*, էջ 248։

որակական ածականները, որոնք ևս կարող են դրվել բայի վրա և կատարել պարագայի պաշտոն։ Օրինակ՝ լավ աշխատեց, բարձր խոսեց, գոհ ժպտաց, հիանալի պատասխանեց և նման օրինակներում ածականը կատարում է պարագայի ֆունկցիա։ Հիշենք այդ բառերի, որպես ածականների, բուն կիրառությունները՝ լավ գիրք, բարձր լեռ, գոհ մարդ, հիանալի մեքենա, ուր ածականը դրվում է առարկայի անվան վրա և ցույց է տալիս նրա հատկությունը։ Եթե նշված և այլ ածականները դիտելու լինենք այս տեսակետից (և այդպես էլ պետք է դիտել, քանի որ նրանց բնորոշ իմաստն ու դերը առարկայի հատկություն ցույց տալն է), ապա պարզ կդառնա, որ պարագայական ֆունկցիան ածականի համար կիրառական հատկանիշ է, շարահյուսական դեր է և ոչ թե խոսքի մասային առանձնահատկություն։ Մինչդեռ այդպիսի իմաստը և նրանից բխող, նրանով պայմանավորված, կիրառությունը, իրոք որ, բնորոշ են մակբայի համար։ Ածականի և մակբայի տարբերությունը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ մակբայը սովորաբար առարկայի անվան վրա չի դրվում, հետևապես և այն բառերը, որոնց համար առավել բնորոշ է առարկայի անվան վրա դրվելը, ածական են»[5]։

Հեղինակի այս դատողությունների հետ չենք կարող համաձայնել։ Ինչի՞ վրա է հիմնվում Ս. Աբրահամյանը, ասենք, լավ և հիանալի բառերը սոսկ ածականներ համարելով։ Այն բանի վրա, որ, իբր, դրանց՝ առարկայի հատկանիշ ցույց տալը խոսքի մասային հատկանիշ է, դրանց բնորոշ դերն ու իմաստն է, իսկ հատկանիշի հատկանիշ ցույց տալը կիրառական-շարահյուսական և ոչ թե խոսքի մասային հատկանիշ է։

Հարցը դնենք հետևյալ ձևով. ինչո՞ւ են, ասենք, լավ և հիանալի բառերը գործածվում նաև պարագայի պաշտոնով։ Այդ հարցի ամենապարզ և բանական պատասխանն այն է, որ այդ բառերի, որպես խոսքի մասի մեջ, այդ հատկանիշն արդեն կա։

---

[5] Ս. Աբրահամյան, Չբնթվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965, էջ 228։

Վերևում բերված բազմաթիվ փաստերը ակնհայտ ու բացահայտորեն ցույց են տալիս, որ որակական ածականների պարագայական կիրառությունը ոչ թե պատահական, անցողիկ հատկանիշ է, այլ հայերենին հատուկ մի երևույթ է։ Եվ լեզվում ինչքան զանգվածային է, ասենք, լավ և հիանալի բառերի որոշչային կիրառությունը, ինչպես՝ լավ մարդ, գինովոր, աղջիկ, հիանալի դասախոս, աշխատող, բանվոր և այլն, նույնքան զանգվածային է ու գործածական դրանց նաև պարագայական կիրառությունը, ինչպես՝ լավ խոսեց, գրեց, խաղաց, պարապեց, կռվեց, հանձնեց և այլն, հիանալի խոսեց, դասախոսեց, զեկուցեց, պարապեց, կռվեց, խաղաց, դատեց և այլն։ Կարծում ենք, որ ամենևին ճիշտ չէ այդ կիրառություններից առաջինը համարել հիմնական, խոսքիմասային իմաստից բխող, իսկ երկրորդը՝ ոչ հիմնական, շարահյուսական կիրառությամբ պայմանավորված։ Ի դեպ, կարծում ենք, չի կարելի բառի ընդհանուր իմաստն ու շարահյուսական կիրառությունները հակադրել իրար և դրանց միջև անջրպետ տեսնել։ Անժխտելի է, որ բառի ընդհանուր (խոսքիմասային) իմաստը մշակվում է նրա շարահյուսական կիրառությունների մեջ, իսկ այդ վերջիններս իրենց հերթին բառի ընդհանուր իմաստի կոնկրետ դրսևորումներն են։

Ասենք նաև հետևյալը. մի ուրիշ ուսումնասիրող ածականի և մակբայի փոխհարաբերության մեջ առաջնությունը տալով մակբային և օգտվելով Ս. Աբրահամյանի շարադրանքից, կարող էր գրել. «Ածականի և մակբայի տարբերությունը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ ածականը սովորաբար բայի վրա չի դրվում, հետևապես և այն բառերը, որոնք դրվում են բայի վրա, մակբայ են և ոչ թե ածական։ Եվ որովհետև, ասենք, լավ, հիանալի, բարձր, զգույշ, մեղմ և այլ բառերը դրվում են բայերի վրա, ուրեմն մակբայներ են և ոչ թե ածականներ»։

Սրանից կարելի է եզրակացնել, որ ածականի և մակբայի փոխհարաբերությունը քննելիս ոչ թե պետք է ելնել կանխակալ դրույթներից, այլ լեզվի իրական փաստերից, բառերի ունեցած շարահյուսական կիրառություններից։ Այս հարցի մասին խոսելիս չպետք է մոռանալ նաև այն, որ «մաքուր» մակ-

բայ համարվող որոշ բառեր կարող են դրվել նաև գոյականների վրա, ինչպես՝ արագ շարժում, դանդաղ վերադարձ, լիովին ոչնչացում և այլն։ Ճիշտ է, բերված օրինակներում «մակբայները» գործածվում են բայանունների հետ, բայց դա հարցի էությունը չի փոխում, քանի որ նրանք հանդես են գալիս որոշչի պաշտոնով, ուրեմն և մեզ համար տվյալ դեպքում ածականներ են և ոչ թե մակբայներ։ Ասենք նաև այն, որ այսպես կոչված իմաստաբանական մոտեցման դեպքում առանձին դեպքերում ուղղակի անհնար կլիներ որոշել տվյալ բառը ածակա՞ն, թե՞ մակբայ պետք է համարել։ Այսպես օրինակ՝ շատ և քիչ բառերը ավելի հաճախ գոյականների՞, թե՞ բայերի ու ածականների վրա են դրվում—ուղղակի անհնար է ասել։

Եզրակացությունն այն է, որ հայերենում որակական ածականները և մակբայները տարբերակված չեն, և միևնույն բառը կարող է հանդես գալ և հանդես է գալիս ածականի ու մակբայի դերով։ Հասկանալի է, որ առաջին դեպքում տրվյալ բառն ածական է, իսկ երկրորդ դեպքում մակբայ։ Այստեղ հարկ է ավելացնել, որ զանգվածաբար մակբայաբար են գործածվում նաև ածականի բաղդատական աստիճանի ձևերը, ինչպես՝ «Լավ է գրում»||«Ավելի լավ է գրում», «Բարձր է խոսում»||«Ավելի բարձր է խոսում», «Հանդարտ է հոսում»||«Ավելի հանդարտ է հոսում», «Ուրախ է տրամադրված»||«Ավելի ուրախ է տրամադրված» և այլն։ Այս դեպքում ածականի և մակբայի բաղդատական աստիճանի միջև տարբերություն չկա և այս ձևով բաղդատական աստիճան են կազմում և բուն մակբայները՝ դանդաղ—ավելի դանդաղ, արագ—ավելի արագ, կամաց—ավելի կամաց, ուշ—ավելի ուշ և այլն։

Բոլոր ասվածներից կարելի է եզրակացնել, որ մակբայի հիմնական շարահյուսական ֆունկցիան այն է, որ դրվում է բայերի վրա՝ ցույց տալով գործողության ձևը, չափն ու քանակը և հանգամանքները (տեղ, ժամանակ և այլն)։ Ստորև բերվում են համապատասխան օրինակներ. «Արևը մայր մըտավ, օրը միանգամից ցրտեց» (ՎԱ, 17). «Ու հանկարծ իմ մանկության ծանոթ ձայներով լցվեց հովիտը» (ՎԱ, 30). «Նա լիովին զգում էր իր հանցանքը» (ՆԴ, 338). «Մի ստվեր

*անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով» (ՎՏ, 55). «Թավամազ հոնքերը կարծես վայր իջան աչքերի սուր հայացքն ավելի խտացնելու համար» (ՄԱ, 173). «Իջնում են մայթերին, էլեկտրաքարշի վագոնների վրա, ամենուր» (ՎԱ, 31). «Գազանը տեղ-տեղ վայր էր ընկել» (ՎԱ, 48). «Բազմաթիվ նախանձոտ հայացքներ ուղեկցում էին նրան ամենուրեք» (ՇՔ, 33). «Նա հիացած նայում էր աջ ու ձախ ու ինքնիրեն մտածում» (ՄԱ, 217). «Միշտ արևկող էր անում՝ մեջքը վրանին հենած, և միշտ սրթսրթում էր, միշտ մրսում» (ՎԱ, 25). «Տրեխների գոյությունը տակավին չէր երևում» (ՇՔ, 22). «Վաղը պիտի բանտից ազատեր իր մուրհակները» (ՇՔ, 28). «Վաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ» (ԵՉ, 298). «Էգուց նախիրը կտանես արոտ» (ՀՔ, 2, 102). «Աստ՝ վեհարանի հին պատերի մեջ, Սրբապղծորեն թուրք երգ է մխում» (ՊՍ, 21). «Իսկ նա հնչում էր ամենուր ու միշտ, Ամենուր ու միշտ, Ուր հայն էր շնչում» (ՊՍ, 49) և այլն:

Մակբայը կարող է դրվել նաև ածականների կամ մակբայների վրա՝ առավելապես ցույց տալով հատկանիշի աստիճանը կամ գործածվելով մի այլ նշանակությամբ, օրինակ՝ «Սիմոնը մի շատ խելացի քայլ արավ» (ՎԱ, 17). «Կռիվը իմ ներսում բավական երկար տևեց» (ՎԱ, 47). «Լեռնային վտակը հազիվ լսելի ձայնով խշշում էր սառույցի տակ» (ՎԱ, 31). «Գուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օսլայած շապիկի բարձր ու ամուր օձիքը» (ՇՔ, 17). «...կրծքին, որ թեթևակի բաց էր» (ՇՔ, 70). «Այսօր փողոցը գրեթե ամայի էր» (ՇՔ, 59). «Նրա դեմքը խիստ լուրջ արտահայտություն էր ստացել» (ՆԴ, 325). «Հավիտյան վազող ու միշտ ժրաջան՝ խոտերի միջից առվակը խնդաց» (ԵՉ, 6). «Հավետ անմոռաց մեր Գոլիցինը» (ՊՍ, 90) և այլն:

Մակավադեպ մակբայները կարող են գործածվել նաև թվականների հետ՝ ցույց տալով թվականով արտահայտված քանակի հավաստիականության աստիճանը. օրինակ՝ «Ընդամենը մի տասներեք գարուն տեսած նորափեսան» (ՊՍ, 144). «Երևի հենց այդ երկու ձուն է ունեցել, ընդամենը երկու ձու» (ՎԱ, 18). «Եվ կոշտ ու կոպիտ գերմաներենը Շուրջ երեք տա-

քի հարկադրաբար ճկվում է անվերջ նրա բերանում» (ՊՍ, 24). «Ուղիղ հիսուն տարի առաջ թողնելով իր աննշան ծննդավայրը...» (ՇՔ, 5). «Մոտ հինգ հարյուր ուսանողներ էին դուրս եկել շաբաթօրյակի» (ՍՀ) և այլն։

Հիմնականում մակբայական կիրառություն ունեցող որոշ բառեր կարող են գործածվել նաև գոյականների, առավելապես բայանունների հետ որպես որոշիչ, օրինակ՝ «Եվ մեկը անտես շարժումով արագ Ոսկի է մաղում» (ՎՏ, 157). «Հապճեպ մի շարժումով գիրքը ծալեց, Դրեց արկղում ավանդական» (ԵՉ, 249). «Միջոցների խնայողաբար ծախսման շնորհիվ տնտեսվել են բավականին մեծ գումարներ» (Լր.). «Վերջիվերջո պետք է հասնել փորձարկումների լիովին արգելման» (Լր.). «Այս հարցը կարող է լուծվել միայն Կիպրոսի վերաբերյալ Անվտանգության խորհրդի ընդունած բանաձևերի խստիվ կատարման հիման վրա» (Լր.)։

Ս. Աբրահամյանը բերելով նույնատիպ մի շարք օրինակներ, ինչպես՝ միանգամից արգելում, լիովին ոչնչացում, հանկարծակի խռովություն, արագ շարժում, հանպատրաստից զրույց, ուշ աշնանը, վաղ գարնանը և այլն, այն միտքն է հայտնում, որ այսպիսի դեպքերում մենք գործ ունենք մակբայ+գոյական կապակցությունների հետ[6]։ Մեր կարծիքով, սակայն, արագ շարժում, դանդաղ վազք, ինչպես և վերևում բերված բոլոր կապակցությունները ածական+գոյական սովորական կապակցություններ են, ուրեմն և լրացման պաշտոնում հանդես եկող բառերը այսպիսի կիրառություններում պետք է համարել ածականներ և ոչ թե մակբայներ։

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ[7]

64. ՊԱՐԶ ՄԱԿԲԱՅՆԵՐ.— Կազմության տեսակետից մակբայները տարբերվում են նյութական իմաստ արտահայտող մյուս խոսքի մասերից նրանով, որ, մի կողմ թողած մակ-

---

[6] *Տե՛ս Ս. Աբրահամյան, Ձեռքվող խոսքի մասերը..., էջ 223—224։*

[7] *Մակբայների կազմության մասին ավելի մանրամասն տե՛ս անդ, էջ 233—256։*

բայաբար հանդես եկող որակական ածականները, բուն մակբայների մեջ մտնող արմատական բառերը շատ քիչ են, և դրանց քանակը չի անցնում մի քանի տասնյակից։ Ժամանակակից լեզվի տեսակետից արմատական կարող են համարվել հետևյալ մակբայները. երբեմն, այժմ, միշտ, հետո, իսկույն, նախ, ապա, իսպառ, արդեն, միասին, հիմա, կամաց, երբեք, դեռ, մերթ, շարունակ, աստ, անդ, ամենուր, հապճեպ, հավետ, հավերժ, հանկարծ, կանուխ, հույժ, հար, շտապ, արդ, ուշ, շուտ, վեր, վար, ցած, առաջ, արագ, դանդաղ և այլն։

Նշենք, որ ժամանակակից լեզվի տեսակետից պարզ կամ արմատական համարվող բերված մակբայների գոնե մի մասը պատմականորեն ոչ թե պարզ, այլ բաղադրյալ բառեր են։

Պարզ մակբայների սակավաթիվ քանակը լեզվում անընդհատ համալրվում է հատկապես կրկնավոր բարդությունների և գոյականի մեռած կամ քարացած հոլովական ձևերի ու նախդրիվ կապակցությունների միջոցով։

65. ԿՐԿՆԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ ԵՎ ՔԱՐԱՅԱԾ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ ՈՒ ՆԱԽԴՐԻՎ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ.—Մակբայների կազմության ամենատարածված կաղապարներից մեկը կրկնավոր բարդություն է, ըստ որում կրկնվող բաղադրիչները կարող են միանալ նախդիրներով, առաջին բաղադրիչը կարող է հանդես գալ բացառական հոլովի ձևով և այլն։

Մի կողմ թողած ածականները, մակբայների մի զգալի մասը կազմվում է գոյականների և մակբայների պարզական կրկնությամբ, ինչպես՝ շարաճ–շարաճ, հրթիռ–հրթիռ, առուառու, հալումած–հալումած, հիվանդ–հիվանդ, խումբ–խումբ, կամաց–կամաց, արագ–արագ, մերթ–մերթ, ստեպ–ստեպ, շուտ–շուտ, ուշ–ուշ և այլն։

Սակայն չափազանց շատ են այն մակբայները, որոնք կազմվում են նույն գոյականի կրկնությամբ, որոնց մեջ մրտնում է առ նախդիրը, ինչպես՝ շիթ առ շիթ, կողով առ կողով, ողկույզ առ ողկույզ, բոպե առ բոպե, բանակ առ բանակ, խավ առ խավ, ժամանակ առ ժամանակ, կտոր առ կտոր, կաթիլ առ կաթիլ, արցունք առ արցունք, բառ առ բառ, տող

ան տող, կետ առ կետ, fայլ առ fայլ, վայրկյան առ վայրկյան, գանգված առ գանգված և այլն։

Կրկնավոր մակբայներ կան նաև ի նախդրով, ինչպես՝ ճիճիճ, խառնիխուռն, հերթ ի հերթ, շար ի շար, դուրս ի դուրս։ Ծայրեիծայր *բառի մեջ առաջին բաղադրիչը, իսկ վերջիվերջո բառի մեջ վերջին բաղադրիչը կրկնված են թեքված ձևով։*

Կրկնավորներ կան նաև ց նախդրով, օրինակ՝ orեgor, տարեցտարի։

Կրկնավոր մակբայները շատ են նաև առաջին բաղադրիչի գրաբարյան բացառականի ձևով, ինչպես՝ fառեfառ, աստեաստ, բերեբերան, շարեշար, դռնեդուռ, դարեդար, ժամեժամ, պատեպատ, տնետուն, գյուղեգյուղ, ձորեձոր։ *Սրանք, ինչպես և նախորդները, այնքան շատ են և կազմվում են այնքան առատորեն, որ կարծես թե բառերի պարզ շարահյուսական կապակցություններ են։*

Մակբայական իմաստներ են արտահայտվում նաև ժամանակի ու տեղի իմաստ արտահայտող մի քանի բառերի կրկնությամբ՝ ու շաղկապով կամ առանց դրա, օրինակ՝ գիշեր-ցերեկ, ամառ-ձմեռ, դես-դեն *կամ* գիշեր ու ցերեկ, ամառ ու ձմեռ, դես ու դեն, զօր ու գիշեր, աջ ու ձախ, տակն ու վրա, դեմուդեմ *և մի քանի ուրիշները։*

Մակբայների մի զգալի մասն էլ առաջանում է գրաբարյան կամ ուղղակի հին հոլովական ձևերից և նախդրով կապակցություններից, ինչպես՝ ի բնե, ի ծնե, ի սրտե, ի վերջո, ի մոտո, ի տես, ի ցույց, ի սպաս, ցմահ, ցգերեզման, ցայսօր, վաղուց, ճնուց, մանկուց (մանկութ), փոfրուց, առայժմ, առմիշտ *և նմանները։*

Մակբայական իմաստ արտահայտող այսպիսի բառերի մեջ առանձին տեղ են գրավում տեղի իմաստ արտահայտող մի շարք գոյականների և ի վեր||ի վար կապերի կապակցությունները, ինչպես՝ սարն ի վեր||սարն ի վար, լեռն ի վեր, ջուրն ի վեր, գետն ի վեր, ժայռն ի վեր, ճոսաճիճն ի վեր, գետակն ի վեր, ջրվեժն ի վեր։

Այսպիսի կապակցություններ կան նաև հոգնակիի ձևերի հետ, օրինակ՝ սարերն ի վեր, ժայռերն ի վեր, կատարներն ի վար *և այլն։ Այսպիսի բաղադրություններն այնքան շատ են և*

այնքան ազատորեն են կազմվում, որ թվում է, թե գործ ունենք ոչ թե առանձին ու անկախ բառերի, այլ պարզ շարահյուսական կապակցությունների հետ։

66. ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ԱՅԱՆՅՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԵՎ ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ԲԱՐ, ՈՐԵՆ, ՊԵՍ ԱՅԱՆՅՆԵՐԸ.— Ժամանակակից հայերենում մակբայների կազմության մեջ չափազանց մեծ դեր է խաղում ածանցումը։ Կան մոտավորապես մեկ տասնյակ ածանցներ, որոնք միայն մակբայներ են կազմում կամ հանդես են գալիս մակբայների կազմության մեջ։ Դրանցից ամենակենսունակներն են **բար, պես, որեն** ածանցները։ Առաջին երկուսը միշտ բառերին են միանում ա հոդակապով, և, այսպիսով, ունենում ենք **աբար, ապես** ձևերը։

Բար, պես և որեն ածանցները՝ հատկապես առաջին երկուսը իմաստով իրար շատ մոտ են և հաճախ դրվում են միևնույն բառերի վրա՝ այսպիսով կազմելով համանիշ բազմաթիվ բառեր, ինչպես՝ **ագահ||աբար||որեն, անիրավ||աբար||որեն, անկախ||աբար||որեն, ավազակ||աբար||որեն, գազան||աբար||որեն, գերազանց||աբար||որեն||ապես, գիտակց||աբար||որեն, դաժան||աբար||որեն, դավաճան||աբար||որեն, դրական||ապես||որեն, զգուշ||աբար||որեն, լրջ||աբար||որեն||ապես, խիզախ||աբար||որեն, խելք||աբար||որեն, կտրական||աբար||որեն||ապես, կուր||աբար||որեն, հմտ||աբար||որեն, մեղմ||աբար||որեն, շքեղ||աբար||որեն, սանձարձակ||աբար||որեն, վերջնական||աբար||որեն||ապես, տգիտ||աբար||որեն, քնքշ||աբար||որեն, կանխ||աբար||ապես, ձևական||որեն||ապես, ստուգ||ապես||որեն** և այլն։

Սակայն, չնայած այսպիսի զուգահեռություններին, այս ածանցների մեջ կիրառական և իմաստային որոշ տարբերություններ են նկատվում։

Բար.—Ծագում է **բարի** բառի **բար** արմատից[8] և իր նյութական իմաստով առկա է **բարձ, բարոյական, գազանաբարո** և այլ բառերի մեջ։

ա) Գործածվելով անձի, սակավադեպ նաև կենդանիների

[8] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 233. Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 174—175։

անունների հետ, նշանակում է «իբրև», «որպես», «նման», «ձևով», ինչպես՝ բարեկամաբար, ասպետաբար, ավազակաբար, արհայաբար, բարբարոսաբար, գողաբար, դյուցազնաբար, եղբայրաբար, ընկերաբար, թշնամաբար, լրբաբար, հայրաբար, ստրկաբար, տիրաբար, գազանաբար, աղվեսաբար:

Կան նաև այսպիսի կազմություններ՝ գոյականաբար, ածականաբար, մակբայաբար, ոոպեաբար, վայրկյանաբար, աստիճանաբար, անմիջաբար:

բ) Դրվելով հատկապես անձի հատկանիշ ցույց տվող որակական ածականների վրա, որոնք սովորաբար մակբայաբար ևս կարող են գործածվել, նրանց վերածում է «մաքուր» մակբայների՝ նշանակելով «կերպով», «ձևով», ինչպես՝ ազնվաբար *(ազնիվ կերպով)*, ագահաբար, անամոթաբար, անիրավաբար, անխղճաբար, անկեղծաբար, ապօրինաբար, արիաբար, բարեհոգաբար, գաղտնաբար, գիտակցաբար, գոռոզաբար, գոհունակաբար, զգուշաբար, լրջաբար, խիզախաբար, հեզաբար, համառաբար, հնազանդաբար, մեղմաբար, միամտաբար, միասնաբար, մոլեգնաբար, նենգաբար, ջանասիրաբար, վստահաբար, քաջաբար, ճիշդաբար *և այլն:*

Որեն.—*Առաջանում է* որենի *բառի* որէն *արմատից*[9] *և իր նյութական իմաստով առկա է* որենի, օրինական, օրինապահ, ապօրինի *և բազմաթիվ այլ բառերի մեջ: Զրկվելով նյութական նշանակությունից՝ որպես ածանց նշանակում է «ձևով», «կերպով», «նման», «պես»:*

ա) Դրվելով ածականների վրա՝ նրանց վերածում է «մաքուր» մակբայների՝ նշանակելով «կերպով», «ձևով»: Այս իմաստով որեն *ածանցը նույնանիշ է* աբար *ածանցին:* Որեն *ածանցը այս նշանակությամբ շատ գործուն է ու կենսունակ, և դրանով կազմվել և կազմվում են ածականներին համապատասխան բազմաթիվ մակբայներ, ինչպես՝* ագահորեն, ազատորեն, ազնվորեն, ակնհայտորեն, ակտիվորեն, ամոթխածորեն, անկեղծորեն, անհամաչափորեն, աշխուժորեն, երջտապահորեն, ճշտորեն, մեղմորեն, միամտորեն, նենգորեն, նողկալիորեն, երբորեն, շոշափելիորեն, շռայլորեն, ջերմորեն,

---

[9] *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 266:*

սանձարձակորեն, սառնասրտորեն, սերտորեն, սմանչելիորեն, վնասակաոեն, վստահորեն, ուժգնորեն, fմահաճորեն, օրինակելիորեն և այլն։

Աբեղյանը խոսելով այսպիսի կազմությունների մասին՝ շեշտում է. «Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս ոբեն *բառով կազմությունները չափազանցության են հասցնում և տգեղ ու ավելորդ բաղադրություններ են առաջ բերում. ինչպես են՝ սարսափելիորեն, անխուսափելիորեն և նմանները։ Հայոց լեզվի հատկությամբ ամեն անգամ, երբ կարելի է ածականն անփոփոխ իբրև մակբայ գործածել, այսպես էլ պետք է վարվել, օրինակ՝ լավ խոսել, պարզ գրել, հիանալի խոսել, և ոչ թե լավորեն, պարզորեն, հիանալիորեն խոսել»*[10]։

Ինչքան էլ որ Մ. Աբեղյանի դիտողությունը ճիշտ լինի, համենայն դեպս հատկապես վերջերս ոբեն *ածանցով բաղադրությունները լեզվում չափազանց տարածվում են։ Դրա օգտին են խոսում մեր բերած բազմաթիվ օրինակները, որոնք կենդանի ու գործածական բառեր են և առավելապես քաղված են հրապարակախոսական գրականությունից։ Նշենք նաև այն, որ Մ. Աբեղյանն, օրինակ,* անխուսափելիորեն *բառը համարում է «տգեղ ու ավելորդ բաղադրություն», այնինչ դա լայնորեն (և ոչ թե լայն) գործածվում է ժամանակակից լեզվում և ամենևին էլ տգեղ ու ավելորդ բաղադրություն չէ։ Եվ եթե, չնայած ածականների մակբայական կիրառությանը, ածականներից համապատասխան* ոբեն *ածանցով նորանոր մակբայներ են կազմվում, նշանակում է լեզվում տենդենց է նկատվում ածականը և մակբայը, գոնե մասնակիորեն, տարբերակել նաև ձևաբանորեն։*

բ) Ձևի մակբայներ է կազմում նաև մի շարք գոյականներից, ինչպես՝ ասպետորեն, ավազակորեն, գազանորեն, եղբայրորեն, սարկորեն, վարպետորեն, բոլշևիկորեն, կոմունիստորեն: *Այսպիսի նշանակություն արտահայտող կազմություններ, սակայն, ավելի շատ են* բար *ածանցով։*

գ) Դրվելով հատկապես ական *ածանցն ունեցող մի շարք բառերի վրա (որոշ դեպքերում բաղադրության մեջ* ական

---

[10] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 266—267։*

ածանցը չի պահպանվում)՝ որեն *ածանցն արտահայտում է մասնական, մասնավորեցման իմաստ՝ նշանակելով «կողմից», «տեսակետից», ինչպես*՝ գիտականորեն *(գիտական կողմից, տեսակետից)*, գործնականորեն, դասակարգայնորեն, զգայականորեն, տեսականորեն, պայմանականորեն, էականորեն, լեզվականորեն, բերականորեն: *Հանդիպել բաղադրություններ*ի մեջ ական ածանցը չի պահպանվում՝ գեղարվեստորեն *(գեղարվեստական տեսակետից)*, թվաբանորեն, հանրահաշվորեն, մաթեմատիկորեն, ռնաբանորեն, ձևաբանորեն, իմաստաբանորեն:

Պեա.—*Նույնանում է պես արմատի հետ և նախնական բաղադրություններ*ի մեջ գործածվել է հենց այդ նշանակությամբ, *ինչպես*՝ տղայապես, վայրենապես, զինվորապես, օտարապես, բժշկապես, փայլականապես և *այլն: Մ. Աբեղյանը գրում է. «Այսպիսի բաղադրությունները աշխարհաբարում փոխարինվում են պես հատադրությամբ՝ տղայի պես, վայրենու պես, զինվորի պես, օտարի պես և այլն»*[11]:

ա) Դրվելով գոյականների վրա՝ մասնական իմաստ արտահայտող մակբայներ է կազմում «տեսակետից», «կողմից» բառերի նշանակությամբ: «Այս մակբայները համապատասխան են նույն գոյականներից ական *ածանցով կազմված ածականներին»*[12], *ինչպես*՝ գաղափարապես *(գաղափարական տեսակետից)*, մեթոդապես, նյութապես, նոգեպես, որակապես, տնտեսապես, մարմնապես, ֆիզիկապես, բարոյապես. ական *ձևով*՝ բաղմականապես: *Կան նաև*՝ արտաքնապես, ներքնապես:

բ) Դրվելով ածականների վրա՝ կազմում է մակբայներ և նշանակում է «կերպով», «ձևով», օրինակ՝ արժանավորապես, գլխավորապես, դրականապես, զգալապես, ժամանակավորապես, խորապես, կատարելապես, կտրականապես, հայտնապես, հատկապես, հիմնավորապես, մասնավորապես, մշտապես, մոտավորապես, վերջնականապես, վճռականապես:

*Այս իմաստի դեպքում ևս բաղադրություններ*ի մեջ մի քանի *ածականների* ական *ածանցը չի պահպանվում, ինչպես*՝

[11] *Անդ, էջ 276:*

[12] *Անդ, էջ 277:*

արմատապես *(արմատական ձևով)*, էապես, վայրկենապես:

67. ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ՄՅՈՒՍ ԱԾԱՆՑՆԵՐԸ.—Կան այլ ածանցներ ևս, որոնք մակբայներ են կազմում կամ մասնակցում են մակբայների կազմությանը, բայց դրանք քար, պես *և* որեն *ածանցների նման գործուն ու տարածված չեն: Ստորև բերվում են այս կամ այն չափով կենդանի բառակազմական նշանակություն ունեցողները:*

Ովին||ովի.—*Կազմում են ձևի կամ իմաստային այլ երանգներ ևս ունեցող մակբայներ, օրինակ՝* ազգովին, խրմբովին, լիովին, գլխովին, ամբողջովին, բոլորովին, ամենևին, տակավին, տնովի (տուն–տնովի), յուրովի:

Պատիկ.—*Կազմում է չափ ու քանակի մակբայներ, օրինակ՝* կրկնապատիկ, եռապատիկ, բառապատիկ, ննգապատիկ, յոթնապատիկ, տասնապատիկ, հարյուրապատիկ, հազարապատիկ, բյուրապատիկ, բազմապատիկ *և այլն:*

Ուց.—*Բացառական հոլովի վերջավորություն է, որը մի քանի բառերի մեջ ածանցի արժեք ունի՝ կազմելով ժամանակի մակբայներ, օրինակ՝* առաջուց, ննուց, մանկուց, վաղուց, շուտուց, *այլև՝* էգուց:

Անց.—*Գործածվում է մի քանի բառերի մեջ՝ կազմելով ձևի մակբայներ՝* երեսանց, կողքանց, սրտանց, շապկանց:

Ուստ.—*Գործածվում է որոշ բառերի մեջ՝ կազմելով տեղի մակբայներ, որոնցից մի քանիսի մեջ զգալի է նաև ձևի նշանակությունը, ինչպես՝* արտաքուստ, ներքուստ, վերուստ, ներուստ:

Ակի.—*Կազմում է մի քանի բառեր, որոնք համատեղում են և՛ մակբայական, և՛ ածականական նշանակություն, օրինակ՝* շեղակի *(հարվածել, հարված)*, շեշտակի, լայնակի, ուղղակի, հանկարծակի, հաճախակի, երբեմնակի:

Վարի.—*Սովորաբար ներկայացնում են որպես ածականակերտ ածանց, բայց դրանով կազմված բառերը իրենց մեջ համատեղում են նաև մակբայական իմաստ ու կիրառություն, օրինակ՝* հաղթավարի խոսել, տղայավարի վերաբերվել: Վարի *ածանցով կազմվում են մի շարք բառեր, ինչպես՝* գյուղավարի, տնավարի, գժավարի, իշավարի, արջավարի, աղավա-

րի, գողավարի, մարդավարի: *Մակբայական կիրառությամբ այս բառերն արտահայտում են ձևի նշանակություն:*

Գին.—*Այս ածանցով կազմված բառերը ևս որպես կանոն հանդես են գալիս ածականի և մակբայի ֆունկցիայով: Գին ածանցը կազմում է մի շարք բառեր, ինչպես՝* թախանձագին, ողբագին, տխրագին, լալագին, ցավագին, սրտագին, վշտագին, մոլեգին, ճիվանդագին, զվարթագին, ուժգին *և այլն:*

ՄԱԿԲԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

68. ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՄՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՄԱԿԲԱՅՆԵՐԻ.—*Երբ գոյականները նախադասության մեջ իրենց զանազան հոլովական ձևերով կատարում են պարագայի պաշտոն, ապա նրանք այս կամ այն չափով կորցնում են իրենց առարկայական նշանակությունը: Վերցնենք հետևյալ նախադասությունները. «Լուրը նույն ժամին տարածվեց ամբողջ* գաղաթում». «Նա գյուղում լավ որսորդի համբավ ուներ». «Նույն վայրկյանին եկվորը չոքեց ծերունու մահճակալի առջև». «Ամռանը գինվորների մեծ մասը վերադարձավ». «Ուժեղ ցավերից վարազը ժանիքներով հողն էր փորում». «Բարկությունից սաստիկ գունատվել էր». «Մեծ սիրով կկատարեմ քո հանձնարարությունը». «Համբերությամբ լսում էր իր մեծ եղբոր խրատները: Այս նախադասությունների մեջ ընդգծված բառաձևերը ցույց են տալիս գործողության կատարման տեղը, ժամանակը, պատճառը, ձևը, այսինքն՝ հանդես են գալիս պարագայական նշանակությամբ, իսկ սա էլ իր հերթին նշանակում է, որ գյուղում, ամռանը, ցավերից, վայրկյանին և այլ բառաձևերը հակվում են դեպի մակբայները: Սակայն այս և նման ձևերը իրավացիորեն մակբայ չեն համարվում և չեն էլ կարող համարվել, որովհետև սրանք ոչ թե անկախ ու ինքնուրույն բառեր են, այլ բառաձևեր և որպես այդպիսիք մտնում են համապատասխան գոյականների հոլովական հարացույցի մեջ՝* գյուղ—գյուղի—գյուղից—գյուղով—գյուղում, վայրկյան—վայրկյանի—վայրկյանից—վայրկյանով—վայրկյանում *և այլն: Հասկանալի է, որ բառաձևի շարահյուսական այս կամ*

այն կոնկրետ կիրառությամբ չի կարելի որոշել բառի խոսքիմասային պատկանելիությունն ընդհանրապես։ Մյուս կողմից՝ չնայած որ գոյականների պարագայական կիրառության դեպքում նրանց առարկայական նշանակությունը այս կամ այն չափով խամրում է, սակայն սխալ կլիներ ասել, թե այդ դեպքում նրանց առարկայական նշանակությունը վերանում է ընդհանրապես։ Ինչքան էլ որ **ղաղաթ, ամառ, վայրկյան** և այլ բառերը գործածվում են որպես պարագա, այնուամենայնիվ առարկայական նշանակությունը նրանց մեջ առկա է և այդ պատճառով էլ նրանք ազատ որոշիչներ են ընդունում, իսկ բառի շարահյուսական այդ հատկանիշը գոյական լինելու լավագույն չափանիշն է։

Հայ քերականության մեջ ճիշտ կերպով գոյականով արտահայտված պարագաները առանձնացվել են մակբայով արտահայտված պարագաներից. առաջինները կոչվել են **պարագայական խնդիրներ**, իսկ երկրորդները՝ **բուն պարագաներ**։ Մ. Աբեղյանը նշում է, որ պարագայական խնդիրները, այն է՝ գոյականով արտահայտված պարագաները, միջին տեղ են բռնում բուն պարագաների՝ այսինքն մակբայով արտահայտված պարագաների և առարկայական խնդիրների մեջ։ Նա գրում է. «Մի կողմից այս լրացումները խնդիր են, որովհետև պահում են իրենց հոլովական ձևերը և հոլովներին հատուկ նշանակությունները։ Մյուս կողմից սակայն դրանք **պարագա** են, որովհետև խոսքի մեջ դրվելով բայի վրա՝ կորցնում են իրենց առարկայական իմաստը, այսինքն չեն մտածվում իբրև բան, ինչ կամ առարկայական խնդիր, ինչպես են կրող, ներգործող և բնության խնդիրները, այլ առնվում են մի տեսակ իբրև մակբայ՝ մտածվելով իբրև տեղ (ուր, որտեղ), ժամանակ (երբ), ձև կամ որակ (ինչպես) և քանակ (որքան)։ Խոսքի մեջ ունեցած իրենց նշանակությամբ ուրեմն այս լրացումները պարագաների կարգին են պատկանում, բայց իսկական պարագա կամ մակբայ չեն, որովհետև, ինչպես ասացինք, պահում են իրենց հոլովական նշանակությունը։ Օրինակ՝ երբ ասում ենք՝ Նա քաղաքից վերադարձավ դյուղը, ինչքան էլ **ղաղաթից** (որտեղի՞ց և ոչ՝ ինչի՞ց) և **գյուղը** (ո՞րտեղ, ո՞ւր և ոչ՝ ի՞նչը) լրացումները խոսքի մեջ տեղի պարագա են նշա-

նակում, բայց և այնպես fաղաfից բացառական հոլովն ու գյուղը հայցական հոլովը կատարելապես պահում են իրենց կենդանի հոլովական նշանակությունը։ Այս պատճառով fաղաfից և գյուղը լրացումները կարելի չէ իսկական պարագաների, այսինքն՝ մակբայների մեջ դնել։ Դրանք պարագայական խնդիրներ են։ Բուն պարագաների կամ մակբայների մեջ կարելի էր դնել այս լրացումները, եթե դրանց մեջ զգալի չլիներ հոլովական ձևը, ինչպես՝ արդյոք, հավաստյավ, հազիվ, այսուհետև, այնուհետև, արդեն և այն բառերի մեջ, որոնք հոլովված բառեր են, բայց հնացած, քարացած ձևերով, և մենք այլևս չենք գիտակցում դրանց մեջ ո՛չ առարկայի գաղափարը և ո՛չ գործիական կամ բացառական հոլովի նշանակությունը»[13]։

Եթե մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ Մ. Աբեղյանի քերականական համակարգում երբեմն խոսքի մաս և նախադասության անդամ հասկացությունները հավասարեցվում են, ապա տվյալ հարցի լուծումն ընդհանրապես ճիշտ է տրված, և ճիշտ կլիներ ժամանակակից քերականությունների մեջ ևս ընդունել պարագայական խնդիրներ և բուն պարագաներ տերմինները։

Տվյալ դեպքում, սակայն, մեզ հետաքրքրում է գոյականի և մակբայի հարաբերակցության և տարբերակման հարցը։ Մ. Աբեղյանը նշում է, որ բուն պարագաներին ժամանակի անուններից մոտենում են այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, ինչմի, առաջ։ «Բայց այդ բառերը մակբայ համարելու հիմք չկա. մակբայներն անփոփոխ մնացող բառեր են, մինչդեռ դրանք հոլովվող բառեր են և խոսքի մեջ կատարելապես պահում են իրենց հոլովական նշանակությունները»[14]։ Շարունակելով առարկայական և պարագայական խնդիրների (գոյականների և մակբայների) տարբերակման մասին իր դիտողությունները, Մ. Աբեղյանը գտնում է, որ բուն պարագաներին մոտենում են ավելի տեղի անունները՝ առաջ, դուրս, ներս, մեջ, վրա, տակ և այլն, բայց դրանք ևս մակբայներ չեն, այլ միայն պարագայական խնդիր, երբ հոդ են ստանում

[13] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 382։

[14] *Անդ, էջ 383։*

կամ հոլովվում են՝ պահելով իրենց հոլովական նշանակությունները[15]։

Այսպես բնորոշելով՝ Մ. Աբեղյանը գրում է նաև հետևյալը. «Այս բառերը շատ մոտ են մակբայներին և կարող են գրեթե մակբայ համարվել, միայն այն ժամանակ, երբ առանց հոդի և հայցական հոլովով դրվում են բայերի վրա՝ եղանակավորելով բայերի նշանակությունը կամ մի նոր նշանակություն տալով նրանց։ Այդ դեպքում սակայն բայն ու իր հարադիրը միասին առնվում են իբրև մի բարդ բառ, մի հարադրյալ բայ, ինչպես՝ դուրս անել (արտաքսել), դուրս գալ (ելնել), ներս անել, մեջ ընկնել, մեջ տալ, առաջ ընկնել, առաջ գալ, դեմ անել, դեմ տալ, հետ անել, վեր ելնել, վրա տալ, վրա բերել, վրա գալ, շուրջ ածել, շուրջ (շուռ) գալ, մոտ անել, մոտ բերել և այլն։

Նույն ձևով միևնույն բառերի հայցական հոլովը, երբ առանց հոդի գործ է ածվում մի սեռական խնդրով, համարվում է գրեթե ետադրություն. ինչպես՝ Մեծի մոտ խոսքս կտրուկ է։ — Նրանք անուշ քնի մեջ են։ — Ձիու առաջ խոտ ձգիր։ — Քարերի վրա փռած էր լոշը։ Բայց երբ նույն բառերը հոդով են և կամ մյուս հոլովական ձևերով, այլևս չեն կարող հետադրություն համարվել, այլ պարագայական խընդիր մի սեռական վերադրով, որովհետև այս դեպքում այս անունները պահում են կատարելապես իրենց հոլովական նըշանակությունները. օրինակ՝ Բազումքը հասել էր շամփուր ու կշեռքի մոտը. մոտիս գիրքը. Գնա՛, մոտիցս հեռացիր. Եկավ մոտովս անց կացավ. Հոդի տակիցը դուրս եկավ. Հիմի տղես իմ առաջիս խոսում է (Պռ.)»[16]։

Մենք մի առիթով խոսել ենք գոյականների ու կապերի հարաբերակցության մասին և այն միտքն ենք հայտնել, որ այսպես կոչված տեղի անունները՝ մեջ, վրա, տակ, մոտ և այլն որպես ետադրություններ են հանդես գալիս իրենց և՛ ուղիղ, և՛ թեք ձևերով կիրառվելիս՝ այսպիսով պաշտպանելով այն դրույթը, որ արդի հայերենում տարածական իմաստ ար-

---

[15] *Անդ, էջ 385։*

[16] *Անդ, էջ 386։*

տահայտող որոշ կապեր հոլովվում են[17]*։ Սակայն այստեղ մի կողմ թողնելով կապերի հարցը՝ անդրադառնանք գոյականների և մակբայների հարաբերակցության խնդրին։*

Ինչպես տեսանք, Մ. Աբեղյանը այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, ճիմի, առաջ *ժամանակի անունները վճռականորեն ու անվերապահորեն գոյականներ է համարում։ Նա հավասարության նշան է դնում սրանց և* շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն *բառերի միջև՝ գրելով. «Նվ ինչպես որ վերջինները ժամանակի պարագայի նշանակությամբ գործ են ածվում իբրև ժամանակի հայցական՝ փոխանակ ներգոյականի,—նա առավոտը եկավ, նա իրիկունը կգա, նա ամառն եկավ և այլն,—նույն ձևով բանում են և՝ նա երեկ եկավ, նա վաղը կգա, նա էգուց կգա և այլն։* Այսօր *բառն ևս նույն ձևի պարագայական խնդիր է և ոչ մակբայ, ինչպես որ պարագայական խնդիր են՝ նա այս շաբաթ գնաց, նա այս ամիս գնաց, նա այս տարի գնաց, այս ամառ ես գյուղումն էի, այս ձմեռ ձյուն չեկավ և այլն խոսքերի մեջ* այս շաբաթ, այս ամիս, այս տարի, այս ամառ, այս ձմեռ»[18]*։ Ելնելով դրանից էլ նա գտնում է, որ այդ բառը ևս պետք է գրել իբրև երկու բառ՝* այս օր, *ինչպես որ գրվում են* այս շաբաթ, այս ամիս, այս տարի[19] *և այլն։*

Կարծում ենք, որ ճիշտ չէ հավասարության նշան դնել այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, ճիմի, առաջ *և* շաբաթ, ամիս, տարի, առավոտ, իրիկուն *բառերի միջև։ Մ. Աբեղյանն այս երկու խմբի բառերը հավասարեցնում է, որովհետև և՛ առաջինները, և՛ երկրորդները հոլովվող բառեր են և պահում են իրենց հոլովական նշանակությունները։ Դա, իրոք, ընդհանրություն է։ Բայց բառերի այդ խմբերը չունե՞ն արդյոք ձևակազմական և իմաստային ու կիրառական տարբերություններ։ Այդպիսի տարբերություններ անշուշտ կան։ Դրանք կարելի է ամփոփել հետևյալ կետերում։*

---

[17] *Տե՛ս* Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 333—339։*

[18] *Անդ, էջ 383։*

[19] *Անդ։*

1. Առաջին խմբի բառերը հոգնակի չեն կարող կազմել (միայն գործածական է առաջ բառի հոգնակի ներգոյականի ձևը՝ առաջներում), իսկ երկրորդները ազատ գործածվում են հոգնակի թվով՝ շաբաթներ, ամիսներ, տարիներ *և այլն։ Ըստ այդմ, վերջիններն ազատ կապակցվում են քանակական թվականների հետ՝* երկու շաբաթ, երեք շաբաթ, չորս շաբաթ, չորս ամիս, հինգ տարի *և այլն, իսկ առաջինները քանակական թվականների հետ կապակցվել չեն կարող.* երկու այսօր, չորս երեկ *և այլ ձևեր լեզվում գոյություն չունեն։*

2. Առաջին խմբի բառերը, որպես կանոն, ենթակայի և խնդրի պաշտոնով հանդես գալ չեն կարող, իսկ երկրորդ խմբի բառերի գործածությունն այդ պաշտոններով սովորական է ու զանգվածային։

3. Այսօր, երեկ, վաղը, էգուց *և այլ բառերը, որպես կանոն, որոշիչներ ընդունել չեն կարող՝* գեղեցիկ, հաղթական այսօր, երեկ, վաղը, էգուց *և այլ կապակցությունները սովորաբար գործածական չեն, իսկ* շաբաթ, ամիս, տարի *և այլ բառերը ազատորեն որոշիչներ են ընդունում՝* գեղեցիկ, հաղթական շաբաթ, ամիս, տարի *և այլն։*

Այս երկու խմբի բառերի ձևակազմական և կիրառական-շարահյուսական տարբերությունները արդյունք են այն բանի, որ շաբաթ, ամիս, տարի *և այլ բառերը ցայտուն դրսևորված առարկայական նշանակություն են արտահայտում, իսկ* այսօր, վաղը, երեկ, էգուց, այժմ, հիմի, առաջ *բառերի առարկայական նշանակությունը եթե իսպառ էլ չի մարել, ապա որոշակի չափով խամրած է։ Այս բառերի մեջ առարկայական նշանակության որոշ հետքեր պետք է տեսնել այնքանով, որքանով որ վերջիվերջո դրանք հոլովվող բառեր են, բայց պետք է նկատի ունենալ, որ դրանց հոլովական ձևերը՝* այսօր—այսօրվա—այսօրվանից, երեկ—երեկվա—երեկվանից, վաղը—վաղվա—վաղվանից *և այլն հանդես են գալիս պարագայական (ուղղականը և բացառականը) կամ որոշչային (սեռական-տրականը) ֆունկցիաներով, այսինքն՝ ոչ առարկայական, ոչ գոյականական ֆունկցիաներով։*

Այսքանից հետո ո՞րն է ընդհանուր եզրակացությունը. տվյալ դեպքում այսօր, երեկ, վաղը, էգուց, այժմ, հիմի,

առաջ բառերը գոյականնե՞ր, թե՞ մակբայներ են։ Եթե այդ հարցին անպայմանորեն պետք է պատասխանել, ապա դրանք ավելի մակբայներ, քան թե գոյականներ են, որովհետև խոսքի մեջ հանդես են գալիս ոչ թե գոյականին, այլ մակբային հատուկ շարահյուսական ֆունկցիաներով, իսկ բառերի շարահյուսական ֆունկցիան վերջիվերջո բխում է և պայմանավորված է նրանց խոսքիմաստային իմաստով։

Բերված փաստերից միաժամանակ կարելի է անել նաև այն եզրակացությունը, որ առանձին դեպքերում եթե չասենք անհնարին, ապա շատ դժվար է առանձնացնել գոյականն ու մակբայը միմյանցից։ Պետք է նշել, որ հայ քերականություններում մեջ այդ հարցի մասին հատուկ չափանիշներ չեն մշակված։

Այս տեսակետից հարցի մեջ որոշակի հստակություն չի մտցված նաև Ս. Աբրահամյանի աշխատության մեջ։ Դա ցույց տալու համար նշենք հետևյալը։ Այսպես, նա մի կողմից կեսօրին, կեսգիշերին, գիշերով, ցերեկով համարում է մակբայներ[20], իսկ մյուս կողմից էլ՝ Երեխաները խաղում են դրսում. Ներսում շատ շոգ է նախադասությունների դրսում և ներսում բառերը համարում է գոյականներ[21]։ Անմիջաբար նկատվում է, որ չկա գոյականի ու մակբայի տարբերակման ու սահմանագծման միասնական չափանիշ։ Ինչո՞վ են կեսօրին, կեսգիշերին, գիշերով, ցերեկով ձևերը մակբայներ. չէ՞ որ դրանք կենդանի հոլովական ձևեր են, պահպանում են իրենց հոլովական նշանակությունը, առարկայական իմաստը և ըստ այդմ կարող են որոշիչներ ընդունել, ինչպես՝ առավոտ կեսօրին, մութ կեսգիշերին, ձյունախառն գիշերով, անձրևային ցերեկով։

Այն էլ ասենք, այդ դեպքում ինչո՞ւ մակբայներ չհամարել նաև իրիկնապահին, լուսադեմին ձևերը հետևյալ նախադասությունների մեջ. «Իրիկնապահին նրան գտանք մի խոր անտառում» (ՀԹ, 1, 363). «Լուսադեմին տղերքը վերադարձան» (ՀԹ, 1, 352)։

---

[20] Տե՛ս Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 259։

[21] Տե՛ս անդ, էջ 230։

Մյուս կողմից, եթե հակառակ այս բոլորին դրանք համեմատաբար դեպս մակբայներ են, ապա առավել ևս մակբայներ են դրսում և ներսում (դուրս և ներս) ձևերը, որովհետև դրանց ածարկայական նշանակությունը համարյա անզգայելի է, և այդ պատճառով էլ չեն կարող որոշիչներ ընդունել (մեծ ներսում, մեծ դրսում, լավ ներսում, լավ դրսում և այլ կապակցություններ գոյություն չունեն)։

Ուզում ենք ուշադրություն դարձնել նաև հետևյալ հանգամանքի վրա։ Ս. Աբրահամյանը, ի թիվս ուրիշների, տեղի մակբայներ է համարում նաև հետևյալները՝ վեր, վար, մեջտեղ, ներս, *ըստ որում որպես օրինակներ բերվում են այնպիսի նախադասություններ, որոնց մեջ այս բառերը գործածվում են ուղիղ ձևերով, ինչպես՝ Սմբատը երբեմն նայում էր վեր. Նա կանգնեց տենյակի մեջտեղ. Բյուրավոր ճառագայթները... տարածվում են ներս ու ներս*[22]*։ Հայտնի է, որ այս բառերը հոլովվում են, ինչպես* վեր—վերի—վերից, մեջտեղ—մեջտեղի—մեջտեղից—մեջտեղում, ներս—ներվի—ներվից—ներվում: *Մի կողմ թողած սեռական հոլովը, հարց է առաջանում՝ այս բառերի բացառական, գործիական և ներգոյական ձևերը ևս մակբայնե՞ր են, թե՞ ոչ։ Ս. Աբրահամյանի գրքում այս հարցի պատասխանը չի տրված, բայց բերված օրինակներից կարելի է կռահել, որ նա մակբայներ է համարում միայն այս բառերի ուղիղ ձևերը։ Սակայն կարծում ենք՝ ճիշտ չէ տարբերություն տեսնել այս բառերի ուղիղ և թեք ձևերի խոսքիմասային պատկանելության մեջ։ Եթե ներս բառը մակբայ է «Նա գնաց հեռու» նախադասության մեջ, ապա մակբայ է նաև «Նա գալիս է հեռվից» նախադասության մեջ։ Նույն ձևով էլ՝ եթե վեր բառը մակբայ է «Նա նայում էր վեր» կապակցության մեջ, ապա մակբայ է նաև «Նա նայում էր վերից» կապակցության մեջ։*

Սակայն ինչպես էլ որ մոտենանք այս հարցերի լուծմանը, մի բան պարզ է ու որոշակի. լրիվ տրամաբանական ու հետևողական և հակասություններից բացարձակապես զերծ քերականական համակարգեր չեն եղել և, ըստ երևույթին,

---

[22] *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը..., էջ 264։*

չեն էլ լինի, որովհետև կենդանի ու զարգացող և ժողովրդի բերանում հավերժ ծփացող այդ անհուն օվկիանոսը քերականական կաղապարներով ու կանոններով պարփակելն ուղղակի անհնար է, և լեզվաբանը միշտ վերահասու է լեզվի միայն ամենաընդհանուր օրինաչափություններին։

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

69. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայ նորագույն քերականությունների մեջ մակբայները ըստ իրենց արտահայտած իմաստի սովորաբար բաժանվում են չորս տեսակի՝ ժամանակի, տեղի, ձևի և չափ ու քանակի։ Վերջերս ընդունում են նաև ընդհանրական մակբայներ[23]։ Դրանք այն մակբայներն են, որոնք իրենց բառային իմաստի մեջ համատեղում են տարբեր տեսակի մակբայների նշանակությունները (ժամանակ ու ձև, տեղ ու ձև և այլն)։

Սակայն մակբայների ներքին իմաստային կողմը նկատի ունենալով՝ ավելի հարմար է նրանց հետևյալ ստորաբաժանումը։

Մակբայները նախ կարելի է բաժանել երկու խմբի՝ **պարագայական**, որոնք ցույց են տալիս գործողությանը ուղեկցող հանգամանքները, այսինքն՝ տեղ, ժամանակ և այլն, և **հատկանշային**, որոնք արտահայտում են գործողության որակային ու քանակական բնութագիրը, այսինքն՝ ձևը և քանակն ու աստիճանը։ Այս երկու խմբերի իմաստային տարբերության մասին պատկերացում կարող են տալ հետևյալ օրինակները՝ Նա **երեկ** եկավ. Նա **արագ** եկավ։ Առաջին նախադասության **երեկ** մակբայը ոսկ ցույց է տալիս, թե երբ է կատարվել գործողությունը, և նրա ներքին կողմի հետ կապ ու առնչություն չունի։ Երկրորդ նախադասության **արագ** մակբայը, ընդհակառակն, անմիջապես առնչվում է գործողության ներքին կողմի հետ՝ այն բնութագրելով որակային տեսակետից։

Պարագայական մակբայները հայերենում լինում են ժա-

---

[23] Տե՛ս Ա. Քյուրճյան, Ընդհանրական մակբայները հայերենում, ՊԲՀ, 1961, № 3—4. Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 276—279։

մանակի և տեղի։ Ուրիշ լեզուներում կան նաև պատճառի, նպատակի, պայմանի, հետևանքի և այլ մակբայներ։ Հայերենում պատճառի ու նպատակի մի քանի մակբայներ կարելի է ցույց տալ միայն, օրինակ՝ ջգրու, աճու, դիտմամբ։

Հատկանշային մակբայներն իրենց հերթին լինում են՝ որակային (ձևի), օրինակ՝ դանդաղ գրել և քանակային (չափ ու աստիճանի), օրինակ՝ շատ գրել։

I. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

70. ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ.— Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը։ Բայց ժամանակի գաղափարը բոլոր մակբայների մեջ նույն ձևով չի դրսևորվում, այլ ամենատարբեր ու բազմազան իմաստային կողմերով է արտահայտվում։ Ահա այս վերջին հանգամանքը առիթ է տալիս ժամանակի մակբայները գոնե ամենաընդհանուր ձևով խմբավորելու առանձին իմաստային խմբերի մեջ[24]*։*

Մի խումբ մակբայներ ցույց են տալիս ներկա, անցյալ և ապառնի ժամանակներ, այսինքն՝ հատկանիշը ե՞րբ է դրսևորվում՝ խոսելու պահի՞ն, նրանից առա՞ջ, թե՞ հետո։ Այս իմաստային հակադրությունը ցայտուն կերպով կդրսևորվի հետևյալ նախադասության մեջ՝ «Առաջ դերասան էր, հիմա բանաստեղծ է, հետո երևի քննադատ կդառնա» (նկատենք, որ տվյալ դեպքում անգամ զուգահեռություն գոյություն ունի բայական ժամանակների և մակբայների միջև)։

Խոսելու պահի նկատմամբ ներկայի գաղափար են արտահայտում հիմա, հիմի, այժմ մակբայները, անցյալի գաղափար՝ առաջ մակբայը, իսկ ապագայի գաղափար՝ հետո մակբայը։ Բացի դրանից, ներկայի գաղափար է արտահայտվում նաև հերկայումս, անցյալի գաղափար՝ վերջերս, իսկ ապառնու գաղափար՝ առաջիկայում և հետագայում բառերի միջո-

---

[24] *Հետագա շարադրանքը հմմտ.* Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը..., էջ 257—263։*

ցով, որոնցից առաջինը ցույց է տալիս համեմատաբար մոտ, իսկ երկրորդը՝ հեռավոր ապագա։ Դրանցից՝ վերջերս ուղղական (հայցական), իսկ մյուսները՝ ներգոյական հոլովաձևի հիմքի վրա առաջացած մակբայներ են։

Ստորև բերվում են վերոհիշյալ մակբայների կիրառության օրինակներ։ «Իսկ հիմա լսեցե՛ք, մարդիկ, Շահ-Նամեն բանաստեղծ Ջարենցի» (ԵՉ, 44). «Հիմա տեսնո՞ւմ ես, հորդ նամակն էլ չես կարողանում կարդալ» (ՐՍ, 44). «Հիմի ուրիշ երեխաներ են խաղում իմ մանկության ընկեր գետակի ափին» (ՎԱ, 30). «Այժմ հայրենի երկրի Արածանին ինչո՞ւ պետք է վախեցնե քեզ» (ՐՍ, 16). «Առաջ թեև «գազան» ու «ցեց» կդառնայի շուտով ես մեծ» (ՀՔ, 2, 86). «Առաջ ես խոցեցի, երբ նա վրա եկավ» (ԴԴ, 12). «Հավատացեք, ներկայումս ապրում են միայն դերասանուհիները» (ՇՔ, 64). «Առաջիկայում մեր մայրաքաղաքը ավելի է ընդարձակվելու» (կր.). «Հետագայում այդ աշխատանքները ավելի մեծ ծավալ են ընդունելու» (կր.). «Վերջերս ես այցի գնացի իմ մանկության նվիրական վայրերը» (ՎԱ, 29)։

Ներկա, անցյալ և ապառնի ժամանակների հետ այս կամ այն չափով առնչության ունեն կամ ընդհանրապես ժամանակային հաջորդության են ակնարկում նաև այլ մակբայներ՝ վաղorոf, նախorոf, շուտով, ուշ, կանուխ, վերջը *և այլն, օրինակ՝ «Բայց այս անգամ նրանք* վաղorոf *հավաքած ունեին իրենց պաշարը» (ՐՍ, 65). «Նախorոf *ամեն բան կարգավորված էր». «Քո մայրը շուտով հայոց թագուհի կդառնա» (ՐՍ, 92). «Շուտով հասավ այստեղ և տանուտերը» (Մ, 225). «Նախ մոր ձեռքը համբուրեց և ապա Որմիզդուխտի» (ՐՍ, 87). «Միշտ կավելացնի քո ոռճիկը, Վերջը վրան և աղջիկը» (ՀՔ, 1, 88). «Վերջը վճռեց աղետավոր իրողության կեսը միայն հայտնել որդուն» (ՐՍ, 41)։ Այսպես և՝ «Գիշերները ուշ էր քնում, առավոտները կանուխ էր զարթնում» և այլն։*

Նշենք նաև, որ ժամանակային հաջորդության գաղափարի հետ են կապված նաև սկզբում և վերջում ձևերը, որոնց առարկայական նշանակությունը մարում է, և դրանք ևս վեր են ածվում մակբայների, ինչպես՝ «Սկզբում ինչ գտնում էր—

չոր հացի փշրանք, կրծած ոսկոր թե ուրիշ բան—գցում էր բերանը» (ՀՔ, 1, 318), «Վերջում բաժակը վերցրեց, առաջարկեց իմ կենացը» (ՎԱ, 36)։

Իմաստային հատուկ խումբ են կազմում թանձրացական ժամանակամիջոց ցույց տվող մակբայները. դրանք ժամանակի հետևյալ անուններն են՝ այսօր, երեկ, էգուց, վաղը՝ *ժողովրդական ձևով* էլօր *և առավոտյան ու երեկոյան բառերը, օրինակ՝ «Եվ ահա* այսօր *մեռնում է անվանի քաղաքացին» (ՇՔ, 8). «Երեկ հետը ծանոթացա կուլիսների հետևում» (ՇՔ, 28). «Վաղը ես կխոսեմ ուրիշի հետ» (ՆԴ, 306). «Գնում ենք էգուց, Պատրաստվի՛ր, Եղիշ» (ԵՉ, 112). «էգուց նախիրը կտանես արոտ» (ՀՔ, 2, 192). «Որ էգուց-էլօր, ինչ էլ որ անեմ, Ոչ մի տասունցի թուր չառնի իմ դեմ» (ՀՔ, 2, 92). «Ու երեկոյան... նահատակվում է իբրև մարտիրոս» (ՊՍ, 159). «Երեկոյան գյուղում էլ ուրիշ խոսելիք չկար» (ԱԲ, 33). «Առավոտյան Պետին մոլորվածի պես էր» (ԱԲ, 33)*[25]։

Թեկուզ սակավադեպ, բայց հանդիպում են նաև այդօր *և* այնօր *ձևերը. «Երևի* այդօր *ցերեկը ձգվեց՝ քնից նոր զարթնած կտրիճի նման» (ՊՍ, 10). «Մինչև* այնօր *դեռ չէր արտահայտվել ազգային կամ քաղաքական խոշոր խնդիրների մեջ» (ՐՍ, 41). «Այնօր վաղ առավոտյան Թանաբայը ձիերին արոտ քշեց» (ՉԱ, 91)։*

Որպես մակբայ է հանդես գալիս նաև այնժամ *ձևը, ինչպես՝ «Այնժամ էլ չէիր ինձ հանգիստ տալիս» (ՀՔ, 1, 231). «Չգիտեիր միթե* այնժամ, *թե ինչ աշխարհ պիտի ես գամ» (ՀՔ, 2, 86)։*

Ժամանակի մակբայների այս խմբին նվիրված հատվածը վերջացնելուց առաջ նշենք նաև այն, որ այսօր, երեկ, վաղը *բառերը իմաստի ընդարձակմամբ և վերացարկմամբ հաճախ գործածվում են ընդհանուր նշանակությամբ՝ արտահայտելով ներկա, անցյալ և ապառնի ժամանակների գաղափար ընդհանրապես, օրինակ՝ «Երեկ աղքատ էր,* այսօր *հարուստ է,*

---

[25] *Գործածական են նաև Երեկոյան դեմ, առավոտյան դեմ կապակցությունները, որտեղ երեկոյան և առավոտյան ձևերը ըստ երևույթին պետք է դիտել որպես երեկո և առավոտ բառերի սեռական-տրական հոլովաձևեր։*

վաղը *միլիոնատեր կդառնա». «Երևանը* երեկ, այսօր և վաղը» *և այլն:*

Այսօր, երեկ, վաղը *և այլ բառերի հոլովման մասին արդեն նշված է, ուստի և այս հարցին այլևս չենք անդրադառնում:*

Իմաստային առանձին խմբի մեջ կարելի է միավորել այն մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման հարատևություն, մշտականություն, մի խոսքով՝ ժամանակ առանց ծավալային այս կամ այն սահմանափակման: Այդ մակբայները մոտավորապես հետևյալներն են. հար, հավետ, հավերժ, հավերժաբար, միշտ *(ժրխտական իմաստով՝* երբեք), առմիշտ, առհավետ, հանապազ, հավիտյան, հուր-հավիտյան: *Օրինակներ. «Բանաստեղծն արդեն տանջանքից հոգնել, Ուզում է քնել, հավիտյան քնել» (ՀՔ, 2, 91). «Հավիտյան վազող ու միշտ ժրաջան՝ խոտերի միջից առվակը խնդաց» (ԵՉ, 6). «Հավետ լռում է մի տխուր խորհուրդ, Վառվում է հավետ մի անանց կարոտ» (ՎՏ, 44). «Եկեք նախապես, առհավե՞տ ու մի՛շտ ընդունենք կյանքի զորեղությունը» (ՊՍ, 167). «Հավերժ կենդանի, ստեղծագործ ուսմունք». «Հավերժ անմոռաց անուն». «Միշտ արևկող էր անում՝ մեջքը վրանին հենած, և միշտ սրթսրթում էր, միշտ մրսում» (ՎԱ, 25). «Միշտ նույն խոհերի շշուկին հլու, Միշտ նույն կարոտի կսկիծը պահած» (ՎՏ, 205). «Եվ երգ է եղել աշխարհում հար, Եղել է արվեստ ստեղծարար» (ԵՉ, 241). «Դու հավերժաբար և՛ հեռու, և՛ մոտ» (ՎՏ, 36). «Հուր-հավիտյան պարտական մնաս» (ԱԲ, 140):* Երբեք *մակբայը գործածվում է ժխտական բայաձևերի հետ, ինչպես՝ «Քեզ* երբեք *սիրտս չի մոռանա» (ՎՏ, 78). «*Երբեք *չի սիրել նրան» (ՇՔ, 34). «*Երբեք *նկատողությունից բաց չէր թողնում» (ՐՍ, 15):*

Մակբայների այս խմբի հետ շփման եզրեր են հանդես բերում որոշ կապակցություններ, որոնք, որպես կանոն, միայն պարագայական կիրառություն ունեն, այսինքն՝ հակվում են դեպի մակբայները, ինչպես՝ «Գիշեր-ցերեկ թերթում գրքեր, Շինում էի դատարկ երգեր» (ՀՔ, 2, 87). «Գիշեր-ցերեկ նրա ուշքն ու միտքը դու էիր միայն, դու, ո՛րդի» (ՇՔ, 36). «Եվ այս կարոտը, կարոտն անզոր, Որ դառն երգում է

գիշեր ու զօր» (ՎՏ, 233). «Գիշեր ու զօր կյանքը դու ես զարդարում» (ՎՏ, 85). «Հալածում եք ինձ դուք օր ու գիշեր». «Ամառ-ձմեռ չոր էր մնում» (ՀԹ, 1, 426). «Ամառ-ձմեռ բնության ծոցում էինք՝ սարերում, անտառներում, ձմեռանոցում» (ՎԱ, 54). «Գերի շինել ողջ տարին բուն» (ՀԹ, 2, 89). «Նա օրն ի բուն աշխատում է, իսկ գյուղացին հանգստանում» (ՊՍ, 105)։

Բերված բոլոր կապակցությունները՝ գիշեր-ցերեկ, գիշեր ու զօր, օրն ի բուն և այլն, արտահայտում են գործողության կամ հատկանիշի դրսևորման մշտատևություն ու մշտականություն։

Մի քանի մակբայներ, ի տարբերություն դրանցից, արտահայտում են գործողության կամ հատկանիշի ընդմիջումներով, ընդհատումներով կրկնվելը կամ տարբեր հատկանիշների իրար հաջորդելը. դրանք են՝ երբեմն, մերթ...մերթ, մերթ-մերթ, մերթ ընդ մերթ, օրինակ՝ «Այդ կողմից երբեմն փայլատակում էր կայծակը» (ՐՍ, 15). «Կարողանում էին օգնել նրան յուր կարիքների ժամանակ երբեմն խորհրդով, երբեմն գործակցությամբ» (Մ, 206). «Բուի կռինչն է տարածվում մերթ-մերթ» (ՀԹ, 14, 2). «Կծու վիշտը մերթ ընդ մերթ ցնցում էր նրան ոտից մինչև գլուխ, (ՇՔ, 24). «Միայն մերթ ընդ մերթ երևում էր մի անցորդ, մի բեռնակիր կամ մի կառք» (ՇՔ, 59)։

Իմաստային նույն կողմն ունեն նաև մեկ-մեկ, ժամանակ առ ժամանակ կապակցությունները. «Մեկ-մեկ հիշում էր իր հին ընկերներին». «Ժամանակ առ ժամանակ զբաղվում էր նաև գրականությամբ»։

Իմաստային այս խմբի մեջ կարելի է դիտեղել նաև հաճախ և հաճախակի մակբայները, օրինակ՝ «Հաճախ գալիս է մեզ այցելության». «Հաճախակի հանդիպում են իրար» և այլն։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ նշված բոլոր մակբայների մեջ ժամանակային նշանակությանը հավասարազոր, գուցե և ավելի, դրսևորվում է նաև ձևի նշանակություն։

Իմաստային մի խմբի մեջ են միավորվում կրկնավոր բաղադրիչներ ունեցող ժամեժամ, օրեցօր, ամսե-ամիս, տարեց-

տարի, դարեդար, վայրկյան առ վայրկյան, Ռոպե առ Ռոպե, or-օրի *մակբայները, որոնք իրենց կազմությանը համապատասխան, ցույց են տալիս ժամանակային հաջորդություն, տևականություն, կրկնություն, ըստ որում այնպիսի կրկնություն, որի ժամանակ հատկանիշը, որպես կանոն, դրսևորվում է ավելի ու ավելի սաստկացող, ուժեղացող չափով*[26], *ինչպես՝ «Դուք օրեցօր նիհարում եք ու դալկանում» (ՇՔ, 61). «Խազեյինդ էլ տարեցտարի Միշտ կավելացնի քո ոռճիկը» (ՀԹ, 2, 88). «Որին գյուղացիք սպասում էին ժամեժամ» (Մ, 253). «Գարնանամուտին ևս նկատեցի, որ կենդանին օր-օրի լայնանում է» (ՎԱ, 13).* «Օր-օրի *չքանում է նրանց մարմնի կլորությունը» (ՎԱ, 31).* «Ռոպե առ Ռոպե *կանգ էին առնում կառքեր» (ՇՔ, 10). «Շուշանը վայրկյան առ վայրկյան սաստկացող ահով էր նայում նրան» (ՍԽՔ, 32)։*

Ժամանակ առ ժամանակ *մակբայը, վերևի կազմություններին հակառակ, ցույց է տալիս ընդմիջվող, ընդհատ ժամամակ, տրհմակ՝ «ժամամակ առ ժամամակ գրազվում է նաև բանաստեղծությամբ». «Եվ ժամանակ առ ժամանակ իր կոպալի զարկերի հետ խաղացնելով ողկույզի պես գոռուզ բաշը» (ՊՍ)։*

Հատուկ իմաստային խումբ են կազմում այն մակբայները, որոնք ցույց են տալիս ժամանակի սկզբնակետը։ Սրանք որպես կանոն բացառականի ձևեր են, որոնց մի մասի մեջ բացառականի իմաստը մինչև այժմ էլ կենդանի է ու զգալի։ Այսպիսի մակբայներ են՝ մորուց, մանկուց *(բարբառային՝ մորութ, մանկութ),* վաղուց, հնուց, առավոտուց, առաջուց, ի ծնե, ի բնե։ *Հասկանալի է, որ այս խմբի մեջ են մտնում նաև հոլովվող մակբայների բացառական հոլովաձևերը՝* այսօրվանից, վաղվանից, էգուցվանից, երեկվանից, այժմվանից, հերվանից։ *Օրինակներ.*

«Օ՜, աշխարհը վաղո՞ւց է դարձել մի փոքրի՜կ, փոքրի՜կ փողոց...» (ԵՉ, 36). «Թվում էր, որ վաղո՞ւց, շատ վաղուց էր բաժանվել նրանցից» (ՇՔ, 66). «Վաղո՞ւց, վաղուց *մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն։* Վաղուց *ելք է փնտրում*

---

[26] *Համմ.* Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը..., էջ 260։*

կուտակված մի կարոտ» (ԵՉ, 298). «Հավասարության սկզբունքը ճնուց անտի հարգված է եղել այդտեղ» (Մ, 282). «Պետին ճնուց նախրապան էր» (ԱԲ, 29). «Մի օր էլ Հարուքը տուն եկավ, առանց առաջուց հայտնելու» (ԱԲ, 18). «Ձեզ խոսք եմ տալիս առաջուց, ինքս կգամ պյուղ» (ՆԴ, 306). «Բախտի ձեռքով պնդված մանկուց» (ՊՍ, 175). «Մանկութ ընտրեցի համփորդական ցուպ» (ՎՏ, 47). «Հավաքվել են առավոտուց սարվորները նրա տակ» (ԱԻ, 2, 34). «Թե չէ լինել ի ծնե գերի Մերկ մուսայի ու երգերի» (ՀՔ, 2, 87). «Բայց լինելով ի բնե զգույշ ու կարգապահ...» (Մ, 165)։

Մի քանի մակբայներ իրենց կազմում ունեն գրաբարյան ց նախդիրը և ըստ այդմ ցույց են տալիս ժամանակի վերջը, վերջնակետը։ Դրանք են՝ ցայսօր, ցմահ, ցգերեզման, ցայժմ, ցարդ, օրինակ՝ «Ցգերեզման չեմ մոռանա նրան». «Հակառակ դեպքում ցմահ պիտի բավականանար իր համեստ ամսականով» (ՇՔ, 21)։ Իմաստային նույն խմբի մեջ է մտնում նաև առայժմ բառը, օրինակ՝ «Առայժմ ամեն ինչ բարեհաջող է ընթանում». «Առայժմ դժգոհ չէ իր աշխատանքից»։

Դեռ, դեռևս, տակավին մակբայները ցույց են տալիս մի ժամանակահատված, որը հարաձիգ կերպով ձգվում է մի ամբողջ ժամանակաշրջանում։ Այս իսկ պատճառով էլ այս մակբայները, որպես կանոն, անցյալ կատարյալ ժամանակի հետ գործածվել չեն կարող, այլ սովորաբար կիրառվում են տևական (ներկա և անկատար) ժամանակների հետ, օրինակ՝ «Տասնամյակների խորքից դեռ լսում եմ մորս ահաբեկ կանչը» (ՎԱ, 10). «Դու դեռ չես մեռել իմ հիվանդ սրտում, Դու դեռ ապում ես երազի նման» (ՎՏ, 59). «Անտառը տակավին մութն է» (ՀՔ, 1, 362). «Անծանոթը մազախուիվ երեսով, տակավին երիտասարդ ու բարձրահասակ մարդ էր» (ՇՔ, 3). «Տրեխների գոյությունը տակավին չէր երևում» (ՇՔ, 22)։

Դեռ||դեռևս մակբայները շարունակականության, տևականության հետ միասին ցույց են տալիս նաև, որ գործողությունը չի համապատասխանում ու բխում իրերի տրամաբանական ընթացքից, այլ հակասում է նրան, օրինակ՝ «Դեռ

գանգատվում էլ է». «Դեռ համաձայն էլ չի». «Դեռ խոսում էլ էջ և այլն:

Իմաստով սրանց հակառակ է արդեն *մակբայը, որը ոչ թե տեւականություն է ցույց տալիս, այլ ժամանակային սկիզբ. «Մեր լեռների գագաթներին* արդեն *ձյուն էր նստել» (ՎԱ, 43). «Նրա դեմքն* արդեն *ընդունել էր մահանիշ հողագույն ստվերագծեր» (ՇՔ, 13):*

Իմաստային նույն խմբի մեջ են միավորվում վերջապես, վերջիվերջո, *ի վերջո մակբայները, որոնք ցույց են տալիս սպասելիք ժամանակի ավարտը, օրինակ՝ «Վերջապես տանտիրուհու ճաշը պատրաստ էր» (Մ, 235). «Վերջապես բոլոր ուտելիքները բաժանվեցին» (ՇՔ, 31). «Վերջապես մտանք զատկի ուրբաթը» (ՎԱ, 14). «Վերջիվերջո այդ գործը դրականորեն լուծվեց». «Ի վերջո ամեն ինչ բարեհաջող անցավ» և այլն:*

Ս. Աբրահամյանը նշում է, որ արդեն, դեռ, դեռևս, տակավին, ի վերջո, վերջիվերջո *մակբայների մեջ կա խոսողի որոշ վերաբերմունքի արտահայտություն՝ «գործողություն կատարած կամ չկատարած, ինչպես և կատարելի լինելու տեսակետից»[27]: Նա միաժամանակ նշում է, որ «խոսողի որոշ վերաբերմունք կա նաև ժամանակի այն մակբայների մեջ, որոնք կազմվում են* ևեթ *կապակցությամբ ու ժամանակի իմաստ ունեցող որևէ բառով,* այսօրևեթ, վաղևեթ (վաղը ևեթ): *ԵՒեթ կապակցությունը այդ բառերին տալիս է գործողության կատարման անհետաձգելիության իմաստ այն ժամանակում, որի անվան վրա դրվելով կազմվում է տվյալ մակբայը»[28]: Այսպիսի օրինակներ են հետևյալները. «Դիմելու եմ դատարանին* այսօր ևեթ, *եթե չկամենաս գործը հաշտությամբ վերջացնել» (ՇՔ, 71). «Իսկույն ևեթ առաջ է գալիս մի ուրիշ պատկեր, մի շատ ամոթալի ու ցավալի պատկեր» (ՀՔ, 1, 313). «Ուզում եմ այս նամակն իսկույն ևեթ փոստարկղ գցել տալ» (ՇՔ, 69). «Կարող էք վաղը ևեթ տեղափոխվել» (ՇՔ):*

---

[27] Ս. Աբրահամյան, *Չքնքվող խոսքի մասերը...*, էջ 267:

[28] *Անդ:*

Այլևս, էլ բառերը որպես մակբայներ նշանակում են «դրանից հետո, այդ պահից հետո», օրինակ՝ «Նա լռեց, այլևս ոչինչ չասաց» (ՐՍ, 58). «Ջահել երինջներն ու արջառները ջուրը տանելիս այլևս չէին խաղում, և ցուլն այլևս գետինը չէր քանդում ու չէր գոռում» (ՎԱ, 31). «Երիտասարդն էլ չշարունակեց» (Մ, 186). «Էլ մի՛ ուշացնի, ես շատ եմ կացել, էլ մի՛ լացացնի, ես շատ եմ լացել» (ՀԹ, 2, 70), Այլևս և էլ բառերը համանիշներ են և գործածվում են ժխտական բայաձևերի հետ։

Սրանց հետ իմաստով նույնանում է այսուհետև բառը, որը գործածության վերը նշված սահմանափակությունը չունի և գործածվում է դրական և բացասական բայաձևերի հետ, օրինակ՝ «Այսուհետև նույն եկեղեցին անեծք կկարդա նրա անարժան թոռան վրա». «Այսուհետև նա մեզ համար օտար է և ավելի օտար, քան թե մի պարսիկ» (ՐՍ, 52). «Այսուհետև չեմ վստահելու նրան» և այլն։

Նման կազմություն ունեցող այնուհետև բառը կարող է կիրառվել մակբայական իմաստով՝ նշանակելով «նրանից հետո», օրինակ՝ «Այնուհետև սկսվեց մեր հաղթանակների շրջանը», «Այնուհետև հարկավոր էր բարձրացնել ժողովրդի տնտեսական և մշակութային ընդհանուր մակարդակը» և այլն։ Բայց այս բառն ավելի շաղկապական իմաստով է կիրառվում. այդ դեպքում դա նախադասության մյուս բառերից սովորաբար անջատվում է որոշ դադարով, օրինակ՝ «Այնուհետև, հարկավոր է լուծել նաև հետևյալ հարցերը». «Այնուհետև, պետք է նկատի ունենալ խնդրի բարոյական կողմը» և այլն։

Անորոշ, բայց ոչ մեծ ժամանակամիջոցի իմաստ են արտահայտում միաժամանակ, առժամանակ բառերը, օրինակ՝ «Միաժամանակ կմնա գյուղում». «Առժամանակ կհանգստանա և ապա կանցնի աշխատանքի» և այլն։

Նշենք նաև այն, որ երկար և կարճ բառերը, գործածվելով մի շարք բայերի հետ, արտահայտում են ժամանակային իմաստ և նշանակում են «երկար ժամանակ», «կարճ ժամանակ», օրինակ՝ «երկար նայում էր կամսարյանն այդ գեղեցիկ տեսարանին» (Մ, 280). «Նրանք երկար լռեցին» (ԴԴ, 82).

«Սկսեցին երկար ու երկար խոսել» (ՐՍ, 59). «Երկար զմայլվեցի ես այդ չքնաղ հովտի տեսքով» (ՎԱ, 21). «Բայց իմ երջանկությունը շատ կարճ տևեց» (ՎԱ, 45). «Կին նախագահի այս սրտազեղումը կարճ տևեց» (ՍԽՔ, 24)։

Այս հատվածը վերջացնելուց առաջ նշենք, որ որոշ քերականներ ժամանակի մակբայների մեջ են դնում ժամանակի մի քանի անունների գործիականի և տրականի ձևերը՝ գիշերով, ցերեկով, կեսօրին, կեսգիշերին, լուսաբացին, իրիկնապահին և այլն, օրինակ՝ «էն, որ գիշերով շհու եմ փչում, էն ո՞ւմ եմ կանչում» (ՀԹ, 2, 50). «Փերիները սարի գլխին հավաքվեցին գիշերով» (ՀԹ, 2, 43). «Լուսադեմին տղերքը վերադարձան» (ՀԹ, 1, 352). «Իրիկնապահին նրան գտանք մի անտառում» (ՀԹ, 1, 363). «Լուսաբացին նա բարձրացավ կախաղան» (ՎՏ, 85) և այլն։

Բայց ընդգծված բառաձևերը ոչ միայն պահում են իրենց կենդանի հոլովական իմաստները, այլև զրկված չեն առարկայական նշանակությունից, ուստի և նրանք ոչ թե մակբայներ, այլ համապատասխան գոյականների գործիական և տրական հոլովաձևեր են։

71. ՏԵՂԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ.—Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության (հատկանիշի) կատարման տեղը։

Տեղի մակբայների ամենամեծ խումբն են կազմում տեղի անուն հանդիսացող այն գոյականները, որոնք կորցնելով իրենց առարկայական նշանակությունը՝ գործածվում են բայերի հետ սոսկ ցույց տալով տեղ ընդհանուր իմաստով։ Այսպիսի մակբայների մի մասը, բայերի հետ ավելի սերտ միասնություն կազմելով, գոնե իմաստային տեսակետից մի բառի արժեք ունի կամ գոնվում է մի բառ դառնալու ճանապարհին, օրինակ՝ վրա տալ, վրա ընկնել, դուրս գալ, մեջ ընկնել և այլն, իսկ մի մասն էլ, հատկապես երբ գործածվում է եռադաս, բայի հետ սերտ միություն չի կազմում և պահում է իր բառային անկախությունն ու ինքնուրույնությունը, օրինակ՝ առաջ գնալ, գնալ առաջ, վեր բարձրանալ, բարձրանալ վեր, ցած մագլցել, մագլցել ցած *և այլն։ Տեղի իմաստ արտահայտող այսպիսի մակբայներ են՝* առաջ, դուրս, ներս, ետ, վերև, ներքև, ցած, վեր, վար, վրա, դեմ, մոտ, շուրջը, մեջ,

ստորև և մի քանի ուրիշները։ Ստորև բերվում են համապատասխան օրինակներ։

«Կանգնած են շուրջը կանայք հարևան» (ՀԹ, 2, 63). «Մոտ եկե՛ք, նստեցե՛ք,— առանց որևէ ջերմության հրավիրեց Շուշանը» (Սե, 26). «Նայում են ներքև... ձեն չի գալիս դեռ» (ՀԹ, 2, 64). «Հուզվում են, հոսում հեղեղները մեծ, Մագլցում վերև ու թավալվում ցած» (ՎՏ, 59). «Թավամազ հոնքերը կարծես վայր իջան՝ աչքերի սուր հայացքը ավելի խստացնելու համար» (Մ, 173)։ «Եվ քարավանը օրոր ու շորոր գնում էր առաջ ու ետ չէր նայում» (Ահ, 2, 60). «Դուրս եկանք դուռը։ Նայեցի վերև» (ՀԹ, 2, 81). «Նա դուրս եկավ յուր բնակարանից» (ՐՍ, 39). «Ներս թափեցին գոմը» (ՀԹ, 1, 394). «Օրիորդը ձեռները դրեց ծոցը, հայացքը հառեց ներու» (ՇՔ, 162). «Տանում է ներո՞ւ, ներո՞ւ, երկրի խորքերը» (ՇՔ, 103)։

Իր տեղում նշված է այն մասին, որ այս բառերի մեծ մասը նաև կապական նշանակություն ունի և առավելապես գործածվում է սեռական-տրական հոլովի հետ, օրինակ՝ տան առաջ, տան մոտ, տան շուրջը և այլն։

Դրանց մեծ մասի ձևաբանական առանձնահատկությունն այն է, որ հոլովվող բառեր են, օրինակ՝ մեջ—միջից—միջով, առաջ—առաջից—առաջով, ներս—ներսից, դուրս—դրսից և այլն։ Այս առանձնահատկությամբ սրանք հակվում են դեպի գոյականները։ Բայց որովհետև սրանց առարկայական նշանակությունը խամրած է կամ զգալի չափով խամրած է, այդ իսկ պատճառով էլ սրանց բացառական, գործիական և ներգոյական հոլովաձևերը որպես կանոն հանդես են գալիս միայն պարագայական ֆունկցիաներով։ Այս նշանակում է, որ այս ձևերը փաստորեն մակբայներ են։ Դրա օգտին է խոսում նաև այն, որ առաջ, ներքև, վերև և այլ բառերի հոլովված ձևերը ևս որոշիչ լրացումներ ընդունել չեն կարող։ Դա ևս ցույց է տալիս, որ այս ձևերի առարկայական նշանակությունը խամրած է, և դրանք մակբայներ են կամ հակվում են դեպի մակբայները։

Ստորև բերվում են վերոհիշյալ բառերի թեք ձևերի մակբայական կիրառության օրինակներ։ «Եվ թեթև նետած սլաքի նման Ղեմից մի թռչուն անցավ սրընթաց» (ԵՋ, 6). «Վերևում

հովվի շները հաչեցին» (ՎԱ, 51). «Ներքևից վերև զարմացած նայում էր ինձ» (ՎԱ, 10). «Հարկահանը տակից վեր նայեց և չպատասխանեց» (ԴԴ, 32). «Ներքևում մուգ-կանաչ անտառներ են տարածվում, իսկ վերևում՝ ալպիական արոտները» (ՎԱ, 7). «Ներքևում, մթին անտառների մեջ, որոտում էր Արածանին» (ՐՍ, 93). «Ճանապարհին Սանդուխտն առաջից էր գնում, Շահանն ու Օհանը միասին, Օհանի տղան ետևից» (ԱՔ, 27). «Առջևից քայլում էր քրտինքի մեջ ողողված մի սև նժույգ». «Առջևից գալիս էին մի խումբ կանայք» (ԴԴ, 11). «Նրանք գալիս էին ետևի՞ց, շատ ետևից» (ՐՍ, 15). «Հեռվից նայում էր գետակին որսորդի ագահ հայացքով» (ՎԱ, 21—22). «Դիմացից դուրս թռավ մի հրեշտակ, չէ՛, կին» (ԵՉ, 125). «Դիմացից երկու գյուղացի դուրս եկան» (ՀՔ, 1, 325). «Ետևից մի խուլ տնքոց լսեցի» (ՀՔ, 1, 363). «Դրսում տիրում էր ջերմ, լուսապայծառ օր» (ՐՍ, 27). «Ներսում տաք-տաք վիճաբանում էին». «Այնտեղ, ցածում, դեռ նիրհում են դաշտ ու ձոր» (ՎՏ, 204):

Մի քանի բառեր, օրինակ՝ դուրսը, ներսը, առջևը, ուղիղ ձևով կարող են արտահայտել ներգոյականի իմաստ. «Էս ժամանակ բազազն ու իր կինը վիճում էին ներսը» (ՀՔ, 1, 316). «Ներսը, սրտիս խորքում, գողի պես զգույշ, կամացուկ շարժվում է նա» (ԵՉ, 298). «Արտասվող ապակիների միջից ոչինչ չէր երևում դուրսը» (ՆԴ, 213). «Դուրսը՝ մայիսն է, արբածը, Դուրսը՝ խնդում ու աղմուկ» (ՎՏ, 220). «Դուրսը մնացին և իմ խաղընկերների մեծ մասը» (ՀՔ, 1, 410). «Առջևը հայրենի նեղ ձորն էր» (ՍԽՔ, 23). «Առջևը գետն էր, որ հիմա խեղդվել էր, սառցակալել քարերի մեջ» (ՍԽՔ, 24):

Որոշ քերականներ վերոբերյալ բոլոր ձևերը գոյականներ են համարում: Բայց այդ դրույթի հետ դժվար է համաձայնել, որովհետև, ինչպես նշված է արդեն, դրանք կորցրել են իրենց առարկայական նշանակությունը և եթե լիարժեք մակբայներ էլ չեն, ապա ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ գտնվում են մակբայացման ճանապարհին:

Տեղի մակբայների մեջ հատուկ խումբ են կազմում տեղի հաջորդման իմաստ արտահայտողները: Դրանք տեղ ցույց տվող բառերի կրկնությամբ կազմված բաղադրություններ են,

որոնցից առաջինը դրվում է արևմտյան բարբառներին և գրաբարին հատուկ բացառականի ե ձևով, իսկ երկրորդը՝ ուղիղ ձևով, ինչպես՝ դռնեղուս, սարեսար, տնեսուն, գյուղեգյուղ, ձորեձոր, fարեfար, պատեպատ, բերնեբերան և այլն։ Օրինակներ. «Քարեfար կտաք, կփշացնեք» (ԴԴ, 131). «Սարեսար, ձորեձոր ընկնելով գլուխ պիտի պահենք» (ԴԴ, 71). «Նրա մասին բերնեբերան պատմություններ էին անում» (ԱԲ, 4). «Հայրն ամեն ամիս տնեսուն պւտում էր» (ԱԲ, 10). «Պատվին էր դիպչում, երբ հոր տեղակ ինքն էր ընկնում դռնեղուս հաց կամ դրամ հավաքում» (ԱԲ, 10). «Եվ fարեfար ու սարեսար թոցնելով» (ՊՍ, 143). «Քարեfար ընկավ, պատեպատ խփվեց» (ՊՍ, 22). «Դռնեղուս երգեց—ձայնը՝ կլկլան, բերանն իր կերգեր, իսկ աչքը կուլար» (ՊՍ, 14). «Քարեfար ընկան, դադարկուն եղան» (ՀԹ, 2, 100)։

Բերված մի քանի մակբայների մեջ որոշակի կերպով դրսևորվում է նաև ձևի իմաստ։

Տեղի հաջորդման ու կրկնության գաղափար է արտահայտում նաև տեղի անունների կրկնությունը առ նախդրով, ինչպես՝ գյուղ առ գյուղ, տուն առ տուն և այլն[29]։

Ս. Աբրահամյանը տեղի բազմակիությունն արտահայտող մակբայների մեջ է դնում նաև այսպիսի կապակցություններ՝ գյուղից-գյուղ, ձեռfից-ձեռf, տեղից-տեղ, դռնից-դուռ, բակից-բակ, ականջից-ականջ[30]։

Սակայն, կարծում ենք, որ այսպիսի կապակցությունները մակբայներ չեն կարող համարվել, որովհետև այս բաղադրությունների մեջ ոչ միայն առկա է բաղադրիչների առարկայական նշանակությունը, այլև լրիվ կենդանի է դրանց շարահյուսական (հոլովական) կապը։ Ահա այդ պատճառով էլ տեղի իմաստ արտահայտող բառերից նույնօրինակ բազում կապակցություններ կարող են կազմվել, ինչպես՝ փողոցից-փողոց, այգուց-այգի, կիրճից-կիրճ, պուրակից-պուրակ, անտառից-անտառ, սենյակից-սենյակ, առվից-առու, գետից-գետ, ծովից-ծով, դպրոցից-դպրոց, խանութից-խանութ, լսա-

---

[29] Տե՛ս Ս. Աբրահամյան, Չբնքվող խոսքի մասերը..., էջ 265։

[30] Անդ։

ռանից-լսարան և այսպես շարունակ։ Այս բանն էլ իր հերթին նշանակում է, որ տվյալ դեպքում գործ ունենք պարզ շարահյուսական կապակցությունների հետ։

Ի վեր, ի վար կապակցությունները, դրվելով տեղի իմաստ արտահայտող մի շարք բառերի վրա, ցույց են տալիս ուղղություն դեպի վերև և ներքև, օրինակ՝ սարն ի վեր, սարն ի վար, գետն ի վեր, գետն ի վար և այլն։ Ս. Աբրահամյանը, նշելով, որ հայերենի որոշ քերականություններում վերոբերյալ կապակցությունները համարվում են մակբայներ, ճիշտ կերպով գրում է. «Այսպիսի կապակցությունները շատ են և նույնիսկ դժվար է նշել դրանց սահմանը...։ Այս կարգի կապակցությունները, իսկապես, երբեմն մոտենում են մակբայներին, մակբայի իմաստ ունեցող կապակցություններ են, և կարելի է դեռևս դիտել որպես կապի ու կապվող բառի կապակցություն»[31]։

Այսպիսի ձևերն իրոք որ շատ-շատ են, ինչպես՝ ջրվեժն ի վեր||ի վար, ճոսաճիճն ի վեր||ի վար, գետն ի վեր||ի վար, ճուռնն ի վեր||ի վար, լեռն ի վեր||ի վար, ջուրն ի վեր||ի վար, սարն ի վեր||ի վար, երեսն ի վեր||ի վար, ճանդն ի վեր||ի վար, ճանապարհն ի վեր||ի վար, լանջն ի վեր||ի վար, ձորն ի վեր|| ի վար, կիրճն ի վեր||ի վար և այլն։

Տեղի անունը կարող է դրվել նաև հոգնակի թվով, ինչպես՝ սարերն ի վեր||ի վար, լեռներն ի վեր||ի վար, լանջերն ի վեր||ի վար: Տեղի անունը կարող է գործիականի ձևով ևս դրվել, օրինակ՝ «Մեր գետովն ի վեր «ամառանոց» գնալիս ձկների վերջին կայանը մեծ ջրվեժի տակն էր» (ՎԱ, 20)։

Ստորև բերվում են այսպիսի ձևերի կիրառության օրինակներ գեղարվեստական գրականությունից։ «Խնդում իրար ուսի տալով, Երգը գնգում սարն ի վեր» (ՀՔ, 2, 47). «Ներքևից դուրս եկան ու ջուրնիվեր, ջուրնիվեր գնացին» (ՀՔ, 1, 343). «Փախչում են ցրվում ողջ սարերն ի վեր» (ՀՔ, 2, 102). «Ի՞նչ անուշ է Ձեր լանջն ի վեր» (ՀՔ, 2, 103). «Ոսկե տերև է հոսում առվի վճիտ ջուրն ի վեր» (ՎԴ, 35). «Ամբողջ ուժով թռչում էին ջրվեժն ի վեր» (ՎԱ, 20). «Կրկին վեր էին ցատ-

---

[31] Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը...*, էջ 265։

կում, սուրում ջրի կատաղի ճոսանքն ի վեր» (ՎԱ, 20). «Ես ցամաքող հունն ի վեր գնացի և տեսա բազմաթիվ կարմրախայտ ձկներ» (ՎԱ, 29). «Լեռն ի վար վարգող եղնիկի ոտներ» (ՊՍ, 17). «Թվում էր, թե ծերունու ձեռքերն ի վեր հառնում է ինչ-որ կաթնագույն լուսապսակ» (ՃՎ, 40). «Կուրծքն ի վար շղթայով կապած էր ոսկեշրջանակ ակնոցը» (ՃՎ, 9):

Հետևյալ նախադասությունների մեջ նույն կազմությունն ունեցող այսպիսի կապակցությունները ձևի իմաստ են արտահայտում. «Երեսն ի վեր պառկեց փափուկ օթոցի վրա և ձեռքերը դրեց գլխի տակ» (ՆԴ, 445). «Բեռանքսիվեր տակին վեր ընկա» (ՀՔ, 1, 334). «Ընկավ խրամատի մեջ, ընկավ երեսնիվայր, թաց հողի վրա» (ԱՔ, 41):

Ուստ ածանցով կազմված վերուստ, արտունուստ մակբայները ցույց են տալիս սկզբնակետ, օրինակ՝ «Այս ճանապարհը ձեզ ի վերուստ սահմանած» (ԵՉ, 262). «Արտունուստ է հրամայված»: Գրաբարում գործածական էին նաև այլուստ «ուրիշ տեղից», ամենուստ «ամեն տեղից» մակբայները: Նույն ածանցն ունեցող արտաքուստ, ներքուստ մակբայների մեջ ավելի գերիշխում է ձևի նշանակությունը, օրինակ՝ «Արտաքուստ գառ է ձևանում, բայց ներքուստ գայլ է», «Արտաքուստ թե ներքուստ մաշվել ու սպառվել էր» (ՃՎ, 51):

Ժողովրդական լեզվում տեղի սկզբնակետ է ցույց տալիս ուստի բառը, օրինակ՝ «Ուստի՞ կուգաս, ղարիբ բլբուլ» (Սայաթ-Նովա):

Դեմուդեմ, դեմդիմաց, դեմ հանդիման մակբայները համանիշ են և նշանակում են առարկաների տեղի այնպիսի հարաբերություն, որոնցից մեկը մյուսին է ուղղված առաջի մասով, դեմքով, ճակատով, օրինակ՝ «Քյազիմ-բեգն ու վրացի իշխանը նստեցին դեմուդեմ» (ՇՔ, 99). «Դեմուդեմ կանգնած համառ ու անթարթ, Հայացքով իրար նայում են հանդարտ» (ՀՔ, 1). «Դեմուդեմ կանգնած էին երկու ախոյաններ». «Դեմդիմաց նստած էին նրանք». «Եվ ահա երկու բանակները կանգնած էին դեմ հանդիման»: Վերջին ձևի մեջ կա նաև ընդդիմության իմաստ:

Պետք է նշել նաև այն, որ այս մակբայների մեջ ևս, բացի տեղի իմաստից, կա նաև ձևի իմաստ:

Ամենուր և ամենուրեք մակբայները ցույց են տալիս տեղի ընդհանուր գաղափար առանց որևէ սահմանափակման և նշանակում են «ամեն տեղ», օրինակ՝ «Ամենուրեք մի կարոտ ես դու նետել» (ՎՏ, 85). «Բազմաթիվ նախանձոտ հայացքներ ուղեկցում էին նրան ամենուրեք» (ՇՔ, 33). «Իջնում են մայթերին, էլեկտրաքարշերի վագոնների վրա, ամենուր» (ՎԱ, 31). «Իսկ նա հնչում էր ամենուր ու միշտ, Ամենուր ու միշտ, ուր հայն էր շնչում» (ՊՍ, 49):

Աստ («այստեղ») և անդ («այնտեղ») փոխառություններ են գրաբարից և այս կամ այն չափով կիրառվում են արդի լեզվում, օրինակ՝ «Աստ, ուր հնչել են մեղեդիք ոսկի». «Աստ, վեհարանի հին պատերի մեջ, սրբապղծորեն թուրք երգ է մրխում» (ՊՍ, 21). «Անդ, էջ 126» և այլն:

Գործողության տեղի իմաստային երանգ ունեն նաև տեղ–տեղ և տեղնուտեղը մակբայները: Առաջինը ցույց է տալիս, որ գործողությունը կամ հատկանիշը դրսևորվում է առարկայի առանձին մասերում, տեղերում, իսկ երկրորդն ուղղակի նշանակում է «տեղում», օրինակ՝ «Գազանը տեղ–տեղ վայր էր ընկել» (ՎԱ, 48). «Վիճում էր քեռին ու երգում տեղ–տեղ» (ՊՍ, 183). «Նրանք տեղ–տեղ կանգ էին առել» (ՎԱ, 52). «Տան հատակը ցեխից էր՝ տեղ–տեղ փոս ու ցեխոտ լինելու չափ թաց» (Մ, 232). «Եթե բոլոր ներկա եղողները րոպեաբար ու տեղնուտեղը մահանային, դարձյալ նրա աչքերը չպիտի թրջվեին» (ՇՔ, 17): Տեղ–տեղ և տեղնուտեղը մակբայների մեջ զգալի է նաև ձևի իմաստը:

Ինչպես այս շարադրանքից կարելի է եզրակացնել, տեղի մակբայները չեն կարող հավասարվել ժամանակի մակբայներին ո՛չ իրենց քանակով, ո՛չ էլ իմաստային բազմազանությամբ: Ընդհանրապես կարելի է ասել, որ հայերենում տեղի մակբայները շատ չեն, և լեզուն, ինչպես երևում է, կարիք էլ չի զգում համալրելու տեղի մակբայների քանակը, որովհետև տեղի պարագայական իմաստները ավելի շատ արտահայտվում են տեղի իմաստ արտահայտող գոյականների հոլովական ձևերի միջոցով, ըստ որում տեղի պարագայական իմաստներ կարող են արտահայտել բոլոր հոլովներն առանց բացառության:

72. ՈՐԱԿԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ.— Հատկանշային մակբայներն, ինչպես նշված է արդեն, բաժանվում են երկու խմբի՝ որակական և քանակական։

Որակական մակբայները ցույց են տալիս գործողության որակը, այսինքն՝ թե ինչ արտաքին կամ ներքին հատկանիշ ունի գործողությունը, և ըստ այդմ հանդես են գալիս ձևի պարագայի շարահյուսական ֆունկցիայով։

Գործողության որակը հայերենում նախ և առաջ արտահայտվում է որակական ածականների միջոցով, որոնք այդ դեպքում, ինչպես ասված է արդեն, կիրառվում են մակբայաբար, օրինակ. «Քայլում էր հաստատ ու մտախոհ» (ԴԴ, 72). «Լուռ նայում էին հատակին». «Բուռն ու ֆնփուշ պարում էին նրանք» (ԱԻԱԷ, 127). «Նա նստեց մեծավարի, լուրջ, խոժոռ» (ՍԽՔ, 8). «Ազատ, համարձակ անցնում էին նրա աչքերի առջևից» (ՐՍ, 65). «Ավին պարզ տեսնում էր ծառերի բները» (ԱՔ, 6). «Բայց հիմա էլ պարզ ու հստակ տեսնում եմ քեզ» (ՎԱ, 17). «Սկսում էր արածել ձեզ ու անտրտունջ» (ՎԱ, 13). «Ես աշխատում էի հապճեպ, անուշադիր, ցրված» (ՎԱ, 26). «Վեհնային հովերը խաղում էին այդ դալարազվարճ մարգերում fաղցր ու մեղմանուշ» (Մ, 216). «Հարսներն ու աղջիկները լուռ ու տխուր ներս ու դուրս էին անում» (ՀԹ, 1, 348). «Ու տղերքը տխուր ու լուռ վերադարձան դեպի տուն» (ՀԹ, 2, 67). «Նա քայլում էր ուրախ ու երջանիկ» (ՆԴ, 421). «Դրժկամ նայում են ժայռերը խոժոռ, Տխուր խաղում են ալիքների հետ» (ՎՏ, 27). «Սմբատը լուռ, անշարժ կանգնած էր միևնույն դիրքում» (ՇՔ, 19). «Կխոսեմ պարզ ու կտրուկ» (ՇՔ, 68) և այլն։ Այսպիսի օրինակներ տրված են նաև «Մակբայը որպես խոսքի մաս» հատվածում։

Բուն մակբայ հանդիսացող արմատական կամ որպես այդպիսին գիտակցվող որակական մակբայներն արդի հայերենում շատ քիչ են։ Դրանցից են՝ արագ, դանդաղ, հապճեպ, շտապ, կամաց, ակամա, իսկույն, հանկարծ, միասին, օրինակ՝ «Արագ անցան գետը», «Ամենից արագ էր մոտեցել լուսամուտին» (ՇՔ, 12). «Հապճեպ կազմավորվեցին նոր զո-

բագնդեր». «Շտապ մոտեցան օգնական զորքերը». «Գնում է շտապ, քայլերը մոլոր» (ՀԹ, 2, 58). «Եվ հանկարծ իմ մանկության ծանոթ ձայներով լցվեց հովիտը» (ՎԱ, 30). «Մեկը շշուկով պատմում է կամաց» (ՎՏ, 29). «Կամսարյանը խուլ ծոցը դրավ հուշատեսրը» (Մ, 176):

Որակական մակբայների հիմնական խումբ են կազմում ածականներից և գոյականներից որեն, բար, պես ածանցներով կազմված մակբայները, որոնք նշանակում են «այս կամ այն կերպ», «այս կամ այն ձևով», «այս կամ այն բանի նման», ինչպես՝ զգուշորեն, առատորեն, ագահորեն, ավազակորեն, ավազակաբար, իշխանաբար, հայրաբար, հիմնավորապես, արմատապես և այլն: Օրինակներ.

«Ու քայլում էր աղջիկն այնպես զգուշորեն» (ՊՍ, 134). «Դու դաժանորեն նայում ես հեռուն» (ՎՏ, 97). «Մոր պես ճնշորեն մոտեցիր դեմքիս» (ՎՏ, 84). «Քո պայծառ գահից մեղմորեն իջիր» (ՎՏ, 49). «Ես խոսում եմ անկեղծորեն» (ՆԴ, 447). «Լուռ ու դանդաղորեն սկսեց շորերը հանել» (ՆԴ, 447). «Երկնքի անփայլ կապուտակը մթնում էր արագորեն» (ՆԴ, 499). «Մարուքյանը դարձյալ լռում էր համառորեն» (ՆԴ, 515). «Մեղմաբար բռնեց նժույգի սանձից» (ՐՍ, 67). «Տխուր կժպտաս դու ճոգնածորեն և ճոգնածորեն դուրը կբանաս» (ՎՏ, 64). «Ա՛յ որդի, քո գլուխը պահի է՛լի,— հայրաբար խրատում էր նա» (ՎԱ, 52). «Ասաց տիկինը վճռաբար» (Մ, 171). «Ու թևերն ահա փռած տիրաբար, Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն» (ՀԹ, 2, 44). «Կամսարյանը լսում էր տիրացուին և աչքերը մեքենաբար դարձնում դեսուդեն» (Մ, 221). «Եվ ոչ մի գործ նա չի վարել ազնվաբար» (ՇՔ, 8):

Այս ածանցներով կազմված բառերի մի մասը ցույց է տալիս հատկանիշի դրսևորումը այս կամ այն տեսակետից, այս կամ այն կողմից՝ այսպիսով արտահայտելով մասնավորման իմաստ, օրինակ՝ ճոգեպես «հոգեկան տեսակետից», մարմնապես, տնտեսապես, գիտականորեն «գիտական տեսակետից», գործնականորեն, պատմականորեն, թվաբանորեն և այլն:

Գործողության որակական հատկանիշ են արտահայտում նաև ովին||ովի, վարի, անց, ակի, գին ածանցներով կազմված

մակբայները, օրինակ՝ «խմբովին վրա բերին սեպուհներն ու զինվորները ծիծաղադեմ» (ՆԴ, 23). «Թույլ տամ, որ ինձ թրջի հիմնովին» (ՎԱ, 6). «Ուրախանալու միայն ազգովին» (ՊՍ, 171). « Մենք արդեն մտովի ճաշակում ենք այդ չքնաղ ուտելիքը» (ՎԱ, 16). «Նա մի հերոսական կյանք էր տեսնում մտովի» (Սհ, 32). «Գյուղացի ենք, գյուղավարի ենք ապրում». «Սմբատը բաղաքավարի, բայց սառը սեղմեց մեկի ու մյուսի ձեռքը» (ՇՔ, 33). «Շեյտակի հարվածում էր աջ ու ձախ». «Մամիկոնյան նախարարն արագ ու կողմանց զննեց խոսողին» (ԴԴ, 17). «Աշխատեց խղճով, սրտանց» (ՍԽՔ, 18). «Մեծ մասամբ նայում էր կողմանց» (Ֆվ, 27). «Երբեք սրտանց չէին ուրախանում» (ՆԴ, 348). «Քնքշագին սեղմեց իր կրծքին». «Սիրում էր նրան կաթոգին»:

· Կան ձևի մակբայներ կազմող նաև այլ ածանցներ՝ իվ, ուկ և այլն, որոնք գործածվում են սակավաթիվ բառերի մեջ, օրինակ՝ «Մի սովեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով» (ՎՏ, 55). «Տիկինը խստիվ պատվիրում էր սուրհանդակին...» (ՐՍ, 61). «Գալիս են կրկին թեթև, կամացուկ» (ՀՔ, 2, 18). «Շտապով մոտեցավ եվայի սենյակի դռանը» (ՆԴ, 318). «Արևը մայր մտավ, օրը միանգամից ցրտեց» (ՎԱ, 17). «Մենք լռելյայն առաջ գնացինք» (ՎԱ, 56). «Շահյանը գաղտագողի դիտում էր եվային»։

Կան անխոսկական բարդության միջոցով կազմված մի շարք ձևի մակբայներ, ինչպես՝ գողեգող, փոխեփոխ, հեհիհև, ուշի-ուշով, լուռ ու մունջ, բացեիբաց, գյուղ-գեղովի, առոք փառոք, վազեվազ և այլն։ Դրանց մի մասը գործողության ձևի հետ միասին ցույց է տալիս, թե ենթական ինչ դրության մեջ լինելով է կատարում գործողությունը, օրինակ՝ «Քո գառներդ ուլերիդ հետ Դեմդ կուգան վազեվազ» (Աի, 2, 18). «Եվ ընկնում էին նրանք շարեշար» (ԵՉ, 11). «Նրանցից շատերը բացեիբաց զենք էին կրում» (Ֆվ, 31). «Ամեն գիշեր տեղի-անտեղի հաչում ես» (ՎԱ, 22). «Գյուղ-գեղովի հավաքվում են կամաց-կամաց» (ՊՍ, 123). «Ստեփանն ուշի-ուշով հետևում էր հոր ցուցումներին» (Ֆվ, 21). «Առոք ու փառոք ետ դարձավ նա տուն» (ՊՍ, 159). «Կարծես կյանքում առաջին անգամ է երես առ երես հանդիպում իր որդուն» (Ֆվ,

19). «Կամ հետևում ես ի ես Թիթեռնիկին ոսկեթև» (ՀՔ, 2, 8)։

Առանձին պետք է խոսել գոյականների կրկնությամբ կազմված մակբայների մասին. դրանք գործողության ձևի հետ միասին ցույց են տալիս հաջորդականություն, օրինակ՝ «Եվ շարան-շարան բարձրանում էր վեր Մեր բեռնավորված ընկերների չուն» (ԵՉ, 7). «Հրթիռ-հրթիռ վեր են թռչում կյանքերը մեր կարևեր» (ԵՉ, 15). «Վազն է լալիս այգում հուլումհուլումհ» (ՎԴԳ, 16). «Ձներն են լալիս, որ առու-առու կրքքից պղտորված, իրար գիրկ վազեն» (ՊՍ, 31). «Գաբրիել Բագրատյանն այս բառերը արտասանում է հատ-հատ» (ՖՎ, 7)։

Հաջորդականության այդ իմաստն ավելի ցայտուն ձևով է դրսևորվում առ նախդրով միացած կրկնավորների մեջ, օրինակ՝ «Քայլ առ քայլ հետևում էր նրան» (ՇՔ, 16). «Շահյանին թվում էր, թե նա բառ առ բառ կրկնում էր նույնը, ինչ որ իր մոտ էր ասել» (ՆԴ, 392). «Անհաս երկնքից ասեղ առ ասեղ ցուրտ ջրերի մեջ սուզվեցին նոքա» (ՎՏ, 155). «Թափվեք իմ երգեր արցունք առ արցունք» (ՎՏ, 90). «Ընծայելով կաթիլ առ կաթիլ իր դառնագին հաճույքը» (ԵՉ, 262). «Գրոհ են տալիս բանակ առ բանակ Մեն ու մենավոր արեգակի դեմ» (ՊՍ, 195). «Ու սերկևիլն է այնտեղ կախվել ողկույզ առ ողկույզ» (ՎԴԳ, 40). «Եվ աղջիկները ահա տաք բարուքյունն են Տանում կողով առ կողով» (ՎԴ, 37). «Եվ կաթել է շիթ առ շիթ տաք սրտի մեջ ողկույզի» (ՎԴ, 8). «Ջրվեժ առ ջրվեժ խորանալով՝ ջրերը կորչում են կիրճի մեջ» (ՍԽՔ, 24). «Եվ այսպես, դիվիզիա առ դիվիզիա, գունդ առ գունդ ծավալվեցին մեր զորքերը» (Լր.)։

Հատկանիշի դրսևորման աստիճանականություն են ցույց տալիս հետզհետե, աստիճանաբար մակբայները, օրինակ՝ «Հետզհետե դիշերվա խավարն սկսեց նոսրանալ» (ՀՔ, 1, 362). «Այդ ձայներն էլ հետզհետե հեռացան, նվազեցին, ու էլ ոչինչ չէր լսվում» (ՀՔ, 1, 352). «Աստիճանաբար նա տիրապետեց նկարչի բարդ արվեստին» (Լր.). «Աստիճանաբար վերացվում են նաև այդ թերությունները» (Լր.)։

Ժողովրդական-խոսակցական լեզվում բայերից ձևի մակ-

բայներ են կազմվում են ածանցով, ինչպես՝ օrnրալեն, շորորալեն, դմբդմբալեն, վազելեն, զնգալեն և այլն, օրինակ՝ «Ձենը դմբդմբալեն գալիս էր փեղը հասնում» (ՎԱ, 38). «Էնպես էի թեթև կփկփալեն գնում, ոնց որ կոկիկ ճամփով» (ՎԱ, 40):

73. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ.—Քանակական մակբայները ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման չափն ու աստիճանը և ըստ այդմ լինում են չափի և աստիճանի:

Չափի մակբայներից մի քանիսը կազմվում են թվականներից և քանակ ցույց տվող բառերից ակի, պատիկ, իցս ածանցներով և ցույց են տալիս գործողության կատարման չափը թվային միավորներով, օրինակ՝ միապատիկ, միակի, երկակի, կրկնակի, եռակի, fառակի, ճնգակի, բազմակի, երկապատիկ, եռապատիկ, fառապատիկ, ճնգապատիկ, յոթնապատիկ, բյուրապատիկ, բազմապատիկ, երիցս, չորիցս, fանիցս, բազմիցս:

Գործողության կամ հատկանիշի դրսևորման քանակային չափը արտահայտվում է նաև թվականների և անգամ բառի կապակցությամբ կազմված վերլուծական մակբայների միջոցով, օրինակ՝ «Մինչև այդ երկու անգամ բարձրացել էր Մուսա լեռը... բայց երկու անգամ էլ դրանք չէր գտել» (ՖՎ, 18). «երկու-երեք անգամ կրակեցի հենց դոշներին» (ՎԱ, 41). «Կյանքումս առնվազն մի յոթ անգամ դիմել եմ նոր թեզքերե ստանալու համար» (ՖՎ, 51). «Ուղևորը վեր առեց օթակը, երեք անգամ զարկեց տախտակի վրա» (ԲՍ, 18). «Հարյուր անգամ ինձ քննել մզել են» (ՍԽՔ, 31). «Այս մասին բազում անգամ գրվել է». «Իմ մանկության օրերից հետո շատ անգամ է նորոգվել այս ձյունը» (ՍԽՔ, 4):

Մի քանի մակբայներ ցույց են տալիս կրկնողություն, ինչպես՝ նորից, նորեն, կրկին, վերստին, դարձյալ: Օրինակներ. «Պատերազմը նոր էր վերջացել, երբ իրեն նորից ձերբակալեցին, նորից քշեցին Սիբիր» (ՍԽՔ, 8). «Պավլեի Սուրենի աչքերը նորից պսպղում էին, նորից վիզն սկսում էր հաստանալ» (ՎԱ, 9). «Անուշը նորից թեքվեց առաջ և այս անգամ գլուխն ավելի մոտեցրեց Միքայելին» (ՇՔ, 61).

«Այժմ դու ևորեն կամենում ես մեզ թողնել» (Մ, 172). «Սամվելը կրկին մտավ յուր ընդունարանը» (ՐՍ, 28). «Կրկին լսելի եղավ որոտման ահեղ դղրդյունը» (ՐՍ, 18). «Նրա տերը դարձյալ տխուր էր, դարձյալ գտնվում էր անսովոր մռայլ մտախոհության մեջ» (ՐՍ, 33). «Դարձյալ իջավ գիշերը, դարձյալ ու կրկին Մենակ ես դու ինքդ քո դեմ մերկ ու բաց» (ՎՏ, 207). «Չի կամենա նա վերստին քեզ տանջել» (ՎՏ, 32)։

Բավականին շատ են այն մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության կամ հատկանիշի դրսևորման աստիճանը։ Դրանցից են՝ շատ, ֆիշ, բավական, բավականին, չափազանց, սաստիկ, խիստ, հազիվ, ամբողջապես, բոլորովին, ամենևին, իսպառ, ևույժ, անչափ և այլն։ Օրինակներ. «Գիշերը նա շատ ուշ վերադարձավ Մուշեղի մոտից» (ՐՍ, 54). «Շատ էի սիրում իմ տատոնց տունը ու միշտ այնտեղ էի լինում» (ՀԹ, 1, 347). «Արևը բավական բարձրացել էր» (ՐՍ, 65). «Կոիվը իմ ներսում երկար տևեց» (ՎԱ, 47). «Չափազանց երկար, խնամքով ներկած եղունգները...» (ՖՎ, 26—27). «Մոր հանդիմանությունը սաստիկ վրդովեցրեց Սամվելին» (ՐՍ, 44). «Ես սաստիկ ամաչեցի ու էդ չայի փողն էլ տվի» (ՀԹ, 2, 412). «Գուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օսլայած շապիկի բարձր ու ամուր օձիքը» (ՇՔ, 17). «Աշնանամուտին գետակները խիստ բարակում են» (ՎԱ, 19). «Լեռը պարուրված էր հազիվ լսելի ոսկեհունչ թընդյունով» (ՖՎ, 7). «Լեռնային գետակը հազիվ լսելի ձայնով քչքչում էր սառույցի տակ» (ՎԱ, 31). «Հացի խնդիրը կլանել է գյուղացուն ամբողջապես» (ՆԴ, 297). «Հայաստանը մնացել էր բոլորովին անտեր ու անպաշտպան» (ՐՍ, 29). «Փետրվարին անասունների կերը բոլորովին վերջացավ» (ՎԱ, 33). «Մեզնից խորշելու հարկ չկա ամենևին» (ՆԴ, 618). «Այդ անունը լսելով Սամվելը իսպառ գունատվեցավ» (ՐՍ, 60)։ «Ինչպես գնում են գործի, որ կարևոր է ևույժ» (ԵՉ, 249). «Անչափ սիրելի է նա ինձ» (Լր.)։

Գրեթե և համարյա մակբայները ցույց են տալիս հատկանիշի կամ գործողության դրսևորման մոտավոր աստիճանը, ինչպես՝ «Անկողին մտավ համարյա լուսաբացին» (ՐՍ, 54). «Նա համարյա չլսեց վերջին խոսքերը» (ՐՍ, 77). «Այսօր

փողոցը գրեթե ամայի էր» (ՇՔ, 59). «Երիտասարդն էլ գրեթե այդպիսի մի նշանակություն տվավ այդ խորհրդավոր հայացքին» (Մ, 182)։

Դորձածվելով քանակական թվականների հետ՝ դրանք ցույց են տալիս քանակի մոտավորություն, օրինակ՝ «Համարյա հինգ տարի», «Գրեթե վեց ամիս»։

Թվականների հետ քանակի մոտավորություն են արտահայտում նաև մոտ, մոտավորապես, շուրջ մակբայները, օրինակ՝ «Ծովի մակերևույթից մոտ ութ հարյուր մետր են բարձրը» (ՖվԼ, 17). «Մոտավորապես տաս տարի նա անցկացրեց հայրենիքից հեռու». «Նվ կոշտ ու կոպիտ գերմաներենը Շուրջ երեք տարի հարկադրաբար ճկվում է անվերջ նրա բերանում» (ՊՍ, 74)։

Դրանց հակառակ ուղիղ և ճիշտ բառերը ցույց են տալիս տվյալ թվով արտահայտված քանակի լրիվությունը, ճշտությունը, օրինակ՝ «Ուղիղ հիսուն տարի առաջ թողնելով իր աննշան ծննդավայրը...» (ՇՔ, 7). «Ճիշտ հիսունհինգ տարեկան էր սրբազանը» (ՇՔ, 37)։

Ընդամենը մակբայը ցույց է տալիս տվյալ թվով արտահայտված քանակի ամբողջությունը, օրինակ՝ «Այդ դրժբախտ դեպքից անցել է ընդամենը երեսուն տարի» (ՐՍ, 76). «Երևի հենց այդ երկու ձուն է ունեցել, ընդամենը երկու ձու» (ՎԱ, 18). «Ընդամենը մի տասներեք գարուն տեսած նորափեսան» (ՊՍ, 141). «Նշանակել է նրան ընդամենը մի հարյուր ռուբլի գրպանի ծախք» (ՇՔ, 21)։

Բացի նշված խմբերից ընդունվում են նաև ընդհանրական մակբայներ[32]։ Ընդհանրական են կոչվում այն մակբայները, որոնք ըստ կիրառության տարբեր իմաստներ են արտահայտում (ժամանակ ու տեղ և այլն) կամ էլ հենց տվյալ կիրառության մեջ համատեղում են ձևի, ժամանակի, չափի իմաստներ կամ իմաստային երանգներ։

---

[32] *Տե՛ս Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի քերականության դասագիրք, Երևան, 1950. Ա. Քյուրչյան, Ընդհանրական մակբայները հայերենում, ՊԲՀ, 1961, № 3—4. Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի լքեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։*

Մակբայների այդ տեսակին համապատասխան՝ ընդունվում են նաև ընդհանուր պարագաներ։ Վ. Առաքելյանը գրում է. «Կան այնպիսի պարագաներ, որոնք համատեղում են երկու կամ ավելի նշանակություններ և նայած իրենց գործածության հանգամանքներին՝ մեկ այս իմաստը կարող է ուժեղ լինել, մեկ էլ՝ մյուսը։ Այսպիսի պարագաները կոչում ենք ընդհանուր պարագաներ, որովհետև դրանք հենց տվյալ կիրառությամբ կարող են երկու կամ ավելի պարագաների պաշտոն արտահայտել»[33]։

Այսպես, կան մի քանի մակբայներ, որոնք ըստ կիրառության տարբեր իմաստներ են արտահայտում։ Օրինակ՝ առաջ մակբայն ըստ կիրառության ունի տեղի և ժամանակի իմաստներ, ինչպես՝ «Զորքերը շարժվեցին առաջ» և «Առաջ նա ուժգին սիրում էր ինձ»։ Կամ մեկ-մեկ բառը ըստ կիրառության արտահայտում է չափի ու ձևի և ժամանակի իմաստներ, օրինակ՝ «Մեկ-մեկ խոսեցինք և ոչ թե խմբով» և «Մեկ-մեկ մոռանում եմ»։ Շուտ-շուտ մակբայը ըստ կիրառության համատեղում է ժամանակի և չափի ու ձևի իմաստներ, օրինակ՝ «Նա շուտ-շուտ (հաճախ) է գալիս մեր տուն» և «Շուտ-շուտ արի, ուշանում ենք»։

Սակայն ավելի շատ են այն մակբայները, որոնք հենց նույն կիրառության դեպքում համատեղում են տարբեր պարագայական հատկանիշներ՝ տեղ ու ձև, ժամանակ ու ձև, ժամանակ, չափ ու ձև և այլն։

Այսպես՝ արտաքուստ, ներքուստ մակբայների մեջ տեղի իմաստի հետ միասին զարգացել է նաև ձևի նշանակություն, և դրանք ավելի ձևի իմաստով են ըմբռնվում, օրինակ՝ «Արտաքուստ գառ է ձևանում, բայց ներքուստ գայլ է» (արտաքնապես, ներքնապես)։ Տեղի և ձևի իմաստները համատեղում են նաև տեղնուտեղը, դեմ առ դեմ, դեմ-դեմի, դեմ-դիմաց, դեմ-հանդիման մակբայները։

Որոշ մակբայների մեջ համատեղվում են ժամանակի և ձևի նշանակությունները, օրինակ՝ իսկույն, անմիջապես, ո-

---

[33] Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Ա, էջ 395։

պեպես, վայրկենաբար, ստեպ-ստեպ, հաճախ, շարունակ, անընդհատ, մերթ ընդ մերթ: *Վերջին օրինակներում իրեն զգացնել է տալիս նաև չափի նշանակությունը:*

Կան մի քանի մակբայներ էլ, որոնք համատեղում են չափի ու ձևի նշանակությունները, ինչպես՝ բոլորովին, խպտուռ, ամբողջովին:

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՇԱՂԿԱՊ

74. ՇԱՂԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԲԱՌԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԽՈՒՄԲ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.— Հարցի քննութիւնն սկսենք հետևյալ հարցադրումով՝ շաղկապները բառային իմաստ ունե՞ն, թե՞ ոչ։ Կարծես թե այս հարցը երկընտրանք չի կարող հարուցել. չէ՞ որ խոսքից՝ նախադասութիւնից դուրս էլ իրարից լիովին տարբեր իմաստներ են արտահայտում, ասենք, որպեսզի, որովհետև, ուստի, բայց, իսկ, եթե, և, կամ, թե և այլ բառերը։ Բայց ինչպիսի՞ իմաստներ են դրանք։ Հասկանալի է, որ դրանք նյութական իմաստներ չեն, այսինքն՝ շաղկապները չեն անվանում առարկաներ, հատկանիշներ ու գործողութիւններ։ Իսկ ո՞րն է շաղկապների դերը լեզվի մեջ, ի՞նչ են արտահայտում նրանք։

Զուրկ լինելով նյութական իմաստ, չանվանելով առարկաներ, հատկանիշներ ու գործողութիւններ՝ շաղկապներն արտահայտում են վերջիններիս հարաբերութիւնները, որոնք բազմաթիվ են ու բազմապիսի, օրինակ՝ «Գնաց, որպեսզի ուսումը շարունակի» (նպատակ), «Հարցը սխալ լուծեց, որովհետև գրգռված էր» (պատճառ), «Ինչ զինվոր ես, ուստի պետք է կատարես հրամանը» (հետևութիւն), «Պատասխանեց, բայց անհաջող» (սահմանափակում), «Եթե հանդիպեցի, ամեն ինչ կասեմ» (պայման), «Մասիսը և Արագածը Հայաստանի ամենաբարձր լեռներն են» (միավորում) և այլն։ Ասվածներից և օրինակներից կարելի է եզրակացնել, որ շաղկապները լեզվի համակարգում կապակցական դեր են կատարում և պատկանում են լեզվի քերականական միջոցներին։

Շաղկապների բուն էութիւնը ճիշտ ըմբռնելու համար միշտ պետք է հաշվի առնել հետևյալ երկու հանգամանքները.

ա) շաղկապները առանձին, ինքնուրույն, անկախ բառեր են և, որպես այդպիսիք, ունեն իրենց բառային իմաստները (ի միջի այլոց, ահա թե ինչու, ասենք, հայերենի բայց, և, կամ, երբ, եթե, որովհետև, որպեսզի, ոչ միայն ... այլև *շաղկապները ռուսերենում և գերմաներենում ունեն իրենց բառային համարժեքները, ինչպես՝ ռուս.* но, и, или, когда, если, потому что, что бы, не только ... но и, *գերմ.* aber, und, oder, wenn, weil, damit, nicht nur ... sondern auch)։

բ) Շաղկապների բառային իմաստները հենց քերականական իմաստներ են։

Ելնելով շաղկապների այսպիսի երկակի դրությունից՝ կարծում ենք սխալված չենք լինի, եթե ասենք, որ շաղկապները գտնվում են լեզվի բառապաշարի և քերականական կառուցվածքի եզրերին։

Լեզվի համակարգում ունեցած իրենց այդ երկակի բնույթով շաղկապները անմիջական շփման եզրեր են հանդես բերում կապերի հետ՝ դրանց հետ միասին կազմելով քերականական իմաստ արտահայտող խոսքի մասերի խումբը՝ ի տարբերություն նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի խմբի։ Մենք գիտենք, որ կապերը ևս, հանդես գալով որպես առանձին, ինքնուրույն բառային միավորներ, զուրկ են նյութական նշանակությունից, արտահայտում են սոսկ քերականական իմաստներ և կատարում են շարահյուսական դեր՝ դրսևորելով ստորադաս բառերի՝ գերադասների նկատմամբ ունեցած կախման զանազան հարաբերությունները, օրինակ՝ «Մտածում էր իր որդու մասին». «Կռվեցին թշնամիների դեմ». «Պարգևատրվեց դիրեկտորի կողմից». «Տանջվեց մինչև լուսաբաց». «Նստած էր պատի տակ». «Լաց էր լինում երեխայի պես» և այլն։

Կապերի և շաղկապների շփման աղերսները հանդես են գալիս նաև նրանում, որ շատ դեպքերում նրանց արտահայտած հարաբերությունները նույնանում են կամ նրանց դրսևորած իմաստների միջև զուգահեռություններ են նկատվում։ Այսպիսի օրինակներ են.

Նպատակ — Գնաց քաղաք ուսումը շարունակելու համար || Գնաց քաղաք, որպեսզի ուսումը շարունակի։ Եկել էր գյուղ նրան

տեսնելու նպատակով||Ծկել էր գյուղ, որ նրան տեսնի։
Պատճառ—*Քննությունները հաջող չհանձնեց լավ չպարապելու պատճառով||Քննությունները հաջող չհանձնեց, որովհետև լավ չէր պարապել։*
Պայման—*Նրա մասնակցելու դեպքում գործը հաջողությամբ կավարտենք||Եթե նա մասնակցի, գործը հաջողությամբ կավարտենք։*
Ժամանակ—*Նրան տեսնելուն պես ինձ իմաց կանես||Հենց որ նրան տեսնես, ինձ իմաց կանես։* **Մինչև** *նրա գալը ամեն ինչ կպատրաստես||Մինչև նա գա, ամեն ինչ կպատրաստես։* **Նախքան** *նրա գալը գործը կավարտես||Նախքան նա կգա, գործը կավարտես։*

Սակայն չնայած այս զուգահեռությանը՝ կապը և շաղկապը որպես խոսքի մաս չի կարելի նույնացնել, որովհետև դրանց միջև նկատվում են իմաստային ու կիրառական զգալի տարբերություններ։ Այդ տարբերություններն ամենից առաջ դրսևորվում են կապերի և շաղկապների, որպես կապակցական բառերի, բուն ֆունկցիայի մեջ[1]։

Ինչպես գիտենք, կապերը մոտավորապես կատարում են հոլովական թեքույթների դեր՝ գոյականը կամ գոյականաբար գործածված բառերը որպես խնդիր կամ պարագա կապելով գերադաս բառերի հետ, այսպիսով ցույց տալով, թե ինչ հարաբերության մեջ է գտնվում ստորադաս բառը գերադաս բառի նկատմամբ՝ որոշելով նրա ֆունկցիան նախադասության մեջ, օրինակ՝ «Խոսում էին պատերազմի մասին», «Հարձակվեցին հակառակորդի վրա», «Կռվեցին թշնամիների դեմ», «Վերադարձավ եղբոր հետ», «Հանդիպեցին դպրոցի մոտ», «Լաց էր լինում երեխայի պես» և այլն։ Ինչպես օրինակներն են ցույց տալիս, կապերն արտահայտում են ստորադաս բառերի՝ գերադաս բառերի նկատմամբ ունեցած հարաբերությունները՝ այսպիսով իրենց խնդիրների հետ միասին դառնալով նախադասության մեկ անդամ։

---

[1] *Հետագա շարադրանքը հմմտ. Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 382. Պ. Շաթրախանյան, Գրաբարի շաղկապները, Երևան, 1960, էջ 9—10. Գ. Գաբեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 49—50։*

Ի տարբերություն կապերի՝ շաղկապները ստորադաս բառերը գերադաս բառերին կապելու, նախադասության անդամների ձևավորման, բառերի ֆունկցիայի որոշման դեր չունեն։ Եթե կարելի է այսպես արտահայտվել, շաղկապներն անտարբեր են իրենցով կապակցվող միավորների ձևերի նկատմամբ[2]։ Պարզ նախադասության կազմում նրանք իրար են շաղկապում նախադասության համազոր անդամներ (կամ մասեր), որոնք գտնվում են այս կամ այն համադասական հարաբերության մեջ, օրինակ՝ «Սուրենը և Արամը գնացին»—միավորման հարաբերություն. «Թե՛ Սուրենը, թե՛ Արամը գնացին»—թվարկման հարաբերություն. «Սուրենը ևս գնաց», «Սուրենն էլ գնաց»—հավելման հարաբերություն. «Սուրենը կամ Արամը». «Կամ Սուրենը, կամ Արամը»—տրոհման հարաբերություն և այլն։

Սակայն շաղկապների կիրառության հիմնական ոլորտը բարդ նախադասությունն է, որտեղ շաղկապները հանդես են գալիս ավելի լայն շարահյուսական-կապակցական ֆունկցիաներով՝ արտահայտելով բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների ամենաբազմազան ու տարբեր համադասական ու ստորադասական հարաբերությունները, օրինակ՝ «Քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը». «Նա ուզում էր ասել ամեն ինչ, բայց ուժերը դավաճանում էին». «Եղբայրն ուսուցիչ է, իսկ քույրը բժշկուհի». «Նրանք նվիրված են իրենց գաղափարներին, ուստի կհաղթեն». «Գնաց մայրաքաղաք, որպեսզի ուսումը շարունակի». «Գիտեմ, որ դու չես դավաճանի քո սկզբունքներին». «Մենք կհաղթենք, որովհետև մեր գործն արդար է». «Հենց որ հասան գետափին, իսկույն իջան ձիերից». «Եթե այդ պայմանը կատարես, քո մեղքը կթեթևանա» և այլն։

Սակայն շատ հաճախ բարդ նախադասության կազմում շաղկապներով միավորվում են ոչ թե երկու, այլ իմաստային

---

[2] *Այստեղ խոսքը հոլովական ձևերի մասին է։ Առանձին շաղկապներ գործածվում են բայերի որոշակի եղանակա-ժամանակային ձևերի հետ։ Այսպես օրինակ՝ նպատակային իմաստ արտահայտող որ և որպեսզի շաղկապները գործածվում են ըղձական եղանակի բայաձևերի հետ՝ Գնաց, որ||որպեսզի տեսնի. Մոտեցավ, որ||որպեսզի օգնի և այլն։*

այս կամ այն հարաբերության մեջ գտնվող բազմաթիվ նախադասություններ՝ կազմելով բազմաբարդ շարահյուսական ամբողջություններ, ինչպես՝ «Երբ ամուսինը վերջացրեց, կինը կեզծ հարգալից ժպտաց, բայց ոչինչ չպատասխանեց, որովհետև չէր լսում, թե ինչ էր ասում նա» (Ակ). «Իսկ երբ աղան բադի պես աջ ու ձախ երերվելով գնում էր փողոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուբ էր մտնում, ամենքն աշխատում էին որսալ նրա հայացքը, որպեսզի բարևեն խոնարհ և արժանանան նրա արհամարհական պատասխանին» (ՇՔ). «Գաբրիելն այս երեք ուսյալ երևելիներից ուզում էր իմանալ, թե սրանք ինչ լույսի տակ են տեսնում իրադրությունը, թե ինչ են մտադիր անելու, եթե աքսորի հրաման տրվի, և ինչ միջոցներ են գործադրելու, որպեսզի քիչ տանջանքներով կրեն իրենց վիճակված խաչը» (ՖՎ)։

Այս բոլորից կարելի է եզրակացնել, որ շաղկապները, որպես լեզվական միավորներ, ունեն իրենց յուրահատուկ իմաստներն ու շարահյուսական կիրառության ոլորտները. հատկանիշներ, որոնցով նրանք տարբերվելով մյուս բոլոր բառախմբերից՝ առանձին տեղ են գրավում խոսքի մասերի համակարգում։

Քանի որ այստեղ խոսքը գնում է շաղկապների՝ լեզվի համակարգում խաղացած դերի մասին ընդհանրապես, ապա նշենք, որ շաղկապները կարող են գործածվել նաև ինքնուրույն, անկախ նախադասությունների, պարբերությունների, խոսքի ամբողջական հատվածների սկզբում՝ այդ դեպքում դրսևորելով դրանց և խոսքի շղթայում դրանց նախորդած լեզվական միավորների տրամաբանական, իմաստային կապերն ու աղերսները։

Վերցնենք հետևյալ նախադասությունները «Դիքորից». «Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Դիքորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի։ Կինը չէր համաձայնում։ —Չեմ ուզում, իմ քորփա էրեխին էն անիրավ աշխարքը մի գցիլ, չեմ ուզում,—լաց էր լինում կինը։ Բայց Համբոն չլսեց»։ Միանգամայն ակնբախ է, որ վերջին նախադասությունը իմաստային և հնչերանգային տեսակետից ավարտուն, ինքնուրույն ու անկախ նախադասու-

թյուն է և քերականորեն կապակցված չէ նախորդ նախադասությունների հետ։ Սակայն բայց շաղկապն այստեղ կատարում է յուրահատուկ ֆունկցիա՝ արտահայտելով իրենով սկսվող և նախորդ նախադասությունների տրամաբանական կապը։ Նույնպիսին է իսկ շաղկապի դերը «Քաոսից» բերվող հետևյալ հատվածի մեջ. «Սանձարձակ ծաղրում էին, զրպարտում, հայհոյում քաղաքի առաջին միլիոնատիրոջը, սակայն միայն հեռվից։ Իսկ երբ աղան... գնում էր փողոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուբ էր մտնում, ամենքն աշխատում էին որսալ նրա հայացքը»։

Նշենք նաև, որ առանձին շաղկապներ, այսպես կոչված հավելման համաստ արտահայտող շաղկապները, կիրառվելով ինքնուրույն, անկախ նախադասությունների մեջ, ցույց են տալիս, որ այս շաղկապների հետ գործածվող մխավորները ունեցել են իրենց համազորները նախորդ նախադասությունների մեջ, օրինակ՝ «Այդ տան պատերը ևս սևագույն քարից էին». «Աղոթքներն էլ չօգնեցին». «Նաև իմ բարեկամին ազատեցին» և այլն։

Այնուհետև, թե շաղկապով կարող են սկսվել ամբողջական խոսքեր, որպես վերնագրեր, օրինակ՝ «Թե ինչ պատահեց դոն Կիխոտի և այծարածների միջև» (ՍԴԿ, 1, 82). «Թե դոն Կիխոտի հետ եղած այծարածներից մեկն ինչ պատմեց» (ՍԴԿ, 1, 89). «Թե ինչ ուղարկեց թուրքի սուլթանը Մոսկովի ցարի ընծաների փոխարեն» (ՀԹ, 2, 298). «Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց» (Նար-Դոս). «Թե ինչպես հույսն ու հուսահատությունը պարբերաբար հաջորդում էին իրար» (ՎԱՀԳ, 35). «Թե ինչպես կարիքն առանց հապաղելու սկսեց բախել նրանց դուռը» (ՎԱՀԳ, 40) և այլն։ Դուցե այստեղ ավելորդ չի լինի նշել, որ Վ. Անանյանի «Հովազաձորի գերիները» գրքի բոլոր վերնագրերը, բացի մեկից, սկսվում են այս ձևով՝ թե շաղկապով՝ «Թե ինչպես բախտը հաճախ ժպտում է անարժան մարդկանց», «Թե ինչպես ամբողջ երկիրն էր փնտրում կորածներին», «Թե ինչպես գործեց բնության նիրհող և կույր ուժերից մեկը» և այլն։

Այսպես ուրեմն՝ շաղկապները կապերի հետ միասին կազմում են լեզվի քերականական համաստ արտահայտող բառա-

խմբերը, որոնք զուրկ լինելով նյութական նշանակությունից սոսկ շարահյուսական, կապակցական դեր են կատարում՝ արտահայտելով բառերի և նախադասությունների հարաբերությունները։

Շաղկապների առաջացումն ու զարգացումը անմիջականորեն ու սերտորեն կապված է բարդ նախադասության առաջացման ու զարդացման հետ։ Իսկ բարդ նախադասությունները մարդկային մտածողության թելադրանքով ու պահանջով զարգացման բարձր մակարդակի են հասնում հատկապես գրավոր-գրական լեզվում՝ ի վիճակի լինելով արտահայտելու լեզվական տարբեր միավորների իմաստային ամենաբազմազան փոխհարաբերությունները և ընդգրկելով բազմաթիվ ու բազմապիսի տիպեր ու ձևեր։

Հարցին մոտենալով այս տեսակետից՝ պետք է նշել, որ ժամանակակից գրավոր-գրական հայերենն ունի բավականին հարուստ շաղկապական համակարգ։ Մի կողմ թողած հարաբերական դերանունները, գրավոր-գրական հայերենում կան հինգ տասնյակից ավելի բառեր, որոնք հատկապես բառերի և նախադասությունների կապակցման դեր են կատարում, այսինքն՝ կազմում են արդի հայերենի շաղկապների համակարգը։

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական-խոսակցական լեզվին և բարբառներին, ապա պետք է նշել, որ գրավոր լեզվի համեմատությամբ դրանց շաղկապական համակարգը թույլ է զարգացած։ Այս տեսակետից բավական է նշել, որ գրավոր-գրական լեզվում այնքան սովորական ու լայնորեն տարածված այնպիսի շաղկապներ, ինչպիսիք են՝ այլ, այլապես, այնինչ, այսպիսով, սակայն, թեև, թեպետ, չնայած, հետևաբար, հետևապես, միևնույն, նաև, նույնիսկ, ոչ թե... այլ, ոչ միայն... այլև, որովհետև, որպեսզի, *ժողովրդա-խոսակցական լեզվում և բարբառներում գործածական չեն։ Գուցե սխալված չլինենք, եթե ասենք, որ ժողովրդա-խոսակցական լեզվում և բարբառներում գործածվում են երկու տասնյակից ոչ ավելի շաղկապներ։ Դրանցից են՝* որ, թե, թե չէ, կամ, կամ թե, կամ թե չէ, ու, մինչև, էլ և մի քանի ուրիշները։

Ինչևիցե, մի բան պարզ է, որ գրավոր-գրական լեզուն գե-

բադասութիյունը տալիս է զոդվածական (այսինքն՝ շաղկապական), իսկ ժողովրդական-խոսակցական լեզուն՝ շարահարական (այսինքն՝ անշաղկապ) կապակցութիյուններին։

Մ. Աբեղյանը, շատ ճիշտ բնորոշելով այս երևույթը, միանգամայն իրավացիորեն գրում է. «Շարահարութիյունը խոսքերի կապակցութիյան ամենապարզ, սկզբնական ձևն է և հատուկ է ժողովրդական լեզվին. գրական լեզվի մեջ պահանջվում է, որ կապակցված խոսքերի հարաբերութիյունն արտահայտվի որևէ բառով»[3]։

Եվ իրոք, մեր գրավոր-գրական և ժողովրդական-խոսակցական լեզուների հիմնական ու էական տարբերութիյուններից մեկը հենց այս է։ Սրա համար ցայտուն օրինակ կարող է հանդիսանալ Հ. Թումանյանի լեզուն, որը մոտ լինելով ժողովրդախոսակցականին՝ չափազանց առատ է շարահարական կապակցութիյուններով, որոնք գրավոր-գրական լեզվում կդրսևորվեին որպես զոդվածական (շաղկապական) կապակցութիյուններ, ինչպես՝ «(եթե) Մնկան ծերին աքլորը ծուղրուղու կանչի, ձենը ականջը չի հասնիլ» (1, 462). «(եթե, երբ) Ես եմ գնում—կարասը լիքն օձ է դառնում, (եթե, երբ) սրանք են գնում—ոսկի» (1, 448). «Մին էլ գնում է (որ) ջուրը կապի, գալիս է (ու) տեսնում՝ (որ) բաղարջը չկա» (1, 441). «Առավոտը վեր է կենում (ու) տեսնում (որ) մի աղվես է ընկել մեջը» (1, 441). «(Թևև) Բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ ձմեռ չոր եմ մնում» (1, 426). «Տեսնում է (որ) մի պառավ փետի է ման գալի (որ, որպեսզի) թոնիրը վառի, հաց թխի» (1, 433). «Գնում է (ու) տեսնում՝ (որ) մի տեղ հարսանիք են անում, (բայց) մսացու չունեն, որ մորթեն» (1, 434)։

Կատարված քննութիյուններով ընդհանուր ձևով ուրվագրծվեցին շաղկապի խոսքիմասային առանձնահատկութիյունները, նրա շարահյուսական կիրառութիյունների ոլորտները։ Այժմ շաղկապի և այլ խոսքի մասերի փոխհարաբերութիյունների մասին։

75. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼ ԽՈՍ-

---

[3] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսութիյուն*, էջ 609։

ՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ.— Լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշվում է, որ շաղկապները և կապերը պատկանում են համեմատաբար ուշ առաջացած խոսքի մասերի թվին։ Դա ամենից առաջ ապացուցվում է նրանով, որ շաղկապների և կապերի մեջ մտնող բառերը, որպես կանոն, առաջանում են նյութական իմաստ արտահայտող բառերից՝ նրանց նյութական իմաստի մթագնման և հարաբերության իմաստի զարգացման ճանապարհով։ Այսպես են, օրինակ, այլ, կամ *(«կամք»),* ուստի, ուրեմն, միայն, որ, սակայն *(սակ «պայման» բառից)* շաղկապները, առթիվ, դիմաց, համար, հանդերձ, հանձին, մասին *կապերը և այլն։*

Խոսքը մասնավորելով շաղկապների մասին՝ պետք է նշել, որ նրանք սովորաբար առաջանում են դերանուններից, առանձին դեպքերում գոյականներից, բայական ձևերից, կապերից, մակբայներից և եղանակավորող բառերից։ Այսպես օրինակ, մենք գիտենք, որ ժամանակակից հայերենի որ *շաղկապն առաջանում է* որ *դերանունից, իսկ վերջինս գրաբարում բուն շաղկապական կիրառություն չուներ։ Այսպես և՝ դերանվանական ծագում ունեն այլ, այնինչ, այսինքն, ևանի շաղկապները։ Հայտնի է, որ կամ շաղկապն առաջանում է կամ բառից, որը գրաբարում հավասարապես նաև գոյական էր, իսկ շաղկապը՝ իսկ բառից, որը գրաբարում հավասարապես նաև ածական ու գոյական էր։ Ժամանակակից հայերենի* ուստի *շաղկապն առաջանում է* ուստի *մակբայից, որը գրաբարում միաժամանակ ուներ նաև շաղկապական կիրառություն և այլն։*

Այս բոլոր օրինակները խոսքի մասերի փոխներգործության և փոխանցման երևույթներ են։ Գիտենք, որ լեզուն ոչ թե պատրաստի ու ավարտուն գործ է, այլ անընդհատ շարժման մեջ գտնվող, հարատև փոփոխվող ու զարգացող երևույթ է։ Դարերի ընթացքում լեզվի աստիճանական զարգացման հետևանքով փոխվում են բառերի ձևերը, իմաստները, իսկ վերջիններիս հետ կապված կարող են փոխվել նաև բառերի ֆունկցիաները։ Հասկանալի է, որ փոփոխություններն ուղեկցում են լեզվին նրա պատմության ամբողջ ընթացքում, և

իր զարգացման և ոչ մի փուլում լեզուն չի կարող ներկայանալ որպես ինքնաբավ ու ավարտուն համակարգ։

Ասվածներից կարելի է եզրակացնել, որ տարբեր խոսքի մասերի փոխներգործությունները և փոխանցման երևույթները տեղի են ունենում նաև լեզվի ժամանակակից փուլում։ Եթե մի կողմ թողնենք լեզվի պատմական տվյալները և անդրադառնանք սոսկ ժամանակակից հայերենին, ապա պետք է նկատենք, որ արդի լեզվում ևս շաղկապները ինքնաբավ, այլ խոսքի մասերից պարփակված համակարգ չեն ներկայացնում։

Նշված է, որ ֆունկցիոնալ տեսակետից շաղկապները բնորոշվում են իրենց կապակցական դերով։ Բայց չէ՞ որ նախադասությունների կապակցությունն իրականանում է ոչ միայն շաղկապների, այլև հարաբերական դերանունների միջոցով։ Նախադասությունների կապակցման իրենց ֆունկցիայով հարաբերական դերանունները հավասարվում են ստորադասական շաղկապներին, բայց վերջիններիցս տարբերվում են նրանով, որ նախադասության անդամ են դառնում, մյուս կողմից էլ՝ դրանցից առարկայական նշանակություն ունեցողները հոլովվում են։ Հարաբերական դերանունները գլխավոր նախադասությունների մեջ համախ ունենում են իրենց համապատասխան հարաբերյալները՝ այսպիսով ավելի ցայտուն ձևով դրսևորելով բարդ նախադասության կազմիչ մասերի հնչերանգային և իմաստային միասնությունը, ինչպես՝ «Վերցրեց այն, ինչ իրեն հարկավոր էր». «Ծկավ այն ժամանակ, երբ արդեն ուշ էր». «Գրեց այնպես, ինչպես ես էի պահանջել». «Որքան մեծանում է, այնքան գեղեցկանում է». «Խոսում էր այնպես ոգևորված, ինչպես երբեք չէր խոսել» և այլն։

Ստորև բերվում են հարաբերական դերանուններով կապակցված բարդ ստորադասական նախադասությունների մի քանի օրինակներ գեղարվեստական գրականությունից. «Դավաճան է նա, ով լռում է դեռ, Մատնիչ է, ով իր սուրը չի հանում» (ՎՏ, 93). «Նա արել է այն, ինչ որ շատերն են անում» (ՇՔ, 46). «Կինը նրա բարձի տակից դուրս բերեց մի մեծ ծրար, որը կնքված էր մոմուտով» (ՇՔ, 14). «Երբ այս բոլորը

կատարված կլինի, այն ժամանակ ես քոնը կլինեմ» (ՐՍ, 219). «Երբ զգաց, որ մոլորվել է, արդեն ուշ էր, շատ ուշ» (ՇՔ, 37). «Իմ գերեզմանը թող լինի հեռվում, Ուր մահացել են շշուկ, երգ ու ձայն» (ՎՏ, 10)։

Բերված բոլոր նախադասությունների մեջ հարաբերական դերանունները երկրորդական նախադասությունները կապում են գլխավորներին՝ այսպիսով կատարելով շաղկապական ֆունկցիա, բայց բուն շաղկապներից, ինչպես նշված է, տարբերվում են նրանով, որ հարաբերական դերանունները հանդես են գալիս նախադասության անդամների դերով, որը պայմանավորված է նրանց ունեցած, ճիշտ է, անորոշ, ընդհանուր, բայց և այնպես, նյութական նշանակությամբ։

Պետք է նշել նաև այն, որ առանձին դեպքերում հարաբերական դերանունները և շաղկապները հստակորեն չեն սահմանագծվում։ Այսպես օրինակ՝ հաստատ կարող ենք ասել, որ «Այն մարդը, որը չի հարգում իրեն, չի կարող հարգել նաև ուրիշներին» նախադասության մեջ **որ** *բառը հարաբերական դերանուն է, իսկ «Զգացի, որ տխուր է» նախադասության մեջ՝ շաղկապ։ Բայց ի՞նչ է նույն բառը «Այն մարդիկ, որ չեն հարգում իրենց, չեն կարող հարգել նաև ուրիշներին» նախադասության մեջ՝ շաղկա՞պ, թե՞ հարաբերական դերանուն։ Այստեղ* **որ** *բառը կարելի է համարել շաղկապ՝ նկատի ունենալով այն, որ թվով չի համաձայնել* **մարդիկ** *որոշյալին, բայց կարելի է համարել նաև հարաբերական դերանուն՝ նկատի ունենալով այն, որ կարող է փոխարինվել* **մարդիկ** *որոշյալի հետ թվով համաձայնող* **որոնք** *հարաբերական դերանվամբ՝ «Այն մարդիկ, որոնք չեն հարգում իրենց...»։ Այս մի հատիկ օրինակն էլ բավական է ցույց տալու, որ հարաբերական դերանունների և շաղկապների միջև անանցանելի պատնեշներ չկան։*

Շաղկապները հարաբերակցություններ են հանդես բերում նաև կապերի հետ։ Դա մի կողմից արտահայտվում է շաղկապների ու կապերի դրսևորած որոշ հարաբերությունների նույնությամբ կամ համապատասխանությամբ, մյուս կողմից՝ նրանով, որ որոշ բառեր ըստ կիրառության հանդես են գա-

լիս կապական և շաղկապական ֆունկցիայով միաժամանակ[4]։ Ահա այսպիսի օրինակներ.

Մինչև *նրա գալը աշխատանքը կավարտեմ*||**Մինչև նա գա,** *աշխատանքը կավարտեմ։* **Մինչև քննությունների վերջը չի** *կարող այցելել մեզ*||**Մինչև քննությունները չվերջանան, չի** *կարող այցելել մեզ։* **Ինչպես** *առյուծ հարձակվեց*||**Հարձակվեց,** **ինչպես** *առյուծն է հարձակվում։* **Նախքան** *նրա վերադարձը ամեն ինչ պետք է հարթված լինի*||**Նախքան նա կվերադառնա,** *պետք է ամեն ինչ հարթված լինի։* **Փոխանակ** *ուրախանալու՝ տխրել ես*||**Փոխանակ** *ուրախանաս, տխրել ես։* **Չնայած** *ահավոր վտանգի սպառնալիքներին՝ կյանքը բարձր շրջաններում ընթանում էր նախկին ձևով*||**Չնայած** *ահավոր վտանգ էր սպառնում, կյանքը բարձր շրջաններում ընթանում էր նախկին ձևով։ Առաջին նախադասություններում ընդգծված բառերը կապեր են, իսկ երկրորդ նախադասություններում՝ շաղկապներ։*

Շաղկապները հարաբերակցություններ ունեն նաև որոշ մակբայների և եղանակավորող բառերի հետ[5]։ Այսպես, **էլ,** *ապա բառերը ըստ կիրառության մակբայներ և շաղկապներ են հավասարապես, իսկ* **կարծես, կարծես թե, ասես, ասես թե, հենց,** *միայն բառերը՝ եղանակավորող բառեր և շաղկապներ։ Ստորև բերվում են համապատասխան օրինակներ, որտեղ առաջին նախադասություններում ընդգծված բառերը մակբայներ կամ եղանակավորող բառեր են, իսկ երկրորդ նախադասություններում՝ շաղկապներ։*

Ա) էլ չեմ տեսնելու նրան. Բ) Նա էլ դավաճանեց մեր գործին։

Ա) Հանգիստ դրեց գլխարկը, ապա վերցրեց ձեռնափայտը։ Բ) Եթե մեծ եղբայրը մեղմ էր ու համեստ, ապա փոքրը կատաղի էր ու ամբարտավան։

Ա) **Կարծես** *հիվանդ է։ Բ) Այնպես է դունատվել,* **կարծես** *հիվանդ է։*

Ա) **Հենց** *դու ասացիր։ Բ)* **Հենց** *եկավ, ասաց։*

---

[4] *Հմմտ. Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 382—383։*

[5] *Հմմտ. Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում։*

Ա) Միայն դու լսեցիր իմ խորհուրդները։ *Բ)* Ամեն ինչի համաձայն եմ, միայն լսիր իմ խորհուրդները։

Եվ վերջապես, խոսքի մեջ շաղկապական դեր են կատարում նաև զանազան խոսքի մասերի պատկանող մի շարք բառեր և կապի ու խնդրի կապակցություններ, ինչպես՝ մեկը... մյուսը... երրորդը, սկզբում... ետոո... ապա, նախ... ապա, մասամբ... մասամբ, մերթ... մերթ, վերջապես, վերջի-վերջո, ի դեպ, այս պատճառով, այդ պատճառով, այս նպատակով, այդ նպատակով, սրա համար, դրա համար և այլն։

Ստորև բերվում են այսպիսի բառերի և կապակցությունների շաղկապական կիրառության մի քանի օրինակներ։

«Պետրոս Ալթունին սկզբում զարմացավ, ապա ընդունեց այդ օգնությունը» (Ֆվ, 340). «Ես կա, որ քեզ տեսնեմ՝ մեկ, որսի գնամ՝ երկու, անտառը ծախեմ՝ երեք» (Ակ, 224). «Նա կանգնած էր ու նայում էր մերթ ներքև, խոնավ, մամռապատ գետնին, մերթ լուռ ականջ դնող շանը, մերթ իր դիմաց՝ լեռան տակ տարածված անտառի մերկ կատարների ծովին, մերթ ամպերի սպիտակ շերտերով պատած աղոտացող երկընքին» (Ակ, 299). «Նախ հանգուցյալը հանձնարարում էր Սմբատին աշխատել Միքայելին ուղիղ ճանապարհի բերելու, ետոո պատվիրում էր արթուն հսկողություն ունենալ Արշակի վրա... Այնուհետև նա խնդրում ու աղերսում էր ուղղել իր սխալը» (ՇՔ, 20). «Մեկը նավթահոր էր փորել տալիս, և երեկ խողովակը ծռվել էր հորի մեջ, մյուսի գործակատարը գողություն էր արել, երրորդը վաղը պիտի բանկից ազատեր իր մուրհակները, մի ուրիշն էլ մտածում էր...» (ՇՔ, 27)։

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

76. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—Հայերենի քերականություններում շաղկապները սովորաբար դասակարգվում են ըստ կազմության (բառակազմական դասակարգում), ըստ կիրառության ձևի, ըստ իմաստի (իմաստաբանական դասակարգում) և ըստ շարահյուսական կապակցության դերի (շա-

բահյուսական դասակարգում)[6]*։ Ինչպես ստորև կտեսնենք, այս դասակարգումներով երևան են հանվում միայն շաղկապներին հատուկ բնորոշ կողմերն ու առանձնահատկությունները։*

77. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ.— Շաղկապները ըստ կազմության բաժանվում են երկու խմբի՝ պարզ շաղկապներ *և* բարդ շաղկապներ։

Պարզ են կոչվում այն շաղկապները, որոնք ժամանակակից լեզվի տեսակետից ընկալվում են որպես արմատական բառեր և բաղադրիչների վերածվել չեն կարող։ Արդի հայերենի պարզ շաղկապները մոտավորապես հետևյալներն են. այլ, ապա, բայց, եթե, և, ու, երբ, էլ, թե, ինչ, իսկ, կամ, միայն, մինչ, որ, ոչ...ոչ, սակայն, ուստի, ուրեմն, ևանի։ *Դրանցից մի քանիսը ստուգաբանորեն բաղադրյալ են ու տարրալուծելի, ինչպես՝* մի+այն, ուր+եմն, ևան+ի, *բայց հենց դրանք էլ արդի լեզվում ընկալվում ու ըմբռնվում են որպես արմատական բառեր։*

Չնայած պարզ կամ արմատական շաղկապների սակավությանը, դրանք լեզվի կապակցական միջոցների մեջ առանձին դեր ու կշիռ ունեն իրենց գործածականության հաճախականությամբ, բաղադրյալ շաղկապների մեջ ունեցած դերով և բազմիմաստությամբ։ Այս հատկանիշները հատկապես բնորոշ են զարգացման երկար ուղի անցած և, որ, թե, էլ *շաղկապներին։*

Բարդ շաղկապները, ըստ բաղադրիչ անդամների սերտաճման ու միաձուլման տարբեր աստիճանների, բաժանվում են երկու խմբի՝ կցական բարդություններ և հարադրական բարդություններ։ Իսկական բարդությունը շաղկապների կազմության մեջ դեր չի կատարում։

Ինչպես գիտենք, կցական բարդություններն առաջանում են երկու բառերի պարզ շարահյուսական կապակցություններից, որոնք հաճախակի միասին գործածվելով միաձուլվում են, ընկալվում որպես մեկ իմաստ արտահայտող մի բառ և

---

[6] *Տե՛ս* Պ. Շարաբխանյան, *Դրաբարի շաղկապները.* Գ. Գաբեգիկյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում.* Ս. Աբրահամյան, *Չքնքվող խոսքի մասերը...։*

գրվում են միասին։ Արդի հայերենի կցական բարդություն ներկայացնող շաղկապներն են՝ այնինչ (այն+ինչ), այսինքն (այս+ինքն), թեև (թե+և), թեկուզ (թե+կուզ), թեպետ (թե+պետ), մինչդեռ (մինչ+դեռ), մինչև (մինչ+և), ևս (ևս+և), նույնիսկ (նույն+իսկ), այլև (այլ+և), որովհետև (որով+հետև), որպեսզի (որպես+զի), ֆանզի (ֆան+զի), վասնզի (վասն+զի), թեպետև (թեպետ+և), թեկուզև (թեկուզ+և)։ Վերջին երկու բառերի բաղադրիչները գրվում են նաև առանձին՝ թեպետ և, թեկուզ և։

Այս բաղադրությունների մեջ ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ դրանց մի մասի երկրորդ բաղադրիչները շաղկապներ են։

Ավելի մեծ թիվ են կազմում հարադրական բարդություն ներկայացնող շաղկապները։ Դրանք այն շաղկապներն են, որոնց բաղադրիչները թեև չեն միաձուլված և գրվում են առանձին, բայց արտահայտում են մեկ ընդհանուր կապակցական, շաղկապական իմաստ։ Հասկանալի է, որ լեզվի շաղկապական միջոցների հարստացումը հատկապես բեղմնավոր է ընթանում հարադրական բարդությունների ուղիով, և լեզվի արդի փուլում էլ նորանոր շաղկապներ են առաջանում։ Նշելի է նաև այն, որ հարադրական շաղկապների երկրորդ բաղադրիչը սովորաբար շաղկապ է լինում։

Հարադրական շաղկապների կազմության մեջ հատկապես մասնակցում են nr, և, էլ, թե շաղկապները։ Բացի սրանցից, շաղկապի դերով են հանդես գալիս նաև երկու կամ երեք բառի սովորական հարադրական այլ կապակցություններ։

Հարադրական շաղկապներ կազմելու տեսակետից ամենագործունը nr շաղկապն է, որով բաղադրվում են մի շարք հարադրություններ, օրինակ՝ այնպես nr, երբ nr, թե nr, հենց nr, մանավանդ nr, նամանավանդ nr, ֆանի nr, մինչև nr, չնայած nr, այնքան nr, այնքանով nr և այլն։ Nr շաղկապով բաղադրված այս բոլոր հարադրությունները, nr շաղկապի բնույթին համապատասխան, հանդես են գալիս նախադասությունների ստորադասական կապակցությունների արտահայտման ֆունկցիայով։ Նշենք նաև, որ այս շաղկապը որպես թարմատար ընդհանրապես կարող է հարադրվել հա-

րաբերական դերանուններին, օրինակ՝ ուր որ, որտեղ որ, ինչ֊ման որ, ինչպես որ, ինչ որ *և այլն։*

Հարադրական շաղկապներ են կազմվում նաև և շաղկապով, որը հարադրվում է համադասականներին, օրինակ՝ բայց և, թեպետ և, թեկուզ և, ինչպես և, նույնպես և, համապես և, հետևաբար և, ուստի և, ուրեմն և, հետևապես և։

Որոշ հարադրականներ կազմվում են էլ շաղկապի հարադրությամբ, ինչպես՝ ինչ֊ման էլ, որ֊ման էլ, այն էլ, կամ էլ։ *Նշենք, որ էլ շաղկապը հարադրվում է հարաբերական դերանուններին ընդհանրապես, օրինակ՝* ինչ էլ, ով էլ, ուր էլ, որտեղ էլ, ինչպես էլ *և այլն, որոնք ստորադաս նախադասությունները կապելով գերադասներին, հարստացնում են արդի հայերենի շաղկապական բառերի համակարգը։*

Կան նաև թե *շաղկապով կազմված հարադրություններ, ինչպես՝* ապա թե, իբր թե, իբրև թե, միայն թե, ման թե, կարծես թե, ասես թե, կամ թե։

Բացի նշվածներից, ժամանակակից հայերենում կան նաև այլ բնույթի ու կազմության հարադրական շաղկապներ, օրինակ՝ թե չէ, ապա թե ոչ, եթե ոչ, կամ թե չէ, ոչ թե, և ոչ թե, ման դեռ, այն է, ըստ որում, ընդ որում *և այլն։ Իհարկե, այսպիսի բաղադրությունները, հաճախ պահպանելով իրենց բաղադրիչների իմաստային երանգները, լեզվի համակարգում խաղացած իրենց դերով չեն կարող հավասարվել արմատական շաղկապներին, որոնք անցած լինելով պատմական զարգացման երկար ճանապարհ, արտահայտում են «մաքուր» կապակցական֊քերականական հարաբերություններ, իսկ որոշ հարադրական շաղկապների մեջ այդ հարաբերությունները ուղեկցվում են զանազան իմաստներով, որոնք արդյունք են բարդության բաղադրիչների՝ համապատասխան խոսքի մասերի հետ ունեցած կապերի ու աղերսների։*

78. ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԻ ԵՎ ՄԵՆԱԴԻՐ, ԿՐԿՆԱԴԻՐ ՈՒ ՁՈՒԳԱԴԻՐ ՇԱՂԿԱՊՆԵՐ[7]*.—Ձուտ գործածության ձևի տեսակետից պետք է տարբերել*

[7] *Տե՛ս* Գ. Գաբեգիձյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում, էջ 85—88.* Պ. Շարաբխանյան, *Դրաբարի շաղկապները, էջ 56—60.* Ս. Աբրահամյան, *Ձեռքվող խոսքի մասերը..., էջ 400—403։*

շաղկապների երեք տեսակ՝ մենադիր, կրկնադիր և զուգադիր շաղկապներ։

Մենադիր *են կոչվում միայնակ, առանձին գործածվող շաղկապները, օրինակ՝* և *(Սուրենը և Արամը),* ու *(ծաղիկ ու ծառ),* բայց *(Գնաց, բայց չհասավ),* իսկ *(Դու գեղեցիկ ես, իսկ նա տգեղ),* որ *(Գնացի, որ ասեմ),* թե *(Ասաց, թե կգամ),* եթե *(Եթե գա, լավ կլինի) և այլն։*

Կրկնադիր *են կոչվում կրկնվող շաղկապները, օրինակ՝* և՛...և՛ *(և՛ Սուրենը, և՛ Արամը),* թե՛...թե՛ *(թե՛ Սուրենը, թե՛ Արամը),* ո՛չ...ո՛չ *(ո՛չ Սուրենը, ո՛չ Արամը),* ...էլ ...էլ *(Սուրենն էլ, Արամն էլ),* կա՛մ...կա՛մ *(կա՛մ Սուրենը, կա՛մ Արամը)։*

Զուգադիր *են կոչվում սովորաբար զույգերով, միասին կիրառվող շաղկապները։ Այս դեպքում շարահյուսական միավորների կապակցությունը շատ կուռ է լինում, որովհետև կապակցության առաջին եզրում հանդես եկող շաղկապին որպես կանոն համապատասխանում է որոշակի շաղկապ՝ կապակցության երկրորդ եզրում, ինչպես՝* ոչ միայն... այլև *(ոչ միայն Սուրենը, այլև Արամը),* ոչ թե... այլ *(ոչ թե քաղաքում, այլ գյուղում),* թեև... բայց *(Թեև շատ խնդրեցինք, բայց ապարդյուն),* չնայած... բայց *(Չնայած բարեկամներ ենք, բայց շատ ստորաբար վարվեց ինձ հետ),* որովհետև... ուստի *(Որովհետև դու քո մեղքը խոստովանեցիր, ուստի քեզ ներեցին),* քանի որ... ուստի||հետևաբար||հետևապես *(Քանի որ նա քաղաքում չի եղել, ուստի||հետևաբար||հետևապես հանցագործությանը չի մասնակցել) և այլն։*

79. **ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԵՎ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՈՒ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ.**— *Ըստ իրենցով կապակցվող լեզվական միավորների տրամաբանական-շարահյուսական հարաբերությունների բնույթի շաղկապները բաժանվում են երկու խմբի՝* համադասական շաղկապներ և ստորադասական շաղկապներ:

Ժամանակակից հայերենի համադասական շաղկապներն են՝ և, ու, իսկ, բայց, սակայն, կամ, էլ, նաև, այլև, նույնիսկ, անգամ, մինչև իսկ, մանավանդ, այսինքն, ուրեմն, հետևա-

բար, ճետևապես, բայց և, բայց և այնպես, կամ թե, և կամ, և՛...և՛, թե՛...թե՛, ո՛չ...ո՛չ և այլն։

Ստորադասական շաղկապներն են՝ որ, թե, երբ, եթե, որպեսզի, որովհետև, մինչև, մինչ, մինչդեռ, թեև, թեկուզ, թեպետ, թեպետև, մինչև որ, ճենց որ, ճանի որ, թե որ, ճանի դեռ, չնայած որ և այլն։

Ավանդական քերականության սահմանմամբ՝ համադասական շաղկապներով կապակցվող միավորները տրամաբանական ու շարահյուսական տեսակետից համազոր են և անկախ ու ինքնուրույն, իսկ ստորադասական շաղկապներով կապակցվող նախադասությունները տրամաբանական ու շարահյուսական տեսակետից հավասարազոր չեն. դրանցից մեկը կախված է մյուսից, ստորադասված է մյուսին, այսինքն՝ ստորադասական շաղկապներով արտահայտվում են նախադասությունների կախվածության, ստորադասության հարաբերությունները։

Վերցնենք հետևյալ նախադասությունները.

1. *Քամին դադարեց, և սկսվեց տեղատարափ անձրևը։*
2. *Աշոտը դասերն է պատրաստում, իսկ Հասմիկը տունն է զարդարում։*
3. *Ուսուցիչն անմիջաբար հասկացավ, որ իր սիրելի աշակերտն իրեն վատ է զգում։*
4. *Գործը հաջողությամբ կավարտենք, եթե ստանանք համապատասխան օգնություն։*

Առաջին և երկրորդ օրինակների բարդ նախադասությունների մեջ մտնող մասերը կապակցված են և, իսկ համադասական, իսկ երրորդ և չորրորդ օրինակների մասերը՝ որ *և* եթե *ստորադասական շաղկապներով, և, ըստ այդմ, դրանք իրարից լիովին տարբեր տրամաբանական-շարահյուսական հարաբերություններ են արտահայտում։ Առաջին և երկրորդ նախադասությունների բաղադրիչները, հանդես գալով որպես մի ամբողջություն կազմող բարդ նախադասության մասեր, տրամաբանական տեսակետից հավասար դեր ու արժեք ունեն բարդ նախադասության մտքի արտահայտման մեջ, միևնույն ժամանակ շարահյուսորեն համեմատաբար անկախ են ու ինքնուրույն և առանձին գործածություն ևս կարող են ունե-*

նալ։ Համենայն դեպս, հաստատ կարող ենք ասել, որ «Սկըսվեց տեղատարափ անձրևը» և «Հասմիկը տունն է զարդարում» նախադասությունները, միավորվելով կամ հակադրվելով «Քամին դադարեց» և «Աշոտը դասերն է պատրաստում» նախադասություններին, ո՛չ տրամաբանորեն, ո՛չ շարահյուսորեն ստորադասված չեն, կախված չեն դրանցից, այլ համազոր են դրանց։

Այս նույնը չի կարելի ասել «Իր սիրելի աշակերտն իրեն վատ է զգում» և «Ստանանք համապատասխան օգնություն» նախադասությունների մասին, որոնք լրացնում են «Ուսուցիչն անմիջաբար հասկացավ» և «Գործը հաջողությամբ կավարտենք» նախադասություններին՝ առաջինը հանդես գալով որպես հասկանալ բայի սեռի, իսկ երկրորդը՝ որպես ավարտել բայի իմաստի խնդիր։ Հետևաբար երրորդ և չորրորդ նախադասությունների երկրորդ բաղադրիչները առաջին բաղադրիչների նկատմամբ գտնվում են ոչ համազոր, կախյալ, ստորադասական հարաբերության մեջ։

Մենք հատուկ նպատակով բերեցինք բարդ նախադասությունների երկու հիմնական տիպերի այնպիսի օրինակներ, որոնցում համադասությունն ու ստորադասությունը հակադրվում են առավել ցայտունությամբ և իրար հետ շփման եզրեր համարյա չունեն։

Սակայն պետք է նկատի ունենալ, որ բոլոր դեպքերում չէ, որ համադասությունն ու ստորադասությունը այսպես հրստակորեն սահմանազատվում են ու հակադրվում։ Վերևում նշվեց, որ քերականությունների մեջ սահմանվում է, թե համադասական կապակցության բաղադրիչները իրար միտք չեն լրացնում և կարող են անկախ ու ինքնուրույն կիրառություն ևս ունենալ, իսկ ստորադասական կապակցության բաղադրիչներից մեկը լրացնում է մյուսին և անկախ ու ինքնուրույն կիրառվել չի կարող։ Բայց լեզվաբանական գրականության մեջ ճիշտ կերպով նշվում է, որ հենց համադասական կապակցության դեպքում ևս բաղադրիչների բացարձակ անկախության ու ինքնուրույնության մասին խոսք լինել չի կարող, քանի որ միավորված լինելով մի բարդ նախադասության մեջ՝ նրանք իմաստային և արտասանական ու հնչերան-

գային մի ամբողջություն են կազմում, և հետևաբար բարդ նախադասությունը երկու պարզ նախադասությունների տրոսկական գումար չէ միայն։

Այն էլ պետք է ասել, որ համադաս նախադասություններից հատկապես երկրորդը, կառուցվածքային տեսակետից կախված լինելով առաջինից, հաճախ հանդես է գալիս ոչ լիարժեք քերականական ձևավորմամբ, առաջին նախադասության մեջ արտահայտված այս կամ այն անդամի զեղջմամբ և, այսպիսով, անկախ ու ինքնուրույն գործածություն ունենալ չի կարող[8], օրինակ՝ «Ղեքայրս ապրում է գյուղում, իսկ քույրս՝ քաղաքում», «Դու փողի ես ձգտում, իսկ նա՝ փառքի», «Պարտքով փող էր տալիս, բայց միայն բարեկամներին», «Արտասահմանում եղել է, սակայն պատերազմի տարիներին» և այլն։

Մյուս կողմից՝ զուգադիր համադասական շաղկապներով կապակցված բարդ նախադասությունների ոչ միայն երկրորդ, այլև առաջին բաղադրիչը, որպես կանոն, անկախ ու ինքնուրույն գործածություն ունենալ չի կարող։ Այսպիսի դեպքերում մենք գործ ունենք բարդ նախադասության մեջ մտնող մասերի փոխկապակցության և փոխպայմանավորվածության հետ. այսինքն՝ ինչքանով որ երկրորդ բաղադրիչը պայմանավորված է առաջինով, այնքանով էլ առաջին բաղադրիչը պայմանավորված է երկրորդով, օրինակ՝ «Նահանջեցի ոչ թե երկյուղից, այլ խղճի խայթից» (ՎԱ, 53). «Գլխավոր հրամանատարը քնում էր ոչ թե վրանում, այլ խրամատում» (ՑՎ, 31). «Նա պիտի լիներ համեստ ոչ միայն վարմունքով, այլև բոլոր զգացումներով» (ՇՔ, 279). «Աշխատում էին ոչ միայն տղամարդիկ ու կանայք, այլև երեխաներն ու զառամյալ ծերունիները» (ՎՖ, 330)։

Այնուհետև, մի կողմ թողած բարդ նախադասության բաղադրիչների համեմատական անկախության կամ կախվածության հարցը, նշենք, որ, ինչպես ճիշտ կերպով արձանագրված է քերականական գրականության մեջ, կան բարդ

---

[8] Համմտ. Գ. Գաբեգիճյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, էջ 90—91։

նախադասության այնպիսի կառուցվածքներ, որոնք տատանվում են համադասության և ստորադասության միջև, կամ համադասական շաղկապներով երբեմն արտահայտվում են ստորադասությանը հատուկ իմաստներ, օրինակ՝ պատճառահետևանքային, զիջական, իսկ ստորադասական շաղկապներով՝ համադասությանը հատուկ իմաստներ, օրինակ՝ հակադրական, կամ խիստ ասած՝ համադասությունը և ստորադասությունը հատակորեն չեն սահմանազատվում[9]:

Այսպես՝ «Որովհետև դու քո մեղքը խոստովանեցիր, ուստի և քեզ ներեցին» նախադասությունը պետք է համարվի պատճառա-հետևանքային հարաբերություն արտահայտող բարդ ստորադասական նախադասություն, իսկ նույն միտքն արտահայտող «Դու քո մեղքը խոստովանեցիր, ուստի և քեզ ներեցին» նախադասությունը՝ կամ համադասական, կամ ստորադասական նախադասություն, որի կախյալ նախադասությունը, սակայն, վերջինն է: Կամ՝ եթե...ապա զուգադիր շաղկապներով սովորաբար կապակցվում են պայմանա-հետևանքային նախադասություններ, ինչպես՝ «Եթե արքան ձեր մորթիները խոտով չլցնի, ապա ուրախ ապրեցեք Անհուշ բերդում» (ԴԴ, 219). «Եթե տակավին սիրտ ու հոգի ուներ, ապա պետք է տոչորվեր անմարդկային վրիժառության ծարավից» (ՎՖ, 315): Բայց եթե...ապա զուգադիր շաղկապներով արտահայտվում է նաև հակադրություն, որն արդեն նախադասությունների համադասական հարաբերություն է, ինչպես՝ «Եթե մեծ եղբայրը համեստ էր ու խնայող, ապա փոքրը՝ մեծամիտ էր ու շռայլող», «Եթե քույրը ամբողջ օրը տան գործերով է զբաղված, ապա եղբայրը թրև է գալիս փողոցներում»:

Մեր քերականագիտության մեջ ճիշտ կերպով նշված է նաև, որ իրենց իմաստային փոխհարաբերություններով համադասությանը շատ մոտ են կանգնած նաև զիջական երկրորդական նախադասությունները[10], *որոնք զիջական շաղ-*

---

[9] *Տե՛ս Գ. Գաբեգիևյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, էջ 89:*

[10] *Տե՛ս Ն. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961, էջ 16:*

կապների զեղչմամբ, առանց իմաստային որոշակի փոփոխություն կրելու, վերածվում են համադասական նախադասությունների, ինչպես՝ «Թեպետ անձամբ չի տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է նրանց մասին»||«Անձամբ չի տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է նրանց մասին». «Չնայած երկար տարիներ ամուսնացած էին, բայց նման դեպքերում իրարից դեռևս քաշվում էին»||«Երկար տարիներ ամուսնացած էին, բայց նման դեպքերում իրարից դեռևս քաշվում էին» և այլն։

Ահա թե ինչու ռուսաց լեզվի որոշ տեսաբաններ գուցե իրավացիորեն որոշ թերահավատությամբ են մոտենում բարդ նախադասության կապակցական բոլոր տիպերի ստորաբաժանմանը միայն համադասական և ստորադասական տեսակների, գտնելով, որ այսպիսի մոտեցումը տառապում է որոշ արհեստականությամբ, որովհետև նախադասությունների կապակցության այս երկու ծայրաթևերի միջև կան միջանկյալ տիպեր, որոնք ո՛չ համադասություն են, ո՛չ ստորադասություն, կամ նույնքանով ստորադասություն են, որքանով և համադասություն։ Վ. Վ. Վինոգրադովը գրում է. «Նախադասությունների համադասության և ստորադասության փոխարեն ավելի գործչ կլիներ խոսել նախադասությունների կապակցման տարբեր տեսակների և նրանց կախվածության տարբեր աստիճանների մասին՝ արտահայտված շաղկապներով և այլ քերականական միջոցներով՝ եղանակային ձևերով, բառերի դասավորությամբ, դերանվանական բառերով, հնչերանգով և այլն»[11]։

Ռուս քերականների հետևողությամբ նույնանման մտքեր են արտահայտվել նաև հայ քերականությունների մեջ[12]։

80. Շաղկապների տեսակներն ըստ իմաստի. —*Շաղկապների իմաստային կամ իմաստաբանական դասակարգումը հիմնված է շաղկապների արտահայտած կապակցական հարաբերությունների վրա։ Արդեն նշված է, որ շաղկապներն*

---

[11] **В. В. Виноградов**, Русский язык, М.—Л., 1947, էջ 708:

[12] *Տե՛ս* Պ. Շարաբխանյան, *Դրաբարի շաղկապները.* Գ. Գարեգինյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում.* Բ. Վերդյան, *Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970։*

ունեն իրենց բառիմաստները։ Եթե հարցին մոտենանք այն տեսանկյունից, որ յուրաքանչյուր բառ և հետևաբար յուրաքանչյուր շաղկապ ունի միայն իրեն հատուկ և մյուսներից տարբեր իմաստը կամ, համենայն դեպս, իմաստային նրբերանգը, ապա պարզ կդառնա, որ յուրաքանչյուր շաղկապ արտահայտում է միայն իրեն հատուկ որոշ կապակցական հարաբերություն։ Սակայն, համենայն դեպս, խիստ ասած՝ յուրաքանչյուր շաղկապ արտահայտելով միայն իրեն հատուկ մի որոշ կապակցական հարաբերություն, միևնույն ժամանակ իր արտահայտած այդ իմաստով միայնակ չի մնում՝ միավորվելով մոտիկ նշանակություն արտահայտող շաղկապների մեծ կամ փոքր խմբի հետ։ Հենց այս բանն էլ հնարավորություն է տալիս կատարելու շաղկապների իմաստաբանական դասակարգում, այսինքն՝ ելնելով որոշ շաղկապների բառիմաստային ընդհանրություններից՝ նրանք միավորելու առանձին խմբերի մեջ և այսպիսով գաղափար կազմելու շաղկապների կապակցական ընդհանուր հարաբերությունների մասին։

Ըստ այդմ, կարելի է ընդունել շաղկապների իմաստային հետևյալ խմբերը։

Ա) Միավորիչ-հավելական՝ և, ու, էլ, ևս, նաև, այլև, թե՛...թե՛, ո՛չ...ո՛չ, ինչպես...այնպես էլ, ոչ միայն... այլև և այլն, որոնք ցույց են տալիս, որ կապակցվող շարահյուսական միավորները հավասարարժեք են և ավելանում են իրար վրա սոսկ թվարկվելով։ Առանձին դեպքերում արտահայտվում է երկրորդի առավել լինելն առաջինից։

Բ) Ներհակական՝ իսկ, բայց, սակայն, մինչդեռ, այնինչ, ոչ թե... այլ, ոչ թե, և ոչ թե, թե չէ, ապա թե ոչ, այլապես, բայց և այնպես, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ, միայն, միայն թե, *որոնք ցույց են տալիս, որ կապակցվող լեզվական միավորներն իմաստով իրար համաձայն չեն, այլ հակառակ են ու հակադիր։*

Գ) Տրոհական՝ կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ, թե *(հարցական նախադասություններում), որոնք կապակցում են այնպիսի միավորներ, որոնց միջև երկընտրանք կա կամ*

ընտրություն է կատարվում. եթե ընդունվում է մեկը, ապա, որպես կանոն, մերժվում է մյուսը։

Դ) Բացառայտման՝ այսինքն, այն է, *որոնք կապակցում են այնպիսի միավորներ, որոնցից երկրորդը առաջինի բացահայտումն է այլ բառով կամ այլ կապակցությամբ կրկնելու միջոցով։*

Ե) Մեկնաբան՝ որ, թե, *որոնք ցույց են տալիս, որ իրենցով կապակցվող լեզվական միավորը նախորդի լրացում-մեկնությունն ու բացատրությունն է։*

Զ) Նպատակայի՝ որպեսզի, որ, *որոնք նպատակի հարաբերություն արտահայտող ստորադաս նախադասությունները կապակցում են գերադաս նախադասություններին։*

Է) Պայմանի՝ եթե, թե, թե որ, որ, միայն, միայն թե, եթե միայն և այլն, *որոնք պայմանի երկրորդական նախադասությունները կապում են գերադասներին։*

Ը) Պատճառի և հիմունքի՝ որովհետև, որ, ապի որ, չէ՞ որ, մանավանդ որ, նամանավանդ որ, *որոնք պատճառի և հիմունքի երկրորդական նախադասությունները կապում են գլխավորներին։*

Թ) Ժամանակայի՝ մինչ, մինչև, մինչև որ, ճենց, ճենց որ, ֆանի, ֆանի դեռ, թե չէ, որ, երբ, երբ որ, *որոնք ժամանակի իմաստ ունեցող երկրորդական նախադասությունները կապում են գլխավորներին։*

Ժ) Հետևանքի՝ ճետևաբար, ճետևապես, ուրեմն, ուրեմըն և, ուստի, ուստի և, *որոնք արտահայտում են եզրակացություն, որի համար իբրև հիմունք ծառայում է նախորդ նախադասությամբ արտահայտված միտքը։*

ԺԱ) Զիջական՝ թեև, թեկուզ, թեկուզ և, թեպետ, թեպետ և, չնայած, չնայած որ, *որոնք ցույց են տալիս հակառակ հիմունք, այսինքն՝ այնպիսի հիմունք, որը հակառակ կամ անհարիր է հետևությանը։*

ԺԲ) Համեմատության՝ ֆան, ֆան թե, ինչպես որ, ոնց, ոնց որ, ասես, ասես թե, կարծես, կարծես թե, *որոնք արտահայտում են համեմատություն կապակցվող լեզվական միավորների միջև։*

Ժամանակակից հայերենի քերականություններում շաղ-

կապների վերլուծությունը սովորաբար տրվում է ըստ իմաստային այսպիսի խմբավորումների, որի հետևանքով էլ բազմիմաստ, տարբեր հարաբերություններ արտահայտող շաղկապները քննվում են մի քանի խմբերի մեջ։ Այսպես, թե շաղկապը կարող է արտահայտել հավելման, տրոհական, մեկնական, պայմանի իմաստներ, ինչպես՝ «Հավաքվել էին տղա թե աղջիկ», «Սուրե՞նը, թե՞ Արամը», «Ասաց, թե կգամ», «Թե գաս, կանեմ»։ Որ շաղկապը կարող է արտահայտել մեկնական, նպատակային, պայմանի, պատճառի և այլ իմաստներ, ինչպես՝ «Զգացի, որ հիվանդ է», «Գնաց, որ տեսնի նրան», «Որ տեսա, կասեմ», «Որ շատ ես հետաքրքրվում, կպատմեմ» և այլն։ Ըստ այդմ, թե շաղկապը քննվում է և՛ հավելման, և՛ տրոհական, և՛ մեկնական, և՛ պայմանի շաղկապների մեջ, իսկ որ շաղկապը՝ և՛ մեկնական, և՛ նպատակային, և՛ պայմանի, և՛ պատճառի շաղկապների մեջ[13]*։ Հասկանալի է, որ հարցին հատկապես այս ձևով պետք է մոտենալ շարահյուսական ուսումնասիրություններում, քանի որ վերջինիս խնդիրներից մեկն էլ նախադասությունների կառուցվածքային-իմաստաբանական տիպերի հետազոտությունն է, հետևաբար և, ասենք, նպատակային, պայմանի, պատճառի, մեկնական և այլ նախադասությունները քննելիս պետք է վերլուծվեն նաև դրանց կապակցության միջոցները։*

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

81. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ.—Այս բաժնում այբուբենական կարգով ներկայացնում ենք ժամանակակից հայերենի գործածական ու տարածված շաղկապները՝ բացատրելով նրանց հիմնական նշանակություններն ու կիրառությունները։ Համանիշ շաղկապները, օրինակ, բայց—սակայն, և—ու, թեև—թեպետ և այլն սովորաբար ներկայացվում են միասին՝ նույն հատվածում։

Այլ.—*Գործածվում է այնպիսի միավորների երկրորդ եզ-*

---

[13] *Տե՛ս* Գ. Գաբեգիևյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում.* Ս. Աբրահամյան, *Ձ թևքվող խոսքի մասերը...։*

րում, որոնցից առաջինը ժխտական է։ Այս ձևով ժխտվելով առաջին անդամը՝ ընդունվում է երկրորդը։ Օրինակներ. «Տիրացուն բացատրեց, որ դրանք հայեր չեն, այլ մալականներ» (Մ, 6, 217). «Այս անգամ նա դուրս չվազեց, այլ նստեց խոտի վրա» (ԱԲ, 194). «Մարդկային պատիվը սրի ծայրում չի գտնվում, այլ հոգու խորքում» (ՇՔ, 195). «Սա մասնավոր դեպք չէ, այլ հասարակական երևույթ» (ՇՔ, 218)։

Հանդես է գալիս նաև ոչ թե...այլ զուգադրական շաղկապի կազմում։

Այլապես.— *Նշանակում է «հակառակ դեպքում» և, ըստ այդմ, արտահայտում է պայմանական-հակադրական հարաբերություն, օրինակ՝ «Պատվիրակությունն ամեն օր պետք է ստուգի, թե միսն ինչպես է բաշխվում ընտանիքներին և զինվորներին, այլապես կարող էին լինել անարդարություն, խլրտումներ» (Ֆվ, 320—321). «Ամեն օր մորթվող ոչխարների թիվը հասնում էր 60—65-ի։ Այլապես կիսաքաղց կմնային զինվորներն ու աշխատավոր պահեստայինները» (Ֆվ, 387)։*

Այն էլ (և այն).— *Արտահայտում է սահմանափակման իմաստ, ինչպես՝ «Ներսունին զուտ դրամ թողել է միայն տոկոսաբեր թղթերի մեջ, այն էլ ընդամենը չորս-հինգ հարյուր հազար ռուբլի» (ՇՔ, 21). «Հայերից միայն վեցն էին վիրավորվել, այն էլ ոչ ծանր» (Ֆվ, 351). «Ի դեպ, Ջուլիեթը նրան երեք վրանի հրապարակում երբեմն էր տեսնում, այն էլ ճաշելիս և քնելուց առաջ» (Ֆվ, 364)։*

Այնպես որ.—*Սովորաբար գործածվում է անկախ նախադասությունների սկզբում՝ մեծ մասամբ ցույց տալով նախորդ նախադասությունից կամ նախադասություններից բխող հետևություն, եզրակացություն, օրինակ՝ «Ժողովուրդը տհաճությամբ էր հանդուրժում նրա ներկայությունը անչափահասների շրջապատում։ Այնպես որ Սաթոյի բախտը լիովին կախված էր երեխաների քմահաճույքից» (Ֆվ, 368). «Այնպես որ օգոստոսի չորսի ընդհարումը, անկասկած, նշանակալից իրադարձություն էր» (Ֆվ, 356). «Այնպես որ, չնայած իր մեկուսացմանը կամ մեկուսացման հետևանքով, նրա կյանքը չափազանց լեցուն էր» (Ակ, 214)։*

Այսինքն, այն է.— *Հանդես են գալիս և՛ բառերի, և՛ նախադասությունների կապակցման դերով՝ բացահայտելով, պարզաբանելով կապակցվող անդամների բովանդակությունը դրանք երկրորդ անգամ այլ ձևով արտահայտելու, դրանց իմաստը մասնավորելու և այլ միջոցներով, օրինակ՝ «Պետք է ապրել օրվա պահանջներով, այսինքն՝ մոռացության տրվել» (Ակ, 4)։ «Սովորական ժամին, այսինքն՝ առավոտյան ժամը ութին զարթնեց» (Ակ, 4). «Գլխավոր մթերքները, այսինքն՝ հացը, միսը, շաքարը առատ են». «Կգա բոլորի անողոք դատավորը, այն է՝ մահը». «Զգուշացիր քո ամենամեծ թշնամուց, այն է՝ քո կրքերից»։*

Այսպիսով.— *Գործածվելով անկախ, ինքնուրույն նախադասությունների սկզբում և անջատվելով արտասանական դադարով՝ ցույց է տալիս նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ արտահայտված մտքերի եզրակացությունը, ամփոփումը, հետևությունը, ինչպես՝ «Այսպիսով, հիմնականում ստեղծվեց ռազմական կուռ կազմակերպություն» (Ֆվ, 315). «Այսպիսով, պարզ է դառնում, որ բնորոշել հոլովների իմաստները՝ նշանակում է բնորոշել հոլովները կազմող ձևույթների իմաստները». «Այսպիսով, վա հոլովումը մաքուր իմաստային, իսկ ու հոլովումը մաքուր ձևային հոլովում է»։*

Այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ.— *Նշանակում են «այս ամենը նկատի ունենալով հանդերձ»։ Ցույց են տալիս այնպիսի հետևություն, եզրակացություն, բացատրություն, որ եթե ոչ ամբողջապես, համենայն դեպս, գոնե մասնակիորեն հակառակ է նախորդ նախադասությունից տրամաբանորեն բխող հետևությանը, եզրակացությանը, բացատրությանը, ինչպես՝ «Քո ասածները հասկանում եմ, մտնում եմ քո դրության մեջ, այսուամենայնիվ քո խնդրանքը կատարել չեմ կարող». «Գիտեմ՝ այս գործը շատ դժվար է, ինձ շատ փորձանքներ են սպասում, այնուամենայնիվ իմ վճիռն անդառնալի է». «Նրանք մերկ էին, սոված, նրանց տանջում էին, նրանք տառապում էին բանտերում, այսուհանդերձ նրանք չէին հրաժարվում իրենց գաղափարներից»։*

Բայց, բայց և սակայն, սակայն և.— *Արտահայտում են հակասման կամ սահմանափակման հարաբերություն։ Մ. Աբեղյանը գրում է. «Սահմանափակող կապակցության մեջ երկրորդ խոսքն առաջինին հակառակ մակաբերական է, կամ առաջին խոսքին մի հակադրություն ավելացնելով՝ չափավորում կամ սահմանափակում է նրա բովանդակությունը և նրանից սպասած հետևության առաջն առնում է։ Օրինակ՝ Դու քո հանցանքդ խոստովանեցիր, բայց ես չեմ ներում քեզ»*[14]։

Բայց և սակայն շաղկապները համանիշներ են և տարբերվում են սոսկ ոճականորեն, այն է՝ առաջինը հավասարապես գործածվում է գրական լեզվի բոլոր ոճերում, իսկ երկրորդն ավելի հատուկ է գրավոր-գրական լեզվին։ Մյուս կողմից՝ դրանց մեջ նկատվում է նաև զուտ կիրառության ձևի տարբերություն, որն արտահայտվում է նրանում, որ սակայն շաղկապը դրվում է ոչ միայն կապակցվող նախադասության սկզբում, այլև կարող է միջադաս կիրառություն ևս ունենալ, անջատվել նախադասության մյուս անդամներից դադարով՝ այսպիսով շփման եզրեր հանդես բերելով եղանակավորող բառերի հետ։ Ստորև բերվում են այս շաղկապների կիրառության օրինակներ։

«Դիլան դային կին առավ, բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան» (ԱԲ, 235). «Նրա մատնեոը դիպան դեղին բմբուլներին, բայց վիրավոր միրհավը հանկարծ թևին տվեց, թռավ վեր» (ԱԲ, 234). «Նա այդ վայրերը չի տեսել, բայց ձգտում է ներքին բնազդով» (ՎԱ, 21). «Քո դրությանը չեմ նախանձում, բայց ինքս ավելի վատ դրության մեջ եմ այժմ» (ՇՔ, 199). «Կարելի է սիրել ամուսնացած կնոջ, բայց քո պատմածի մեջ ես սեր չեմ տեսնում» (ՇՔ, 193)։

«Զիատերը փորձում էր գնալ իր ձիու հետևից, սակայն *բղավում էին նրա վրա, և նա մնում էր գլուխը կախ» (ԱԲ, 209). «Ձմեռը գեղեցկություններ է բերում, սակայն մեզ՝ տավարածներիս, նա բերկրանք չէր բերում» (ՎԱ, 31). «Պաշտ-*

[14] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 667։

պանեց, սակայն ապարդյուն» (Սհ, 11). «Այս մտածմունքը, սակայն, փոփոխություն չառաջացրեց երիտասարդի որոշման մեջ» (Մ, 6, 326). «Վշտերն ու տանջանքները, սակայն, անկարող էին ընկճել նրա աննկուն ու հպարտ հոգին»։

Եթե.— *Արտահայտում է՝*

1. Պայմանի հարաբերություն՝ պայմանական երկրորդական նախադասությունները կապելով գերադասներին և ցույց տալով այն ենթադրական հիմունքը, պայմանը, որից բխում, ծագում է գլխավոր նախադասությամբ դրսևորված հետևությունը, եզրակացությունը։ Եթե երկրորդական նախադասությունն առաջադաս է, գլխավորը կարող է սկսվել ապա, ուրեմն շաղկապներով։ Օրինակներ. «Եթե արքան ատյան կազմի, վերջը պիտի բացվի այս հանգամանքը» (ԴԴ, 89). «Եթե Թուլահոգի գտնվենք, արժանի ենք պատուհասին» (ԴԴ, 142). «Եթե հիվանդը կենդանի ձուկ կուլ տա, կկտրի դանակի պես, կամ՝ դես, կամ՝ դեն» (ՎԱ, 24). «Եթե ես մարդը մեղավոր է, ինձ ուժ տուր, որ մի զարկով Թոցնեմ սրա գլուխը, իսկ եթե արդար է, Թող փայտ դառնա իմ սուրը» (ՀՓ, 1, 488). «Սրանք միջամտելու էին, եթե ճակատամարտն աննպաստ ընթացք ստանար» (ՖՎ, 342)։

Պետք է նշել, որ պայմանի և հետևանքի այսպիսի բարդ նախադասություններում կախյալ նախադասության բայը սովորաբար դրված է լինում ըղձական, իսկ գերադաս նախադասության բայը՝ հաստատողական (ենթադրական) եղանակով (Եթե գաս, կտեսնես. Եթե հանդիպեմ, կասեմ և այլն)։

2. Որպես ենթադրություն, պայման դիտված, բայց իրական կարծվող կամ համարվող հիմունք, որի վրա է հիմնված գլխավոր նախադասության մեջ արված հետևությունը, եզրակացությունը։ Այս դեպքում և՛ կախյալ, և՛ գերադաս նախադասություններում սովորաբար գործածված են լինում սահմանական և հարկադրական ձևերով արտահայտված ստորոգյալներ։ Օրինակներ. «Եթե ես գանգատվում եմ, ապա միայն այն բանից, որ շատ քիչ եմ զբաղված» (Ակ, 180). «Եթե տակավին սիրտ ու հոգի ունի, ապա պետք է տոչորվի անմարդկային վրիժառության ծարավից» (ՖՎ, 315). «Եթե համալսարանի ուսանող ես, պետք է ենթարկվես մեր հաս-

տատութ յան ներքին կանոններին». «Եթե խոստացել ես, պարտավոր ես կատարել խոստումդ»։

3. Հակադրություն կամ հանդիպադրություն կապակցվող համազոր նախադասությունների միջև։ Երկրորդ նախադասությունն սկսվում է ապա շաղկապով, ինչպես՝ «Եթե մեղուն ծաղկից մեղր է պատրաստում, ապա օձը՝ թույն». «Եթե մեծ եղբայրն աշխատասեր էր ու ժուժկալ, ապա փոքր եղբայրը ծույլ էր ու շռայլ». «Եթե քույրն ամբողջ օրն աշխատում էր ու տանջվում, ապա եղբայրը թրև էր գալիս փողոցներում»։

4. Գործածվում է նաև անկախ նախադասությունների սկզբում, ըղձական եղանակի բայաձևերի հետ՝ ավելի ցայտուն դարձնելով այս եղանակի ցանկության նշանակությունը, ինչպես՝ «Եթե գիտենայի՜». «Եթե վերջանա՞ր այս պատերազմը». «Եթե հասնե՞ր իր նպատակներին»։

Եվ, ու.—*Համանիշ շաղկապներ են։ Նախադասության համազոր միավորները (անդամները) կամ համազոր նախադասությունները կապակցում, միավորում են իրար, ինչպես՝ «Պարիսպների գլխին բույն են դրել ցինը և անգղը» (ԱԲ, 189). «Ծովափի կինը կարճ խուզած մազեր ուներ և սպիտակ պարանոց» (ԱԲ, 194). «Շիկնեցին մասիսների գագաթները, և երկնքի կանաչ-կապույտը ժպտաց նրանց հետևի խորքում» (ԴԴ, 78). «Մարդկային եսամոլությունն անսահման է, և, խրատելով քեզ, ես չեմ կարողանում մոռանալ իմ ցավերը» (ՇՔ, 199). «Տանըցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիքորի թշերը պաչեցին ու ճամփու դրին» (ՀԹ, 2, 312). «Նա էն օրը հաց չէր դրել բերանը, ծնծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց ու քունը չէր տանում» (ՀԹ, 2, 325). «Մայրը վերադարձավ, գրկեց տղային ու տուն մրտավ» (ԱԲ, 202). «Գիշերվա մթության մեջ հեռվում ևս կերպարանքներ էին երևում ու կարծես շարժվում էին։ Ու անքուն էի ես» (ՀԹ, 2, 361)։*

Երբ կապակցվող լեզվական միավորները բազմակի են, այդ դեպքում և շաղկապը սովորաբար գործածվում է միայն վերջինի հետ, իսկ մյուսները միավորվում են սոսկ հնչերանգով, շարահարությամբ, օրինակ՝ «Տանը չորս հոգի էինք՝ ես, Օհան ապերը, նրա պառավ կինը և տասը տարեկան Աշոտը»

(ԱԲ, 119). «Մի ամիս առաջ դուրս եկան Տիզբոնի երկաթյա քարադռնից, անցան Խուժիստանի անապատները, անցան արևակեզ Ասորեստանը, անցան հայկական Միջագետքը և մի օր առաջ ոտք դրեցին Մուշի դաշտի վրա» (ՐՍ, 5). «Իջնում է վար, բաց է անում երկաթե դռները ժանգոտ բանալիով, համրում է տոպրակները և ավելացնում նոր ոսկիներ» (ՇՔ, 8)։

Եվ (ու) շաղկապով կապակցվում են զույգ-զույգ թվարկվող բառերը, որոնք իրար են միավորվում մոտիկ կամ հակառակ նշանակությամբ, ինչպես՝ «Ազնվությունը և ստորությունը, բարությունը և չարությունը, վեհը և ծիծաղելին, ազատամտությունը և ստրկամտությունը միշտ մարդկային հասարակության ուղեկիցներն են եղել». «Եվ էն մեծ ժառանգությունն արդեն, որ մեր ազգային կյանքում մեզ՝ հետնորդներիս, թողել են մեր պանծալի նախորդները—Սահակն ու Մեսրոպը, Փարպեցին ու Նարեկացին, Նահապետ Քուչակն ու Սայաթ-Նովան, Աբովյանն ու Նազարյանը, Արծրունին ու Րաֆֆին, Աղայանն ու Պռոշյանը, Սունդուկյանն ու Ալիշանը ու շատ իրենց նմանները—ասում եմ՝ նրանց մեզ թողած ժառանգությունն արդեն նյութական հարստություն չի, այլ բարոյական, հոգեղեն, մտավոր, խոսքի ու բանի կարողություն» (ԹՔ, 231—232)։

Հաճախ և շաղկապը կրկնվում է թվարկվող բոլոր բառերի հետ։ Այդ դեպքում կապակցվող միավորներն արտասանվում են հավասար ուժով ու շեշտով, և, այսպիսով, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում նրանցից յուրաքանչյուրի վրա։ Օրինակ՝ «Այո՛, սրանք, այս երիտասարդները և՛ ուժ են, և՛ հույս, և՛ կյանք, և՛ ուրախություն» (ԴԴ, 285). «Հազկերտն սպասում է և՛ հոներին, և՛ քուշաններին» (ԴԴ, 285). «Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դռնակի երգը» (ԱԲ, 229). «Ե՛վ գյուղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ» (ԱԲ, 190)։

Եվ, ինչպես նաև ու շաղկապով կարող են սկսվել անկախ, ինքնուրույն նախադասություններ։ Այս ձևով տրամաբանական կապեր ու առնչություններ են արտահայտվում և շաղկապով սկսվող նախադասության և նախորդ նախադասու-

թյան կամ նախադասությունների արտահայտած մտքերի մեջ, ինչպես՝ «Եվ քարավանը Աբու-Լալայի աղբյուրի նման մեղմ կարկաչելով, Հանգիստ, միաչափ քայլում էր առաջ հեզ լուսնկայի շողերի միջով» (ԱԻ, 2, 56). «Եվ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ, հյուսել աստղերով, բյուր հրաշքներով։ Եվ ո՞վ է պատմում բյուր-բյուր ձևերով անդուլ ու անխոնջ՝ այսպես թովչանքով» (ԱԻ, 2, 57). «Եվ ահա Դիքորը հաց է տանում խանութ» (ՀՔ, 2, 321). «Եվ թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ գեղեցկությունը» (ՐՍ, 419)։

«Ու ղրկեց շահը իր թովիչ երգչին. Գնա տե՛ս, ասավ, Թմկա տիրուհուն» (ՀՔ, 2, 138). «Ու դարձավ նա լուռ, դալուկ, մտախոհ, Ու քունը փախավ սիրուն աչքերից» (ՀՔ, 2, 139). «Ու հանգչում է Թմուկ բերդը, Պապանձվում է ու մարում» (ՀՔ, 2, 141). «Ու չի դադարում երգի հետ վարար Կախեթի գինին խելագար հոսել» (ՀՔ, 2, 140)։

Շատ կապակցությունների մեջ և շաղկապն արտահայտում է հավելման իմաստ՝ հավասարվելով նաև շաղկապին, օրինակ՝ «Ոչնչացրեց մեր թագավորությունը, ոչնչացնում է և նախարարությունը» (ԴԴ, 147). «Ոհմակը վտանգավոր է և մարդու համար» (ՀՔ, 2, 396). «Խոտի վրա մեկնվեց և կինը, թաղիքի տակ ծածկելով տղային» (ԱԲ, 197). «Ծխում էին և դաշտավայրի վրա խիտ առ խիտ սփռված գյուղերը... Ծխում էին և մեծաշեն քաղաքները» (ՐՍ, 419)։

Շարադրանքից կարելի է եզրակացնել, որ և, ու շաղկապները բացարձակ նույնանիշներ չեն և, համենայն դեպս, կիրառական ինչ-ինչ առանձնահատկություններ ունեն։ Դա արտահայտվում է ոչ միայն նրանում, որ ու շաղկապը սովորաբար կրկնադիր գործածություն ունենալ չի կարող և հավելման (նաև շաղկապի) իմաստով չի կիրառվում, այլև նրանում, որ գործածվելով միևնույն նախադասությունների մեջ՝ և շաղկապով, որպես կանոն, կապակցվում են ավելի հեռու կամ իմաստային տեսակետից ավելի թույլ միավորված անդամները, իսկ ու շաղկապով՝ ավելի մոտ կամ իմաստային տեսակետից ավելի սերտ միություն կազմող անդամները։ Օրինակ՝ «Էս ամենի գոռոցն ու զնգոցը, աղմուկն ու աղա-

ղակը իրար խառնված ղժվժում էր նրա գլխում, և նա հոգնել էր ու հորը թինկը տված քնել» (ՀԹ, 2, 316). «Հետո հեռանում էին, շշնջում միմյանց ականջին և գաղտուկ կատաղի հայացքներ ձգում սրա ու նրա վրա» (ՇՔ, 11). «Փչում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածությունը օրորվում էր սքանչելի ալեկոծությամբ» (ՐՍ, 417)։

Եվ որովհետև ու շաղկապով սովորաբար կապակցվում են ավելի սերտ միասնություն կազմող միավորները, այդ իսկ պատճառով էլ բաղհյուսական հարադրությունները որպես կանոն կապակցվում են ու շաղկապով[15], ինչպես՝ լուռ ու մունջ, ահ ու դող, տուն ու տեղ, զոր ու գիշեր, դարդ ու ցավ, ահ ու մահ, լաց ու կոծ, մայր ու աղջիկ, հայր ու որդի, մարդ ու կին և այլն։

Եվս.—*Համանիշ է էլ, նաև շաղկապներին։ Արտահայտում է հավելման իմաստ։ Գործածվում է կապակցվող միավորներից հետո՝ հատուկ շեշտվածությամբ մեջ բերելով դրանք և այսպիսով արտահայտելով նաև զորացման ու աճման գաղափար, օրինակ՝ «Այդ տան պատերը ևս սևագույն քարից էին» (Սե, 7). «Նա հայրենիքի դավաճան է. դուք ևս» (Սե, 11). «Բայց նա ևս զսպվեց ու սկսեց մանրաքայլ ծեծել գետինը» (ԴԴ, 8). «Երևի նույն միջոցին եվրոպական այդ աշխարհը ևս զբաղված էր սպանդով» (Ֆվ, 296). «Բոլորի նման Գաբրիելը ևս միջօրեից հետո թափառում էր իր տան սրահներում» (Ֆվ, 297)։*

Երբ, երբ որ.— *Երկրորդական նախադասությունները կապակցելով գլխավորին՝ ցույց են տալիս դրա գործողության կատարման ժամանակը ըստ երկրորդական նախադասության գործողության հետ ունեցած հարաբերության, ըստ որում, այսպիսով կարող են արտահայտվել գործողությունների ժամանակային տարբեր փոխհարաբերություններ, այն է՝ գործողությունների միաժամանակություն, գլխավոր նախադասության գործողության նախորդում կամ հետնորդում կամ դրա գործողության կատարում՝ երկրորդական նախադասու-*

[15] *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը..., էջ 412։*

թյան գործողության կատարման մի հատվածում։ Գործողությունների ժամանակային այս տարբեր փոխհարաբերությունները, որպես կանոն, պայմանավորված են լինում երկրորդական և գլխավոր նախադասություններում գործածված բայական եղանակաժամանակային ձևերով։ Օրինակներ. «**Երբ** *հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնաձորում սովիերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խավար է լինում» (ԱԲ, 3).* «**Երբ** *աղան գնում էր փողոցով կամ անցնում էր խանութից խանութ և կամ կլուբ էր մտնում, ամենքն աշխատում էին որսալ նրա հայացքը» (ՇՔ, 9).* «**Երբ** *բաժանվում էր նրանից, սիրտը լըցվում էր ինքնագոհության շլացուցիչ զգացումով» (ՇՔ, 131).* «**Երբ** *ժողովուրդն ապաստանեց Դամլաջըքի վրա, երբ արդեն դադարեցին դատարկ արշավանքները, երբ երիտասարդներից պահանջվում էր կարգապահություն, Ստեփանի հեղինակությունն սկսեց բարձրանալ» (ՃՎ, 367).* «**Երբ** *nr նրանք են գնում, իրենց արդար վարձին են գնում, իսկ* **երբ** *nr դու ես գնում, գնում ես ուրիշի բախտը հափշտակես, նրա համար էլ ոսկու տեղ օձ ես գտնում» (ՀՓ, 1, 448)։*

Էլ.—*Արտահայտում է հավելման իմաստ։ Սովորաբար գործածվում է անկախ, ինքնուրույն նախադասությունների կազմում՝ դրվելով կապակցվող բառերից հետո և հատուկ շեշտվածությամբ մեջ բերելով դրանք։ Ունի խոսակցական լեզվի երանգ և դրանով ոճականորեն տարբերվում է համանիշ ևս շաղկապից, որը հատուկ է գրավոր-գրական լեզվին։*

Ստորև բերվում են էլ շաղկապի կիրառության օրինակներ. «*Մահվան հետ գերեզման էլ է բերում թշնամին» (Սխ, 13).* «*Շատ ունկնդիրների հետ նրան էլ գնդապետի աստիճան շնորհվեց» (Սխ, 29).* «*Նա մի անգամ էլ տեսավ, որ ձին նիհար չի» (ԱԲ, 200).* «*Դիլան դային էլ կին առավ, բայց հիշողության մեջ հավիտյան անջինջ մնաց Սոնան» (ԱԲ, 235).* «*Սոնային լաջվարդ շապիկով թաղեցին. արդեն վաղուց փտել է լաջվարդն էլ, ոսկե մամուռի նման մարմինն էլ» (ԱԲ, 235)։*

Առանձին կապակցությունների մեջ նշանակում է **ևույնիսկ, մինչև իսկ, մինչև անգամ, անգամ՝** *մեջբերելով կապակցվող միավորները որպես «չսպասված կամ ծայրագույն*

աստիճան»[16], *օրինակ՝ «Իշխում էր ահեղ, Ու նրա օրով Հավքն էլ չէր անցնում Սասմա սարերով» (ՀԹ, 2, 97). «Նայեց Օհանը, որ Դավթի հագին Ոտնամանն էլ չի մնացել կարգին, Մահակն էլ մաշվել, մինչ բուռն է հասել, Մի օրվա միջում էնքան է վազել» (ՀԹ, 1, 102)։*

Համազոր միավորների հետ էլ շաղկապը կրկնվում է՝ այսպիսով ավելի ցայտուն դրսևորելով իր հավելման և զորացման ու աճման իմաստը, ինչպես՝ «Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փետն էլ, ջուրն էլ» (ՀԹ, 2, 315). «Պապիս ժպիտը կորչում էր, մոռանում էր մեզ էլ, տունն էլ, եղն ու կովն էլ» (ԱԲ, 113). «Զրկվել էինք հողից էլ, ցանքից էլ» (ՎԱ, 31). «Իրենք միայն տառապել են քարերի արանքում, անիծել լեռն էլ, քարն էլ, իրենց բախտն էլ» (ՍԽՔ, 50)։

Թվարկվող միավորների բազմակիությունը, շատությունը հատուկ շեշտված ձևով է արտահայտվում այն ժամանակ, երբ էլ շաղկապը կիրառվում է կապակցվող միավորներից առաջ։ էլ շաղկապի այսպիսի կիրառությունը հատուկ է ժողովրդական-խոսակցական լեզվին, ինչպես՝ «Էս անգամը դիպան իրար. էլ անպատիվ, անկարգ խոսքեր, էլ հին ու նոր, էլ հեր ու մեր, էլ գող փիսո, էլ քաշալ շուն... Բանը հասավ դիվանբաշուն» (ՀԹ, 1, 196—197). «էլ թանկագին քիրմանի շալ, էլ մարգարիտ, զմրուխտ ու լալ, Հնդու խուրմա, փստա, բադամ, նվ... որ մեկի անունը տամ» (ՀԹ, 1, 198)։

Թե.—*Արտահայտում է մեկնական, բացատրական իմաստ։ Արդի հայերենում մեկնական երկրորդական նախադասությունները կապակցվում են որ և թե շաղկապներով։ Որ շաղկապից ունեցած իմաստային հիմնական տարբերությունն այն է, որ թե շաղկապը «ցույց է տալիս ուրիշի խոսք ու մտածմունք և կարծիք ու ենթադրություն»*[17]։ *Ըստ այդմ, թե շաղկապով կապակցվում են.*

1. Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերը, որոնք դրվում են ասացական, պատմողական, հաղորդման և այլ բայերի

---

[16] *Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 656։*

[17] *Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 624։*

հետ, ինչպես՝ «Ապա նա պատմեց, թե հյուրի ծոցում կար մի փայլուն իր» (ԱԲ, 190). «Հնագետը բուրգի ծայրից կանչեց, թե ինքը գտել է Բակուր իշխանի դամբանը» (ԱԲ, 191). «Ակնարկեց, թե դեպքի նկարագրությունն արդեն պատրաստ է լրագրի համար» (ՇՔ, 217). «Մերթ պատմում էին, թե սահմանն անցել է և գնացել Իրանի հողը» (ԱԲ, 134). «Հայտարարեց մարդուն, թե չի կարող ապրել նրա հետ միևնույն հայկի տակ» (Ա4, 3). «Բժիշկ Ալթունին պնդում էր, թե վատթարացել է ժողովրդի առողջական վիճակը» (Ֆվ, 464)։

Ժողովրդական-խոսակցական լեզվում ասացական բայը կարող է նաև չդրվել, բայց զորությամբ հասկացվել։ Այսպիսի բազմաթիվ օրինակների ենք հանդիպում Հ. Թումանյանի ստեղծագործություններում, ինչպես՝ «—Ասի՝ հե՛ Սիմոն։ —Թե՝ ի՞նչ ա։ —Ասի՝ էստեղ մի բան կա։ —Թե՝ ի՞նչ պիտի ըլիլ» (ՀԹ, 1, 343). «Ասի՝ հե՛ Սիմոն։ —Թե՝ ի՞նչ ա որ։ —Ասի՝ հիմի տեսնում ե՞ս։ —Թե՝ էս ի՞նչ ա որ» (ՀԹ, 1, 343). «—Ասի՝ Ավագ, էս օքմին չի, արջ է։ —Թե՝ բո՛հ, չէ չէ պոզեր» (ՀԹ, 1, 332). «Էս Ավագը թե՝ ա՛յ տղա, էդ ի՞նչ խաբար է, էդ ի՞նչ ես եղել։ Ասի՝ էսենց բան եկավ գլուխս։ —Թե՝ քա հրացանդ ո՞ւր է» (ՀԹ, 1, 335)։

2. Անուղղակի հարցական նախադասությունները, որոնց կազմում սովորաբար հանդես են գալիս հարցական-հարաբերական դերանուններ, ինչպես՝ «Նա բարկացած կանչում էր հարսի վրա, թե ինչու ձիու չվանը լուսով չի գտել» (ԱԲ, 202) «Շուրջն էին հավաքվում, խնդրում էին, թե էլ ուրիշ ինչ կուզի սիրտը» (ՀԹ, 2, 348). «Շարմաղ բիբին չլսեց, թե զանգերն ինչպես լռեցին» (ԱԲ, 189). «Չնկատեց, թե ինչպես գլխարկը սահեց և ընկավ քարի վրա» (ԱԲ, 191)։

3. Այն նախադասությունները, որոնք երկբայությամբ, ենթադրությամբ են ասվում, որոնց բովանդակությունը խոսողի կողմից իրական, հաստատ չի համարվում, այլ կասկածելի, երկբայելի է մնում։ Օրինակներ. «Նրան այնպես էր թվում, թե աշխարհը հոտավետ բուրաստան է, ալպիական մանուշակ» (ԱԲ, 197). «Նրան թվաց, թե օձը խայթեց ակնոցավոր մարդուն» (ԱԲ, 191). «Միամտաբար կարծում էր,

թե այդ մարդու մահով կազատվի, վերջապես, ձանձրալի հսկողությունից» (ՇՔ, 23)։

4. Մի շարք բայանունների՝ խոսք, միտք, լուր, խորհուրդ, հարց, խնդիր, կարծիք, պատասխան, կասկած, ակնկալություն, ենթադրություն, հույս և այլն, լրացնում երկրորդական նախադասությունները, որոնք մեջ են բերվում որպես ուրիշի խոսք ու մտածմունք, անուղղակի հարցում կամ երբ խոսքը կասկածելի, երկբայելի է մնում[18]*։ Օրինակներ. «Լուրեր էին պտտվում, թե նա Արազն անցել, Թուրքիա է գնացել». «Խորհուրդ են անում, թե ինչպես այս փորձանքից ազատվեն». «Խոսք տվեց, թե երեկոն մեզ մոտ կանցկացնի». «Այն կարծիքին էի, թե բանը հաշտությամբ կվերջանա» «Հույս ուներ, թե չեք մերժի իր խնդրանքը». «Միշտ միտք էր անում, թե ինչպես տնօրինի այդ ահագին հարստությունը» «Այն կարծիքը գոյություն ունի, թե լարվածության թուլացումը արտացոլում է երկու կողմերի փոխհամաձայնությունը»։*

5. Հատկապես ժողովրդա-խոսակցական լեզվում թե շաղկապն արտահայտում է պայմանի իմաստ՝ պայմանական երկրորդական նախադասությունները կապակցելով գլխավորներին։ Այս իմաստով թե շաղկապը համանիշ է եթե-ին և նրանով էլ կարող է փոխարինվել։ Պայմանական իմաստով թե շաղկապը հաճախ հանդես է գալիս nr թարմատարի հետ՝ թե nr։ Օրինակներ. «Թե դրուստը կուզես, դեռ դու պետք է տաս» (ՀԹ, 2, 314). «Թե մածուն ունես, տո՛ւր, համ էլ թեյ գցիր» (ԱԲ, 193). «Խմիր, թե սիրտդ ուզում է» (Սե, 57). «Թե ուզում եք գնաք ոսկորներս բերեք, հրացանը չտանեմ» (ՎԱ, 50). «Թե բերանդ այդ կտակի մասին ուրիշների մոտ բաց անես, պղերս ցույց կտամ» (ՇՔ, 232)։

6. Արտահայտում է տրոհական իմաստ հարցական նախադասություններում, ինչպես՝ «Յրտի՞ց, թե ողջ ճանապարհին լուռ մնալուց խզված ձայնով հարցրեց անծանոթը» (Սե, 4). «Ջյան վրա աղվեսի՞, թե շան թաթերի հետք նկատեց» (Սե, 36). «Որտե՞ղ էիր սայթաքում, մա՛յր իմ, քո քաղցր

---

[18] *Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 629։*

բեռի տակ, բոխուտի մածուցիկ ցեխի՞ն, ջուխտակ աղբրի զա-ռիվայրո՞ւմ, թե՞ քյամանդի հեղեղուտներն անցնելիս» (ՎԱ, 5). «Հորիզոնի խորքում թափանցիկ ա՞մպ ասես, թե փոշո: շարասյուն՝ սուզվում էր լեռների պարը» (ԴԴ, 215). «Միտս չի՝ սպանե՞ց, թե վիրավորեց» (ՎԱ, 38)։

7. Կրկնադիր գործածությամբ ունի հավելման իմաստ՝ հավասար ուժով ու՛ շեշտվածությամբ մեջ բերելով կապակցվող անդամները։ Եթե կապակցվող անդամները միավորվում են զույգերով, թե շաղկապը կարող է դրվել միայն երկրորդից առաջ, բայց առաջինի հետ ևս զորությամբ հասկացվել։ Իր հավելման իմաստով թե շաղկապը համանիշ է կրկնադիր և...և շաղկապին։ Օրինակներ. «Ամեն մարդ ինքն է պատասխանատու թե այս, թե մյուս աշխարհում իր անհատական կյանքի համար» (ՇՔ, 41). «Ուռի ճիպոտը շառաչում էր թե մեղավորների, թե անմեղների գլխին» (ՖՎ, 337). «Այժմ տխրության, թե քեֆի ժամին, Մենք էլ օրհնելիս մեր զավակներին՝ Ձեր խոսքն ենք ասում» (ՀՔ, 1, 9). «Էլ ո՞ր օրվա համար են թե ժողովրդի, թե դասալիքների մեջ եղած ճանապարհաշինարարները» (ՖՎ, 465)։

Թե չէ, ապա թե ոչ, եթե ոչ.— *Արտահայտում են պայմանական-հակադրական հարաբերություն։ Պայմանն արտահայտվում է հենց այս շաղկապների միջոցով, որոնք «դրվում են մի զեղչված պայմանական խոսքի տեղ, որ իր գլխավոր խոսքի հետ հակադրվում է համադասության առաջին խոսքին»[19], օրինակ՝ «Դամբարին կապեցեք, թե չէ (եթե չկապեք) վեր կբերի ձիերից, կպատառոտի» (ՎԱ, 8). «Աչքդ առնելուն պես պետք է թվանքդ բացվի, թե չէ որ ուզեցիր նշան դնես, մինչև աչքդ ճպես, նա սարն անցկացավ» (ՀՔ, 2, 357). «Ես քեզ էի փորձում, թե չէ այդ խարդախ կտակով ես ոչինչ չէի կարող անել» (ՇՔ, 232). «Քեզ էլ նրանք են խելքից հանել, թե չէ դու չէիր անիլ այդ բանը» (ՇՔ, 209). «Պետք էր փախչել նրանից, եթե ոչ մի թեթև տաշեղի նման կտաներ թե՛ ձիուն, թե՛ ձիավորին» (ՐՍ, 19). «Հենց հիմա արա այս բանը, ապա թե ոչ հետո ուշ կլինի»։*

---

[19] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 670։

Թեկուզ, թեկուզ և (մինչև անգամ եթե, նույնիսկ եթե, ... էլ որ, որ ... էլ, եթե... էլ).— *Պայմանական-զիջական երկրորդական նախադասությունները կապելով գլխավորին՝ ցույց են տալիս այն ենթադրական-պայմանական հիմունքը, որ եթե իրականանա էլ, դարձյալ չի կարող խանգարիչ լինել գլխավոր նախադասության գործողության կատարման համար, ինչպես՝ «Մի կամ երկու մարդուց ոհմակը չի վախենալ, թեկուզ հրացան ունենան» (ՀԲ, 2, 396). «Թեկուզ զրահ էլ հագներ, նրա միջով կարելի էր տեսնել նրա հոգու զուլալությունը» (Սհ, 78). «Բագրատն շտապեց հասնել հայրենի լեռները, թեկուզ հովվի անպաճույճ զբաղմունքով սպառելու իր կյանքի մնացած տարիները» (Սհ, 18). «Վասակը ոչ մի դեպքում չի միանա Վարդանի հետ, թեկուզ քեզ տապալելու համար» (ԴԴ, 292). «Թեկուզ և արար աշխարհ գա վրան, կերթա դեմ ու դեմ, տուր չի տալ իրան» (ՀԲ, 2, 138). «Թեկուզ և մենակ լինի փարախում, Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում» (ՀԲ, 2, 15)։*

Այս նույն պայմանա-զիջական իմաստն է արտահայտվում նաև մինչև անգամ եթե, նույնիսկ եթե, ...էլ որ, որ...էլ, եթե...էլ շաղկապների միջոցով, ինչպես՝ «Մինչև անգամ եթե աշխարհն էլ քանդվի, իմ ասածը պետք է անեմ». «Նույնիսկ եթե հայրս էլ խնդրի, այդ գործը կատարել չեմ կարող». «Դեռեզման էլ որ իջնեմ, նրա խոսքերը չեմ մոռանա». «Եթե աշխարհն էլ քանդվի, էլի խոսքիցս ետ չեմ դառնա»։

Թեև, թեպետ, թեպետ և.— *Զիջական երկրորդական նախադասությունները կապում են գլխավորին՝ ցույց տալով հակառակ հիմունք՝ այսինքն՝ մի գործողություն, դրություն, վիճակ, հատկանիշ, որին հակառակ է գերադաս նախադասության ամբողջ միտքը։ Վերջադաս գլխավոր նախադասությունների մեջ սովորաբար այս շաղկապներին համապատասխանում են բայց, սակայն, բայց և այնպես, այսուամենայնիվ, այնուամենայնիվ, այսուհանդերձ, այնուհանդերձ շաղկապները՝ այսպիսով կազմելով թեև...բայց, թեպետ...բայց և այնպես և այլ զուգադիր շաղկապները։ Օրինակներ. «Թեև երկար տարիներ ապրում էր Մուսա լեռան մոտակայքում, դեռևս համարվում էր գաղթական» (Ֆվ, 369). «Թեև այս ճշմար-*

տուբյունը դժվար չէր ապացուցել, բայց, համենայն դեպս, դա գործին չօգնեց» (ՖՎ, 423). «Թեև նահապետական կին էր, բայց կյանքի ճմռանը շատ էր լսել ժամանակակից կանանց դավաճանությունների մասին» (ՇՔ, 235). «Թեև ամառը դեռ չէր վերջացել, բայց օդի մեջ արդեն զգալի էր վաղահաս աշնան ցուրտ շունչը» (ՆԴ, 205). «Դիքորը հանգստացավ, թեև լսում էր աղջիկ-պարոնի ձայները» (ՀՔ, 2, 323). «Վասակը վճռեց գնալ, թեև դա նվաստություն էր և անպատշաճ իր պաշտոնի համար» (ԴԴ, 166). «Թեթև ծուխ էր օթևանում, թեև կրակի գլխին ծխնելույզ էր բացված պատի մեջ» (ԴԴ, 216)։

«Թեպետ անձամբ չի տեսել նրանց, բայց միշտ լսել ու կարդացել է, թե բարի մարդիկ են, ազնիվ ու աշխատասեր» (Մ, 6, 167). «Երկար չտևեց ճանապարհորդությունը, թեպետ Կամսարյանը կցանկանար, որ նա մի քիչ երկարեր» (Մ, 6, 266). «Թեպետ ամաչում էր խոստովանել, բայց նրան հաճելի էր այն, ինչ իմացավ» (ԱԿ, 233). «Թեպետ չէին կենսագործված նրա ծրագրերից շատերը, սակայն նա կատարել, իրագործել էր ամենագլխավորը՝ կյանքի մաքրությունը» (ԱԿ, 313). «Թեպետ նա գոհ էր իր ճառից, բայց սարսափեց առաջիկա բացատրությունից» (ԱԿ, 204)։

Ինչպես...այնպես էլ, ինչպես...այնպես և, ինչպես...նույնպես և, ինչպես...նույնպես էլ, ինչպես...նմանապես և.— *Զուգադիր համանիշ շաղկապներ են։ Սրանցով կապակցվող միավորներն ստանում են հավասար արժեք ու շեշտ՝ սոսկ հավելվելով իրար վրա, ինչպես՝ «նա ուժեղ է ինչպես լեզուների, այնպես էլ մաթեմատիկայի մեջ». «Ինչպես առաջին, նույնպես և երկրորդ կուրսեցիները լավ էին նախապատրաստվել քննություններին». «Ինչպես մեր ընտանիքը, նմանապես և Սոնայենց ընտանիքը կարոտության մեջ չէր և ամառներն անց էր կացնում ամառանոցում»։*

Այս շաղկապներն ավելի հատուկ են գրական լեզվի գիտական, հրապարակախոսական, պաշտոնական-գրասենյակային ոճերին։

Ինչպես և, ինչպես նաև, նույնպես, նույնպես և, նմանապես և.— *Արտահայտում են սոսկ հավելման գաղափար՝*

աստկացման որոշ երանգով, օրինակ՝ «Պետական համալսարանում, ինչպես և հանրապետության մյուս բուհերում, լուրջ աշխատանքներ են տարվում այս ուղղությամբ». «Հայաստանում, ինչպես նաև մյուս հանրապետություններում սկսվել են կուսակցական հաշվետու-վերընտրական ժողովները» (ՍՀ). «Գորիսում, նույնպես և Սիսիանում արվում է ամեն ինչ այս կարևոր խնդիրը լուծելու համար» (ՍՀ). «Բանակցություններում քննարկվում են հարավսլավա-սովետական հարաբերությունների հետագա զարգացման հարցերը, ինչպես նաև միջազգային կարևորագույն պրոբլեմները» (ՍՀ)։

Այս շաղկապները ևս նախորդների նման ավելի հատուկ են գրական լեզվի գիտական, հրապարակախոսական, պաշտոնական-գրասենյակային ոճերին։

Իսկ.—*Արտահայտում է հակադրական հարաբերություն։ Կապակցում է այնպիսի միավորներ, որոնցից մեկը մյուսին է հակադրվում իր տարբեր կամ հակադիր, հակառակ նշանակությամբ, ինչպես. «Առաջին ձիավորը հնագետ էր, իսկ երկրորդը՝ նկարիչ» (ԱՔ, 191). «Վեռնային հովերը խաղում էին մարգերում, իսկ արևի շողերը ոսկեզօծում կանաչը» (Մ, 6, 216). «Գաբրիելը լողանում էր, իսկ կինն սպասում էր վրանի առաջ» (ՖՎ, 354). «Վճիտ ջրերը պղտորվել, ապականվել էին, իսկ իմ ձկնիկները սարսափած դես-դեն էին փախչում» (ՎԱ, 28). «Շոգ օրերին հորթերը ծառերի հովում որոճում էին, իսկ մենք ջրվեժի տակ լողանում էինք» (ՎԱ, 18). «Անծանոթ կինն անհետացել էր, իսկ Արշակին հետևյալ օրն իսկ ուղարկել էին Բաքու» (ՇՔ, 267). «Նրա մոռացված խանութը դարձավ գրավիչ անկյուն, իսկ ինքը հետաքրքրական անձ» (ՇՔ, 233)։*

Կամ, և կամ, կամ թե, կամ թե չէ.— *Տրոհական շաղկապներ են։ Կապակցում են այնպիսի անդամներ, որոնց միջև ընտրություն է լինում՝ կամ մեկը, կամ մյուսը, այսինքն, եթե ընդունվում է մեկը, ապա բացառվում է մյուսը։ Կամ շաղկապը կարող է կրկնվել կապակցվող յուրաքանչյուր միավորից առաջ։ Օրինակներ. «Հետո պիտի վեր կենար, խոտը հոնի փայտով հավաքեր և մոտեցներ Ալա եզին կամ շոյեր քուռակի հիվանդ ոտքը» (ԱՔ, 130). «Եվ եթե Պանինից երկյուղ*

չէր անում **կամ** *տեղյակ էր լինում...» (ԱՔ, 5). «Փակ դռների բանալիի անցքով նայում էին դեպի մահամերձի սենյակը* **կամ** *ականջ էին դնում...» (ՇՔ, 11). «Վճռել էր* **կամ** *մահապատժի արժանանալ,* **կամ** *ընկնել ռազմաճակատ» (ՍԽ, 11). «Պապս էլ նրանց պիտի հարցներ, թե վարը պրծան,* **կամ** *թե այսինչ սարի խոտն ինչպես է» (ԱՔ, 131). «...Գնում էր տաշտիցը հաց էր առնում, կճուճիցը պանիր էր հանում, ուտելով գնում խաղալու,* **կամ** *թե չէ փեշն էր դնում, գնում հանդը» (ՀԹ, 2, 317). «Պետք է պատասխանենք նամակին* **կամ** *գնանք Տիզբոն» (ԴԴ, 14). «Ախպերն ամեն տուն գալով նրա համար մի բան է բերում՝* **կամ** *ծաղիկ,* **կամ** *միրգ,* **կամ** *հագուստ և* **կամ** *թե չէ մի քաղցր խոսք է ասում» (ՀԹ, 1, 470):*

Կամ շաղկապով կապակցվում են նաև այնպիսի միավորներ, որոնք նշանակությամբ նույնանում են կամ նույն առարկայի տարբեր անուններն են, օրինակ՝ «Հրազդան **կամ** *Զանգու գետը Երևանը բաժանում է երկու մասի». «Մասիսը* **կամ** *Արարատը Հայաստանի ամենաբարձր լեռն է». «Սևանը* **կամ** *Գեղամա ծովակը մեր բնության զարդն ու սքանչելիքն է»:*

Հենց, հենց որ, թե չէ.— *Յույց են տալիս, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է երկրորդականից անմիջապես հետո կամ դրա հետ միաժամանակ: Հենց, հենց որ շաղկապները սովորաբար դրվում են երկրորդական նախադասության սկզբում: Օրինակներ. «Հենց մոտենում ենք ձագին, նայում է մեզ վայրենի աչքերով» (ՎԱ, 16). «Հենց հասա այս կաղնու բնին ու ներքև նայեցի, հանկարծ առաջս երեք արջ դուրս եկան» (ՎԱ, 50). «Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսվում, նրանք կռնչյունով աղմկում են, թռչում են բներից» (ԱՔ, 189). «Ե՛վ գարունն էր բացվում, և՛ մեր սրտերն էին բացվում, հենց որ նա իր զվարթ ճիչով հայտնվում էր մեր գյուղում ու մեր կտուրի տակ» (ՀԹ, 2, 355). «Տիրացուն հենց որ նշմարեց նրան, ձեռքը բնազդաբար գլխարկը տարավ» (Մ, 6, 301):*

Թե չէ շաղկապը դրվում է երկրորդական նախադասության ստորոգյալից հետո: Օրինակներ. «Ահմադը հիվանդանում էր թե չէ, մեր ուրախությունն էլ հետը կտրում էր» (ՀԹ, 2, 348). «Ձենս իմացավ թե չէ, վեր թռավ, ճանաչեց, ուրա-

խացավ» (ՀՔ, 2, 408). «Դպրոցից տուն է գալիս թե չէ, նախաճաշ է պահանջում» (ՇՔ, 202). «Ծկել է թե չէ, մեր մոր օրը սևացրել է» (ՇՔ, 221). «Խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փոռալով մի քանի հանգույց արին, իջան արև առած արտերի վրա» (ԱՔ, 232). «Շարժվեցին թե չէ, նա շտապով ետ թեքեց կարապի վիզը» (ՀՔ, 2, 396). «Հրացան արձակես թե չէ, իսկույն կհավաքվեն» (ՀՔ, 2, 396):

Հենց (որ)... թե չէ.— *Գործողությունների անմիջական, կարուկ հաջորդություն ցույց տալու համար կա նաև հենց(որ) ...թե չէ շաղկապը, որոնցից առաջինը դրվում է երկրորդական նախադասության սկզբում, իսկ երկրորդը՝ նույն նախադասության ստորոգյալից անմիջապես հետո, ինչպես՝ «Հենց եկավ թե չէ, սկսեց կռիվն ու գոռգոռոցը». «Ձմեռվա ցուրտ օր, մրսած անասուններ. հենց տաք գոմի դռանն են հասնում թե չէ, իրար ետևից ներս են թափվում» (ՀՔ, 1, 455). «Հենց հասնում է ծաղիկը պոկում է թե չէ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորկի հետ հայտնվում է մի հրեշ» (ՀՔ, 1, 490). «Հենց անտառն են մտնում թե չէ, կինը ծառի վրայից կանչում է» (ՀՔ, 1, 454):*

Հետևաբար, հետևապես.— *Համանիշ են ուստի, ուրեմն շաղկապներին: Գործածվում են բարդ նախադասությունների կազմում՝ ցույց տալով հետևանքի, հետևության հարաբերություն: Օրինակ՝ «Բոլորս իրար հետ կապված ենք արյամբ, հետևաբար մեզ համար պարտադիր են այստեղ սահմանված օրենքները» (ՖՎ, 330). «Նա այժմ իրեն չի պատկանում, հետևապես և չի կարող ծառայել յուր անձին» (Մ, 6, 167). «Բայց ուսանողը անձնիշխան է ամեն դեպքում, հետևապես և կարող է նման հարցեր քննելու» (Մ, 6, 13):*

Մանավանդ, նամանավանդ.— *Արտահայտում են հավելման իմաստ՝ հատուկ կերպով շեշտելով կապակցվող մասի առավելությունը նախորդի կամ նախորդների նկատմամբ, ինչպես՝ «Միքայելը բորբոքված աչքերով դիտում էր տիկնոջ գիրուկ ուսերը, կանոնակազմ իրանը, մանավանդ նրա կիսաբաց կուրծքը» (ՇՔ, 60). «Զորականը կրկին զննող հայացքը շրջեց բոլորի վրա, մանավանդ պարսիկների, որ կասկարմիր կտրած, շփոթված, գլուխները կախել էին» (ԴԴ, 10).*

«Թուրքը, մանավանդ անատոլիացին հայտնի զինվոր է» (ՖՎ, 348). «Նրան տանջում էին սրտակեղեք մտածմունքները, նամանավանդ զիշերները»։

Մանավանդ որ, նամանավանդ որ (հազվադեպ).— Երկրորդական նախադասությունները կապելով գլխավորին՝ ցույց են տալիս գլխավոր նախադասության գործողության կատարման պատճառներից մեկը, որը ներկայացվում է որպես գլխավոր, հիմնական պատճառ, ինչպես՝ «Այս հարցը հաջողությամբ կլուծենք, մանավանդ որ խանգարիչ հանգամանքներ չկան». «Ահա թե ինչու Սիրիայում գտնվող Զորրորդ բանակի վիճակը վատթարագույնն էր, մանավանդ որ Ջեմալ փաշան նախապատրաստվում էր Սուեզյան երկրորդ արշավանքին» (ՖՎ, 359). «Քո խնդրանքն անպատճառ կկատարի, նամանավանդ որ հին ընկերներ եք»։

Միայն, միայն թե, եթե միայն.— Արտահայտում են պայմանի հարաբերություն սահմանափակման նշանակությամբ, որը պայմանավորված է միայն բառի իմաստով։ Օրինակներ. «Ինչ որ ցանկաս, Կուզե՞ս լինիմ, լինիմ երկինք ու երկիր, լինիմ ծով, ժայռ, արև, լուսին, Միայն, միայն ինձ սիրիր» (Իսահակ.). «Տեր-Հայկազունը կաշվից դուրս էր գալիս, միայն թե ամայության մեջ և մահվան բովում գտնվող իր հոտին ներշնչեր այս պատրանքը» (ՖՎ, 323). «Սիրտս գայլերին թող բաժին դառնա, Միայն թե մայրս մահս չիմանա». «Պատրաստ եմ հարգելու ձեր միջնորդությունը, եթե միայն դա այլևս չկրկնվի». «Այս անգամ էլ օգնության ձեռք կմեկնեմ քեզ, եթե միայն կլսես իմ խորհուրդները»։

Մինչ, մինչդեռ.— Ցույց են տալիս, որ երկրորդական ու գլխավոր նախադասությունների գործողությունները կամ եղելությունները կատարվում են միաժամանակ՝ որպես կանոն դրա հետ միասին արտահայտելով նաև գործողությունների ու եղելությունների հանդիպադրում, հակադրություն, որը, ուժեղ կամ թույլ ձևով, բայց, համենայն դեպս, բոլոր նախադասությունների մեջ էլ դրսևորվում է, առանձին դեպքերում դառնալով հիմնական և երկրորդական գծի վրա մղելով ժամանակային նշանակությունը։ Օրինակներ. «Մինչ նա ծանր ու բարակ բարձրանում էր, աչքերը մերթ դեպի աջ,

մերի դեպի ձախ պտտելով զննում էին հարուստ տան մուտքը» (ՇՔ, 38). «Մինչ նրանք զվարճանում էին գինու և գեղեցկության տաղերով, պարտեզի խորքից հնչուն մի ծիծաղ զանգակի պես դողաց գարնանային պայծառ օդի մեջ» (ԴԴ, 27). «Մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշից, վերջին ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ» (ԱԲ, 190). «Անհաջող պատերազմի հետևանքով նման ցեղերը հաճախ տասնամյակներ շարունակ հետադիմում են, մինչդեռ մյուս ժողովուրդները ավելի արիաբար են տանում ռազմական ձախորդությունները» (ՖՎ, 356). «Անձնական շահը մեզ չէր դրգռում աշխատել գյուղացիների ազատության համար, մինչդեռ մենք աշխատում էինք» (ԱԿ, 316)։

Մինչև, մինչև որ.—*Երկրորդական նախադասությունները կապելով գլխավորին՝ ցույց են տալիս այն վերջին ժամանակահատվածը, որից առաջ կատարվել կամ կատարվում է գլխավոր նախադասության մեջ դրսևորված գործողությունը կամ եղելությունը։ Օրինակներ. «Տղան դառնորեն տանջվեց, մինչև անցավ իր ընկերների շարքը» (ՖՎ, 365). «Երգն անդադար կրկնվեց, մինչև կանաչավուն երկնքում հալվեց վերջին աստղը» (ՖՎ, 340). «Ամեն տեղ այդ սերը ծիծեռնակի պես ճռվողում էր, մինչև հասունացան նրանք» (ԱԲ, 230). «Բաց չէր թողնում, մինչև որ մարդը դուրս չէր գալիս համբերությունից» (ՀՔ, 2, 324). «Այստեղից դուրս չես գնալ, մինչև որ չես խոստովանիլ մեղքդ» (ՇՔ, 268). «Կրկին լռությունն սկսեց ճնշել, մինչև որ կաթողիկոսը խիստ անհանգիստ նայեց ժողովվածներին» (ԴԴ, 142)։*

Նաև.—*Համանիշ է էլ, ևս շաղկապներին։ Արտահայտում է հավելման իմաստ։ Սովորաբար գործածվում է անկախ, ինքնուրույն նախադասությունների կազմում՝ դրվելով կապակցվող միավորներից առաջ և հաճախ ունենալով զորացման կամ աճման երկրորդական գաղափար, օրինակ՝ «Իրենց խոտի մի մասը սարում էին թողել նաև Հայկն ու մեր մյուս հարևանները» (ՎԱ, 33). «Նա՝ բնությունը, նաև գիշերը գարնանային ստեղծարար ճիգերի մեջ էր» (ԴԴ, 82). «Դա ընդգծված էր նաև նրա փոքր-ինչ դուրս ցցված կզակի վրա»*

(Սխ, 4). «Նման ծեսեր կատարվում էին նաև մյուս խոշոր բնակավայրերում» (Ֆվ, 296)։

Նույնիսկ, մինչև իսկ, անգամ, մինչև անգամ.— *Արտահայտում են հավելման իմաստ՝ մեջ բերելով կապակցվող միավորները որպես չսպասած կամ ծայրագույն աստիճան*[20]*, օրինակ՝ «Այստեղ ոչինչ չի մեղմացնում արեգակի տրոպիկական տապը, նույնիսկ ծովը» (ՇՔ, 10). «Եվ ոչ միայն չէր տեսել, այլև չէր ուզում տեսնել, նույնիսկ լսել անգամ նրա անունը» (ՇՔ, 13). «Նման մի գաղափար կարող էր ոգևորել նույնիսկ օտարացածին» (Ֆվ, 10). «Դրանք կբավարարեին մինչև իսկ ամենահանդուգն պահանջները» (Ֆվ, 12). «Կային բորոտներ անգամ, որոնցից խուժանը չէր զգուշանում» (ՇՔ, 31). «Սրբազանի առանց այն էլ ծանր շնչառությունն ավելի սաստկացավ։ Նա մինչև անգամ քրտնեց իր գիրուկ ուսերի վրա դրված ծանր և անսովոր բեռան տակ» (ՇՔ, 40). «Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ» (ԱԲ, 229). «Թե տիկինը և թե ամուսինն ընդունում էին նրան բարեկամաբար, մինչև անգամ պարծենում էին, որ ունեն Ալիմյանի պես այցելու» (ՇՔ, 60)։*

Որ.—*Արդի հայերենի ամենագործածական ու տարածված ստորադասական շաղկապն է՝ ամենաընդհանուր ու անորոշ նշանակությամբ։ Դրանով է պայմանավորված այն, որ այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները բազմաբնույթ են և հանդես են գալիս ենթակայի, ուղիղ և անուղղակի խնդիրների, որոշչի և զանազան պարագաների պաշտոններով։ Այս շաղկապով կապակցվող նախադասությունների կոնկրետ բնույթը սովորաբար կախված է լինում գերադաս նախադասության բայ-ստորոգյալի սեռից, բայիմաստից, իսկ երբեմն էլ գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ գործածված բայերի եղանակա-ժամանակային ձևերից։*

1. Որ շաղկապը հիմնականում հանդես է գալիս բացատրական, մեկնական իմաստով՝ ենթակա, ուղիղ ու անուղղակի խնդիր և որոշիչ ու հատկացուցիչ երկրորդական նախադա-

---

[20] *Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 656։*

սությունները կապակցելով գլխավոր նախադասությունների հետ։

ա) Ենթակա երկրորդական նախադասությունները դրվում են կրավորական ու չեզոք բայերի և բաղադրյալ ստորոգյալների հետ[21], օրինակ՝ «Զգացվում էր, որ տրամադրությունն ընկած է, և քունը տանում է» (ՖՎ, 357). «Առաջին իսկ օրերից նկատվում էր, որ հոտերն զգալիորեն կորցնում են իրենց քաշը» (ՖՎ, 388). «Պարզ էր, որ աներոջ մահը մազի չափ չէր խլրտում նրա ազգակցական զգացումների նիրհը» (ՇՔ, 17). «Մերթ անախորժ է քեզ, որ ես տխուր եմ, մերթ անախորժ է, որ ուրախ եմ» (ԱԿ, 205). «Հասկանալի է, որ մեր բարեկամները այլ ելք չունեն». «Ինձ համար առանձնապես հաճելի է, որ ես կարող եմ մատնանշել...» (ՍՀ). «Արդեն բավական է, որ Մարկոս աղան պահել է նրան իր մոտ յոթ տարի» (ՇՔ, 72). «Նկատելի էր, որ բոլորն էլ զգում էին մի տեսակ անհարմարություն և ամոթ». «Զարմանալի է, որ մի ամսում այդքան փոխվել եք»։

բ) Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները դրվում են ներգործական՝ հատկապես ասացական, իմացության, հաղորդման, դատողության և նման մոտիկ իմաստներ արտահայտող բայերի հետ։ Օրինակներ. «Հայրը հասկացավ, որ ձիավորները նստել են իր խոսքի վրա» (ԱԲ, 196). «Նկատեց, որ կորեկի արտի գլխին է» (ԱԲ, 192). «Գիտի, որ ինքը զառամել է արդեն» (ԱԲ, 235). «Նա զգաց, որ պետության անիվը դուրս թռավ սռնուց և կատաղի թափով գնում է դեպի անդունդը» (ԴԴ, 165). «Նրան սովորեցրել էին, որ մուշտարի քաշի դեպի իրենց խանութը» (ՀՔ, 2, 324). «Պետրոսը հասկացավ, որ սրիկան ծախսի փող չունի» (ՇՔ, 235). «Զգում էր, որ եղբայրական սերն իր հոգում տեղի է տալիս զզվանքի զգացման» (ՇՔ, 193)։

գ) Անուղղակի խնդիր երկրորդական նախադասությունները դրվում են զանազան բայերի իմաստների թելադրությամբ, ինչպես՝ «Ես վախենում եմ, որ մնամ ծիծաղելի դրու-

---

[21] *Այս և հետագա շարադրանքը հմմտ.* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 620—624։*

թյան մեջ» (ԱԿ, 181). «Ամեն րոպե սպասում էր, որ մարդն էլի մի րոպե կխոսի» (ԱԿ, 208). «Նա սպասում էր, որ կինը կառարկի» (ԱԿ, 298). «Հուսամ, որ վարդերը շուտով կվերադառնան այդ լավիկ դեմքի վրա» (ԱԿ, 301). «Դա ապացուցվում է նրանով, որ երբեք իշխանության ու դերքի չեմ ձգտել». «Դա բխում է նրանից, որ վատ դաստիարակություն է ստացել». «Վեճն ու կռիվը ծագեցին նրանից, որ նրանք իրար չհասկացան»:

դ) Որոշիչ և հատկացուցիչ երկրորդական նախադասությունները դրվում են գերադաս նախադասության որևէ գոյականի, հատկապես բայանվան պահանջով, որն արտահայտում է «խորհուրդ, խոսք, կարծիք, կասկած, երկյուղ, լուր, կամք, հույս, հավատ, հրաման, միտք, ենթադրություն և այլն»[22]: Օրինակներ. «Դա ապացույց էր, որ թուրքերը դեռևս ոչինչ չէին կասկածում» (ՖՎ, 329). «Խորհուրդ տվեց, որ պարապեմ մասնավոր ուսուցչի մոտ». «Խոսք տվեց, որ երեկոն մեզ մոտ է անցկացնելու». «Այն կարծիքին է, որ բանը կվերջանա հաշտությամբ». «Լուր ստացանք, որ երկու տարի առաջ ամուսնացել է». «Հույս ունի, որ չեք մերժի իր խընդրանքը». «Կասկած կա, որ կառավարությունը կդիմի խիստ միջոցների». «Նա հույս ուներ, որ առաջիկայում ևս ամեն ինչ բարեհաջող կանցնի» (ՖՎ, 471):

ե) Հատուկ ոճական հնարանք է, երբ նախադասության տարբեր անդամները առանձնապես շեշտելու համար նրանցից հետո դրվում է եմ բայը, որին հետևում է որ շաղկապով երկրորդական նախադասություն: Այսպիսով, բովանդակությամբ պարզ նախադասությունը վերածվում է ձևական բարդ նախադասության[23]: Այսպես, «Երեք օր նրան չեմ տեսել» նախադասության ժամանակի պարագան հատուկ շեշտելով կարելի է արտահայտել հետևյալ ձևով. «Երեք օր է, որ նրան չեմ տեսել»: «Վշտերն են մաշել նրան» նախադասության ենթական հատուկ շեշտելով կարելի է արտահայտել այսպես՝ «Վշտերն են, որ մաշել են նրան»: Առանձին դեպ-

---

22 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 623:

23 *Համմ.* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 538:

քերում nr շաղկապը կարող է նաև զեղչվել։ Այսպիսի օրինակներ են նաև հետևյալները. «Ութ տարի էր, nr չէր տեսել որդուն» կամ «Ութ տարի էր չէր տեսել որդուն», «Երկարատև հիվանդությունից էր, nr հալվել-մաշվել էր». «Մեր փողոցում էր, nr հանդիպեցի նրան». «Վաղուց է, nr չէի հանդիպել նրան» և այլն։

2. Արտահայտում է նպատակային հարաբերություն՝ նպատակի պարագա երկրորդական նախադասությունները կապակցելով գլխավորներին։ Այս իմաստով nr-ը համանիշ է որպեսզի շաղկապին և նրանով էլ կարող է փոխարինվել, *միայն վերջինիցս տարբերվում է իր խոսակցական-ժողովրդական երանգով։ Օրինակներ.* «Դա մնացել է, nr մեզ համար աղոթք անի» (ԱԲ, 203). «Վիզը կծռի ուրիշին, nr իր խուրձերը տուն բերեն, խոտը սարից կրեն» (ԱԲ, 206). «Ես էլ բերել եմ, nr բան սովորի» (ՀԹ, 2, 314). «Կռան տակին տանում էր շորերը, nr մերը լաց լինի վրեն» (ՀԹ, 2, 329). «Գնում էինք գիշերը մնանք բոստանչի Օվակիմի դափում, nr լուսադեմին հասնենք որսատեղը պահելու» (ՀԹ, 1, 357). «Կացինն առան, nr հերթով կոտորեն իրենց փայտը» (ՀԹ, 1, 437). «Իր մարդկանցով գնում է, nr ոսկին հանի բերի» (ՀԹ, 1, 448)։

Նպատակային իմաստով nr շաղկապը հաճախակի է կիրառվում շարժում ցույց տվող բայերի հետ, ինչպես՝ «Գնաց, nr տեսնի նրան». «Մոտեցավ, nr օգնի ինձ». «Վազեց, nr բռնի, տուն բերի». «Շտապում էր, nr ժամ առաջ տեղ հասնի». «Եկել է, nr իր գործերը դրսուի» և այլն։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, նպատակային երկրորդական նախադասություններում բայը, որպես կանոն, դրվում է ըղձական եղանակով։

3. Արտահայտում է պայմանի հարաբերություն՝ պայմանի երկրորդական նախադասությունները կապելով գլխավորներին։ Այս իմաստով համանիշ է եթե, թե շաղկապներին և նրանցով կարող է փոխարինվել։ Nr շաղկապի պայմանի իմաստն ավելի հատուկ է ժողովրդական-խոսակցական լեզվին։ Օրինակներ. «Nr տեսան մեկի տունը հյուր եկավ, հարևանները կհավաքվեն եկվորի գլխին» (ՀԹ, 2, 386). «Nr

էդպես բան անի, կգամ կռնիցը կբռնեմ էն Քուրը կգցեմ» (ՀՔ, 2, 314). «ժամանակը nr *անցնի, շատ բան կանցնի» (ԴԴ, 95). «*Nr *այդպես է, զավակներդ վերցրու, իսկ նրանց մորն արձակիր» (ՇՔ, 41). «Ոտքով* nr *խփես, ծառայիդ գըլխին կդիպչես» (ՇՔ, 43). «Սարում* nr *պախրեն խոտ պոկի, նա կլսի» (ՀՔ, 1, 462)։*

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, nr *շաղկապը միջադաս ևս կարող է կիրառվել։*

4. Արտահայտում է պատճառի նշանակություն՝ նրա համար nr*, այն պատճառով* nr *կապակցությունների իմաստով, օրինակ՝ «Տանտերը գովեց Համբոյին,* nr *չարչարվում էր որդուն մարդ շինի» (ՀՔ, 2, 313). «Ուրախ էր,* nr *իր հետևից որևէ անհանգստացող չէր թողնում» (Սև, 29). «Միայն ափսոսաս գալիս է,* nr *էսքան ապրանքս փչացավ» (ՀՔ, 1, 453). «Արգելում է Հուռիին էլ բանի ձեռ չտա,* nr *մորքուրի նման բզեզ չդառնա» (ՀՔ, 1, 480)։*

5. Արտահայտում է ժամանակային նշանակություն՝ erp*,* erp nr *շաղկապների իմաստով, ինչպես՝ «էս* nr *պատահեց, մեր Դավիթ հսկան Մի մանուկ էր դեռ յոթ-ութ տարեկան» (ՀՔ, 2, 99). «էս* nr *լսեցին, դես ու դեն ցրված Տղերքը ճեպով ձորը ներս մտան» (ՀՔ, 2, 61). «Թվանքը* nr *տրաքեց, սա վեր թռավ, դուրս ընկավ ու ետ գետնովը դիպավ» (ՀՔ, 1, 366). «Գյուղացիք այս* nr *տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար» (ՀՔ, 1, 437). «Գարունքը վար ու ցանքի ժամանակը* nr *գալիս է, եզը չի ունենում, թե վարի» (ՀՔ, 1, 447)։*

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, ժամանակային նշանակությամբ ևս nr *շաղկապը հաճախ կիրառվում է ոչ թե երկրորդական նախադասության սկզբում, այլ միջում՝ դրվելով բայից անմիջապես առաջ։*

6. Արտահայտում է ձևի հարաբերություն՝ ձևի պարագա երկրորդական նախադասությունները կապակցելով գլխավորներին, որոնց կազմում որպես հարաբերյալ հանդես է գալիս այնպես դերանունը, օրինակ՝ «Ասում են, թե դու այնպես Մոռացել ես ինձ այնպես, Nr *երբ անունս են տալիս, Հազիվ միտքդ եմ գալիս» (Ահ, 1, 320). «Ախ, իրա՞վ է՝ դու այնպես*

Մոռացել ես ինձ այնպես, որ երբ անունս են տալիս, Հազիվ միտքդ եմ գալիս» (ԱՒ, 1, 320). «Այնպես էր բարկացել, որ կաս-կարմիր էր կորել». «Այնպես էր սարսել, որ խոսել չէր կարողանում» և այլն։

7. Արտահայտում է չափ ու քանակի իմաստ՝ չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունները կապակցելով գերադաս նախադասություններին, որոնց կազմում անպայմանորեն առկա են լինում այնքան, այնչափ հարաբերյալները. հենց դրանցով էլ պայմանավորված է որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների չափ ու քանակի բնույթը։ Օրինակներ. «Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները» (ԱԲ, 228). «Այդտեղ օդն այնքան խեղդուկ էր, որ մարդիկ հազիվ կարողանում էին շունչ քաշել» (ՇՔ, 10). «Էնքան է չարչարում, որ հիմարը հուսահատվում է» (ՀՓ, 1, 455). «Դու աշքածակ ես, էնքան կհավաքես, շալակս կտաս, որ մեջքս կկոտրի» (ՀՓ, 1, 457)։

8. Որ շաղկապը որպես թարմատար գործածվում է բազմաթիվ հարաբերական բառերի ու շաղկապների հետ՝ այսպիսով կազմելով բաղադրյալ ձևեր, ինչպես՝ ով որ, ինչ որ, ինչպես որ, երբ որ, որտեղ որ, ուր որ, մինչև որ, հենց որ, թե որ, չնայած որ և այլն։

Ո՛չ ... ո՛չ.—*Արտահայտում է թվարկման նշանակություն բացասական իմաստով։ Կապակցվող վերջին անդամը կարող է միավորվել նաև և ոչ, և ոչ էլ, ոչ էլ ձևերով։ Օրինակներ. «Հնագետը չէր տեսնում ո՛չ մանուշակ, ո՛չ խոտ» (ԱԲ, 192). «Չէր տեսել ո՛չ Կաքավաբերդը, ո՛չ նրա քարափը» (ԱԲ, 190). «Ո՛չ մի խոսք, ո՛չ մի բան չէր կարող բուժել նրա վերքը» (ԴԴ, 121). «Այս հավատից չեն կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր» (ԴԴ, 159). «Բայց այստեղ չէին հասնում ո՛չ վրդովմունքի ձայները, ո՛չ էլ լացուկոծը» (Ֆվ, 327). «Ես ո՛չ ազատամիտ եմ, ո՛չ խավարամիտ, ո՛չ առաջադիմական եմ, ո՛չ հետադիմական, ո՛չ արմատական եմ, ո՛չ պահպանողական» (ՆԴՊ, 64)։*

Ոչ թե, և ոչ թե.—*Գործածվում է շուտ տված ձևով հան-*

դես եկող ժխտական կապակցությունների երկրորդ եզրում՝ ցույց տալով կապակցվող առաջին անդամի ընդունելի լինելը, օրինակ՝ «Դու պետք է ներողություն խնդրեիր, ոչ թե հոխորտայիր». «Ամեն ինչ անեիր նրա սիրտը գրավելու համար և ոչ թե ազմուկ բարձրացնեիր». «Թոհուբոհը իրականացվում էր մտավորական անասունների ճշգրիտ հաշվումներով և ոչ թե անբան բարբարոսների միամիտ արյունարարությամբ» (Ֆվ, 296). «Թող իր վաշտերն ու գնդերը խնայի՝ կայսրության թշնամիների դեմ պատերազմ մղելու, ոչ թե իր երկրի խաղաղ քաղաքացիների դեմ կռվելու համար» (Ֆվ, 351):

Ոչ թե ... այլ.—*Այս զուգադիր շաղկապով ժխտվում է հանդիպադրվող միավորներից առաջինը և ընդունվում է երկրորդը, օրինակ՝ «Բայց Գաբրիելի ներսում իշխում էր ոչ թե բերկրանքը, այլ երազախառն տվայտանքը» (Ֆվ, 353). «Ի վերջո ոչ թե ճակատագիրը կհաղթի մեր առաջնորդներին, այլ մեր առաջնորդները՝ ճակատագրին» (Ֆվ, 353). «Եվ Սիմոնին թվաց, թե իրենց տնից տանում են ոչ թե մի ձի, այլ իր եղբորը, իր որդուն» (ԱՒ, 201). «Նահանջեցի ոչ թե երկյուղից, այլ խղճի խայթից» (ՎԱ, 53). «Գլխավոր հրամանատարը քնում էր ոչ թե վրանում, այլ խրամատում» (Ֆվ, 351):*

Ոչ միայն ... այլև.—*Այս զուգադիր շաղկապով կապակցվող անդամներից առաջինը ներկայացվում է որպես հաղորդման գլխավոր նպատակ, իսկ երկրորդը հատուկ շեշտվածությամբ ավելանում է դրա վրա, օրինակ՝ «Նա պիտի լիներ համեստ ոչ միայն վարմունքով, այլև բոլոր զգացումներով» (ՇՔ, 279). «Նա գրգռված էր ոչ միայն Սուլյանի, այլև բոլոր ներկա եղողների դեմ» (ՇՔ, 243). «Ոչ միայն շինական, այլև ազնվական կանայք շատ զինավարժ էին» (ԴԴ, 9). «Նա արդեն համոզվել էր, որ Անուշը ոչ միայն չի սիրում իր ամուսնուն, այլև ատում է» (ՇՔ, 63):*

Որովհետև.—*Ցույց է տալիս այն պատճառը, հիմունքը, որից ծագում, բխում է գլխավոր նախադասության մեջ արտահայտված եզրակացությունը, հետևությունը, միտքը: Ստադաս գլխավոր նախադասության մեջ կարող են դրվել ուստի, այս պատճառով, ուրեմն: Օրինակներ. «Ժամանակը ծանր էր անցնում, որովհետև քաղցած էինք» (ՎԱ, 16). «Որովհետև*

երիտասարդը շտապելու ոչինչ չուներ, ուստի չառարկեց» (Մ, 6, 203). «Մատիտը մի պահ ձեռքին մնաց, **որովհետև** *նրա ոտնաձայնից մի անգղ կունչյունով թռավ բնից» (ԱԲ, 191). «Ձայնը հեռանալով նվազեց,* **որովհետև** *գգիրը ուրիշ կտուր բարձրացավ» (ԱԲ, 199). «Դարբնի տղան էլ լուռ էր,* **որովհետև** *ոչ ոք սիրտ չուներ նրան լսելու» (ԱԲ, 214)։*

Որպեսզի.— *Ստորադաս նախադասությունները կապակցելով գլխավորներին՝ ցույց է տալիս այն նպատակը, որին հասնելու համար կատարվում է գլխավոր նախադասության գործողությունը։ Համանիշ է* **որ** *շաղկապին՝ վերջինիցս տարբերվելով միայն ոճականորեն, այն է՝ ավելի հատուկ լինելով գրավոր-գրական լեզվի բարձր ոճին։ Օրինակներ. «Սիմոնը Սաքու տղայի հետ արդեն իջնում էր ձորակը,* **որպեսզի** *միանա ուրիշ ձիավորների» (ԱԲ, 202). «Դժվարությամբ բերում էր հաստ ասեղը,* **որպեսզի** *կարկատի որդու դուլպանները» (ԱԲ, 201). «Պետք է անդադար շարժվել,* **որպեսզի** *չցրտահարվի,* **որպեսզի** *ապրի» (Սխ, 37). «Նա գտավ, որ այս քարայրն էլ բավական է,* **որպեսզի** *ինքն իր համար մի նոր կյանք սկսի» (Սխ, 37)։*

Չէ՞ որ.—*Որպես կանոն գործածվում է անկախ նախադասություններում՝ հարցական ձևով հավաստելով այն պատճառն ու հիմունքը, որով հաստատվում է նախորդ նախադասության մեջ արված եզրակացությունը, հետևությունը։ Օրինակներ. «Դա ավելին էր, քան Վանում և Ուրֆայում թուրքերի գլխին եկած ձախորդությունները։* **Չէ՞ որ** *դրանք հայկական բազմամարդ քաղաքներ էին, որոնց ապստամբությունը ռուսական զորքերի առաջխաղացման արդյունք էր» (Ֆվ, 356). «Նա գիտակցում էր իր ձեռնարկած անլուր հանդգնությունը։* **Չէ՞ որ** *ծիծաղելի էր մի բուռ մարդկանցով դուրս գալ վիթխարի կայսրության բանակի դեմ» (Ֆվ, 343). «Ջենքով հպարտացողների համար պարտության դեպքում կյանքը կորցնում է իր ամբողջ իմաստը։* **Չէ՞ որ** *ռազմական արհեստի պատիվը կործանարար չափով խարխլվում է» (Ֆվ, 356)։*

Ձևայած, չնայած որ.—*Ձիջական երկրորդական նախադասությունները կապակցելով գլխավորին՝ ցույց են տալիս հակառակ հիմունք։ Համանիշ են* **թեև, թեպետ** *շաղկապնե-*

րին։ Օրինակներ. «Չնայած երակների մեջ երկու տարբեր արյուն էր հոսում, մայրական կողմը կարծես կորցրել էր իր զորությունը» (Ֆվ, 363). «Չնայած երկար տարիներ ամուսնացած էին, բայց նման դեպքերում իրարից դեռևս քաշվում էին» (Ֆվ, 128). «Մենք էլ էինք տխրում, չնայած մեզնից ոչ ոք չէր տեսել մեր քեռի Եգորին» (ԱՒ, 191). «Չնայած որ բացվում էր լույսը, բայց ամրոցից դեռ չէր լսվում ոչ մի շշուկ» (ԴԴ, 20). «Չնայած որ Կոդակը վերջերս մեծ դիրք էր ձեռք բերել, բայց ջանաց շատ էլ ցույց չտալ և չխրտնեցնել Վարազվաղանին» (ԴԴ, 289)։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, երբ երկրորդական նախադասությունը նախադաս է, չնայած, չնայած որ շաղկապներին գլխավոր նախադասության մեջ սովորաբար համապատասխանում է բայց շաղկապը։ Այսպիսով ունենում ենք չնայած ... բայց, չնայած որ ... բայց զուգադիր շաղկապները։

Ուստի, ուստի և, ուրեմն, ուրեմն և.— *Գործածվելով բարդ նախադասությունների կազմում՝ արտահայտում են հետևանքի, հետևության հարաբերություն։ Երբ բարդ նախադասությունն սկսվում է պատճառի և հիմունքի հարաբերություն արտահայտող երկրորդական նախադասություններով, այս շաղկապներով կապակցվող նախադասություններն ըմբռնվում են որպես գերադաս, գլխավոր նախադասություններ, օրինակ՝ «Որովհետև եղանակը վատ էր,* ուստի և *փողոցները ճամարյա ամայի էին», «Քանի որ հանցավոր չէ,* ուստի և *կարդարացնեն», իսկ երբ պատճառը և հիմունքն արտահայտվում են անկախ նախադասություններով, այս շաղկապներով կապակցվող նախադասություններն ընկալվում են որպես կախյալ, երկրորդական, օրինակ՝ «Եղանակը վատ էր,* ուստի և *փողոցներն ամայի էին», «Հանցավոր չէ,* ուրեմն և *կարդարացնեն»:*

Ստորև բերվում են ուստի և ուրեմն *շաղկապներով կապակցված նախադասությունների օրինակներ։ «Տների ներսը չէր գրավում մարդկանց,* ուստի *ժողովուրդը լցված էր դուրսը» (Մ, 6, 161). «Նա այդ տեսակ հարցի չէր սպասում,* ուստի և *չիմացավ ինչ պատասխանել» (Մ, 6, 244). «Անահիտը*

գիտեր հոր անկոտրում բնավորությունը, ուստի ընդունեց և կուլ տվեց խմորը» (ԴԴ, 213). «Նրանք իրենք բախտավոր չեն կյանքում, ուստի մի առանձին հաճույքով են հաղորդում ուրիշներին չար լուրերը» (ՇՔ, 207)։

«Դեռ հեռվից երևում է, որ պլպլում են հովտի բոլոր լճակները, ուրեմն ձուկ է խաղում այնտեղ» (ՎԱ, 27). «Միայն նա էր այստեղ, ուրեմն նա է վերցրել» (ՍՄ). «Բոլորը հրաժարվում են, ուրեմն մնում է, որ ես հանձն առնեմ» (ՍՄ). «Բոլորդ համաձայն եք, ուրեմն սկսենք» (ՍՄ)։

Ուրեմն շաղկապով կարող են սկսվել նաև անկախ նախադասություններ՝ որպես եզրակացություն, հետևություն նախորդ նախադասության կամ նախադասությունների մեջ արտահայտված մտքերի, ինչպես՝ «Ուրեմն՝ բացառականի ընդհանուր հոլովական իմաստն է ելակետի կամ սկզբնակետի, հեռացման կամ անջատման ձևաբանական իմաստը», «Ուրեմն՝ եզակի ուղղական հոլովը բառի ուղիղ ձևն է, հոլովական հատուկ վերջավորություն չունի կամ նրա վերջավորությունը զրո է բոլոր բառերի համար»։

Քանզի, վասնզի, զի.— Գրաբարյան պատճառի և հիմունքի շաղկապներ են։ Ձուտ ոճական նպատակներով սակավադեպ գործածվում են գեղարվեստական գրականության մեջ, ինչպես՝ «Մի՛ լաք, քույրեր, այլ ցնծացեք, քանզի այսօրվանից երկնավոր թագավորի աջը պիտի լինի այս գերդաստանի վրա» (ՇՔ, 39). «...Վասնզի մյուս բոլոր տեղերում գետինը ծածկված էր աղբի շերտերով և աթարի փշուրներով» (Մ, 6, 220). «Դու պետք է զիջես, վասնզի դու մեծ ես» (ՍՄ)։ «Փառք տանք բարձրյալին, զի ոչնչից ստեղծեց երկիրը և երկինքը»։

Քանի, քանի դեռ.— Ցույց են տալիս, որ գլխավոր նախադասության գործողությունը տևականորեն կատարվում, շարունակվում է երկրորդական նախադասության գործողության կատարման ամբողջ ընթացքում, ինչպես՝ «Քանի լուսեղեն քու հերը դեռ կար, Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել» (ՀԹ, 2, 105). «Քանի մարդը կենդանի էր, բամբասում էիք, զրպարտում, հացը գլխին հարամ անում» (ՇՔ, 22). «Քանի թուղթ էր խաղում, հիշում էր տիկին Անուշ Ղուլամյա-

նի բեղիկները» (ՇՔ, 88). «Քանի լուս է, հնձի, որ մութն ընկնի, կգաս» (ՀԹ, 1, 451). «Քանի դեռ քեզնից կախում ուներ, քեզ շողոքորթում էր». «Քանի դեռ ցուրտ էր, տնից դուրս չէր գալիս»։

Քանի շաղկապը միաժամանակ արտահայտում է նաև այլ իմաստներ՝ ցույց տալով.

ա) Կրկնություն, այսինքն, որ երկրորդական և գլխավոր նախադասությունների գործողությունները կրկնվում են միաժամանակ, մի քանի անգամ, ինչպես՝ «Քանի տուն եմ գնում, նա պարապում է». «Քանի գրում եմ, նա մերժում է». «Քանի սարքում եմ, նա քանդում է»։

բ) Ժամանակային սկզբնակետ, այսինքն, որ երկրորդական նախադասության գործողությունը կամ եղելությունը ծառայում է որպես սկզբնակետ, որից սկսած ծավալվում, դրսևորվում է գլխավոր նախադասության գործողությունը կամ եղելությունը[24], ինչպես՝ «Քանի այդ խոսքը լսել եմ, չեմ կարողանում հանգստանալ». «Քանի նրա հետ ծանոթացել է, փոխվել է». «Քանի քաղաք է տեղափոխվել, գոռոզացել է» և այլն։

գ) Գլխավոր նախադասության ստորոգյալի հատկանշի սաստկացում, ավելի ու ավելի մեծ աստիճանի դրսևորում՝ ըստ երկրորդական նախադասության ստորոգյալի հատկանշի սաստկացման, ավելի ու ավելի մեծ աստիճանի դրսևորման, ինչպես՝ «Քանի հեռանում է, էնքան վախը սաստկանում է, քանի վախը սաստկանում է, էնքան ձենը բարձրացնում է» (ՀԹ, 1, 497). «Քանի մեծանում է, գեղեցկանում է». «Քանի ուշացնում է, գործը այնքան ծանրանում է». «Քանի խմում է, գործերն այնքան վատ են գնում» և այլն։

Այս իմաստով քանի շաղկապը շատ լայնորեն կիրառվում է գնալ բայի հետ, որն այս դեպքում գործածվում է ոչ թե ուղղակի, այլ փոխաբերական նշանակությամբ, ինչպես՝ «Քանի գնում՝ կազդուրվում է, գեղեցկանում է, հպարտանում է, մեծամտանում է, ուժեղանում է, թուլանում է, ավելի ու

[24] Համմ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 636։

ավելի հպարտ է դառնում, գրավիչ է դառնում, մարդամոտ է դառնում» և այլն։

Քանի որ.— *Ցույց է տալիս այն հիմունքը, պատճառը, որից ծագում, բխում է գլխավոր նախադասության մեջ արտահայտված եզրակացությունը, հետևությունը, միտքը։ Համանիշ է որովհետև շաղկապին, միայն* քանի որ *շաղկապն ավելի հիմունք, իսկ որովհետև-ը ավելի պատճառ է ցույց տալիս։ Թեև երկրորդական նախադասությունը նախադաս է, ապա գլխավոր նախադասությունը կարող է սկսվել ուստի, ուրեմն, ապա շաղկապներով։ Օրինակներ. «Գաբրիելը վանից այդ մտորումները,* քանի որ *նրա խոհերի վրա այդ պահին տիրաբար իշխում էին հրանոթները» (Ֆվ, 426). «Մեզ մնում է զիջանել փիլիսոփայության,* քանի որ *մեր ընկերոջ զգացումները լռում են» (ՇՔ, 197). «Սիրտս սկսեց հուզմունքից թպրտալ,* քանի որ *իմ առաջ փափուկ ձյան մեջ՝ մեծ-մեծ չանչերով հետքեր տեսա» (ՎԱ, 51). «Վերջը որսորդը հաղթեց,* քանի որ *նրա ուզածը մի մեծ բան չէր» (ՎԱ, 47). «Հետզհետե նրա մտածմունքներն էլ ցրվեցին,* քանի որ *զրույցը գնում էր իր սիրած նյութի՝ որսորդության շուրջը» (ՎԱ, 38). «Քանի որ մարդիկ ներկայանում էին իբրև հայեր,* քանի որ *զոհվածներին փոխարինողներ էին պետք, Գաբրիելը բոլորին էլ ընդունեց գաղթակայան» (Ֆվ, 457)։*

* * *

Այստեղ քննարկվեցին ժամանակակից հայերենի շաղկապների միայն գլխավոր իմաստներն ու կիրառությունները։ Որպես սպասարկու, կապակցական դեր կատարող խոսքի մաս շաղկապների իմաստների ու կիրառությունների ավելի մանրամասն ուսումնասիրությունը վերաբերում է շարահյուսությանը, որի հիմնական խնդիրը բառերի ու նախադասությունների կապակցությունների քննությունն է։ Ուստի և՝ շաղկապների իմաստների ու կիրառությունների վերլուծությամբ ու քննությամբ զբաղվել են այն բոլոր հեղինակները, որոնք ուսումնասիրել են ժամանակակից հայերենի շարահյուսությունը, այն է՝ Մ. Աբեղյանը («Աշխարհաբարի շարա-

հյուսութիյուն»), Վ. Առաքելյանը («Հայերենի շարահյուսութիյուն»), Ն. Պառնասյանը («Ստորադասական կապակցութիյունը արդի հայերենի բարդ նախադասութիյուններում»), Բ. Վերդյանը («Բարդ ստորադասական նախադասութիյան շարահյուսութիյուն»)։ Ժամանակակից հայերենի շաղկապները որպես առանձին խոսքի մաս հանգամանալից քննութիյան են ենթարկել Գ. Գարեգինյանը («Շաղկապները ժամանակակից հայերենում») և Ս. Աբրահամյանը («Ջթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերութիյունը ժամանակակից հայերենում»)։ Այս աշխատութիյունների սոսկական թվարկումից իսկ կարելի է եզրակացնել, որ շաղկապը ժամանակակից հայերենի համեմատաբար լավ ուսումնասիրված խոսքի մասերից մեկն է։

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

82. ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ.— եղանակավորող բառերը որպես հատուկ բառախումբ առանձնացվել են դեռևս Մ. Աբեղյանի կողմից, որը խոսքի մասնիկների 4 տեսակ է ընդունում՝ ա) կապակցական բառեր (կապեր և շաղկապներ), բ) եղանակական բառեր կամ մասնիկներ, գ) բացասական մասնիկներ (ոչ, չը), դ) պատասխանական բառեր (այո, ոչ)։ Գտնելով, որ խոսքի մասնիկների նշանակությունը սովորաբար պարզ է լինում, երբ դրանք դրվում են նյութական նշանակություն ունեցող բառերի կամ խոսքերի հետ, նա գրում է, որ եղանակավորող բառերը կամ մասնիկները՝ թերևս, գուցե, ևո, ապաթեն, արդյոք, գոնե, գեթ, իբր թե, միթե, գրեթե, կարծես, կարծյոք, անշուշտ, հազիվ թե, հավանորեն և այլն, որևէ կերպ եղանակավորում են խոսքը՝ դրվելով հաճախ բայերի և այլ բառերի վրա[1]։

Սակայն Մ. Աբեղյանին հաջորդած քերականություններում եղանակավորող բառերն ու մասնիկները չեն առանձնացվում որպես ինքնուրույն խոսքի մաս և ավանդական ձևով տեղաբաշխվում են մակբայների մեջ։ Այս հարցին հատուկ անդրադարձել է Ռ. Իշխանյանն իր «Մակբայը ժամանակակից հայերենում» հոդվածում։ Նշելով, որ հայ քերականները մակբայը գրեթե օբյեկտիվ, ինքնուրույն ուսումնասիրության չեն ենթարկել և հավատարիմ են մնացել Դիոնիսիոս Թրակացու ավանդներին, որ բոլոր հայ քերականները, որպես օրենք, մակբայ են համարել այն բոլոր բառերը, որոնք նրանց ընդունած խոսքի մասերից որևէ մեկը համարվել չեն կարող,

[1] Տե՛ս Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 131։

Ռ. Իշխանյանը գրում է. «Ահա այս հանգամանքն է, որ ամենից ավելի խճողում է մակբայի վիճակը հայ քերականության մեջ, և դրա վրա է, որ հայ քերականները համառորեն ուշադրություն չեն դարձրել, կարծես դիտմամբ խուսափելով մեր քերականության այդ մութ անկյունը լուսավորելուց, մի անկյուն, որտեղ այնքան դյուրին կարելի է թաքցնել այլ և այլ քերականական սիստեմների մի շարք թույլ կողմերը»[2]։

Ելնելով այն դրույթից, որ մակբայները ցույց են տալիս գործողության հատկանիշ, Ռ. Իշխանյանը գտնում է, որ ժամանակակից հայերենի բառապաշարի մեջ անջատվում են մի շարք միավորներ, որոնք այդ հատկանիշով բնորոշվել չեն կարող։ Այդպիսի բառեր են՝ իհարկե, միթե, կարծյոք, գուցե, երևի, ափսոս, երանի, անշուշտ, անպայման, արդյոք, հավանաբար, ի դեպ, ի միջի այլոց, ահա, այո, ոչ, ամառակույս, անպատճառ, դժբախտաբար, բա, դե, ախր *և այլն։ Դրանք ցույց են տալիս խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը որևէ իրական փաստի կամ դատողության ու մտքի նկատմամբ և իրենց հիմնական իմաստով ու շարահյուսական կիրառություններով տարբերվելով մակբայներից՝ կազմում են հայերենի եղանակավորող բառերի խումբը։ Ռ. Իշխանյանը այնուհետև այն միտքն է հայտնում, որ եթե եղանակավորող բառերը որևէ խոսքի մասի հետ որոշ իմաստային նմանություն ունեն էլ, ապա դա ձայնարկությունների հետ է, բայց ոչ երբեք մակբայների հետ։*

Եղանակավորող բառերից զատ, Ռ. Իշխանյանն ընդունում է նաև մի այլ խոսքի մաս՝ մասնիկներ, որոնք են՝ գեթ, լոկ, միայն, հենց, սոսկ, թեկուզ, նույնիսկ, գոնե, մանավանդ, էլ, ևս, նաև *և այլն։ Այս բառերը իրենց բառային իմաստով մոտենում են եղանակավորող բառերին, իսկ շարահյուսական կիրառության ժամանակ դրսևորում են որոշ շաղկապական հատկություններ։ Մասնիկներն ընդհանրապես շեշտող կամ թուլացնող հատկություն ունեն։ Խոսքի մեջ նրանք շեշտավածության, թուլության երանգներ են վերագրում զանազան*

---

[2] *Երևանի պետական համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», 1948, № 4, էջ 154։*

խոսքի մասերով արտահայտված նախադասության անդամներին։ Կարծում ենք, որ հեղինակի այս դատողությունների մեջ հակասականություն կա. չէ՞ որ վերջիվերջո բառերի ընդհանուր իմաստը մշակվում է նրանց շարահյուսական կիրառությունների մեջ և շարահյուսական կիրառությունների հետևանքով, իսկ դրանք իրենց հերթին բխում և պայմանավորված են բառերի ընդհանուր իմաստներով։ Այնպես որ ինչ-որ բառեր չեն կարող բառային իմաստով մոտենալ եղանակավորող բառերին, իսկ շարահյուսական կիրառության ժամանակ դրսևորել շաղկապական հատկություններ։

Եղանակավորող բառերի և մասնիկների առանձնացման հարցին անդրադարձել է նաև Ա. Աբրահամյանը՝ գրելով. «Մեր արդի գրական լեզվում բավականաչափ հիմքեր կան եղանակավորող բառերի կատեգորիայի, ինչպես նաև մասնիկների ճանաչման համար»[3]։ Միևնույն ժամանակ գրաբարի քերականների մեջ առաջինը նույն հեղինակը եղանակավորող բառերը ներկայացնում է որպես առանձին խոսքի մաս և դրանք դասակարգում հաստատական, երկբայական, հարցական, ժխտական և ցուցական տեսակների մեջ[4]։

Մակբայների ուսումնասիրության կապակցությամբ եղանակավորող բառերը բավականին մանրամասն քննության են ենթարկված Ա. Քյուրքչյանի «Հայերենի մակբայները» դիսերտացիոն աշխատության մեջ[5]։

Այսքանով նախապայմաններ են ստեղծվում եղանակավորող բառերի, որպես առանձին խոսքի մասի, ամբողջական ուսումնասիրության համար, որը և կատարվում է Ս. Աբրահամյանի կողմից։ Նրա «Չթեքվող խոսքի մասերը ժամանակակից հայերենում» աշխատության բաժիններից մեկը նվիրված է եղանակավորող բառերի քննությանը։ Այս աշխատությունը երկրորդ հրատարակությամբ և ընդարձակ ներածությամբ լույս տեսավ 1965 թվին՝ «Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհա-

[3] Հայոց լեզվի ուսուցման հիմունքները միջնակարգ դպրոցում, Երևան, 1951, էջ 13։

[4] Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964, էջ 280։

[5] А. Кюркчян, Наречие в армянском языке, автореферат, Ереван, 1956:

րաբերութիւնը ժամանակակից հայերենում» վերնագրով։ Մեջբերումները կատարվում են ըստ վերջին գրքի։

Ներկայացնելով այս բառերի ուսումնասիրության համառոտ պատմությունը՝ Ս. Աբրահամյանը, ելնելով խոսքի մասերի որոշման իմաստաբանական հիմունքից, գտնում է, որ եղանակավորող բառերը պետք է առանձնացվեն որպես առանձին խոսքի մաս։ Քննադատելով մակբայների և եղանակավորող բառերի նույնացման տեսակետը և ի մի բերելով ռուս ու հայ քերականների՝ այս բառախմբերի՝ դրսևորած առանձնահատկությունների մասին արտահայտած կարծիքները՝ նա մակբայների և եղանակավորող բառերի մեջ տեսնում է հետևյալ տարբերությունները։

1. Եթե մակբայները ցույց են տալիս հատկանիշի օբյեկտիվ հատկանիշ, ապա եղանակավորող բառերը այս կամ այն երանգն են հաղորդում նախադասության մտքին, խոսողի վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության, առարկայի նկատմամբ։

2. Եղանակավորող բառերը չունեն նյութական իմաստ (առարկայի ու հատկանիշի իմաստ), և դրանով նրանք հակադրվում են թե՛ մակբայներին և թե՛ նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերին։

3. Եթե մակբայները դրվում են հատկանիշ ցույց տվող բառերի վրա, ապա եղանակավորող բառերը գերազանցապես դրվում են նախադասությունների, ինչպես և նախադասության անդամների վրա, անկախ այն բանից, թե վերջիններս ինչ խոսքի մասերով են արտահայտված։

4. Եթե մակբայները կատարում են պարագայի ֆունկցիա, որի տեսակը որոշվում է մակբայի իմաստային առանձնահատկությամբ, ապա եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն դառնում[6]։

Ելնելով այս բոլորից՝ հեղինակը եզրակացնում է, որ եղանակավորող բառերը թե՛ ընդհանուր իմաստով, թե՛ կիրառական-շարահյուսական հատկանիշներով ուրույն տեղ են

[6] *Տե՛ս* Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, էջ 503—504։*

գրավում խոսքի մասերի համակարգում և պետք է դիտվեն որպես մակբայներից զատ առանձին կարգի բառեր։

Հետևելով մի շարք քերականների շարադրանքին՝ Ս. Աբրահամյանը գրում է, որ որպես խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն արտահայտող միավորներ, եղանակավորող բառերն առաջին հայացքից կարող են թվալ ձայնարկությունների նման։ Նման դրանց մեջ կան ձևերը (կազմություն) և իմաստային էական տարբերություններ։

Այս բառախմբերի կազմության տարբերությունը արտահայտվում է նրանում, որ «Եթե բուն ձայնարկությունների ճնշող մեծամասնությունը կազմված է մեկ, երկու, երեք հնչյուններից (ա՛, օ՛, է՛, ո՛ւ, ը՛, ի՛, ա՛յ, օ՛յ, ո՛ւյ, է՛հ, օ՛հ, վա՛յ, վո՛ւյ, վա՛շ, վի՛շ և այլն), և, ինչպես երևում է, հայերենի նույնիսկ յուրաքանչյուր ձայնավոր կարող է ձևավորվել որպես ձայնարկություն, ապա եղանակավորող բառերը իրենց կազմի մեջ ունեն ձևույթներ, քանի որ ժամանակին (երբ դեռ եղանակավորող բառեր չէին) դրանցից էլ կազմվել են (իհարկե<ի+հարկ+է, իրավ<իր+ավ, հարկավ<հարկ+ավ, կարծես<կարծ+ես և այլն), թեև այս ձևույթները այլևս չեն պահպանում իրենց նախկին իմաստն ու դերը»[7]։

Այս երկու բառախմբերի իմաստային տարբերությունը հանգում է նրան, որ «Ձայնարկությունները հիմնականում զգացական վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառերը՝ հիմնականում մտածական, դատողական վերաբերմունք»[8]։

Խոսելով եղանակավորող բառերի և այլ խոսքի մասերի հարաբերակցության մասին՝ հեղինակը նշում է, որ թեև եղանակավորող բառերը ժամանակակից հայերենում ձևավորված ինքնուրույն խոսքի մաս են, այնուամենայնիվ խստորեն սահմանազատված չեն մյուս խոսքի մասերից[9]։ Նա բերում է մի շարք բառեր, որոնք ժամանակակից հայերենում ըստ կիրառության թե՛ եղանակավորող բառեր են և թե՛ պատկանում

---

[7] Անդ, էջ 504։

[8] Անդ, էջ 505։

[9] Անդ, էջ 505։

են այլ խոսքի մասերի, օրինակ՝ թող, ասես, չլինի՞, ապա, ի միջի այլոց, անգամ, իսկ և *այլն:*

Ըստ Ս. Աբրահամյանի, ժամանակակից հայերենի եղանակավորող բառերը հետևյալներն են՝ իրոք, իրավ, իրավամբ, արդարև, իսկապես, ճիրավի, ճարկավ, ճավաստյավ, արդյոք, անշուշտ, անտարակույս, ահա, անավասիկ, գուցե, միգուցե, միթե, թերևս, նույնիսկ, անգամ, միայն, ինչևէ, ինչևիցե, կարծեմ, կարծես, ասես, գոնե, լոկ, մանավանդ, նամանավանդ, հատկապես, ճո, խոմ, այո, ոչ, իբր, հենց, թող, դե, մի, չլինի՞, նույնիսկ, գեթ, սոսկ, այնուամենայնիվ, ապա, հապա: *Սակայն պետք է նշել, որ այս բառերի մի մասը ավելի շաղկապների, քան թե եղանակավորող բառերի ֆունկցիայով են հանդես գալիս, օրինակ՝* նույնիսկ, անգամ, միայն, ինչևէ, ինչևիցե, մանավանդ, նամանավանդ, այնուամենայնիվ:

Հեղինակն ընդունում է նաև բաղադրյալ ու նկարագրական եղանակավորող բառեր՝ միևնույն իսկ, միևնույն անգամ, իսկ և իսկ, իբր թե, իբրև թե, իսկապես որ, ինչ էլ լինի, ինչ խոսք, առանց այլևայլության, ով գիտի, ըստ երևույթին, ինչ գնով էլ լինի, դժվար թե, ճազիվ թե, ուր մնաց թե, ուր մնաց, էլ ուր մնաց, ճիշտ որ, ճշմարիտ որ և *այլն: Այստեղ կրկին նշենք, որ բերված բառերից մի քանիսը ավելի շաղկապական ֆունկցիայով են հանդես գալիս, օրինակ՝* միևնույն իսկ, միևնույն անգամ:

Քննելով եղանակավորող բառերի կազմությունը՝ Ս. Աբրահամյանն ընդունում է եղանակավորող բառերի հետևյալ տեսակները. պարզ *(այո, ոչ, թող և այլն),* բարդական ձևերից առաջացած *(իհարկե, արդարև, հարկավ և այլն),* ածանցավոր *(անտարակույս, անկասկած, իսկապես, հավանաբար և այլն) և* բարդ *ու* նկարագրական *եղանակավորող բառեր (ահավասիկ, թերևս, նույնիսկ, կարծես թե, ինչ խոսք, ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ուր մնաց թե և այլն):*

Նա այնուհետև կատարում է եղանակավորող բառերի իմաստային դասակարգումը, որը հիմնված է խոսողի տարբեր վերաբերմունքների վրա: Եղանակավորող բառերն ըստ իմաստի լինում են՝ ՀԱՍՏԱՏԱԿԱՆ՝ արդարև, իսկապես, իհարկե, ճարկավ, ճավաստյավ, իրոք, իրավ, ինչպես չէ, ինչ խոսք,

իսկ և իսկ, անպատճառ, անշուշտ, անկասկած, անտարակույս *և այլն*, ՅՈՒՅԱԿԱՆ՝ աճա, աճավասիկ, ԵՐԿԲԱՅԱԿԱՆ՝ կարծես, կարծեմ, կարծես թե, ասես, թերևս, երևի *(երկբայական-հավանականության)*, իբր, իբր թե, իբրև թե *(երկբայական-անհավանականության)*, գուցե, միգուցե, չլինի, չլինի թե, արդյոք, միթե, ճո, խոմ *(երկբայական-հարցական)*, ՍԱՍՏԿԱԿԱՆ՝ նույնիսկ, անգամ, մինչև իսկ, մինչև անգամ, իսկ, մանավանդ, նամանավանդ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ՝ գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն, ԿԱՄԱՅԻՆ՝ թող, դե, հապա, ապա, մի, ՋԻՋԱԿԱՆ՝ ինչևէ, ինչևիցե, ինչ որ է, համենայն դեպս, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, ինչ էլ լինի *և այլն*, ԺԽՏԱԿԱՆ՝ ոչ, չէ, ԲԱՂԱՆՔԻ՝ երանի, երնեկ, երանի թե, երնեկ թե, ուր է թե, ուր է[10]։

Եղանակավորող բառերն ընդարձակ ու մանրամասն քննության են ենթարկված Վ. Ավագյանի «Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերը» դիսերտացիոն աշխատության մեջ[11]։ *Հեղինակը ներկայացնում է հարցի պատմությունը, վերլուծում եղանակավորող բառերի խոսքիմասային առանձնահատկությունները, նրանց կազմությունը, այլ խոսքի մասերի հետ ունեցած փոխհարաբերությունները, իմաստային յուրահատկությունները և շարահյուսական կիրառությունները։ Ս. Աբրահամյանի հետազոտությունից հետո վերոհիշյալ աշխատությունը ժամանակակից հայերենի եղանակավորող բառերի քննության նվիրված երկրորդ ընդարձակ ուսումնասիրությունն է։*

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

83. ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ.— *Հայ քերականների դրույթների ու տեսակետների շարադրմամբ ու ներկայացմամբ գոնե ընդհանուր ձևով ուրվագծվեցին եղանակավորող բառերի, որպես առանձին խոսքի մասի, անջատման անհրաժեշտությունը, այդ*

[10] *Տե՛ս անդ, էջ 516—532։*

[11] *Տե՛ս* В. Авакян, Модальные слова современного армянского языка, автореферат, Ереван, 1972:

խոսքի մասի իմաստային առանձնահատկությունները, ընդգրկման սահմանները և շարահյուսական կիրառության առանձնահատկությունները։ Մտորև աշխատում ենք շեշտը դնել այն հարցերի վրա, որոնք, մեր կարծիքով, բավարար չափով չեն լուսաբանված կամ վիճաբանությունների ու տարակարծությունների առիթ են տալիս։

Ամենից առաջ եղանակավոր բառերի, որպես յուրահատուկ բառախմբի կամ խոսքի մասի, առաջացման կամ կազմավորման հարցի մասին։

Լեզվաբանական գրականության մեջ իրավացիորեն այն կարծիքն է իշխում, որ եղանակավորող բառերը պատկանում են համեմատաբար ուշ առաջացած խոսքի մասերի թվին։ Այս կարծիքը հավաստվում է նրանով, որ եղանակավորող բառերի մի զգալի մասը պատմականորեն առաջանում է զանազան խոսքի մասերի պատկանող բառերից՝ վերջիններիս իմաստային յուրահատուկ զարգացման հետևանքով։ Այս տեսակետն ընդհանրապես ճիշտ պետք է համարել, և ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ եղանակավորող բառերն առաջանում են «օբյեկտիվ» խոսքի մասերի մեջ մտնող որոշ բառերից՝ նրանց մեջ գուցե և ի սկզբանե առկա եղանակավորության, կերպայնության երանգի զարգացմամբ, ծավալմամբ ու գերիշխմամբ։

Սակայն երբ ասում ենք, որ եղանակավորող բառերը պատկանում են ուշ առաջացած խոսքի մասերի թվին, այդ բոլորովին էլ չի նշանակում, ասենք, թե նրանք լեզվի պատմության հին շրջաններում գոյության չեն ունեցել։ Խոսքը կոնկրետացնելով հայերենի մասին՝ պետք է նշել, որ մեր հին լեզվում՝ գրաբարում արդեն կար նախադասության կամ նրա առանձին անդամներին սուբյեկտիվ, կերպայնության երանգ հաղորդող բառերի մի զգալի քանակ։

Արդի հայերենի եղանակավորող բառերի մի զգալի մասը՝ **միթե, գուցե, աճուկտ, արդյոք, ճավաստյավ, ճիրավի, արդարև, իբր, թերևս, թող, ահա, աճավասիկ, այո,** *գալիս է գրաբարից, և մեր հին լեզվում բերված բառերը գործածվում են համարյա նույն իմաստներով, ինչ ժամանակակից լեզվում։ Ահա համապատասխան օրինակներ գրաբարից։*

«Միթէ քա՞ր տայցէ նմա... Միթէ օ՞ձ տայցէ նմա». «Միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող». «Միթէ սա՞ իցէ Քրիստոսն». «Զերծիր ի լեառն, գուցէ ընդ նոսա ըմբռնիցիս». «Կուցէ երբէք յափշտակիցէ». «Այդ այդպէս է աճչուչտ». «Աճչուչտ զհաւատարիմ սէրն ի մէջ թագաւորութեանցն պահեցեն». «Իսկ արդ որ ննջեցին ի Քրիստոս, կորեա՞ն արդեօք». «Իցէ՞ արդեօք յուսալի». «Արդեօք լուա՞յց, արդեօք տեսի՞ց». «Ծանուցաւ հաւաստեաւ». «Հաւաստեաւ ասել, պատմել, վիպել, ցուցանել, ուսանել, հայել». «Յիրաւի չարշարեցան ըստ իւրեանց չարութեան». «Հիրաւի խոնարհեցուցէր զիս». «Հիրաւի կոչեցաւ անուն նորա Յակոբ». «Արդարև քոյր իմ է՝ ի հօրէ, և ոչ ի մօրէ». «Արդարև որդի աստուծոյ ես դու». «Արդարև յարեալ տէր և երևեցաւ Սիմոնի». «Զաւուն արդարև ես աւերեսցի». «Թերևս տացէ նոցա Աստուած». «Խնդիրս արարեալ... իբր անկար գոլով ձիաւարել». «Զձև շարագրի ցուցանելով՝ իբր հաստատութեան լինել պատմող». «Իբր եթէ ոչ գիտեմք զայս». «Թող հանից զշիշդ». «Թող տեսցուք». «Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին». «Թող ինքն նախ երթայր և առնոյր զթագաւորութիւնն». «Աճա փեսայ գայ». «Աճա մայր քո». «Եւ աճա հղասցիս». «Աճա երևեցաւ հրեշտակ տեառն». «Աճաւասիկ աստ է Քրիստոսն». «Աճաւասիկ ես». «Աճաւասիկ կամ». «Աճաւադիկ եռու ձեզ ամենայն խոտ». «Աճաւանիկ ի խորանի անդ է». «Այո՛, օրհնելով օրհնեցից զքեզ». «Ա՞յդ է ուրախութիւն. և նա ասէ. այո՛, այս է». «Ուստի՞ գաս, թերևս յարքայութենէ անտի. և ասէ. այո իսկ, յարքայութենէ անտի գամ». «Եւ ասացին. այո՛, այո՛, տեսին աչք մեր»[12]։

Ժամանակակից հայերենի քերականութիւններում եղանակավորող բառեր են համարվում նաև սուտ, գեթ, լոկ, գոնե, միայն, անգամ, մանավանդ *բառերը, որոնք ևս գալիս են զրաբարից, որտեղ գործածվել են համարյա նույն իմաստներով, ինչ ժամանակակից հայերենում։ Օրինակներ.*

«Ոչ թերահաւատեաց սիրտ նորա, այլ սուտ բերան նո-

[12] *Սրանք և հաջորդ զրաբարյան օրինակները վերցված են Նոր Հայկազեան բառարանից։*

րա». «Զոր եկեալ տէրն գտցէ՝ ոչ արարեալ սոսկ, *այլ արարեալ այնպէս». «Եւ թէ օրհնել չօրհնիցեն,* գէթ *յանիծից լռեա». «Գէթ սակաւ ինչ մասնաւորել զնա». «Մինչև բառնաբաս* անգամ *խոնարհեցաւ». «Եւ հաց* անգամ *չժամանէին ուտել». «Զի և թաղելոյ* անգամ *չէին բաւական կենդանիքն». «Թէ միայն մերձանամ ի հանդերձս նորա, փրկիմ». «Բայց միայն հաւատա». «Ոչ մնաց, բայց միայն ցեղն Հուդայ». «Գոնէ արդ պատմեա ինձ». «Գոնէ ի քղանս հանդերձի նորա մերձանայցեմ». «Գոնէ հովանին նորա հասցէ ումեք ի նոցանէ». «Գոնեայ յայսմհետէ զգաստացարուք». «Բայց միայն լոկ զմիմիանս քաջալերէին». «Լոկ յաղօթս առնելով վախճան իւրումն հայցէր ծնողի». «Երանելի է մանաւանդ տալն՝ քան առնուլն». «Մորմոքէին մանաւանդ ի վերայ բանին»։*

Կան մի քանի բառեր էլ, որ արդի հայերենում եղանակավորութեան իմաստ ունեն, բայց գրաբարում եղել են ածականներ, մակբայներ կամ գոյականի կենդանի հոլովական ձևեր։ Այսպիսի բառեր են՝ անտարակոյս, անկասկած, իրավամբ, իրավ, հարկավ, իհարկե, իրոք։ *Ահա համապատասխան օրինակներ։*

«Անտարակոյս *վստահութիւն կամ գիւտ». «Անտարակոյս մտածութիւն». «Անկասկած ի դուրս ելեալ ի քաղաքէն». «Յանկասկած տեղի հեռացուցեալ». «Իրաւամբ մատնէր դատաւորին». «Արդար ասէիր,* իրաւ *ասէիր». «Դատ վարէին,* իրաւ *գտանէին». «Հարկաւ ի ձեռս ետ նոցա զԴանիէլ». «Ոչ կամէր բռնութեամբ և հարկաւ ունել զնոսա». «Հարկաւ հաւանեսցի». «Ոչ եթէ հարկաւ եկն յաշխարհ, այլ կամօք և յօժարութեամբ». «Զի մի բարիքդ քո ի հարկէ լինիցին, այլ կամաւ». «Պատերազմեցաք ընդ քեզ ի հարկէ և ոչ ի կամաց». «Իրոք բարկացուսցես և բանիւք հաշտեցուսցես»։*

Բերված փաստերից կարելի է եզրակացնել, որ եղանակավորող բառերի կարգը, համենայն դեպս, այնքան էլ նոր կարգ չէ, և նրա սկզբնավորումը պետք է որոնել լեզվի պատմության վաղնջական շրջաններում։ Անշուշտ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գրավոր ձևով մեզ ավանդված հայերենի հնագույն շրջանում եղանակավորող բառերի կարգն արդեն գոյություն է ունեցել։

Այնուհետև, եղանակավորող բառերի կազմի ուշադիր քննությամբ կարելի է գալ այն եզրակացության, որ, որպես կանոն, եղանակավորող բառերի են վերածվում այնպիսի ձևեր, որոնց բառային իմաստի մեջ արդեն իսկ կան կերպայնության, եղանակայնության, խոսողի դատողական կամ զգացմունքային վերաբերմունքի երանգներ. ինչպես՝ կարծիք (Կարծյոք նա բանաստեղծություններ է գրում. Կարծեմ եկել է. Կարծես հիվանդ է), ճարկ (Նա, իճարկե, համաձայն է մեզ հետ. Տոնը, ճարկավ, սեփական էր), տարակույս (Նա, անտարակույս, մեծ բանաստեղծ է. Անտարակույս, մենք կհաղթենք), իրավունք (Նա, իրավամբ, համարվում է հայ ամենամեծ բանաստեղծը. Հիրավի, այսպիսի պայծառ մտածողություն կարող են ունենալ միայն մեծ մարդիկ), ճավաստիք (Հավաստյավ, նա քաջ, անվախ ու անվեհեր մարդ էր), ճավանություն (Հավանորեն այս հարցը դրականորեն կլուծվի. Հավանաբար առաջադրանքները կգերակատարվեն) և այլն:

Այժմ եղանակավորող բառերի արտահայտած իմաստների բնույթի մասին: Ռուս, ինչպես նաև հայ քերականության մեջ անվերապահորեն այն դրույթն է զարգացվում, թե եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից: Ս. Աբրահամյանը վճռականորեն գրում է. «Եղանակավորող բառերը չունեն նյութական իմաստ (առարկայի ու հատկանիշի իմաստ), և դրանով նրանք հակադրվում են թե՛ մակբայներին և թե՛ նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերին»[13]: Նույնն է ասում նաև Վ. Ավագյանը՝ գրելով. «Եղանակավորող բառերը զուրկ են նյութական նշանակություններից և չունեն անվանողական ֆունկցիա»[14]:

Իհարկե, եթե նյութական իմաստ ասելով սոսկ հասկանանք առարկայի և հատկանիշի իմաստ ֆիզիկական իմաստով, ապա, իրոք, եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից: Բայց այս դեպքում չպետք է մոռանալ նաև այն, որ եթե նյութականությանը մոտենանք սոսկ ֆիզիկական տեսակետից, ապա աննյութական կարող են համարվել անգամ «ամենանյութական» խոսքի մասերից մեկի՝

[13] Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 503:

[14] В. Авакян, Модальные слова..., էջ 15:

գոյականի որոշ խմբեր, ինչպես՝ լավություն, մեծամտություն, վատություն, հիմարություն, երեխայություն և ընդհանրապես բոլոր վերացական գոյականները։ Որպեսզի ապացուցված համարվեր այն կարծիքը, թե եղանակավորող բառերը զուրկ են նյութական իմաստից, պետք է ապացուցվեր, որ եղանակավորող բառերը, ինչպես, ասենք, կապերն ու շաղկապներն են, խոսքի մեջ սոսկ կատարում են քերականական դեր՝ ծառայելով բառերի ու նախադասությունների կապի իրագործմանը։ Այնինչ միանգամայն պարզ է, որ եղանակավորող բառերը կապակցական դեր չեն կատարում, լեզվի քերականական միջոցներին չեն պատկանում։ Մեր կարծիքով, ժամանակակից հայերենի քերականություններում եղանակավորող համարվող բառերի գոնե մի զգալի մասը, օրինակ՝ երևի, գուցե, թերևս, իհարկե, անշուշտ, անպատճառ, անպայման, դժբախտաբար, բարեբախտաբար և այլն, որպես խոսողի դատողական վերաբերմունքի արտահայտություններ, հավասարազոր և հավասարարժեք են նյութական իմաստ արտահայտող մյուս բառախմբերին։ Որ եղանակավորող բառերը նյութական իմաստ են արտահայտում, լիարժեք բառեր են—գուցե ապացուցվում է միայն նրանով, որ նրանք խոսքի մեջ հաճախ հանդես են գալիս որպես ամբողջական նախադասությունների փոխարինիչներ, օրինակ՝ «—Դու այսօր նրան տեսնելո՞ւ ես։ —Իհարկե». «—Հավատացած եմ, որ կաշխատես ավելին անել։ —Անշուշտ». «—Կարծում եմ, որ նա մեզ կպաշտպանի։ —Երևի»։ Ջենք խոսում այո և ոչ բառերի մասին, որոնք համարվում են եղանակավորողներ և որոնց հիմնական ֆունկցիան պատասխանական նախադասությունների մեջ ունեցած այսպիսի կիրառությունն է. «—Դու գալո՞ւ ես։ —Այո». «—Նա մեզ հետ կլինի՞։ —Ոչ» և այլն։

Սրանից բխում է երկրորդ հարցը՝ եղանակավորող բառերը նախադասության անդամ դառնո՞ւմ են, թե՞ ոչ։ Որոշ հայ քերականներ գտնում են, թե եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն դառնում։ Եղանակավորող բառերը հակադրելով մակբայներին՝ Ս. Աբրահամյանը գրում է. «Թեև մակբայները կատարում են պարագայի ֆունկցիա, որի տեսակը որոշվում է մակբայի իմաստային առանձնահատկու-

թյամբ, ապա եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն լինում»[15]*։ Այս նույն կարծիքին է նաև Վ. Ավագյանը, որը գրում է. «Եղանակավորող բառերը միայն հարաբերություններ են արտահայտում և չեն կարող նախադասության անդամի դեր կատարել»*[16]*։*

Հակառակ սրանց՝ Մ. Աբեղյանն ու Վ. Առաքելյանը գրտնում են, որ եղանակավորող բառերը նախադասության անդամ են դառնում։ Այսպես, Մ. Աբեղյանը հիմունքի պարագաների մեջ որպես առանձին խումբ առանձնացնում է եղանակի պարագան, որը «ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը դեպի խոսքի բովանդակությունը։ Օրինակ՝ —Մենք անպատճառ պետք է գնանք, նրան տեսնենք։ —Նա գուցե վաղը կգա մեզ մոտ։ —Դու իսկապես խելոք վարվեցիր»[17]*։*

Անդրադառնալով այս նույն հարցին՝ Վ. Առաքելյանն ընդունում է վերաբերմունքի և հավաստիության պարագաներ։ Նա գրում է. «Վերաբերմունքի պարագա են դառնում երկբայական մակբայները, որոնք ցույց են տալիս գործողության թեական, ոչ հաստատուն լինելը։ Այդպիսի մակբայներ են՝ արդյոք, կարծես, ասես, գրեթե, կարծյոք, գուցե, գուցե թե, թերևս, համարյա, համարյա թե, հավանորեն, իցե թե, միթե, ըստ երևույթին, դժվար թե, իբր թե»[18]*։ «Վերաբերմունքի պարագային հակադիր է հավաստիության պարագան, որն արտահայտում է ստորոգյալի գործողության հաստատական, ոչ թեական լինելը։ Հավաստիության պարագա են դառնում՝ իճարկե, հավաստյավ, իրոք, անշուշտ, անպատճառ, անկասկած, անխոս, հարկավ, իսկապես, արդարև, իրավ (որ), անպայման»*[19]*։ Միևնույն ժամանակ՝ ներքնապես վիճելով այն քերականների հետ, որոնք վերոբերյալ բառերը նախադասության անդամ չեն համարում, Վ. Առաքելյանը գրում է նաև հետևյալը. «Վերաբերմունքի պարագա արտահայտող բառերը այժմ դիտվում են իբրև եղանակավորող*

---

[15] Ս. Աբրահամյան, *Զրնգվող խոսքի մասերը..., էջ 503—504։*

[16] В. Авакян, Модальные слова..., էջ 16:

[17] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 381։*

[18] Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, Ա, էջ 393։*

[19] *Անդ, էջ 394։*

բառեր և ավել կամ պակաս չափով ցույց են տալիս խոսողի վերաբերմունքը իր կողմից ասվածի հանդեպ։ Դրանց մեջ կան այնպիսիները, որոնք արդարև միջանկյալ բառեր են և չեն կարող լրացում դառնալ, բայց և կան բառեր, որոնք խոսողի վերաբերմունքը արտահայտելով հանդերձ՝ երանգավորում են ստորոգյալը այս կամ այն ուղղությամբ, այսինքն յուրահատուկ լրացումներ են, որոնք միանգամից անտես առնել անհնար է»[20]։

Կարծում ենք, որ Մ. Աբեղյանը և Վ. Առաքելյանը հարցի լուծմանը մոտենում են ճիշտ դիրքերից։ Նվ իրոք, չի կարելի պատճառաբանված համարել այն մոտեցումը, որ, ասենք, «Նա երևի գա», «Գուցե գրի», «Թերևս հանդիպի», «Անպայման կտեսնի», «Անպատճառ կասի» և այլ նման տիպի կիրառություններում երևի, գուցե, թերևս, անպայման, անպատճառ և նման բառերը նախադասության անդամ չեն համարվում սոսկ այն հիմունքով, թե դրանք խոսողի սուբյեկտիվ-անձնական վերաբերմունքն են արտահայտում։ Չի կարելի համաձայնել այն կարծիքին, թե, իբր, «նախադասության մեջ եղանակավորող բառի և նախադասության որևէ անդամի կապը միայն իմաստային է լինում և ոչ երբեք շարահյուսական-իմաստային»։ Նախ՝ պարզ չէ, թե ինչ բովանդակություն է դրվում «իմաստային կապ» և «շարահյուսական-իմաստային կապ» հասկացությունների մեջ։ Մյուս կողմից՝ մենք կապակցության ոչ մի տարբերություն չենք տեսնում և հնարավոր էլ չի տեսնել, ասենք, «Նա իսկույն կգա» և «Նա երևի կգա», «Նա արագ կգա» և «Նա անպատճառ կգա», «Նա դանդաղ կգա» և «Նա գուցե կգա» զուգադրվող ձևերի միջև։ Եթե «Նա իսկույն կգա» նախադասության իսկույն և կգա բառերի կապը շարահյուսական-իմաստային ենք համարում, ապա այդպիսին պետք է համարենք նաև «Նա երևի կգա» նախադասության երևի և կգա բառերի կապը։ Իսկ եթե այդ կապը սոսկ իմաստային ենք համարում առաջին նախադասության մեջ, այսպիսին պետք է համարենք նաև երկրորդ նախադասության մեջ։ Մի խոսքով, «Նա իսկույն կգա»

[20] Անդ, էջ 395։

և «նա երևի կգա» նախադասություններում բառերի կապակցությունների տարբերություններ ցույց տալ հնարավոր չէ։

Հասկանալի է, որ մեր ասածը չի վերաբերում բոլոր եղանակավորող բառերին և նրանց բոլոր կիրառություններին։ Արտահայտելով խոսողի վերաբերմունքը՝ եղանակավորող բառերը հաճախ հանդես են գալիս որպես միջանկյալ բառեր՝ ամբողջ նախադասությանը հաղորդելով խոսողի դատողական վերաբերմունքի այս կամ այն երանգը։ Այս դեպքում նրանք շարահյուսական հարաբերության մեջ չեն մտնում որոշակի բառերի հետ և այս պատճառով էլ նախադասության անդամի պաշտոն չեն կատարում։ Բայց դեպքերի մեծամասնության մեջ նրանք շարահյուսական հարաբերության մեջ են մտնում և իմաստով կապվում որոշակի բառերի հետ՝ հանդես գալով եղանակավորող զանազան պարագաների պաշտոնով, օրինակ՝ «Այդ պատերազմի ավերածության և փլատակների տակ նա երևի կթաղի իր զգացմունքը, երևի կկորցնի մի էակ, որին նվիրել է իր առաջին սերը» (ԴԴ, 287). «Նա իրեն ձերբակալող սպաներին ասաց, որ երևի մոլորվել են» (Սե, 30). «Թերևս հանգստանում էր նա Բաբիկի անկեղծ ու կոպիտ կշտամբանքներով» (ԴԴ, 40). «Սկզբում նրանք զարմացած և թերևս երկյուղած էին նայում» (ԴԴ, 222). «—Արաժանը քաշե՞լ եք, լա՛վ, որ քաշել եք, դե իհարկե կգամ» (ՎԱ, 10). «Դու անշուշտ իմացար դժբախտությունը՝ մեր հոգևորների և իշխանների ապերասան պատասխանը» (ԴԴ, 218) և այլն։

Ռուս և հայ քերականագիտության մեջ իրավացիորեն նըշվել է, որ, ի տարբերություն մակբայների, որոնք, որպես կանոն, դրվում են բայերի և ածականների վրա, եղանակավորող բառերի գոնե մի զգալի մասը կիրառական այսպիսի սահմանափակում չունի և կարող է դրվել նյութական իմաստ արտահայտող բոլոր խոսքի մասերի վրա, օրինակ՝ «Գուցե գնա», «Գուցե ուսանող է», «Գուցե կարմիր է», «Գուցե երկու հոգի են եղել», «Գուցե դանդաղ է գնացել», «Գուցե նա է եղել» և այլն։ Սակայն դրա հետ միաժամանակ հատուկ պետք է շեշտել եղանակավորող բառերի կիրառական մի

առանձնահատկությունը ևս, որի վրա քերականները, համեմատաբար դեպի, քիչ ուշադրություն են դարձրել։ Այդ յուրահատկությունն այն է, որ եղանակավորող բառերը խոսքից, նախադասությունից դուրս, որպես կանոն, անկախ բառակապակցությունների բաղադրիչ հանդես գալ չեն կարող։ Այսպես, եթե խոսքից, նախադասությունից դուրս էլ ազատ կազմվում են, ասենք, կարմիր մատիտ, բարձր պատ, մաքուր փողոց, արագ գնալ, դանդաղ գրել, ճիշտալի խոսել և այլ բառակապակցությունները, ապա երևի մատիտ, գուցե պատ, թերևս փողոց, ըստ երևույթին գնալ, անշուշտ գրել, իհարկե խոսել բառակապակցություններ փաստորեն լեզվում գոյություն չունեն։ Այսպիսի կապակցություններ հնարավոր են միայն խոսքի, նախադասության մեջ, օրինակ՝ «Քո ձեռքինը երևի մատիտ է». «Գուցե պա՞տ դնենք և ոչ թե ցանց». «Սկզբում թերևս փողոցը մաքրենք և հետո միայն բակը». «Ըստ երևույթին գնացել է». «Անշուշտ գրել է». «Իհարկե խոսել է»։

Այս երևույթը ամենայն հավանականությամբ կարելի է բացատրել նրանով, որ խոսողի վերաբերմունքը, որպես կանոն, կարող է ձևավորվել ավարտված-ձևավորված մտածության մեջ, որի լեզվական թանձրացական արտահայտությունն է նախադասությունը։ Ահա թե ինչու նախադասությունից դուրս ոչ հնարավոր բառակապակցությունները նախադասության մեջ դառնում են հնարավոր։

Այն էլ պետք է ասել, որ եղանակավորող բառերի մեծ մասը սովորաբար վերաբերում է ստորոգյալին, ավելի ճիշտ՝ գուցե ստորոգմանը։ Մեզ այդ վերջին մտքին են մղում այն փաստերը, որ, ասենք, եղանակավորող բառերը ազատ կարող են դրվել գոյականով կամ ածականով արտահայտված ամեն մի ստորոգելիական վերադրի վրա, օրինակ՝ «Նա գուցե ուսուցիչ է, բժիշկ է, բանվոր է, ուսանող է». «Նա երևի մեծ է, փոքր է, ընդունակ է, խելոք է, չար է, բարի է» և այլն, այն դեպքում, երբ, ինչպես նշված է արդեն, երևի բժիշկ, երևի ուսանող, երևի մեծ, երևի փոքր և այլ կապակցությունները, որպես անկախ բառակապակցություններ, լեզվում փաստորեն գոյություն չունեն։

Այս հարցի հետ կապված պետք է նշել, որ եղանակավորող բառերն ազատ գործածվում են անդեմ և անվանողական նախադասություններում, օրինակ՝ «Ի՞նչ անել։ Հարցի քննարկումը գուցե հետաձգե՞լ». «—Լինե՞լ, թե՞ չլինել։ —Իհարկե՛ լինել». «Թերևս գիշերո՞վ հարձակվել թշնամու վրա». «Ահա քաղաքը». «Ահա ծովը» և այլն։ Այսպիսի կիրառություններն իրենց հերթին մի անգամ ևս ապացուցում են, որ անդեմ և անվանողական նախադասություններում ստորոգման շարահյուսական կարգը այս կամ այն կերպ արտահայտվում է։ Հենց ստորոգման առկայությամբ է պայմանավորված եղանակավորող բառերի գործածությունը անդեմ և անվանողական նախադասություններում։

Այժմ եղանակավորող բառերի իմաստային խմբերի և ընդգրկման ծավալի մասին։ Ս. Աբրահամյանն, ինչպես նշված է արդեն, ըստ իմաստային ընդհանրությունների, ընդունում է եղանակավորող բառերի հետևյալ տեսակները՝ հաստատական (արդարև, իհարկե, հարկավ, իրոք, հավաստյավ և այլն), ցուցական (ահա, ահավասիկ), երկբայական (կարծես, թերևս, իբր, գուցե, միթե, արդյոք), սաստկական (նույնիսկ, անգամ, մինչև անգամ և այլն), սահմանափակման (գեթ, գոնե, լոկ, միայն), կամային (թող, դե, հապա), զիջական (ինչևէ, ինչևիցե, համենայն դեպս, այսուամենայնիվ, այնուամենայնիվ), ժխտական (ոչ, չէ), բաղձանքի (երանի, երնեկ)[21]։ Վ. Ավագյանն իմաստային այս խմբերի վրա ավելացնում է նորերը՝ ափսոսանքի (ցավոք, դժբախտաբար), ճշգրտման և բացահայտման (արդ, դիցուք, օրինակ), խրախուսման ու խնդրանքի (կեցցես, ապրես, խընդրեմ, ներեցեք), բաժանական–լրացական (ի դեպ, ի միջի այլոց) և ընդհանուր, որոնք հանդես են գալիս վերաբերմունքային տարբեր երանգներով՝ շփման եզրեր հանդես բերելով եղանակավորող բառերի իմաստային տարբեր խմբերի հետ (հա, էլի, հո, բա, բաս, մի, ախր)[22]։

Հասկանալի է, որ եղանակավորող բառերի այս խմբա-

---

[21] Տե՛ս Ս. Աբրահամյան, Ջթեքվող խոսքի մասերը...։

[22] Տե՛ս В. Авакян, Модальные слова...։

վորումները հիմնված են նրանց բառային-նյութական իմաստների վրա։ Քանի որ յուրաքանչյուր բառ, խիստ արտահայտված, վերջիվերջո ունի միայն իրեն հատուկ և մյուսներից տարբեր բառային իմաստը, ուստի և պարզ է, որ, ելնելով բառիմաստային տարբերություններից, եղանակավորող բառերի իմաստային նորանոր խմբեր կարելի է առանձնացնել։ Այսպես, Վ. Ավագյանը նույն երկբայականների խմբի մեջ է դրել ասես, գրեթե, գուցե, դժվար թե, կարծեմ, կարծյոմ, համարյա, հավանորեն, հազիվ թե և այլ եղանակավորող բառերը[23]։ Անկասկած, բերված բառերից յուրաքանչյուրը մյուսներից տարբեր բառային իմաստ ունի և, ըստ այդմ, ամբողջ նախադասությանը կամ նրա առանձին անդամներին հաղորդում է եղանակավորության իր իմաստը, ինչպես՝ «Կարծեմ եկել է», «Գուցե եկել է», «Համարյա եկել է», «Հավանորեն եկել է», «Դժվար թե եկած լինի», «Հազիվ թե եկած լինի» և այլն։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ ավելի խիստ ու մանրամասնված իմաստային դասակարգման դեպքում համարյա յուրաքանչյուր եղանակավորող բառ կարող էր դիտվել որպես այս կամ այն խմբի միակ ներկայացուցիչ։

Հարցին մոտենալով այս ձևով՝ մենք այլևս չենք անդրադառնալու եղանակավորող բառերի իմաստային դասակարգմանը, այլ հաջորդ էջերում առանձին-առանձին ներկայացնելու ենք արդի հայերենի գործածական ու տարածված եղանակավորող բառերը և բացատրելու ենք նրանց հիմնական իմաստներն ու շարահյուսական կիրառության առանձնահատկությունները։

Մի քանի խոսք էլ եղանակավորող բառերի ընդգրկման ոլորտների մասին։ Այս խոսքի մասի ուսումնասիրությանը նվիրված քերականական ուսումնասիրություններում, որպես կանոն, ընդարձակվում են եղանակավորող բառերի ոլորտները՝ դրանց մեջ հաճախ զետեղելով ամբողջական նախադասություններ, որոնք խոսքի մեջ սովորաբար միջանկյալ նախադասությունների դեր են կատարում, դասական թվա-

[23] Անդ, էջ 29։

կաններ, շաղկապներ և մի շարք այլ բառեր, որոնք այլ խոսքիմասային կարգերի մեջ դժվար է տեղավորել։ Այսպես, Ս. Աբրահամյանը նշում է, որ կան այնպիսի բառակապակցություններ, որոնք թեև չեն վերածվել մի բառի, բայց և այնպես իմաստով հարում են եղանակավորող բառերին, նրանցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը այս կամ այն իրողության. երևույթի, առարկայի նկատմամբ։ Այսպիսի կապակցություններ են՝ ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ գնով ուզում է լինի, ուր մնաց թե, ուր է թե, ով գիտի, ով իմանա *և այլն*[24]։ *Իսկ Վ. Ավագյանը գրում է, որ եղանակավորող բառերի նշանակությամբ և դերով են գործածվում նաև այսպիսի կապակցություններ ու բառեր՝* ճիշտ է, ճշմարիտ է, մեկ է, միևնույնն է. արի, տես, բեր, եկ *(երբ գործածվում են ոչ ուղղակի նշանակությամբ),* խնդրեմ, կեցցես, կեցցեք, ներեցեք, ներողություն, եամմե, նախ, առաջին, երկրորդ, երրորդ *(երբ գործածվում են թվարկման նշանակությամբ՝ մտքերի, դատողությունների, փաստարկումների հաջորդականություն ցույց տալու համար)*[25]։

Այսպիսի մոտեցմամբ խիստ ընդարձակվում և տարտամ ու անորոշ են դառնում եղանակավորող բառերի սահմանները, որովհետև այս կարգի մեջ են ընդգրկվում այնպիսի միավորներ, որոնք իմաստով, կառուցվածքով, շարահյուսական կիրառություններով իրար հետ շփման եզրեր ամենևին չունեն։ Համեմատել, օրինակ, ճիշտ է, ճշմարիտ է, միևնույնն է *և* արի, տես, բեր, եկ, կեցցես, կեցցեք, խնդրեմ, ներեցեք *և* նախ, առաջին, երկրորդ, երրորդ *զուգադրվող ձևերը։*

Մեր կարծիքով, բերվածներից միայն կեցցես *և* կեցցեք *բառերը կարելի է համարել եղանակավորողներ, իսկ մյուսները, դրանց թվում նաև Ս. Աբրահամյանի նշածները, եղանակավորող բառերի խոսքիմասային կարգի մեջ չեն մրցում։ Նրանք կամ առանձին, ինքնուրույն նախադասություն-*

---

[24] Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը...,* էջ 513։

[25] *Տե՛ս* В. Авакян, Модальные слова..., էջ 31։

ներ են, կամ էլ այլ և այլ խոսքի մասերի մեջ մտնող սովորական բառեր, որոնցից մի մասը կարող է գործածվել նաև այս կամ այն ոճական երանգով։

Ինչևիցե, այստեղ մենք ուզում ենք հատուկ շեշտել, որ վերոհիշյալ աշխատություններում եղանակավորողների մեջ են մտցվում մի շարք բառեր, որոնք շաղկապական իմաստ և կիրառություն ունեն։ Այսպես օրինակ՝ և՛ Ս. Աբրահամյանը, և՛ վ. Ավագյանը ընդունում են սաստկական եղանակավորող բառերի խումբ, որի մեջ զետեղում են նաև ***անգամ, նույնիսկ, մինչև իսկ, մինչև անգամ, մանավանդ, նամանավանդ*** *բառերը, որոնք փաստորեն հավելման իմաստ արտահայտող շաղկապներ են։ Կամ Ս. Աբրահամյանը զիջական եղանակավորողներ է համարում* ***այուամենայնիվ, այնուամենայնիվ*** *բառերը, վ. Ավագյանը բացահայտման եղանակավորողներ է համարում* ***այսինքն, ուրեմն*** *բառերը, որոնք ևս փաստորեն շաղկապներ են։ Որ վերոհիշյալ բոլոր բառերը կապակցական դեր են կատարում—բացահայտորեն երևում և դրսևորվում է նաև հենց իրենց՝ հեղինակների բերած օրինակների մեջ, ինչպես՝ «Այնտեղ նույնիսկ կային մի քանի ավանդություններ». «Նա մինչև անգամ քրտնեց իր գիրուկ ուսերի վրա դրած ծանր ու անսովոր բեռան տակ». «Մի խանութի առաջ հրաշալի պտուղներ էին դարսված։ Հրաշալի էին մանավանդ խնձորները»։ Ահա այս իսկ պատճառով էլ մենք վերոհիշյալ բոլոր բառերը քննում ենք շաղկապների բաժնում։*

Մի քանի խոսք էլ եղանակավորող բառերի հնչերանգի մասին։ Որպես խոսողի դատողական-կամային վերաբերմունքն արտահայտող ձևեր՝ եղանակավորող բառերը իրենց հնչերանգով կարծես թե առանձնանում են սովորական բառերից։ Երբ նրանք վերաբերում են ամբողջ նախադասությանը և ոչ թե նրա առանձին անդամներին, հաճախ արտասանական դադարով անջատվում են նախադասության մյուս անդամներից, որ գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, ինչպես՝ «Հանդուգն խոսքեր ասաց նրան, իբր, նա այնպես չի բժշկում, ինչպես պետք է» (Ակ, 306). «Իհարկե, այդ աղջիկն իրավունք ունի իրեն վարկաբեկելու» (ՇՔ, 215).

«Անփորձությունն էլ, աղջուշտ, մի արտոնություն է, որից երբեմն մարդիկ օգտվում են հաջողությամբ» (Մ, 6, 307). «Մենամարտ ասած բանը մի ժամանակ, արդարև, ունեցել է իր իմաստը» (ՇՔ, 195). «Հիմա, իրոք, կարելի էր ասել, որ պաշտպանության գործն առաջ էր ընթանում բարձր մակարդակով» (ՖՎ, 382)։ Շատ դեպքերում էլ եղանակավորող բառերը արտասանական դադարով չեն անջատվում, ինչպես՝ «Երևի ծեր տիկնոջը դուր չէր եկել գառան չափ իմ փափախը» (ՎԱ, 92). «Գուցե ապնին պետք է գալիս, գուցե բակատեղը գողեր են գալիս մեզ թալանելու» (ՎԱ, 44). «Աղջուշտ կեղտոտ արհեստը ապականել էր նրա բնավորությունը» (ԴԴ, 220). «Ախր ես եկա այստեղ մնացի, բա ի՛նչ ես ասում» (ՀՔ, 2, 369). «Ախր ես էլ եմ բեզարել» (ՎԱ, 11). «Գոնե քրոջդ տեսնեիր». «Թող շուրջս փռվի անանց լռություն» և այլն։

Գրավոր խոսքում եղանակավորող բառերը տրոհելու կամ չտրոհելու, այսինքն՝ ստորակետերով անջատելու կամ չանջատելու հարցում միշտ առաջնորդ պետք է ունենալ կենդանի արտասանությունը։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ

84. ԵՂԱՆԱԿԱՎՈՐ ԲԱՌԵՐՆ ԱՌԱՆՁԻՆ-ԱՌԱՆՁԻՆ. — Ստորև այբուբենական կարգով ներկայացվում են արդի հայերենի տարածված ու գործածական եղանակավորող բառերը և բացատրվում են նրանց իմաստներն ու նշանակությունները։

Ախ||ախար.—*Իր մեջ ունենալով ցավակցման, ափսոսանքի, սրտնեղության երանգ՝ արտահայտում է ասվածի ապացուցած լինելը, օրինակ՝ «Հերիք է, ախր մեղք են» (ՎԱ, 8). «Ա՛յ որդի, ախր ոտներդ կքամոտի, ախր հորդ օրը կընկնես» (ՎԱ, 24). «Ախր ես եկա հստեղ մնացի, բա ի՛նչ ես անում» (ՀՔ, 2, 369). «Ախր չէ՞ որ նա էլ մեզ նման շունչ կենդանի ա» (ՀՔ, 2, 358). «Ախար իսկի բան չգիտի» (ՀՔ, 2, 314). «Ախր ես էլ եմ բեզարել» (ՎԱ, 11)։*

Ահա.—*Ունի ցայտուն դրսևորված ցուցականության ի-*

մաստ։ Արտահայտում է ցուցում որևէ առարկայի, դրության, գործողության, հատկանիշի վրա, որը առկա է, գտնվում է խոսողի մոտ, կատարվում է խոսողի մոտ, աչքի առաջ կամ ներկայացվում է որպես այդպիսին, օրինակ՝ «Ահա էստեղ էր, որ նա ասավ.—Ապի՛, ոտներս ցավում են... Եվ ահա էն ծառը, որի տակ նստեցին հանգստանալու...՝ Ահա էն աղբյուրն էլ, որ ջուր խմեցին» (ՀՔ, 2, 329). «Ահա դուք, ահա արքան։ Ես պատասխանը կուղարկեմ արքային և կասեմ. ահա մեր նախարարները, ահա քո կամքը» (ԴԴ, 169). «Ահա անլեզու մայրերի մի զարմանալի գործ ևս» (ՎԱ, 20). «Ահա նա, արևկող է արել ծանծաղ լճակում, շողշողուն ավազի վրա» (ՎԱ, 22). «Ահա և այն քարը, որի տակ պիտի թաքնվի» (ՎԱ, 22). «Ահա և նրանց քույրը՝ ընդամենը ութ-տասը ամսական» (ՎԱ, 23)։

Ահավասիկ.—Համանիշ է ահա բառին։ Գրաբարում ըստ առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի հետ ունեցած հարաբերակցության կային ահաւասիկ, ահաւադիկ, ահաւանիկ ձևերը։ Դրանց ժողովրդական-խոսակցական լեզվում համապատասխանում են հրես–հրեդ–հրեն ձևերը, որոնց մասին տե՛ս ստորև։

· Առաջիններից ժամանակակից գրական լեզվում գործածվում է ահավասիկ ձևը, այն էլ ոճավորված գրվածքներում՝ խոսքին հաղորդելով վեհություն ու հանդիսավորություն, ինչպես՝ «Ահավասիկ և սերը». «Ահավասիկ ժամանեցին դեսպանները». «Ահավասիկ գալիս է վեհափառը». «Ահավասիկ ծագեց արևը վեհափառ»։

Այո.—Արտահայտում է հաստատական իմաստ։ Գործածվում է թե՛ նախադասությունների կազմում՝ հավաստելով տվյալ նախադասությամբ արտահայտված միտքը, թե՛ առանձին, որպես պատասխանական բառ՝ փոխարինելով մի ամբողջ նախադասության, որը պատասխան խոսքում կարող է նաև կրկնվել։ Ստորև բերվում են օրինակներ այս երկու դեպքերի համար էլ։

«Հովհաննես Թումանյանն, այո՛, մեր ազգային ամենամեծ բանաստեղծն է». «Այո՛, նրանք իրենց ժամանակի ամենամեծ գործիչներն էին». «—Այո՛, մայր, իմ հարազատ զա-

վակներն են։ —Ո՛չ, հարազատ չեն, որդի, ո՛չ» (ՇՔ, 35). «—Այո՛, այո՛, քեզանից են, բայց քոնը չեն» (ՇՔ, 35). «—Կար, այո՛, հաստատեց Արաեները» (Սե, 5). «Դրա նման մի միտք, այո՛, անցավ նրա գլխով» (Մ, 6, 225). «—Այո՛, ես գնում եմ, և ինձ այլևս չի արգելիլ ոչ ոք» (Մ, 6, 187). «—Արշակը հիվա՞նդ է։—Այո՛» (ՇՔ, 206). «—Կնշանակի հարըստացել եք։—Այո՛» (ՇՔ, 185). «—Կարող եմ ասել, որ հայրըս գալիս է։ —Այո՛, գալիս է, Սամվե՛լ» (ՐՄ, 40)։

Այո բառին համանիշ է հա բառը, որը ժողովրդական-խոսակցական է, օրինակ՝ «—Էսօր քաղաք գնալո՞ւ ես։ —Հա, գնալու եմ». «—Արամին տեսա՞ր։ —Հա, տեսա». «—Գործը կարգավորեցի՞ր։—Հա». «—Նրան սիրո՞ւմ ես։—Հա»։ Հա բառը գործածվում է նաև նախադասությունների սկզբում՝ ցույց տալով, որ միտքը կիսատ է մնացել, շարունակվում է, օրինակ՝ «—Հա, էն էի ասում, թե քահանաները հեռացան առանց կռվելու» (Մ, 6, 122). «—Հա, մոռացա, գլուխս խոսքով խառնվեց» (ՇՔ, 43)։

Նշենք, որ որպես պատասխանական բառեր են կիրառվում և հետևաբար փոխարինում են մի ամբողջ նախադասության հաստատական և երկբայական եղանակավորող բառերն ընդհանրապես, օրինակ՝ «—Հեռագրե՞լ եք։—Իհարկե» (ՇՔ, 12). «—Մի՞թե այդ անհրաժեշտ է։ —Անպայման». «—Ապօրինի ես տիրացել մեր հոր ժառանգությանը։ —Մի՞թե» (ՇՔ, 126). «—Ես ոչ ոքի օգնության կարոտ չեմ։ —Իհարկե, իհարկե» (ՇՔ, 219). «—Նա ինքնահավան է ու գոռոզ։ —Գուցե» (ՇՔ, 239). «—Ինձ թվում է շատրվան է բացվելու։ —Երևի» (ՇՔ, 244). «—Հարստությունը շատ մարդկանց փչացնում է։ —Մի՞թե» (ՇՔ, 268)։

Անկասկած.—Ածականից վերածվել է եղանակավորող բառի՝ հավաստելով մտքի հաստատական ու ստույգ բնույթը։ Համանիշ է անտարակույս, անշուշտ եղանակավորող բառերին։ Օրինակներ. «Անկասկած դուք եք պատմել» (ՍՄ). «Անկասկած նա կխոստովանի իր մեղքը». «Անկասկած հաղթանակը մերը կլինի». «Արդարությունն, անկասկած, ի հայտ կգա». «Անկասկած նա ինձ կասի ամեն ինչ»։

Անշուշտ.—Համանիշ է անկասկած, անտարակույս հաս-

տատական եղանակավորող բառերին։ Արտահայտում է մըտքի հավաստի, հաստատական, ստույգ լինելը, ինչպես՝ **«Անշուշտ կեղտոտ արհեստը ապականել էր նրա բնավորությունը»** *(ԴԴ, 220). «Դու անշուշտ իմացար դժբախտությունը՝ մեր հոգևորների և իշխանների ապերասան պատասխանը» (ԴԴ, 218). «Պետրոսն անշուշտ երկար կմնար երկբայության մեջ» (Մ, 6, 193). «Անշուշտ, Տեր-Հայկազունն անհամեմատ ավելի զորեղ անձնավորություն էր, քան պատվելի Արամը» (Ֆվ, 384). «Անշուշտ, նախ ներքևի գյուղից, երկաթուղու կայարանից խճուղի կբերեն գյուղ» (Սխ, 45). «—Ես հավատացած եմ, որ կաշխատես ավելին անել։ —Անշուշտ» (Մ, 6, 191)։*

Անպայման.—*Ծագմամբ ածական է և նշանակել է «առանց պայմանի», օրինակ՝* անպայման գործ, անպայման հպատակություն *և այլն։ Ժամանակակից հայերենում, որպես կանոն, գործածվում է որպես եղանակավորող բառ՝ ցույց տալով մտքի անառարկելիությունը, անտարակուսությունը, օրինակ՝* «Նա անպայման կհամաձայնի մեզ հետ». «Խաղաղության ուժերն անպայման կհաղթեն». «Չեմ կասկածում, նա անպայման կկատարի մեր խնդրանքը». «Վաղն անպայման պետք է նրան տեսնեմ». «Նա անպայման կվերադառնա»։

Անպատճառ.—*Իր կազմությանը համապատասխան՝ ծագմամբ ածական է և նշանակել է «առանց պատճառի», օրինակ՝* անպատճառ զայրույթ, անպատճառ տրտմություն *և այլն։ Ժամանակակից լեզվում ևս առանձին դեպքերում գործածվում է այդ իմաստով, բայց գերազանցապես հանդես է գալիս որպես հաստատական եղանակավորող բառ՝ ցույց տալով մտքի անառարկելի, անտարակույս լինելը, օրինակ՝* «Նրան անպատճառ կտեսնես». «Վաղն անպատճառ պետք է գործը վերջացնեմ». «Նրան անպատճառ պետք է հայտնել այդ մասին». «Անպատճառ վճիռը մեր օգտին է լինելու»։

Անտարակույս.—*Իր կազմությանը համապատասխան՝ սկզբնապես եղել է ածական՝ նշանակելով «առանց տարակուսանքի», «առանց կասկածանքի», օրինակ՝* անտարակույս վստահություն, անտարակույս հավատ, անտարակույս եվրվածություն *և այլն։ Ժամանակակից հայերենում եղանակա-*

վորոշ բառի արժեք ունի՝ արտահայտելով խոսողի հաստատ համոզմունքը մտքի անկասկած, ճիշտ, ստույգ լինելու վերաբերյալ, օրինակ՝ «Անտարակույս նա կհամաձայնի». «Անտարակույս մենք հարցը հաջողությամբ կլուծենք». «Անտարակույս այս պատերազմում մենք միայնակ չենք լինի». «Անտարակույս մեր կողմն է արդարությունը»։

Ապա՝ հապա.—*Արտահայտում է խոսողի կամքը, հորդորը, կոչը ուղղված խոսակցին կամ մի երրորդ անձի՝ նրան դրդելով այս կամ այն գործողության կատարմանը։ Մեծ մասամբ գործածվում է հրամայական եղանակի բայաձևերի հետ, օրինակ՝ «Ապա՛, ես տեսնեմ». «Ապա՛, քարը շուռ տուր». «Ապա՛, միասին բռնենք». «Ապա՛, պարանը բեր». «Հապա՛ ձիգ տվեք». «Հապա՛, վազեցեք տեսնեմ». «Հապա՛, ձեռքերդ ցույց տուր»։*

Ասես.—*Բայական դիմավոր ձևից վերածվելով եղանակավորող բառի՝ նշանակում է «կարծես թե», «այնպես է թվում թե» և, ըստ այդմ, արտահայտում է մտքի թվացողական, անիրական լինելը, օրինակ՝ «Նրանք էլ ասես քննել էին, Օվակիմ բիձու նման փշշացնում էին խոր ու հանգիստ» (ՀՔ, 2, 362). «Ասես կապույտ գոտի է, անաղարտ ձյան վրա մոռացված» (Սխ, 24). «Ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներ» (ԱԲ, 189). «Կաքավաբերդի քարերն ասես կենդանացել ու խոսում էին հնագետի հետ» (ԱԲ, 189)։*

Արդարև.—*Հավաստում ու հաստատում է ասվածի ստուգությունը, ճշտությունը, իրական լինելը։ Համանիշ է ստուգիվ, ճիրավի, իրոք, ճիշտ որ եղանակավորող բառերին։ Օրինակներ. «Մենամարտություն ասված բանը, արդարև, մի ժամանակ ունեցել է իր իմաստը» (ՇՔ, 195). «Սա, արդարև, մեծ գործ էր՝ արժանի հարգանքի և երախտագիտության» (Մ, 6, 288). «Արդարև, մի ժամ անցած սպասավորը հայտնեց, թե եպիսկոպոսն արդեն իջնում է կառքից» (ՇՔ, 37). «Դա, արդարև, մի լեռնային դրախտ էր» (Մ, 6, 217)։*

Արդյոք.— *Արտահայտելով երկբայական, տարակուսական իմաստ և ունենալով հարցական հնչերանգ՝ ավելի շեշտում, ուժեղացնում է նախադասության հարցական հնչե-*

բանգը՝ նրան հաղորդելով զգացական զգալի տարր։ Օրինակներ. «Արդյոք *կապրե՞ս սիրտս մաշող կարոտը հեզ... Ջարտասանված, տրտում թաղված երազներս աստեղաշող* Արդյոք *կապրե՞ս... Արդյոք կզգա՞ս սիրտս այրող սերը երազ... Այն խոսքերը, այն երգերը* Արդյոք *կզգա՞ս...» (ՎՏ, 6). «Ասացե՛ք, արդյոք նա էլ թախծո՞ւմ էր, Արդյոք տըրտո՞ւմ էր նա էլ ինձ նման» (ՎՏ, 21). «Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու... Հեքիաթի պես էր, երազի նման. խաղաղ երեկոն խոսում էր անձայն, Արդյոք հիշո՞ւմ ես.—Հեռո՜ւ էր, հեռո՜ւ» (ՎՏ, 25)։*

Բարեբախտաբար (բարեբախտորեն).—*Իր բաղադրիչների իմաստին համապատասխան՝ արտահայտում է գոհունակություն, ուրախություն ըստ հաջողության, պատահմունքի կամ դիպվածի որևէ երևույթի, գործողության առկայության կամ կատարման համար։ Հականիշ է դժբախտաբար բառին։ Օրինակներ.* «Բարեբախտաբար *նրա ստացագիրը ես պահել էի» (ՍՄ).* «*Մենք մոլորվել էինք ճանապարհին.* բարեբախտաբար *մի հովիվ պատահեց» (ՍՄ).* «Բարեբախտաբար *անձնագիրը մոտս էր».* «Բարեբախտաբար *կարկուտը երկար չտևեց».* «Բարեբախտաբար *աշխարհում ազնիվ ու բարի մարդիկ դեռ կան»։*

Բնականաբար (բնականորեն).—*Ծագմամբ մակբայ է և նշանակել է «բնականի պես», «բնականի նման», «բնականի ձևով»։ Վերածվելով եղանակավորող բառի՝ ցույց է տալիս, որ ըստ խոսողի միտքը, դատողությունը, եզրակացությունը բխում է իրերի տրամաբանական զարգացման ընթացքից, համապատասխանում է նրան, օրինակ՝* «Նրա վրա հարձակվեցին երեք հոգով. նա էլ բնականաբար *ինքնապաշտպանության դիմեց» (ՍՄ).* «Բնականաբար *ես չէի կարող անպատիժ թողնել նրա այդ ստոր արարքը».* «Բնականաբար *սերը սեր է ծնում,ատելությունը՝ ատելություն».* «Բնականաբար *ես չէի կարող համաձայնել այդ առաջարկությանը».* «Նրա պահանջն անարդարացի էր. բնականորեն պիտի մերժեի»։

Գեթ.—*Արտահայտում է սահմանափակման նշանակություն՝ ցույց տալով տվյալ երևույթը, գործողությունը որպես ծայրագույն աստիճան, որի իրականացումը գոնե որոշ*

չափով կբավարարեր խոսողին, օրինակ՝ «Վերջինը գեթ մնա ինձ հետ». «Գեթ վերջին բաժանման խոսքս մի մերժիր». «Համբուրիր ինձ գեթ մի անգամ». «Թթե օտարներին չես խղճում, գեթ զավակներիդ խղճա». «Լացդ հարկավոր չէր, գեթ մի ցավակցություն հայտնեիր»։

Գոնե.— Արտահայտում է սահմանափակման իմաստ՝ ցույց տալով տվյալ երևույթը, գործողությունը որպես ամենափոքր աստիճան, որի իրականացումը ևս որոշ չափով կբավարարեր խոսողին, օրինակ՝ «Տունը վերցնում եք՝ վերցրեք, գոնե պարտեզն ինձ թողեք» (ՍՄ). «Թթե խոսքերիս չեք հավատում, գոնե գործերիս հավատացեք» (ՍՄ). «Պատերազմում հինգ որդի եմ կորցրել. գոնե մեկը հետ գար». «Գոնե մի երկու օր մնա մեզ մոտ». «Գոնե մասնագիտությունից բարձր գնահատական ստանայիր». «Գոնե երեխաների մասին մտածեր»։

Գուցե.— Գրաբարյան գոլ բայի ըղձական եղանակի եզակի երրորդ դեմքի ձևն է, որ վերածվել է եղանակավորող բառի։ Արտահայտում է՝ երկբայական իմաստ՝ նշանակելով «կարող է», «հնարավոր է» և, ըստ այդմ, ցույց տալով, որ տվյալ երևույթի, գործողության, հատկանիշի առկայությունը, կատարումը, դրսևորումը խոսողը համարում է հնարավոր, կարելիական։ Սկզբից ստանալով մի արգելականը՝ վերածվել է միգուցե ձևին, սակայն գուցե, միգուցե ձևերը իմաստով տարբերակված չեն և համանիշ են թերևս, երևի եղանակավորող բառերին։ Օրինակներ. «Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հասնում է այն ծովին» (ԱՔ, 189). «Գուցե նրան նեղում էր խիստ մաքուր և խիստ փայլուն օսլայած շապիկի բարձր և ամուր օձիքը» (ՇՔ, 17). «Գուցե այդ չերմությունը հենց մոտիկ գոմի բաց դռնից ելնող գոլորշուց էր» (Սխ, 23). «Միգուցե մերոնցից մեկը հիվանդացել է» (Մ, 6, 229). «Միգուցե ուրիշ հնարավորություն չի եղել». «Միգուցե արդեն վերադարձել է»։

Դժբախտաբար.— Իր բաղադրիչների իմաստին համապատասխան՝ արտահայտում է խոսողի դժգոհությունը ըստ անհաջողության, պատահմունքի կամ դիպվածի որևէ երևույթի, գործողության, հատկանիշի առկայության, կատար-

ման կամ դրսևորման համար, օրինակ՝ «Դժբախտաբար ես արդեն խոսք եմ տվել ուրիշի». «Դժբախտաբար այսօր մեկնելու է». «Դժբախտաբար նա տանն էր». «Դժբախտաբար նա լավ տրամադրության մեջ չէր»։

Ինչպես օրինակներն են ցույց տալիս, դժբախտաբար *բառը հականիշ է* բարեբախտաբար *եղանակավորող բառին։*

Դժվար թե.—*Իր բառային իմաստին համապատասխան՝ ցույց է տալիս, որ տվյալ միտքը, դատողությունը, եզրակացությունը դժվար իրականանալի կամ համարյա անիրականանալի է, օրինակ՝* «Դժվար թե այս հարցը լուծվի». «Դժվար թե նրան տանը գտնեք». «Դժվար թե նրան երբևէ տեսնեմ». «Դժվար թե կրկին հաշտվեն իրար հետ»։

Երանի||երևել.—*Համանիշներ են։ 1. Արտահայտում են խոսողի ուժեղ ցանկությունը, բաղձանքը գործողության կատարման վերաբերյալ։ Որպես կանոն գործածվում են ըղձական եղանակի բայաձևերի հետ՝ ուժգնացնելով այս բայաձևերի բաղձանքի նշանակությունը, ինչպես՝* «Երանի||երևել տեսնեի նրան ու հետո թեկուզ գերեզման իջնեի». «Երանի վերադառնար օտար երկրներից». «Երանի այսօր գայիս»։ *2. Ցույց են տալիս խոսողի բարյացակամ զգացմունքը մեկի կամ մի բանի նկատմամբ, որին խոսողը համարում է երջանիկ, բախտավոր, երանելի, օրինակ՝* «Երևել նրան, որ իր գործով Կապրի անվերջ, անդադար» *(ՀԹ, 2, 134).* «Ախ, երանի՝ ով մարդ կգա Ու մարդ կերթա անարատ» *(ՀԹ, 2, 145).* «Երանի աղքատներին, երանի արդարներին, երանի հեզերին»։ *Ինչպես օրինակներն են ցույց տալիս, այս իմաստով կիրառվելիս* երանի||երևել *բառերը որպես հոլով են պահանջում։*

Երևի.—*Ծագում է գրաբարյան* երևիմ *բայի սահմանական ներկայի եզակի երրորդ դեմքից։ Որպես եղանակավորող բառ նշանակում է «հավանաբար», «ըստ երևույթին», «գուցե» և, ըստ այդմ, ցույց է տալիս մտքի, գործողության, երևույթի հավանական լինելը։ Օրինակներ.* «Երևի սա է կարմրախայտի ձկնկիթը» *(ՎԱ, 20).* «Երևի մրսում են իմ նորելուկ ձկնիկները լեռան սառցապատ ջրերում» *(ՎԱ, 26).* «Նա իրեն ձերբակալող սպաներին ասաց, որ երևի մոլորվել

են ու, անշուշտ, իրեն ուրիշի հետ են շփոթում» (Սխ, 30)։ «Երևի *Միքայելը ձեզնից ոսկեղեն է վերցրել» (ՇՔ, 45). «Երևի նույն դեմքն ունեցող մարդիկ նույն կերպ են ժպտում» (Ա.Բ, 195)։*

Հաճախ նույն իմաստով է գործածվում նաև աշխարհաբարյան երևում է *ձևը, օրինակ՝* «Երևում է *ամեն ը ցուրտ է լինելու».* «Երևում է *ամուսնացնելու է իր որդուն».* «Երևում է *գործերը լավ են գնում»։*

Ըստ երևույթին.—*Նշանակում է «երևի», «թերևս» և ցույց է տալիս մտքի, գործողության, երևույթի հավանական լինելը, օրինակ՝* «Ըստ երևույթին *շատ էին հախուռն այն մրտքերը, որ խռովում էին նրան» (ԴԴ, 34). «Դրանք դեռատի աղջիկներ էին՝* ըստ երևույթին *քույրեր» (ԴԴ, 105). «Նոր ուղևորն* ըստ երևույթին *ուզում էր շարունակել խոսակցությունը» (ՆԴ, 212). «Իշխանները լռել էին և* ըստ երևույթին *ազդվել Արսեն իշխանի խոսքերից» (ԴԴ, 255). «Ըստ երևույթին *ծանոթ էր տեղական կառապանների սովորությանը և հնարներին» (Մ, 6, 193)։*

Թերևս.— *Նշանակում է «երևի», «ըստ երևույթին», «հավանորեն» և ցույց է տալիս մտքի, գործողության, երևույթի հավանական, հնարավոր լինելը, օրինակ՝* «Դուք երկուսդ թերևս *վաղը ճանապարհվեք Արտաշատ» (ԴԴ, 7). «Բոլորը ճնշվեցին՝ զգալով, որ Վարդանը* թերևս *ճշմարիտ է» (ԴԴ, 147). «Սկզբում նրանք զարմացան և* թերևս *երկյուղած էին նայում» (ԴԴ, 222).* «Թերևս *ինքն ապագայում տանջվի խղճից» (Մ, 6, 225)։*

Թող.— *Թողնել բայի եզակի հրամայականի ձևն է, որ շատ կապակցություններում մեջ զրկված լինելով նյութական իմաստից՝ ցույց է տալիս խոսողի կամքը, կոչը գործողության կատարման մասին։ Որպես կանոն գործածվում է ըղձական եղանակի երրորդ դեմքի բայաձևերի հետ, օրինակ՝* «Թող *շուրջս փռվի անանց լուսթյուն».* «Թող *ինձ չհիշեն,* թող *ինձ մոռանան»,* «Թող *արագ վերջացնի գործերը և վերադառնա».* «Թող *գա և վերջին անգամ տեսնի ինձ».* «Թող *ինձ չմեղադրի, ես այլ կերպ վարվել չէի կարող»։*

Իբր, իբր թե.—*Ցույց են տալիս անհավանականություն, ասվածի անհամապատասխան լինելը իրականությանը, օրինակ՝ «Ես երես չրջեցի, իբր թե սարերին եմ նայում» (ՀՔ, 2, 363). «Ձին էլ դունչը ցցած եռևիցն է ընկնում, իբրև թե հալածում է» (ՀՔ, 2, 389). «Իբր թե չգիտես ինչի համար եմ հարցնում» (Մ, 6, 175). «Սկսեց պատմել, թե իբր գերմանացիք պայթեցրել են մի ահռելի պարիսպ» (ԱՔ, 204). «Հանդուգն խոսքեր ասաց նրան, իբր նա այնպես չի բժշկում, ինչպես պետք է» (ԱԿ, 306)։*

Իբրև ձևը միաժամանակ նաև կապ է, *ինչպես՝ «Իբրև ուսանող նա կատարում է իր պարտականությունները». «Նա պարգևատրվեց իբրև առաջավոր ուսուցիչ»։*

Ի դեպ.—*Ցույց է տալիս, որ միտքն արտահայտվում է դիպվածաբար, պատահմունքով, երկրորդաբար, օրինակ՝ «Ի դեպ, նա այս զորախմբի մեջ չընդգրկեց դասալիքներին» (ՖՎ, 342). «Ի դեպ, քրոջս նշանդրության մասին իսկի խոսք չէ՞ք լինում» (ՍՄ). «Ի դեպ, նրա հետ ծանոթացել էի երկու տարի առաջ». «Ի դեպ, նա իմ հեռավոր բարեկամներից է»։*

Իհարկե.—*Հավաստում է ասվածի ստույգ, ճշգրիտ, հաստատ լինելը, օրինակ՝ «Իհարկե, այդ աղջիկն իրավունք ունի իրեն արհամարհելու» (ՇՔ, 215). «Արժանը քաշե՞լ եք, լա՛վ, որ քաշել եք, դե իհարկե կգամ» (ՎԱ, 10). «Այժմվանից, իհարկե, դժվար է որոշել, թե ինչ պիտի անես» (Մ, 6, 131). «Այն ժամանակ, իհարկե, ինքն այդ բանում մեղավոր չէր լինիլ» (Մ, 6, 224)։*

Ի միջի այլոց‖իմիջիայլոց.— *Համանիշ է ի դեպ եղանակավորող բառին։ Ցույց է տալիս, որ միտքը, դատողությունը, եզրակացությունը մեջ է բերվում պատահմամբ, դիպվածաբար, երկրորդաբար, օրինակ՝ «Ի միջի այլոց, նրա հետ ես ծանոթացել էի Երևանում». «Ի միջի այլոց, նա ինձ շատ թե քիչ հովանավորում էր». «Նա, իմիջիայլոց, մեր հեռավոր բարեկամներից է»։*

Ինչևէ, ինչևիցե.— *Ցույց են տալիս, որ խոսողը առանց տվյալ հարցի մասին վերջնական եզրակացության գալու, իր միտքն ամփոփելու անցնում է նոր մտքերի։ Այս իմաստով յուրահատուկ շաղկապական դեր են կատարում և շաղկապ*

Նա կարող են համարվել։ Օրինակներ. **«Ինչևէ,** *այս խնդրի մասին ուսանողները երկար խոսել ու վիճել էին».* **«Ինչևէ,** *այդ սահմանումը կարելի է ընդունել».* **«Ինչևիցե,** *մենք պետք է լեզու գտնենք նրա հետ».* **«Ինչևիցե,** *այս փորձանքից մի կերպ ազատվեցի»։*

Իսկապես.— *Ցույց է տալիս ասվածի իրոք հավաստի, ստույգ, ճշգրիտ լինելը, օրինակ՝ «Սա իսկապես գինի է, խաղողի հյութ» (ՍՄ). «Նա իսկապես իմ որդին է» (ՍՄ). «Նա իսկապես արժանի է պատվի». «Իմ ընկերն իսկապես բացառիկ հոգի ունի». «Նա իսկապես գտնվում է ժամանակակից գիտության բարձունքում». «Նա իսկապես իր խրճիթը չէր փոխի թագավորական ապարանքի հետ»։*

Իրավ.—*Ցույց է տալիս ասվածի ստույգ, ճշգրիտ, հավաստի լինելը։ Համանիշ է «իսկապես», «իրոք» եղանակավորող բառերին։ Օրինակներ.* **«Ադելինային,** *իրավ, սա ճանաչում էր վաղուց» (Մ, 6, 178).* **«Իրավ,** *վաղը մայրիկի ծնունդն է» (Մ, 6, 329).* **«Իրա՞վ** *այդպես եղավ, ինչպես պատմում եք» (ՍՄ).* **«Իրավ,** *ես նրան չեմ ճանաչում»։*

Իրավ *բառը միաժամանակ է օժանդակ բայի հետ կազմում է միադիմի բայ՝ այսպիսով իմաստով հավասարվելով «ճիշտ է» ձևին, օրինակ՝* **«Իրավ** *է, նա գիտեր այդ մասին».* **«Իրավ** *է, նա հասկացավ, որ վախճանը շատ հեռու չէ».* **«Իրավ** *է, նա վախկոտ մարդ չէր» և այլն։*

Իրավամբ.—*Գրաբարյան «իրաւ» (իրաւունք) բառի գործիական հոլովաձևն է և իր բուն բառային իմաստին որոշ չափով համապատասխան՝ ցույց է տալիս մտքի, եղրակացության, դատողության իրավացի, արդարացի լինելը, իրավունք ունենալը, օրինակ՝* **«Ռումանյանն** *իրավամբ համարվում է հայ քերթության անհաս Արարատը».* **«Իրավամբ** *նա կարող էր ժառանգել հոր հարստությունը».* **«Վարդն** *իրավամբ է կոչված ծաղիկների թագուհի»։*

Իրոք.—*Իր բառի գրաբարյան հոգնակի գործիական հոլովաձևն է։ Վերածվելով եղանակավորող բառի՝ ցույց է տալիս ասվածի իսկությունը, ստուգությունը, ճիշտ լինելը, օրինակ՝* **«Հիմա,** *իրոք, կարելի էր ասել, որ պաշտպանության գործն առաջ էր ընթանում բարձր մակարդակով» (Ֆվ, 382).*

«Նա եկավ այն եղրակացության, որ, իրոք, գործնական մարդը չպետք է զգացմունքային լինի» (ՅՎ, 283). «Նա իրոք տեղյակ էր այդ մասին». «Նա, իրոք, կյանքից վաղուց էր հոգնել». «Նա, իրոք, սրտով և հոգով համաձայն է մեզ հետ». «Իրոք տեսել եմ նրան»։

Լոկ.—*Նշանակում է «սոսկ», «միայն»։ Դրվելով նախադասության զանազան անդամների վրա՝ արտահայտում է սահմանափակման իմաստ՝ ասվածի նշանակությունը սահմանափակելով տվյալ երևույթի, գործողության, հատկանիշի շուրջը, օրինակ՝ «Լոկ ոսկորներն են մնացել» (ՍՄ). «Նա լոկ հրամայել գիտի» (ՍՄ). «Լոկ տանջանքներ եմ տեսել». «Վիշտ ու տապառանք լոկ վաստակեցի» և այլն։*

Կարծեմ.—*Կարծել բայի գրաբարյան սահմանական ներկայի եզակի առաջին դեմքի ձևն է, որ վերածվելով եղանակավորող բառի, համենայն դեպս, համարյա պահպանել է նաև իր բուն բառային իմաստը և նշանակում է «կարծում եմ», «ինձ թվում է», «ինձ այնպես է երևում»։ Այս իմաստներին համապատասխան՝ ցույց է տալիս, որ միտքն արտահայտվում է կարծիքով, ենթադրաբար, օրինակ՝ «Կարծեմ մորս հետ ինչ-որ հեռավոր բարեկամություն ունի». «Կարծեմ գյուղում է աշխատում». «Կարծեմ արտասահմանից նոր է վերադարձել». «Կարծեմ երկու աղջիկ, երկու տղա ունի»։*

Կարծես, կարծես թե.—*Կարծել բայի գրաբարյան ներկայի եզակի երկրորդ դեմքի ձևն է՝ վերջինս թե շաղկապի հարադրմամբ։ Որպես եղանակավորող բառ ցույց է տալիս ասվածի թվացողականությունը, սոսկ նմանողական լինելը, իրականությանը համապատասխան չլինելը, օրինակ. «Կարծես մեր Բողարի հաչոցն էի լսում, մեր հորթերի բառաչը, ընկերներիս կանչերը» (ՎԱ, 30). «Կարծես հավք էր թառել անտառի մթին խորքում» (ԱԲ, 229). «Կարծես ձիավորներ էին արշավում իրար դեմ» (ԱԲ, 228). «Բագրատի շունչը կտրվեց, կարծես օդի տեղ կրակ էր շնչում» (ՍԽ, 28)։ «Կարծես նոր հանդիպեցին և չէին խոսել դեռ բոլորովին» (ԴԴ, 10). «Ջավակները նրա ամենաթույլ երակն էին, նրանց առաջ կարծես անզոր էր դառնում» (ԴԴ, 40)։*

Կարծյոք.—*Կարծիք բառի գրաբարյան հոգնակի գործիա-*

կան հոլովաձևն է։ Վերածվել է եղանակավորող բառի և իր բուն բառային իմաստին որոշ չափով համապատասխան՝ նշանակում է «կարծում եմ», «որքան գիտեմ», «որքան ինձ հայտնի է», ինչպես՝ «Կարծյոf նրան շուտով ազատելու են պաշտոնից». «Կարծյոf դուք մի ժամանակ բարեկամներ եք եղել». «Կարծյոf նա ուզում է մեկնել արտասահման»։

Հազիվ թե.—*Ցույց է տալիս ասվածի անհավանական կամ համարյա թե անհնարին լինելը, օրինակ՝* «Հազիվ թե նա այս ցուրտ եղանակին գա» (ՍՄ). «Հազիվ թե նշանակված ժամին գործս վերջացնեմ» (ՍՄ). «—Ի՞նչ ես կարծում, կհամաձայնի՞։ —Հազիվ թե» (ՍՄ). «Հազիվ թե կարողանա գլուխը պրծացնել». «Հազիվ թե ընկերները կարողանան օգնել նրան»։

Համեձայն դեպս.— *Նշանակում է «ամեն դեպքում», «այսպես թե այնպես», «այս բոլորը հաշվի առնելով հանդերձ» և, ըստ այդմ, ցույց է տալիս, որ հակառակ հանգամանքները խոսողի կարծիքով չեն կարող խանգարիչ լինել տվյալ գործողության, հատկանիշի, երևույթի դրսևորման համար։ Իր այս իմաստին համապատասխան՝ ունի նաև շաղկապական ֆունկցիա։ Օրինակներ.* «Համեձայն դեպս, նա մեր բարեկամն է». «Նա, համեձայն դեպս, քեզ կպաշտպանի». «Համեձայն դեպս, նրա հետ խոսելու եմ». «Համեձայն դեպս, գործը լավ վախճան ունեցավ»։

Հավանաբար||հավանորեն.—*Ցույց են տալիս մտքի, դատողության, եզրակացության հավանական լինելը, հավանական թվալը, օրինակ՝* «Թշնամին խորտակիչ հարվածներ կրեց, հավանաբար կփորձի հաշտություն խնդրել» (ՍՄ). «Հավանաբար երկու հոգի են եղել». «Հավանաբար հարևանների մատը ևս խառն է». «Հավանորեն այս երկու օրը գործը կվերջացնեմ». «Եղանակը պարզվեց, հավանորեն օրերը կտաքանան»։

Հավաստյավ.— *Գրաբարյան գործիական հոլովաձևն է հավաստի բառի, որ նշանակում է «ճիշտ», «ստույգ», «հաստատ», «աներկբայելի», «հավատալու արժանի»։ Վերածվելով եղանակավորող բառի՝ իր բուն բառային իմաստին այս կամ այն չափով համապատասխան՝ արտահայտում է աս-*

վածի ստուգությունը, ճշտությունը, հավաստի լինելը, օրինակ՝ «Հավաստյավ, նա անկեղծ էր խոսում». «Հավաստյավ, նա ամբողջ հոգով նվիրված էր իր գաղափարներին». «Հավաստյավ, նա բյուրեղյա ազնվություն ունեցող մարդ է». «Այդ սերունդը, ճավաստյավ, անկեղծորեն ու անշահախնդիր նվիրված էր իր գաղափարներին»։

Հատկապես.— *Դրվելով նախադասության այս կամ այն անդամի վրա՝ շեշտում է նրա հատուկ դիրքը, առավելությունը համազոր միավորների շարքում և իր այդ իմաստով մոտենում է հավելական շաղկապներին, օրինակ՝ «Հատկապես դու ես մեղավոր». «Այդ գործում հատկապես ես եմ շահագրգռված». «Իրեն վատ էր զգում հատկապես գիշերները»։*

Սրան համանիշ է առանձնապես բառը, օրինակ՝ «Առանձնապես աչքի ընկան համալսարանցիները». «Առանձնապես թույլ է հայերենից»։

Հարկավ.—*Հարկ բառի գրաբարյան գործիական հոլովաձևն է, որ վերածվել է եղանակավորող բառի։ Իմաստով մոտենում է «անշուշտ», «իհարկե», «անտարակույս» եղանակավորող բաաերին, բայց իր բուն բառային իմաստին այս կամ այն չափով համապատասխան՝ ունի նաև անհրաժեշտության երանգ, ինչպես՝ «Տունը, հարկավ, սեփական էր» (ՇՔ, 13). «Հարկավ այս բոլորից հետո այլևս անհնար էր դավաճան կնոջ հետ մի հարկի տակ ապրել» (ՇՔ, 234). «Հարկավ, ես չէի կարող տանել այդ անպատվությունը»։*

Հենց.—*Դրվելով զանազան բառերի վրա՝ հատուկ առանձնացնում, շեշտում է դրանք՝ արտահայտելով ուժգնացում ու սաստկացում, օրինակ՝ «Հենց էդ խոսակցության ժամանակ ներս մտավ քրտնած Գիքորը» (ՀԹ, 2, 319). «Հենց էդ բաց տեղերում պախրանները շարվում են ու արածում» (ՎԱ, 38). «Նրան ձերբակալեցին հենց դասախոսության ժամանակ» (ՍԽ, 11). «Նա հենց առաջին վրանի մոտ ձիերն արձակեց» (ԱՔ, 192). «Անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա» (ԱՔ, 199). «Հենց այդ օրն էլ նրան անվանել էին Յոլակ» (ԱՔ, 199)։*

Որոշ կապակցությունների մեջ նշանակում է «լոկ», «մի-

այն», օրինակ՝ «Հենց ես եմ մենակ լալիս ու տանջվում» (ՀՔ, 2, 48). «Հենց դու էիր պակաս» (ՍՄ) «Ոչ ոք չիմացավ, հենց դո՞ւ իմացար» (ՍՄ)։

Ունի նաև շաղկապական իմաստ՝ արտահայտելով ժամանակային նշանակություն և ցույց տալով, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է երկրորդականից անմիջապես հետո կամ նրա հետ միաժամանակ։ Այս իմաստով գործածվում է նաև հենց nr ձևով, օրինակ՝ «Հենց եկավ, սկսեց կռիվն ու գոռգոռոցը». «Հենց nr երաժշտությունը լռեց, նա թեմ բարձրացավ»։

Հիրավի.— *Ցույց է տալիս, որ տվյալ միտքը, դատողությունը, եզրակացությունը խոսողի կողմից դիտվում է որպես իրավացի, արդար, տեղին, օրինակ՝* «Հիրավի, լեզուն ազգի ամենամեծ, ամենանվիրական ստեղծագործությունն է». «Հիրավի, նա մեր ազգային ամենամեծ բանաստեղծն է». «Հիրավի նրա ստեղծագործությունը մի ամբողջ դարաշրջան է բացում հայ բազմադարյան գրականության մեջ»։

Ինչպես օրինակներից կարելի է եզրակացնել, հիրավի եղանակավորող բառը իր իմաստի մեջ ունի վեհության, հանդիսավորության երանգ և այդ իսկ պատճառով էլ, որպես կանոն, գործածվում է բարձր ոճի ստեղծագործություններում։

Հո՝ խոմ՝ խո.— *Արտահայտում են կոչական հարցում կամ կոչական հարցմանն ձևով հավաստում են տվյալ երևույթի, գործողության, մտքի հաստատությունը, օրինակ՝* «—Բողար, դու հո՛ գիտես, թե հորթարած մարդն ինչ ախորժակ է ունենում» (ՎԱ, 23—24). «Հիմի այլևս Դուրսունի մեջքը չեմ տեսնում, բայց փորը հո՞ տեսնում եմ» (ՎԱ, 13). «—Կսովորի, հո էդպես չի մնալ,—ասում էր նա կնոջը» (ՀՔ, 2, 316). «Իմ թշնամին հո չես» (ՀՔ, 2, 320). «—Իսկ իմ Ադելինան, հո գիտեք, փափուկ սիրտ ունի» (Մ, 6, 177). «—Դե մեր խալափի գիժ բնավորությունն էլ հո գիտեք» (ՎԱ, 40)։

Հրես, հրեդ, հրեն.— *Ժողովրդական-խոսակցական ձևեր են։ Մատնացույց են անում տվյալ երևույթը, գործողությունը, հատկանիշը ըստ առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի նկատմամբ ունեցած տարածական հարաբերակցության,*

օրինակ՝ «Նանի, հրես աչքերը պլզացրել է մկան պես» (ՎԱ, 6). «Հրես ամեռը էնքան արշաքուն տաք» (ԱԲ, 131). «Հրես ձեր պսակվելու վախտը մոտենում է հա՞, վերեք» (ԱԲ, 131). «Հրեդ ման կգաս, կտեսնես» (Մ, 6, 221). «Հրեն չե՞ս տեսնում մեր Աստվածածինը» (Մ, 6, 220). «Հրեն, ձյունը գայլերին տեղահան է արել» (ՎԱ, 50). «Միկիչն ու Ջանին հրեն կտերը կանգնած քեզ ճամփա են պահում» (ՀԲ, 2, 238):

Հրես||հրեդ||հրեն ձևերը, կազմելով եռանդամ հակադրություն, շփման եզրեր են հանդես բերում ցուցական դերանունների հետ:

Ճիշտ որ.— *Իր բուն բառային իմաստին համապատասխան՝ ցույց է տալիս, որ տվյալ միտքը, դատողությունը, եզրակացությունը ճիշտ, ճշմարիտ, ստույգ, հավաստի է, օրինակ՝ «ճիշտ որ, նա շատ էր գեղեցկացել». «ճիշտ որ, դու շատ ես փոխվել». «ճիշտ որ, երկար տարիներ էին անցել այդ օրից»:*

Մի.— *Գործածվում է ըղձական և հրամայական եղանակների բայաձևերի հետ՝ ավելի շեշտելով առաջին ձևերի ցանկության, իղձի, կոչի նշանակությունները և մեղմելով երկրորդների հրամայական նշանակությունը՝ նրանց հաղորդելով խնդրանքի, հորդորի երանգ, օրինակ՝ «Մի գնաս նրան ասես գա մեր տուն». «Մի վազես հացի». «Մի պատմիր տեսնեմ ինչ է պատահել». «Մի եկ տեսնեմ՝ ինչ ես ասում». «Մի լավ միտք արա, տես խելքդ ինչ է կտրում» և այլն: Արգելական մի մասնիկից հնչերանգով տարբերվում է նրանով, որ ունենում է մեղմ, շատ թույլ և ոչ թե սուր շեշտ:*

Միայն||միմիայն.— *Արտահայտում են սահմանափակման նշանակություն: Դրվելով նախադասության զանազան անդամների վրա՝ դրանք առանձնացնում և ներկայացնում են որպես միակը, եզակին: Երկրորդն առաջինից սոսկ տարբերվում է իր սաստկական նշանակությամբ: Օրինակներ. «Միայն մի հույս կար» (ՎԱ, 38). «Միայն այժմ էր պարզվում նրա համար իր արարքի ամենասուր կողմերը, միայն այժմ էր խիղճը գործադրում իր ամենասուր ասեղները» (ՇՔ, 245). «Գիտեինք միայն, որ քեռիս զինվոր եղած ժամանակ իբր թե հրացան է քաշել հրամանատարի վրա» (ԱԲ, 135).*

«Միայն այն ձուն է գնում, որ այդ օղակով չի անցնում» (ՇՔ, 8). «Գիշեր-ցերեկ նրա ուշքն ու միտքը դու էիր միայն, դո՛ւ, որդի» (ՇՔ, 36). «Ես և միայն ես պիտի կրեմ նրա պատիժը» (ՇՔ, 41). «Դիլան դայեն միայն գիշերը տուն գնաց» (ԱՔ, 231). «Միմիայն իրիկվա հովից խշշում էին սիմինդրի կոշտացած տերևները» (ԱՔ, 236)։

Միթե.—Հարցական հնչերանգով արտահայտում է տարակուսանք, երկմտություն, զարմանք որևէ անսպասելի, արտակարգ, դժվար հավատալի բանի մասին։ Օրինակներ. «Մի՞թե քո սրտում չի մնացել մի առողջ անկյուն, մի՞թե կյանքի մեջ չես տեսնում ավելի բարձր հաճույք, քան անասնական կրքերին ծառայելը» (ՇՔ, 199). «Մի՞թե բառը կարող էր անոթի դառնալ և պարփակել նրա հույզերը» (ԱՔ, 163). «Մի՞թե շները միշտ մի տեսակ չեն հաչում» (ՀՔ, 2, 386). «Մի՞թե նրա տառապանքները լուրջ պատճառ չեն ունեցել, մի՞թե անիրավաբար է անիծել որդուն» (ՇՔ, 14)։

Ոչ||չէ—Երկրորդը ժողովրդական-խոսակցական է։ Հակառնիշ են այո, ճա բառերին։ Գործածվում են ժխտական նախադասություններում՝ ժխտումը մի անգամ ևս հաստատելու համար կամ առանձին՝ իբրև ժխտողական կամ մերժողական պատասխան տրված հարցին, օրինակ՝ «Ո՛չ, ես նրան խնդրել չեմ կարող». «Ո՛չ, ես երբեք չեմ գնա նրա մոտ». «Ո՛չ, ո՛չ, նա չի սիրում իր կնոջը». «—Մի՞թե հոգնած ես. —Ո՛չ»: «—Դու նրան կտեսնե՞ս. —Ո՛չ». «Չէ՛, նրան չեմ սիրում». «Չէ՛, նա կարգին մարդ չի». «—Նա այսօր գալո՞ւ է. —Չէ»:

Չլինի թե (չլինի).—Ունի հարցական հնչերանգ և արտահայտում է խոսողի անհանգստությունը որևէ երևույթի, գործողության, հատկանիշի առկայության, կատարման, դրսևորման մասին, որ նա համարում է ոչ ցանկալի, բայց հնարավոր, օրինակ՝ «Չլինի՞ թե ծերունին խենթացավ ու ինձ զրկեց ժառանգությունից» (ՇՔ, 16). «Չլինի՞ թե հորդ անեծքին արժանանաս» (ՇՔ, 18). «Չլինի՞ թե հաղթահարված, ճարը հատած թշնամին դավ է դնում մութն ու մեռած կես գիշերվա էս ժամին» (ՀՔ, 2, 142). «Չլինի՞ թե վնասակար բան ես կերել» (ՍՄ)։

Սոսկ.—Համանիշ է «լոկ», «միայն» եղանակավորող բա-

ռերին։ Արտահայտում է սահմանափակման նշանակություն, ինչպես՝ «Սոսկ *տանջանքներ եմ տեսել».* «Սոսկ *տառապանքներ ինձ բաժին ընկան».* «Սոսկ *նրա սերն էր ինձ մխիթարում»։*

Ցավոք, ցավոք սրտի.—*Դրաբարյան ձևեր են։ Առաջինը նշանակում է «ցավով, ցավերով», իսկ երկրորդը՝ «սրտի ցավով, ցավերով»։ Իրենց բուն բառային իմաստին համապատասխան՝ ցույց են տալիս, որ խոսողը կատարվածը կամ կատարվելիքը համարում է ցավալի, օրինակ՝* «Ցավոք *պետք է ասեմ, որ ոչնչով չկարողացա օգնել նրան».* «Ցավոք սրտի, *Գաբրիելին ու Ստեփանին օգնել անհնար է» (ՅՎ, 460).* «Ցավոք սրտի *նկատում եմ, որ իրենց խոստումները չեն ուզում կատարել» (ՍՄ)։*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

85. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.— Դեռևս հայերենի 19-րդ դարի քերականություններում ձայնարկությունը բնորոշվում է որպես այնպիսի խոսքի մաս, որ ցույց է տալիս մարդու զգացմունքներն ու կրքերը։ Ա. Այտընյանը գրում է. «Միջարկութիւն կամ ձայնարկութիւն կըսուի այն անփոփոխ մասն բանի, որ մարդուն այլևայլ կիրքն ու զգացմունքը կը հայտնէ, ինչպէս՝ ցաւ, զարմանք և այլն»[1]։ Ս. Պալասանյանը ևս ձայնարկությունը համարյա նույն ձևով է բնորոշում. «Այն հնչյուններն ու բառերը, որոնք մեր հոգու կրքերն են արտահայտում, այսինքն՝ զարմանքը, երկյուղը, բարկությունը, ուրախությունը, ցանկությունը և այլն, և այլն, կոչվում են ձայնարկություններ»[2]։

Մ. Աբեղյանը տալիս է ձայնարկության ավելի խորը բնութագրումը։ Նա բառերը բաժանում է երկու խմբի՝ գաղափար նշանակող բառեր, որոնցով մենք խոսում ենք, և զգացմունք ու կամք ցույց տվող բառեր, որոնք խոսքի մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ խոսքից դուրս են մնում։ Դրանք կոչվում են միջարկություններ կամ ձայնարկություններ։ «Միջարկությունները վայրկենական տպավորության տակ առաջացած բացագանչություններ են, որոնք ակամա կերպով արտաբերվում են խոսքի գործարանների անդրադարձ շարժումներով... Այդպիսի բացագանչությունները այն սահմանի վրա են, որ լեզուները միմյանցից չեն տարբերվում, և լեզուն դառնում է մի

---

[1] Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիէննա, 1866, էջ 136։

[2] Ստ. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի*, Թիֆլիս, 1894, էջ 82։

բնական հնչյուն»[3]։ Սակայն ձայնարկությունները չեն մնում բնական հնչյունների մակարդակի վրա, «որովհետև ուրիշներից լսելով նրանց ակամա բացագանչությունները՝ մենք յուրացնում ենք այդ հնչյունները, ինչպես և մյուս բառերը, և ապա հեշտությամբ վերարտադրում ենք դիտավորյալ կերպով՝ մեր սեփական զգացումներն ուրիշներին հաղորդելու համար։ Այսպիսով լեզվի մեջ առաջ են գալիս մի խումբ սովորական ձայնարկություններ»[4]։

Մ. Աբեղյանն ըստ իմաստի ձայնարկությունները բաժանում է երկու խմբի՝ բացագանչական ձայնարկություններ, որոնք ցույց են տալիս զանազան զգացմունքներ՝ ուրախություն, տրտմություն, վախ, զարմանք, զղվանք, ցանկություն, արհամարհանք, զայրույթ, սքանչացում և այլն, օրինակ՝ օխա՛յ, ո՛ւհ, վա՛շ, վի՛շ, օ՛խ, օ՜հ, ավա՛ղ, ա՜հ, վա՛յ, ա՛խ, ափսո՛ս, եղո՛ւկ, բաբե՛, ամա՛ն, վա՜հ, է՛հ, պա՛հո՛, օհո՛, ըհը՛, վա՛հ, թյո՛ւհ, երանի՛, երնե՛կ, վայ-վո՛ւյ, հայ-հո՛ւյ, հե՛յ և այլն, կոչական ձայնարկություններ, որոնցով ուզում ենք ուրիշի ուշադրությունը գրավել, ուրիշին կանչել, մի բան հրամայել, խրախուսել կամ կենդանիներին կանչել, քշել և այլն, օրինակ՝ է՛յ, տո՛, ծո՛, քա՛, ո՛վ, ա՛յ, սո՛ւս, հը՛, աղե՛, դե՛, դե՛հ, հա՛պա, օ՛ն, հո-հո՛, քը՛շ, քշա՛, փը՛շտ, ջո՛ւ-ջո՛ւ և այլն[5]։ Մ. Աբեղյանը ձայնարկությունների մեջ է զետեղում նաև նմանաձայնական կամ բնաձայնական բառերը՝ գրելով. «Ձայնարկությունների մեջ դրվում է նաև նմանաձայնություն կամ բնաձայնություն ասածը, որ արտասանում ենք բնության որևէ երևույթի, կենդանիների կամ անշունչ առարկաների հնչումների նմանողությամբ նրանց մեզ վրա թողած առաջին, հանկարծական տպավորության տակ, ինչպես՝ ճը՛ռռ, թրը՛խկ, շրը՛խկ, զը՛նգ, դա՛ռ, հա՛ֆ-հա՛ֆ և այլն։ Այս կարգին պատկանում են նաև ձայնախաղերը, ինչպես՝ լա-լա-լա՛, տրա՛-լա-լա, վա՛յ-լե-լե-լե՛, վայ-լո-լո-լո՛»[6]։

Ժամանակակից հայերենի ձայնարկությունները ամբող-

---

[3] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 127։

[4] *Անդ*։

[5] *Տե՛ս անդ*, էջ 128։

[6] *Անդ*։

ջական ուսումնասիրության է ենթարկել Ս. Աբրահամյանը։ Նա վիճում է Վանդրիեսի, Վինոգրադովի և այլ լեզվաբանների հետ, որոնք նկատի ունենալով ձայնարկությունների յուրահատկությունները, դրանք դուրս են թողնում խոսքի մասերի համակարգից՝ «Այն յուրահատկությունները, որ նշում են Վանդրիեսը, Վինոգրադովը և ուրիշները, ձայնարկության, որպես խոսքի մասի, յուրահատկություններ պետք է համարել և ոչ թե ձայնարկությունը խոսքի մասերի շարքից դուրս վտարելու հիմունք»[7]։ Հարցը դնելով այս ձևով՝ Ս. Աբրահամյանը հատուկ ուշադրություն է դարձնում ձայնարկության ձևային-հնչյունական և բովանդակային-իմաստային կողմի քննության վրա։ Ձայնարկությունների ձևային-հնչյունական առանձնահատկություններ են համարվում սակավահնչյունությունը (ձայնարկությունների մեծ մասը կազմված է կամ մեկ ձայնավորից՝ ա՛, է՛, ի՛ և այլն, կամ մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից՝ ա՛յ, է՛յ, օ՛յ, վա՛, յա՛ և այլն, կամ երեք հընչյուններից՝ երկու բաղաձայնից և մեկ ձայնավորից կամ մեկ բաղաձայնից և երկու ձայնավորից՝ վա՛յ, վա՛խ, վա՛հ, օհո՛, էհե՛ և այլն), միահնչույթ լինելը (ձայնարկությունները չեն կարող ածանցավոր և բարդ լինել) և առոգանության առանձնահատուկ նշանակությունը նրանց, որպես բառերի, ձևավորման համար[8]։

Անցնելով ձայնարկությունների բովանդակային-իմաստային կողմի բնորոշմանը՝ Ս. Աբրահամյանը նշում է, որ ձայնարկությունները զուրկ լինելով և՛ նյութական, և՛ քերականական իմաստներից՝ արտահայտում են խոսողի զգացական և կամային վերաբերմունքները։ Այս տեսակետից զուգահեռ անցկացնելով ձայնարկությունների և եղանակավորող բառերի միջև՝ նա գրում է. «Ձայնարկությունները որոշ չափով մոտ են եղանակավորող բառերին, բայց դրանց միջև կան էական տարբերություններ։ Եթե ձայնարկությունները զգացական, ոչ դատողական բնույթի բառեր են, ապա եղանակավորող բա-

---

[7] Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, էջ 536—537։

[8] Տե՛ս անդ, էջ 542—544։

տերը, ընդհակառակը, դատողական բնույթի բառեր են։ Նշանակավորող բառերը լինելով վերաբերմունք արտահայտող բառեր, միաժամանակ, ի տարբերություն ձայնարկությունների, ճանաչողական ընդգծված դեր են կատարում, արտահայտելով հաստատում, ժխտում, հավանականություն, անհավանականություն, երկբայություն և այլն... Ձայնարկություններն առարկաներ կամ հատկանիշներ չեն անվանում, հասկացություններ չեն, այլ հանդիսանում են խոսողի զգացական, կամային վերաբերմունքն արտահայտող բառեր՝ առանց անվանելու դրանք»[9]։

Ս. Աբրահամյանը ևս ընդունելով ձայնարկությունների երկու խումբ՝ զգացմունք արտահայտող և կամք արտահայտող ձայնարկություններ, առանձնապես մանրամասնորեն է քննում զգացմունք արտահայտող ձայնարկությունները։ Ընդունելով հանդերձ վերջիններիս իմաստային խմբավորման դժվարությունները, քանի որ նույն և միևնույն ձայնարկությունները ըստ խոսքային տարբեր իրադրությունների կարող են տարբեր զգացումներ արտահայտել, հետազոտողը, համենայն դեպս, սահմանում է զգացմունքային ձայնարկությունների տարբեր խմբերի արտահայտած հետևյալ իմաստները՝ ա) ուրախություն ու հաճելիություն, բ) զարմանք, գ) ցավ, վիշտ, վախ, դ) զզվանք, տհաճություն, ե) դժգոհություն, զ) հանդիմանություն, կշտամբանք, է) զղջում, ափսոսանք, ը) անտարբերություն, համակերպում, թ) վերաբերմունք իրողության ավարտի նկատմամբ[10]։

Գալով կամային ձայնարկությունների բնորոշմանը, Ս. Աբրահամյանը գրում է, որ դրանք «խոսողի կամքն են արտահայտում ուղղված խոսակցին, դիմացինին... Ընդհանուր առմամբ այդպիսի ձայնարկությունը խոսակցի, դիմացինի ուշադրությունը գրավելու միջոց է՝ նրան որևէ միտք հայտնելու, որևէ գործողության մղելու նպատակով»[11]։ *Այսպիսի ձայնարկություններ են՝ ա՛, ա՛յ, հե՛յ, է՛յ, քը՛ս-քը՛ս, փիշի՛-փիշի՛ և այլն։*

---

[9] *Անդ, էջ 547։*

[10] *Տե՛ս անդ, էջ 549—552։*

[11] *Անդ, էջ 553։*

Եվ վերջապես, ձայնարկությունների մեջ են գետեղվում նաև նմանաձայնությունները կամ բնաձայնությունները՝ ծի՛վ-ծի՛վ, ճը՛ռռ-ճը՛ռռ, բը՛զզ, հա՛ֆ-հա՛ֆ և այլն։ «Այս բառերը ձայնարկություններին նման են հատկապես իրենց ձևային հատկանիշներով՝ այդ թվում հնչյունային և առոգանական, իսկ իմաստային տեսակետից սրանք ձայնարկություններին հարում են իրենց դատողական, վերացության հատկանիշի զգալի պակասով»[12]։

Ս. Աբրահամյանի աշխատության մեջ քննվում են նաև ձայնարկությունների շարահյուսական կիրառության առանձնահատկությունները։

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

86. ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԶԳԱՅԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐԻ ԽՈՒՄԲ.— Ինչպես էլ որ մոտենանք խոսքի մասերի դասակարգման հարցին և ինչ տեսակետի վրա էլ որ կանգնած լինենք, համենայն դեպս, մի բան պարզ է. ձայնարկությունները իրենց իմաստային առանձնահատկությամբ խիստ տարբերվում են բառերի մյուս բոլոր խմբերից։ Այդ տարբերությունն արտահայտվում է նրանում, որ ձայնարկությունները ոչ թե գաղափարներ են արտահայտում, այլ ընդհանուր, անորոշ ձևով դրսևորում են խոսողի զգացմունքն ու կամքը։ Մի լեզվաբան, որոշ չափազանցություն կատարելով, գրում է, որ ձայնարկությունները ոչ միայն բառեր չեն, այլև փաստորեն հենց բառերի ժխտումն են, որովհետև մենք բառերը գործածում ենք այն ժամանակ, երբ ուզում ենք խոսել, իսկ ձայնարկությունները գործածում ենք այն ժամանակ, երբ չենք ուզում խոսել։ Ինչևիցե, մի բան ակնհայտ է, որ ձայնարկությունները մարդու ոչ թե դատողական, այլ զգացմունքային աշխարհի արտահայտիչներն են։ Ընդհանուր ձևով սահմանելով՝ կարելի է ասել, որ ձայնարկությունները դրսևորում են խոսողի զգացմունքները այս

---

[12] Անդ, էջ 555։

կամ այն երևույթի նկատմամբ։ Արտաբերելով այս կամ այն ձայնարկությունները, որոնք գիտակցված են նաև նույն լեզվով խոսող հասարակության մյուս անդամների կողմից, խոսողը հենց դրանով նշում է, որ ինքն ընտարբեր չէ տվյալ երևույթի նկատմամբ, անտարբերությամբ չի ընկալում տրվյալ երևույթը, դրա նկատմամբ արտահայտում է իր այս կամ այն զգացմունքը՝ ուրախությունը, տրտմությունը, զարմանքը, հիասթափությունը և այլն, որոնք սովորական դատողական բնույթի բառերով արտահայտվելու դեպքում երբեք այդքան ուժեղ արտահայտչականություն, հուզականություն ու զգացականություն ունենալ չեն կարող. հմմմ. Ուրախ եմ, որ նա եկավ||Ջո՞ն, նա եկավ. Վշտացա, որ ինձ չլսեցին||Ա՜խ, ինձ չլսեցին. Դժգոհ եմ, ձանձրացա, վե՛րջ տուր||Օ՛հ, վերջ տուր. Սքանչացած եմ, զարմացած, հիացած՝ գրքերի աշխարհը տիեզերք է անեզր||Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր։ Ահա սրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ձայնարկություններն առատորեն գործածվում են կենդանի խոսակցական լեզվում և գեղարվեստական գրականության մեջ՝ տեղ չունենալով, ասենք, գիտա-տեխնիկական գրականության մեջ։

Հարցին մոտենալով այս տեսակետից՝ կարելի է ասել, որ ձայնարկությունները նույնքան անհրաժեշտ են լեզվում, որքան բառերի մյուս խմբերը (մյուս խոսքի մասերը)։ Եվ պատահական չէ, որ մեզ ծանոթ բոլոր լեզուներն ունեն ձայնարկությունների բավականին հարուստ քանակ։ Թվում է, թե դժվար լինի լեզու, որ ձայնարկություններ ընդհանրապես չունենա։

Արտահայտելով մարդու զգացական զանազան վերաբերմունքները և այսքանով էլ կազմելով բառերի յուրահատուկ խումբ՝ ձայնարկությունները ունեն իրենց ձևային առանձնահատկությունները և իրենց հնչյունական յուրահատուկ կերպարանքով ու հնչերանգով տարբերվում են մյուս բոլոր բառախմբերից։ Այս մասին խոսվել է նախորդ էջերում՝ հարցի պատմությունը ներկայացնելիս, ուստի և այդ խնդրին կրկին անդրադառնալու հարկ չկա։

Ձայնարկություններն ունեն նաև իրենց կիրառական-շա-

յատկական առանձնահատկությունները, որոնք արտահայտվում են այն բանում, որ նրանք նախադասության անդամ չեն դառնում, որպես կանոն, վերաբերում են ոչ թե նախադասության մի անդամին, այլ ամբողջ նախադասությանը՝ նրան հաղորդելով այս կամ այն զգացական երանգը և, այսպիսով, խոսքը հագեցնելով հուզականությամբ ու արտահայտչականությամբ։ Նշենք նաև այն, որ ձայնարկությունները հաճախ կրկնվում են, ինչպես՝ վայ-վա՛յ, վույ-վո՛ւյ, ա՛յ-ա՛յ-ա՛յ և այլն, այսպիսով արտահայտելով տվյալ կրքի, զգացման ուժգնությունը։

Գրավոր խոսքում ձայնարկությունները նախադասության մյուս անդամներից սովորաբար անջատվում են ստորակետով և իրենց վրա ունենում են բացականչական նշան կամ շեշտ՝ որպես նրանց առանձնահատուկ հնչերանգի արտահայտություն, օրինակ՝ «Ա՛խ, չէ, ամա՛ն, ասում են՝ դա Մի դիակ է լո՛ւռ, հոտած» (ՀԹ, 2, 70). «Վուշ-վո՛ւշ, Անուշ, վուշ-վո՛ւշ, քուրի՛կ, Վո՛ւշ քու սերին, քու յարին, Վո՛ւշ-վո՛ւշ, Սարո, վուշ-վո՛ւշ, իգիթ, Վո՛ւշ քու սիրած սարերին» (ՀԹ, 2, 71). «—Վա՛յ, փախե՛ք, եկա՛վ... հա՛յ, հարա՛յ, եկավ...» (ՀԹ, 2, 114). «Հե՛յ, ո՞ւր ես, Դավի՛թ, հայոց պահապան, Քարը պատռվի—դո՛ւրս արի մեյդան» (ՀԹ, 2, 109). «Ո՛, մանկության մասին գրել են շատ-շատերը» (ԵՀՐԵ, 445). «Պա՛ճ, դրանք հո գելեր են, անցավ մտքովս» (ՎԱ, 44). «Է՛, Բողարը անխե՞լք է, որ նման առաջարկին դեմ լինի» (ՎԱ, 24)։

Երբ ձայնարկությունը վերաբերում է նախադասության մի կոնկրետ անդամի, այդ դեպքում նրանց միջև արտասանական դադար չի լինում, և, հետևաբար, գրավոր խոսքում ձայնարկությունը ստորակետով չի անջատվում, օրինակ՝ «Է՛յ հորեղբայր, իմ հերահոտ» (ՀԹ, 2, 116). «Ա՛յ սարսաղ, էդ ի՞նչ արիր» (ՎԱ, 29). «Ո՛վ լուսեղեն, դռներդ բաց» (ՀԹ, 2, 146)։

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

87. ԲԱՅԱԿԱՆՋԱԿԱՆ ԵՎ ԿՈՂԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Հայերենի քերականությունների մեջ ձայնարկությու-

ները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ բացականչական *ձայնարկություններ, որոնցով արտահայտում ենք մեր զգացմունքները՝ ուրախություն, վիշտ, ցավ, հիացմունք, զարմանք և այլն, օրինակ, ջա՜ն, ա՜խ, օ՜հ, վա՜յ, ա՛յ և այլն, և* կոչական *ձայնարկություններ, որոնցով ուզում ենք ուրիշների ուշադրությունը հրավիրել, մղել մի բանի, խրախուսել կամ կենդանիներին կանչել, քշել, վանել և այլն, օրինակ՝ հե՛յ, է՛յ, դե՛, դե՛հ, փի՛շտ, ջո՛ւ-ջո՛ւ և այլն*[13]։

I. ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

88. ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԻ ՄԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏԻ ԴԵՐԸ ԱՅՍ ՀԱՐՑՈՒՄ.— Բացականչական ձայնարկությունների մի զգալի մասը, եթե կարելի է այսպես արտահայտվել, բազմիմաստ է և գործածվելով շարահյուսական տարբեր շրջապատներում՝ արտահայտում է ամենատարբեր ու ամենաբազմազան զգացական վերաբերմունքներ։ Դրանում համոզվելու համար բավական է համեմատել ախ բառի կիրառությունները հետևյալ նախադասությունների մեջ։

1. *Ա՜խ, վերջ կունենա՞ն մեր տանջանքները։*
2. *Ա՜խ, ինչ երանելի օրեր էին։*
3. *Ա՜խ, մեկ էլ տեսնեի նրան։*
4. *Ա՜խ, ինչպես է ցավում։*
5. *Ա՜խ, լավ պատժվեց։*
6. *Ա՜խ դու, ա՜խ դու, այդ ի՞նչ ես արել։*
7. *Ա՜խ, վերջապես ընկար ձեռքս։*
8. *Ա՜խ, սիրտս անհանգիստ է։*
9. *Ա՜խ, ինչ գրավիչ է նրա ձայնը։*
10. *Ա՜խ, հասա նպատակիս։*

Ոչ մի կասկած չի կարող լինել այն մասին, որ բերված նախադասություններում ախ բառը զգացական տարբեր վե-

---

[13] *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 128։ Ս. Աբրահամյանը ձայնարկությունների այս խմբերը կոչում է* զգացում արտահայտող ձայնարկություններ *և* կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություններ *(տե՛ս «Չթեքվող խոսքի մասերը...», էջ 547 և հջրդ.)։*

բաբերմունքներ է արտահայտում, որոնք դատողական բնույթի բառերով դժվար թե հնարավոր լինի ճշգրտորեն վերարտադրել։ Հասկանալի է, որ ախ ձայնարկության զգացական տարբեր իմաստները կամ իմաստային երանգները պայմանավորված են նշանակություններով տվյալ նախադասության մեջ մտնող այլ բառերի, որոնք «թելադրում են» ընկալել տվյալ բառը այսինչ և ոչ թե այնինչ իմաստով։ Դրանից կարելի է եզրակացնել, որ բացականչական ձայնարկությունների իմաստների դրսևորման մեջ շարահյուսական շրջապատը բացառիկ նշանակություն ունի։

Պետք է նշել, որ հատկապես աչքի է զարնվում մի քանի շատ գործածական ձայնարկությունների բազմիմաստությունը։ Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանում» արձանագրվում է, օրինակ, որ վայ միջարկությունը արտահայտում է հետևյալ իմաստները։

1. Ցավ և վիշտ — «վա՜յ, ես մեռնում եմ»։ 2. Ափսոսանք — «վա՜յ, խեղճ տղա, իզուր կորար»։ 3. Տարակուսանք, շվարածություն — «—Ոչ մի կառք չկա։ —Վա՜յ, հիմա ի՞նչ պիտի անենք»։ 4. Սպառնալիք — «ծեծե չես արել, վա՜յ քո մեղքը»։ 5. Զարմանք մի անակնկալ բան լսելիս — «—Մեր հարևանի որդին եկել է։ —Վա՜յ, մենք նրան մեռած էինք համարում»։ 6. Զարմանք և զվարճություն — «Վա՜յ դու կրակ ուտես, տղա՜, որտեղի՞ց այդ բանը հնարեցիր»։ 7. Ուրախություն, զվարթություն մի աջողության առթիվ — «Վա՜յ, էգ ինչ լավ բան եղավ»։ 8. Վայ թե ձևով՝ կասկած, երկյուղ— «Վայ թե իմանան, այն ժամանակ մեր բանը վատ կլինի»։ 9. Կրկնված ձևով՝ խիստ ցավ — «Վա՜յ-վա՜յ-վա՜յ, ցավում է, կամաց»։ 10. Շվարում, նաև ենթգնություն ու սրճամարճանք— «Աղբյուրները կտրվել են, ջուր չկա։— Վա՜յ-վա՜յ-վա՜յ, ի՞նչ պիտի անենք». «—Կգնամ և ձեր տունը էլ ոտք չեմ կոխի։ — Վա՜յ-վա՜յ-վա՜յ, ագռավները սև կհագնեն»։ 11. Սրճամարճանք մեկի անճարակության նկատմամբ — «Վա՜յ, վա՜յ, վա՜յ, երեք ժամ է՝ դեռ մի նամակ չի գրել»։ 12. Վշտակցություն, կարեկցություն մեկի նկատմամբ — «Վա՜յ քեզ, մեղավորիդ, փրկության հույս չկա»։ 13. Սրճամարճանքի արտահայտություն, որպես թե ասելիս լինի՝ անպետք բան է,

վատ է — «վա՜յ այն խորտկին, որ կոշկակարն է եփել, վա՜յ այն կոշկին, որ խոհարարն է կարել»: Դրանցից բացի, վայ միջարկությունը գոյականական կիրառություն ունի և արտահայտում է՝ ցավ ու վիշտ — «Ձեր վայերով տունը լցրել եք», շարիֆ, աղետ, թշվառություն — «Այս ինչ վայ էր, որ եկավ մեր գլխին»: Կան նաև վայ բառով կազմված դարձվածներ և առանձնահատուկ արտահայտություններ, ինչպես՝ «Վայ գա գլխիս կամ վայ գլխիս». «Վայն եկել է մեզ տարել». «Վայն է եկել, ջուրն է տարել». «Ինչ վայ տամ գլխիս». «Հայ-հայը գնացել, վայ-վայն է մնացել» և այլն:

Կարելի է բոլորովին չկասկածել, որ բերվածներով չեն սպառվում վայ ձայնարկության իմաստային երանգները և շարահյուսական տարբեր կապակցությունների իմաստներով պայմանավորված՝ այս բառի մեջ նորանոր իմաստային երանգներ կարելի է սահմանել:

Վերցնենք այնքան գործածական o ձայնարկությունը: Սա ցույց է տալիս ուժեղ կիրք, գրգռվածություն, հուզմունք, զգացմունք՝ դրական թե բացասական իմաստով—սեր, քինքշություն, գութ, կարեկցություն. ատելություն, արհամարհանք, դժգոհություն, կշտամբանք և այլն: Այդ իմաստներն ընդհանուր ձևով դրսևորվում են միայն շարահյուսական կապակցությունների մեջ, բայց հաճախ վերջիններս էլ որոշակի չեն բացահայտում, թե o ձայնարկությունը ինչ զգացմունք է արտահայտում՝ սե՞ր, թե՞ քինքշություն կամ ատելությո՞ւն, թե՞ արհամարհանք և այլն: Հենց շարահյուսական կապակցության մեջ էլ շատ դեպքերում այդ ձայնարկության իմաստն ընդհանուր է ու անորոշ, և միայն կարելի է ասել, որ դրանով դրսևորվող խոսողի ուժեղ զրգռմունքը, զգացմունքը, վերաբերմունքը տվյալ երևույթի, առարկայի կամ անձի նկատմամբ դրական է կամ բացասական: Վերցնենք Չարենցի հետևյալ նախադասությունը. «O՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր»: Ի՞նչ է արտահայտում o ձայնարկությունն այստեղ — հիացմո՞ւնք, զարմա՞նք, սե՞ր, քնքշա՞նք, մտախոհությո՞ւն, թե՞ այս բոլորը միաժամանակ:

Իսկ ի՞նչ է արտահայտում նույն ձայնարկությունը Շիրվանզադեի հետևյալ նախադասության մեջ. «O՜, նա շատ է

տեսել այդպիսի դատեր».— ատելությո՞ւն, արհամարհա՞նք, տխրությո՞ւն, զզվա՞նք, ծա՞ղր, թե՞ այս բոլորը միաժամանակ։

Բերված մի քանի օրինակներն էլ բավական են համոզվելու, որ շատ հաճախ այնքան էլ հեշտ չէ այս կամ այն ձայնարկությունը որոշակիորեն մտցնել այս կամ այն իմաստային խմբի մեջ։ Ձայնարկությունների մի զգալի մասը, ըստ շարահյուսական տարբեր շրջապատներում ունեցած գործածության, հանդես է գալիս ամենատարբեր, իսկ երբեմն էլ հակադիր ու իրար բացառող զգացմունքների արտահայտիչ։ Այն էլ ասենք, որ ձայնարկությունների արտահայտած այդ տարբեր զգացմունքները շատ հաճախ ուղղակի անհնար է սովորական դատողական բնույթի բառերով արտահայտել։ Իհարկե, կան ձայնարկություններ, որոնք «մենիմաստ» են, օրինակ՝ պահո—զարմանք, բյու—զզվանք, բայց դրանք երեվույթի ընդհանուր էությունը չեն փոխում։

Ահա այս իսկ պատճառով էլ մենք աննպատակահարմար ենք համարում Ս. Աբրահամյանի՝ ձայնարկությունների իմաստային դասակարգման փորձը։ Ընդունելով հանդերձ, որ «ձայնարկությունների խմբավորումն ըստ իմաստի որոշ չափով պայմանական է», նա, համենայն դեպս, ձայնարկությունները տեղաբաշխում է իմաստային հետևյալ խմբերի մեջ. 1. ուրախություն և հաճելիություն, 2. զարմանք, 3. ցավ, վիշտ, վախ, 4. զզվանք, տհաճություն, 5. դժգոհություն, 6. հանդիմանություն, կշտամբանք, 7. զղջում, ափսոսանք, 8. անտարբերություն, համակերպում, 9. վերաբերմունք գործողության, իրողության ավարտի նկատմամբ[14]։

Մի կողմ թողած այն, որ ձայնարկությունների դրսևորած զգացական վերաբերմունքները վերոհիշյալներով չեն կարող սահմանափակվել, այլև այն, որ, օրինակ, ցավը՝ մի կողմից, և վախը՝ մյուս կողմից, նույն իմաստային խումբը չեն կարող կազմել (տե՛ս վերևի 3-րդ խումբը), նշենք, որ վերոհիշյալ դասակարգման աննպատակահարմարությունը աչքի է զարնվում թեկուզ և նրանով, որ նույն և միևնույն ձայնար-

[14] Տե՛ս Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը..., էջ 551—552։

կությունները տեղաբաշխվում են մի քանի իմաստային խմբերի մեջ։ Այսպես, օրինակ, վայ-ը մտնում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ խմբերի մեջ, օճ-ը՝ 1-ին, 2-րդ, 5-րդ, 7-րդ խմբերի մեջ՝ չհոսելով այն մասին, որ վերջինս կարող էր մտնել նաև 3-րդ և 4-րդ խմբերի մեջ։ Ահա թե ինչու մենք այսպիսի իմաստային խմբավորում չենք կատարում և հաջորդ հատվածում ուղղակի բերում ենք հայերենի գործածական ձայնարկությունները՝ ըստ հնարավորության սահմանելով նրանց գլխավոր իմաստներն ու նշանակությունները։

89. ԲԱՅԱԿԱՆՋԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ.— Ստորև այբուբենական կարգով բերվում են ժամանակակից հայերենի գործածական բացականչական ձայնարկությունները, և յուրաքանչյուր ձայնարկության համար տրվում են համապատասխան օրինակներ, որոնք և գաղափար են տալիս նրանց նշանակությունների ու իմաստների մասին։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ոչ մեր բերած ցանկը կարող է համարվել ամբողջական ու կատարյալ, որովհետև ձայնարկություններն այնպիսի բառեր են, որ ամեն րոպե կարող են ստեղծվել ամեն մեկի կողմից, ոչ էլ մեր սահմանած նշանակությունները կարող են համարվել սպառիչ ու ճշգրիտ, որովհետև, ինչպես նշել ենք, ձայնարկությունների նշանակությունները հաճախ դժվար կամ ուղղակի անհնարին է սովորական դատողական բնույթի բառերով արտահայտել, իսկ մյուս կողմից էլ շատ դեպքերում պայմանավորված են լինում շարահյուսական շրջապատով ընդհանրապես և նախադասությունից նախադասություն տարբեր են լինում։ Այսուամենայնիվ կարծում ենք, որ ստորև բերվող բացականչական ձայնարկությունների ցանկը և նրանց արտահայտած իմաստների նշումը համապատասխան օրինակներով, այս հարցի քննության մի յուրօրինակ փորձ լինելով, անպայմանորեն կնպաստի

տվյալ խնդրի ավելի բազմակողմանի ուսումնասիրությանը։

Ա— Ջարմանք և ուրախություն, *առանձին դեպքերում՝* սրտենեղություն.— «Ա՛, եկա՞ր, Արշակ թագավոր» (*Սխ, 21*). «—Բարի լիս ձեզ։ —Ա՛, բարով, բարով, քեռի՛ Խեչան» (*ՀԹ, 2, 367*). «—Ա՛, բարև, բարև... Էս ո՞ր խաչիցն էր» (*ՀԹ, 1, 319*). «Ա՛, վերջապես շնորհ արեցիք». «Ա՛, ուրեմն ինձ սպառնո՞ւմ ես» (*ՍՄ*)։

Ախ — Ցավ, վիշտ, տառապանք, *առանձին դեպքերում՝* բավարարվածություն, ուրախություն *մի դեպքի, երևույթի կատարման առթիվ.*— «Ա՜խ, իմ ազիզ յարն է լալի Հոնգուր-Հոնգուր էն սարում» (*ՀԹ, 2, 48*). «Ա՜խ, չի ուզում նա այդքան հարստությունը» (*ՇՔ, 202*)։ «Ա՜խ, երանի կարողանար իր ամբողջ անցյալն այդպես խորտակել ու նորից սկսել ապրել» (*ՇՔ, 216*). «Ա՜խ, Եգոր, մի էստեղից դուրս գայիր» (*ԱԲ, 133*). «Ա՜խ, նանի՛ ջան, ինչ լավ էր սիրտդ իմացել» (*ՀԹ, 2, 324*). «Ա՜խ, թողնեն մարդ էսպես քնի շնկշնկան հովի տակ» (*ՎԱ, 11*)։

Հաճախ գործ է ածվում նաև գոյականաբար, ինչպես՝ «Ամբողջ օրը **ախ** էր քաշում, մտածում իր մինուճար որդու մասին». «Կյանքս **ախով** ու վախով անցավ». «Անց կացա՜ն... Օրերս թռան, ա՜նց կացան. **Ախ** ու վախով, դարդերով» (*ՀԹ, 1, 147*)։

Ահ — Վիշտ, ցավ, դժգոհություն, *առանձին դեպքերում՝* զարմանք.— «Ա՜հ, որքան հուսախաբ արավ նրան այդ սիրված որդին և որքան տանջանքներ պատճառեց» (*ՇՔ, 13*). «Ա՜հ, ժամանակակից երիտասարդությունը բոլորովին փչացել է» (*ՇՔ, 59*). «Ա՜հ, որքան Անուշը կփափագեր զբաղվել որևէ ոչ-ընտանեկան գործով» (*ՇՔ, 63*). «Ա՜հ, ինչ հիմարություն արավ նա և ինչո՞ւ» (*ՇՔ, 215*). «Ա՜հ, նա ուրեմն ազատվեց». «Ա՜հ, ինչպես է կարողացել դուրս պրծնել այդ դժոխքից»։

Ամա՜ն — Ցավ, վիշտ, վախ, ճուսաճատություն, դժգոհություն.—«Ամա՜ն, էրեցիր սիրտս քու սիրով» (*ՀԹ, 2, 46*). «Բերում են հրե՜ն, ամա՜ն, մեր տան դեմ» (*ՀԹ, 2, 69*). «—Ամա՜ն, քեզ մատաղ, ա՛յ Օհան ախպեր» (*ՀԹ, 2, 103*). «Ինչ որ կուզես՝ առ, տա՛ր, ամա՜ն» (*ՀԹ, 2, 109*). «Ամա՛ն, ամա՛ն,

նա դիժ է, մեզ կսպանի, հինգ երեխաների տեր ենք» (ՇՔ, 46)։

Այ — Զարմանք, ցիացմունք, սպառնալիք.—«*Ա՛յ քեզ հըսկա, գլուխն էստեղ, ոտներ չկա» (ՀՔ, 1, 245). «Ա՛յ, ձի... հազար մանեթ գին ունի». «Հալալ է տղին, ա՛յ իգիթություն». «Դու էլ ես էս օրն ընկնելու, ա՛յ, ձուկ բռնելուց ձեռ քաշի». «Փայտը գլխովդ կտամ, ա՛յ». «Ձայնդ կտրիր, կապտակեմ, ա՛յ»։*

Կրկնված ձևով արտահայտում է ծաղր, կշտամբանք, օրինակ՝ «Ա՛յ, ա՛յ, ա՛յ... ի՜նչ գովելի հնազանդություն, ի՜նչ զմայլելի առաքինություն». «Ա՛յ, ա՛յ, ա՛յ... նա ոչ մի բան չի տեսել, ոչ մի բան չի հիշում»։

Համեմատ գործածվում է քե բառի հետ՝ արտահայտելով ուժեղ զարմանք, իղձ, ցանկություն։ Այդ դեպքում նախադասության վերջում սովորաբար գործածվում է նաև հա ձայնարկությունը, օրինակ՝ «**Այ քե** *ծեծեցին, հա՜». «**Այ քե** ձիեր էին, հա՜». «**Այ քե** *կուտեի»։*

Ունի նաև ցուցականության իմաստ, ինչպես՝ «**Այ այստեղ** *արածում էր Յոլակը» (ԱՔ, 215). «**Այ** հենց սենյակի տակն է մեր խանութը» (ՇՔ, 43)։*

Լայնորեն գործածվում է նաև կոչական բառերի հետ որպես կոչական ձայնարկություն, օրինակ՝, «Ա՛յ տղա, քեզ ի՞նչ է պատահել, հո հետևիցդ չե՞ն ընկել» (ՎԱ, 26). «—Ա՛յ տղա, էս կարգին մարդ ա դառել» (ՀՔ, 1, 325). «—Շալակդ թեթև արա, ա՛յ որդի» (Սխ, 4)։ Այսպիսի օրինակներ տե՛ս նաև կոչական ձայնարկությունների բաժնում։

Ավաղ — Վիշտ, ցավակցություն, ախսոսանք.—«*...բայց որոնց, ավա՛ղ, չէր ճանաչում անձամբ» (Մ, 6, 183). «Ավա՛ղ այս անցավոր փառքին». «Ավա՛ղ, այն օրերն էլ ետ չեն գա». «Ավա՛ղ, անցավ չահելությունս»։*

Բա — Դժգոհություն, զանգատ, նաև հաստատում ու հաճանձայնություն.— «*Հետս չխոսեց, երեսիս չնայեց, բա՛». «Շան լափ թափեց գլխիս, բա՛». «Երեխաներին օր չի տալիս, բա՛». «—Գնացիր տեսա՞ր։ —Բա՛». «—Կարողացա՞ր պարտքդ առնել։ —Բա՛». «—Գործը գլուխ բերեցի՞ր։ —Բա՛»։*

Բաս — *Մի երևույթի հաստատման բավարարվածություն.—*

«—Օվակիմ բիձա, չէ որ ասում են պախրեն էլ տեր ունի։ —Ունի բա՛ս, պախրեն մեծ տեր ունի։ —Ետևս էդ դրո՞ւստ բան ա։ —Դրուստ ա, բա՛ս» (ՀՔ, 1, 360). «—Ապի, սրանք ժամ ո՞ւնեն։ —Ունեն բա՛ս, սրանք էլ մեզ նման հայ քրիստոնյա են։ ...—Էստեղ էլ պրիստավ կա՞ որ։—Կա բա՞ս» (ՀՔ, 1, 324)։

Է — սրտնեղություն, սաստում, հետաքրքրասիրություն, հարցում, դիմում.— *«—Է՛, քանի տարի մեր տանն էր... Հիմի իր իրավունքն առավ ու գնա՛ց...» (ՀՔ, 1, 349). «—Տերտերը գրել չի, չկա։ —Է՛, դե ասում ես, էլի» (ՀՔ, 1, 369). «Մի ասա Է՛։ Ջորս տուն կդառնային Է՛» (Սհ, 11). «—Է՛, Է՛, իշխաններ, իշխաններ,— Հառաչեց Գարեգինը» (ԴԴ, 285). «Է՛, Է՛, Է՛... Ժողովուրդ, արքունի զորք են կանչում, բանն ո՛ւր հասավ» (ԴԴ, 149). «—Երեկ երեկո նա մեզ մոտ էր եկել։ —Է՛։ —Քրոջս առաջարկություն արավ։ —Է՛։ —Քույրս համաձայնություն տվեց։ —Է՛» (ՍՄ). «Է՛, Բողարը անխե՞լք է, որ նման առաջարկին դեմ լինի» (ՎԱ, 24). «—Գիքոր ջան, բա եկել եմ է... ես քու ապին եմ է» (ՀՔ, 1, 328)։*

Էլի — Սրտնեղություն, անբավականություն.— *«Դե բավական է էլի՛». «Գլուխս տարար էլի՛». «Դե վերջացրու էլի՛». «Դե ասում ես էլի՛»։*

Էխ — Հանդիմանություն, կշտամբանք.— *«—Էխ-է՛խ մուժիկ։ Մուժիկին հարկավոր է մի զույգ կոշիկ» (ԵՋՐԵ, 349). «Էխ-է՛խ, մուժի՛կ... Վերցնում է մուժիկը գլխարկը, Հեռանում է՝ հանելով փոշի» (ԵՋՐԵ, 350)։*

Էհ — Անտարբերություն, համակերպում, դժգոհություն, արհամարհանք.— *«Է՛հ, ի՞նչ արավ. փորձեց մոլորեցնել մի աղջկա և չկարողացավ» (ՇՔ, 214). «Է՛հ, մահից, գիտեմ, ազատում չկա» (ԵՋՐԵ, 601). «Է՛հ, ասոված նրա հոգուն ողորմի, Մի օր էլ մենք ենք էսպես գնալու» (ՀՔ, 2, 83). «Է՛հ, օր չտեսանք» (Սհ, 11). «Է՛հ, խեղճ մայրիկներ, տղամարդկանց խաբվածն եք» (Սհ, 248). «Է՛հ, վերջապես գյուղը երևաց, Հիմի մենք նրանց կուրախացնենք, նրանք՝ մեզ» (ՎԱ, 17)։*

Էհե — Հեգնանք, ծաղր, զարմանք.— *«—Էհե՛, Թագավորի անուն ունես, մեր տղա» (Սհ, 9). «Էհե՛, ես նժույգի վրա եմ*

ծնվել» (ԴԴ, 106). «էհե՛, այդ էր պակաս». «էհե՛, դո՞ւ էլ այդ օրն ընկար»։

Էհեյ — Հանդիմանություն, կշտամբանք.— «էհե՛յ, ի՞նչ եք անում». «էհե՛յ, բա ամո՞թ չի ձեզ համար». «էհե՛յ, վերջ տուր հիմարություններիդ» և այլն։ Առանց հանդիմանության կամ կշտամբանքի երանգի գործածվում է նաև որպես կոչական ձայնարկություն, օրինակ՝ «էհե՛յ, մո՛տ եկեք, օգնեցե՛ք». «էհե՛յ, լսո՞ւմ եք ինձ» և այլն։

Էյ — Հիասթափություն, կարոտ.— «է՛յ աշխարհ, ա՛յս էր քո վայելչությունը» (ՍՄ). «է՛յ ջահելություն, անցար և քնզ հետ տարար ամեն ինչ». «է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր, Ահա ձեզ տեսա ու միտս ընկան, Առաջս եկան երջանիկ օրեր, Սիրելի դեմքեր, որ հիմի չկան» (ՀԹ, 2, 45)։ Ավելի հաճախ գործածվում է որպես սովորական կոչական ձայնարկություն, օրինակ՝ «է՛յ, էդ ի՞նչ ես անում». «է՛յ, այստեղ մտնել չի կարելի» և այլն։

Ըհ — Արհամարհանք.— «Ը՛հ, հողեմ ձեր գլուխը, որ վայրենի եք ու գալիս եք մարդի գլխի խաթար դառնում» (ՀԹ, 1, 317). «Ը՛հ, դրա եղածն ինչ է». «Ը՛հ, բա նա մա՞րդ է». «Ը՛հ, բա նա գործ անո՞ղ է»։

Ըհը — Զարմանք, անսպասելիություն, անակնկալություն.— «Երգում էր մարիկ կկուն. Մին էլ, ըհը՛, Ջղվեան եկավ» (ՀԹ, 1, 238). «Մի քիչ գնացի, մին էլ տեսնեմ, ըհը՛, արջի հետքը առաջիս» (ՀԹ, 1, 336). «Մին էլ, ըհը՛, ձմեռը Փռեց իրեն թևերը» (Ախ, 42). «Ըհը՛, ձյունի վրա հետքեր նկատեցի» (ՎԱ, 223)։

Թյու՛թուճ՛թու — Զզվանք, խորշանք.— «Եվ հարկավոր քանակով օգանավ էլ չունենք, տանկ ու հաց էլ, բյո՛ւ» (Ախ, 13). «—Թո՛ւճ, էլի հազում է խոզի ճուտը,—մի օր դասի ժամանակ դժգոհ ասաց ավագ ուսուցիչը» (ՎԱ, 84)։

Ի — Արհամարհանք.—«Ի՞, պակսես դու, էլի աչքդ էն սատանի հաջաթի վրա՞ է» (ՎԱ, 44). «Ի՞ի՞, նրա պահածին գելն ուտի» (ՎԱ, 8)։ «Ի՞, դու տուն դնող չես»։ «—Ի՞ի՞, շան երես ունես, շան...» (ՎԱ, 47)։

Իա — Սպառնալիք.— «Ի՞նչ ես ուզում ինձնից, իա՛». «Իա՛, վերջացնելո՞ւ ես, թե՞ չէ». «Շատ որ ջղայնացա, կա-

ահմ, ֆա՛»: Զարմանք.— «—Նրան բանտարկել են։— Իա՞». «—Պատմությունից կտրվեցիր։ —Իա՞». «—Նրանք իրենց տունը վաճառել են։ —Իա՞»:

Հա — Զարմանք, մեծիծաղ, արհամարհանք, սպառնալիք.— *«Ուտում է հա՞». «Համա մոզի ժամանակդ էր հա՞». «Հա՛, դու էիր մնացել». «Հա՛, էդ էր պակաս». «Ամեն ինչ կպատմեմ հա՞». «Խելոք մնա, կծեծեմ հա՞». «Ոչ մի խոսք, թե չէ վատ կլինի հա՞»։*

Հայ, հայ-հայ, հայ-հույ — *խրախուսանք, հանդիմանություն, կշտամբանք, սպառնալիք, խրոխտանք.*— *«Հա՛յ քեզ մատաղ շուն, որ հասավ մեջքին տվավ էլի, ոնց որ մի գընդակ ըլի» (ՀՔ, 1, 333—334). «Հա՛յ հող ու ջրի աստոջ, հա՛յ,—աղաղակեց որսկանը» (ՀՔ, 1, 358). «—Սպանեցի՛ն... հա՛յ, օգնությո՛ւն... —Հա՛յ, օգնությո՛ւն... սպանեցի՛ն...» (ՀՔ, 1, 259). «—Հա՛յ-հա՛յ, ասավ, հորեղբայրս է, Սասմա սարից ինձ է գոռում» (ՀՔ, 2, 125). «Հա՛յ-հա՛յ, մոտիկ տեղից եկա, Տե՛ս ո՛րտեղից հիմի կգամ» (ՀՔ, 2, 126). «Հա՛յ-հո՛ւյ, ես քո խոսքերից վախեցողը չեմ». (ՍԽՔ, 124). «Գընանք, զարկենք, Ջարդենք, կրակենք... —Հա՛յ, հո՛ւյ, առա՛ջ. դե՛ ձեզ տեսնեմ» (ՀՔ, 1, 261)։ Այս ձևերը գործածվում են նաև գոյականաբար, օրինակ՝ «Հայ-հույը գնացել, վայ-վայն է մնացել». «Ջուր ես հայ-հույ անում։ Ես քո հայ-հույից վախեցող չեմ». «Եկավ հայ-հույ արեց, գնաց»։*

Հայայ — Շողոքորթություն, ծնկաթ.— *«Հայա՛յ, ցավդ առնեմ ուստա Բարսեղը, պարտական ենք» (ՇՔ, 44). «Հայա՛յ, դու ոտ դնես մեր տո՞ւն։ Տունտեղս քեզ փեշքեշ»։*

Հարայ — Վախ, սարսափ. —*«Վա՛յ, ճարա՛յ, փախեք... Մեծեր, երեխեք Սրտաճաք եղած, Գործները թողած, Որը տուն ընկավ, որը ժամ, խանութ» (ՀՔ, 2, 101). «Մենակ մի հոգի անզուսպ կատաղած՝ Հարա՛յ է կանչում, երեսը պոկում» (ՀՔ, 2, 65)։*

Հեյ գիտի՝ հեյ գիդի — *Ափսոսանք անցած-գնացածի համար.*—*«Քանի լուսեղեն քու հերը դեռ կար, է՛յ գիդի օրեր— ո՛րտեղ եք կորել, ես շատ եմ էնտեղ որսի միս կերել» (ՀՔ, 2, 105). «Հե՛յ գիտի գիժ ջահելություն» (ՎԱ, 48). «Հե՛յ գիտի իմ կորած մանկություն, տատնամյակների միջից ական-*

չիս են հասնում կցկտուր ձայներդ» (ՎԱ, 8). «Սիրուհուցս լուր տար, լուր բեր, սիրաբեր, Հե՛յ գիդի բլբուլս, սարերի գյուլս» (ժող. երգ)։

Հը — Հարցմունք.— «Հը՛, ուժ առար, հա՞, դե արի կըռվենք» (ՎԱ, 9). «—Հը՞,—շշմեց պառավը» (Սե, 10). «Հը՞, էս քարն է մեզ բախտ բերելո՞ւ» (Սե, 69). «—Թող գնան ապրեն, հը՞, ինչ կասես, Բողար» (ՎԱ, 29). «Եթե այդպես է, ապա ինչո՞ւ եք եկել խցկվել մեր գյուղը, հը՞, ինչու» (Սե, 32). «—Հը՞, ինչպե՞ս ես, արծիվ» (Սե, 8). «—Հը՞, բոյը կարճ չի՞, նանի» (ԱԲ, 200)։

Հըմ—Նեղիճ հարցմունք.— «—Հը՞մ... կես բարեկա՞մ,— ձգեց Գյուտը մտախոհ» (ԴԴ, 263). «Հը՞մ, ինչի եմ հարցնում, իսկի կասեմ որ. դա իմ սրբազան գաղտնիքն է» (ՎԱ, 26). «Երևի խոստանում էր կամավոր մեր բաժինը տալ, հը՞մ» (ՇՔ, 22)։

Հի-հի —Քմծիծաղ, ծաղրանք.— «*Ձեղակիցներիդ ցուցակն ես կազմո՞ւմ։ Հի՛-հի՛: Ամա ուսյալ ես հա՞» (Սե, 76). «Լավ ես վաճառել հա... Հի՛-հի՛: Էլի շուկա կգնա՞ս». «Լավ «խաբեցիր»։ Հի՛-հի՛: Դե գնա քո բանին»։*

Պահ||պահո — Զարմանք.— «Պա՛հ, *դրանք հո գելեր են, անցավ մտքովս» (ՎԱ, 44). «—Պա՛հ, քու տունը չքանդվի... —ծափ տվին ու ծիծաղեցին մի քանի գյուղացի» (ՀՔ, 1, 345). «—Պահո՛...—միաբերան զարմացան ամենքը» (ՀՔ, 1, 345). «Պահո՞, մի մարագ բուրդ» (ՎԱ, 11)։* Պահ ձևը կրկնվելով՝ արտահայտում է նաև հեգնանք, օրինակ՝ «Պա՛հ, պա՛հ, պա՛հ, *մենակ դու էիր, որ կայիր». «Պա՛հ, պա՛հ, պա՛հ, շատ մեծ գործ ես արել»։*

Ջան||հեյ ջան—Ուրախություն, հրճվանք.— «*Գանձեր ունեմ անտակ, անծեր, ես հարուստ եմ, ջա՛ն, ես հարուստ» (ՀՔ, 1, 139). «—Ջա՛ն, հայրենի անտառներ, Դուք եք կանչում ինձ ձեր քով» (ՀՔ, 1, 152). «Հեյ ջա՛ն, մենք էլ զգույշ անցնենք, ով իմանա, թե հիմի էն սիրուհու բի՞բն ենք կոխում, թե հուր լեզուն խայամի» (ՀՔ, 2, 268)։*

Վախ||հեյ վախ *(ավելի գործածվում է վերջին ձևով)*— Վիշտ, ցավ, ափսոսանք.— «Վա՛խ, *տղա՛ս, այդ ի՞նչ օրն ես ընկել». «Վա՛խ, իմ մայր, մեկ էլ կտեսնե՞մ քեզ». «Հեյ վա՛խ,*

անցյան ջահել օրերս». «Հեյ վա՜խ, էլ ետ չի գա այն երջանկութ[յ]ունը». «Հեյ վա՜խ, կյանքս ցավ ու վշտով անցավ»։

Վահ||վա — Ջարմանք, կշտամբանք, սոսկեղություն.— «—Վա՛հ, էս մարդիկը ի՜նչ վաղ են քնում» (ՀԹ, 2, 101). «—Յուրտը տարա՞վ... վա՜հ, տնաշեն, Չես թող անում մի շունչ քաշեն» (ՀԹ, 1, 196). «—Վա՛հ, գիլի ոտին ի՜նչը կհասնի» (ՀԹ, 2, 392). «—Վա՛հ, չկա՛, չկա՛, քեռի Խեչան, տերտերը գրել չի, չկա՛» (ՀԹ, 1, 369). «Հացն էլ են փողով առնում, եղն էլ, կաթն էլ, մածունն էլ, փետն էլ, ջուրն էլ .. —Վա՛...» (ՀԹ, 1, 315). «—Վա՛հ, ձեր տունը աստված չինի, Մուկիկի պես մարդը մեռավ» (ՀԹ, 1, 255). «Վա՛հ–վա՛հ–վա՛հ, տեսեք ոնց է հորինում». «Վա՛հ–վա՛հ–վա՛հ, բա նրանց ձեռքերը կապա՞ծ էր, որ քիթ ու մռութիդ չհասցրին»։ Վերչին օրինակներում արտահայտում է նաև հեգնանք։

Վայ — Վիշտ, ցավ, ափսոսանք և այլն.— «—Վա՛յ քու տունը քանդվի, պառավ, Բա չե՞ս լսել ինչ է եղել» (ՀԹ, 1, 256). «—Վա՛յ, չկարես, Աստված սիրես» (ՀԹ, 1, 239). «—Վա՛յ, խեղդվեցի,—խուլ գոռում էր հիվանդը» (ՀԹ, 2, 365). «Վա՛յ մեր արևին, վա՛յ մեր աշխարքին...» (ՀԹ, 2, 115). «—Վա՛յ, վա՛յ, Մո՛սի ջան, ինձ մի՛ սպանիր» (ՀԹ, 2, 58). «Գիքորը դողալով ու ցավագին մրմնջում էր. —Վա՛յ, նանի ջան, վա՛յ... վա՛յ, նանի ջան, վա՛յ...» (ՀԹ, 1, 321). «—Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք մարդ ես դառնալ» (ՀԹ, 1, 326)։

Վի — Ջարմանք, կշտամբանք, սոսկամարհանք.— «—Վի՛, շաշ է, կանի,— վախով զգուշացրեց մի կին» (ՎԱ, 28). «—Վիի՛, աղջի, դու էդպես ընկե՞ր էլ ունես» (ՎԱ, 92). «—Վիի՛, շուռ չի տաս, քեզ մատաղ, քարի մեջն արին կա, շուռ չի տաս» (ՎԱ, 10)։

Վույ (վայ-վայ, վույ-վույ)—Վիշտ, ցավ, զարմանք, հեգնանք.— «—Վո՛ւյ իմ աչքին, անխելք կկու, Ինչպես իզուր խաբվել ես դու Սուտ խոսքերին չար Աղվեսի» (ՀԹ, 1, 240). «—Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտեր» (ՀԹ, 1, 387). «—Վո՛ւյ, քոռանամ ես, ինչո՞ւ ես էդքան կոտորել» (ՆՁՀ, 27). «—Վո՛ւյ,—հեգնեց Հասմիկը՝ ճաղերի վրայից ներքև թռչելով» (ՆՁՀ, 120). «—Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ, Ինչի՞ համար ծկա էս

սար, Բուն չինեցի, Զագ հանեցի» (ՀԹ, 1, 240). «—Պղո՛ւ, գտա՛ր։ —Չէ՛ է։ —Պետրո՛ս, գտա՛ր։ —Չէ՛ է։ —Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ։ —Վա՛յ-վա՛յ, վո՛ւյ-վո՛ւյ» (ՀԹ, 1, 212).

Վուշ, վուշ-վուշ, վաշ-վիշ — Ափսոսանք, ցավակցություն, կարեկցություն.— *«—Աղջի՛, հե՛յ Անուշ, այ՛ աղջի՛, Անուշ... ծնկանը զարկոտ, հառաչում է «վուշ»» (ՀԹ, 2, 49). «Վո՛ւշ-վո՛ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՛ւշ, քուրիկ, Վո՛ւշ քու սերին, քու յարին, Վո՛ւշ-վո՛ւշ, Սարո՛, վուշ-վո՛ւշ, իգի՛թ, Վո՛ւշ քու սիրած սարերին...» (ՀԹ, 2, 71). «Փնտրում է ծաղկած ափերը հին-հին, Ու գոռում գիժ-գիժ. —Վա՛շ-վի՛շշ, վա՛շ-վի՛շշ...» (ՀԹ, 2, 13). «Ծաղրում են նրա գոռոցն ահռելի Ու կրկնում գիժ-գիժ. —Վա՛շ-վի՛շշ, վա՛շ-վի՛շշ...» (ՀԹ, 2, 13)։*

Ու — Հաճելիություն, բավարարվածություն.— *«—Ո՛ւ, շատ լավ բան եք բերել». «Ո՛ւ ո՛ւ, ինչ համեղ է». «—Ո՛ւ ո՛ւ,— բացականչեց Եվան,— ուրեմն դուք կիշնեք Ճանապարհին»։*

Ուխայ‖օխայ — Հաճելիություն, բավարարվածություն.— *«Ուխա՛յ, ինչ լավ ջուր է». «Օխա՛յ, սիրտս հանգստացավ». «Օխա՛յ, ինչ լավ եղավ»։*

Ուհ — Դժկամություն, ցավ, տհաճություն, *առանձին դեպքերում՝* զարմանք.—*«Ո՛ւհ, էլի եկավ». «Ո՛ւհ, դրանից չպըրծանք». «Ո՛ւհ, ի՞նչ ես ուզում ինձնից». «—Քո բոլոր պապերն էլ ինձ հետ են անցել ու ամեն մեկը մի տեղ մնացել։ —Ո՛ւհ, ինչքան մեծ ես դու» (ՀԹ, 1, 340)։*

Ուֆ — Ցավ, դժգոհություն, *առանձին դեպքերում՝* ձիացմունք.— *«Ո՛ւֆ, գլուխս պայթում է». «Ո՛ւֆ, ոտքս ինձ սպանեց». «Լռեցե՛ք, սիրտ չունեմ, ո՛ւֆ». «Ո՛ւֆֆ, ինչ լավն է»։*

Փիե — Զարմանք, բարկություն, դժգոհություն.— *«Փիե՛, աշխարհը քանդվե՞լ է, էլ մարդ չի՞ մնացել» (ՇՔ, 218). «Փիե՛, էլ ինչ է ուզում մեզանից». «Փիե՛, էդ լակոտը մեզ խայտառակ կանի»։*

Փու‖փուճ – Զզվանք, արհամարհանք.— *«Փ՛ու, ի՛նչ զզվելի մարդ է». «Ինչ հիմար եղանակ է, փո՛ւ». «Զազրելի բնավորություն ունի, փո՛ւճ»։*

Օ — *Մի երևույթի նկատմամբ ուղղված կիրք, զրգռվածություն, հուզմունք՝ դրական և բացասական իմաստով—սեր,*

ճնշոտություն, գութ, կարեկցություն, հաճելիություն, առելություն, արհամարհանք, դժգոհություն, կշտամբանք և այլն.— *«Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր» (ԵՋՐԵ, 162). «Օ՜, ինչ հորդ էր տագնապն ուղեղիս» (Անդ, 313). «Աշխատանքը պոետի, օ՜, խիզախ է հար» (Անդ, 569). «Այժմ ծերունին կարող էր իր հոգին ավանդել, օօ՜, ոչ հանգիստ, ինչպես կփափագեր, այլ մի անջնջելի վիշտ սրտի մեջ» (ՇՔ, 13). «Օօ՜, մաշեց խեղճ մարդու հոգին ու մարմինը դավաճան որդու արարքը» (ՇՔ, 20). «Գիտե՞ս, նա շատ ագահ է, օօ՜, շատ ագահ, ամեն բան ուտում է» (ՇՔ, 224). «Օօ՜, ի սեր աստուծո, խնդրում եմ իմ միտքը ձեր ուզածի պես չըմբռնեք» (ՇՔ, 106)։*

Հաճախ գործածվում է կոչական բառերի հետ՝ արտահայտելով մեկի նկատմամբ ուղղված ուժեղ հուզմունք, կիրք, օրինակ՝ «Օ՜, անողոք ծերուկ» (ՇՔ, 23). «Օ՜, դուք ողբալի պնակալեզներ» (ԵՋՐԵ, 106). «Օ՜, հարազատ ընկե՛ր իմ, իմ բարեկա՛մ, իմ քո՛ւյր» (Անդ, 124). «Օ՜, բնություն, օ՜, մայր» (Անդ, 155). «Օ՜, դու գաղիքի դանդրահեր տղա» (Անդ, 428)։

Օհ — *Ժեստ, առանձին դեպքերում՝ զմայլանք.— «—Օ՜հ,— արտասանեց հևալով,— տանջանք է սանդուղքով բարձրանալը» (ՇՔ, 56). «Օ՜հ, գլուխս տարել է». «Օ՜հ, ե՞րբ պետք է դրա ձեռքից ազատվեմ». «—Օ՜հ, օ՜հ, օ՜հ, էդ ծառաների բանն էլ մի ասի,— էս ու էն կողմից սկսեցին բողոքել տիկին հյուրերը» (ՀՔ, 2, 319). «—Օ՜հ, ինչ գեղեցիկ և որքան հրաշալի է մեր երկիրը» (Մ, 6, 198). «Օ՜հ, ինչ վեհապանծ տեսարան էր բացվում մեր աչքերի առաջ»։*

Օհո — *Զարմանք, կշտամբանք.— «Օհո՛, դեղնած խոտերի վրա սառած արյուն կա» (ՎԱ, 47). «—Օհո՛, տիրացու, դու էլ այդտեղ, այդ ո՞նց է պատահել» (Մ, 6, 204). «—Օհո՛, էդ ինչո՞ւ շուտ եկար». «Օհո՛, թազա խաբար,— գոչեց Քյազիմ բեկը» (ՇՔ, 187)։*

Օյ — *Կշտամբանք, ցավ, հուզմունք.— «Օ՜յ, գլուխս մի տարեք». «Օ՜յ, լռեցե՛ք, բավակա՛ն է». «Օ՜յ, ոտքս ցավում է». «Օ՜յ, ինչ գեղեցիկ մարգագետին է»։*

Օֆ — *Ցավ, դժգոհություն, առանձին դեպքերում՝ բավականություն, հաճույք.— «Օ՜ֆ, ի՜նչ դժվար է, Հորեղբայր*

Օհան» (ՀԹ, 2, 102). «—Օ՜ֆ, էլ հանգիստ քուն չունի մարդ էս անիրավ մոծակներից» (ՀԹ, 2, 121). «—Օ՜ֆ, հերիք է, չարչի ախպեր, Մի՛ խոսեցնի ինձ դրանից» (ՀԹ, 1, 275). «—Օ՜ֆ, սիրտս մաշել է,—գանգատվում էր տիկին Նատոն» (ՀԹ, 1, 319). «—Օ՜ֆ, ինչ լավ եղավ». «—Օ՜ֆ, գործը վերջացրի պրծա». «—Օ՜ֆ, գնաց, գլուխս դինջացավ»։

Ֆու՝ֆուհ — Զզվանք.— *«Ֆո՜ւ, սատանան տանի, այստեղ ամեն ինչ ապականվում է» (ՇՔ, 306). «Կինը պետք է կին լինի իր բոլոր արտաքին հատկանիշներով, իսկ այդ բեղիկնե՞րը... ֆո՜ւ Իսկ այդ կոպիտ բարիտո՞նը... ֆո՜ւ» (ՇՔ). «—Ֆո՜ւհ, անտաշ վայրենի,—փնթփնթաց նրա հասցեին էլուշը և ջղայնացած ներս գնաց» (ՆՁՀ)։*

II. ԿՈՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ

90. ԿՈՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— Այս ընդհանուր անունով են կոչվում այն ձայնարկությունները, որոնք գործածվում են ուրիշի ուշադրությունը գրավելու համար՝ նրան մի բան հաղորդելու, մի գործողության մղելու և այլ նպատակներով, ինչպես՝ ա՛յ, է՛յ, հե՜յ, տո՛, ֆա՛, դե՛, դե՛ի և այլն։ Դրանք սովորաբար գործածվում են կոչական բառերի կամ հրամայական բայաձևերի հետ։ Կոչական ձայնարկությունների մեջ են զետեղվում նաև կենդանիներին կանչելու կամ քշելու, վանելու ձայները, ինչպես՝ չո՜ւ–չո՜ւ, բիժո՜–բիժո՜, հո՜–հո՜, ֆը՛շ, ֆշա՛, փի՛շտ և այլն։

Ստորև բերվում են կոչական ձայնարկությունների օրինակներ գեղարվեստական գրականությունից։

«Հե՜յ ուլաութեր, հե՜յ գառնաութեր, ելե՛ք շուտով բացեք դռներ» (ՀԹ, 2, 101). «Աղանիկ հե՜յ... Գելերն ինձ ուտում են... Օգնեցե՛ք, հե՜յ...» (ՀԹ, 1, 393). «Ու պարզ լսում ենք, ոնց են իրար ձեն տալիս, շտապեցնում, ոնց են շներին կանչում։ —Թորլան հե՜յ, Ղայթար հե՜յ, Ջամբար հե՜յ Ջալակ հե՜յ...» (ՀԹ, 1, 398). «Հե՜յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեռ, Պահապաններ թաթուլի» (ՀԹ, 2, 142). «—Է՜յ, որդի, ասավ, մեռնեմ իր լուսին» (ՀԹ, 2, 106). «Է՜յ, Ջուրաբի տղա, մա՞րդ

ես սպանում» (ՆՉՀ, 197). «Ա՛յ տղա, քեզ ինչ է պատահել, հո հետևիցդ չեն ընկել» (ՎԱ, 26). «Գլխիցդ ձեռք քաշած ես երեվում, ա՛յ մարդ» (Սհ, 4). «Ա՛ տղա, նա էլ մեր կունենա... Ա՛ տղա, կասի, տղես ետ չեկավ... Ա՛ տղա, ճամփա կպահի՞ ետ չի գնալ...» (ՀԹ, 1, 353). «Ո՞վ լուսեղեն, դռներդ բաց» (ՀԹ, 2, 146). «Ո՞վ բարեգութ, քեզ եմ խնդրել» (ՀԹ, 2, 147). «—Ի՞նչ ես ներս խցկվում, տո՛ լածիրակ, գնա քու բանին» (ՀԹ, 2, 322). «Նա մնաց անտուն, մնաց բնավեր։ —Տո՛ լաճ տնավեր։ Եղավ անդադար, եղավ բնավեր։ —Տո՛ լաճ տնավեր» (ՊՍ, 13). «—Տո՛, դուք իմ հոգին կերաք, բա սա դիմանալու բա՞ն է» (ՆՉՀ, 193). «—Քա՛, խամ է, որդի, կսովորի, որդի» (ՀԹ, 2, 322). «—Քա՛, ես ի՞նչ իմանամ,—թաշկինակն աչքերին մոտեցնելով՝ պատասխանեց Ավագյանի կինը» (ՆՉՀ, 150). «—Քա՛, մեր Շմավոնն է,— ձայն տվեց նա դրսից» (ՆՉՀ, 32). «—Ի՛նչ ես կծկվել, աղա՛... քեզ տղամարդ պահիր» (ՆՉՀ, 244). «—Աղա՛, էդ եզները խոտը թափում են, էյ...» (ՆՉՀ, 95). «—Աղա՛, սա խարակ է՞, սա խարակ է՞,— ճչաց բրիգադավարը» (ՆՉՀ, 210). «—Դե՛, վե՛ր կաց, օրն անց է կենում, ճամփեդ երկար է» (ՀԹ, 2, 348). «—Դե՛, գնա՛, քեզ մատաղ, աստված բարի ճամփա տա» (ՀԹ, 2, 348). «Դե՛ հե, տեսնենք, դու քո ուսումով, ես իմ փողերով ու խելքով» (ՇՔ, 404). «—Դե՛ հե, այժմ կարող ես հանգիստ լինել, ես գնում եմ» (ՇՔ, 400). «—Դե՛ հե, ասա՛, բոլո՛րն ասա այս րոպեիս, շան աղջիկ» (ՇՔ, 150)։

«—Փի՛շտ, փի՛շտ,—վեր թռանք մենք» (ՀԹ, 2, 356). «Հացատան նեղ դուռը ճռնչաց։ —Ջո՛ւ, ջո՛ւ, ջո՛ւ...» (Սհ, 20). «—Քի՛շ, քի՛շ,— չարացավ Աթաղ ազին» (Սհ, 21). «—Հո՛, եզ, համբերի...—լսվում էր մեկի խանդավառ ձայնը» (ՆՉՀ, 95)։

91. ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ.—Ինչպես նշված է արդեն, ձայնարկութ յունների մեջ են դրվում նաև բնաձայնութ յունները կամ նմանաձայնութ յունները, որոնցով լեզվի մեջ աշխատում ենք վերարտադրել կենդանիների, առարկաների, բնութ յան երևույթների ձայները։ Օրինակներ գեղարվեստական գրականութ յունից։

«Հանկարծ մի թափ հետևում լսվեց կաքավի ձայնը։

—Կա՛խ-կղա, շա՛խ-կղա» (ԱԲ, 232). «Գյուղի դիմաց, դեղնած արտերում զարթնեց կաքավը։ —Կա՛խ-կղա, շա՛խ-կղա» (ԱԲ, 234). «Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ, Ահա այսպես հաչում եմ ես. Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ, Ու տունն այսպես պահում եմ ես» (ՀՔ, 2, 213). «—Ինչքան էլ որ լինի զգույշ, Ջարի առջև թե վաղ, թե ուշ, Էդ է պահված, Աղվես աղա. Ղա՜, ղա՜, ղա՜, ղա՜... Պատասխանեց Ագռավն ու թռավ» (ՀՔ, 1, 243). «Միայն պարզ լսում եմ զգույշ ոտնաձայնը, որ խաշամը կոխելով առաջ է գալի—խր՛շտ, խր՛շտ, խր՛շտ, խր՛շտ... Բան չի երևում, բայց դարձյալ խր՛շտ, խր՛շտ, խր՛շտ, մոտենում է ավելի ու ավելի» (ՀՔ, 2, 362). «Կռունկները մոտեցան ու «կռլո՜ւ, կռլո՜ւ» կանչելով անցան նախարարների գլխի վրայով» (ԴԴ, 21). «Մոտակա ժայռի աշտարակից մի թռչուն «ճը-ճը-չի՛, ճը-ճը-չի՛» էր անում» (ԴԴ, 37). «Շարունակում էին շրթփ հա շրթփ ծեծել թաց թաղիքները» (ՎԱ, 28). «Ես չիրիդ եմ խաղում գորգերի վրա, մահակով հարվածներ տալիս, որ մաքրվեն՝ «շը՛պ, շը՛պ, շը՛պ» (ՎԱ, 6). «Ամեն տեղից կաթում էր այդ վրանը՝ շը՛պ, շը՛պ, շը՛պ» (ՎԱ, 4). «Բակատեղի կողմից լսում եմ կացնի հեռավոր ձայնը՝ թր՛խկ-թր՛խկ-թր՛խկ...» (ՎԱ, 47). «Ջրրխկ հա թրրխկ նորից չինեցին» (ՀՔ, 2, 107). «Շրրը՛խկ... հանկարծ դուռը բացվեց, Թուրք կանացով տունը լցվեց» (ՀՔ, 2, 18). «Ես ու Ակոփը զուռնեն զլեցինք, էս Դավիթն էլ դհոլը—դը՛մբ հա դը՛մբ, կես գիշերին, էս վերանա դաշտումը ածում ենք» (ՀՔ, 2, 400)։

Բնաձայնական շատ բառերից կազմվում են բայեր, որոնցից էլ գոյականներ, օրինակ՝ սվսվալ-սվսվոց, գվգվալ-գվգվոց, թխկալ-թխկոց, շխկալ-շխկոց, թխկթխկալ-թխկթխկոց, խշշալ-խշշոց, խշխշալ-խշխշոց, թրմփալ-թրմփոց, տզզալ-տզզոց, բզզալ-բզզոց և այլն։

ՀԱՄԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։*

Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։*

Մ. Աբեղյան, *Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում, «Արարատ», 1912, № 2—3։*

Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953։*

Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, Ա, Երևան, 1962։*

Ա. Աբրահամյան, *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952, 1964։*

Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959։*

Ս. Աբրահամյան, *Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965։*

Ս. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։*

Ս. Աբրահամյան, *Արդի հայերենի պայմանական կամ ենթադրական եղանակը, ԳԱՏ, 1953, № 9։*

Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։*

Է. Աղայան, *Բայի ձևաբանական կառուցվածքը ժամանակակից հայերենում, ՊԲՀ, 1963, № 3։*

Է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967։*

Է. Աղայան, *Հին շփոթի բավիղներում, «Գրական թերթ», 1969, հունվարի 10։*

Է. Աղայան, Հ. Բառսեղյան, *Հայոց լեզու, Դասագիրք միջն. դպրոցի 5—7-րդ դաս. համար, Երևան, 1971 (այլև նույնի նախորդ հրատարակությունները)։*

Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. IV, Ա, Բ, Երևան, 1959, 1961։*

Հ. Աճառյան, *Գրաբարի ուսուցիչ, Երևան, 1954։*

Հ. Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941։*

Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայկեղէն լեզուի, Վիէննա, 1866։*

Վ. Առաքելյան, *Հայերենի շարահյուսություն, Ա, Բ, Երևան, 1958, 1964։*

Մ. Աստուրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր*, Ա, Բ, Երևան, 1970, 1973։

Խ. Աւգրումեցի, *Գիրք քերականութեան*, Յալիկօնայ, 1696։

Կ. Աւետիքեան, *Քերականութիւն հայկական*, Վենետիկ, 1815։

Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, 1852։

Բաղդասար Դպիր, *Պարզաբանութիւն քերականութեան*, Կ. Պոլիս, 1736։

Հ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն*, Երևան, 1953։

Հ. Բարսեղյան, *Պատասխան մի քմածին քննադատության*, «Սովետական դպրոց», 1968, հոկտեմբերի 9։

Ա. Գառագաշեան, *Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէն*, Պօլիս, 1881։

Կ. Ղաբեգիեյան, *Շաղկապները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963։

Յ. Պաղրաշեան, *Արևելահայ աշխարհաբարի քերականութիւնը*, Թիֆլիս, 1913։

Ռ. Իշխանյան, *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան 1971։

Ռ. Իշխանյան, *Մակբայները ժամանակակից հայերենում*, Երևանի պետական համալսարանի «Ուսանողների գիտական աշխատությունների ժողովածու», 1948, № 4։

Ստ. Լիսիցյան, *Ժամանակակից հայերենի լեզվի խոնարհումը*, ՆՊՀԳԱ, հ. 19, 1941։

Յ. Կոստանդնուպօլսեցի, *Ջատութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական*, Հռոմ, 1674։

Ս. Ղազարյան, *Գրաբարի դասագիրք*, Երևան, 1951։

Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասագիրք, միջն. դպրոցի 5—6-րդ դաս. համար*, Երևան, 1955 (այլև նույնի նախորդ և հաջորդ հրատարակությունները)։

Ա. Ղարիբյան, *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*, Երևան, 1954։

Ա. Ղարիբյան, *Հայ մանկավարժական լեզվաբանություն*, Երևան, 1969։

Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, հ. 1—4, Երևան, 1944—45։

Ստ. Մալխասեանց, *Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները*, Թիֆլիս, 1881։

Ալ. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Երևան, 1966։

Ալ. Մարգարյան, *Ինչպե՞ս է ներկայացված բայը նոր դասագրքում*, «Սովետական դպրոց», 1968, օգոստոսի 28։

Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—37։

Պ. Շարաբխանյան, *Գրաբարի շաղկապները*, Երևան, 1960։

Իվ. Ի. Շիլակաձե, *Արդի հայերենի բայի խոնարհման կատեգորիաները, ԼՈՀ, II*, Երևան, 1964։

Վ. Ջալըխեան, *Քերականութիւն հայկազեան լեզուի*, Վիէննա, 1883։

Մ. Չամչեան, *Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1859։*

Ստ. Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1894, 1906։*

Ստ. Պալասանեան, *Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870։*

Ստ. Պալասանեան, *Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հ. 1, Թիֆլիս, 1874։*

Ն. Պառնասյան, *Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961։*

Պ. Պողոսյան, *Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերենում, Երևան, 1959։*

Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։*

Մ. Սեբաստացի, *Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազեան սեռի, Վենետիկ, 1730։*

Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939։*

Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։*

Գ. Սևակ, *Մեր բայի խոնարհման համակարգի հարցի շուրջը, «Սովետական դպրոց», 1968, նոյեմբերի 27։*

Բ. Վերդյան, *Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970։*

Ա. Քյուրքչյան, *Ընդհանրական մակբայները հայերենում, ՊԲՀ, 1961, № 3—4։*

В. Авакян, Модальные слова современного армянского языка, автореферат, Ереван, 1972.

Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Л. Андрейчин, Грамматика болгарского языка, М., 1949.

Античные теории языка и стиля, М.—Л., 1936.

А. В. Бондаренко, Система грамматических времен в современном русском языке, ВЯ, 1962, № 3.

Ж. Вандриес, Язык, М., 1937.

В. В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947.

Б. Н. Головин, Заметки о грамматическом значении, ВЯ, 1962, № 2.

А. В. Исаченко, О грамматическом значении, ВЯ, 1961, № 1.

А. Кюркчян, Наречие в армянском языке, автореферат, Ереван, 1956.

Современный русский язык, М., 1952.

Ф. Ф. Фортунатов, О залогах русского глагола, 1899.

А. А. Шахматов, Синтаксис русского языка, Л., 1941.

Е. И. Шендельс, О грамматическом полисемии, ВЯ, 1962, № 3.

Р. О. Шор и **Н. С. Чемоданов,** Введение в языковедение, М., 1945.

A. Meillet, Altarmenisches Elementarbuch, Heidelberg, 1914.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԱՕԲ—*Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940։*
ԱԲ—*Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1955։*
Ագ—*Ագաթանգեղեայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909։*
ԱԻ—*Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 1—2, Երևան, 1958։*
ԱԻԱէ—*Ավ. Իսահակյան, Արձակ էջեր, Երևան, 1963։*
Աե—*Աբաբեկ Խնկոյան, Ընտիր էջեր, Երևան, 1961։*
ԱԿ—*Լ. Տոլստոյ, Աննա Կարենինա, 1, Երևան, 1957։*
ԳԱՏ—«*Գիտութիւնների ակադեմիայի տեղեկագիր*»։
ԴԴ (ԴԴՎ)—*Դ. Դեմիրճյան, Վարդանանք (Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1957)։*
եզ—*Եզնկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914։*
եՋ (եՋԸե)—*Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955։*
եՊՀԳԱ—*Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատութիւններ»։*
ԹՔ—*Թումանյանը քննադատ, Երևան, 1939։*
ԼՈՀ—*Լեզվի և ոճի հարցեր, II, Երևան, 1964։*
Լե—*Լրագրերից։*
ՀԱՀԳ—*Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1968։*
ՀՔ—*Հ. Թումանյան, Երկեր, հ. 1—2, Երևան, 1958։*
Մ (ՄԱ)—*Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1963։*
ՄԳՄ—*Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1957։*
ՄՀՋՄ—*Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832։*
ՄՆԿ—*Մ. Նալբանդյան, Կրիտիկա (Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940)։*
ՆԲՀԼ—*Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—37։*
ՆԴ—*Նար-Դոս, Պայքար, Մահը, Երևան, 1957։*
ՆԴՔԼ—*Նար-Դոս, Քնքուշ լարեր (Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1938)։*
ՆՋՀ—*Ն. Ջարյան, Հացավան (Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963)։*
ՇՔ—*Շիրվանզադե, Քաոս (Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1960)։*
ՋԱ—*Ջինգիզ Այտմատով, Մնաս բարով, Գուլսարի, Երևան, 1968։*
ՊՍ (ՊՍԱՋ)—*Պ. Սևակ, Անլռելի զանգակատուն, Երևան, 1966։*
ՊԲՀ—«*Պատմա-բանասիրական հանդես*»։
ՍԴԿ—*Սերվանտես, Դոն Կիխոտ, I, Երևան, 1950։*

ՍԽ (ՍԽՔ)—*Ս. Խանզադյան, Քաշարան, Երևան, 1965։*
ՍՀ—*«Սովետական Հայաստան» (օրաթերթ)։*
ՍՄ—*Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1—4, Երևան, 1944—45։*
ՎԱ—*Վ. Անանյան, Լեռներ հայրենի, Երևան, 1963։*
ՎԱՀԳ—*Վ. Անանյան, Հովազաձորի գերիները, Երևան, 1957։*
ՎԴ (ՎԴԿԵ)—*Վ. Դավթյան, Գինու երգը, Երևան, 1966։*
ՎՏ—*Վ. Տերյան, Երկեր, Երևան, 1956։*
ՎՓԸԵ—*Վ. Փափազյան, Ընտիր երկեր, Երևան, 1951։*
ՐՍ—*Րաֆֆի, Սամվել (Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1963)։*
ՓՐ—*Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։*
ՖՎ—*Ֆ. Վերֆել, Մուսա լեռան քառասուն օրը, Երևան, 1964։*
ՎՅ—«Вопросы языкознания».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Բ Ա Յ

Բ. ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐ

Ընդհանուր դիտողություններ 5

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Բայի եղանակները ժամանակակից հայերենում 5

ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԻ ՔԵՐԱԿԱՆԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Հարցի պատմության ակնարկ 11
Երկանդամ ու եռանդամ հակադրություններ և ժամանակի ու կերպի քերականական կարգերը 53

ԲԱՅԻ ԴԵՄՔԻ ՈՒ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

Բայի դեմքն ու թիվը և դրանց արտահայտությունը 66

ԽՈՆԱՐՀՈՒՄ

I. ԱՌԱՋԻՆ ՈՒ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՅԱՀԻՄՔԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին ու երկրորդ խոնարհումներ և դրանց մանրակաղապարները 72
Բայահիմքերի կազմությունը 73

II. ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Վերլուծական ձևերի կազմությունը 77

Բ. ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՁԵՎԵՐ

Արդի հայերենի համադրական ձևերը 79
Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի կազմությունը 79
Ըղձական եղանակի կազմությունը 81
Հաստատողական (ենթադրական) եղանակի կազմությունը . . 83
Հարկադրական կամ անհրաժեշտական եղանակի կազմությունը . 83
Հրամայական եղանակի կազմությունը 84

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՆՐԱԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ե ԿԱՄ ԱՌԱՋԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ընդհանուր դիտողություններ 86
ե խոնարհման պարզ բայեր 87
ե խոնարհման սոսկածանցավոր բայեր (և, չ ածանց ունեցող բայեր) 88
Պատճառական բայեր (եցն, ացն, ցն ածանց ունեցող բայեր) . 89

Բ. Ա ԿԱՄ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ընդհանուր դիտողություններ 90
Ա խոնարհման պարզ բայեր 91
Ա խոնարհման սոսկածանցավոր բայեր (ան և են ածանց ունեցող բայեր) 92

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Ընդհանուր դիտողություններ 93
ե խոնարհման պարզ բայեր 95
ե խոնարհման և ածանց ունեցող բայեր 96
Ա խոնարհման պարզ բայեր 97
Ա խոնարհման սոսկածանցավոր բայեր 98

ՀԱՎԵԼԱՎՈՐ ԵՎ ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

Դրաբարյան ներկա ու անցյալի անկատար և հավելավոր բայեր . 99
Պակասավոր բայեր 100

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ընդհանուր դիտողություններ 101
Անցյալ կատարյալի և ըղձականի ժխտականի կազմությունը . 101
Սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակների ժխտականի կազմությունը 102
Հարկադրական եղանակի ժխտականի կազմությունը 103

Հաստատողական եղանակի ժխտականի կազմությունը . . . 103
Արգելական հրամայականի կազմությունը 104
Դերբայների ժխտական ձևերը 106

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

Հարադրական բայերի խոնարհման առանձնահատկությունները . 106

ԵՂԱՆԱԿԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակների հաջորդություն 108
Ժամանակային ձևերի բազմիմաստությունը 112

Բ. ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանական եղանակի բայաձևերի ընդհանուր բնութագրությունը . 111
Ներկա ժամանակ (անկատար դերբայ+եմ՝ գնում եմ շարքի ձևեր) 117
Անցյալի անկատար ժամանակ (անկատար դերբայ+էի՝ գնում էի շարքի ձևեր) 123
Ապառնի ժամանակ (ապառնի դերբայ+եմ՝ գնալու եմ շարքի ձևեր) 125
Անցյալի ապառնի ժամանակ (ապառնի դերբայ+էի՝ գնալու էի շարքի ձևեր) 127
Վաղակատար ժամանակ (վաղակատար դերբայ+եմ՝ գնացել եմ շարքի ձևեր) 128
Անցյալի վաղակատար ժամանակ (վաղակատար դերբայ+էի՝ գնացել էի շարքի ձևեր) 132
Անցյալ կատարյալ ժամանակ (գնացի շարքի ձևեր) . . . 133

II. ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ընդական եղանակի բայաձևերի ընդհանուր բնութագրությունը . 137
Ընդական եղանակի ապառնի ժամանակ (գնամ շարքի ձևեր) . . 138
Ընդական եղանակի անցյալի ապառնի ժամանակ (գնայի շարքի ձևեր) 142

III. ՀԱՍՏԱՏՈՂԱԿԱՆ (ԵՆԹԱԴՐԱԿԱՆ) ԵՂԱՆԱԿԻ ԲԱՅԱՁԵՎԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Կը-ով կազմված բայաձևերի եղանակային բովանդակության հարցը 144
Հաստատողական եղանակի ապառնի ժամանակ (կգամ շարքի ձևեր) 151
Հաստատողական եղանակի անցյալի ապառնի (կգնայի շարքի ձևեր) 153

IV. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր դիտողություններ 154
Հարկադրականի ապառնի ժամանակ (պիտի գնամ շարքի ձևեր) . 155
Հարկադրականի անցյալի ապառնի (պիտի գնայի շարքի ձևեր) . 155

V. ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր դիտողություններ և հրամայականի կիրառությունը . 155

ԲԱՅԻ ՍԵՌԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Հարցի պատմության ակնարկ 156
Սեռը որպես քերականական կարգ 168
Բայի սեռերի համակարգը արդի հայերենում 170
Ներգործական սեռի բայերը 172
Ա) Ներգործական սեռի բայերի արտահայտած ընդհանուր իմաստները 172
Բ) Ցն ածանցով կազմված ներգործական բայերը (ժամանակակից հայերենի պատճառական բայերը) 174
Կրավորական սեռի բայերը 182
Ա) Ներգործական ու կրավորական սեռերը որպես անմիջական հակադրություններ և ներգործական ու կրավորական կառուցվածքի նախադասություններ 182
Բ) Կրավորական բայերի արտահայտած իմաստները . . . 185
Չեզոք սեռի բայերը 192
Ա) Չեզոք սեռի ընդհանուր բնութագրումը 192
Բ) Կրավորական բայերի արտահայտած կրավորական ու չեզոք սեռերի իմաստների տարբերակումը 194
Գ) «Կրավորակերպ» չեզոքներ 197

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ
ՄԱԿԲԱՅ

Մակբայը որպես խոսքի մաս 199

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Պարզ մակբայներ 211
Կրկնավոր մակբայներ և քարացած հոլովական ձևերից ու նախդրիվ կապակցություններից առաջացած մակբայներ . . . 212
Մակբայների կազմություն ածանցման միջոցով և մակբայակերտ **բար, որեն, պես** *ածանցները* 214
Մակբայակերտ մյուս ածանցները 218

ՄԱԿԲԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԵՏ

Գոյականների առարկայական նշանակության խամրումը և նրանց վերածումը մակբայների 219

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ընդհանուր դիտողություններ 227

I. ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Ժամանակի մակբայներ 228
Տեղի մակբայներ 237

II. ՀԱՏԿԱՆՇԱՅԻՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

Որակական մակբայներ 244
Քանակական մակբայներ 248

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ
ՇԱՂԿԱՊ

Շաղկապը որպես բառերի յուրահատուկ խումբ և ժամանակակից հայերենի շաղկապների ընդհանուր բնութագրությունը . . 253
Շաղկապների հարաբերակցություններն այլ խոսքի մասերի հետ . 260

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ընդհանուր դիտողություններ 265
Շաղկապների տեսակներն ըստ կազմության 266
Շաղկապների տեսակներն ըստ կիրառության ձևի և մենադիր, կրկնադիր ու զուգադիր շաղկապներ 268
Շաղկապների տեսակներն ըստ շարահյուսական կապակցության եղանակի և համադասական ու ստորադասական շաղկապներ 269
Շաղկապների տեսակներն ըստ իմաստի 274

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԻՄԱՍՏՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից հայերենի շաղկապներն առանձին-առանձին . 277

ՉՈՐՐՈՐԴ ՄԱՍ
ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ
ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Եղանակավորող բառերի ուսումնասիրությունը և նրանց առանձնացումը որպես խոսքի մաս 311

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Եղանակավորող բառերի ուսումնասիրության ընդհանուր հարցերը . 317

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ

Եղանակավորող բառերն առանձին-առանձին 331

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընդհանուր տեղեկություններ հարցի պատմությունից 349

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Ձայնարկությունները որպես զգացական վերաբերմունք արտահայտող բառերի խումբ 353

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բացականչական և կոչական ձայնարկություններ 355

I. ԲԱՑԱԿԱՆՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բացականչական ձայնարկությունների բազմիմաստությունը և շարահյուսական շրջապատի դերը այս հարցում . . . 356

Բացականչական ձայնարկությունների արտահայտած իմաստները 360

II. ԿՈՉԱԿԱՆ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՆԱՁԱՅՆԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Կոչական ձայնարկություններ 370

Բնաձայնական բառեր 371

Համառոտ մատենագրություն 373

Համառոտագրություններ 377

ՄԱՆՎԵԼ ԵԳՈՐԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՑՈՑ ԼԵԶՎԻ ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հրատարակության է ներկայացրել համալսարանի հայոց լեզվի ամբիոնը

Խմբագիր՝ Ռ. Ա. Իշխանյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Մ. Գաբրիելյան
Գեղ. խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Տ. Գ. Տանոյան
Վերատ. սրբագրիչ՝ Հ. Ս. Հարությունյան

ՎՖ 06585 Պատվեր 535 Տպաքանակ 5000
Հանձնված է արտադրության 28/IV 1977 թ.։
Ստորագրված է տպագրության 28/IX 1977 թ.։
Թուղթ՝ 84×108¹/₃₂։ Հրատ. 17,0 մամուլ։ Տպագր. 12 մամուլ։ Պայմ. 20,16 մամուլ։ Գինը՝ 1 ռ. 50 կ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փող. № 1։

ВФ 06585, заказ 535, тираж 5000.
Сдано в производство 28/IV 1977 г.
Подписано к печати 28/IX 1977 г.
Бумага 84×108¹/₃₂. Издат. 17,0 листа.
Печатных 12,0 листа. Условн. 20,16 листа.
Цена 1 руб. 50 коп.
Издательство Ереванского университета,
Ереван, ул. Мравяна № 1.

Երևանի համալսարանի տպարան։ Երևան, Աբովյան փող. № 52։
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.